Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՆՈՐ
# ԿՏԱԿԱՐԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ
## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ٤ ذی‌الحجه ٣٢٢ و ٢٢
شباط ٣٢٠ تاریخلی و ٦٤٨ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنشدر
مصارف آمریقان بیبل شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع‌اولنمشدر

*ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ· ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1906

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա.

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի, Դաւիթի որդւոյն, Աբրահամի որդւոյն։

2 – Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղբայրները. 3 – Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան Թամարէ. Փարէս ծնաւ Եսրոնը. Եսրոն ծնաւ Արամը. 4 – Արամ ծնաւ Ամինադաբը. Ամինադաբ ծնաւ Նաասոնը. Նաասոն ծնաւ Սաղմոնը. 5 – Սաղմոն ծնաւ Բոոսը Ռախաբէ. Բոոս ծնաւ Ովբեդը Հռութէ. 6 – Ովբեդ ծնաւ Յեսսէն. Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը. Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնոջմէն. 7 – Սողոմոն ծնաւ Ռոբոամը. Ռոբոամ ծնաւ Աբիան. 8 – Աբիա ծնաւ Ասան. Ասա ծնաւ Յովսափատը. Յովսափատ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ողիան. 9 – Ողիա ծնաւ Յովաթամը. Յովաթամ ծնաւ Աքազը. Աքազ ծնաւ Եզեկիան. 10 – Եզեկիա ծնաւ Մանասէն. Մանասէ ծնաւ Ամոնը. 11 – Ամոն ծնաւ Յովսիան. Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրները Բաբելոնեան գերութեան առեններէն. 12 – Բաբելոն գերութենէն երթալնէն ետև Յեքոնիա ծնաւ Սաղաթիէլը. 13 – Սաղաթիէլ ծնաւ Զոբաբաբէլը. Զոբաբաբէլ ծնաւ Աբիուդը. Աբիուդ ծնաւ Եղիակիմը. 14 – Եղիակիմ ծնաւ Ազովրը. Ազովր ծնաւ Սադովկը. Սադովկ ծնաւ Աքինը. Աքին ծնաւ Եղիուդը. 15 – Եղիուդ ծնաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մատթանը. 16 – Մատթան ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յովսէփ, ըսյրն Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ'ըսուի Քրիստոս։ 17 – Ամբողջ սերդերը Աբրահամէ մինչև Դաւիթ տասնըչորս սերդ, և Դաւիթէ մինչև Բաբելոնեան գերութիւնը տասնըչորս սերդ, ու Բաբելոնեան գերութենէն մինչև Քրիստոս տասնըչորս սերդ։

18 – Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը այս կերպով էր. անոր մայրը Մարիամ Յովսէփի նշանուած, դեռ իրարու քով չեկած՝ Սուրբ Հոգիէն յղացած գտնուեցաւ։ 19 – Եւ Յովսէփ անոր այրը արդար ըլլալով՝ ու չուզելով որ զանիկա խայտառակ ընէ, մտածեց որ ծածկաբար արձակէ զանիկա։ 20 – Եւ քանի որ անիկա այս բաները կը մտածէր, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեցաւ անոր ու ըսաւ, Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար քեզի առնել քու Մարիամ կինդ, վասն զի անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն է։ 21 – Եւ որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յիսուս դնես, քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ։ 22 – Եւ այս ամէնը եղաւ, որպէս զի կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, 23 – Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ։ 24 – Եւ Յովսէփ քունէն արթննալով՝ ինչպէս Տէրոջը հրեշտակը իրեն հրամայեց, այնպէս ըրաւ ու իր կինը քովն առաւ։ 25 – Եւ չէր գիտեր զանիկա՝ մինչև իր անդրանիկ որդին ծնաւ, ու անոր անունը Յիսուս դրաւ։

## ԳԼ. Բ

Ու երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլէհէմին մէջ Հերովդես թագաւորին օրերը, ահա արևելքէն մոգեր եկան Երուսաղէմ, 2 – Ու ըսին, Ո՞ւր տեղ է ան՝ որ Հրեաներուն թագաւոր ծնաւ. վասն զի մենք արևելքի մէջ անոր աստղը տեսանք, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու։ 3 – Ու երբ Հերովդես թագաւորը լսեց, խռովեցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն հետ։ 4 – Եւ ժողվելով բոլոր քահանայապետները ու ժողովուրդին գիպիրները, հարցուց անոնց թէ Քրիստոսը ո՞ւր պիտի ծնանի։ 5 – Անոնք ալ իրեն ըսին, Հրէաստանի Բեթլէհէմին մէջ. վասն զի

*Այ-ինէն, փրկիչ

այսպէս գրուած է Մարգարէին ձեռքով. 6 – Եւ դուն, Բեթլէհէմ, Յուդայի երկիրը, Յուդայի իշխաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես. վասն զի քեզմէ իշխան մը պիտի ելլէ որ իմ Իսրայէլ ժողովուրդս պիտի հովուէ: 7 – Ա՛ն առեն Հերովդէս ծածկաբար մոգերը կանչեց, ու ատուգեց անոնցմէ ատղին երեւցած առենը: 8 – Եւ զանոնք Բեթլէհէմ ղրկելով՝ ըսաւ, Գացէք ատոր ետեւէն մանուկին վրայով, ու երբ գտնէք, ինծի իմացուցէք, որպէս զի ես ալ գամ՝ անոր երկրպագութիւն ընեմ: 9 – Ու երբ անոնք թագաւորէն այս բաները լսեցին, գացին. և ահա այն աստղը զոր արեւելքի մէջ տեսեր էին, անոնց առջեւէն գնաց, մինչև եկաւ կեցաւ մանուկին եղած տեղին վրայ: 10 – Երբ տեսան աստղը, շատ մեծ ուրախութիւնով ուրախացան: 11 – Եւ տունը մտնելով՝ տեսան մանուկը իր մօրը Մարիամի հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տուին անոր, ոսկի ու կնդրուկ և զմուռս: 12 – Ու հրաման առնելով երազի մէջ, որ նորէն Հերովդէսի չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը:

13 – Ու երբ անկէ գացին անոնք, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յովսէփի ու ըսաւ, Ելիր, առ մանուկը ու անոր մայրը, ու եգիպտոս փախիր, և հոն կեցիր մինչև ես քեզի ըսեմ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ այդ մանուկը կորսնցնելու համար: 14 – Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը գիշերով առաւ և գնաց Եգիպտոս, ու մինչև Հերովդէսի մահը հոն էր: 15 – Որպէս զի կատարուի Տէրոջմէն բռնւածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, Եգիպտոսէ կանչեցի իմ որդիս:

16 – Ա՛ն առեն երբ տեսաւ Հերովդէս թէ *խաբուեցաւ մոգերէն, սաստիկ սրդողեցաւ, ու ղրկեց ջարդեց Բեթլէհէմի և անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած բոլոր տղաքը՝ երկու տարեկան և անկէ վար, այն ժամանակին համեմատ զոր մոգերէն ստուգեց: 17 – Ա՛ն առեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով բռնւածը, որ կ'ըսէ, Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ, ողբ, լաց ու մեծ կոծ. 18 – Ռաքէլ կուլայր իր տղոցը համար, ու չէր ուզեր մխիթարուիլ, վասն զի չկային:

19 – Ու երբ Հերովդէս մեռաւ, ահա Տէրոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփի երեւցաւ, 20 – Ու ըսաւ, Ելիր, առ մանուկը ու անոր մայրը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք որ մանուկին կեանքը կը փնտռէին: 21 – Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ Իսրայէլի երկիրը: 22 – Իսկ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի վրայ իր հօրը Հերովդէսի տեղ, վախցաւ հոն երթալու, ու երազի մէջ պատգամառնելով՝ Գալիլեայի կողմերը գնաց. 23 – Եւ եկաւ Նազարէթ բնակեցաւ, որպէս զի մարգարէներուն խօսքը կատարուի՝ թէ Նազովրեցի պիտի կոչուի:

## Գլ. Գ

Ա՛ն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր, 2 – Ու կ'ըսէր, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտեցած է: 3 – Վասն զի ասիկա ան է՝ որու համար Եսայի մարգարէին ձեռքով ըսուեցաւ, որ կ'ըսէ, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիտակեցէք: 4 – Եւ այս Յովհաննէսը իր հանդերձը ուղտի մազէ, ու իր մէջքը կաշիէ գօտի ունէր. և իր կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր: 5 – Ա՛ն առեն Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու Յորդանանու բոլոր կողմերը իրեն կ'ելլէին, 6 – Եւ կը մկրտուէին իրմէ Յորդանանու մէջ, ու իրենց մեղքերը կը խոստովանէին: 7 – Ու երբ տեսաւ փարիսեցիներէն ու սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը եկած, ըսաւ անոնց, Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենէն փախչիլ: 8 – Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղ բերէք. 9 – Եւ մի խորհիք դուք ձեր ներսիդին ըսել, Թէ Մենք Ծէպ Հայր՝ Աբրահամը ունինք. քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ հանել: 10 – Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը դրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէր, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 11 – Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց իմ ետեւէս եկողը ինձմէ զօրաւոր է, ու ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ: անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով. 12 – Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ ու իր ցորենը համբարը պիտի ժողվէ, և չարդը պիտի այրէ չմարող կրակով:

13 – Ա՛ն առեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ Յովհաննէսի, որպէս զի անկէ մկրտուի: 14 – Եւ Յովհաննէս կ'արդիլէր զանիկա ու կ'ըսէր, Ինծի՛ պէտք է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն ինծի՞ կուգաս: 15 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Թող տուր հիմա, վասն զի այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք. ետքը թող տուաւ անոր: 16 – Ու երբ Յիսուս մկրտուեցաւ, շուտ մը ջուրէն դուրս ելաւ, և ահա երկինքը անոր բացուեցաւ, ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի պէս կ'իջնէր, ու կու գար իր վրայ: 17 – Եւ ահա երկինքէն ձայն մը եկաւ՝ որ կ'ըսէր, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որու համար եմ:

## Գլ. Դ

Ա՛ն առեն Յիսուս անապատը տարուեցաւ Սատանայէն Հոգիէն, որպէս զի Սատանայէ փորձուի. 2 – Եւ քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը անօթեցաւ:

3 – Եւ փորձողը անոր մօտենալով՝ ըսաւ, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, ըսէ որ այս քարերը հաց ըլլան: 4 – Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Գրուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ:

5 – Ա՛ն առեն Սատանայ առաւ տարաւ զանիկա սուրբ քաղաքը, և կայնեցուց զանիկա տաճարին աշտարակին վրայ, 6 – Ու ըսաւ անոր, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ապէ վար ձգէ, վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի ապաւրէ քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որպէս զի չըլլայ թէ ոտքդ քարի զարնես: 7 – Յիսուս ըսաւ անոր, Դարձեալ գրուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես:

8 – Սատանայ նորէն առաւ հանեց զանիկա խիստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը. 9 – Ու ըսաւ անոր, Ասոնք ամէնը քեզի կուտամ, եթէ կրնաս՝ ինծի երկրպագութիւն ընես: 10 – Ա՛ն առեն Յիսուս ըսաւ անոր, [Երթա] գնա, Սատանայ, վասն զի գրուած է թէ Քու Տէր Աստուածդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես: 11 – Ա՛ն առեն Սատանայ զանիկա թողուց. և ահա հրեշտակներ եկան ու անոր սպասաւորութիւն կ'ընէին:

12 – Եւ երբ լսեց Յիսուս թէ Յովհաննէս մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա, 13 – Ու ձգելով Նազարէթը, եկաւ բնակեցաւ Կափառնայում՝ ծովեզերեայ *տէ*ր, Զաբուղոնի ու Նեփթաղիմի սահմաններուն մէջ. 14 – Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, 15 – Զաբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անդիի կողմը, Հեթանոսաց Գալիլեան. 16 – Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծագեցաւ անոնց՝ որոնք մահուան երկրին ու շուքին մէջ կը նստէին: 17 – Անկէ եւս Յիսուս սկսաւ քարոզել ու ըսել, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտ է:

18 – Երբ Յիսուս Գալիլեացւոց ծովուն քովերը կը պտըտէր, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչուած Սիմոնը և անոր եղբայրը Անդրէասը, որոնք ծովը ուռկան կը ձգէին, վասն զի ձկնորս էին. 19 – Ես ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ձեզ մարդոց որսորդ ընեմ: 20 – Անոնք ալ շուտ մը ուռկանները թողուցին ու անոր ետեւէն գացին: 21 – Եւ անկէ յառաջ երթալով՝ տեսաւ ուրիշ երկու եղբայրներ, Զերեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, նաւին մէջ իրենց հօրը Զերեդէոսի հետ, երր իրենց ուռկանները կը կարկտէին. ու կանչեց զանոնք. 22 – Անոնք ալ շուտ մը նաւը ու հայրերնին թողուցին ու անոր ետեւէն գացին:

23 – Եւ Յիսուս բոլոր Գալիլեա պտըտելով, կը սորվեցնէր անոնց ժողովա-

*Յոան. ծաղրուեցաւ

բաններուն մէջ, և ազգայութեան ա-
ւետարանը կը քարոզէր, ու ժողովուր-
դին մէջի ամէն կերպ հիւանդութիւն-
ները ու ամէն կերպ ցաւերը կը բժշկէր։
24 – Եւ անոր համբաւը բոլոր Սուրիա
տարածուեցաւ, և բերին անոր՝ բոլոր
հիւանդները որոնք կերպ կերպ ցաւե-
րով ու տանջանքներով կը նեղուէին,
և դիւահարները ու լուսնոտները և ան-
դամալոյծները. ու բժշկեց զանոնք։
25 – Եւ շատ ժողովուրդներ անոր ե-
տևէն կ'երթային, Գալիլեայէ ու Դե-
կապոլիսէ և Երուսաղէմէ ու Հրէաս-
տանէ և Յորդանանու անդիի կողմէն։

## Գլ. Ե

Եւ տեսնելով ժողովուրդները, լե-
ռը ելաւ. ու երբ նստաւ հոն, իր աշա-
կերտները քովը գացին։ 2 – Եւ իր բե-
րանը բանալով կը սորվեցնէր անոնց
ու կ'ըսէր,

3 – Երանի՛ հոգւով աղքատներուն,
վասն զի երկինքի թագաւորութիւնը
անոնցն է։ 4 – Երանի՛ սգաւորներուն,
վասն զի անոնք պիտի մխիթարուին։
5 – Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք
պիտի ժառանգեն երկիրը։ 6 – Երանի՛
անոնց որ անօթի ու ծարաւ են արդա-
րութեան, վասն զի անոնք պիտի կշտա-
նան։ 7 – Երանի՛ ողորմածներուն, վասն
զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն։
8 – Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են,
վասն զի անոնք պիտի տեսնեն զԱ-
ստուած։ 9 – Երանի՛ խաղաղութիւն ը-
նողներուն, վասն զի անոնք Աստուծոյ
որդիներ պիտի կոչուին։ 10 – Երանի՛
անոնց որ հալածուած են արդարու-
թեան համար, վասն զի երկինքի թա-
գաւորութիւնը անոնցն է։ 11 – Երա-
նի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու
կը հալածեն, և սուտ տեղը ամէն կերպ
գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ հնդէ
Համար։ 12 – Ցնծացէք և ուրախ եղէք,
վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը.
քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ
առաջ եղած մարգարէները։

13 – Դուք եք երկրի աղը. ապա եթէ
աղը իր համը կորսնցնէ, ինչ ի՞նչով
պիտի աղուի. անկէ եւս բանի մը
չգար, միայն թէ դուրս ձգուելու և
մարդոց ոտքին տակ կոխուելու։ 14 –
Դուք եք աշխարհի լոյսը. քաղաք մը
որ լեռան վրայ կեցած է, չկրնար պահ-
ուիլ։ 15 – Ու ճրագը չեն վառեր և
դներ գրուանի տակ, հապա աշտանա-
կի վրայ, և լոյս կուտայ բոլոր տանը
մէջ եղողներուն։ 16 – Այնպէս թող
լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև,
որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փա-
ռաւորեն ձեր Հայրը որ երկինքն է։

17 – Մի կարծէք թէ ես եկայ օրէն-
քը կամ մարգարէները ապրելու. չեկայ
ապրելու, հապա կատարելու։ 18 –
Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի,
Մինչև երկինքը ու երկիրը անցնին, օրէն-
քէն յոտ մը կամ նշանագիր մը պիտի
չանցնի, մինչև բոլորն ալ կատարուին։
19 – Ուստի ով որ այս ամենափոքր
պատուիրանքներէն մէկը ապրե, ու
մարդոց այնպէս սորվեցնէ, անկէ
ամենափոքր պիտի կոչուի երկինքի
թագաւորութեանը մէջ. բայց ով որ
ընէ և սորվեցնէ, անկէ մեծ պիտի
կոչուի երկինքի թագաւորութեանը
մէջ։ 20 – Քանզի կ'ըսեմ ձեզի, եթէ
ձեր արդարութիւնը գպիրներուն ու
փարիսեցիներուն արդարութենէն աւելի
չըլլայ, բնաւ պիտի չմտնէք երկինքի
թագաւորութիւնը։

21 – Լսեր էք որ բսուեցաւ առա-
ջիններուն, Սպանութիւն մի ըներ. և
ով որ սպանութիւն ընէ, դատաստա-
նի պարտաւոր պիտի ըլլայ։ 22 – Բայց
ես ձեզի կ'ըսեմ՝ Ով որ իր եղբօրը պա-
րապ տեղը սրդոդի, դատաստանի պարտ-
աւոր պիտի ըլլայ. և ով որ իր եղբօրը
Ցիմար ըսէ, տանեանի պարտաւոր պիտի
ըլլայ. և ով որ էր եղբօրը Անմիտ ըսէ,
գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլ-
լայ։ 23 – Ուրեմն, եթէ քու ընծադ
սեղանին վրայ բերես, ու հոն միտդդ
գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ բան
մը ունի, 24 – Հոն ձգէ քու ընծադ սե-
ղանին առջև, և գնա առաջ եղբօրդ
հետ հաշտուէ, ու եռքը եկուր որ քու
ընծադ մատուցանես։ 25 – Քու ոսո-
խիդ հետ շուտով միաբանէ, քանի որ
անոր հետ ճամբուն մէջ ես. չըլլայ որ
քու ոսոխդ քեզ դատաւորին մատնէ,
և դատաւորը դահիճին, և բանտը
ձգուիս։ 26 – Ճշմարիտ կ'ըսեմ քեզի,
Պիտի չելլես անկէ՝ մինչև որ վերջին
նաքարակիսը չվճարես։

27 – Լսեր էք որ բսուեցաւ՝, Շնու-
թիւն մի ըներ։ 28 – Բայց ես ձեզի

*Որուն կ'ուզենք, առաջիններուն



կ'ըսեմ՝ Ով որ կին մարդու կը նայի անոր
ցանկանալու համար, ալ անիկա իր
սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ։
29 – Աբդ եթէ քու աջ աչքդ քեզ կը
գայթակղեցնէ, հանէ զանիկա ու քեզմէ
ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ ան-
դամներդ մէկը կորսուի, ու քու բոլոր
մարմնդ դժոխքը չձգուի։ 30 – Եւ ե-
թէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ,
կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի
աղէկ է քեզի որ անդամներդ մէկը
կորսուի, ու քու բոլոր մարմնդ դժոխ-
քը չձգուի։ 31 – Իրաւ, բսուեցաւ թէ
Ով որ իր կինը կ'արձակէ, թող անոր
արձակման թուղթ տայ։ 32 – Բայց
ես ձեզի կ'ըսեմ թէ Ով որ իր կինը
կ'արձակէ առանց պոռնկութեան
պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ ա-
նոր շնութիւն ընելուն, և ով որ այն
արձակուածը առնէ, շնութիւն կը
գործէ։

33 – Դարձեալ լսեր էք որ լսուեցաւ
առաջիններուն, Սուտ երդում մի ը-
ներ, հապա ըրած երդումներդ վճարէ
Տէրոջը։ 34 – Բայց ես ձեզի կ'ըսեմ,
Ամենևին երդում մի ընէք, ոչ երկինքի
վրայ՝ որ Աստուծոյ աթոռն է, 35 – Եւ
ոչ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատ-
ուանդանն է, ոչ ալ Երուսաղէմի վրայ՝ որ
մեծ թագաւորին քաղաքն է. 36 – Եւ
ոչ քու գլխուդ վրայ երդում ընես, վասն
զի չես կրնար մէկ մազ ճերմկցնել կամ
սեւցնել։ 37 – Հապա ձեր խօսքը ըլլայ
այո՝ այո, ե– ոչը՝ ոչ. ու ասկէ աւելին
չարէն յառաջ կուգայ։

38 – Լսեր էք որ բսուեցաւ, Աչքի
տեղ աչք, ու ակռայի տեղ ակռայ։
39 – Բայց ես ձեզի կ'ըսեմ, Չարին հա-
կառակ մի կենաք, հապա եթէ մէկը
ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դար-
ձուր անոր միւսն ալ։ 40 – Եւ մէկը որ
կ'ուզէ քեզի հետ դատ վարել ու քու
շապիկդ առնել, թող տուր անոր ե-
վերարկուդ ալ։ 41 – Եւ ով որ քեզ
պահակ բռնէ ու մղոն մը ճամբայ քշէ,
գնա անոր հետ երկու։ 42 – Քեզմէ ու-
զողին տուր, ու երես մի դարձներ ան-
կէ՝ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել։

43 – Լսեր էք որ բսուեցաւ, Քու ըն-
կերդ սիրես ու թշնամիդ ատես։ 44 –
Բայց ես ձեզի կ'ըսեմ՝ Սիրեցէք ձեր
թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծող-
ները, բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ա-
տեն, և աղօթք ըրէք անոնց համար որ
ձեզ կը չարչրկեն ու կը հալածեն.
45 – Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որ-
դիները ըլլաք. վասն զի իր արեւը կը
ծագեցնէ թէ՛ չարերուն և թէ՛ բարի-
ներուն վրայ, և անձրև կը ղրկէ թէ՛
արդարներուն և թէ՛ մեղաւորներուն
վրայ։ 46 – Վասն զի եթէ դուք ձեզ
սիրողները սիրէք, ի՞նչ վարձք կ'ունե-
նաք. չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը
կ'ընեն։ 47 – Եւ եթէ միայն ձեր եղ-
բայրներուն բարև տաք, ի՞նչ աւելի
կ'ընէք – էէՀէԲԲԵ. չէ՞ որ մաքսաւոր-
ներն ալ նոյնը կ'ընեն։ 48 – Ուրեմն
դուք կատարեալ եղէք, ինչպես ձեր
երկնաւոր Հայրն ալ կատարեալ է։

## Գլ. Զ

Զգուշ եղէք որ ձեր ողորմութիւնը
մարդոց առջև չընէք՝ անոնց երեւնալու
համար, եթէ ոչ՝ վարձք չէք առներ
ձեր Հօրմէն որ երկինքն է։ 2 – Ուստի
երբ ողորմութիւն կ'ընես, առջևդ փող
մի հնչեցներ, ինչպես կեղծաւորները
ժողովարաններուն ու փողոցներուն
մէջ կ'ընեն, որպէս զի մարդոցմէ փա-
ռաւորուին. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։
3 – Իսկ դուն երբ ողորմութիւն կ'ընես,
ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռ-
քիդ ինչ գործելը. 4 – Որպէս զի քու
ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ, և քու
Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի
յայտնապէս հատուցում պիտի ընէ։

5 – Ու երբ աղօթք կ'ընես, կեղծա-
ւորներուն նման չըլլաս, որոնք կը սի-
րեն ժողովարաններու մէջ ու հրա-
պարակներուն անկիւնները կայնելով
աղօթք ընել, որպէս զի մարդոց երե-
նան. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք
իրենց վարձքը առած կ'ըլլան։ 6 – Իսկ
դուն երբ աղօթք կ'ընես, մտիր քու
ներքին սենեակդ ու դուռդ գոցէ, և
աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ
տեղը կը ֆԹՆԵ. և քու Հայրդ որ գաղ-
տուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս
հատուցում պիտի ընէ։ 7 – Ու երբ ա-
ղօթք կ'ընէք, հեթանոսներուն պէս
շատախօս մի ըլլաք, վասն զի կը կար-
ծեն թէ իրենց շատ խօսելուն համար
պիտի լսուին։ 8 – Ուրեմն անոնց չնմա-
նիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտք եղած
գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած։
9 – Ուստի այսպէս աղօթք ըրէք դուք.

Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ։ 10 – Գալ թագաւորութիւնդ գայ։ քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ։ 11 – Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր։ 12 – Եւ մեզի ներէ մեր պարաքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն։ 13 – Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա ազատէ մեզ չարէ։ քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս։ Ամէն։

14 – Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ։ 15 – Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չներէր ձեր յանցանքները։

16 – Ու երբ ծոմ կը պահէք, կեղծաւորներուն պէս տրտում մի ըլլաք։ քանզի իրենց երեսները կ'աւերեն որպէս զի մարդոց երևնան թէ ծոմ կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։ 17 – Բայց դուն երբ ծոմ կը պահես, գլուխդ օծէ ու երեսդ լուա, 18 – Որպէս զի մարդոց ծոմ պահողի պէս չերևնաս, հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ է ի՞նչ-է. և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսանէ, *քեզի հատուցում պիտի ընէ։

19 – Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր ցեցը ու ժանգը կ'ապականեն, և ուր գողերը պաո կը ծակեն ու կը գողնան. 20 – Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ոչ ցեցը և ոչ ժանգը կ'ապականէ, ու ոչ գողերը պաո կը ծակեն և կը գողնան։ 21 – Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ։ 22 – Մարմինին ճրագը աչքն է. հապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ։ 23 – Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ալ այն խաւարը ո՞րչափ է։ 24 – Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել. վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ, կա՛մ †մէկուն պիտի յարի՝ և միւսը պիտի արհամարհէ. չէք կրնար Աստուծոյ ու մամոնայի ծառայել։ 25 – Ուստի կ'ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ի՞նչ պիտի ուտէք, կամ ի՞նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմինին համար թէ ի՞նչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն։ 26 – Նայեցէք երկինքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ ամբարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ էք։ 27 – Ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցընել։ 28 – Ու հագուստի համար ինչո՞ւ հոգ կ'ընէք. նայեցէք դաշտի շուշաններուն, ինչպէս կ'աճին. ոչ կաշխատին և ոչ կը մանեն. 29 – Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկ՛ն պէս չպատուեցաւ։ 30 – Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ և վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, հապա ո՛րչափ աւելի ձեզ, Թերահաւատներ։ 31 – Ուրեմն հոգ մի ընէք՝ ըսելով, Ի՞նչ պիտի ուտենք, կամ Ի՞նչ պիտի խմենք, կամ Ի՞նչ պիտի հագնինք. 32 – (Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են։ 33 – Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին։ 34 – Ուստի վաղուան համար հոգ մի ընէք, վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իր նեղութիւնը։

## ԳԼ. Է

Մի դատէք, որպէս զի չդատուիք։ 2 – Քանզի ի՞նչ դատաստանով որ դատէք, անով պիտի դատուիք, և ի՞նչ չափով որ չափէք, անով պիտի չափուի ձեզի։ 3 – Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր։ 4 – Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Թող տուր աչքէդ շիւղը հանեմ. և ահա քու աչքիդ մէջ գերան կայ։ 5 – Կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերանը հանէ, ու հետը պարզ պիտի տեսնես եղբօրդ աչքէն շիւղը հանելու։

6 – Սուրբը բանը շուներուն մի տաք, և ձեր մարգարիտները խոզերուն առջև մի ձգէք, որպէս զի ոտքերնուն տակ չկոխկռտեն զանոնք, ու դառնան ձեզ պատառեն։

7 – Խնդրեցէք, և պիտի տրուի ձեզի. փնտռեցէք, և պիտի գտնէք. դո՛ռ զարկէք, և պիտի բացուի ձեզի. 8 – Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ դո՛ռ կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ 9 – Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որմէ իր որդին եթէ հաց ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր։ 10 – Եւ կամ եթէ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ անոր։ 11 – Ուստի եթէ դուք որ չար էք, ձեր զաւակներուն ազնիկ ընծաներ տալ գիտէք, ո՛րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։

12 – Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք, քանզի այս է օրէնքը ու մարգարէները։

13 – Նեղ դռնէն մտէք. վասն զի լայն է այն դուռը ու ընդարձակ՝ այն ճանապարհ, որ դէպ ի կորուստ կը տանի. և շատեր են անոնք որ անկէ կը մտնեն։ 14 – Վասն զի նեղ է այն դուռը ու նեղսրտած է այն ճամբան, որ դէպ ի կեանք կը տանի. և քիչեր են անոնք որ զանիկա կը գտնեն։

15 – Զգուշ կեցէք սուտ մարգարէներէն, որոնք ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներսէն յափշտակող գայլեր են։ 16 – Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուշերէն խաղող կը քաղեն, կամ տատասկէն թուզ։ 17 – Այսպէս ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ, և չար ծառ չար պտուղ կուտայ։ 18 – Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ։ 19 – Ամէն ծառ որ բարի պտուղ չտար, կը կարուի ու կրակը կը ձգուի։ 20 – Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք։

21 – Ոչ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա անիկա՝ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ։ 22 – Շատերը այն օրը ինծի պիտի ըսեն, Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և քու անունովդ դևեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք։ 23 – Եւ այն ատեն անոնց յայտնապէս պիտի ըսեմ թէ ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մեկնեցէք գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէք։

24 – Ուրեմն ով որ այս իմ խօսքերս կը լսէ և կը կատարէ զանոնք, զանիկա պիտի նմանցնեմ խելացի մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ շինեց. 25 – Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու չփլաւ, վասն զի վէմի վրայ հաստատուած էր։ 26 – Եւ ով որ այս իմ խօսքերս կը լսէ ու չկատարէր զանոնք, կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց. 27 – Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը։

28 – Ու երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը, ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ. 29 – Վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս։

## ԳԼ. Ը

Ու երբ այն լեռնէն վար իջաւ, շատ ժողովուրդներ գացին անոր ետևէն։ 2 – Եւ ահա բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել։ 3 – Եւ Յիսուս իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր ու բսաւ, Կ'ուզեմ՝ մաքրուէ. և շուտ մը անոր բորոտութիւնը մաքրուեցաւ։ 4 – Եւ Յիսուս բսաւ անոր, Զգուշ կեցիր, մարդո՛ւ չըսես, հապա գնա, քեզ քահանային ցուցուր, և Մովսէսի պատուիրած ընծան տուր, անոնց վկայութիւն ըլլալու համար։

5 – Ու *երբ Կափառնայումի մտաւ, հարիւրապետ մը եկաւ քովը, կ'աղաչէր անոր, 6 – Ու կ'ըսէր, Տէր, իմ ծառաս տունը անդամալոյծ պառկած չարաչար կը տանջուի։ 7 – Եւ Յիսուս բսաւ անոր, Ես կու գամ ու զանիկա կը բժշկեմ։ 8 – Եւ հարիւրապետը պատասխան տալով բսաւ, Տէր, ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ

*Ո՛նդ+, երբ Յիսուս

ճոնես. միայն թէ խօսքով զրուցէ, ու քեմ ծառաս պիտի բժշկուի։ 9 – Վասն զի ես ալ իշխանութեան տակ մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակ զինուորներ ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ Թէ եկուր, ու կուգայ. և ծառայիս՝ Թէ Ա՛յս բանը ըրէ, ու կ'ընէ։ 10 – Յիսուս երբ լսեց, զարմացաւ, և էջ եռևէն գացողներուն ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ։ 11 – Եւ ձեզի կ'ըսեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն շատեր պիտի գան, ու երկինքի թագաւորութեանը մէջ պիտի բազմին Աբրահամի ու Իսահակի և Յակոբի հետ. 12 – Իսկ թագաւորութեանը որդիները դուրսի խաւարը պիտի հանուին. հոն պիտի լայ ու ակռաները կրճտէլ։ 13 – Եւ Յիսուս հարիւրապետին ըսաւ, Գնա, ու ինչպէս դուն հաւատացիր, այնպէս թող ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր ծառան բժշկուեցաւ։

14 – Եւ Յիսուս Պետրոսի տունը գալով, տեսաւ որ անոր զբօսնյէը ջերմէն բռնուած՝ պառկած էր. 15 – Եւ անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը թող տուաւ զանիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ և *անոնց սպասաւորութիւն կ'ընէր։

16 – Երբ իրիկուն եղաւ, շատ դիւահարներ բերին անոր, ու խօսքով հանեց ւոր ոգիները և բոլոր հիւանդները բժշկեց. 17 – Որպէս զի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը կատարուի, Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց և չէր ցաւերը կրեց։

18 – Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան։ 19 – Եւ դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վարդապետ, կ'գաս ես պիտի գամ ու երթամ։ 20 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր ունին, ու երկինքի թռչուները բոյներ, բայց Որդին մարդոյ տեղ չունի, ուր իր գլուխը դնէ։ 21 – Եւ մէկ ուրիշը, որ անոր աշակերտներէն էր, ըսաւ անոր, Տէր, ինծի հրաման տուր, որ երթամ առաջ իմ հայրս թաղեմ։ 22 – Յիսուս ըսաւ անոր, Եկուր իմ հետևէս, ու թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները։

23 – Ու երբ նաւը մտաւ, իր աշակերտները իր հետևէն գացին. 24 – Եւ ահա մեծ աղիկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ, այնպէս որ նաւը ալիքներէն կը ծածկուէր. իսկ ինք կը քնանար։ 25 – Եւ աշակերտները մօտ գացին, արթնցուցին զանիկա ու ըսին, Տէր, ազատէ մեզ, ահա կը կորսուինք։ 26 – Եւ ըսաւ անոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. այն ատեն ելաւ հովերուն ու ծովուն սաստեց, և մեծ խաղաղութիւն եղաւ։ 27 – Ու մարդիկը զարմացան և կ'ըսէին, Ինչպիսի մարդ է ասոր որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին։

28 – Ու երբ միւս կողմը *Գերգեսացւոց երկիրը անցաւ, երկու դիւահար պատահեցան իրեն դերեզմաններէն ելած՝ սոսկալի կատղած, այնպէս որ հնար չէր մարդու այն ճամբային անցնիլ։ 29-Եւ ահա աղաղակեցին ու ըսին, Ցիսուս, Որդի Աստուծոյ, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, առեւէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար։ 30 – Եւ անոնցմէ հեռու շատ խոզերու երամակ մը կար, որոնք կ'արածուէին։ 31 – Ու դևերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Եթէ մեզ կը հանես, հրամայէ տուր մեզի որ երթանք խոզերուն երամակին մէջ մտնենք։ 32 – Եւ ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան գացին խոզերուն երամակին մէջ մտան, և ահա բոլոր երամակը գահավէժ սեղէն ծովը վազեցին, ու ջուրերուն մէջ մեռան։ 33 – Խոզարածներն ալ փախան, և քաղաքը երթալով բոլորը պատմեցին, ու դիւահարներուն պատահածը։ 34 – Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսի դէմ ելաւ, ու երբ տեսան զանիկա, աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ։

## Գլ. Թ

Եւ նաւը մտնելով անդին կողմը անցաւ, ու եկաւ իր քաղաքը։ 2 – Եւ ահա բերին իրեն անդամալոյծ մը, որ մահիճի մէջ պառկած էր. և Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին, Քաջալերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են։

*Ոմանք, անոր

*Ոմանք, Գադարացւոց



3 – Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց *Գրէին մէջ ըսին, Անիկա Հայհոյութիւն կ'ընէ։ 4 – Յիսուս ալ անոնց խորհուրդները իմանալով՝ ըսաւ, Ինչո՞ւ սիրտերնուդ մէջ չար բաներ կը խորհիք։ 5 – Քանզի ո՞րը աւելի դիւրին է. Քու մեղքերդ ներուած են՝ ըսե՞լը, Թէ ելիր ու քալէ՝ ըսելը։ 6 – Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (այն ատեն անդամալոյծին ըսաւ,) Ելիր, մահիճդ առ ու տունդ գնա։ 7 – Ու անիկա ելաւ իր տունը գնաց։ 8 – Ժողովուրդները երբ տեսան, զարմացան, ու փառաւորեցին զԱստուած, որ մարդոց այնպիսի իշխանութիւն տուեր էր։

9 – Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով՝ մարդ մը տեսաւ Մատթէոս անուանով, որ մաքսի ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Եռևէս եկուր. ան ալ ելաւ անոր եռևէն գնաց։ 10 – Ու եղաւ որ տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկած ու սեղան նստած էին Յիսուսի ու անոր աշակերտներուն հետ։ 11 – Ու փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ։ 12 – Բայց Յիսուս երբ լսեց՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն։ 13 – Գացէք սորվեցէք թէ ինչ է այս խօսքը, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զոհ. վասն զի ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները *ապաշխարութեան։

14 – Ա՛յն ատեն Յովհաննէսի աշակերտները անոր եկան ու ըսին, Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահեր։ 15 – Ու Յիսուս ըսաւ անոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը սուգ պահեն, քանի որ փեսան իրենց հետ է. բայց օրեր պիտի գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, այն ատեն ծոմ պիտի պահեն։ 16 – Ու մէկը չձգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ, քանզի այն որ անոր լրութիւնը համբ գրաւած է, կ'առնէ հանդերձէն, ու պատռուածքը աւելի դէշ կ'ընէ։ 17 – Ոչ ալ նոր գինին հին տիկերու մէջ կը գնեն. եթէ ոչ՝ տիկերը կը պատռին ու գինին կը թափի, և տիկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը գնեն, ու երկուքն ալ կը պահուին։

18 – Երբ անիկա անոնց հետ այս բաները կը խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկս ա՛լ հիմա մեռած է, բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր, ու պիտի ապրի։ 19 – Եւ Յիսուս ելաւ ու իր աշակերտներուն հետ անոր եռևէն գնաց։

20 – Եւ ահա տասներկու տարուան տեստահս կին մը մօտեցաւ եռևէն, անոր հանդերձին քղանցքին դպաւ. 21 – Քանզի իր *Գրէին մէջ կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձին դպչիմ, պիտի բժշկուիմ։ 22 – Բայց Յիսուս երբ եռին դարձաւ ու տեսաւ զանիկա, ըսաւ, Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց. և կինը նոյն ժամուն բժշկուեցաւ։

23 – Ու երբ Յիսուս իշխանին տունը եկաւ, ու տեսաւ փողահարները և խռոված բազմութիւնը, 24 – Ըսաւ անոնց, Մեկնի գացէք, վասն զի աղջիկը մեռած չէ, հապա կը քնանայ։ Եւ ծաղր կ'ընէին զանիկա։ 25 – Ու երբ բազմութիւնը դուրս ձգուեցաւ, ինք ներս մտաւ, անոր ձեռքէն բռնեց, ու աղջիկը ոտք ելաւ։ 26 – Եւ այս լուրը բոլոր երկիրը տարածուեցաւ։

27 – Ու երբ Յիսուս անկէ՝ առաջ անցաւ, երկու կոյր ինկան անոր հետևէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի, Որդի Դաւիթ։ 28 – Ու երբ տուն եկաւ, կոյրերը իրեն եկան. և Յիսուս անոնց ըսաւ, Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել։ Ըսին անոր, Այո, Տէր։ 29 – Ա՛յն ատեն անոնց աչքերուն դպաւ ու ըսաւ, Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի։ 30 – Ու անոնց աչքերը բացուեցան. և Յիսուս խստիկ պատուէր տուաւ անոնց ու ըսաւ, Զգուշ կեցէք, մէ՛կը չիմանայ։ 31 – Բայց անոնք ելան, այն բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին։

32 – Եւ երբ անոնք դուրս ելան, ահա համր դիւահար մարդ մը բերին իրեն։ 33 – Ու երբ դևը ելաւ, համրը խօսեցաւ. և ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին թէ Իսրայէլի մէջ բնաւ այսպիսի բան մը տեսնուած չէ։

*Ոմանք ըսէին

34 – Բայց փարիսեցիները կ'ըսէին Թէ Ատիկա դեւերուն իշխանովը դեւերը կը հանէ։

35 – Եւ Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները ու գիղերը, և անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր ու կը քարոզէր արքայութեան աւետարանը, և կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ։ 36 – Եւ ժողովուրդները տեսնելով, անոնց վրայ խղճաց, վասն զի յոգնած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս։ 37 – Ա.յն ատեն ըսաւ իր աշակերտներուն, Հունձքը շատ է, բայց մշակները քիչ։ 38 – Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հունձքին։

## ԳԼ. Ժ

Եւ իր քով կանչելով իր տասներկու աշակերտները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ, որպէս զի զանոնք հանեն, և ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն։

2 – Ու տասներկու առաքեալներուն անունները տանք են. առաջինը Սիմոն, Պետրոս ըսուածը և անոր եղբայրը Անդրէաս, 3 – Յակոբոս Զեբեդեան և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեան և Ղեբէոս որ Թադէոս մականունցեալ, 4 – Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ նաև մատնեց զանիկա։

5 – Ա.յս տասներկուքը Յիսուս ղրկեց, և անոնց պատուիրեց՝ ըսելով, Հեթանոսներու ճամբայ մի երթաք ու Սամարացիներու քաղաք մի մտնէք, 6 – Հապա աւելի Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն գացէք։ 7 – Ու երբ կ'երթաք, քարոզեցէք ու ըսէք Թէ Երկինքի թագաւորութիւնը մօտեցած է։ 8 – Հիւանդները բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք, դեւերը հանեցէք. ձրի առեր էք, ձրի տուէք. 9 – Մի առնանաք ոսկի, և ոչ արծաթ, և ոչ պղինձ ձեր գօտիներուն մէջ, 10 – Ոչ ճամբու համար պարկ, և ոչ կրկին հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան, վասն զի մշակը իր կերակուրին արժանի է։ 11 – Եւ ո'ր քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք Թէ ո'վ է անոր մէջ արժանաւորը, ու հոն կեցէք մինչև ելլէք։ 12 – Ու երբ տունը կը մտնէք, բարև տուէք *անոր։ 13 – Եւ եթէ այն տունը արժանաւոր է, ձեր բարևը անոր վրայ գայ. հապա եթէ արժանաւոր չէ, ձեր բարևը ձեզի դառնայ։ 14 – Եւ ով որ ձեզ չընդունի, ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբ այն տունէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին թօթվեցէք։ 15 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ այն քաղաքին։

16 – Ա.հա ես ձեզ կը ղրկեմ իբրև ոչխարներ գայլերու մէջ. ուստի օձերու պէս խորագէտ եղէք և աղաւնիներու պէս միամիտ։ 17 – Իսկ մարդոցմէ զգուշացէք. վասն զի ձեզ ատեաններու պիտի մատնեն, ու իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն։ 18 – Եւ իմ Անունա.ս համար կուսակալներու ու թագաւորներու առջև պիտի տարուիք, անոնց և հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար։ 19 – Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի ընէք թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսիք, վասն զի ձեզի պիտի տրուի այն ժամուն ինչ որ պիտի խօսիք։ 20 – Վասն զի ոչ Թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսիդին կը խօսի։ 21 – Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մատնէ, և հայրը՝ որդին. և որդիները էրինդ ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք։ 22 – Եւ իմ անուանս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի։ 23 – Ու երբ այս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն, ուրիշ *տե.ղ փախէք. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհասցնէք, մինչև Որդին մարդոյ գայ։ 24 – Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ, և ոչ ծառան իր տէրոջմէն։ 25 – Հերիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տէրոջը պէս. եթէ տանուտէրը Բէեղզեբուղ կոչեցին, ո'րչափ աւելի անոր ընտանիքը։ 26 – Ուստի մի վախնաք անոնցմէ, վասն զի գան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի։ 27 – Ինչ որ ձեզի մըթին մէջ կ'ըսեմ, ղ.ւսէք լոյսի մէջ խօսեցէք, և ինչ որ ականջի ի վար կը լսէք, տանիքներուն վրայ քարոզեցէք։ 28 – Եւ մի վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպանանեն, ու չեն կրնար հոգին սպաննել. հապա աւելի անկէ վախցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին մէջ կորսնցնել։ 29 – Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին, և ա.նոնցմէ մէ'կը գետինը չիյնար առանց ձեր Հօրը։ 30 – Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած են։ 31 – Ուրեմն մի վախնաք, վա.ն զի շատ ճնճղուկներէն լա.ւ էք դուք։ 32 – Ա.րդ ով որ մարդոց առջև զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է։ 33 – Եւ ով որ մարդոց առջև զիս կ'ուրանայ, ես ալ զանիկա պիտի ուրանամ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է։ 34 – Մի կարծէք Թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղաղութիւն ձգելու չեկայ՝ հապա սուր. 35 – Վասն զի եկայ մարդը իր Հօրմէն զատելու, ու աղջիկը իր մօրմէն, ու հարսը իր կեսուրէն։ 36 – Եւ մարդուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան։ 37 – Ա.ն որ Հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. և ա.ն որ տղան կամ աղջիկը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. 38 – Եւ ա.ն որ իր խաչը չառնէր ու իմ ետևէս գար, ինծի արժանի չէ։ 39 – Ա.ն որ իր անձը կը գտնէ, պիտի կորսնցնէ զանիկա. և ա.ն որ իր անձը ինծի համար կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա։ 40 – Ա.ն որ ձեզ կ'ընդունի, զիս կ'ընդունի. և ա.ն որ զիս կ'ընդունի, զիս ղրկողը կ'ընդունի։ 41 – Ա.ն որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէի անունով, մարգարէի վարձք կ'առնէ. և ա.ն որ արդար մը կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք կ'առնէ։ 42 – Ու ա.ն որ այս պզտիկներէն մէկուն միայն գաւաթի մը պաղ ջուր կը խմցնէ աշակերտի անունով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ընաւ իր վարձքը պիտի չկորսնցնէ։

## ԳԼ. ԺԱ

Եւ եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տասներկու աշակերտներուն պատուէր տալը, գնաց անկէ անոնց քաղաքներուն մէջ քարոզելու և սորվեցնելու։

2 – Իսկ Յովհաննէս բանտին մէջ երբ լսեց Քրիստոսի գործերը, իր աշակերտներէն երկուքը ղրկելով 3 – Ըսաւ ա.նոր, Դուն ա՞ն ես որ գալու էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ 4 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գացէք պատմեցէք Յովհաննէսի ինչ որ կը լսէք ու կը տեսնէք. 5 – Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն ու աղքատներուն աւետարան կը քարոզուի։ 6 – Եւ երանի՛ անոր որ իմ՛ վրայովս չգայթակղիր։

7 – Ու երբ անոնք գացին, Յիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Յովհաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէջ. եղէ՞գ մը հովին շարժուած։ 8 – Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փափուկ հանդերձներ հագած մա՞րդ մը. ահա փափուկ հանդերձներ հագնողները թագաւորներուն տուներն են։ 9 – Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞. այո, կ'ըսեմ ձեզի, մարգարէէ մըն ալ աւելի։ 10 – Վասն զի ա.սիկա է՝ որու համար գրուած է, Ա.հա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ առաջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ։ 11 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կիներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտիչէն մեծ չէ. սակայն երկինքի թագաւորութեանը մէջ ամէնէն պզտիկը անկէ մեծ է։ 12 – Ու Յովհաննէս մկրտիչին օրերէն մինչև հիմա երկինքի թագաւորութիւնը ուժով կ'առնուի, և ուժգնները կը յափշտակեն զանիկա։ 13 – Վասն զի բոլոր մարգարէները ու օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէութիւն ըրին։ 14 – Եւ եթէ կ'ուզէք ընդունիլ, անիկա է Եղիան՝ որ պիտի գար։ 15 – Ա.ն որ լսելու ականջ ունի, թող լսէ։ 16 – Բայց որո՞ւ նմանցնեմ այս ազգը. կը նմանի ազոց, որոնք շուկաները նստելով՝ իրենց ընկերներուն կը կանչեն, 17 – Ու կ'ըսեն, Փող հնչեցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, ողբ կարգացինք ձեզի՝ ու կոծ չըրիք։

*Ո՛ման+, մաքրեցէք, մեռելները յարուցէք

*Ո՛ման+, անոր՝ ու ըսէք, Բարև այս տանը

18 – Ա՛ման զի Յովհաննէս եկաւ, ոչ կ՚ուտէր և ոչ կը խմէր, ու կ՚ըսեն, Դե կայ անոր ներսիդին։ 19 – Որդին մարդոյ եկաւ, կ՚ուտէ ու կը խմէ, և կ՚ըսեն, Ահա ուտող և արբեցող մարդ մը, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ։ Եւ իմաստութիւնը արդարացաւ իր որդիներէն։

20 – Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները, որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներէն շատերը, քանզի չապաշխարեցին. 21 – Ա՛ւ՛յ քեզ, Քորազին, ա՛ւ՛յ քեզ, Բեթսայիդա, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնց քուրձով ու մոխիրով ապաշխարած պիտի ըլլային։ 22 – Բայց ձեզի կ՚ըսեմ, Տիւրոսի և Սիդոնի ատենի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի։ 23 – Եւ դուն, Կափառնայում, որ մինչև երկինք բարձրացած ես, մինչև դժոխք պիտի իջնես, վասն զի եթէ Սոդոմի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք քու մէջդ եղան, էջա՛ր մինչև այսօր գոն պիտի մնար։ 24 – Բայց ձեզի կ՚ըսեմ՝ որ Սոդոմացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ քեզի։

25 – Նայն ժամանակ պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկինի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու դիւտուններէն, ու տղոց յայտնեցիր. 26 – Ա՛յո, ով Հայր, վասն զի քու առջեդ այսպէս հաճելի եղաւ։ 27 – Ամէն բան ինծի արուեցաւ իմ Հօրմէս, ու մէ՛կը չճանչնար Որդին, բայց Հայրը, և մէ՛կը չճանչնար Հայրը, բայց Որդին, և ան՝ որուն Որդին կ՚ուզէ յայտնել։ 28 – Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ։ 29 – Իմ լուծս ձեր վրայ առէք, և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք. 30 – Վասն զի իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթև։

## Գլ. ԺԲ

Այն ատեն Յիսուս շաբաթ օրը գնաց արտերուն միջէն, և իր աշակերտները անօթեցան, ու սկսան ցորեննէ հասկեր փրցնել և ուտել։ 2 – Փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր, Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ շաբաթի օրը գործել։ 3 – Ան ալ անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին. 4 – Ինչպես մտաւ Աստուծոյ տունը, և առաջաւորութեան հացերը կերաւ, որ չէ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ անոնց որ իրեն հետ էին, բայց միայն քահանաներուն։ 5 – Կամ թէ օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր, որ քահանաները շաբաթի օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են։ 6 – Բայց ձեզի կ՚ըսեմ որ այս տեղ տաճարէն մեծ մէկը կայ։ 7 – Եւ եթէ դիտնայիք թէ ինչ ըսել է, Ողորմութիւն կ՚ուզեմ ու ոչ թէ զոհ, ա՛ն ատեն անպարտները չէիք դատապարտեր. 8 – Քանզի Որդին մարդոյ *շաբաթին տէրն է։

9 – Եւ անկէ երթալով եկաւ անոնց ժողովարանը։ 10 – Եւ հոն մարդ մը կար, որուն ձեռքը չորցած էր. և հարցուցին անոր, ու ըսին թէ շաբաթի օրը բժշկել արժա՞ն է, որպես զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն։ 11 – Ան ալ ըսաւ անոնց, Ձեզմէ ո՞ր մարդը կայ, որ ոչխար մը ունենայ, և անիկա շաբաթի օրը փոսի մէջ ինկայ, պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկա։ 12 – Արդ ո՛րչափ աւելի է մարդը ոչխարէն. ուրեմն շաբաթի օրը բարի գործել արժան է։ 13 – Այն ատեն ըսաւ այն մարդուն, Երկնցուր ձեռքդ. ան ալ երկնցուց, ու սղջացաւ միւսին պէս։ 14 – Իսկ փարիսեցիները դուրս ելլելով անոր վրայ խորհուրդ կ՚ընէին թէ ինչպես զանիկա կորնցնեն։

15 – Եւ Յիսուս երբ գիտցաւ, զատուեցաւ անկէ. և շատ ժողովուրդներ անոր եաւէն գացին, ու ամէնը բժշկեց։ 16 – Եւ սաստիկ պատուիրեց անոնց որ զինք *յա՛յտ՝ չյայտնեն. 17 – Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, 18 – Ա՛հա իմ ծառաս, զոր ընտրեցի, Ե՛ իմ սիրելիս, որու հաճեցաւ իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի պատմէ։ 19 – Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ, և ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ։ 20 – Ջախջախուած եղէգը պիտի չփշրէ, ու պղպջած պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ դատաստանը յաղթութեան հանէ։ 21 – Եւ հեթանոսները անոր անունը պիտի յուսան։

22 – Ա՛յն ատեն կոյր ու համր դիւահար մը բերին իրեն, և զանիկա բժշկեց, այնպէս որ համրը ու կոյրը խօսեցաւ ու տեսաւ։ 23 – Եւ բոլոր ժողովուրդները զարմացան ու կ՚ըսէին, Արդեօք ասիկա՞ է Դաւիթի որդին։ 24 – Բայց փարիսեցիները երբ լսեցին՝ ըսին, Ասիկա *–էյ՛ բո՛ւ չ՚հաներ դեւերը, բայց դեւերուն Բէեղզեբուղ իշխանովը։ 25 – Եւ Յիսուս անոնց խորհուրդները իմանալով՝ ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ՚աւերի. և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չկրնար կենալ։ 26 – Եւ եթէ Սատանայ Սատանայ կը հանե, իրեն դէմ բաժնուեցաւ. ուստի ի՞նչպէս պիտի կենայ անոր թագաւորութիւնը։ 27 – Ու եթէ ես Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։ 28 – Բայց եթէ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։ 29 – Կամ ի՞նչպէս կրնայ մէկը զօրաւոր մարդու մը տունը մտնել, և անոր կարասիները յափշտակել, եթէ առաջ այն զօրաւոր մարդը չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ։ 30 – Ան որ ինծի հետ չէ, ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ չժողվեր, ցիր ու ցան կ՚ընէ։ 31 – Անոր համար ձեզի կ՚ըսեմ, Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սո՛ւրբ Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց։ 32 – Եւ ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ՚ըսէ, պիտի ներուի անոր, բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ՚ըսէ, պիտի չներուի անոր, ոչ այս աշխարհին մէջ և ոչ գալոց աշխարհին մէջ։ 33 – Կա՛մ ծառը բարի ըրէք, ու անոր պտուղը բարի, կա՛մ ծառը չար ըրէք, ու անոր պտուղը չար. վասն զի ծառը պտուղէն կը ճանչցուի։ 34 – Իժերու ծնունդներ, ինչպէս կրնաք բարի խօսիլ, որ չար էք. վասն զի սրտին աւելցուքէն բերանը կը խօսի։ 35 – Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ, և չար մարդը չար բաներ կը հանէ։ 36 – Բայց ձեզի կ՚ըսեմ՝ թէ Ամէն դատաւոր խօսքի համար՝ զոր մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան։ 37 – Վասն զի քու խօսքերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ պիտի դատապարտուիս։

38 – Այն ատեն դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք պատասխան տուին իրեն ու ըսին, Վարդապե՛տ, կ՚ուզենք քեզմէ նշան մը տեսնել։ 39 – Անիկա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Չար և շնացող ազգը նշան կ՚ուզէ, և *–էյ՛ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը։ 40 – Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու երեք գիշեր կէտ ձուկին փորին մէջ էր, այնպէս Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրի սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր։ 41 – Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի կենան ու պիտի դատապարտեն զանիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնովը զղջին եկան. և ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս։ 42 – Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի կենայ ու պիտի դատապարտէ զանիկա, վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս։

43 – Ու երբ պիղծ ոգին մարդէ մը կ՚ելլէ, անջուր տեղեր կը պտրտի, հանգստութիւն կը փնտռէ ու չգտներ. 44 – Այն ատեն կ՚ըսէ, Դառնամ նորէն իմ տունս, ուրկէ ելայ. և կու գայ ու կը գտնէ պարապ, մաքրուած ու յարդարուած։ 45 – Այն ատեն կ՚երթայ և իրեն հետ կ՚առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ՚ըլլայ. այսպէս պիտի ըլլայ այս չար ազգին ալ։

46 – Ու քանի որ ինք ժողովուրդին կը խօսեր, ահա իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին, և կ՚ուզէին իրեն հետ խօսիլ։ 47 – Ու մէկը իրեն ըսաւ, Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, և կ՚ուզեն քեզի հետ խօսիլ։ 48 – Ան ալ իրեն ըսողին պատասխան տուաւ ու ըսաւ, Ո՞վ է իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս։ 49 – Եւ իր ձեռքը դէպի իր աշակերտները երկնցնելով ըսաւ, Ահա իմ մայրս և իմ եղբայրներս. 50 – Վասն զի ով

*Ո՛ման՝, շաբաթին ալ

որ իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քոյրս ու մայրս։

## ԳԼ. ԺԲ

Ա.յն օրը Յիսուս տունէն ելլելով ծովուն եղերքը նստաւ։ 2 – Եւ շատ ժողովուրդներ քովը ժողվուեցան, այնպէս որ ինք նաւը մտաւ ու նստաւ, և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր։ 3 – Ու շատ բաներ խօսեցաւ անոնց առակներով, և ըսաւ,

4 – Ա.հա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք։ 5 – Եւ ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ինկան, ուր շատ հող չկար, և շուտ մը բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն համար։ 6 – Սակայն արեւուն ծագած ատեներ այրեցան, ու արմատ չունենալնուն համար չորցան։ 7 – Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանոնք։ 8 – Եւ ուրիշները ինկան աղէկ հողի մէջ, ու պտուղ կուտային՝ ո՛րը հարիւրհարիւր, ո՛րը վաթսուն, և ո՛րը երեսուն։ 9 – Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

10 – Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն, Ինչո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց։ 11 – Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Անոր համար՝ որ ձեզի տրուած է գիտնալ երկինքի թագաւորութեան խորհուրդները, և անոնց տրուած չէ։ 12 – Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի ու պիտի աւելնայ. և ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ 13 – Անոր համար առակներով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ, և կը լսեն՝ ու չեն լսեր ու միտք չեն առներ։ 14 – Եւ անոնց վրայ կը կատարուի Եսայիի մարգարէութիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք, ու պիտի չհմանաք, և տեսնելով պիտի տեսնէք, ու պիտի չտեսնէք։ 15 – Վասն զի այս ժողովուրդին սիրտը թմնձրացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որպէս զի չերկնայ թէ բնաւ աչքերով տեսնեն և ականջներով լսեն և սրտով իմանան ու դարձի գան, և ես զանոնք բժշկեմ։ 16 – Բայց երանի՛ է ձեր աչքերուն որոնք կը տեսնեն, ու ձեր ականջներուն որոնք կը լսեն։ 17 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել՝ ու չտեսան, և ձեր լսածները լսել՝ ու չլսեցին։

18 – Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք։ 19 – Ա.յն ամէնը որ թագաւորութեան խօսքը կը լսէ ու միտք չառներ, չարը կու գայ ու անոր սրտին մէջ ցանուածը կը յափշտակէ. ասիկա այն է որ ճամբուն քով ցանուեցաւ։ 20 – Եւ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանիկա. 21 – Բայց իր մէջ արմատ չունենալով, քիչ ժամանակ կը տեւէ. ու երբ նեղութիւնկամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը կը գայթակղի։ 22 – Եւ փուշերուն մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զբաղմունքը և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ անպտուղ։ 23 – Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ կու տայ, ո՛րը հարիւր, ո՛րը վաթսուն, ու ո՛րը երեսուն։

24 – Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց. 25 – Ու երբ մարդիկ կը քնանային, իր թշնամին եկաւ ու ցորեներին մէջ սրամ ցանեց և գնաց. 26 – Ու երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ ետև սրամն ալ երեւեցաւ։ 27 – Ուստի տանուտերոջ ծառաները մօտեցան ու իրեն ըսին, Տէր, չէ՞ որ դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն որտէ՞ւ ունի։ 28 – Եւ անիկա ըսաւ անոնց, Թշնամի մարդ մը ըրած է ասիկա. ծառաները իրեն ըսին, Հիմա կ'ուզե՞ս որ երթանք զանիկա մէկդի քաղենք. 29 – Ան ալ ըսաւ, Ոչ, չըլլայ թէ որոմը քաղած ատենիդ ցորենն ալ անոր հետ փրցնէք։ 30 – Թող տուէք որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչև հունձքի ատենը. և հունձքի ատենը հնձողներուն պիտի ըսեմ, Առաջ որոմը քաղեցէք, և զանիկա խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք։

31 – Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը մանանեխի հատի նման է, զոր մարդ մը առաւ, իր արտին մէջ ցանեց. 32 – Որ ամէն սերմերէն պզտիկ է, ու երբ աճի, ամէն խոտեղէններէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, այնպէսորերկինքի թռչունները կուգան և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։

33 – Ուրիշ առակ մըն ալ ըրաւ անոնց ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը խմորի նման է, զոր կին մը առաւ, երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև ամէնն ալ խմորեցաւ։

34 – Յիսուս այս ամէն բաները առակներով խօսեցաւ ժողովուրդին, ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց. 35 – Որպէս զի կատարուի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, Առակներով պիտի բանամ իմ բերանս, աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները յայտնի պիտի բերեմ։

36 – Ա.յն ատեն Յիսուս ժողովուրդները թողուց, տունը եկաւ, և իր աշակերտները մօտեցան իրեն ու ըսին, Արտին որոմներուն առակը մեկնէ մեզի։ 37 – Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Բարի սերմը ցանողը Որդին մարդոյ է. 38 – Ու արտը աշխարհս է. իսկ բարի սերմը անոնք են որ թագաւորութեանը որդիներն են, բայց որոմը չարին որդիներն են. 39 – Եւ թշնամին որ զանիկա ցանեց, Սատանան է, և հունձքը աշխարհիս վերջն է, ու հնձողները հրեշտակներն են։ 40 – Արդ ինչպէս որ որոմը կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի, աշխարհիս վերջն ալ այնպէս պիտի ըլլայ։ 41 – Որդին մարդոյ իր հրեշտակները պիտի ղրկէ, ու պիտի ժողվեն անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները, և զանիկա որ անօրէնութիւն կը գործեն, 42 – Ու կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։ 43 – Ա.յն ատեն արեւի պէս պիտի փայլին արդարները իրենց Հօրը թագաւորութեանը մէջ։ Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ։

44 – Դարձեալ երկինքի թագաւորութիւնը արտի մէջ պահուած գանձի նման է, զոր մարդ մը գտնելով կը ծածկէ, և ուրախութենէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ, ու այն արտը կը գնէ։



45 – Դարձեալ երկինքի թագաւորութիւնը վաճառական մարգու մը նման է, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ. 46 – Եւ պատուական մարգարիտ մը գտնելով, գնաց իր բոլոր ունեցածը ծախեց, ու զանիկա գնեց։

47 – Դարձեալ երկինքի թագաւորութիւնը ծովը ձգուած ուռկանի մը նման է, որ ամէն տեսակէն կը ժողվէ. 48 – Որ երբ լեցուեցաւ, ցամաքը հանեցին, ու նստան՝ աղէկները ամաններու մէջ ժողվեցին և անշահը դուրս ձգեցին։ 49 – Ա.յսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն, ու արդարներուն մէջէն չարերը պիտի զատեն, 50 – Ու պիտի ձգեն զանոնք կրակի հնոցին մէջ, հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։

51 – Ըսաւ անոնց Յիսուս, Հասկցա՞ք այս ամէն բաները. ըսին անոր, Ա.յո, Տէր։ 52 – Եւ անիկա ըսաւ անոնց, Անոր համար ամէն գիպիր որ երկինքի թագաւորութեան աշակերտեալ է, նման է տանուտէր մարդու մը որ իր գանձէն նոր ու հին բաներ կը հանէ։

53 – Ու երբ կատարեց Յիսուս այս առակները, անկէ մեկնեցաւ. 54 – Եւ եկաւ իր գաւառը, ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ. մինչև որ կը զարմանային անոնք ու կ'ըսէին, Ասիկա ուրկէ՞ ունի այս իմաստութիւնը և հրաշքները. 55 – Ասիկա հիւսին որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ չը՞ կոչուիր, ու ասոր եղբայրները՝ Յակոբոս և Յովսէս ու Սիմոն և Յուդա. 56 – Ու ասոր քոյրերը ամէնը մեր քով չե՞ն ալ ինք ուրկէ՞ ունի այս ամէն բաները։ 57 – Եւ անոր վրայով կը գայթակղէին. բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ, բայց միայն իր գաւառին ու իր տանը մէջ։ 58 – Եւ հոն շատ հրաշքներ չըրաւ անոնց անհաւատութեանը համար։

## ԳԼ. ԺԴ

Ա.յն ժամանակ Հերովդէս չորրորդապետը Յիսուսի համբաւը լսեց. 2 – Ու իր ծառաներուն ըսաւ, Անիկա Յովհաննէս մկրտիչն է. անիկա մեռելներէն յարութիւն առած է, և անոր համար հրաշքներ կ'ըլլան անով։

3 – Վասն զի Հերովդէս Յովհաննէսը բռներ, զանիկա կապեր ու բանտը դրեր

էր, իր եղբօր Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար։ 4 – Վասն զի Յովհաննէս ասէր անոր կ'ըսէր, Ինդի օրինաւոր չէ զանիկա ունենալ։ 5 – Ուստի կ'ուզէր զանիկա սպաննել, բայց ժողովուրդէն կը վախնար, վասն զի իբրև մարգարէ կ'ընդունէին զանիկա։ 6 – Ու երբ Հերովդէսի ծննդեան օրը եղաւ, Հերովդիայի աղջիկը խաղաց հռչակեցուց մէջ, ու Հերովդէսի հաճելի եղաւ։ 7 – Ուստի երդումով խոստացաւ որ տայ անոր ի՛նչ որ ուզելու ըլլայ։ 8 – Եւ անիկա առաջ իր մօրմէն խրատուելով՝ ըսաւ, Տուր ինծի հոս Յովհաննէս մկրտչին գլուխը սկուտեղի մը վրայ։ 9 – Եւ թագաւորը տրտմեցաւ. բայց երդումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար հրաման ըրաւ որ տրուի։ 10 – Եւ *դրկելով՝ Յովհաննէսը բանտին մէջ գլխատեց։ 11 – Եւ անոր գլուխը սկուտեղով բերուեցաւ ու տրուեցաւ աղջկան, ան ալ իր մօրը տարաւ։ 12 – Եւ անոր աշակերտները եկան ու մարմինը վերցնելով թաղեցին, և գացին Յիսուսի պատմեցին։

13 – Ու երբ լսեց Յիսուս, անկէ նաւով անապատ տեղ մը գնաց առանձին. երբ լսեցին ժողովուրդները, ոտքով անոր ետևէն գացին իրենց քաղաքներէն։

14 – Ու *երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, ու անոնց հիւանդները բժշկեց։

15 – Եւ իրիկուան առեն իր աշակերտները իրեն եկան ու ըսին, Հոս անապատ տեղ մըն է, և ժամնակը ուշացած է. արձակէ ժողովուրդները, որպէս զի գեղերը երթան ու իրենց կերակուր գնեն։ 16 – Եւ Յիսուս անոնց ըսաւ, Հարկ չէ որ ասոնք երթան, դուք տուէք ասոնց որ ուտեն։ 17 – Անոնք ալ ըսին անոր, Հոս --իէչ բան մը չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ։ 18 – Ու ըսաւ անոնց, Հոս ինծի բերէք զանոնք։ 19 – Եւ հրաման ըրաւ որ ժողովուրդները խոտին վրայ նստին. և հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ, ու դէպ ի երկինք նայելով օրհնեց, ու կոտրելով նկանակները աշակերտներուն տուաւ, և աշակերտները՝ ժողովուրդին։ 20 – Եւ ամէնը կերան ու կշտացան. և ասոնցմէ կտրած կտորներէն վերցուցին։ 21 – Եւ անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն և աղաքներէն զատ։

22 – *Եւ շուտ մը աշակերտները ստոյգ որ նաւը մտնեն, և իրմէ առաջ անդիի կողմը անցնին, մինչև որ ինք ժողովուրդները արձակէ։ 23 – Եւ ժողովուրդները արձակելէն ետքը, ինք լեռը ելաւ առանձին աղօթք ընելու. ու երբ իրիկուն եղաւ, հոն մինակ էր։ 24 – Իսկ նաւը արդէն ծովուն մէջտեղը ալեկոծութեան մէջ էր, վասն զի հովը դէմ էր։ 25 – Ու գիշերուան չորրորդ պահուն Յիսուս դէպ ի անոնք գնաց, ծովուն վրայ քալելով։ 26 – Եւ աշակերտները երբ զանիկա տեսան որ ծովուն վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին թէ ուչքի երևոյթ բան մըն է. ու վախերնէն կանչուըտուցին։ 27 – Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու ըսաւ, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ 28 – Պետրոս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Տէր, եթէ դուն ես, հրամայէ ըսէ ինծի որ քեզի գամ ջուրերուն վրայէն։ 29 – Ան ալ ըսաւ, Եկուր. Պետրոս ալ նաւէն իջաւ, ջուրերուն վրայէն քալեց որպէս զի Յիսուսի գայ։ 30 – Բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ, ու երբ սկսաւ ընկղմիլ, աղաղակեց ու ըսաւ, Տէր, ազատէ զիս։ 31 – Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զանիկա ու անոր ըսաւ, Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար։ 32 – Ու երբ նաւը ելան, հովը դադարեցաւ։ 33 – Եւ անոնք որ նաւուն մէջ էին, եկան երկրպագութիւն բերին անոր ու ըսին, Իրաւցընէ Որդի Աստուծոյ ես գուն։

34 – Ու անդիի կողմը անցնելով, Գեննեսարէթի երկիրը հասան։ 35 – Ու երբ այն տեղի մարդիկը ճանչցան զանիկա, շուտ ղրկեցին բոլոր շրջակայ տեղերը, ու բոլոր հիւանդները անոր բերին. 36 – Եւ կ'աղաչէին անոր, որ միայն իր հանդերձին քղանցքին դպչին. և անոնք որ դպան, բժշկուեցան։

*Ոմն., երբ Յիսուս

*Ոմն., Եւ Յիսուս

## ԳԼ. ԺԵ

Այն առեն Յիսուսի եկան դպիրները ու փարիսեցիները, որոնք Երուսաղէմէ էին, ու ըսին, 2 – Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն աւանդութիւնը զանց կ'ընեն, վասն զի ձեռքերնին չեն լուար, երբ հաց կ'ուտեն։ 3 – Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքը զանց կ'ընէք ձեր աւանդութեան պատճառաւ։ 4 – Քանզի Աստուած պատուիրեց՝ ըսելով, Քու հայրդ ու մայրդ պատուէ. 5 – Եւ, Ով որ էր հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։ 6 – Բայց դուք կ'ըսէք, Ով որ էր հօրը կամ մօրը ըսէ թէ Ան որ բանը զոր ինծմէ պիտի շահիս, Ա---ծոյ պօ-- ընծայ է. ու իր հայրը կամ իր մայրը չպատուէ, ապա է. և այսպէս ձեր աւանդութեան պատճառաւ Աստուծոյ պատուիրանքը խափանած էք։ 7 – Կեղծաւորներ, աղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայի ու ըսաւ, 8 – Այս ժողովուրդը գոյ *շրթունքներովը ինծ կը պատուէ, բայց իրենց սիրտը հեռացած զատուած է ինծմէ. 9 – Ու պարապ տեղը ինծ կը պաշտեն՝ մարդոց պատուիրած բաները էբբ վարդապետութիւն սորվեցնելով։

10 – Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Լսեցէք ու միտք առէք. 11 – Ոչ թէ ինչ որ բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը, հապա ինչ որ բերնէն կ'ելլէ՝ անիկա կը պղծէ մարդը։

12 – Այն առեն իր աշակերտները եկան՝ ըսին իրեն, Գիտե՞ս որ փարիսեցիները գայլակղեցան երբ լսեցին այն խօսքը։ 13 – Ան ալ պատասխան տալով՝ ըսաւ, Ամէն տունկ զոր իմ երկնաւոր Հայրս չէ տնկեր, պիտի խլուի։ 14 – Թող տուէք զանոնք. էբէ+ կոյր են, կոյրերու առաջնորդ. իսկ եթէ կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոսը պիտի իյնան։ 15 – Եւ Պետրոս պատասխան տալով՝ անոր ըսաւ, Մեկնէ մեզի այս առակը։ 16 – Ըսաւ Յիսուս, Դուք ալ տակաւին անմիտ էք. 17 – Ու չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ բերանը կը մտնէ՝ փորը կ'երթայ ու արտաքնոցը կը ձգուի։ 18 – Բայց բերնէն ելած բաները սրտէն կ'ելլեն, և անոնք կը պղծեն մարդը։ 19 – Վասն զի սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ։ 20 – Ասոնք են որ կը պղծեն մարդը, բայց անլուայ ձեռքով հաց ուտելը չպղծեր մարդը։

21 – Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիբրոսի ու Սիդոնի կողմերը գնաց։ 22 – Եւ ահա Քանանացի կին մը այն սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր, Ողորմէ ինծի, Տէր, որդի Դաւթի. աղջիկս դևէն սաստիկ կը չարչարուի։ 23 – Եւ ինք բնաւ պատասխան մը չտուաւ անոր. ու իր աշակերտները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Արձակէ սորիկա, վասն զի մեր ետևէն կ'աղաղակէ։ 24 – Եւ ինք պատասխան տուաւ ու ըսաւ, Ես --բէ՛ չղրկուեցայ, բայց միայն Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն։ 25 – Եւ՝ անիկա եկաւ երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, օգնէ ինծի։ 26 – Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ, Աղէկ չէ տղոց հացը առնել ու շուներուն ձգել։ 27 – Եւ անիկա ըսաւ, Այո, Տէր, վասն զի շուներն ալ իրենց տէրոջ սեղանէն ինկած փշրանքներէն կը կերակրուին։ 28 – Այն առեն Յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Ով կին, քու հաւատքդ մեծ է, քու ուզածդիդ պէս ըլլայ քեզի. և նոյն ժամէն անոր աղջիկը բժշկուեցաւ։

29 – Ու Յիսուս անկէ գնաց, Գալիլեայի ծովեզերքը եկաւ, և լեռը ելլելով հոն նստաւ։ 30 – Եւ շատ ժողովուրդներ իրեն եկան, որոնք իրենց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ շատեր. ու ձգեցին զանոնք Յիսուսի ոտքը, և բժշկեց զանոնք։ 31 – Այնպէս որ ժողովուրդները զարմացան, տեսնելով որ համրերը կը խօսէին, հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը քալէին և կոյրերը կը տեսնէին, ու Իսրայէլի Աստուածը կը փառաւորէին։

32 – Եւ Յիսուս իր աշակերտները քովը կանչելով՝ ըսաւ, Կը խղճամ ժողովուրդին վրայ, վասն զի հիմա երեք օր է որ իմ քովս են, և բան մը չունին ուտելու. ու զանոնք անօթի արձակել չեմ ուզեր, չըլլայ որ ճամբան մնան։ 33 – Իսկ աշակերտները անոր ըսին, Մենք անապատի մէջ ուրկէ՞ պիտի ունենանք այնչափ հաց, որ այնչափ բազմութիւնը կշտացնենք։

*Ոմն., բերնովը ինծի կը մօտենայ, և շրթունքներովը

34 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք. անոնք ալ ըսին, Եօթը, ու քանի մը մանր ձուկեր։ 35 – Եւ հրամայեց բազմաժողովուրդին որ գետնին վրայ նստին։ 36 – Ու եօթը նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ և կարից ու տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝ ժողովուրդին։ 37 – Կերան ամէնը և կշտացան, ու եօթը զամբիւղ լեցուն՝ ուրիցած կտորտանքները վերցուցին։ 38 – Եւ անոնք որ կերան՝ չորս հազար այր մարդիկ էին, կիներէն և տղաքներէն զատ։

39 – Ու երբ ժողովուրդը արձակեց, նաւը մտաւ ու Մագադաղայի սահմանները եկաւ։

## ԳԼ. ԺԶ

Եւ փարիսեցիները ու սադուկեցիները քովը եկան, փորձելով՝ երէց կ'ուզէին որ երկինքէն նշան մը ցուցնէ իրենց։ 2 – Անոր պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Երբ իրիկուն կ'ըլլայ, կ'ըսէք Թէ Պարզ պիտի ըլլայ, վասն զի երկինքը կարմրած է։ 3 – Եւ առտուանց՝ Այսօր մրրիկ պիտի ըլլայ, վասն զի երկինքը մռայլապատ ու կարմրած է։ Կեղծաւորներ, երկինքի երեսը քննել գիտէք, բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար գէհենաբ։ 4 – Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ, և ո՛րեւէ նշան պիտի չտրուի անոր, բայց Յովնան մարգարէին նշանը. և թողուց զանոնք ու գնաց։

5 – Ու երբ իր աշակերտները անդիի կողմը անցան, հաց առնելու մոռցեր էին։ 6 – Եւ Յիսուս անոնց ըսաւ, Նայեցէք ու զգուշացէք փարիսեցւոց ու սադուկեցւոց խմորէն։ 7 – Անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին Թէ Հաց չբերինք ճէշ հէ։ 8 – Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ ըսաւ անոնց, Ձեր մէջ ինչո՞ւ կը խորհիք, Թերահաւատներ, Թէ հաց չունիք։ 9 – Տակաւին չէ՞ք հասկնար և չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին, ու քանի՛ կողով վերցուցիք։ 10 – Ո՛չ ալ եօթը նկանակը՝ չորս հազարին, ու քանի՛ զամբիւղ վերցուցիք։ 11 – Ինչպէս չէք հասկնար Թէ ես հացի համար չըսի ձեզի՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն զգոյշ կենալ։ 12 – Այն ատեն հասկցան որ հացի խմորէն զգուշանալ չըսաւ, հապա փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն։

13 – Եւ Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայէն կողմերը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ, Մարդիկ ո՞վ կ'ըսեն Թէ եմ ես Որդի մարդոյ։ 14 – Ու անոնք ըսին, Ոմանք Յ'ԷՒՒՆ ԲՊ Յովհաննէս մկրտիչն ես, ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը։ 15 – Ըսաւ անոնց, Հապա դուք ինձի համար ո՞վ կ'ըսէք Թէ եմ։ 16 – Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ, Դուն ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին։ 17 – Եւ Յիսուս պատասխանե տուաւ ու ըսաւ անոր, Երանի՛ քեզ, Սիմոն, Յովնանի որդի. վասն զի մարմինը և արիւնը քեզի չյայտնեց ՚ԷՒՒ՚, հապա իմ Հայրս՝ որ երկինքն է։ 18 – Եւ ես քեզի կ'ըսեմ՝ որ Դուն *Պետրոս ես, ու այս վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, և դժոխքին դռները դանիկա պիտի չյաղթեն։ 19 – Ու երկինքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ. և ինչ որ երկրի վրայ կապես, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ. ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ։ 20 – Այն ատեն աշակերտներուն պատուիրեց, որ մարդո՛ւ չըսեն Թէ ինք †Քրիստոսն է։

21 – Անկէ եւս սկսաւ Յիսուս իր աշակերտներուն ցուցնել Թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և քահանայապետներէն ու դպիրներէն, և սպանուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ։ 22 – Եւ Պետրոս մէկդի առաւ զանիկա, և սկսաւ յանդիմանել զանիկա ու ըսել, Ի՛նչ լինի քեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ։ 23 – Եւ ինք դառնալով Պետրոսի ըսաւ, Եթէ գնա, Սատանայ, ինձի դայթակղութիւն ես դուն. վասն զի Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները։

24 – Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ, Եթէ մէկը իմ ետևէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ և իր խաչը վերցնէ ու իմ ետևէս գայ։ 25 – Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա. և ով որ ինձի համար իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա։ 26 – Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի և իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ։ 27 – Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ, և այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի բնէ։ 28 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մինչեան համը պիտի չառնեն, մինչև տեսնեն Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը եկած։

*Այսինքն, Վէմ
†Ուրիշ, Յիսուս Քրիստոսն



## ԳԼ. ԺԷ

Եւ վեց օրէն հետև Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և անոր եղբայրը Յովհաննէսը, ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին։ 2 – Եւ անոնց առջև այլակերպեցաւ, ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձները ճերմկցան լոյսի պէս։ 3 – Եւ ահա երևեցան անոնց Մովսէս ու Եղիա ու իրեն հետ կը խօսէին։ 4 – Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսի, Տէր, աղէկ է որ հոս կենանք. եթէ կ'ուզես, երեք խրճիթ շինենք հոս. մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի։ 5 – Եւ քանի որ անիկա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ. և ահա ամպին ձայն մը էԼ՚՚՚ ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցեր եմ, առաջ մտիկ ըրէք։ 6 – Աշակերտները երբ լսեցին, երեսնուն վրայ ինկան ու խիստ վախցան։ 7 – Եւ Յիսուս մօտենալով դպաւ անոնց ու ըսաւ, Ելէք ու մի վախնաք։ 8 – Աչքերնին վերցուցին ու մ'ոչ՝ կը չտեսան, բայց միայն Յիսուս։

9 – Ու երբ այն լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ, Այդ տեսիլքը մարդո՛ւ մի պատմէք, մինչև Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ։ 10 – Եւ իր աշակերտները իրեն հարցուցին ու ըսին, Ուրեմն ինչո՞ւ համար դպիրները կ'ըսեն Թէ Պէտք է որ առաջ եղիա գայ։ 11 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ճիրաւի առաջ եղիա կու գայ և ամէն բան կարգի կը դնէ։ 12 – Բայց ձեզի կ'ըսեմ որ եղիա արդէն եկած է, և զանիկա չճանչցան, հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր. նոյնպես ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չտրտնաւ։ 13 – Աչն ատեն հասկցան աշակերտները որ Յովհաննէս մկրտչին համար ըսաւ անոնց։

14 – Ու երբ ժողովուրդին քով եկան, մարդ մը մօտեցաւ անոր, և ծունկի վրայ գալով՝ կ'ըսէր, Տէր, իմ որդւոյս ողորմէ, որ կը լուսնոտի և չարաչար կը տանջուի, քանզի շատ անգամ կրակի մէջ կ'իյնայ, ու շատ անգամ՝ ջուրի մէջ։ 15 – Եւ զանիկա քու աշակերտներուդ բերի, ու չկրցան զանիկա բժշկել։ 16 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ. զանիկա հոս բերէք։ 17 – Եւ Յիսուս սաստեց անոր, ու դևը անկէ ելաւ, և բժշկուեցաւ տղան նոյն ժամէն։ 18 – Աչն ատեն աշակերտները առանձին Յիսուսի քով երթալով ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք զանիկա հանել։ 19 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ձեր թերահաւատութեանը համար. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մանանեխի հատ չափ հաւատք ունենաք, այս լեռանը պիտի ըսէք, Ասկէ անդին փոխադրուէ, և պիտի փոխադրուի. ու բան մը անհնարին պիտի չըլլայ ձեզի։ 20 – Սակայն այս տեսակը ՚՚՚ԲՒՒ ԲՈՒՒՀ ՉԵԼԼԵՐ, բայց միայն աղօթքով և ծոմապահութեամբ։

21 – Ու երբ անոնք Գալիլեայի մէջ կը պտրտէին, Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, 22 – Եւ զանիկա պիտի մեռցընեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. ու խիստ տրտմեցան։

23 – Երբ անոնք Կափառնայում եկան, երկդրամեան փո՚՚ՐԸ առնողները Պետրոսի եկան ու ըսին, Ձեր վարդապետը երկդրամեանը չը՞ տալուցաներ. Ե անիկա ըսաւ, Ա՛յո, Կը հատուցանէ։ 24 – Ու երբ տունը մտաւ, առաջ Յիսուս խօսեցաւ անոր ու ըսաւ, Ինչպէս կ'երևնայ, Սիմոն. երկրի թագաւորները սրմէ՞ կ'առնեն հարկը կամ տուրքը. իրենց որդիներէո՞ն Թէ օտարներէն։ 25 – Պետրոս անոր ըսաւ, Թէ Օտարներէն. Յիսուս անոր ըսաւ, Ուրեմն որդիները ազատ են։ 26 – Բայց

չըլլայ որ զանոնք գայթակղեցնենք, գնա ծովը և կարթ ձգէ, ու առաջինն ձուկը որ կ'ելլէ՝ առ, և անոր բերանը բանալով՝ սառեր մը պիտի գտնես. զանիկա առ, անոնց տուր ինծի և քեզի համար։

## ԳԼ. ԺԸ

Այն ժամանակ աշակերտները Յիսուսի քով եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ։ 2 – Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց, 3 – Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք։ 4 – Ուստի ով որ իր անձը այս տղուն պէս խոնարհեցնէ, անիկա է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ։ 5 – Եւ ով որ այսպիսի տղայ մը կ'ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի։ 6 – Եւ ով որ գայթակղեցընէ այս պզտիկներէն մէկը որոնք ինծի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր պարանոցին իշուձագրի քար մը կախուի, ու ծովուն անդունդին մէջ ընկղմի։

7 – Վա՛յ աշխարհի՝ գայթակղութիւններու պատճառաւ. վասն զի հարկ է որ գայթակղութիւնները գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով գայթակղութիւնը կու գայ։ 8 – Արդ եթէ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. աղէկ է քեզի կաղ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալու յաւիտենական կրակին մէջ ձգուիլ։ 9 – Եւ եթէ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա և քեզմէ ձգէ. աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել, քան թէ երկու աչք ունենալ ու կրակին դէհենը ձգուիլ։

10 – Զգուշ կեցէք որ չանարգէք այս պզտիկներէն մէկը. քանզի կ'ըսեմ ձեզի որ երկինքի մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է։ 11 – Վասն զի Որդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու։ 12 – Ի՞նչ պէս կ'երեւնայ ձեզի. եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը մոլորի, չենասունիններն աչխարը *լեռները չը՞ ձգեր, ու երթալ մոլորածը փընտռեր։ 13 – Եւ եթէ գտնէրու ըլլայ զանիկա, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ, քան թէ հինգասունիններուն՝ որոնք մոլորած չեն։ 14 – Այսպէս ձեր երկնաւոր Հայրը չկամիր որ այս պզտիկներէն մէկը կորսուի։

15 – Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զանիկա երբ դուն և ան մինակ ես. եթէ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ։ 16 – Հապա եթէ մտիկ չընէ *եւ քեզի հետ տիկ մը կամ երկուք ալ առ, որպէս զի երկու կամ երեք վկաներու բերնէ ամէն բան հաստատուի։ 17 – Եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։

18 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ. ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ։ 19 – Դարձեալ կ'ըսեմ ձեզի, եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին, ամէն ինչ բաներ համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս որ երկինքն է։ 20 – Քանզի ուր երկու կամ երեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջ։

21 – Այն ատեն Պետրոս մօտեցաւ անոր ու ըսաւ, Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս ինծի դէմ մեղանչէ, ներեմ անոր. մինչև եօթը անգամ։ 22 – Յիսուս անոր ըսաւ, Քեզի չեմ ըսեր թէ մինչև եօթը անգամ, հապա մինչև եօթանասուն անգամ եօթը։ 23 – Ասոր համար երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներուն հաշիւ առնել ուզեց։ 24 – Ու երբ սկսաւ առնել, տասը տալանդ տաղտնդի պարտական մը բերուեցաւ իրեն։ 25 – Բայց անիկա վճարելու կարողութիւն չունենալով, իր տէրը հրամայեց որ անիկա և անոր կինը ու որդիները և անոր բոլոր ունեցածը ծախուին, ու պարտքը վճարուի։ 26 – Իսկ ծառան անոր առջև խնդալով երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր, Տէր, համբերէ ինծի և ամէնը քեզի կը վճարեմ։ 27 – Եւ այն ծառային տէրը վրան խղճալով արձակեց զանիկա, ու պարտքը շնորհեց անոր։ 28 – Եւ նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հարիւր դահեկան պարտք ուներ, ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, Վճարէ ինծի ունեցած պարտքդ։ 29 – Ուստի անոր ծառայակիցը անոր առքը ինկաւ, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Համբերէ ինծի ու *քեզի կը վճարեմ։ 30 – Եւ ինք չէր ուզեր, հապա գնաց՝ բանտը գրաւ զանիկա, մինչև որ պարտքը վճարէ։ 31 – Երբ իր ծառայակիցները տեսան եղած բանը, խիստ տրտմեցան, ու եկան իրենց տէրոջը հասկցուցին բոլոր եղածը։ 32 – Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ անոր, Չար ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզի շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար։ 33 – Ո՞րքան պէտք չէ՞ր քեզի ալ քու ծառայակիցդ ողջմիտ, ինչպէս ես քեզի ողջմտացայ։ 34 – Եւ անոր տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ։ 35 – Այսպէս իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի, եթէ ձեր սիրտերէն չէք ներեր ամէն մէկդ իր եղբօրը երեսից յանցանքները։

## ԳԼ. ԺԹ

Ու եղաւ որ երբ Յիսուս այս խօսքերը լմնցուց, Գալիլեայէ ելաւ ու եկաւ Հրէաստանի սահմանները Յորդանանու անդիի կողմը։ 2 – Եւ անոր եւս երէն չատ ժողովուրդներ գացին, ու հոն բժշկեց զանոնք։

3 – Եւ փարիսեցիները անոր մօտենալով՝ զանիկա կը փորձէին, ու կ'ըսէին Թէ Արժա՞նէ է որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար։ 4 – Անիկա ալ պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր թէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց զանոնք՝ ու ըսաւ, 5 – Ասոր համար մարդ էր Հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ 6 – Ուստի ա՛լ երկուք չեն, հապա մէկ մարմին. ուրեմն զոյն որ Աստուած միաւորեց՝ մարդ թող չզատէ։ 7 – Ըսին իրեն, Հապա Մովսէս ինչո՞ւ պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել։ 8 – Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սիրտերուն կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ կիներնիդ արձակել, բայց սկիզբէն այնպէս չեղաւ։ 9 – Սակայն ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ. և ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ'ընէ։ 10 – Իր աշակերտները ըսին իրեն, Եթէ այդպիսի բան կայ երկան ու կնոջ մէջտեղ, չառնանալը ատկէ է։ 11 – Եւ ինք անոնց ըսաւ, Ամէնը բաւական չեն այդ բանին, հապա անոնք՝ որոնց տրուած է։ 12 – Վասն զի կան ներքինիներ՝ որոնք էջէնց մօրը որովայնէն այնպէս ծնան, և կան ներքինիներ՝ որոնք մարդոցմէ ներքինի եղան, և կան ներքինիներ՝ որոնք իրենզիրենին ներքինի ըրին երկինքի թագաւորութեանը համար. ով որ կրնայ առնել՝ թող առնի։

13 – Այն ատեն մանր տղաք բերուեցան իրեն, որպէս զի անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու աշակերտները կը յանդիմանէին զանոնք։ 14 – Բայց Յիսուս ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը, և մի արգիլէք առանք ինծի գալէն, վասն զի երկինքի թագաւորութիւնը այդպիսիներուն է։ 15 – Եւ անոնց վրայ ձեռք դնելէն ետև գնաց անկէ։

16 – Եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր, Բարի վարդապետ, ի՞նչ բարի գործ գործեմ, որպէս զի յաւիտենական կեանքը ընդունիմ։ 17 – Եւ ան՝ նիկա ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած. հապա եթէ կ'ուզես կեանքը մտնել, պատուիրանները պահէ։ 18 – Ըսաւ անոր, Որո՞նք. և Յիսուս ըսաւ, Առանք. Սպանութիւն մի ընար, շնութիւն մի ընար, գողութիւն մի ընար, սուտ վկայութիւն մի ընար, 19 – Զհայրդ ու մայրդ պատուէ, և զձեզ ընկերդ քու անձիդ պէս սիրեա։ 20 – Պատանին ըսաւ անոր, Առանք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ. ալ ինչ բանով պակաս եմ։ 21 – Ըսաւ անոր Յիսուս, Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ

*Ոմանք, չը՞ ձգեր, ու լեռները

*Ոմանք, ամէնը քեզի

եաեւէաս։ 22 – Երբ պատանին այս խօսքը լսեց՝ տրտմած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր։

23 – Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, ձշմարիտ կ՚ըսեմ՝ ձեզի որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը։ 24 – Դարձեալ կ՚ըսեմ ձեզի, Դիւրին է որ *ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ։ 25 – Աշակերտները երբ լսեցին, շատ զարմացան ու ըսին, Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ։ 26 – Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ, Այրիկա մարդոց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է։

27 – Այն ատեն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ահա մենք ամէն բան թողուցինք և քու եաեէդ եկանք։ ուստի մեզի ինչ պիտի ըլլայ։ 28 – Ըսաւ անոնց Յիսուս, ձշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ դուք որ իմ եաեէս եկաք, †ծիւանգամ գալուստին երբ Որդին մարդոյ իր փառաց աթոռը նստի, դուք ալ տասներկու աթոռներու վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։ 29 – Եւ ով որ թողուց տուներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր իմ անուանս համար, հարիւրապատիկի պիտի առնէ, և յաւիտենական կեանք պիտի ժառանգէ։ 30 – Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին։

## Գլ. Ի

Քանզի երկինքի թագաւորութիւնը նմանատիպ մարդու մը նման է, որ առաւտուն կանուխ ելաւ՝ իր այգիին համար բանաւորներ բանեցնելու։ 2 – Եւ բանաւորներուն հետ օրը մէկ դահեկանի խօսք կապեց, ու զանոնք դրկեց իր այգին։ 3 – Եւ ժամը երեքին ուրիշները եկաւ՝ ուրիշները տեսաւ, որոնք շուկային մէջ պարապ կայներ էին։ 4 – Ու ըսաւ անոնց, Դուք ալ գացէք իմ այգիս, և ինչ որ արժան է՝ կու տամ ձեզի։ 5 – Անոնք ալ գացին։ ու նորէն ժամը վեցին և ժամը հինին տասներորդը եկաւ՝ այնպէս ըրաւ։ 6 – Եւ ժամը տասնըմէկին տասներորդը եկաւ, ուրիշները գտաւ՝ որոնք պարապ կայներ էին, ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայներ էք։ 7 – Ըսին իրեն, Անոր համար որ մէ՛կը մեզ վարձքով չբռնեց։ ըսաւ անոնց, Դուք ալ այգին գացէք, ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք։ 8 – Եւ երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը իր անտեսին ըսաւ, Բանուորները կանչէ, և անոնց վարձքը տուր՝ վերջիններէն սկսելով մինչև առաջինները։ 9 – Ու երբ եկան անոնք որ ժամը տասնըմէկին †պէտէ էն, մէյմէկ դահեկան առին։ 10 – Եւ առաջինները գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն, ու անոնք ալ առին մէյմէկ դահեկան։ 11 – Երբ առին՝ տունտէրոջ դէմ տրտունջ կ՚ընէին ու կ՚ըսէին թէ 12 – Այդ վերջինները մէկ ժամ գործեցին, և զանոնք հաւասար ըրիր մեզի, որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք։ 13 – Անիկա պատասխան տուաւ ա նոնցմէ մէկուն ու ըսաւ, Ընկեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն հինգ հետ մէկ դահեկանի խօսք կապեցիր։ 14 – Առ քուկդ ու գնա. կ՚ուզեմ որ այս վերջինին քեզի պէս տամ։ 15 – Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընեմ. կամ թէ քու աչքդ չա՞ր է՝ որ ես բարերար եմ։ 16 – Այսպէս յետինները առաջին պիտի ըլլան, և առաջինները յետին. վասն զի կանչուածները շատ են, բայց ընտրուածները քիչ։

17 – Ու երբ Յիսուս Երուսաղէմ կ՚երթար, ճամբան տասներկու աշակերտները իրեն հետ առաւ առանձին, ու ըսաւ անոնց, 18 – Ահա Երուսաղէմ կ՚երթանք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն։ 19 – Եւ զանիկա հեթանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու և խաչը հանելու. ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։

20 – Այն ատեն Զերեդէոսի որդիներուն մայրը իր որդիներուն հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ՚ընէր ու բան մը կը խնդրէր անկէ։ 21 – Ան ալ ըսաւ անոր, Ի՞նչ կ՚ուզես։ Ըսաւ անոր, Ըսէ որ այս իմ երկու որդիներս մէկը աջ կողմդ՝ և միւսը ձախ կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ։ 22 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Չէք գիտեր ի՛նչ կը խնդրէք. կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտուիլ զոր ես պիտի մկրտուիմ. ըսին իրեն, Կրնանք։ 23 – Եւ ըսաւ անոնց, Իմ գաւաթս պիտի խմէք, և այն մկրտութիւնով զոր ես մկրտուելու եմ, պիտի մկրտուիք. բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլը իմս չէ տալը, հապա որոնց որ պատրաստուած է իմ Հօրմէս։ 24 – Ու երբ տասը ալ լսեցին, այն երկու եղբայրներուն նեղացան։ 25 – Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու ըսաւ, Գիտէք որ ազգերուն իշխանները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ՚իշխեն անոնց. 26 – Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ՚ուզէ, թող անիկա ձեր սպասաւորը ըլլայ. 27 – Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ՚ուզէ, թող անիկա ձեր ծառան ըլլայ. 28 – Ինչպես Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու և իր կեանքը չատերու համար փրկանք տալու։

29 – Ու երբ անոնք Երիքովէ ելան, մեծ բազմութիւն անոր եաեէն գնաց։ 30 – Եւ ահա ճամբուն քով երկու կոյր նստած էին. երբ լսեցին թէ Յիսուս կ՚անցնի, աղաղակեցին ու ըսին, Ողորմէ մեզի, Տէր, Որդի Դաւթի։ 31 – Եւ բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք որ լռեն, բայց անոնք ա՛լ աւելի կ՚աղաղակէին ու կ՚ըսէին, Ողորմէ մեզի, Տէր, Որդի Դաւթի։ 32 – Եւ Յիսուս կանգ առնելով կանչեց զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ՚ուզէք որ ձեզի ընեմ։ 33 – Ըսին անոր, Տէր, որ աչքերնիս բացուին։ 34 – Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ, և շատ մը անոնց աչքերը բացուեցան, ու անոր եաեէն գացին։

## Գլ. ԻԱ

Ու երբ Երուսաղէմի մօտեցան ու եկան Բեթփագէ դէպ ի Ձիթենեաց լեռը, այն ատեն Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց. 2 – Եւ ըսաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գեղը, և շատ մը պիտի գտնէք կապուած էշ մը ու անոր հետ աւանակ մը. արձակեցէք զանոնք ու ինծի բերէք. 3 – Եւ եթէ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ Տէրոջը պէտք են. և շատ մը զանոնք պիտի ղրկէ։ 4 – Այս ամէն բանները եղան, որպէս զի կատարուի մարգարէին խօսքը որ կ՚ըսէ. 5 – Ըսէք Սիօնի աղջկան, Ահա քու թագաւորդ քեզի կու գայ, հեզ, ու իշու վրայ հեծած և իշու ձագի, աւանակի, վրայ։ 6 – Եւ աշակերտները գացին, և ինչպես Յիսուս իրենց պատուիրեր էր՝ ըրին. 7 – Ու բերին էշը ու աւանակը, և անոնց վրայ իրենց հանդերձները դրին, ու *նստաս անոնց վրայ։ 8 – Եւ ժողովուրդէն շատեր իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ուրիշներ ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին։ 9 – Եւ ժողովուրդները, որոնք առջևէն ու եաեէն կ՚երթային, կ՚աղաղակէին ու կ՚ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւթի, օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ. Ովսաննա ի բարձունս։

10 – Ու երբ անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը շարժեցաւ ու ըսաւ, Ո՞վ է սա։ 11 – Եւ ժողովուրդները ըսին, Աստիկա Յիսուս մարգարէն է Գալիլեայի Նազարէթէն։

12 – Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու դուրս հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, և սեղանափոխներուն սեղանները ու աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց. 13 – Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի. բայց դուք ասիկա աւազակներու ապր րլիք։

14 – Եւ տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան իրեն, և բժշկեց զանոնք։ 15 – Եւ քահանայապետները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշքները, և տղաքը որոնք տաճարին մէջ կ՚աղաղակէին ու կ՚ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւթի, բարկացան. 16 – Ու ըսին անոր, Կը լսե՞ս ինչ կ՚ըսեն տուռնք. և Յիսուս ըսաւ անոնց, Այո. բնաւ չէ՞ք կարդացեր, թէ Մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր։

*Որ.նէ, նստեցուցին

17 – Եւ Թողուց զանոնք՝ քաղաքէն գուբս Բեթանիա երթալ, ու գիշերը հոն կեցաւ։

18 – Եւ առտուընց երբ քաղաքը կը գառնար, անօթեցաւ. 19 – Ու ճամբուն վրայ թզենի մը տեսնելով քովը գնաց, և անոր վրայ տերեւներէն զատ բան մը չգտաւ, ու ըսաւ անոր, Ասկե ետեւ քեզմէ պտուղ չբլլայ յաւիտեան. և իսկոյն թզենին չորցաւ։ 20 – Եւ աշակերտները երբ տեսան, զարմացան ու ըսին Թէ Ինչպէս թզենին շուտ մը չորցաւ։ 21 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ հաւատք ունենաք ու չերկմտիք, ոչ թէ միայն այդ թզենին եղածը պիտի ընէք, հապա նաև եթէ այս լեռանը ըսէք, Ելիր, ու ծովը ինկիր, պիտի բլլայ։ 22 – Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք, պիտի առնէք։

23 – Ու երբ անիկա տաճարը եկաւ, քահանայապետները և ժողովուրդին ծերերը անոր մօտեցան երբ կը սորվեցնէր, ու ըսին, Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը։ 24 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ ա նոնց, Ես ալ ձեզի բան մը կարդնեմ, զոր եթէ ինծի ըսէք, ես ալ ձեզի պիտի ըսեմ Թէ ի՛նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։ 25 – Յովհաննէսի մկրտութիւնը ուրկէ՞ էր, երկինքէ՞ն Թէ մարդոցմէ։ և անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ' ըսէին, 26 – Եթէ ըսենք՝ Երկինքէն, մեզի պիտի ըսէ Թէ Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր։ իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վախնանք, վասն զի բոլորն ալ Յովհաննէսը իբրև մարգարէ կ'ընդունին։ 27 – Եւ պատասխան տալով Յիսուսի՝ ըսին, Չենք գիտեր. և ինք ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր Թէ ի՛նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։

28 – Բայց ի՞նչպէս կ'երեւնայ ձեզի. մարդ մը երկու որդի ունէր, ու գնաց առաջինին ըսաւ, Որդեակ, գնա այսօր այգիս մէջ գործէ։ 29 – Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Չեմ ուզեր երթալ։ բայց ետքը զղջացաւ ու գնաց։ 30 – Միւսին ալ գնաց և այնպէս ըսաւ. անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Կ'երթամ, տէր. և չգնաց։ 31 – Հիմա այս երկուքէն ո՞րը էր հօրը կամքը կատարեց. ըսին անոր, Առաջինը. Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը։ 32 – Վասն զի Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացիք. բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր հաւատացին. և դուք տեսաք ու ետքը չզղջացիք անոր հաւատալու։

33 – Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Տանուտէր մարդ մը կար՝ որ այգի մը տնկեց ու ցանգով պատեց զանիկա, և անոր մէջ հնձան փորեց ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օսար երկիր մը գնաց։ 34 – Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ, իր ծառաները մշակներուն ղրկեց, որպէս զի անոր պտուղները առնեն։ 35 – Եւ մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, մէկ ուրիշը քարկոծեցին։ 36 – Նորէն ուրիշ ծառաներ ղրկեց առաջիններէն շատ, և անոնց ալ այնպէս ըրին։ 37 – Վերջը իր որդին ղրկեց անոնց՝ ըսելով, Թերեւս ամչնան իմ որդիէս։ 38 – Բայց մշակները երբ տեսան որդին, իրարու ըսին, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննենք ու անոր ժառանգութիւնը տիրենք։ 39 – Եւ առին զանիկա, այգիին դուրս հանեցին ու սպանեցին։ 40 – Ուստի երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այն մշակներուն։ 41 – Ըսին իրեն, Ան չարերը չարաչար պիտի կորնցնէ, և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները իրենց ժամանակին պիտի տան իրեն։ 42 – Ըսաւ անոնց Յիսուս, Բնաւ չէ՞ք կարդացեր գիրքին մէջ, Ան քարը զոր շինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. տեսա՛կ Տէրոջմէն եղաւ և զարմանալի է մեր աչքերուն։ 43 – Ասոր համար կ'ըսեմ ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու այնպիսի ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղները բերէ։ 44 – Եւ ով որ այս քարին վրայ կ'ինայ, պիտի կտրտի, և որու վրայ որ կ'ինայ, պիտի փորէ զանիկա։

45 – Ու երբ քահանայապետները և փարիսեցիները անոր առակները լսեցին, իմացան որ իրենց համար կ'ըսէր։



46 – Եւ կը փնտռէին թէ ի՛նչպէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, վասն զի մարգարէի պէս կ'ընդունէին զանիկա։

## ԳԼ. ԻԲ

Պարաբոլ պատասխան տուաւ Յիսուս և առակներով ըսաւ անոնց, 2 – Երկինքի թագաւորութիւնը թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր որդւոյն համար հարսնիք ըրաւ։ 3 – Եւ իր ծառաները ղրկեց, որպէս զի կանչեն հարսնիքի հրաւիրուածները, և անոնք չուզեցին գալ։ 4 – Նորէն ուրիշ ծառաներ ղրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրուածներուն, Ահա իմ ճաշս պատրաստեցի, ցուլերս ու գեր կենդանիներս մորթուած են, և ամէն բան պատրաստ է. հարսնիք եկէք։ 5 – Բայց անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր արտը ու միւսը իր առեւտուրին. 6 – Եւ ուրիշները անոր ծառաները բռնեցին, նախատեցին ու սպաննեցին։ 7 – Թագաւորն ալ երբ լսեց՝ բարկացաւ, և իր զօրքերը ղրկեց ու այն սպաննողները ատակեցուց, ու անոնց քաղաքը այրեց։ 8 – Այն ատեն իր ծառաներուն ըսաւ, Հարսնիքը պատրաստ է, բայց հրաւիրուածները արժանի չէին։ 9 – Ուստի գացէք ճամբու գլուխները, և ո՛վ որ գտնէք ըլլաք, հարսնիքի հրաւիրեցէք։ 10 – Եւ այն ծառաները ելան ճամբաներու վրայ, ու ո՛վ որ գտան, Թէ՛ չար և Թէ՛ բարի, ամէնն ալ ժողվեցին, ու հարսնիքը հարսնեւորներով լեցուեցաւ։ 11 – Եւ թագաւորը երբ մտաւ հարսնեւորները տեսնելու, հոն մարդ մը տեսաւ որ հարսնիքի հանդերձ հագած չէր։ 12 – Եւ ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար առանց հարսնիքի հանդերձ ունենալու. և անիկա պապանձեցաւ։ 13 – Այն ատեն թագաւորը սպասաւորներուն ըսաւ, Կապեցէք անոր ոտքերը ու ձեռքերը, և տանք ու հանեցէք զանիկա դուրսի խաւարը. հոն պիտի բլլայ լալ ու ակռաները կրճտել։ 14 – Վասն զի կանչուածները շատ են ու ընտրուածները քիչ։

15 – Այն ատեն փարիսեցիները գացին խորհուրդ բրին, Թէ ինչպէս անոր որոգայթ մը գնեն խօսքով։ 16 – Եւ իրենց աշակերտները Հերովդեսեանները հետ մէկտեղ ղրկեցին անոր ու ըսին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես, ու մարդո՛ւ համար հոգդ չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ։ 17 – Ուստի մեզի ըսէ, քեզի ի՞նչպէս կ'երեւնայ, Կայսրին տուրք տալ արժա՞ն է՝ Թէ ոչ։ 18 – Յիսուս գիտնալով անոնց խորամանկութիւնը ըսաւ, Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ, 19 – Ցուցուցէք ինծի տուրքին դրամը. և անոնք դահեկան մը բերին իրեն։ 20 – Ու ըսաւ անոնց, Որո՞ւնն է այս պատկերը ու գիրը։ 21 – Ըսին անոր, Կայսրին. այն ատեն ըսաւ անոնց, Ուրեմն զայն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։ 22 – Երբ լսեցին զարմացան, և թողուցին զանիկա ու գացին։

23 – Նոյն օրը անոր քով եկան սադուկեցիները, որոնք կ'ըսեն Թէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին՝ 24 – Ըսելով, Վարդապետ, Մովսէս ըսաւ, Եթէ մէկը առանց զաւակի մեռնելու բլլայ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ։ 25 – Արդ եօթը եղբայրներ կային մեր մէջ. և առաջինը կին առաւ՝ ու մեռաւ, և զաւակ չունենալուն համար իր կինը ձգեց իր եղբօրը։ 26 – Նոյնպէս ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչև եօթներորդը։ 27 – Ամենն ետքը կինն ալ մեռաւ։ 28 – Ուրեմն յարութեան ատեն այն եօթնէն որո՞ւն կինը պիտի բլլայ. վասն զի ամէնն ալ զանիկա ունեցան։ 29 – Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Դուք մոլորած էք, որ ո՛չ գիրքերը գիտէք և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը. 30 – Քանզի յարութեան ատեն ոչ կին կ'առնեն և ոչ երկան կը տրուին, հապա երկինքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են։ 31 – Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար՝ չէ՞ք կարդացեր Աստուծմէ ձեզի ըսուած խօսքը. 32 – Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը. Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն։ 33 – Ու ժողովուրդները լսելով կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ։

34 – Բայց փարիսեցիները երբ լսեցին Թէ անիկա պատանձեցուց սադուկեցիները, մէկտեղ ժողովուեցան. 35 – Եւ անոնցմէ մէկը, օրինական մը, հարցուց ,զանիկա փորձելով, ու ըսաւ, 36- Վարդապետ, ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ։ 37 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Պու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ. 38 – Ա՛յս է առաջին ու մեծ պատուիրանքը։ 39 – Ու երկրորդը ասոր նման, Պու ընկերդ սիրես քու անձիդ պէս։ 40 – Ա՛յս երկու պատուիրանքին կախաւած են բոլոր օրէնքը և մարգարէները։

41 – Ու երբ փարիսեցիները ժողվուեցան, Յիսուս հարցուց անոնց ու ըսաւ, 42 – Քրիստոսի վրայով ինչ կարծիք ունիք. անիկա որո՞ւն որդին է։ 43 – Ըսին իրեն, Դաւիթի։ Ըսաւ ատնոց Յ՛ս՛ս՛ս՛, Հապա ինչպէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր կը կոչէ ու կ'ըսէ, 44 – Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։ 45 – Ուրեմն եթէ Դաւիթ զանիկա Տէր կը կոչէ, ինչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։ 46 – Եւ մէկը չէր կրնար անոր բան մը պատասխանել. ու այն օրէն եւեւ մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցնել։

## ԳԼ. ԻԳ

Այն ատեն Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն և իր աշակերտներուն ու ըսաւ, 2 – Մովսէսի աթոռը դպիրները և փարիսեցիները նստած են. 3 – Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու րնէք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք, վասն զի կ'ըսեն ու չեն ըներ։ 4 – Քանզի ծանր և տանելու դժուար բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց ուսերուն վրայ, և իրենց մատովը չեն ուզեր զանոնք շարժել։ 5 – Եւ իրենց ամէն գործերը մարդոց երևնալու համար կ'ընեն. կը լայնցնեն իրենց գրաւանակները ու կ'երկնցնեն իրենց հանդերձներուն քղանցքները. 6 – Ընթրիքներու մէջ առաջին բազմցները կը սիրեն, և ժողովարաններուն մէջ առաջին աթոռները, ու շուկաներուն մէջ բարևները։ 7 – Եւ մարդոցմէ Ռաբբի, Ռաբբի կոչուիլ։ 8 – Բայց դուք Ռաբբի մի կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս. և դուք ամէնդ եղբայր էք։ 9 – Ու երկրի վրայ մ'ըլլ ձեզի Հայր մի կոչէք, վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է։ 10 – Եւ դուք ուսուցիչներ մի կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս։ 11 – Եւ ձեր մէջէն մեծը ձեր ծառայորը պիտի ըլլայ։ 12 – Ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցընէ, պիտի բարձրանայ։

13 – Բայց վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ երկինքի թագաւորութիւնը մարդոց առջև կը գոցէք. քանի դուք չէք մտներ, և մտնողներն ալ չէք թողուր որ մտնեն։ 14 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ այրևաբրիներուն տուները կ'ուտէք, ու ՙպրպոյ երևնալու համար աղօթքը կ'երկնցնէք. անոր համար ասելի դատապարտութիւն պիտի ընդունիք։ 15 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորահաւատ ընելու, ու երբ ըլլայ, զանիկայ ձեզմէ երկու անդամ աւելի գեհենի որդի կ'ընէք։ 16 – Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք Թէ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ տաճարին մէջի ոսկին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ։ 17 – Ով յիմարներ ու կոյրեր, որը մեծ է, ոսկին թէ տաճարը որ կը սրբացնէ ոսկին։ 18 – Եւ Թէ՝ Ով որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ։ 19 – Յիմարներ ու կոյրեր, որը մեծ է, պատարա՞գը Թէ սեղանը որ կը սրբացնէ պատարագը։ 20 – Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ և անոր վրայի ամէն բաներուն վրայ։ 21 – Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ և անոր մէջ բնակողին վրայ։ 22 – Եւ ով որ երկինքի վրայ երդում ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ և անոր վրայ նստողին վրայ։ 23 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին ու սամիթին և չամանին տասանորդը կը վճարէք, ու կը



ձգէք օրէնքին ծանր ծանր բաները, դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը. ասանք պէտք էր ընել, և զանոնք չձգել։ 24 – Կոյր առաջնորդներ, որ մժղուկը կը քամէք և ուղտը կը կլլէք։ 25 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ և *անիրաւութեամբ լեցուն են։ 26 – Կոյր փարիսեցի, առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որպէս զի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ։ 27 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփած դերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երևնան, և ներսէն մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն են։ 28 – Նոյնպէս դուք դուրսէն մարդոց արդար կ'երևնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք։ 29 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ մարգարէներուն տապանները կը շինէք, և արդարներուն գերեզմանները կը զարդարէք։ 30 – Ու կ'ըսէք, եթէ մեր Հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար։ 31 – Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք Թէ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպաննէին։ 32 – Ո՛ւրէ դուք ալ ձեր Հայրերուն չափը լեցուցէք։ 33-Ո ձեր, իժերու ծնունդներ, ինչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտութենէն։ 34 – Ասոր համար ահա ես կը ղրկեմ ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և անոնցմէ դէ +անէներ պիտի սպաննէք ու խաչը հանէք, և մէկ քանիներուը ձեր ժողովարաններուն մէջ պիտի ծեծէք, ու քաղաքէ քաղաք հալածէք։ 35 – Որպէս զի երկրի վրայ Թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ, արդար Աբէլի արիւնէն մինչև Բարաքիայի որդւոյն Զաքարիայի արիւնը, զոր տաճարին ու սեղանին մէջտեղ սպաննեցիք։ 36 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ա՛յս ամէն բաները պիտի գան այս ազգին վրայ։

37 – Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի ղրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու տղաքներդ ժողվել ուզեցի, ինչպէս հաւը իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ, և դուք չուզեցիք։ 38 – Ա՛ֆա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ։ 39 – Վասն զի ձեզի կ'ըսեմ որ ա՛լ ասկէ եւեւ պիտի չտեսնէք զիս, մինչև ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։

## ԳԼ. ԻԴ

Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար, ու աշակերտները անոր քով գացին տաճարին շէնքերը իրեն ցուցնելու։ 2 – Եւ Յիսուս անոնց ըսաւ. Չէ՞ք տեսներ այդ ամէն բաները. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝ որ չքակուի։

3 – Ու երբ անիկա Ձիթենեաց լեռը նստեր էր, աշակերտները իրեն եկան առանձին ու ըսին, Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները. և քու գալուստիդ ու աշխարհիս վերջին նշանը ինչ պիտի ըլլայ։ 4 – Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Զգուշ կեցէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ։ 5 – Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն Թէ ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորեցնեն։ 6 – Եւ պիտի լսէք պատերազմներ ու պատերազմներուս լուրեր. զգուշ կեցէք որ չխռովիք. վասն զի այն ամէն բաները պէտք է որ ըլլան, բայց դեռ վերջը չէ։ 7 – Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ սովեր ու մնջախտութիւններ և երկրաշարժութիւններ պիտի ըլլան։ 8 – Բայց ասոնք ամէնը ցաւերուն սկիզբն են։ 9 – Ա՛յն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն և ձեզ պիտի սպաննեն, ու իմ անուանս համար ամէն ազգերուն ատելի պիտի ըլլաք։ 10 – Եւ այն ատեն շատերը պիտի գայթակղին, ու մէկզմէկ պիտի մատնեն և մէկզմէկ պիտի ատեն։ 11 – Եւ շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն. 12 – Եւ անօրէնութեան շատնալուն համար շատերուն սէրը պիտի պաղի։ 13 – Բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի։ 14 – Եւ արքայութեան այս աւետարանը

*Ո՞ան+, անբարեխառնութեամբ

բովանդակ աշխարհի մէջ պիտի քարոզուի բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, և անկէ ետև վերջը պիտի գայ։

15 – Ուստի երբ տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքով ըսուած է, թէ սուրբ տեղը կը կենայ։ (ով որ կարդայ, թող հասկնայ։) 16 – Ա.յն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին։ 17 – Եւ ան որ տանիքին վրայ է, թող չիջնէ իր տունէն բան մը առնելու։ 18 – Եւ ան որ արտին մէջ է, թող ետ չդառնայ իր հանդերձները առնելու։ 19 – Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուղներուն։ 20 – Եւ աղօթք ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ, ոչ ալ շաբաթի օրը։ 21 – Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որու նմանը աշխարհի սկիզբէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ։ 22 – Եւ եթէ այն օրերը չկրճատուին, ընաւ մարմին մը պիտի չապրէր։ բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի կրճատուին։ 23 – Ա.յն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ թէ Ա.Հա հոս է Քրիստոսը կամ Հոն, մի հաւատաք։ 24 – Վասն զի սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի է՝ քնարեալներն ալ մոլորեցնեն։ 25 – Ա.Հա ձեզի առաջուընէ ըսի։ 26 – Ուստի եթէ ձեզի ըսեն թէ Ա.Հա անապատին մէջ է, մի ելլէք։ Ը՛Ե՛ Ա.Հա ներքին սենեակներուն մէջ է, մի հաւատաք։ 27 – Վասն զի ինչպես փայլակը արևելքէն կ՚ելլէ ու մինչև արևմուտք կ՚երևնայ, այնպես պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը։ 28 – Քանզի ուր մեռած մարմին կայ, հոն պիտի ժողովուին արծիւները։

29 – Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետև արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պիտի կ՚իյնան, ու երկինքի զօրութիւնները պիտի շարժին։ 30 – Եւ այն ատեն Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևնայ երկինքի մէջ, ու այն ատեն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու պիտի տեսնեն Որդին մարդոյ երկինքի ամպերուն վրայ եկած զօրութիւնով ու մեծ փառքով։ 31 – Եւ անիկա իր հրեշտակները պիտի ղրկէ մեծաձայն փողով, ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը։

32 – Թզենիէն առակ մը սորվեցէք. որ երբ անոր ոստերը կը կակուղնան ու տերևները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է։ 33 – Նոյնպես դուք երբ այս ամէն բաները տեսնէք, գիտցէք որ մօտ է դուռներուն քով։ 34 – Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ այս սերդը պիտի չանցնի մինչև այս ամէն բաները ըլլան։ 35 – Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։

36 – Իսկ այն օրուան և այն ժամուն համար մա՛րդ չգիտեր, ոչ ալ երկինքի *հրեշտակները, հապա միայն իմ Հայրս։ 37 – Բայց ինչպես Նոյի օրերը եղաւ, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպես պիտի ըլլայ։ 38 – Քանզի ինչպես էին այն օրերը ջրհեղեղէն առաջ, կ՚ուտէին, կը խմէին, կին կ՚առնէին ու էրկան կուտային, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, 39 – Եւ չգիտցան մինչև ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպես պիտի ըլլայ։ 40 – Ա.յն ատեն երկու հոգի արտի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 41 – Երկու կին մէկ աղօրիքի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։

42 – Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ։ 43 – Բայց զայս գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ ի՛նչ պահուն գողը կու գայ, արթուն կը կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն։ 44 – Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ այն պիտի ժամուն մէջ որ դուք չէք կարծեր։ 45 – Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու խոհական ծառան՝ զոր իր տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որպէս զի ատենին անոնց կերակուրը տայ։ 46 – Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած ատեն այնպէս գտնէ։ 47 – Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա։ 48 – Հապա

*Ոմանք. հրեշտակները, և ոչ Որդին



եթէ այն չար ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ՚ուշացնէ, 49 – Եւ սկսի իր ծառայակիցները ծեծել, ու գինովներուն հետ ուտել ու խմել, 50 – Ա.յն ծառային տէրը պիտի գայ այն օր մը՝ որ չ՚ապասեր, և այն ժամ մը՝ որ չգիտեր։ 51 – Եւ զանիկա մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաները կրճտել։

## ԳԼ. ԻԵ

Ա.յն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները առնելով՝ փեսան դիմաւորելու ելան։ 2 – Անոնցմէ հինգը խոհական էին, և հինգը յիմար։ 3 – Յիմարները առին իրենց լապտերները, ու իրենց հետ իւղ չառին. 4 – Բայց խոհականները իրենց լապտերներուն հետ անօթներով իւղ ալ առին։ 5 – Եւ երբ փեսան ուշացաւ, ամէնն ալ թմրեցան ու քնացան։ 6 – Եւ կէսգիշերին ձայն մը եղաւ, Ա.Հա փեսան կու գայ. զանիկա դիմաւորելու ելէք։ 7 – Ա.յն ատեն բոլոր կոյսերը ելան ու իրենց լապտերները շիտակեցին։ 8 – Եւ յիմարները ըսին խոհականներուն, Տուէք մեզի ձեր իւղէն, վասն զի մեր լապտերները մարելու վրայ են։ 9 – Պատասխան տուին խոհականները ու ըսին, Չըլլայ որ մեզի ու ձեզի չբաւականանայ, այլ յա՛ռէք ծախողներուն գացէք և գնեցէք ձեզի համար։ 10 – Երբ անոնք գացին գնելու, փեսան եկաւ, ու պատրաստ եղողները անոր հետ հարսնիքը մտան, և դուռը գոցուեցաւ։ 11 – Ետքը միւս կոյսերը եկան ու ըսին, Տէր, Տէր, բաց մեզի։ 12 – Բայց անոնք պատասխան տուաւ ու ըսաւ, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ չեմ ձանչնար։ 13 – Ուրեմն արթուն կեցէք, վասն զի ո՛չ օրը գիտէք և ո՛չ *ժամը։

14 – Քանզի ինչպես օտար երկիր գացող մարդ մը կանչեց իր ծառանները, և իր ունեցածը անոնց յանձնեց։ 15 – Մէկուն տուաւ հինգ տալանդ, ու մէկուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ, ամէն մէկուն իր կարողութեանը չափ, ու անմիջապէս ճամբայ ելաւ։ 16 – Եւ ան որ հինգ տալանդը առած էր, գնաց անոնցմով գործ տեսաւ, և ուրիշ հինգ տալանդ շահեցաւ։ 17 – Նմանապէս ան որ երկուքը առած էր, ուրիշ երկուք ալ շահեցաւ։ 18 – Իսկ ան որ մէկը առած էր, գնաց գետինը փորեց, ու իր տէրոջը տակը պահեց։ 19 – Շատ ժամանակէ ետև այն ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ ուզեց։ 20 – Եւ հինգ տալանդը առնողը եկաւ՝ ուրիշ հինգ տալանդ ալ բերաւ, ու ըսաւ, Տէր, հինգ տալանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ հինգ տալանդ ալ անոնց վրայ շահեցայ։ 21 – Ըսաւ անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ. դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ. մտիր քու տէրոջդ ուրախութեանը մէջ։ 22 – Երկու տալանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, երկու տալանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տալանդ ալ անոնց վրայ շահեցայ։ 23 – Ըսաւ անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ. դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ. մտիր քու տէրոջդ ուրախութեանը մէջ։ 24 – Մէկ տալանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես, չսերմնած տեղէդ կը հնձես ու չցանած տեղէդ կը ժողվես։ 25 – Ուստի վախնալով դացի քու տալանդդ գետինն տակ պահեցի. ահա քուկդ քեզի։ 26 – Պատասխան տուաւ անոր տէրը ու ըսաւ անոր, Չար և ծոյլ ծառայ, գիտէիր որ չսերմնած տեղէս կը հնձեմ ու չցանած տեղէս կը ժողվեմ. 27 – Ուրեմն պէտք էր քեզի որ իմ տուածս սեղանաւորներուն տայիր, որպէս զի եկած ատենս շահովը առնէի իմս։ 28 – Ա.րդ առէք տակի տալանդը, ու տասը տալանդ ունեցողին տուէք։ 29 – Վասն զի ամէն ունեցողին պիտի տրուի, ու պիտի աւելնայ, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ 30 – Եւ այդ անպիտան ծառան գուրսի խաւարը հանեցէք. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաները կրճտել։

31 – Ու երբ Որդին մարդոյ իր փառքովը գայ, և բոլոր †սուրբ հրեշտակ-

*Ոմանք. ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ։ †Ոմանք չսրբեն։

ները իրեն հետ, այն տանն իր փառաց աթոռը պիտի նստի. 32 – Եւ անոր առջեւ պիտի ժողովուին բոլոր ազգերը, ու զանոնք իրարմէ պիտի զատէ, ինչպէս հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ. 33 – Եւ ոչխարները իր աջ կողմը պիտի կայնեցնէ, ու այծերը ձախ կողմը։

34 – Ա՛յն ատեն Թագաւորը իր աջ կողմը եղողներուն պիտի ըսէ, Եկէք, իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք. 35 – Վասն զի անօթեցայ, և ինծի ուտելիք տուիք. ծարաւեցայ, ու ինծի խմցուցիք. օտարական էի, և զիս ներս առիք. 36 – Մերկ էի, և զիս հագուեցուցիք. հիւանդ էի, ու ինծի տես եղաք. բանտի մէջ էի, և ինծի եկաք։ 37 – Ա՛յն ատեն արդարները անոր պատասխան պիտի տան ու ըսեն, Տէր, ե՞րբ քեզ անօթեցած տեսանք ու կերակրեցինք, կամ ծարաւած՝ ու խմցուցինք. 38 – Ե՞րբ քեզ օտարական տեսանք և ներս առինք, կամ մերկ՝ ու հագուեցուցինք. 39 – Ե՞րբ քեզ հիւանդ կամ բանտի մէջ տեսանք, ու քեզի եկանք։ 40 – Եւ Թագաւորը պատասխան տալով պիտի ըսէ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որովհետեւ այս իմ եղբայրներուս ամենէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ալ ըրիք։

41 – Ա՛յն ատեն ձախ կողմը եղողներուն ալ պիտի ըսէ, Մէկդի գացէք ինծմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ՝ որ պատրաստուած է Սատանային ու իր հրեշտակներուն։ 42 – Վասն զի անօթեցայ, և ինծի ուտելիք չտուիք. ծարաւեցայ, ու ինծի չխմցուցիք. 43 – Օտարական էի, և զիս ներս չառիք. մերկ էի, և զիս չհագուեցուցիք. հիւանդ ու բանտի մէջ էի, և ինծի տես չեկաք։ 44 – Ա՛յն ատեն անոնք ալ պատասխան պիտի *տան ու ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք քեզ անօթեցած, կամ ծարաւած, կամ օտարական, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, ու քեզի սպասաւորութիւն չըրինք։ 45 – Ա՛յն ատեն պատասխան պիտի տայ անոնց ու ըսէ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որովհետեւ ասոնց ամենէն պզտիկներէն մէկուն չըրիք, ինծի ալ չըրիք։

*Յոյն՝ տան անոր

46 – Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը։

## Գ Լ. ԻԶ

Ու երբ Յիսուս լմնցուց այս բոլոր խոսքերը, ըսաւ իր աշակերտներուն, 2 – Գիտէք որ երկու օրէն հաւ զատիկ կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը մատնուի խաչը հլլելու։

3 – Ա՛յն ատեն քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին ծերերը ժողովուեցան քահանայապետին պալատը, որուն անունը Կայիափա էր. 4 – Ու խորհուրդ ըրին որ նենգութեամբ բռնեն Յիսուսը ու մեռցնեն։ 5 – Բայց կ'ըսէին թէ Ո՛չ տօնին ատենը, որպէս զի ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ։

6 – Ու երբ Յիսուս Բեթանիա էր, բորոտ Սիմոնի տունը, 7 – Կին մը եկաւ անոր՝ որ ունէր ծանրագին իւղի շիշ մը, և թափեց անոր գլխուն վրայ՝ երբ անկից սեղան նստած էր։ 8 – Եւ անոր աշակերտները տեսնելով՝ դժուարեցան ու ըսին, Ինչո՞ւ այս կորուստը ըլլայ. 9 – Քանզի այդ իւղը կրնար սուղ գնով ծախուիլ, ու աղքատներուն արուիլ։ 10 – Եւ Յիսուս իմանալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք կինը. քանզի տիկնայ բարի գործ մը գործեց ինծի։ 11 – Վասն զի աղքատները միշտ ձեզի հետ ունիք, բայց զիս միշտ ձեզի հետ չունիք։ 12 – Վասն զի տիկնայ որ այդ իւղը իմ մարմինիս վրայ թափեց, իմ թաղումիս համար ըրաւ։ 13 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Ինչը աշխարհի մէջ՝ ուր որ այս աւետարանը քարոզուի, ատոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար։

14 – Ա՛յն ատեն տասներկուքէն մէկը, որ Յուդա Իսկարիովտացի կ'ըսուէր, գնաց քահանայապետներուն ու ըսաւ, 15 – Ի՞նչ կ'ուզէք ինծի տալ, ու ես ձեզի մատնեմ զանիկա. և անոնք երեսուն *արծաթ *խոստացան անոր։ 16 – Եւ անկէ հետ պատեհութիւն մը կը փնտռէր, որպէս զի զանիկա մատնէ անոնց։

17 – Եւ բաղարջակերաց առաջին օրը աշակերտները Յիսուսի եկան ու

*Կամ, կշռեցին



անոր ըսին, Ո՞ւր կ'ուզես որ քեզի պատրաստենք՝ զատիկը ուտելու համար։ 18 – Եւ անիկա ըսաւ, Գացէք քաղաքը այս ինչ մարդուն ու ըսէք անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժամանակս մօտ է. աշակերտներուս հետ մեկտեղ քու քովդ պիտի ընեմ զատիկը։ 19 – Աշակերտներն ալ ըրին ինչպէս Յիսուս իրենց հրամայեց ըրաւ, ու պատրաստեցին զատիկը։

20 – Ու երբ իրիկուն եղաւ, տասներկուքին հետ սեղան նստաւ։ 21 – Եւ քանի որ կ'ուտէին, ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ։ 22 – Ու շատ տրտմեցան, և անոնցմէ ամէն մէկը սկսաւ ըսել անոր, Տէր, միթէ ե՞ս եմ։ 23 – Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ան որ ինծի հետ իր ձեռքը պնակը խոթեց, նոյնը պիտի մատնէ զիս։ 24 – Ցիրաւի Որդին մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մատնուի. աւելի էր այն մարդուն որ ծնած չըլլար։ 25 – Պատասխան տուաւ Յուդա որ զանիկա պիտի մատնէր՝ ու ըսաւ, Վարդապետ, միթէ ե՞ս եմ։ Ըսաւ անոր, Դուն ըսիր։

26 – Ու քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կոտրեց, և տուաւ աշակերտներուն ու ըսաւ, Առէք, կերէք, այս է իմ մարմինս։ 27 – Եւ գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց և ըսաւ, Ամէնդ ալ խմեցէք ասկէ. 28 – Վասն զի սա է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար։ 29 – Բայց կ'ըսեմ ձեզի, Ասկէ հետ որթին բերքէն չնաւ պիտի չխմեմ մինչև այն օրը՝ երբ ձեզի հետ զանիկա նոր խմեմ իմ Հօրս թագաւորութեանը մէջ։

30 – Եւ օրհնութիւն մը երգելէ հետ Ձիթենեաց լեռը ելան։ 31 – Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Դուք ամէնդ այս գիշեր իմ վրայովս պիտի դայթակղիք. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու հօտին ոչխարները պիտի ցրուին։ 32 – Բայց յարութիւն առնելէս հետ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ։ 33 – Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Թէպէտ ամենն ալ քու վրայովդ դայթակղին, բայց ես բնաւ պիտի չդայթակղիմ։ 34 – Ըսաւ անոր Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Այս գիշեր դեռ հաւը չհօսած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս։ 35 – Ըսաւ անոր Պետրոս, Թէև քեզի հետ մեռնելու ալ ըլլամ, բնաւ քեզ պիտի չուրանամ. այսպէս կ'ըսէին նաև ամէն աշակերտները։

36 – Ա՛յն ատեն Յիսուս անոնց հետ տեղ մը եկաւ որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ աշակերտներուն, Հոս նստեցէք մինչև որ ես երթամ հոն աղօթք ընեմ։ 37 – Եւ իրեն հետ առնելով Պետրոսը ու Զեբեդէոսի երկու որդիները, սկսաւ տրտմիլ ու վշտանալ։ 38 – Ա՛յն ատեն ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք և ինծի հետ արթուն մնացէք։ 39 – Ու քիչ մը առաջ երթալով՝ իր երեսին վրայ ինկաւ և աղօթք ըրաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, եթէ կարելի է, թող այս գաւաթը ինծմէ անցնի. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես։ 40 – Եւ եկաւ աշակերտներուն ու զանոնք քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսի, Այդպէս մէկ ժամ ալ չկրցաք ինծի հետ արթուն կենալ։ 41 – Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէք. հոգին յօժար է, բայց մարմինը տկար։ 42 – Դարձեալ երկրորդ անգամ գնաց աղօթք ըրաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, եթէ անկարելի է որ այս գաւաթը ինծմէ անցնի առանց անկէ խմելուս, թող քու կամքդ ըլլայ։ 43 – Եւ եկաւ զանոնք նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր։ 44 – Եւ թողուց զանոնք, ու նորէն գնաց երրորդ անգամ աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով։ 45 – Ա՛յն ատեն եկաւ իր աշակերտներուն ու ըսաւ անոնց, Ա՛կէ հետ քնացէք ու հանգչեցէք. ահա ժամը հասաւ, և Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մատնուի։ 46 – Ելէք տակէ երթանք. ահա մատնեցաւ անիկա որ զիս պիտի մատնէ։

47 – Եւ դեռ անիկա զրոյց կը խօսէր, ահա Յուդա, տասներկուքէն մէկը, եկաւ, և իրեն հետ շատ բազմութիւն՝ սուրերով ու բիրերով, քահանայապետներէն և ժողովուրդին ծերերէն։ 48 – Եւ զանիկա մատնողը

անոնց նշան մը տուեր էր՝ ըսելով, Ով որ ես համբուրեմ, ան է, բռնեցէք զանիկա։ 49 – Եւ շուտ մը Յիսուսի մօտենալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, վարդապետ, ու համբուրեց զանիկա։ 50 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն. այն ատեն մօտեցան, ձեռք զարկին Յիսուսի, ու բռնեցին զանիկա։ 51 – Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց և իր սուրը հանելով՝ զարկաւ քահանայապետին ծառային, և անոր ականջը մէկդի հանեց։ 52 – Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ անոր, Սուրդ իր տեղը դարձուր, վասն զի ամէն սուր առնողները սրով պիտի կորսուին։ 53 – Կը կարծես թէ չե՞մ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, և ինծի հասնիք տասներկու *դասդին աւելի հրեշտակներ։ 54 – Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը, թէ պէտք է այսպէս ըլլայ։

55 – Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ այն բազմութեանը, Իբր թէ աւազակի՞ վրայ ելած ըլլաք սուրերով ու բիրերով զիս բռնելու. ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի, և զիս չբռնեցիք։ 56 – Բայց այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուին մարգարէներուն գիրքերը։ Ա՛յն ատեն բոլոր աշակերտները թողուցին զանիկա ու փախան։

57 – Եւ անոնք որ Յիսուսը բռնեցին, Կայեափա քահանայապետին տարին, ուր գրիչները ու ծերերը ժողովուեր էին։ 58 – Եւ Պետրոս հեռուանց անոր եռեւէն գնաց մինչև քահանայապետին դատեթը, ու ներս մտաւ պատասխանութեան հետ նստաւ որպէս զի վերջը տեսնէ։ 59 – Իսկ քահանայապետները ու ծերերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վկայութիւն մը կը փնտռէին, որպէս զի զանիկա մեռցնեն. 60 – Ու չգտան. թէև շատ սուտ վկաներ ալ եկան, բայց չգտան. յետը երկու սուտ վկայ եկան, 61 – Ու ըսին Թէ Ա՛սիկա ըսաւ, Ես կրնամ Աստուծոյ տաճարը քակել, և զանիկա երեք օրուան մէջ շինել։ 62 – Եւ քահանայապետը ոտը ելլելով՝ ըսաւ անոր, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ։

63 – Եւ Յիսուս լուռ կը կենար։ Պատասխան տուաւ քահանայապետը ու ըսաւ անոր, Կենդանի Աստուծով քեզ կ'երդմցնեմ որ մեզի ըսես, Թէ դո՞ւն ես Քրիստոս Որդին Աստուծոյ։ 64 – Ըսաւ անոր Յիսուս, Դուն ըսիր. բայց կ'ըսեմ ձեզի, Ա՛սկէ ետև պիտի տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերուն վրայ եկած։ 65 – Ա՛յն ատեն քահանայապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ, Հայհոյութիւն ըրաւ. ալ ի՞նչ պէտք են մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք սուրբ հայհոյութիւնը. 66 – Ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. անոնք պատասխան տուին ու ըսին, Մահապարտ է։ 67 – Ա՛յն ատեն անոր երեսը թքուքին, ու բռունցքով ծեծեցին զանիկա. ոմանք ալ ապտակ զարնելով ըսին, 68 – Մարգարէացիր մեզի, դուն Քրիստոս, ո՞վ է ան որ քեզի զարկաւ։

69 – Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր, և աղախին մը եկաւ անոր ու ըսաւ, Դուն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր։ 70 – Բայց անիկա ամէնուն առջև ուրացաւ ու բաւ, Չեմ գիտեր դուն ի՞նչ կը խօսիս։ 71 – Ու երբ դուրս ելաւ, ուրիշ աղախին մը զանիկա տեսաւ, և հոն եղողներուն ըսաւ, Ա՛սիկա ալ Յիսուս Նազովրեցիին հետ էր։ 72 – Եւ Պետրոս նորէն երդումով ընելով ուրացաւ, Թէ ես այն մարդը չեմ ճանչնար։

73 – Ու քիչ մը ատենէն հոն եղողները եկան և ըսին Պետրոսի, Արդարև դուն ալ անոնցմէ ես, վասն զի քու ըրածդ ալ քեզ յայտնի կ'ընէ։ 74 – Ա՛յն ատեն սկսաւ անիծել ու երդումով ընել՝ ըսելով Թէ ես այն մարդը չեմ ճանչնար. և իսկոյն հաւը խօսեցաւ։ 75 – Եւ Պետրոս միտքը բերաւ Յիսուսի խօսքը զոր ըրեն ըսեր էր Թէ Դուն հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս. ու դուրս ելլելով դառնապէս լացաւ։

## Գ Լ. ԻԷ

Երբ առաւօտ եղաւ, բոլոր քահանայապետները ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ ըրին որ զանիկա մեռցնեն։ 2 – Եւ կապկռով զանիկա տարին, ու Պոնտացի Պիղատոս կուսակալին ձեռքը տուին։

3 – Ա՛յն ատեն Յուդա, որ զանիկա մատնեց, տեսնելով Թէ դատապարտուեցաւ, զղջալի եկաւ, ու երեսուն արծաթը եւ դարձուց քահանայապետներուն և ծերերուն, 4 – Ու ըսաւ, Մեղայ, որ անմեղ արիւն մատնեցի. և անոնք ըսին, Մեզի ի՞նչ, դուն նայէ։ 5 – Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց ու դուրս ելաւ, և գնաց ինքզինք խեղդեց։ 6 – Քահանայապետներն ալ արծաթը առնելով՝ ըսին, Ա՛րժան չէ զանիկա *կորբանին մէջ դնել, վասն զի արեան գին է։ 7 – Ուստի խորհուրդ ըրին, և անով բրուտին արտը ծախու առին՝ օտարներու գերեզմանատուն ըլլալու համար։ 8 – Ա՛յս պատճառաւ այն արտը Արեան արտ ըսուեցաւ մինչև այսօր։ 9 – Ա՛յն ատեն կատարուեցաւ †Երեմիա մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, Եւ առին երեսուն արծաթը, գին կարուածին գինը, զոր Իսրայէլի որդիներէն ոմանք գին կարկեցին, 10 – Ու տուին զանիկա բրուտին արտին, ինչպէս ինծի հրամայեց Տէրը։

11 – Եւ Յիսուս կուսակալին առջև կայնեցաւ. և կուսակալը հարցուց անոր ու ըսաւ, Հրէից Թագաւորը դո՞ւն ես։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Դուն կ'ըսես։ 12 – Ու քահանայապետներէն և ծերերէն ամբաստանուած ատենը բնաւ պատասխան մը չտուաւ։ 13 – Ա՛յն ատեն Պիղատոս ըսաւ անոր, Չե՞ս լսեր Թէ ո՛րչափ քեզի դէմ կը վկայեն ատոնք։ 14 – Եւ անոր բան մը պատասխան չտուաւ, մինչև շատ զարմացաւ կուսակալը։

15 – Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ տօնին ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին, ով որ ուզէին։ 16 – Ա՛յն ատեն Բարաբբա անունով երեւելի բանտարկեալ մը ունէին։ 17 – Երբ ժողովուեցան, ըսաւ անոնց Պիղատոս, Ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ. Բարաբբա՞ն Թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի։ 18 – Գիտեր գիտէր Թէ նախանձի համար մատնեցին զանիկա։

19 – Ու երբ անիկա ատեանը նստեր էր, անոր կինը դէպ ղրկեց անոր ու ըսաւ, Դուն այն արդարին հետ բան մը չունենաս, վասն զի այսօր երազիս մէջ շատ դիպուածներ անցան գլխէս անոր համար։

20 – Բայց քահանայապետները և ծերերը ժողովուրդը համոզեցին որ Բարաբբան խնդրեն ու Յիսուսը կորսնցնեն։ 21 – Պատասխան տուաւ կուսակալը ու ըսաւ անոնց, Ա՛յս երկուքէն ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ. և անոնք ըսին, Բարաբբան։ 22 – Ըսաւ անոնց Պիղատոս, Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը, որ Քրիստոս կ'ըսուի։ 23 – Ա՛ն ըսին անոր, Թող խաչուի. և կուսակալը ըսաւ, Բայց ի՞նչ չար գործ ըրաւ. և անոնք և՛ս աւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին, Թող խաչուի։ 24 – Եւ Պիղատոս տեսնելով որ օգուտ մը չըլլար, հապա ա՛լ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ, ձեռքերը լուաց ժողովուրդին առջև ու ըսաւ, Ես այդ արդարին արիւնէն անպատրաստ եմ. դուք մտածեցէք։ 25 – Եւ բոլոր ժողովուրդը պատասխան տալով ըսաւ, Անոր արիւնը մեր վրայ ու մեր որդիներուն վրայ ըլլայ։ 26 – Ա՛յն ատեն Բարաբբան արձակեց անոնց, և Յիսուսը ծեծելով անոնց ձեռքը տուաւ որպէս զի խաչուի։

28 – Ա՛յն ատեն կուսակալին զինուորները պալատին ներսը տարին Յիսուսը, ու բոլոր վհուկ-զինուորը անոր վրայ ժողվեցին. 28 – Եւ զանիկա մերկացնելով կարմիր վերարկու մը հագցուցին անոր։ 29 – Ու փուշերէ պսակ մը հիւսելով՝ անոր գլուխը դրին, ու եղէգ մը անոր աջ ձեռքը. և անոր առջև ծունկի վրայ գալով ծաղր կ'ընէին զանիկա, ու կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրէից Թագաւոր։ 30 – Եւ թքնելով անոր վրայ՝ եղեգը կ'առնէին ու անոր գլուխը կը ծեծէին։ 31 – Ու երբ ծաղր ըրին զանիկա, վերարկուն վրայէն հանեցին ու իր հանդերձները հագցուցին անոր և տարին զանիկա խաչը հանելու։

32 – Եւ դուրս ելլելով Կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անունով, զանիկա պահակ բռնեցին որպէս զի անոր խաչը վերցնէ։ 33 – Ու եկան Գողգոթա բուսած տեղը, որ է գանկի տեղ. 34 – Եւ լեղիով խառնուած քացախ տուին անոր որպէս զի խմէ. ու երբ համը առաւ, խմել չէր ուզեր։ 35 – Եւ զանիկա խաչը հանելով, անոր հանդերձները վիճակով բաժնեցին. [որպէս զի մարգարէին ըսուածը կատարուի, Իմ հանդերձներս իրենց մէջ

*Յոան. լեզեանէն

*Ա՛յինքն, տաճարին գանձանակը
†Ո՛ահ ը՛ն Երեմիա

քաժնեցին, և իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին։] 36 – Ու նստեր զանիկա կը պահէին։ 37 – Եւ անոր գլխուն վրայ իր յանցանքը գրուած գրին, թէ Ասիկա է Յիսուս, Հրեից Թագաւորը։ 38 – Ա՛յն ատեն անոր հետ երկու աւազակ խաչուեցան, մէկը անոր աջ կողմէն, ու մէկը ձախ կողմէն։

39 – Եւ անոնք որ կ՛անցնէին՝ կը հայհոյէին անոր, գլուխնին կը շարժէին, 40 – Ու կ՛ըսէին, Դուն որ տաճարը կը քակեիր և երեք օրուան մէջ կը շինեիր, ինքզինքդ ազատէ. եթէ Աստուծոյ Որդին ես, իջիր այդ խաչէն։ 41 – Նոյնպէս ալ քահանայապետները դպիրներուն ու ծերերուն հետ ծաղր ընելով՝ կ՛ըսէին, 42 – Ուրիշները ազատեց, ինքզինք չկրնար ազատել. եթէ Իսրայէլի Թագաւոր է, թող հիմա իջնէ խաչէն, և հաւատանք։ 43 – Աստուծոյ յուսացեր է, հիմա թող փրկէ ատիկա՝ եթէ կ՛ուզէ ատիկա. վասն զի ըսաւ, Թէ ես Որդի Աստուծոյ եմ։ 44 – Իրեն հետ խաչուած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին զանիկա։

45 – Եւ վեցերորդ ժամին մինչև իններորդ ժամը բոլոր երկրին վրայ խաւար եղաւ։ 46 – Եւ ժամը իններն ատենները Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Էլի, Էլի, լ՚մա սաբաքթանի. որ ըսել է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր։ 47 – Անոնցմէ ոմանք, որ հոն կայներ էին, երբ լսեցին՝ կ՛ըսէին, Ատիկա Եղիան կը կանչէ։ 48 – Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը առաւ՝ քացախով լեցուց, ու եղէգի մը անցընելով տուաւ անոր որպէս զի խմէ։ 49 – Ու միւսները կ՛ըսէին, Թող ըլլայ, տեսնենք թէ Եղիա կու գայ ատիկա ազատելու։

50 – Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց, ու հոգին աւանդեց։

51 – Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն վար երկու բի ճեղքուեցաւ, ու երկիրը շարժեցաւ, և քարերը պատուեցան։ 52 – Եւ գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, 53 – Եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետև, մտան սուրբ քաղաքը ու շատերու երեցան։

54 – Բայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը պահողները, երբ տեսան երկրաշարժը ու եղած բաները, շատ վախցան՝ ու ըսին, Արդարև սա՛կա Որդի Աստուծոյ էր։

55 – Եւ հոն շատ կիներ կային որոնք հեռուէն կը նայէին, որոնք Գալիլեայէ Յիսուսի ետևէն եկան իրեն ծառայութիւն ընելու. 56 – Որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի ու Յովսէսի մայրը Մարիամ՝ և Զեբեդէոսի որդիներուն մայրը։

57 – Ու երբ իրիկուն եղաւ, Արիմաթիայէ Հարուստ մարդ մը եկաւ, որուն անունը Յովսէփ էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր։ 58 – Ասիկա Պիղատոսի քով երթալով՝ Յիսուսի մարմինը խնդրեց. այն ատեն Պիղատոս հրամայեց որ մարմինը տրուի։ 59 – Եւ Յովսէփ մարմինը առաւ, մաքուր կտաւով պատնեց, 60 – Ու դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝ զոր քարէ փորած էր. և գերեզմանին դուռը մեծ քար մը գլորելով գնաց։ 61 – Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամը՝ գերեզմանին դիմաց նստած։

62 – Եւ հետևեալ օրը, որ ուրբաթէն ետև էր, քահանայապետները ու փարիսեցիները ժողովուեցան Պիղատոսի քով, 63 – Ու ըսին, Տէր, կը յիշենք որ այն մոլորեցուցիչը իր կենդանութեան ատեն կ՛ըսէր Թէ երեք օրէն ետև յարութիւն կ՛առնեմ։ 64 – Ուստի հրամայէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով գան պնդիկա գողնան, և ժողովուրդին ըսեն Թէ մեռելներէն յարութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ։ 65 – Պիղատոս անոնց ըսաւ, Դուք ունիք պահապան զինուորներ. գացէք, զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք։ 66 – Անոնք ալ գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը կնքելով ու պահապան զինուորներ դնելով։

## Գ.Լ. ԻՐ

Եւ շաբաթի գիշերը երբ մէկշաբթին կը լուսնար, եկաւ Մարիամ Մագդաղենացի ու միւս Մարիամը գերեզմանը տեսնելու։ 2 – Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, վասն զի Տէրոջը հրեշտակը երկինքէն իջնելով, գնաց դռնէն մէկդի գլորեց քարը, ու անոր վրայ նստաւ։ 3 – Եւ անոր տեսքը փայլակի պէս էր, ու անոր հանդերձները՝ ձիւնի պէս ճերմակ։ 4 – Եւ անոր վախէն պահապանները խռովեցան, ու մեռածի պէս եղան։ 5 – Պատասխան տուաւ հրեշտակը ու ըսաւ կիներուն, Դուք մի վախնաք, քանզի գիտեմ որ կը փնտռէք Յիսուսը, որ խաչուեցաւ։ 6 – Անիկա հոս չէ, վասն զի յարութիւն առաւ, ինչպէս ըսաւ. եկէք տեսէք այն տեղը, ուր Տէրը պառկած էր։ 7 – Եւ շուտ մը գացէք անոր աշակերտներուն ըսէք Թէ Անիկա մեռելներէն յարութիւն առաւ, և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ՛երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա. ահա ձեզի ըսի։ 8 – Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրախութիւնով, և կը վազէին աշակերտներուն պատմել։

9 – Ու երբ կ՛երթային անոր աշակերտներուն պատմել, ահա Յիսուս անոնց դէմը ելաւ ու ըսաւ, Ողջոյն ձեզ։ Եւ անոնք մօտենալով անոր ոտքերը բռնեցին, ու երկրպագութիւն ըրին անոր։ 10 – Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Մի վախնաք, գացէք իմ եղբայրներուս ըսէք որ Գալիլեա երթան, ու հոն զիս պիտի տեսնեն։

11 – Երբ անոնք կ՛երթային, ահա



պահապան զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան, ու քահանայապետներուն պատմեցին բոլոր եղած բաները, 12 – Եւ անոնք ծերերուն հետ մեկտեղ ժողովուելով ու խորհուրդ ընելով, շատ ոսկի տուին զինուորներուն, 13 – Ու ըսին, Ըսէք Թէ Անոր աշակերտները գիշերով եկան զանիկա գողցան, երբ մենք կը քնանայինք։ 14 – Եւ եթէ այդ բանը կուսակալին ականջը հասնի, մենք զանիկա կը հաճեցնենք, և ձեզ *ապահով կ՛ընենք։ 15 – Անոնք ալ ոսկին առին, ու սորվածնուն պէս ըրին. և այս ձայնը Հրեաներուն մէջ տարածուեցաւ մինչև այսօր։

16 – Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլեա, այն լեռը ուր Յիսուս իրենց որոշեր էր։ 17 – Ու երբ զանիկա տեսան, երկրպագութիւն ըրին անոր, բայց ոմանք տարակուսեցան։ 18 – Եւ Յիսուս մօտենալով՝ խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ամէն իշխանութիւն ինծի տրուած է երկինքի ու երկրի մէջ։ 19 – Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. 20 – Սորվեցուցէք անոնց որ այն ամէն բաները պահեն՝ զոր ես ձեզի պատուիրեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը։ Ամէն։

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա

Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետարանին սկիզբը։ 2 – Ինչպէս մարգարէներուն մէջ գրուած է. Ա՛հա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ։ 3 – Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները չիսկեցէք։ 4 – Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան համար։ 5 – Եւ բոլոր Հրէաստանի երկիրը ու Երուսաղէմացիք կ՛երթային անոր, ու ամէնը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղքերնին խոստովանելով։ 6 – Եւ Յովհաննէս հագեր էր ուղտի մազ, և իր մէջքը կաշիէ գօտի. ու իր կերակուրը մորեխ ու վայրենի մեղր էր։ 7 – Եւ կը քարոզէր ու կ՛ըսէր, Իմ ետևէս ինծմէ զօրաւորը կու գայ, որ ես արժանի չեմ ծռելու

*Յուն. անհոգ

և անոր կօչիկներուն կապերը արձակելու։ 8 – Ես ձեզ ջրով մկրտեցի, բայց անիկա ձեզ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ։

9 – Ու եղաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեայէն Նազարէթէն եկաւ, ու Յովհաննէսէ մկրտուեցաւ Յորդանանի մէջ։ 10 – Եւ շուտ մը ջուրէն ելլելուն պէս երկինքը բացուած տեսաւ, և Հոգին աղաւնիի պէս որ իր վրայ կ'իջնէր։ 11 – Եւ ձայն մը եկաւ երկինքէն, որ կ'ըսէր, Դուն es իմ սիրելի Որդիս, որու հաւնեցայ եմ։

12 – Եւ շուտ մը Հոգին անապատը հանեց զանիկա։ 13 – Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ՝ Սատանայէ փորձուած, և գազաններու հետ էր, ու հրեշտակները իրեն սպասաւորութիւն կ'ընէին։

14 – Եւ Յովհաննէսի մատնուելէն ետև Յիսուս Գալիլեա եկաւ, Աստուծոյ ուրքայութեան աւետարանը կը քարոզէր 15 – Ու կ'ըսէր, Թէ ժամանակը լրացած է, և Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէք ու աւետարանին հաւատացէք։

16 – Երբ Գալիլեացւոց ծովուն քովերը կը պտըտէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնի եղբայրը Անդրէասը, ծովը ուռկան ձգած, վասն զի ձկնորս էին։ 17 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Իմ ետևէս եկէք, ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք։ 18 – Անոնք ալ շուտ մը իրենց ուռկանները թողուցին ու անոր ետևէն գացին։ 19 – Եւ անկէ քիչ մը առաջ երթալով՝ տեսաւ Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ ուռկանները կը կարկտէին։ 20 – Եւ շուտ մը զանոնք կանչեց. անոնք ալ իրենց հայրը Զեբեդէոսը վարձկաններուն հետ նաւին մէջ ձգելով՝ անոր ետևէն գացին։

21 – Ու Մոան Կափառնայում. և իսկոյն շաբաթ օրը ժողովարանը մտնելով կը սորվեցնէր։ 22 – Եւ կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս։ 23 – Եւ անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ ոգի ունէր իր ներսիդին, ու աղաղակեց՝ ըսելով, 24 – Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազովրեցի. մի՞թէ մեզ կորսնցնելո՞ւ եկար. գիտեմ քեզ՝ ո՛վ es. Աստուծոյ Սուրբը։ 25 – Եւ Յիսուս սաստեց անոր՝ ըսելով, Պապանձէ ու ել ատկէ։ 26 – Եւ պիղծ ոգին ատիկ ցնցեց զանիկա, ու մեծ ձայնով մը աղաղակեց ու անկէ ելաւ։ 27 – Եւ ամէնը զարմացան, այնպէս որ իրարու հարցուփորձ կ'ընէին ու կ'ըսէին, Ա՛յս ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է այս, որ իշխանութիւնով պիղծ ոգիներուն ալ կը հրամայէ, ու իրեն կը հնազանդին։ 28 – Եւ շուտ մը իր համբաւը Գալիլեացւոց ամէն կողմերը ելաւ։

29 – Եւ շուտ մը ժողովարանէն ելելով՝ Սիմոնի ու Անդրէասի տունը մտան Յակոբոսի և Յովհաննէսի հետ։ 30 – Ու Սիմոնի զոքանչը ջերմէ բռնուած՝ պառկած էր, և շուտ մը անոր համար ըսին իրեն։ 31 – Ու Յիսուս մօտեցաւ, անոր ձեռքէն բռնեց, վերցուց զանիկա. և իսկոյն ջերմը թողուց զանիկա, ու անոնց սպասաւորութիւն կ'ընէր։

32 – Ու երբ իրիկուն եղաւ, արեգակին մտած ատենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն կը բերէին։ 33 – Ու բոլոր քաղաքը դուռը ժողվուեր էր։ 34 – Եւ շատ հիւանդները կերով կերպ ցաւերէ՝ չարչարուած ու շատ դևեր հանեց. ու դևերուն խօսիլ չէր տար, վասն զի զինք կը ճանչնային։

35 – Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դուրս չուացած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և հոն աղօթք կ'ընէր։ 36 – Ու Սիմոն և իրեն հետ եղողները գացին անոր ետևէն։ 37 – Ու երբ գտան զանիկա, ըսին անոր Թէ Ամէնը քեզ կը փնտռեն։ 38 – Եւ ըսաւ անոնց, Եկէ՛ երթանք մերձակայ գիւղաքաղաքները, որպէս զի հոն ալ քարոզեմ, քանզի այս բանին համար ելեր եմ։ 39 – Եւ անոնց ժողովարանները մէջ կը քարոզէր բոլոր Գալիլեայի մէջ, ու դևերը կը հանէր։

40 – Բորտ մը եկաւ անոր, կ'աղաչէր, ծունկ կը դնէր ու կ'ըսէր անոր, Եթէ ուզես, կրնաս զիս մաքրել։ 41 – Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկնցուց, դպաւ անոր ու բսաւ անոր, Կ'ուզեմ, մաքրուէ։ 42 – Ու երբ ըսաւ ասոր, շուտ մը բորտութիւնը անկէ գնաց, ու մաքրուեցաւ։ 43 – Եւ սաստիկ պատուէր տալով անոր՝ շուտ մը դուրս հանեց զանիկա, ու ըսաւ անոր, 44 – Զգոյշ կեցիր, մարդո՛ւ բան մը չըսես, հապա գնա քեզ քահանային ցուցուր, և տուր քու մաքրութեանդ ընծան, զոր Մովսէս պատուիրեց՝ անոնց վկայութիւն ըլլալու համար։ 45 – Բայց անիկա ելլելով՝ սկսաւ շատ հրատարակել ու բանը տարածել, այնպէս որ ա՛լ քաղաք մը մտնել չէր կրնար յայտնի կերպով, հապա դուրսը անապատ տեղեր էր, և ամէն կողմերէն իրեն կու գային։

## ԳԼ. Բ

Եւ նորէն Կափառնայում մտաւ քանի մը օրէն ետև. 2 – Ու լսուեցաւ որ անիկա տան մէջ է, և շուտով շատ մարդիկ ժողվուեցան, այնպէս որ ա՛լ տեղ չկար, ոչ ալ դրանը քովերը. ու կը խօսէր անոնց Աստուծոյ խօսքը։ 3 – Եւ կու գային իրեն՝ չորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին։ 4 – Ու երբ բազմութենէն չէին կրնար անոր մօտենալ, քակեցին տանիքը ուր Յիսուս էր, ու ծակ մը բանալով վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը։ 5 – Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին, Որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են։ 6 – Ու դպիրներէն մէկ քանիները կային որ հոն նստեր էին, և իրենց սիրտերուն մէջ կը խորհէին՝ ըսելով, 7 – Ինչո՞ւ համար ասիկա այսպիսի հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ 8 – Եւ Յիսուս իսկոյն իմանալով իր հոգւոյն մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին իրենց մէջ, ըսաւ անոնց, Ա՛րդ ի՞նչ կը խորհիք սիրտերնուդ մէջ։ 9 – Ո՞րը աւելի դիւրին է, անդամալոյծին ըսե՞լ՝ Քու մեղքերդ ներուած են, թէ ըսե՛լ՝ Ելիր, մահիճդ առ ու քալէ։ 10 – Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ անդամալոյծին,) 11 – Քեզի կ'ըսեմ, ելիր, մահիճդ առ ու տունդ գնա։ 12 – Ան ալ շուտ մը ելաւ, և իր մահիճը առնելով՝ ամէնուն առջև դուրս ելաւ, այնպէս որ ամէնըապշած մնացին, և փառք տուին Աստուծոյ, ու ըսին Թէ Այսպիսի բան մը ամենևին տեսած չենք։

13 – Եւ ելաւ նորէն ծովեզերքը, ու բոլոր ժողովուրդը իրեն կու գային, և կը սորվեցնէր անոնց։ 14 – Ու երբ կ'անցնէր, տեսաւ Ղևի Ալփեոսեանը, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու բսաւ անոր, Եկուր իմ ետևէս. ան ալ ելաւ անոր ետևէն գնաց։ 15 – Ու եղաւ որ երբ սեղան նստած էր անոր տանը մէջ, շատ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի հետ ու անոր աշակերտներուն հետ. քանզի շատ էին, ու անոր ետևէն կ'երթային։ 16 – Եւ դպիրները ու. փարիսեցիները երբ տեսան Թէ անկիա մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ ու կը խմէ։ 17 – Եւ Յիսուս երբ լսեց՝ բսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն. es արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները*։

18 – Եւ Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահէին. և եկան ու ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահեն, ու քու աշակերտներդ ծոմ չեն պահեր։ 19 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը, քանի որ փեսան իրենց հետ է, ծոմ պահեն. որչափ ժամանակ որ փեսան իրենց հետ ունին, կարելի չէ ծոմ պահել։ 20 – Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ապա այն օրը ծոմ պիտի պահեն։ 21 – Մէկը կտկտան չգեր նոր լաթի կտոր մը հին հանդերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը որ անոր լրութեանը համար գրուած էր, հինէն կ'առնէ ու պատռուածքը ա՛լ աւելի գէշ կ'ըլլայ, 22-Ոչ ալ մէկը նոր գինին հին տիկերու մէջ կը դնէ. եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը պատռէ, ու գինին կը թափի և տիկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է։

23 – Ու եղաւ որ շաբաթ օրը ինք արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները երբ կ'երթային, սկսան ցորեն հասկեր փրցնել։ 24 – Ու փա-

*Որոնք կ'ուզեն, ապաշխարութեան

բնակիչները ըսին իրեն, Նայէ չաբաթ օրը ի՛նչ կ՚ընեն, որ արժան չէ։ 25 – Ինք ալ անոնց ըսաւ, Բնաւ չէ՛ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը՝ երբ պէտք ունեցաւ, և անօթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին։ 26 – Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրով, և առաջաւորութեան հացերը կերաւ, ու տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, զոր Քհա՛ն օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն։ 27 – Եւ ըսաւ անոնց, Շաբաթը մարդուն համար եղաւ, ու ոչ թէ մարդը շաբաթին համար։ 28 – Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է։

## Գլ. Գ

Եւ նորէն ժողովարանը մտաւ, ու հոն մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր։ 2 – Եւ իրեն կը սպասէին թէ արդեօք շաբաթ օրը զանիկա պիտի բժշկէ՛, որպէս զի իր վրայով ամբաստանութիւն ընեն։ 3 – Եւ ինք ձեռքը չորցած մարդուն ըսաւ, Ելիր մէջտեղը կայնէ։ 4 – Ու ըսաւ անոնց, Շաբաթի օրը բարի՞ք ընել արժան է՝ թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնե՞լ՝ թէ մեռցնել. բայց անոնք լուռ կեցան։ 5 – Եւ Յիսո՜ւս բարկութեամբ շուրջանակի անոնց վրայ նայելով՝ անոնց սիրտերուն կուրութեանը համար տրտմած, ըսաւ այն մարդուն, Ձեռքդ երկնցուր. ան ալ երկնցուց, և անոր ձեռքը *ողջացաւ։ 6 – Ու փարիսեցիները Հերովդեսեաններուն հետ ելան մեկտեղ շուտ մը դուրս գալով, անոր դէմ խորհուրդ կ՚ընէին թէ ի՛նչպէս կորնչցնեն զանիկա։

7 – Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը գնաց. և շատ բազմութիւն անոր ետևէն գացին Գալիլեայէ ու Հրէաստանէ, 8 – Եւ Երուսաղէմէ ու Եդոմէ և Յորդանանու անդին կողմէն. ու անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն էին, շատ բազմութիւն, երբ լսեցին ինչ որ կ՚ընէր, իրեն եկան։ 9 – Եւ իր աշակերտներուն ըսաւ որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժողովուրդին բազմութեանը պատճառաւ, որպէս զի զինք չնեղեն։ 10 – Քանզի շատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողները վրան կը դիզուէին որպէս զի իրեն դպչին։ 11 – Եւ պիղծ ոգիները երբ զինք կը տեսնէին, կ՚իյնային իր առջև, կը կանչէին ու կ՚ըսէին, 12 – Դուն ես Աստուծոյ Որդին. և ինք խստիկ կը յանդիմաներ զանոնք, որ զինք չյայտնեն։

13 – Եւ լեռը ելլելով իր ուզածները իրեն կանչեց, ու գացին անոր քով։ 14 – Եւ տասներկու հոգի ընտրեց, որպէս զի իրեն հետ ըլլան, և որպէս զի զանոնք ղրկէ քարոզել, 15 – Ու իշխանութիւն ունենալ ցաւերը բժշկելու և դևերը հանելու։ 16 – Եւ Սիմոնի անունը Պետրոս դրաւ. 17 – Եւ Զեբեդեան Յակոբոսի ու Յոհաննէսի եղբօրը Յովհաննէսի՝ անոնց ալ Որդիք սրտմտութեան դրաւ, որ բսել է Որդիք սրտմտութեան. 18 – Եւ Անդրէասը, ու Փիլիպպոսը, և Բարթողիմէոսը, ու Մատթէոսը, և Թովմասը, ու Ալփեոսեան Յակոբոսը, և Թադէոսը, ու Սիմոն Կանանացին, 19 – Եւ Յուդա Իսկարիովտացին, որ նաև մատնեց զնիկա։

20 – Տուն մը եկան, և նորէն ժողովուրդը ժողովուեցաւ, այնպէս որ հաց ուտելու ալ ժամանակ չկրցան գտնել։ 21 – Ու երբ իրենները լսեցին, ելան որ զինք բռնեն, քանզի կ՚ըսէին թէ խելառած է։ 22 – Եւ այն գրիչները որոնք Երուսաղէմէ իջեր էին, կ՚ըսէին թէ Աստ ներսիդին Բէեզեբուղ կայ, և դևերուն իշխանովը դևերը կը հանէ։ 23 – Եւ իրեն կանչելով զանոնք՝ առակներով կ՚ըսէր անոնց, Ի՞նչպէս կրնայ Սատանայ Սատանայ հանել։ 24 – Ու եթէ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ։ 25 – Եւ եթէ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը չկրնար կենալ։ 26 – Ու եթէ Սատանայ իրեն դէմ ելլաւ ու բաժնուած է, անիկա չկրնար կենալ, հապա անոր վերջը հասած է։ 27 – Մէկը չկրնար զօրաւոր մարդու մը տունը մտնելով՝ անոր կարասիները յափշտակել, եթէ առաջ այն զօրաւոր մարդը չկապէ, ու յետոյ անոր տունը կողոպտէ։ 28 – Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ Ամէն մեղքերը պիտի ներուին մարդոց որդիներուն, և հայհոյութիւնները՝ որչափ որ հայհոյեն. 29 – Բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտեան Թողութիւն պիտի չունենայ, հապա յաւիտենական դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ։ 30 – Վասն զի կ՚ըսէին Թէ Պիղծ ոգի կայ անոր ներսիդին։

31 – Եւ անոր մայրը ու եղբայրները եկան, ու դուրսը կայնելով՝ մարդ ղրկեցին ու կը կանչէին զանիկա։ 32 – Եւ ժողովուրդը անոր բոլորտիքը նստեր էր, ու իրեն ըսին Թէ Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կ՚այնէ՜ն և քեզ կ՚ուզեն։ 33 – Եւ անիկա պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ո՞վ է իմ մայրս կամ եղբայրներս։ 34 – Ու իր բոլորտիքը նստողներուն նայելով՝ ըսաւ, Ահա իմ մայրս ու իմ եղբայրներս. 35 – Վասն զի ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քոյրս ու մայրս։

## Գլ. Դ

Դարձեալ սկսաւ ովին վրայ ծովեզերքին վրայ, և շատ ժողովուրդ անոր քով ժողովուեցաւ, այնպէս որ ինք նաւը մտաւ ու նստաւ ծովուն վրայ, և բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն եզերքն էր։ 2 – Եւ անոնց շատ բաներ կը սորվեցնէր առակներով, ու կ՚ըսէր անոնց իր վարդապետութեանը մէջ, 3 – Լսեցէ՛ք. ահա սերմ ցանողը ելաւ որպէս զի սերմ ցանէ։ 4 – Ու երբ կը ցաներ, մէկ քանին ճամբուն քով ինկաւ, և թռչուննները եկան ու կերան զանիկա։ 5 – Եւ ուրիշը ինկաւ ապառաժոտ տեղի վրայ, ուր շատ հող չկար. և շուտ մը բուսաւ՝ հողին խորունկութիւն չունենալուն համար։ 6 – Սակայն արեւուն ծագած ատենը պրեցաւ, ու արմատ չունենալուն համար չորցաւ։ 7 – Եւ ուրիշը ինկաւ փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանիկա, ու պտուղ չտուաւ։ 8 – Եւ ուրիշը ինկաւ աղէկ հողի մէջ, ու պտուղ կուտար, որ ելաւ ու մեծցաւ, և կը բերէր մէկուն երեսուն, ու մէկուն վաթսուն, և մէկուն հարիւր։ 9 – Ու կ՚ըսէր, Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ։

10 – Ու երբ առանձին էր, իր քովեղողները տասներկուքին հետ մեկտեղ հարցուցին իրեն այն առակը։ 11 – Եւ ըսաւ անոնց, Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են, ամէն բան առակներով կ՚ըլլայ։ 12 – Որպէս զի տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն, և լսելով լսեն՝ ու չհասկնան, որպէս զի չըլլայ թէ դարձի գան, և իրենց մեղքերուն թողութիւն ըլլայ։ 13 – Ու ըսաւ անոնց, Այս առակը չէ՞ք գիտեր. ուրեմն ի՞նչպէս պիտի գիտնաք ամէն առակները։ 14 – Սերմ ցանողը խօսքը կը ցանէ։ 15 – Եւ ճամբուն քովինները անոնք են, որոնց մէջ խօսքը կը ցանուի, ու երբ կը լսեն, շուտ մը Սատանայ կու գայ և անոնց սիրտերուն մէջ ցանուած խօսքը կը հանէ։ 16 – Նոյնպէս ալ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածները անոնք են, որ երբ կը լսեն խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ՚ընդունին զանիկա. 17 – Եւ իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տևեն, ետքը երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը կը գայթակղին։ 18 – Եւ փուշերուն մէջ ցանուածները անոնք են, որ երբ խօսքը կը լսեն, 19 – Աշխարհիս զբաղմունքները ու հարստութեան խաբէութիւնները, և ուրիշ բաներուն ցանկութիւնները մէջ մտնելով, խօսքը կը խեղդեն, ու կ՚ըլլայ անպտուղ։ 20 – Եւ աղէկ հողի մէջ ցանուածները անոնք են, որ խօսքը կը լսեն և կ՚ընդունին, ու պտուղ կուտան՝ մէկուն տեղ երեսուն, և մէկուն տեղ վաթսուն, ու մէկուն տեղ հարիւր։

21 – Եւ ըսաւ անոնց, Մի՞թէ ճրագը գրասենին կամ մահիճին տա՞կ դրուելու համար կու գայ, չէ՞ որ աշտանակին վրայ դրուելու համար։ 22 – Վասն զի ծածուկ բան մը չկայ, որ պիտի չյայտնուի. և գաղտուկ բան մը չէ եղած, որ երևան պիտի չգայ։ 23 – Եթէ մեկը լսելու ականջ ունի, թող լսէ։

24 – Եւ ըսաւ անոնց, Նայեցէ՛ք ի՛նչ կը լսէք. ինչ չափով որ դուք կը չափէք, նո՛ւ չափով պիտի չափուի ձեզի. և ձեզի, որ կը լսէք, պիտի աւելնայ։ 25 – Վասն զի ո՛վ որ ունի, անոր պիտի տրուի. և ո՛վ որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի։

*Ողջացաւ, առողջացաւ

*Ողջ., երկինքի թռչունները

26 – Եւ կ'ըսէր, Այսուհետ թագաւորութիւնը այսպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ սերմ ձգէ, 27 – Ու քնանայ և արթնանայ գիշեր ու ցորեկ, և սերմը բուսնի ու մեծնայ, ու ինք չգիտեր թէ ի՛նչպէս։ 28 – Հանդի հողը ինքիրմէ պտուղ կու տայ. առաջ խոտ, ետքը հասկը, անկէ ետև լեցուն ցորենը հասկին մէջ, 29 – Ու երբ պտուղը հասունցայ, շուտ մը մանգաղը կը ղրկէ, վասն զի հունձքի ատենը հասած է։

30 – Եւ կ'ըսէր, Այսուհետ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցնենք, կամ ի՞նչ առակով զանիկա բաղդատենք։ 31 – Մանանեխի հատին նման է, որ հողին մէջ ցանուած ատենը՝ երկրի վրայ եղած սերմերուն ամէնէն պզտիկն է. 32 – Ու երբ ցանուի, կը բուսնի և ամէն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլլայ, ու մեծ ճիւղեր կ'արձակէ, այնպէս որ երկնքի թռչուններուն տերեվ կ'ըլլայ անոր շուքին տակ բնակելու։

33 – Եւ այսպէս շատ առակներով կը խօսէր անոնց հետ խօսքը, որչափ որ կրնային մտիկ ընել. 34 – Ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց առանձին իր աշակերտներուն կը մեկնէր ամէնը։

35 – Եւ նոյն օրը երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց, Եկէք անդիի կողմը անցնինք։ 36 – Անոնք ալ ժողովուրդը թող տալով՝ առին զինք ինչպէս էր նաւուն մէջ. և ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ։ 37 – Ու հովի մեծ փոթորիկ մը եղաւ. և ալիքները նաւուն վրայ կու գային, այնպէս որ գրեթէ կը լեցուէր։ 38 – Ու ինք նաւուն ետևի կողմը բարձի վրայ կը քնանար. արթնցուցին զանիկա և կ'ըսէին անոր, Վարդապետ, հոգդ չէ՞ որ կը կորսուինք։ 39 – Ու ելլելով՝ սաստեց հովին, և ծովուն ըսաւ, Դադար, լռուա կեցիր. ու հովը դադրեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ։ 40 – Ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք, ի՞նչպէս կ'ըլլայ որ հաւատք չունիք։ 41 – Եւ անոնք խիստ վախցան, ու կ'ըսէին իրարու, Արդեօք ո՞վ էասիկա, որ հովը ու ծովը ասոր կը հնազանդին։

## Գլ. Ե

Եւ եկան ծովուն անդիի կողմը *Գադարացւոց երկիրը։ 2 – Ու երբ ինք նաւէն ելաւ, գերեզմաններէն ելած մարդ մը պատահեցաւ իրեն, որ պիղծ ոգի ունէր։ 3 – Որուն բնակած տեղն ալ գերեզմաններուն մէջ էր, ու շղթայով ալ մէկը չէր կրնար զանիկա կապել։ 4 – Որովհետև շատ անգամ ոտնակապերով և շղթաներով կապուէր էր, բայց անիկա շղթաները կոտրեր ու ոտնակապերը կտրատեր էր, և մէկը չէր կրնար զանիկա նուաճել։ 5 – Եւ միշտ գիշեր ու ցորեկ †գերեզմաններուն մէջ ու լեռներուն մէջ կը կանչըռտէր, ու իր մարմինը քարերով կը ճեղքռտէր։ 6 – Երբ հեռուանց Յիսուսը տեսաւ, վազեց ու երկրպագութիւն ըրաւ անոր։ 7 – Եւ մեծ ձայնով մը աղաղակեց ու ըսաւ, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ Աստուծով կ'երդմնցնեմ, չիս մի տանջեր։ 8 – (Ի՞նչպէս կ'ըսէր անոր, Պիղծ ոգի, ելիր այդ մարդէն։) 9 – Եւ անոր հարցուց թէ Անունդ ի՞նչ է. ու ըսաւ անոր, Իմ անունս Լեգէոն է, վասն զի մենք շատուռ ենք։ 10 – Եւ շատ ‡կ'աղաչէին անոր՝ որ զիրենք այն երկրէն դուրս չղրկէ։ 11 – Եւ հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը կար՝ որ կ'արածուէին։ 12 – Ու բոլոր դեւերը աղաչեցին անոր ու ըսին, Մեզ խոզերուն ղրկէ, որպէս զի անոնց մէջ մտնենք։ 13 – Եւ Յիսուս շուտ մը հրաման տուաւ անոնց. ու երբ պիղծ ոգիները ելան, խոզերուն մէջ մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց, (երկու հազարի չափ կային,) ու ծովուն մէջ խեղդուեցան։ 14 – Եւ խոզարածները փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները. և ժողովուրդ ելան տեսնելու՝ թէ ի՞նչ բան է որ եղաւ։ 15 – Ու եկան Յիսուսի, և տեսան դիւահարը, որ լեգէոն ունէր, որ հագուած ու խելքը գլուխը նստեր էր, ու վախցան։ 16 – Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց թէ ի՞նչ եղաւ դիւահարին, նաև խոզերուն վրայով։ 17 – Եւ սկսան աղաչել անոր, որպէս զի իրենց սահմաններէն երթայ։ 18 – Ու երբ անիկա նաւը մտաւ, դիւահարը կ'աղաչէր անոր՝ որ անոր հետ ըլլայ. 19 – Եւ Յիսուս թոյլ չտուաւ անոր, հապա ըսաւ անոր, Գնա քու տունդ քու ընտանիքիդ, ու պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ, և ողորմեցաւ քեզի։ 20 – Ան ալ գնաց, և սկսաւ Դեկապոլիսի մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն ըրաւ. և ամէնը կը զարմանային։

21 – Ու երբ Յիսուս նաւով նորէն Հովն անդիի կողմը անցաւ, շատ բազմութիւն ժողովուեցաւ անոր քով, և ինք ծովեզերքն էր։ 22 – Եւ ահա ժողովրդապետներէն մէկը կու գար, որուն անունը Յայրոս էր, ու երբ տեսաւ զանիկա, անոր ոտքը ինկաւ. 23 – Եւ շատ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր թէ Իմ աղջիկս մեռնելու մօտ է, գաս՝ անոր վրայ ձեռք գնես, որպէս զի ապաւի, ու պիտի ապրի։ 24 – Եւ գնաց անոր հետ, ու շատ բազմութիւն իր ետևէն կ'երթային ու կը նեղէին զինք։

25 – Եւ կին մը, որ տասներկու տարի արիւնի տեւատեսութեան մէջ էր, 26 – Ու շատ նեղութիւն կրած էր շատ բժիշկներէ, և իր բոլոր ունեցածը վատներ էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս առաւել զայրացեր էր, 27 – Երբ Յիսուսի վրայով լսեց, ետևէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր հանդերձին դպաւ. 28 – Ինծի կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձներուն դպչիմ, պիտի բժշկուիմ։ 29 – Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ, ու իր մարմնին մէջ իմացաւ թէ տանջանքէն բժշկուեցաւ։ 30 – Եւ Յիսուս շուտ մը գիտնալով իր անձին մէջ այն զօրութիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ բազմութեանը մէջ ու ըսաւ, Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս։ 31 – Եւ իր աշակերտները ըսին իրեն, Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ, ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինծի դպաւ։ 32 – Եւ իր բոլորտիքը կը նայէր որպէս զի այս բանը ընողը տեսնէ։ 33 – Ու կինը վախցաւ ու դողաց, գիտնալով թէ իրեն ինչ եղաւ, և եկաւ՝ անոր առջև ինկաւ, ու բոլոր ճշմարտութիւնը անոր ըսաւ։ 34 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց. գնա խաղաղութեամբ, ու բժշկուած եղիր քու տանջանքէդ։

35 – Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն մարդ եկան ըսին թէ Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցնես։ 36 – Իսկ Յիսուս լսածի խօսքը լսածին պէս ժողովրդապետին ըսաւ, Մի վախնար, միայն թէ հաւատար։ 37 – Եւ մէկը թող չտուաւ իրեն հետ երթալ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսի եղբայրը Յովհաննէսը։ 38 – Ու ժողովրդապետին տունը գալով տեսաւ աղմուկ և աւաուիկ լացողներ ու աղաղակներ։ 39 – Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ։ 40 – Եւ ծաղր կ'ընէին զանիկա. բայց ինք ամէնը դուրս հանելով՝ իրեն հետ առաւ մանուկին հայրը ու մայրը, և զանոնք որ իրեն հետ էին, ու մտաւ հոն ուր մանուկը պառկած էր։ 41 – Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր, Տալիթա, կումի. որ կը թարգմանուի, Աղջիկ, (քեզի կ'ըսեմ՝) ելիր։ 42 – Եւ իսկոյն աղջիկը ոտք ելաւ ու կը քալէր, վասն զի տասներկու տարեկան էր. ու մեծ ապշութեամբ ապշեցան։ 43 – Եւ աստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մա՛րդ չգիտնայ այս բանը, ու ըսաւ որ անոր ուտելիք տան։

## Գլ. Զ

Եւ անկէ ելլելով եկաւ իր երկիրը, ու անոր աշակերտները իր ետևէն գացին։ 2 – Եւ երբ շաբաթ օրը հասաւ, սկսաւ ժողովարանին մէջ սորվեցնել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ'ըսէին, Այս կարկ՞ուն ան այս բաները, և այս ի՞նչ իմաստութիւն է տուր տուած, որ այսպիսի հրաշքներ կ'ըլլան ասոր ձեռքով։ 3 – Այս հիւսը չէ՞, Մարիամի որդին, և Յակոբոսի ու Յովսեի և Յուդայի ու Սիմոնի եղբայրը. ու ասոր քոյրերը հոս մեր քով չե՞ն. և անոր վրայով կը դժուարանային։ 4 – Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին մէջ ու իր ազգականներուն և իր տանը մէջ։ 5 – Ու չէր կրնար հոն մէ՛կ հրաշք ալ ընել, միայն թէ

*Ոմանք, Գերգեսացւոց

†Ոմանք, լեռներուն մէջ ու գերեզմաններուն մէջ

‡Կամ, կ'աղաչէը

քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց պանդ։ 6 – Եւ անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար։ ու շրջակայ գեղերը պտըտելով՝ կը սորվեցնէր։

7 – Եւ իրեն կանչեց տասներկուքը, ու սկսաւ երկու երկու ղրկել զանոնք, ու անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ։ 8 – Եւ պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չառնեն, բայց միայն գաւազան մը, ոչ պարկ, ոչ հաց, ոչ ստակ՝ գօտիներնուն մէջ։ 9 – Հապա հողաթափ հագնին. և՝ Երկու հանդերձ մի հագնիք՝ ըսաւ։ 10 – Ու ըսաւ անոնց, Որ տունը որ մտնէք, հոն կեցէք մինչև անկէ ելլէք։ 11 – Եւ անոնք որ ձեզ չեն ընդունիր ու ձեզի մտիկ չեն ըներ, երբ անկէ կ'ելլէք, ոտքերնուդ տակի փոշին թօթվեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար։ *Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ այն քաղաքին։"

12 – Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին որ մարդիկ ապաշխարեն։ 13 – Եւ շատ դեւեր կը հանէին, ու շատ հիւանդներ իւղով կ'օծէին ու կը բժշկէին զանոնք։

14 – Եւ Հերովդես թագաւորը լսեց, (քանզի անոր անունը յայտնի եղաւ,) ու կ'ըսէր թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր է, ու անոր համար հրաշքներ կ'ըլլան անով։ 15 – Ուրիշներն ալ կ'ըսէին թէ Մարգարէ մըն է, կամ մարգարէներէն մեկուն պէս։ 16 – Բայց երբ Հերովդես լսեց, ըսաւ, Անիկա Յովհաննէս է, որուն գլուխը ես կարեցի, մեռելներէն յարութիւն առեր է։

17 – Քանզի Հերովդես ինք մարդ ղրկեց, Յովհաննէսը բռնեց, ու կապեց բանտը իր եղբօրը Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար, քանզի իրեն կին առեր էր զանիկա։ 18 – Վասն զի Յովհաննէս Հերովդէսի կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ քու եղբօրդ կինը ունենալ։ 19 – Եւ Հերովդիա սխ ունէր անոր դէմ, ու կ'ուզէր զանիկա մեռցնել ու չէր կրնար։ 20 – Վասն զի Հերովդէս կը վախնար Յովհաննէսէ, գիտնալով թէ անիկա արդար և սուրբ մարդ մըն է, և անոր բերանը կը նայէր, ու անկէ լսելով՝ շատ բաներ կ'ընէր, և քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր։ 21 – Ու երբ դիպուկ օր մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հազարապետներուն ու Գալիլեայի երեւելիներուն, 22 – Եւ Հերովդիայի աղջիկը հոն դուրս մտնելով խաղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսի և իրեն հետ նստողներուն, թագաւորը ըսաւ աղջկան, Խնդրէ ինծմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ քեզի։ 23 – Եւ անոր երդում ըրաւ՝ ըսելով, Ինչ որ դուն ինծմէ խնդրես, պիտի տամ քեզի, մինչև թագաւորութեանս կէսը։ 24 – Եւ անիկա դուրս ելլելով իր մօրը ըսաւ, Ինչ ուզեմ. ան ալ ըսաւ, Յովհաննէս մկրտչին գլուխը։ 25 – Եւ շուտ մը արտորալով թագաւորին քով մտաւ ու խնդրեց՝ ըսելով, Կ'ուզեմ որ շուտով սկուտեղի մը վրայ Յովհաննէս մկրտչին գլուխը տաս ինծի։ 26 – Եւ թագաւորը խիստ արամեցաւ, բայց երդումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար չուզեց որ անոր երեսէն մերժէ։ 27 – Եւ թագաւորը իսկոյն դահիճ ղրկեց, ու հրաման ըրաւ անոր գլուխը բերել։ ան ալ գնաց բանտին մէջ գլխատեց զանիկա, 28 – Եւ սկուտեղով մը բերաւ անոր գլուխը ու տուաւ աղջկան. և աղջիկը զանիկա իր մօրը տուաւ։ 29 – Եւ անոր աշակերտները լսելով՝ եկան անոր մարմինը վերցուցին ու գերեզմանի մէջ դրին։

30 – Եւ առաքեալները Յիսուսի քով ժողվուեցան, ու պատմեցին անոր ամէն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին։ 31 – Եւ անիկա բսաւ անոնց, Եկէք դուք առանձին անապատ տեղ մը, և քիչ մը հանգչեցէք. քանզի շատերը կային որ կու գային ու կ'երթային. և հաց ուտելու ալ ժամանակ չէին ունենար։ 32 – Եւ նաւով անապատ տեղ մը գացին առանձին։ 33 – Ու ժողովուրդները տեսան զանոնք որ կ'երթային, և շատերը զանիկա ճանչցան, ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն կը վազէին, և անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով ժողվուեցան։ 34 – Ու Յիսուս երբ

*Ոման՝ ըսաւ։



դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, վասն զի հովիւ չունեցող ոչխարներու պէս էին, և սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց։

35 – Ու երբ ժամանակը շատ ուշացաւ, իր աշակերտները իրեն եկան ու ըսին, Հոս անապատ տեղ մըն է, ու ժամանակը ուշացած է։ 36 – Արձակէ զանոնք որպէս զի երթան բոլորակի ագարակները ու գեղերը ու իրենց համար հաց գնեն, վասն զի ուտելու բան մը չունին։ 37 – Բայց անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Դուք տուէք անոնց որ ուտեն։ Եւ ըսին իրեն, Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնե՞նք և տանք ուտեն որ ուտեն։ 38 – Ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք, գացէք տեսէք. ու երբ գիտցան՝ ըսին, Հինգ, ու երկու ձուկ։ 39 – Եւ հրամայեց բրաւ անոնց՝ որ ամէնը կանանչ խոտին վրայ դունդ դունդ նստեցնեն։ 40 – Եւ դաս դաս նստան, հարիւրական ու հիսունական։ 41 – Եւ հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ ու դէպ ի երկինք նայելով՝ օրհնեց, և մանրեց նկանակները ու տուաւ իր աշակերտներուն, որպէս զի անոնց առջև դնեն, ու երկու ձուկը ամենուն ալ բաժնեց։ 42 – Եւ ամէնը կերան ու կշտացան։ 43 – Եւ տասներկու կողով լեցուն կտորուանքները վերցուցին, և ձուկերէն ալ։ 44 – Եւ այն հացերէն ուտողները հինգ հազարի չափ այր մարդիկ էին։

45 – Եւ շուտ մը իր աշակերտները արտորցուց որ նաւը մտնեն, և էջ առաջ միւս կողմը Բեթսայիդա անցնին, մինչև ինք ժողովուրդը արձակէ։ 46 – Եւ անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ աղօթք ընելու։ 47 – Ու երբ իրիկուն եղաւ, նաւը ծովուն մէջտեղն էր, ու ինք մինակ ցամաքն էր։ 48 – Եւ տեսաւ զանոնք որ կը տագնապէին հովէն Թէ քաշելու առեն, վասն զի հովը իրենց դէմ էր. և գիշերուան չորրորդ պահուն առեներէն ծովուն վրայ քալելով կու գայ անոնց, ու կ'ուզէր անոնցմէ անցնիլ։ 49 – Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քալէր, կարծեցին Թէ ուրբի երեւոյթ բան մըն է, ու կանչեցին. 50 – Քանզի ամէնն ալ զանիկա տեսան ու խռովեցան. և ինք շուտ մը խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ անոնց, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ 51 – Եւ նաւը ելաւ անոնց քով, ու հովը դադրեցաւ. և անոնք մտքերնուն մէջ չափէ դուրս ապշած էին ու կը զարմանային, 52 – Վասն զի հացին վրայ եղած հրաշքէ չմտացան, քանզի սիրտերնին Թմրած էր։

53 – Ու միւս կողմն անցնելով՝ Գինեսարէթի երկիրը հասան ու նաւը տեղաւորեցին։ 54 – Ու երբ նաւէն ելան, այն պահէ ճանչցան զանիկա. 55 – Եւ ամբողջ անդին վազելով բոլոր շրջակայ տեղերը, սկսան մահիճներով հիւանդները բերել՝ ուր որ կը լսէին Թէ հոն է։ 56 – Եւ ուր որ կը մտնէր, գեղերը կամ քաղաքները կամ ագարակները, հրապարակներուն մէջ կը դնէին հիւանդները, ու կ'աղաչէին իրեն որ գոնե իր հանդերձին քղանցքին դպչին. և որոնք որ դպան, բժշկուեցան։

## Գլ. Է

Եւ իր քով ժողովուեցան փարիսեցիները ու դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէմէ եկած էին։ 2 – Ու երբ տեսան որ անոր աշակերտներէն ոմանք պիղծ, այսինքն անլուայ, ձեռքերով, հաց կ'ուտէին, մեղադրեցին։ 3 – Վասն զի փարիսեցիները ու բոլոր Հրեաները մինչև ատկի մը ձեռքերնին չլուան՝ հաց չեն ուտեր, քանզի ծերերուն աւանդութիւնը կը բռնեն։ 4 – Եւ շուկայէն եկած ատենին եթէ չլուացուին՝ չեն ուտեր. և ուրիշ շատ բաներ կան զորոնք ընդունած են ու կը բռնեն, այսինքն գաւաթներու և փարչերու ու պղնձէ ամաններու և անկողիններու լուացմունքներ։ 5 – Ան տուն փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր, Թէ Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար, հապա անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն։ 6 – Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ազէկ մարգարէութիւն ըրաւ Եսայի ձեզի կեղծաւորներուդ համար, ինչպէս գրուած է, Ա՛յս ժողովուրդը գլխովն շրթունքներովը զիս կը պատուէ, բայց իրենց սիրտը հեռացած զատուած է ինծմէ. 7 – Ու պարապ

տեղ զիս կը պաշտեն, մարդոց պատուիրած բաները էք՝ վարդապետութիւն սորվեցնելով։ 8 – Վասն զի Աստուծոյ պատուիրանքը թողելով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք, ինչպէս՝ փարչերու և գաւաթներու լուացմունքներ, և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։ 9 – Ու ըսաւ անոնց, Աղէկ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը, որպէս զի ձեր աւանդութիւնը պահէք։ 10 – Քանզի Մովսէս ըսաւ, Քու հայրդ ու մայրդ պատուէ. և, Ով որ էր հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։ 11 – Բայց դուք կ'ըսէք, Եթէ մէկը էր հօրը կամ մօրը ըսէ, Ան որ բանը զոր ինծմէ պիտի շահիս, Ա.ոոռ-ծոյ տուր կորբան է, (որ ըսել է ընծայ,) ասոր ի՛ւեաչ անիւ. 12 – Եւ ա՛լ թող չէք տար անոր բան մը ընել իր հօրը կամ իր մօրը. 13 – Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը զոր կ'աւանդէք. և ասոր նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։

14 – Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Լսեցէք ինծի ամէնդ ու հասկցէք։ 15 – Բան մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ, ու կարող ըլլայ զանիկա պղծել, հապա այն բաները որ անկէ կ'ելլեն, անոնք են որ մարդը կը պղծեն։ 16 – Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

17 – Ու երբ այն բազմութիւնէն պոռնկելով տուն մտաւ, իր աշակերտները հարցուցին իրեն այն առակին համար։ 18 – Ու ըսաւ անոնց, Դո՞ւք ալ այդպէս անմիտ էք. չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսիդին կը մտնէ, չկրնար զանիկա պղծել. 19 – Վասն զի ոչ թէ անոր սրտին մէջ կը մտնէ, հապա փորը, և արտաքնոցը կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մաքրէ։ 20 – Եւ կ'ըսէր թէ Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա կը պղծէ մարդը։ 21 – Վասն զի ներսէն, մարդոց սրտէն, կ'ելլեն չար խորհուրդներ, շնութիւններ, պոռնկութիւններ, սպանութիւններ, 22 – Գողութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, գիճութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ 23 – Ա.յս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն մարդը։

24 – Եւ անկէ ելլելով Տիւրոսի ու Սիդոնի սահմաններէն գնաց, և տունն մը մտնելով՝ չէր ուզեր որ մէկուն յայտնուի, բայց չկրցաւ ծածկուիլ. 25 – Քանզի կին մը, որուն աղջիկը պիղծ ոգի ունէր էր նէբէէրէ, լսեց անոր վրայով, ու եկաւ, անոր ոտքը ինկաւ։ 26 – Եւ այն կինը *Հեթանոս էր, ազգով Փիւնիկ Ասորի, ու կ'աղաչէր անոր որ դևը իր աղջիկէն հանէ։ 27 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Թող առաջ տղաքը կշտանան, քանզի աղէկ չէ տղոց հացը առնել ու շուներուն ձգել։ 28 – Անիկա պատասխան տալով ու ըսաւ անոր, Ա.յո, Տէր, վասն զի շուներն ալ սեղանին տակ տղոցը փշրանքներէն կը կերակրուին։ 29 – Եւ ըսաւ անոր, Ա.յդ խօսքիդ համար գնա, քու աղջիկդ դևը ելաւ։ 30 – Եւ էնը իր տունը երթալով, գտաւ որ դևը ելած ու աղջիկը անկողնին վրայ պառկած էր։

31 – Եւ նորէն Տիւրոսի ու Սիդոնի սահմաններէն ելլելով, եկաւ Գալիլեայի ծովեզերքը, Դեկապոլիսի սահմաններուն մէջէն։ 32 – Եւ մէկը բերին անոր առջև, խուլ ու դժուարախօս, ու կ'աղաչէին որ անոր վրայ ձեռք դնէ։ 33 – Եւ ժողովուրդէն մէկդի առնելով զանիկա, իր մատները անոր ականջներուն մէջ խոթեց ու թքաւ, և անոր լեզուին դպաւ, 34 – Ու երկինք նայելով հառաչեց ու ըսաւ անոր, Եփփաթա, (որ ըսել է Բացուէ.) 35 – Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան, ու անոր լեզուին կապը քակուեցաւ, և շիտակ կը խօսէր։ 36 – Ու պատուիրեց անոնց որ մարդո՛ւ չըսեն. և որչափ ինք կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը քարոզէին. 37 – Ու չափէ դուրս կը զարմանային և կ'ըսէին, Ա.ինչ բաները աղէկ բրաւ ասիկա, որ խուլերուն լսել կու տայ և համրերուն խօսիլ։

## ԳԼ. Ը

Ա.յն օրերը ժողովուրդը խիստ շատ բլլալով, և ուտելու բան մը չունենալով, Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները ու ըսաւ անոնց, 2 – Կը խղճամ այդ ժողովուրդին վրայ, վասն

*Յոան. Յոյն



զի հիմա երեք օր է որ իմ քովս են, և բան մը չունին ուտելու. 3 – Եւ եթէ տանեք անօթի զրկեմ իրենց տուները, ճամբուն մէջ պիտի մաշին, վասն զի ատոնցմէ ոմանք հեռու տեղէ եկած են։ 4 – Եւ իր աշակերտները պատասխան տուին իրեն, Ա.յս անապատին մէջ ուրկէ՞ կրնայ մէկը հացով կշտացընել ատոնք։ 5 – Եւ հարցուց անոնց, Քանի՞ նկանակ ունիք, ու անոնք ըսին, Եօթը։ 6 – Եւ հրաման ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ նստին, ու առաւ եօթը նկանակը, գոհացաւ և կարեց ու տուաւ աշակերտներուն, որպէս զի ժողովուրդին տանէ դնեն, և դրին։ 7 – Ու քանի մը մանր ձուկեր ունէին, և օրհնեց ու ըսաւ որ զանոնք ալ դնեն անոնց առջև։ 8 – Եւ կերան ու կշտացան, ու աւելցած կտորտանքները վերցուցին եօթը զամբիւղ։ 9 – Եւ ուտողները չորս հազարի չափ էին, ու արձակեց զանոնք։ 10 – Եւ ըստ մը նաւը մտնելով աշակերտներուն հետ՝ եկաւ Դալմանութայի կողմերը։

11 – Եւ փարիսեցիները ելլելով սկսան անոր հետ վիճաբանութիւն ընել, և զանիկա փորձելով՝ իրմէ նշան մը կ'ուզէին երկինքէն։ 12 – Եւ անիկա իր հոգիին մէջ հառաչելով ըսաւ, Ինչ է որ այս ազգը նշան կ'ուզէ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս ազգին նշան պիտի չտրուի։ 13 – Ու զանոնք թող տալով նորէն նաւը մտաւ, ու գնաց ծովուն միւս կողմը։

14 – Եւ հաց առնելու մոռցեր էին, ու նաւուն մէջ իրենց հետ միայն մէկ նկանակ ունէին։ 15 – Եւ կը պատուիրէր անոնց ու կ'ըսէր, Նայեցէք և զգուշացէք փարիսեցիներուն խմորէն ու Հերովդէսի խմորէն։ 16 – Եւ իրարու հետ կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չունենալնուս համար է։ 17 – Իսկ Յիսուս անոնց խորհածը գիտնալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը խորհիք թէ հաց չունիք. տակաւին չէ՞ք հասկընար ու չէ՞ք իմանար. դեռ սիրտերնիդ թմրա՞ծ է։ 18 – Աչքեր ունիք ու չէ՞ք տեսներ, և ականջներ ունիք ու չէ՞ք լսեր, և չէ՞ք յիշեր։ 19 – Երբ հինգ նկանակը հինգ հազարին կտրեցի, քանի՞ կողով լեցուն կտորտանք վերցուցիք. ըսին անոր, Տասներկու։ 20 – Ու երբ եօթը նկոնակը չորս հազարին կտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կտորտանք վերցուցիք. անոնք ալ ըսին, Եօթը։ 21 – Եւ ըսաւ անոնց, Հոպ-պո՞ւնչպես չէք հասկնար։

22 – Եւ Բեթսայիդա եկաւ, ու անոր առջև կոյր մը բերին, ու կ'աղաչէին իրեն որ դպչի անոր. 23 – Եւ առնելով կոյրին ձեռքէն բռնելով դեղէնը դուրս հանեց, ու անոր աչքերուն թքընելով՝ ձեռքը անոր վրայ դրաւ, ու կը հարցնէր անոր թէ բան մը կը տեսնէ։ 24 – Ան ալ նայեցաւ ու կ'ըսէր, Մարդիկ կը տեսնեմ՝ ծառերու պէս որ կը պտըտին։ 25 – Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, ու անոր նայիլ տուաւ. և աղջացաւ ու ամէն բան համարձակ կը տեսնէր։ 26 – Եաքը զանիկա իր տունը զրկելով՝ ըսաւ, Գեղը մի մտներ ու գեղին մէջ մարդո՛ւ մի ըսեր։

27 – Եւ Յիսուս իր աշակերտներուն հետ մէկտեղ Փիլիպպոսի Կեսարիային գեղերը ելաւ, ու ճամբուն մէջ կը հարցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց, Ինծի համար ո՞վ կ'ըսեն մարդիկ թէ եմ։ 28 – Եւ անոնք պատասխան տուին ու ըսին, Ո՛ն-ն՝ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Մարգարէներէն մէկը։ 29 – Եւ ինք ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ. պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Դուն ես Քրիստոսը։ 30 – Եւ ասոնցմէ պատուիրեց անոնց՝ որ իրեն համար մարդո՛ւ չըսեն։

31 – Ու սկսաւ սորվեցնել անոնց, թէ Պէտք է որ Որդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, ու երեցներէն և քահանայապետներէն ու դպիրներէն մերժուի, ու սպաննուի, և երեք օրէն հետ յարութիւն առնէ։ 32 – Ու այս խօսքը յայտնի խօսեցաւ. և Պետրոս մէկդի առաւ զանիկա, ու սկսաւ յանդիմանել զանիկա։ 33 – Եւ ինք դարձաւ ու իր աշակերտներուն նայելով յանդիմանեց Պետրոսը ու ըսաւ, Եա՛հ գնա, Սատանայ, վասն զի դուն Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները։

34 Եւ ժողովուրդը իր աշակերտներուն հետ մէկտեղ իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Ով որ կ'ուզէ իմ հետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և իր խաչը վերցնէ, ու իմ հետևէս գայ։ 35 – Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը

ապրեցնել, պիտի կորնչնէ զանիկա։ Եւ ով որ ինծի ու աւետարանին համար իր անձը կորնչնէ, պիտի ապրեցնէ զանիկա։ 36 – Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստակի, և իր անձը կորնչնէ. 37 – Կամ՝ իր անձին համար ի՞նչ ազաւաչէք պիտի տայ մարդ։ 38 – Վասն զի ով որ պիտ ու իմ խօսքերս դաւանիւը ամէն մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանիկա դաւանիւը ամէն պիտի մեղաւոր՝ երբ գայ իր Հօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ։

39 – Եւ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մինչեւ աեւանեն Աստուծոյ թագաւորութիւնը զօրութիւնով եկած։

## ԳԼ. Թ

Եւ վեց օրէն հետ Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին, և անոնց առջեւ այլակերպեցաւ։ 2 – Ու իր հանդերձները եղան փայլուն խիստ ճերմակ, այնպես որ երկրի վրայ թաքիչ մը չկրնար այնպես ճերմկցնել։ 3 – Ու Եղիա Մովսէսի հետ երեւցաւ անոնց, և Յիսուսի հետ կը խօսէին։ 4 – Եւ Պետրոս պատասխան առաւ ու ըսաւ Յիսուսի, Ռաբբի, աղեկ է որ հոս կենանք. ու երեք խրճիթ շինենք, մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի. 5 – Վասն զի չէր գիտեր թէ ի՞նչ խօսի, քանզի զարհուրեր էին։ 6 – Եւ ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, ու ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս, սորա մտիկ ըրէք։ 7 – Եւ յանկարծ երբ ապրին անդին նայեցան, ալ ուրիշ մէկը չտեսան, հապա միայն Յիսուս իրենց հետ։

8 – Ու երբ լեռնէն վար կ'իջնէին, պատուիրեց անոնց որ տեսածնին մարդո՛ւ չպատմեն, բայց միայն Որդւոյն մարդոյ մեռելներէն յարութիւն առնելէն հետո։ 9 – Եւ անոնք այն խօսքը պահեցին. ու իրենց մէջ հարցուփորձ կ'ընէին թէ մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ է։ 10 – Եւ իրեն հարցուցին ու ըսին, Ա՞ն ի՞նչ է որ դպիրները կ'ըսեն թէ Պէտք է որ առաջ Եղիա գայ։ 11 – Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Յիրաւի առաջ Եղիա կու գայ, և ամէն բան կարգի կը դնէ. և թէ ի՞նչպես գրուած է Որդւոյ մարդոյ համար, որ շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի։ 12 – Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիա եկաւ ալ, և ինչ որ ուզեցին՝ իրեն անոր, ինչպես գրուած է անոր համար։

13 – Ու աշակերտներուն քով գալով՝ տեսաւ շատ ժողովուրդ անոնց բոլորտիքը, և դպիրները որ վիճաբանութիւն կ'ընէին անոնց հետ։ 14 – Եւ շուտ մը բոլոր ժողովուրդը երբ տեսան զանիկա, խիստ զարմացան, ու առաջ վազելով բարեւ կու տային անոր։ 15 – Եւ հարցուց դպիրներուն թէ ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէք անոնց հետ։ 16 – Ու ժողովուրդէն մէկը պատասխան տալով՝ ըսաւ, Վարդապետ, իմ որդիս քեզի բերի, որ համր ոգի ունի. 17 – Եւ ուր որ անոր հասնի, զանիկա գետինը կը զարնէ, ան ալ կը փրփրի և իր ակռաները կը կրճտէ ու կը ցամքի. և քու աշակերտներուդ ըսի որ զանիկա հանեն ու չկրցան։ 18 – Պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ով անհաւատ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ՝ մինչեւ ե՞րբ ձեզի պիտի համբերեմ։ Բնձի բերէք զանիկա։ 19 – Եւ զանիկա բերին իրեն. երբ դէմ տեսաւ զանիկա, շուտ մը ոգին ջնջեց զանիկա, ու գետինը թնկած կը թաւալէր ու կը փրփրէր։ 20 – Եւ Յիսո՛ւս հարցուց անոր հօրը ու ըսաւ, Ո՞րչափ ատեն է որ այդ բանը սաստր եղաւ. ու անիկա ըսաւ, Տղայութենէն ի վեր. 21 – Եւ շատ անգամ կրակի ու ջուրի մէջ կը նետէ ստիկ՝ որպէս զի կորնչնայ. բայց եթէ կարողութիւն մը ունիս, օգնէ մեզի, խղճալով մեր վրայ։ 22 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Եթէ կարող ես հաւատալու, ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ։ 23 – Եւ տղուն հայրը շուտ մը աղաղակեց ու արցունքով ըսաւ, Կը հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատութեանս։ 24 – Յիսուս երբ տեսաւ որ ժողովուրդը վրան կը գիզուի, սաստեց պիղծ ոգիին ու ըսաւ անոր, Համր ու խուլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելիր ատկէ, ու մէյմըն ալ չմտնես ատոր ներսը։ 25 – Եւ կանչուըռտելով՝ ատոր ալ շատ ժողովուրդ կը վազէր, ճչմարիտ կ'ըսեմ ձեզի, Անիկա իր վարքը պիտի չկորնչնէ։ 41 – Եւ ով որ գայթակղեցնէ այս պզտիկներէն մէկը որ ինծի կը հաւատան, աւելի աղեկ էր անոր՝ որ աղացքի քար մը իր վիզէն կախուէր, ու ծովը ձգուէր։ 42 – Եւ եթէ քու ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կարէ զանիկա. աղեկ է քեզի պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք ունենալ ու գեհենը երթալ չմարելու կրակին մէջ, 43 – Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 44 – Եւ եթէ քու ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կարէ զանիկա. աղեկ է քեզի կաղ մտնել կեանքը, քան թէ երկու ոտք ունենալ ու գեհենը ձգուիլ չմարելու կրակին մէջ, 45 – Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 46 – Եւ եթէ քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա. աղեկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ թագաւորութիւնը մտնել, քան թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհենը ձգուիլ, 47 – Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 48 – Վասն զի ամէն մարդ կրակով պիտի աղուի, և ամէն զոհ աղով պիտի աղուի։ 49 – Աղը աղեկ է, բայց եթէ աղը անհամեայ, ինչո՞վ պիտի համովցնէք. ձեր անձին մէջ աղ ունեցէք, և իրարու հետ խաղաղութիւն ըրէք։

## ԳԼ. Ժ

Եւ անկէ ելլելով՝ Հրէաստանի սահմանները եկաւ Յորդանանու անդիի կողմէն, ու նորէն ժողովուրդները անոր քով կը ժողվուէին. և ինչպէս սովորութիւն ունէր, դարձեալ կը սորվեցնէր անոնց։

2 – Ու փարիսեցիները քովը եկան, և զանիկա փորձելով՝ կը հարցնէին անոր թէ Արժա՞ն է որ այրը իր կինը արձակէ։ 3 – Եւ անիկա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց։ 4 – Եւ անոնք ըսին, Մովսէս հրաման տուաւ արձակման գիր գրել ու արձակել։ 5 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Ձեր սրտին կարծրութեանը համար գրեց ձեզի այդ պատուէրը. 6 – Բայց ստեղծագործութեան սկիզբէն Աստուած զանոնք արու և էգ ըրաւ, ա-



ասոնիկ ցնցեց զանիկա ու ելաւ. և գետ մեռելի պէս եղաւ, այնպէս որ շատերը ըսին թէ Մեռաւ։ 26 – Եւ Յիսուս անոր ձեռքէն բռնելով վերցուց զանիկա. ան ալ կայնեցաւ։ 27 – Ու երբ ինք տուն մտաւ, իր աշակերտները առանձին հարցուցին իրեն՝ ըսելով, Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա։ 28 – Եւ ըսաւ անոնց, Այդ տեսակին կարելի չէ՝ բնչ բանով մը ելլել, բայց միայն աղօթքով ու ծոմապահութեամբ։

29 – Եւ անկէ ելլելով Գալիլեայի միջէն կ'անցնէին, ու չէր ուզեր որ մէկը գիտնայ։ 30 – Վասն զի կը սորվեցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց թէ Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, և զանիկա պիտի սպաննեն. ու երբ սպաննուի՝ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ 31 – Եւ անոնք չէին հասկնար այն խօսքը, ու կը վախնային իրեն հարցնելու։

32 – Եւ եկաւ Կափառնայում՝ ու երբ տունն մտաւ՝ հարցուց անոնց, Ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէիք ճամբան իրարու հետ։ 33 – Եւ անոնք լուռ կեցան, վասն զի ճամբուն մէջ իրարու հետ վիճաբանութիւն կ'ընէին թէ ո՛վ մեծ է։ 34 – Ու երբ նստաւ, կանչեց տասներկուքը ու ըսաւ անոնց, Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ, ամէնուն յետինը պիտի ըլլայ և ամէնուն պաշտօնէորը։ 35 – Ու մարդ մը առաւ կայնեցուց անոնց մէջ, և իր գիրկը առնելով զանիկա՝ ըսաւ անոնց, 36 – Ով որ այսպիսի աղոցմէն մէկը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի. և ով որ զիս ընդունի, ոչ թէ զիս կ'ընդունի, հապա զիս ղրկողը։ 37 – Պատասխան տուաւ անոր Յովհաննէս ու ըսաւ, Վարդապետ, մենք տեսանք որ քու անունովդ դեւեր կը հաներ, ու մեր հետեւէն չպարտիր, և զանիկա արգիլեցինք՝ մեր հետեւէն չպարտերուն համար։ 38 – Եւ Յիսուս ըսաւ, Մի արգիլէք զանիկա, վասն զի մէկը չկայ որ իմ անունովս հրաշք գործէ, ու կարենայ շուտ մը զիս հայհոյել։ 39 – Քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մեր կողմէն է։ 40 – Վասն զի ով որ ձեզի գաւաթի մը ջուր խմցնէ †իմ անունովս՝ թէ դուք Քրիս-

*Մեզ, ձեզի հակառակ չէ, ձեր
†Մեզ, այս անունով

ըսաւ, 7 – Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, 8-Ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան. ուստի ա՛լ երկու չեն, հապա մէկ մարմին. 9 – Ուրեմն զոյն որ Աստուած միաւորեց, մարդ թող չզատէ: 10 – Եւ տունը իր աշակերտները նորէն նոյն բանը հարցուցին իրեն: 11 – Ու ըսաւ անոնց, Ով որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, անոր դէմ շնութիւն կ'ընէ: 12 – Ու կին մը եթէ իր երկիէն զատուի և ուրիշ երկան մը ըլլայ, շնութիւն կ'ընէ:

13 – Եւ մանր տղաք բերին իրեն, որպէս զի անոնց դպչի, բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները: 14 – Յիսուս երբ տեսաւ, սրտցաւելով անոնց ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան, և մի արգիլէք զառնք, վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է: 15 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ: 16 – Եւ զանոնք գիրկը առաւ, անոնց վրայ ձեռք դրաւ ու օրհնեց զանոնք:

17 – Ու երբ անկից դուրս ելաւ ճամբուն մէջ, ահա մարդ մը վազեց, ու անոր առջև ծունկ դնելով կը հարցնէր անոր ու ՝ Ո՛ւսէր, Բարի վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ: 18 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած: 19 – Պատուիրանքները գիտես. Շնութիւն մի ընար, Սպանութիւն մի ընար, Գողութիւն մի ընար, Սուտ վկայութիւն մի ընար, Զրկանք մի ընար, Քու հայրդ ու մայրդ պատուէ: 20 – Անկից պատասխան տուաւ ու բսաւ անոր, Վարդապետ, ատոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ: 21 – Եւ Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանկից, ու բսաւ անոր, Մէկ բան պակաս է քեզի. գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և խաչը վերցուր ու եկուր իմ ետևէս: 22 – Եւ անկից այս խօսքին համար խժռուելով՝ տրտմած գնաց, վասն զի շատ ստացուած ք ունէր: 23 – Եւ Յիսուս իր բոլորքերը նայելով՝ բսաւ իր աշակերտներուն, Որչափ դժուար է անոնց որ հարստութիւն ունին Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 24 – Եւ աշակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վրայ. բայց Յիսուս նորէն պատասխան տալով՝ անոնց բսաւ, Որդեակներ, ո՜րչափ դժուար է էրէնց հարստութեան յուսացողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 25 – Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: 26 – Եւ անոնք խիստ շատ կը զարմանային ու կ'ըսէին իրարու, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ: 27 – Եւ Յիսուս անոնց նայելով՝ բսաւ, Անիկա մարդոց կողմանէ անկարելի է, բայց ոչ Աստուծոյ կողմանէ. քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է: 28 – Պետրոս սկսաւ ըսել անոր, Ա՛նա մենք ամէն բան թողուցինք և քու ետևէդ եկանք: 29 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ բսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մէկը չկայ որ թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝ ինծի համար ու աւետարանին համար, 30 – Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա այս ատենս տուներ, ու եղբայրներ, և քոյրեր, ու մայրեր, և որդիներ, ու արտեր հալածանքներու հետ, և գալու աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանքը: 31-Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին:

32 – Եւ անոնք դեպ ի Երուսաղէմ կ'ելլէին ։– ճամբուն մէջ էին. և Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար, ու անոնք կը զարմանային, ու հետևէն երթալով՝ կը վախնային: Եւ նորէն քովը առնելով տասներկուքը, սկսաւ ըսել անոնց ինչ բաներ որ իրեն պիտի պատահէին. 33 – Ո– ։ա՜, Ա՛նա երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն, ու զանիկա հեթանոսներուն պիտի մատնեն. 34 – Եւ զանիկա ծաղր պիտի ընեն ու ծեծեն, և անոր վրայ պիտի թքնեն, ու զանիկա մեռցնեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:

35 – Եւ անոր քով գացին Յակոբոս ու Յովհաննէս, Զեբեդէոսի որդիները, ու ըսին, Վարդապետ, կ'ուզենք որ մեզի ընես ինչ որ խնդրենք՝ մեզի ընես: 36 – Ան ալ ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ: 37 – Ու անոնք ըսին իրեն, Շնորհէ մեզի որ նստինք մեզմէ մէկը աջ կողմդ և մէկալ ձախ կողմդ քու փառքիդ մէջ: 38 – Եւ Յիսուս բսաւ անոնց, Չէք գիտեր ի՛նչ կը խնդրէք. կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես կը խմեմ, և այն մկրտութիւնովը մկրտուիլ՝ զոր ես կը մկրտուիմ: 39 – Եւ անոնք ըսին իրեն, Կրնանք. ու Յիսուս բսաւ անոնց, Այն գաւաթը զոր ես կը խմեմ՝ պիտի խմէք, և այն մկրտութիւնովը զոր ես կը մկրտուիմ՝ պիտի մկրտուիք. 40 – Բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլը իմս չէ տալը, հապա որոնց որ պատրաստուած է: 41 – Ու երբ տասը աշակերտները լսեցին, սկսան Յակոբոսի ու Յովհաննէսի նեղանալ: 42 – Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու բսաւ անոնց, Գիտէք որ ազգերուն իշխան սեպուածները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց. 43 – Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, անիկա ձեր սպասաւորը ըլլայ. 44 – Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ, անիկա ամէնուն ծառայ ըլլայ. 45 – Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու, և իր կեանքը շատերուն համար փրկանք մը տալու:

46 – Ու Եհան Երիքով. ու երբ Երիքովէ կ'ելլէր աշակերտներովը և շատ բազմութիւնով, Տիմէոսի որդին կոյր Բարթիմէոս ճամբուն քով նստեր էր մուրալու: 47 – Ու երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին է, սկսաւ աղաղակել ու բսել, Յիսուս, որդի Դաւիթ, ողորմէ ինծի: 48 – Եւ շատերը կը յանդիմանէին զանիկա որպէս զի լռէ, բայց անիկա ա՛լ աւելի կ'աղաղակէր, Որդի Դաւիթ, ողորմէ ինծի: 49 – Եւ Յիսուս կանգ առնելով՝ բսաւ որ զանիկա կանչեն. կանչեցին կոյրը ու բսին անոր, Քաջ եղիր, ելիր, քեզ կը կանչէ: 50 – Եւ անիկա իր հանդերձը ձգելով, ելաւ ու եկաւ Յիսուսի: 51 – Եւ Յիսուս պատասխան տուաւ ու անոր բսաւ, Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ. կոյրը բսաւ անոր, Ռաբբունի, որ աչքերս բացուին: 52 – Եւ Յիսուս բսաւ անոր, Գնա. քու հաւատքդ քեզ լաւ ըրաւ. և շուտ մը անոր աչքերը բացուեցան, ու ճամբան Յիսուսի ետևէն կ'երթար:



## ԳԼ. ԺԱ

Ու երբ Երուսաղէմի մօտեցան, Բեթփագէ ու Բեթանիա դէպ ի Ձիթենեաց լեռը, Յիսուս իր աշակերտներէն երկուքը ղրկեց, 2 – Եւ բսաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գիւղը, և անոր մէջ մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը, ուրուն վրայ մարդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք. 3 – Եւ եթէ մէկը բսէ ձեզի Թէ Այդ ի՞նչ կ'ընէք, բսէք Թէ Տէրոջը պէտք է. և շուտ մը հոս պիտի ղրկէ զանիկա: 4 – Գացին և գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով կապուած, ու արձակեցին զանիկա: 5 – Եւ հոն կայնողներէն մանք բսին անոնց, Ի՞նչ կ'ընէք որ կ'արձակէք այդ աւանակը: 6 – Եւ անոնք բսին անոնց ինչպէս Յիսուս պատուիրեր էր, ու իրենց թոյլ տուին: 7 – Եւ աւանակը Յիսուսի բերին, ու անոր վրայ իրենց հանդերձները գրին, ու նստաւ անոր վրայ: 8 – Եւ շատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին: 9 – Եւ առջևէն ու ետևէն գացողները կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ովսաննա. Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ. 10 – Օրհնեալ է մեր Դաւիթի հօրը թագաւորութիւնը որ *կու գայ. Ովսաննա ի բարձունս:

11 – Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ ու տաճարը, և չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց. և արդէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ տասներկուքին հետ մէկտեղ:

12 – Ու հետևեալ օրը երբ Բեթանիայէ կ'ելլէին, անօթեցաւ. 13 – Եւ հեռուանց տերեւալից թզենի մը տեսնելով՝ եկաւ որ թերևս անոր վրայ բան մը գտնէ. ու երբ անոր քով գնաց, տերևներէն զատ բան մը չգտաւ, վասն զի դեռ թուզի ատեն չէր. 14 – †Եւ

*Ոմանք, Տէրոջը անունովը կու գայ
†Ոմանք, Եւ Յիսուս

պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ասկէ հետէ մէկը քեզմէ պատուղ չուտէ յաւիտեան. և իր աշակերտները լսեցին։

15 – Ու եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել զանոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին. և սեղանափոխողներուն սեղանները ու աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց. 16 – Եւ թող չէր տար որ մէկը տաճարին միջէն անօթ մը անցնէ։ 17 – Եւ կը սորվեցնէր ու կ'ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն. բայց դուք ասիկա աւազակներու ապր ըրիք։ 18 – Եւ դպիրները ու քահանայապետները ալս լսելով կը փնտռէին թէ ինչպէս կորսնցնեն զանիկա, քանզի անկէ կը վախնային. վասն զի բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդապետութեանը վրայ։ 19 – Ու երբ իրիկուն եղաւ, քաղաքէն դուրս ելաւ։

20 – Եւ առաւուանց երբ անցնէին, թզենին տեսան արմատէն չորցած։ 21 – Ու Պետրոսի միտքը եկաւ ու ըսաւ անոր, Ռաբբի, ահա թզենին զոր անիծեցիր՝ չորցեր է։ 22 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Աստուծոյ հաւատք ունեցէք։ 23 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ այս լեռանը ըսէ, Ելիր ու ծովը ինկիր, և իր սրտին մէջ չերկմտի, հապա հաւատայ թէ ինչ որ ըսէ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր ինչ որ ըսէ։ 24 – Անոր համար կ'ըսեմ ձեզի, Ինչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի առնէք, և պիտի ըլլայ ձեզի։ 25 – Ու երբ աղօթքի կը կայնիք, նէ՛ներեցէք եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է, ներէ ձեզի ձեր յանցանքները։ 26 – Իսկ եթէ դուք չէք ներեր, ձեր Հայրն ալ որ երկինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները։

27 – Եւ նորէն Երուսաղէմ եկան. ու երբ տաճարին մէջ կը պտրտէր, քահանայապետները և դպիրները ու ծերերը անոր եկան, 28 – Ու ըսին անոր, Ո՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՛վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը, որ այդ բաները ընես։ 29 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, ու էրէ ինծի պատասխան տաք, ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։ 30 – Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ. պատասխան տուէք ինծի։ 31 – Եւ անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին, Եթէ ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. 32 – Իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վախնային, վասն զի ամէնը *գիտէին Յովհաննէսը թէ ճշմարտապէս մարգարէ էր։ 33 – Եւ պատասխան տալով՝ ըսին Յիսուսի, Չենք գիտեր. և Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։

## Գ Լ. Ժ Ր

Եւ սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ ։– ըսել, Մարդ մը պղպէ անկեց, ու անոր բոլորտիքը ցանդ քաշեց, և առագաստ փորեց, ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց։ 2 – Եւ առաքին ծառայ մը դրկեց մշակներուն, որպէս զի մշակներէն այգիին պտուղէն առնէ։ 3 – Իսկ անոնք բռնեցին, ծեծեցին զանիկա ու պարապ ձեռքով ետ դրկեցին։ 4 – Նորէն ուրիշ ծառայ մըն ալ դրկեց անոնց, և զանիկա քարկոծելով գլուխը վիրաւորեցին ու անարգուած ետ դրկեցին։ 5 – Եւ դարձեալ ուրիշ մը դրկեց, ու զանիկա սպաննեցին. և շատ ուրիշներ ալ դրեց, որոնց մէկ քանիները ծեծեցին ու մէկ քանիները սպաննեցին։ 6 – Ուստի սիրելի որդի մըն ալ ունենալով, վերջապէս զանիկա ալ դրկեց անոնց՝ ըսելով, Թերևս ամէնուն իմ որդիէս։ 7 – Բայց այն մշակները ըսին իրարու, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննենք, ու ժառանգութիւնը մերը ըլլայ։ 8 – Եւ բռնեցին զանիկա ու սպաննեցին, և այգիին դուրս հանեցին։ 9 – Ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ ու կորսնցնէ մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ։ 10 – Եւ այս գիրը չէ՞ք կարդացեր, Թէ Ան քարը զոր շինողները

*Յոյն. ունէին



անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. 11 – Ասիկա Տէրոջմէն եղաւ, և զարմանալի է մեր աչքերուն։

12 – Եւ կը փնտռէին թէ ինչպէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, քանզի իմացան որ այն առակը իրենց համար ըսաւ, և ձգեցին զանիկա ու գացին։

13 – Եւ փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն քանի մը հոգի ղրկեցին անոր, որպէս զի խօսքով բռնեն զանիկա։ 14 – Եւ անոնք եկան ու ըսին անոր, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և մեկուն համար հոգդ չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես. Կայսրին տուրք տալ արժա՞նի է՝ թէ ոչ, տա՞նք՝ թէ չտանք։ 15 – Եւ Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք. բերէք ինծի դահեկան մը որ տեսնեմ։ 16 – Եւ անոնք բերին. ու ըսաւ անոնց, Որո՞ւն է այս պատկերը ու գիրը. և անոնք ըսին անոր, Կայսրին։ 17 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Զոր որ Կայսրինն է Կայսրին տուէք, և զոր որ Աստուծոյն է Աստուծոյ տուէք. ու զարմացան անոր վրայ։

18 – Եւ անոր քով եկան սադուկեցիները որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին՝ ըսելով, 19 – Վարդապետ, Մովսես մեզի գրեց որ եթէ մեկուն եղբայրը մեռնի, ու կինը ձգէ և զաւակ չձգէ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ։ 20 – Արդ եօթը եղբայրներ կային, և առաջինը կին առաւ ու մեռաւ և զաւակ չձգեց։ 21 – Ու երկրորդը առաւ զանիկա ու մեռաւ, և ան ալ զաւակ չձգեց. նոյնպէս ալ երրորդը։ 22 – Ու եօթն ալ զանիկա առին և զաւակ չձգեցին. ամէնէն ետքը կինն ալ մեռաւ։ 23 – Ուրեմն յարութեան ատեն, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ. վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան։ 24 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Ատոր համար չէ՞ք սխալած էք, որ ոչ գիրքերը գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ 25 – Քանզի երբ մեռելներէն յարութիւն առնեն, ոչ կին կ'առնեն և ոչ էրկան կը տրուին, հապա երկինքի հրեշտակներուն պէս են։ 26 – Բայց մեռելներուն համար՝ թէ յարութիւն կ'առնեն, Մովսեսի գիրքին մէջ չէ՞ք կարդացեր մորենիին վրայ, ինչպէս Աստուած անոր խօսեցաւ՝ ըսելով, Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը։ 27 – Անիկա մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն. ուրեմն դուք խիստ մոլորած էք։

28 – Եւ գպիրներէն մէկը եկաւ, ու մինչ կ'ընէր անոնց՝ երբ փիճաբանութիւն կ'ընէին, ու երբ տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր ։– ըսաւ, Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն առաջինը։ 29 – Եւ Յիսուս պատասխանեց անոր, Բոլոր պատուիրանքներուն առաջինը այս է. Լսէ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է. 30 – Եւ քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, ու քու բոլոր մտքէդ, և քու բոլոր զօրութենէդ. սա է առաջին պատուիրանքը։ 31 – Ու երկրորդը անոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս. ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք չկայ։ 32 – Եւ գպիրը ըսաւ անոր, Աղէկ, վարդապետ, շիտակ խօսեցար թէ Աստուած մէկ է, և անկէ զատ ուրիշ մը չկայ. 33 – Եւ բոլոր սրտէ, ու բոլոր մտքէ, և բոլոր անձէ, ու բոլոր զօրութենէ զանիկա սիրելը, ու ընկերը իր անձին պէս սիրելը ամէն ողջակէզներէ ու զոհերէ աւելի է։ 34 – Եւ Յիսուս տեսնելով որ անիկա խելացութիւնով պատասխան տուաւ, ըսաւ անոր, Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես. և ա՛լ ուրիշ մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցնելու։

35 – Եւ Յիսուս երբ տաճարին մէջ կը սորվեցնէր, պատասխան տուաւ ու ըսաւ, Դպիրները ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է. 36 – Եւ ինք Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։ 37 – Ուրեմն Դաւիթ ինք որ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անոր որդին կ'ըլլայ. և ժողովուրդէն շատերը յօժարութեամբ մտիկ կ'ընէին անոր։

38 – Եւ իբր վարդապետութեանը մէջ կ'ըսէր անոնց, Զգուշացէք դպրոցներէն, որոնք կ'ուզեն փառասէր հանդերձներով պարտիլ, և շուկաներուն մէջ բարեւները կը ֆնդրեն, 39 – Ու ժողովարաններուն մէջ առաջին աթոռները, և ընթրիքներու մէջ առաջին բազմոցները. 40 – Որոնք որբևարիներուն տուները կ'ուտեն, ու խոթոյս երեւնալու համար աղօթքը կ'երկնցնեն. անոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին:

41 – Եւ Յիսուս դանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ ինչպես ժողովուրդը դանձանակին մէջ սառակ կը ձգէ. և շատ հարուստներ շատ բան ձգեցին: 42 – Աղքատ որբևարի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաբարակիա մը կ'ընէ: 43 – Եւ իր աշակերտները իրեն կանչելով ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Ա.յս աղքատ որբևարին դանձանակը ուրիշ ձգողներուն ամենէն աւելի ձգեց. 44 – Վասն զի ամենը իրենց աւելցածէն ձգեցին, բայց սակայն իր չքաւորութենէն ունեցածին բոլորը ձգեց, իր բոլոր ապրուստը:

## Գլ. ԺԳ

Ու երբ աստուածէն դուրս կ'ելլէր, իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն, Վարդապետ, նայէ ինչպէս քարեր են, և ինչ կերպ շէնքեր: 2 – Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց, Կը տեսնե՞ս այդ մեծ շէնքերը. քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի:

3 – Ու երբ անկից Ձիթենեաց լեռը աստուածէն դիմաց նստեր էր, Պետրոս ու Յակոբոս եւ Յովհաննէս ու Անդրէաս զարցուցին իրեն առանձին, 4 – Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ նշան պիտի ըլլայ այդ ամէն բաներուն կատարուելու ատենը: 5 – Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց ու սկսաւ ըսել, Զգույշ կեցէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ. 6 – Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն Թէ Ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորեցնեն: 7 – Բայց երբ լսէք պատերազմներու և պատերազմներու լուրեր՝ մի խռովիք, վասն զի պէտք է ըլլայ, բայց դեռ վերջը չէ: 8 – Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան. սովեր ու խռովութիւններ ալ պիտի ըլլան. ասոնք ցաւերուն սկիզբներն են: 9 – Զգուշացէք ձեր անձերուն. քանզի ձեզ տանջանքներու պիտի մատնեն, ու ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն, և իմ պատճառաւս հաստիր կանգնուելու ու թագաւորներու առջեւ պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար: 10 – Եւ առաջ պէտք է որ աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն: 11 – Բայց երբ ձեզ մատնելու տանին, առաջուընէ հոգ մի ընէք և մի մտածէք թէ ինչ պիտի խօսիք, հապա այն ժամուն ինչ որ ձեզի տրուի՝ զանիկա խօսեցէք. վասն զի ոչ թէ դուք էք որ կը խօսիք, հապա Հոգին Սուրբ:

12 – Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մատնէ, և հայրը որդին, և որդիներ էրեսնին ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք: 13 – Եւ իմ անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչեւ վերջը համբերէ՝ անիկա պիտի ապրի: 14 – Ու երբ տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքով բսուած է, թէ արժան չեղած տեղը կը կենայ, (ով որ կարդայ՝ թող հասկնայ,) այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին. 15 – Եւ ան որ տանիքին վրայ է՝ թող տուն չիջնէ, ու չմտնէ իր տունէն բան մը առնելու. 16 – Եւ ան որ արտին մէջ է՝ թող ետ չդառնայ իր հանդերձը առնելու: 17 – Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն: 18 – Եւ աղօթք ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ: 19 – Վասն զի այն օրերը այնպիսի նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը Աստուծոյ ստեղծած արարածներուն սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: 20 – Եւ եթէ Տէրը այն օրերը չկարճեցնէր, բնաւ մարմին մը պիտի չապրէր. բայց ընտրեալներուն համար զորոնք ընտրեց՝ այն օրերը կարճեցուց: 21 – Եւ այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ, Ահա հոս է Քրիստոսը՝ կամ Ահա հոն, մի հաւատաք. 22 – Վասն զի սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու նշաններ եւ հրաշքներ պիտի ցուցնեն, որպէս զի եթէ կարելի էր, ընտրեալներն ալ մոլորեցնեն: 23 – Իսկ դուք զգոյշ կեցէք. ահա առաջուընէն բոլ ձեզի ամէնը:

24 – Բայց այն օրերը այն նեղութենէն ետեւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, 25 – Եւ աստղերը երկինքէն պիտի թափթփին, ու երկինքին մէջի զօրութիւնները պիտի շարժին: 26 – Եւ այն ատեն պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամպերու մէջ եկած մեծ զօրութիւնով ու փառքով: 27 – Եւ այն ատեն իր հրեշտակները պիտի ղրկէ, ու իր ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն, երկրի ծայրէն մինչեւ երկինքի ծայրը: 28 – Թզենիէն առակ մը սորվեցէք. երբ անոր ոստերը կը կակուղնան ու տերեւները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է: 29 – Նոյնպէս ալ դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ մօտ է դուռներուն քով: 30 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ որ այս ամէն բաները ըլլան: 31 – Երկինքը ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին: 32 – Իսկ այն օրուան ու ժամուն համար մէկը չգիտեր, ոչ երկինքի մէջ եղող հրեշտակները և ոչ Որդին, հապա միայն Հայրը: 33 – Զգոյշ կեցէք, արթուն մնացէք և աղօթք ըրէք, վասն զի չէք գիտեր ատենը ե՛րբ է: 34 – Ինչպես օտար երկիր գացող մարդ մը իր տունը կը թողու, ու իր ծառաներուն իշխանութիւն կուտայ, և ամէն մէկուն իր գործը, ու դռնապանին կ'ապսպրէ որ արթուն կենայ: 35 – Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ե՛րբ կու գայ տանուտէրը, իրիկո՞ւնը թէ կէսգիշերի՞ն թէ հաւաթռչո՞ւն և թէ առտուա՞նց: 36 – Զըլլայ որ յանկարծակի գայ ու ձեզ քնած մէջ գտնէ: 37 – Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզի՝ ամենուն կ'ըսեմ, Արթուն կեցէք:

## Գլ. ԺԴ

Եւ երկու օրէն եւոր զատիկ ու բաղարջակերը էր. և քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ի՛նչպէս նենգութեամբ բռնեն զանիկա ու մեռցնեն: 2 – Բայց կ'ըսէին թէ Ոչ տօնին տատիկը, որպէս զի ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ:

3 – Ու երբ ինք Բեթանիա էր բորոտ Սիմոնի տունը սեղան նստած, կին մը եկաւ՝ որ շիշ մը պատուական սուտ նարդոսի իւղ ունէր, և կոտրեց այն շիշը ու անոր գլխուն վրայ թափեց: 4 – Եւ կային ոմանք որ կը դժուարէին ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար եղաւ այդ իւղին կորսուածը. 5 – Քանզի այդ [իւղը] երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար ծախուիլ ու աղքատներուն տրուիլ. և աստիկ կը յանդիմանէին զանիկա: 6 – Բայց Յիսուս բսաւ, Թող տուէք ատոր, ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք ատիկա. բարի գործ մը գործեց ինծի: 7 – Վասն զի աղքատները միշտ ձեզի հետ ունիք, ու երբ ուզէք, կրնաք անոնց բարիք ընել, բայց զիս ամէն ատեն չունիք: 8 – Ատիկա ինչ որ ունէր՝ բրաւ. առաջուընէն իմ մարմինս օծեց իմ թաղումիս համար: 9 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ Ինչը աշխարհի մէջ, ուր որ այս աւետարանը քարոզուի, ատոր ըրածն ալ պիտի խօսուի իրեն յիշատակ ըլլալու համար: 10 – Եւ Յուդա Իսկարիովացի, տասներկուքէն մէկը, գնաց քահանայապետներուն, որ զանիկա մատնէ ձեռքերնին: 11 – Անոնք ալ լսելով ուրախացան, ու իրեն ոսկի տալ խոստացան, և կը փնտռէր Թէ ի՛նչպէս պատեհութիւնով մը մատնէ զանիկա:

12 – Եւ բաղարջակերաց առաջին օրը, երբ զատիկը կը մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն, Ո՞ւր կ'ուզես երթանք պատրաստենք՝ որպէս զի զատիկը ուտես: 13 – Եւ իր աշակերտներէն երկուքը զրկեց ու բսաւ անոնց, Գացէք քաղաքը, ու ձեզի մարդ մը պիտի պատահի՝ որ սափոր մը ջուրը տանի, գացէք անոր ետեւէն: 14 – Եւ ուր որ մտնէ, տանը աէրոջը ըսէք, Վարդապետը կ'ըսէ, Ո՞ւր է օթեւանը, ուր աշակերտներուս հետ զատիկը ուտեմ: 15 – Ան ալ ձեզի յարդարուած ա պատրաստ մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ. հոն պատրաստեցէք մեզի: 16 – Եւ իր աշակերտները գացին ու քաղաքը մտան, և ինչպես իրենց բսաւ՝ անպէս գտան, և զատիկը պատրաստեցին:

17 – Ու երբ իրիկուն եղաւ, տասներկուքէն հետ մէկտեղ եկաւ: 18 – Ու երբ սեղան նստան եւ կ'ուտէին, բսաւ Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը որ հիմա ինծի հետ

կ'ուտէ, զիս պիտի մատնէ։ 19 – Եւ անոնք սկսան ըսել մէ-մէկիկ ըսել անոր, Միթէ ե՞ս եմ։ և ուրիշ մը՝ Միթէ ե՞ս եմ։ 20 – Անոնց պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Այդ տասներկուքէն մէկը՝ որ ինծի հետ էր չեռւոը պնակը խոթեց։ 21 – Որդին մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մատնուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար։

22 – Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կոտրեց, և տուաւ անոնց ու ըսաւ, *Առէ՛ք, այս է իմ մարմինս։ 23 – Եւ գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց, և ամէնն ալ խմեցին անկէ։ 24 – Ու ըսաւ անոնց, Ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի։ 25-Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետեւ արձին բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև այն օրը երբ զանիկա նոր խմիմ Աստուծոյ թագաւորութեանը մէջ։

26 – Եւ օրհնութիւն մը երգելէ ետեւ Ձիթենեաց լեռը ելան։ 27 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ամէնդ ալ այս գիշեր իմ վրայով պիտի գայթակղիք. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու ոչխարները պիտի ցրուին։ 28 – Բայց յարութիւն առնելէս ետեւ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ։ 29 – Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամէնն ալ գայթակղին, բայց ոչ թէ ես։ 30 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն ալ այս գիշեր գեռ հաւը երկու անգամ չհոսած երեք անգամ զիս պիտի ուրանաս։ 31 – Բայց Պետրոս աւելի կը պնդէր ու կ'ըսէր, Թէև քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ինծի, բնաւ քեզ պիտի չուրանամ. նոյնպէս կ'ըսէին ամէնն ալ։

32 – Եկան այն տեղը որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ իր աշակերտներուն, Հոս նստեցէք, մինչև որ ես աղօթք ընեմ։ 33 – Եւ իրեն հետ առնելով Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, սկսաւ խռովիլ և վշտանալ։ 34 – Ան ալ ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք և արթուն մնացէք։ 35 – Ու քիչ մը առաջ երթալով՝ էբեւեն վրայ գետինը ինկաւ և աղօթք ըրաւ, որ եթէ կարելի է, այն ժամը իրմէ անցնի։ 36 – Եւ ըսաւ, Աբբա Հայր, ամէն բան քեզի հնարաւոր է, այս գաւաթը ինծմէ անցուր. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես։ 37 – Եւ եկաւ ու զանոնք քնացած գտաւ. և ըսաւ Պետրոսի, Սիմո՛ն, կը քնանա՞ս. չկրցա՞ր ժամ մը արթուն կենալ։ 38 – Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէք. հոգին յօժար է, բայց մարմինը ակար։ 39 – Եւ նորէն գնաց աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով։ 40 – Եւ դարձաւ ու զանոնք նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր, և չէին գիտեր թէ ի՛նչ պատասխան տան անոր։ 41 – Երրորդ անգամ ալ եկաւ ու ըսաւ անոնց, Ասկէ ետեւ քնացէք ու հանգչեցէք. բաւական է, ժամը հասաւ. ահա Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մատնուի։ 42 – Ելէք երթանք, ահա մօտեցաւ մատնիկս որ զիս պիտի մատնէ։

43 – Եւ դեռ անիկա չյա՛ր որ կը խօսէր, իսկոյն Յուդա, տասներկուքէն մէկը, եկաւ, և իրեն հետ քահանայապետներուն և դպիրներուն ու ծերերուն կողմէն շատ բազմութիւն՝ սուր ու բիրով ու բիրերով։ 44 – Եւ զանիկա մատնողը անոնց նշան մը տուեր էր՝ ըսելով, Ով որ ես համբուրեմ՝ ան է, բռնեցէք զանիկա և զգուշութեամբ տարէք։ 45 – Ու անիկա գալով շուտ մը մօտեցաւ անոր և ըսաւ, Ռաբբի, Ռաբբի, ու համբուրեց զանիկա։ 46 – Եւ անոնք ձեռք զարկին անոր ու բռնեցին զանիկա։ 47 – Եւ քովը կայնողներէն մէկը սուրը քաշեց ու զարկաւ քահանայապետին ծառային, ու անոր ականջը մէկդի հանեց։ 48 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Իբր թէ աւազակի՞ վրայ ելլաք սուրերով ու բիրերով զիս բռնելու։ 49 – Ամէն օր ձեր քովէն էի ու տաճարին մէջ կը սորվեցնէի, և զիս չբռնեցիք. բայց որպէս զի գիրքերը կատարուին։ 50 – Ան ատեն բոլորը ալ թողլով զինքը թռուցին։ 51 – Եւ երիտասարդ մը անոր եւեւէն կ'երթար՝ մերկ մարմինին վրայ կտաւ մը առած, ու երիտասարդները զանիկա բռնեցին։ 52 – Ան ալ կտաւը թողուց ու մերկ փախաւ անոնցմէ։

*Ոմանք, Առէք, կերէք



53 – Եւ տարին Յիսուսը քահանայապետին, ու անոր քով ժողովեցան բոլոր քահանայապետները և ծերերը ու դպիրները։ 54 – Եւ Պետրոս հեռուանց անոր եւեւէն գնաց մինչև ներսը քահանայապետին գաւիթը, և սպասաւորներուն հետ նստաւ, ու կրակին քով կը տաքնար։ 55 – Իսկ քահանայապետները և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ վկայութիւն կը փընտռէին, որպէս զի զանիկա մեռցնեն, և չէին գտներ. 56 – Վասն զի շատերը սուտ վկայութիւն կը վկայէին անոր դէմ, ու վկայութիւնները իրարու հետ մնացին չէին։ 57 – Եւ ոմանք ելան սուտ վկայութիւն կ'ընէին անոր դէմ՝ ու կ'ըսէին թէ, 58 – Մենք լսեցինք ատկէ որ կ'ըսէր, Ես այդ ձեռագործ տաճարը պիտի քակեմ, և երեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ առանց ձեռագործի։ 59 – Բայց այնպէս ալ իրենց վկայութիւնները իրարու հետ մնացին չէին։ 60 – Եւ քահանայապետը ժէջտեղ ոտք ելլելով՝ հարցուց Յիսուսի ու ըսաւ, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ատոնք քեզի դէմ։ 61 – Բայց անիկա լուռ կը կենար և պատասխան մը չէր տար. քահանայապետը նորէն կը հարցնէր անոր ու կ'ըսէր, Դո՞ւն ես Քրիստոսը, օրհնեալ Աստուծոյ Որդին։ 62 – Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ։ ու պիտի տեսնէք Որդին մարդոյ զօրութեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերովը գալով։ 63 – Եւ քահանայապետը իր հանդերձները պատռեց, ու ըսաւ, Ա՛լ ի՞նչ պէտք են մեզի վկաները։ 64 – Աստուծոյ հայհոյութիւնը լսեցիք. ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. և ամէնը դատապարտեցին զանիկա թէ մահապարտ է։

65 – Եւ ոմանք սկսան թքնել անոր ու երեսը ծածկել և բռունցքով ծեծել ու ըսել, Մարգարէացիր. ու պատասխանները ապտակ կը զանէին անոր։

66 – Եւ Պետրոս վարը գաւիթն էր, ու քահանայապետին աղախիններէն մէկը եկաւ, 67 – Ու տեսնելով Պետրոսը որ կը տաքնար, նայեցաւ անոր ու ըսաւ, Դուն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էիր։ 68 – Բայց անիկա ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր և չեմ հասկնար թէ դուն ի՛նչ կը խօսիս. ու երբ դուրս ելաւ գաւիթին դրունը առջև, հաւը խօսեցաւ։ 69 – Եւ աղախինը նորէն տեսաւ զանիկա, ու սկսաւ բոլորակը կայնողներուն ըսել թէ Այս ալ անոնցմէ է։ 70 – Եւ անիկա նորէն ուրացաւ։ Անկէ մի ետքը ալ ատոնք որ հոն կայնողները կրկին Պետրոսի, Ա՛ւ դուն անոնցմէ ես, վասն զի Գալիլեացի ես, և քու ըրուածդ ալ նման է անոնց։ 71 – Բայց անիկա սկսաւ անիծել ու երդումով ըսել թէ Ես այն մարդը չեմ ճանչնար, որու համար դուք կ'ըսէք։ 72 – Եւ իսկոյն երկրորդ անգամ հաւը խօսեցաւ. ու Պետրոս միտքը բերաւ այն խօսքը զոր Յիսուս իրեն ըսեր էր թէ Դեռ հաւը երկու անգամ չհոսած դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս. ու սկսաւ լալ։

## ԳԼ. ԺԵ

Եւ առտուանց շուտ մը քահանայապետները ծերերուն ու դպիրներուն հետ և բոլոր ժողովքն ալ խորհուրդ ըրին, Յիսուսը կապեցին ու տարին մատնեցին Պիղատոսի։ 2 – Եւ Պիղատոս հարցուց անոր՝ Դո՞ւն ես Հրէից թագաւորը. անիկա ալ պատասխան տալով ըսաւ անոր, Դուն կ'ըսես։ 3 – Եւ քահանայապետները շատ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայով։ 4 – Ու Պիղատոս նորէն հարցուց անոր՝ ըսելով, Պատասխան մը չե՞ս տար. նայէ ո՛րչափ քեզի դէմ կը վկայեն։ 5 – Եւ Յիսուս տակաւին պատասխան մը չտուաւ, մինչև որ Պիղատոս զարմացաւ։

6 – Բայց ամեն տաւնը կապուած մը կ'արձակէր անոնց, ո՛րը որ իրենք ուզէին։ 7 – Եւ Բեւ կար Բարաբբա անուանով իր ընկերք խռովարարներուն հետ կապուած. որոնք խռովութեան ատենը մարդասպանութիւն ըրեր էին։ 8 – Եւ ժողովուրդը աղաղակելով սկսաւ խնդրել որ ըստ ինչպէս միշտ կ'ընէր իրենց։ 9 – Ու Պիղատոս անոնց պատասխան տուաւ ու ըսաւ, Կ'ուզէ՞ք որ Հրէից թագաւորը արձակեմ ձեզի։ 10 – Քանզի գիտեր որ քահանայապետները նախանձի համար մատներ էին զանիկա։ 11 – Բայց քահանայապետները ժողովուրդը գրգռեցին որ պատները ժողովուրդը գրգռեցին որ Բարաբբան իրենց արձակէ։ 12 – Նորէն Պիղատոս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Հապա

պա Հրէից Թագաւոր բաձնիդ ինչ կ'ուզէք որ ընեմ: 13 – Եւ անոնք նորէն կ'աղաղակէին, Խաչը Հանէ ասիկա: 14 – Պիղատոս ըսաւ անոնց, Բայց ինչ չար գործ բրած է ասիկա. և անոնք ա՛լ աւելի կ'աղաղակէին ու՝ Խաչը Հանէ ասիկա: 15 – Եւ Պիղատոս ժողովուրդը գոհ ընել ուզելով՝ Բարաբբան արձակեց անոնց, ու Յիսուսը ծեծելով՝ ձեռք տուաւ որպէս զի խաչուի:

16 – Եւ զինուորները տարին զանիկա գաւիթը, այսինքն պալատը, և բոլոր գունդը հաւաքեցին: 17 – Ու Հագցուցին անոր ծիրանիներ, և փշեղէն պսակ հիւսելով՝ անոր դրին: 18 – Ու սկսան բարև տալ անոր ու ըսել, Ողջո՛յն քեզ, Հրէից Թագաւոր: 19 – Եւ անոր գլուխը եղեգով կը ծեծէին ու կը թքքէին անոր, և ծունկի վրայ գալով երկրպագութիւն կ'ընէին անոր: 20 – Ու երբ ծաղր ըրին զանիկա, ծիրանիները վրայէն հանեցին և իր հանդերձները հագցուցին անոր, ու դուրս հանեցին զանիկա՝ որպէս զի խաչը հանեն:

21 – Եւ Սիմոն Կիւրենացի, Ալեքսանդրոսի և Ռուփոսի Հայրը, որ անկէ կ'անցնէր արտէն եկած, պահակ բրաւ նեցին որպէս զի անոր խաչը վերցնէ: 22 – Ու տարին զանիկա Գողգոթա ըսուած տեղը, (որ կը Թարգմանուի Գանկի տեղ,) 23 – Եւ անոր զմուռսով խառնուած գինի տուին որ խմէ, բայց ինք չառաւ: 24 – Ու խաչը Հանեցին զանիկա, և անոր Հանդերձները բաժնեցին՝ անոնց վրայ վիճակ ձգելով թէ ո՛վ ինչ պիտի առնէ: 25 – Ժամը երեքն էր ու խաչը Հանեցին զանիկա: 26 – Եւ անոր յանցանքի գիրը գրուած էր Ե Հրէից Թագաւորն է: 27 – Ու անոր հետ երկու աւազակ խաչը Հանեցին. մէկը անոր աջ կողմէն ու մէկը ձախ կողմէն: 28 – Եւ կատարուեցաւ այն գիրը որ կ'ըսէ Թէ Անօրէններու հետ սեպուեցաւ: 29 – Եւ անոնք որ կ'անցնէին, կը հայհոյէին անոր, գլուխնին կը շարժէին ու կ'ըսէին, Աւա՛ղ, որ տաճարը կը քակէիր, և երեք օրուան մէջ կը շինէիր: 30 – Ինքզինքդ ազատէ ու իջիր այդ խաչէն: 31 – Նոյնպէս ալ քահանայապետները դպիրներուն հետ իրենց մէջ ծաղր ընելով կ'ըսէին, Ուրիշները ազատեց, ինքզինք չկրնար ազատել: 32 – Այդ Իսրայէլի Թագաւորը, Իսրայէլի Թագաւորը, թող հիմա խաչէն վար իջնէ, որպէս զի տեսնենք ու հաւատանք. և իրեն հետ խաչը ելողները կը նախատէին զանիկա:

33 – Ու վեցերորդ ժամը հասածին պէս՝ բոլոր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը: 34 – Եւ իններորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Էլօի, Էլօի, լա՞մա սաբաքթանի. որ կը Թարգմանուի, Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր: 35 – Եւ քովը կայնողներէն ոմանք երբ լսեցին կ'ըսէին Թէ Եղիան կը կանչէ: 36 – Ու մէկը վազեց սպունգ մը քացախով լեցուց, ու եղեգի մը անցընելով՝ տուաւ անոր որպէս զի խմէ, և ըսաւ, Թող տուր, տեսնենք Թէ Եղիա կու գա՞յ տանիկա վար իջեցնելու:

37 – Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց ու հոգի տուաւ: 38 – Ու տաճարին վարագոյրը երկուքի պատռեցաւ վերէն վար: 39 – Եւ հարիւրապետը որ անոր դիմաց կեցեր էր, տեսնելով որ այսպէս աղաղակելով հոգի տուաւ, ըսաւ. Արդարև Որդի Աստուծոյ էր այս մարդը: 40 – Կիներ ալ կային, որոնք հեռուանց կը նայէին, որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի, և պզտիկ Յակոբոսի ու Յովսէսի մայրը Մարիամ, և Սողովմէ. 41 – Որոնք երբ Գալիլեա էր, իր ետեւէն կ'երթային, և իրեն սպասաւորութիւն կ'ընէին. և ուրիշ շատ կիներ ալ՝ որոնք իրեն հետ Երուսաղէմ երեր էին:

42 – Ու երբ իրիկուն եղաւ, այն օրը ուրբաթ, այսինքն շաբաթին առջի օրը, ըլլալով, 43 – Յովսէփ Արիմաթացի, երեւելի խորհրդական մը, որ ինք ալ Աստուծոյ Թագաւորութեանը կը սպասէր, եկաւ ու համարձակութիւն ընելով՝ Պիղատոսի քով մտաւ, և Յիսուսի մարմինը խնդրեց: 44 – Ու Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած ըլլայ. և հարիւրապետը իրեն կանչելով՝ հարցուց անոր Թէ շա՞տ առեն է որ մեռաւ: 45 – Ու երբ պաշտօնէն իմացաւ հարիւրապետէն, մարմինը Յովսէփի շնորհեց: 46 – Եւ Յովսէփ կտաւ գնեց, ու զանիկա վար իջեցնելով՝ կտաւովը փաթթեց, ու դրաւ գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորուած էր. և քար մը գլորեց գերեզմանին դուռը: 47 – Իսկ Մարիամ Մագդաղենացի ու Յովսէսի մայրը Մարիամ տեսան այն տեղը ուր դրուեցաւ:

## Գ Լ. Ժ Գ

Ու երբ շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի մայրը Մարիամ և Սողովմէ խունկեր ծախու առին, որպէս զի գան օծեն զանիկա: 2 – Եւ մէկշաբթի առաւոտնց շատ կանուխ, երբ արեւը կը ծագէր, եկան գերեզմանը, 3 – Ու իրարու կ'ըսէին, Ո՞վ պիտի գլորէ մեզի գերեզմանէն դռնէն, 4 – (Ու նայեցան տեսան որ քարը գլորուած էր,) վասն զի շատ մեծ էր: 5 – Եւ ներս գերեզմանը մտնելով երիտասարդ մը տեսան որ աջ կողմը նստեր էր ճերմակ պատմուճան հագած, ու զարհուրեցան: 6 – Եւ նա ըսաւ անոնց, Մի զարհուրիք. Յիսուս Նազովրեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ. անիկա յարութիւն առաւ, հոս չէ. տա՛ս այն տեղը ուր դրին զանիկա: 7 – Բայց գացէք, ըսէք անոր աշակերտներուն և Պետրոսի, Թէ առ՛ա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա՝ ինչպես ձեզի ըսաւ: 8 – Եւ անոնք դողով ու ապշութեամբ բռնուած՝ ելան ու փախան գերեզմանէն, և մարդո՛ւ բան չըսին, քանզի կը վախնային:

9 – Յառաւօտուն մէկշաբթի առաւօտնց յարութիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիի երեւցաւ, որմէ եօթը դեւ հաներ էր: 10 – Անիկա գնաց ատոնց պատմեց՝ որոնք անոր հետ էին, երբ սուգ կ'ընէին ու կու լային: 11 – Իսկ անոնք երբ լսեցին Թէ կենդանի է և Թէ իրեն երեւցաւ, չհաւատացին:

12 – Ետքը ուրիշ կերպարանքով երեցաւ անոնցմէ երկուքին՝ որոնք քալելով արտ կ'երթային: 13 – Եւ անոնք գացին ուրիշներուն պատմեցին, ու անոնց ալ չհաւատացին:

14 – Վերջը տասնմէկին երեւցաւ, երբ սեղան նստած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհաւատութիւնը և սիրտերնուն կարծրութիւնը, վասն զի որոնց որ իր երեցաւ մեռելներէն չհաւատացին: 15 – Եւ ըսաւ անոնց, Գացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն: 16 – Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի, և ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: 17 – Եւ անոնք որ կը հաւատան, այս նշանները անոնց հետ պիտի երթան. Իմ անունովս դեւեր պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին. 18 – Ձեռքերնին օձեր պիտի բռնեն, և եթէ մահաբեր դեղ մը խմեն, իրենց պիտի չվնասէ. հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն, ու անոնք պիտի առողջանան:

19 – Արդ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը երկինք համբարձաւ, ու Աստուծոյ աջ կողմը նստաւ: 20 – Եւ անոնք ելան ու ամէն տեղ կը քարոզէին, և Տէրը անոնց գործակից էր, ու խօսքը կը հաստատէր այն նշանները՝ որոնք անոնց հետ կ'երթային: Ամէն:

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

## ԳԼՈՒԽ Ա.

Որովհետև շատերը մեր մէջ հաստատ գիտցուած բաներուն վրայով հրատարակութիւնը կարգի դնելու

---

Ո՛նդ, շուտ ելան

ձեռք զարկին, 2 – Ինչպէս սկիզբէն ականատես եղողները և խօսքին սպասաւոր եղողները աւանդեցին մեզի, 3 – Ես ալ՝ որ սկիզբէն այն ամէն բաները ճշդութեամբ տեղեկացեր էի, յարմար դատեցի կարգաւ գրել քեզի, ով պատուական Թէոփիլոս, 4 – Որպէս

զի սրվաճ բաներուդ սուտգութիւնը իմանան։

5 – Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը Աբիայի դասակարգութենէն Զաքարիա անունով քահանայ մը կար, որուն կինը Ահարոնի աղջիկներէն էր, և անոր անունը Եղիսաբեթ, 6 – Ու երկուքն ալ Աստուծոյ առջև արդար էին, և Տէրոջը բոլոր պատուիրանքներուն ու իրաւունքներուն մէջ անարատութեամբ կը քալէին։ 7 – Եւ զաւակ չունէին, վասն զի Եղիսաբեթ ամուլ էր, ու երկուքն ալ օրերնին անցուցած էին։

8 – Ու երբ անկա իր դասակարգութեան օրերը Հանդերձեան քահանայական պաշտօնը կը կատարէր Աստուծոյ առջև, 9 – Քահանայութեան սովորութեանը պէս իրեն բնկաւ որ Տէրոջը տաճարը մանէ խնկարկութիւն ընէ։ 10 – Եւ ժողովուրդին բոլոր բազմութիւնը դուրսը աղօթքի կայնէր էին խունկին ատեն։ 11 – Ու երևցաւ անոր՝ Տէրոջը հրեշտակը, որ կայնէր էր խունկի սեղանին աջ կողմը։ 12 – Եւ Զաքարիա երբ տեսաւ, շփոթեցաւ, ու անոր վրայ վախ մը բնկաւ։ 13 – Եւ հրեշտակը ըսաւ անոր, Մի վախնար, Զաքարիա, վասն զի քու աղօթքդ լսուեցաւ, և քու կինդ Եղիսաբեթ քեզի որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը Յովհաննէս դնես։ 14 – Եւ քեզի ուրախութիւն ու ցնծութիւն պիտի ըլլայ, և շատերը անոր ծնանելուն վրայ պիտի ուրախանան։ 15 – Վասն զի Տէրոջը առջև մեծ պիտի ըլլայ, և դինի ու օղի պիտի չխմէ. և դեռ իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի։ 16 – Ու Իսրայէլի որդիներէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ։ 17 – Եւ ինք անոր առջևէն պիտի գայ Եղիայի հոգիովը ու զօրութիւնովը, հայրերուն սիրտերը որդիներուն վրայ դարձնելու, և անհնազանդները՝ արդարներուն իմաստութեանը, որպէս զի Տէրոջը բարեկարգ ժողովուրդ մը պատրաստէ։ 18 – Եւ Զաքարիա ըսաւ հրեշտակին, Ինչո՞վ գիտնամ այդ բանը, որովհետև ես ծեր եմ՝ ու իմ կինս իր օրերը անցուցած է։ 19 – Եւ հրեշտակը պատասխան տալով՝ ըսաւ անոր, Ես եմ Գաբրիէլ որ Աստուծոյ առջև կը կայնիմ՝ ու ղրկուեցայ քեզի ղրուցելու և այս բաներուն աւետիսը քեզի տալու։ 20 – Եւ ահա համր պիտի ըլլաս դուն, ու պիտի չկրնաս խօսիլ մինչև այն օրը՝ որ այս բաները ըլլան, քանզի չհաւատացիր իմ խօսքերուս, որոնք իրենց ատենին պիտի կատարուին։ 21 – Ու ժողովուրդը Զաքարիայի կը սպասէր, և կը զարմանային անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ։ 22 – Ու երբ դուրս ելաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ. և իմացան որ տաճարին մէջ տեսիլք մը տեսած է. ու ինք նշանով կը խօսէր անոնց հետ, և համր կը կենար։ 23 – Ու եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը լմնցան, իր տունը գնաց։ 24 – Եւ այն օրերէն ետքը անոր կինը Եղիսաբեթ յղացաւ, ու հինգ ամիս ինքզինք կը պահէր, և կ'ըսէր, 25 – Այսպէս ըրաւ ինծի Տէրը այս օրերս, որ իմ վրաս նայեցաւ նախատինքս մարդոց մէջէն վերցնելու։

26 – Ու վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ ղրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը՝ որուն անունը Նազարեթ էր, 27 – Կոյսի մը՝ մարդու մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր, Դաւիթի տունէն, և այն կոյսին անունը Մարիամ էր։ 28 – Ու հրեշտակը անոր գալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, ով շնորհակալ եյս, Տէրը քեզի հետ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես։ 29 – Եւ ան*նա տեսնելով, անոր խօսքին վրայ շփոթեցաւ, ու ինքնիրեն կը մտածէր թէ ինչպէս բան պիտի ըլլայ այս ողջոյնը։ 30 – Եւ հրեշտակը անոր ըսաւ, Մի վախնար, Մարիամ, վասն զի Աստուծմէ շնորհք գտար։ 31 – Եւ ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանիս, և անոր անունը Յիսուս պիտի դնես։ 32 – Անիկա մեծ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին պիտի ըսուի, և Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Դաւիթի աթոռը։ ու յաւիտեան տունը վրայ յաջիսեան պիտի թագաւորէ, 33 – Եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ։ 34 – Ու Մարիամ ըսաւ հրեշտակին, Ինչպէս պիտի ըլլայ այդ բանը, որովհետև ես այր մարդ չեմ գիտեր։ 35 – Եւ հրեշտակը պատասխան տալով՝ ըսաւ անոր, Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Բարձրելոյն զօրութիւնը քու վրադ Հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Որդի պիտի ըսուի։ 36 – Եւ ահա քու ազգականդ Եղիսաբեթ՝ անկա իր պառաւութեան ատենը տրու զաւակով մը յղի է. ու ասիկա այն ամսուն ըսուածին վեցերորդ ամսան է, 37 – Վասն զի Աստուծոյ քով բնաւ բան մը անհնարին չըլլար։ 38 – Եւ Մարիամ ըսաւ, Ահա ես Տէրոջը աղախինն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի. ու հրեշտակը անոր քովէն գնաց։

39 – Այն օրերը եղաւ Մարիամ ու արտարնոք լեռնակողմը Յուդայի Հէ քաղաքը գնաց. 40 – Եւ մտաւ Զաքարիայի տունը ու Եղիսաբեթի բարև տուաւ։ 41 – Եղաւ որ երբ լսեց Եղիսաբեթ Մարիամի բարևը, մանուկը անոր որովայնին մէջ խաղաց, ու Եղիսաբեթ Սուրբ Հոգիով լեցուեցաւ. 42 – Եւ բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ, Օրհնեալ ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է քու որովայնիդ պտուղը։ 43 – Եւ այս ինծի ուրկէ՞ եղաւ, որ իմ Տէրոջս մայրը ինծի գայ. 44 – Վասն զի ահա երբ քու բարևիդ ձայնը ականջիս եկաւ, մանուկը որովայնիս մէջ խաղաց ուրախութենէն։ 45 – Եւ երանի՛ անոր որ *հաւատացեր է, քանզի՝ պիտի կատարուին այն բաները որոնք Տէրոջմէ բսուեցան իրեն։ 46 – Եւ Մարիամ ըսաւ, Իմ անձս կը մեծցնէ Տէրը, 47 – Եւ իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծովս։ 48 – Վասն զի իր աղախինին խոնարհութեանը նայեցաւ. քանզի ահա ասկէ ետև բոլոր ազգերը ինծի երանութիւն պիտի տան։ 49 – Վասն զի Հզօրը ինծի մեծամեծ բաներ ըրաւ, ու անոր անունը սուրբ է։ 50 – Եւ անոր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ է ազգէ ազգ։ 51 – Իր բազուկովը զօրութիւն ցուցուց, ցիրուցան ըրաւ ամբարտաւանները իրենց սրտին խորհուրդովը։ 52 – Զօրաւորները էբենց աթոռներէն իջեցուց, ու խոնարհները բարձրացուց։ 53 – Անօթիները բարիքներով լեցուց, և հարուստները պարապ ձգեցին։ 54 – Օգնութիւն ըրաւ իր Իսրայէլ ծառային՝ էր ողորմութիւնը միտք բերելով, 55 – Ինչպէս խօսեցաւ մեր հայրերուն, Աբրահամի ու անոր սերունդին յաւիտեան։

56 – Եւ Մարիամ անոր քով երեք ամիսի չափ կեցաւ, ու իր տունը դարձաւ։

57 – Ու Եղիսաբեթի ծնանելու ժամանակը լեցուեցաւ, ու որդի մը ծնաւ։ 58 – Եւ լսեցին անոնք որ անոր բոլորակը կը բնակէին, ու անոր ազգականները, որ Տէրը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը ցուցուց, և անոր հետ կ'ուրախանային։

59 – Ու եղաւ որ ութերորդ օրը տղան թլփատելու եկան, և զանիկա իր հօրը անունովը Զաքարիա կը կոչէին։ 60 – Իսկ անոր մայրը պատասխան տուաւ ու ըսաւ, Ոչ, հապա Յովհաննէս պիտի կոչուի։ 61 – Եւ անոր ըսին թէ Քու ազգականներուդ մէջ մէկը չկայ որ այս անունով կոչուի։ 62 – Ան*ք կ'ընէին անոր հօրը թէ ինչ անուն կ'ուզէ որ անկա կոչուի։ 63 – Ան ալ տախտակ մը ուզեց և տառ առնելը, ու ամէնը զարմացան։ 64 – Եւ իսկոյն բացուեցաւ անոր բերանը ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ'օրհնէր զԱստուած։ 65 – Եւ վախ մը բնկաւ այն ամէնուն վրայ՝ որոնք անոնց բնակչութիւնը կը բնակէին. ու այս ամէն բաները Հրէաստանի բոլոր լեռնակողմը կը զրուցուէին։ 66 – Եւ ամէն լսողները իրենց սիրտերուն մէջ դրին, ու կ'ըսէին, Արդեօք այս տղան ինչ պիտի ըլլայ. ու Տէրոջը ձեռքը անոր հետ էր։

67 – Եւ անոր հայրը Զաքարիա Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ ու ըսաւ, 68 – Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այցելութեան եկաւ և իր ժողովուրդին փրկութիւն բրաւ։ 69 – Ու մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ ծառային տունէն. 70 – (Ինչպէս սուրբերուն բերնովը խօսեցաւ, որոնք աշխարհի սկիզբէն ի վեր անոր մարգարէներն էին.) 71 – Փրկութիւն մեր թշնամիներէն և բոլոր մեզ ատողներուն ձեռքէն, 72 – Ողորմութիւն ընելու մեր հայրերուն վրայ, և իր սուրբ ուխտը միտք բերելու, 73 – (Այն երդումը զոր մեր հօրը Աբրահամի բրաւ,) մեզի տալու, 74 – Որպէս զի մեր թշնամիներուն ձեռքէն ազատուելով՝ առանց վախի զանիկա պաշտենք 75 –

*Այլ՝ Տէրոջը ընծրհքը

*Կամ, հաւատացեր է թէ

Սրբութիւնով ու արդարութիւնով առաջև մեր-էն-ի բոլոր օրերուն մէջ։ 76 – Եւ դուն, ով մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, վասն զի Տէրոջը երեսին առջևէն պիտի երթաս՝ անոր ճամբաները պատրաստելու, 77 – Անոր ժողովուրդին գիտցնելու էբէնց փրկութիւնը իրենց մեղքերուն թողութիւնովը, 78 – Մեր Աստուծոյն գթած ողորմութեանը համար, որով Ծագող արեգակը վերէն մեզի այցելութեան եկաւ՝ 79 – Խաւարի և մահուան սուերի մէջ նստողներուն լոյս տալու, ու մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ շիտկելու։

80 – Եւ տղան կը մեծնար ու կը զօրանար հոգիով, և անապատներուն մէջ էր մինչև այն օրը երբ ինք Իսրայէլի երևցաւ։

## Գլ. Բ

Ու եղաւ որ այն օրերը Օգոստոս կայսրին հրաման եղաւ որ բոլոր աշխարհ գրուի։ 2 – (Այս առաջին աշխարհագիրը եղաւ Կիւրենոսի Սիւրիոյն վրայ կուսակալութիւն ըրած առեներ։) 3 – Եւ ամէնը կ'երթային աշխարհագիրը մնելու՝ ամէն մէկը իր քաղաքին մէջ։ 4 – Յովսէփ ալ Գալիլեայէն, Նազարէթ քաղաքէն, երաւ դէպ ի Հրէաստան Դաւիթի քաղաքը որ Բեթլէհէմ կ'ըսուի, (իրեն Դաւիթի տունէն ու ազգատոհմէն ըլլալուն համար,) 5 – Աշխարհագիրը մնելու Մարիամի հետ մէկտեղ, որ իր նշանածն էր, և յղի էր։ 6 – Ու եղաւ որ երբ անոնք հոն էին, անոր ծնանելու օրերը լեցուեցան։ 7 – Եւ իր անդրանիկ որդին ծնաւ, ու խանձարուրով փաթթեց և գանիկա մնուրին մէջ պառկեցուց, վասն զի իջևանին մէջ իրենց տեղ չկար։

8 – Եւ այն տեղը հովիւներ կային գաշտի մէջ կեցած, որոնք իրենց հօտերուն գիշերապահութիւնը կ'ընէին։ 9 – Եւ ահա Տէրոջը հրեշտակը անոնց վրայ իջաւ, ու Տէրոջը փառքը անոնց բոլորտիքը ծագեցաւ. ու խիստ շատ վախցան։ 10 – Եւ հրեշտակը բսաւ անոնց, Մի վախնաք, վասն զի ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու տամ՝ որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ. 11 – Վասն զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է։ 12 – Եւ այս ձեզի նշան մը ըլլայ. մնուկ մը պիտի գտնէք խանձարուրով փաթթուած ու մնուրի մէջ պառկած։ 13 – Եւ իսկոյն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք գԱստուած կ'օրհնէին ու կ'ըսէին, 14 – Եղէ՛ն բարձրութեան մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն։ 15 – Ու եղաւ որ երբ հրեշտակները անոնցմէ երկինք վերցան, հովիւները իրարու բսին, Եկէք մինչև Բեթլէհէմ երթանք, ու տեսնենք թէ ի՞նչ է այս եղած բանը, զոր Տէրը մեզի ցուցուց։ 16 – Ու եկան արտորնօք, և գտան Մարիամը ու Յովսէփը և մնուրին մէջ պառկած մնուկը։ 17 – Ու երբ տեսան, իմացուցին այն խօսքին վրայով որ այս մնուկին համար իրենց ըրուցուեցաւ։ 18 – Եւ ամէնը որ կը լսէին, կը զարմանային այն բաներուն վրայ զորոնք հովիւները իրենց կը ըրուցէին։ 19 – Բայց Մարիամ այս ամէն բաները կը պահէր, ու իր սրտին մէջ կը մտածէր։ 20 – Եւ հովիւները գարձան, կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած այն ամէն բաներուն համար զորոնք լսեցին ու տեսան, ինչպես իրենց ըրուցուած էր։

21 – Ու երբ ութ օրերը լմնան եղան *մնուկը թլփատելու, անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ հրեշտակին կոչուած էր՝ դեռ ինք †ծոց որովայնին մէջ չդտցած։

22 – Ու Մովսէսի օրէնքին համեմատ երբ †անոնց մաքրութեան օրերը լմնային, Երուսաղէմ տարին զանիկա Տէրոջը առջև հանելու, 23 – (Ինչպես գրուած է Տէրոջը օրէնքին մէջ, թէ Ամէն արու որ արգանդ կը բանայ՝ Տէրոջը սուրբ ըսուի,) 24 – Ու Տէրոջը օրէնքին մէջ ըսուածին պէս ընծայ տալու՝ զոյգ մը տատրակ կամ աղաւնիի երկու ձագ։ 25 – Եւ ահա Երուսաղէմի մէջ մարդ մը կար, որուն անունը Սիմէօն էր, ու այն մարդը արդար ու աստուածավախ էր, և Իսրայէլի մխիթարութեանը կը սպասէր. ու Սուրբ Հոգին անոր վրայ էր։ 26 – Եւ անոր յայտնուած էր Սուրբ Հոգիին թէ մինչ պիտի չտեսնէ, մինչև Տէրոջը Օծեալը տեսնէ։ 27 – Եւ Հոգիով տաճարը եկաւ։ ու երբ ծնողքը բերին Յիսուս մանուկը, որպէս զի օրէնքին սովորութեանը պէս անոր համար ընեն, 28 – Ինք ալ զանիկա իր գիրկը առաւ, և օրհնեց զԱստուած ու բսաւ, 29-Այ Տիմա, ով Տէր, արձակեա քու ծառադ խաղաղութիւնով քու խօսքիդ համեմատ. 30 – Վասն զի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ, 31 – Զոր բոլոր ժողովուրդներուն առջև պատրաստեցիր, 32 – Լոյս մը հեթանոսները լուսաւորելու, և փառք քու Իսրայէլ ժողովուրդիդ։ 33 – Եւ Յովսէփ ու անոր մայրը զարմացած էին այն բաներուն վրայ՝ որոնք անոր համար կը խօսուէին։ 34 – Ու Սիմէօն օրհնեց զանոնք, և անոր մօրը Մարիամի բսաւ, Ահա այս հաստատ Իսրայէլի մէջ շատ մարդոց կ'ինալուն ու կ'ելլելուն համար, ու հակառակութեան նպատակ մը ըլլալու համար կեցած է. 35 – (Եւ քու սրտիդ ալ թուր մը պիտի անցնի.) որպէս զի շատ սիրտերէ խորհուրդները յայտնուին։

36 – Եւ հոն էր Աննա մարգարէն, Փանուէլի աղջիկը, Ասերի ցեղէն. ան արդէն իր օրերը շատ անցուցած էր, երկանը հետ եօթը տարի կենալով իր կուսութեան ժամանակէն, 37 – Եւ որբևայրի էր դեռեւ ութսունչորս տարուան, որ տաճարէն չէր դառներ, հապա ծոմով և աղօթքով Աստուծոյ ծառայութիւն կ'ընէր գիշեր ու ցերեկ։ 38 – Եւ ասկի նոյն ժամուն եկաւ, ու Տէրոջը դոհութիւն կուտար, ու անոր վրայով կը խօսէր այն ամէնուն՝ որոնք Երուսաղէմի մէջ փրկութեան կը սպասէին։

39 – Ու երբ ամէն բան կատարեցին Տէրոջը օրէնքին համեմատ, նորէն Գալիլեա գարձան իրենց Նազարէթ քաղաքը։ 40 – Եւ մանուկը կը մեծնար ու հզօրանալ կը զօրանար իմաստութիւնով լեցուած, ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր։

41 – Եւ անոր ծնողքը ամէն տարի զատկի տօնին Երուսաղէմ կ'երթային։ 42 – Ու երբ տասներկու տարեկան եղաւ, տօնին սովորութեանը պէս երբ անոնք Երուսաղէմ էլան, 43 – Եւ երբ այն օրերը լմնցուցին ու նորէն եան գարձան, Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց. և Յովսէփ ու անոր մայրը չէին գիտեր. 44 – Հապա կարծելով թէ անիկա ճամբորդներուն հետ է, մէկ օրուան ճամբայ գացին, ու կը փնտռէին զանիկա էբէնց ազգականներուն և ճանչուորներուն մէջ։ 45 – Ու երբ չգտան, նորէն Երուսաղէմ գարձան զանիկա փնտռելու։ 46 – Ու եղաւ որ երեք օրէն հաքը տաճարին մէջ գտան զանիկա, որ վարդապետներուն հետ նստեր էր, անոնց մնիկ կ'ընէր ու անոնց բան կը հարցընէր։ 47 – Եւ ամէն անոր ականջ դնողները կը զարմնային անոր իմաստութեանը ու պատասխաններուն վրայ։ 48 – Ու երբ տեսան զանիկա, ապշած մնացին. և անոր մայրը բսաւ անոր, Որդեակ, ինչո՞ւ համար մեզի այդպես ըրիր. ահա քու հայրդ ու ես խիստ վշտացած քեզ կը փնտռէինք, 49 – Եւ բսաւ անոնց, Ձիս ինչո՞ւ կը փնտռէիք. չէի՞ք գիտեր թէ ինծի պէտք է որ իմ Հօրս *տունը ըլլամ։ 50 – Եւ անոնք չհասկցան այն խօսքը զոր իրենց ըրուցի։ 51 – Եւ իջաւ անոնց հետ ու գնաց Նազարէթ, և անոնց հնազանդ էր. բայց անոր մայրը այս ամէն խօսքերը իր սրտին մէջ կը պահէր։

52 – Եւ Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք էբ-նէլ։

## Գլ. Գ

Տիբերիոս կայսրին թագաւորութեան տասնըհինգերորդ տարին, Պոնտոսի Պիղատոսի Հրէաստանի վրայ կուսակալութիւն ըրած առենը, ու Հերովդէսի Գալիլեացւոց վրայ չորրորդապետութեան առենը, և անոր եղբօրը Փիլիպպոսի Իտուրացւոց և Տրաքոնացւոց երկրին վրայ չորրորդապետութեան առենը, և Լիսանիայի Աբիլինացւոց վրայ չորրորդապետութեան առենը, 2 – Եւ Աննայի ու Կայիափայի քահանայապետութեան առենը Աստուծոյ խօսքը եղաւ Զաքարիայի որդւոյն Յովհաննէսի վրայ անապատին մէջ։ 3 – Ու անիկա եկաւ Յորդանանի բոլոր կողմերը, և ա-

*Կամ, տոքնէրուն մէջ

*Մանուկ, զանիկա †Մանուկ, անոր

պաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր մեղքերու թողութեան համար. 4 – Ինչպէս Եսայի մարգարէին խօսքերուն գիրքին մէջ գրուած է՝ ըսելով, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները չիակեցէք. 5 – Ամէն ձոր պիտի լեցուի, և ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, և ծուռը պիտի շիտկուի, ու խորտուբորտ տեղերը հարթ ճամբաներ պիտի ըլլան։ 6 – Եւ ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի տեսնէ։

7 – Ու իրմէ մկրտուելու եկող ժողովուրդներուն բսաւ, Խժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենէն փախչիլ։ 8 – Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղներ բերէք, և մի սկսիք ձեր ներսիդին ըսել թէ Մենք մեզի հայր՝ Աբրահամ ունինք, քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ հանել։ 9 – Այ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը գրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէր, կը կարուի ու կրակը կը ձգուի։ 10 – Եւ ժողովուրդները կը հարցնէին իրեն ու կ'ըսէին, Ուրեմն ի՞նչ ընենք։ 11 – Պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Ով որ երկու հանգերձ ունի, թող չունեցողին տայ. և ով որ կերակուր ունի, նոյնպես ընէ։ 12 – Մաքսաւորներ ալ եկան մկրտուելու, ու բսին անոր, Վարդապետ, մենք ի՞նչ ընենք։ 13 – Ան ալ բսաւ անոնց, Ձեզի հրամայուածէն աւելի բան չպահանջէք։ 14 – Զինուորներն ալ կը հարցնէին անոր ու կ'ըսէին, Եւ մենք ի՞նչ ընենք. բսաւ անոնց, Մէ՛կը մի հարստահարէք. և *սգբո՛ – վաշ զրպարտութիւն մի ընէք, ու ձեր թոշակով բաւականացէք։

15 – Երբ ժողովուրդը կը սպասէր, և ամէնը իրենց սիրտերուն մէջ կը մտածէին Յովհաննէսի համար՝ թէ միա՞ն է արդեօք Քրիստոսը, 16 – Յովհաննէս պատասխան տուաւ ամէնուն ու բսաւ, Ես ձեզ ջրով կը մկրտեմ, բայց ինծմէ աւելի զօրաւորը կու գայ, որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ, անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով և կրակով. 17 – Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, ու ցորենը իր ամբարը պիտի ժողվէ, և յարդը չմարող կրակով պիտի այրէ։ 18 – Ուրիշ շատ բաներ ալ կը քարոզէր՝ ժողովուրդը յորդորելով։

19 – Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ յանդիմանուելով իր *եղբօր կնոջ՝ Հերովդիայի, համար, և բոլոր չարութիւններուն համար, զորոնք Հերովդէս գործեց, 20 – Ան ամէնուն վրայ ալ աւելցուց, որ Յովհաննէսը բանտի մէջ գոցեց։

21 – Ու երբ մկրտուեցաւ բոլոր ժողովուրդը, և Յիսուս ալ մկրտուելով աղօթք կ'ընէր, երկինք բացուեցաւ, 22 – Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երեւութով աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու երկինքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր, Դուն ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ։

23 – Եւ ինքն Յիսուս սկսեր էր գրեթէ երեսուն տարեկան ըլլալ, որ (ինչպես կը կարծուէր) որդին էր Յովսէփի, որ Հեզիի, որ Մատաթի, 24 – Որ Ղեւիի, որ Մելգիի, որ Յաննէի, որ Յովսէփի, 25 – Որ Մատաթիայի, որ Ամովսի, որ Նաւմի, որ Եսղիի, որ Նագգէի, 26 – Որ Մաաթի, որ Մատաթիայի, որ Սեմէիի, որ Յովսէփի, որ Յուդայի, 27 – Որ Յովհաննայի, որ Ռեսայի, որ Զօրաբաբէլի, որ Սալաթիէլի, որ Ներիի, 28 – Որ Մելգիի, որ Ադդիի, որ Կոսամի, որ Եղմադադի, որ Երի, 29 – Որ Յովսէի, որ Եղիազարի, որ Յորիմի, որ Մատաթի, որ Ղեւիի, 30 – Որ Սեմէոնի, որ Յուդայի, որ Յովսէփի, որ Յոնէնի, որ Եղիակիմի, 31 – Որ Մելեայի, որ Մայնանի, որ Մատաթիայի, որ Նաթանի, որ Դաւիթի, 32 – Որ Յեսսէի, որ Ովբէթի, որ Բոոսի, որ Սաղմոնի, որ Նաասոնի, 33 – Որ Ամինադաբի, որ Արամի, որ Եսրոնի, որ Փարէսի, որ Յուդայի, 34 – Որ Յակոբի, որ Իսահակի, որ Աբրահամի, որ Թարայի, որ Նաքորի, 35 – Որ Սերուգի, որ Ռագաւի, որ Փաղէկի, որ Եբերի, որ Սաղայի, 36 – Որ Կայնանի, որ Արփաքսադի, որ Սեմի, որ Նոյի, որ Ղամէքի, 37 – Որ Մաթուսաղայի, որ Ենովքի, որ Յարեդի, որ Մաղաղիէլի, որ Կայնանի, 38 – Որ Ենովսի, որ Սէթի, որ Ադամի, որ Աստուծոյ։

*Ոմն, եղբօր Փիլիպպոսի



## Գ.Ղ. Դ

Եւ Յիսուս Հոգւով Սրբով լեցուած Յորդանանէ դարձաւ, ու Հոգին անապատը տարուեցաւ, 2 – Եւ քառասուն օր Սատանայէ փորձուեցաւ. ու այն օրերը բան մը չկերաւ, և այն օրերուն լմննալէն ետև անօթեցաւ։

3 – Ու Սատանայ բսաւ անոր, Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ այդ քարին որ հաց ըլլայ։ 4 – Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր ու բսաւ, Գրուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա Աստուծոյ ամէն խօսքովը։

5 – Եւ Սատանայ բարձր լեռ մը հանելով զանիկա, աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր վայրկեանի մը մէջ։ 6 – Եւ Սատանայ բսաւ անոր, Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ, վասն զի ինծի յանձնուած է, և որուն ուզեմ՝ կու տամ զանիկա։ 7 – Ուստի եթէ դուն իմ առջևս երկրպագութիւն ընես, ամէնը քեզի ըլլայ։ 8 – Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր ու բսաւ, *Գրուած է թէ Քու Տէր Աստուածդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես։

9 – Եւ զանիկա տարաւ Երուսաղէմ ու տաճարին աշտարակին վրայ կայնեցուց, ու բսաւ անոր, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ականէ վար ձգէ. 10 – Վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի պապակէ քեզի համար որ քեզ պահեն. 11 – Ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես. 12 – Եւ Յիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Ըսուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես։ 13 – Ու երբ Սատանայ ամէն փորձութիւնը կատարեց, տակն մը եղաւ անկէ։

14 – Եւ Յիսուս Հոգիին զօրութիւնովը Գալիլեա դարձաւ, ու անոր համբաւը այն գաւառին ամէն կողմերը տարածուեցաւ։ 15 – Եւ ինք անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր, ու ամէնն կը փառաւորուէր։

16 – Ու եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու ելաւ որ կարդայ։ 17 – Եւ տուին անոր Եսայի մարգարէին գիրքը. ու երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր, 18 – Տէրոջը Հոգին իմ վրաս է. *վասն զի զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս ղրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, 19 – Գերիներուն ազատութիւն և կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարբուհարածութիւն կրողները ազատ թողտալու, Տէրոջը ընդունելի տարին քարոզելու։ 20 – Եւ գիրքը գոցելով տուաւ սպասաւորին ու նստաւ. և ժողովարանը եղողներուն ամէնը աչքերնին անոր կը նայէին։ 21 – Եւ սկսաւ անոնց ըսել, Այսօր այս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին։ 22 – Եւ ամէնը անոր վրայ կը վկայէին, ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, ու կ'ըսէին, Ասիկա Յովսէփի որդին չէ՞։ 23 – Եւ բսաւ անոնց, Իրաւ որ դուք ինծի պիտի ըսէք այս առակը, Բժիշկ, քու անձդ բժշկէ. որչափ բաներ լսեցինք որ Կափառնայումի մէջ եղան, հա ալ ըրէ քու քաղաքիդ մէջ։ 24 – Եւ բսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ։ 25 – Եւ արդարև կ'ըսեմ ձեզի, թէ Շատ որբևարիներ կային Եղիայի օրերը Իսրայէլի մէջ, երբ երեք տարի ու վեց ամիս երկինք գոցուեցաւ, այնպէս որ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ. 26 – Բայց Եղիա անոնցմէ մէկուն չղրկուեցաւ, հապա միայն Սիդոնացւոց Սարեփթա քաղաքին մէջ որբևարի կնոջ մը։ 27 – Եւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, ու անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, հապա միայն Նեեման Ասորի։ 28 – Եւ ժողովարանին մէջ ամէնն ալ բարկութիւնով լեցուեցան՝ երբ այս խօսքերը լսեցին. 29 – Ու ելան զանիկա քաղաքէն դուրս հանեցին, ու սարին գանիկա մինչև այն լեռանը ցցուած ծայրը, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր, որպէս զի զանիկա բարձր տեղէն վար ձգեն։ 30 – Բայց ինք անոնց մէջէն անցաւ գնաց։

31 – Եւ իջաւ Գալիլեայի Կափառնայում քաղաքը, ու շաբաթ օրերը

*Ոմն, եւթս գնա, Սատանայ, վասն զի գրուած

*Կամ, անոր համար

կը սորվեցնէր անոնց։ 32 – Եւ կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւնով էր անոր խօսքը։ 33 – Եւ ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ դեւի ոգի ունէր, ու մեծ ձայնով մը աղաղակեց՝ 34 – Ըսելով, Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազովրեցի. մի՞թէ մեզ կորնչեցնելո՞ւ եկար. գիտեմ քեզ ով ես. Աստուծոյ Սուրբը։ 35 – Եւ Յիսուս սաստեց անոր՝ ըսելով, Պապանձէ ու ել անկէ. ու դեւը զանիկա ներսիս տ֊ոնոնելէն մէջտեղը գետինը զարկաւ, և ելաւ անկէ, ու ձեռս մը չտուաւ անոր։ 36 – Եւ զարմանք եկաւ ամէնուն վրայ, և իրարու հետ կը խօսէին ու կ'ըսէին, Այս ինչ խօսք է, որ իշխանութիւնով և զօրութիւնով կը հրամայէ պիղծ ոգիներուն, ու կ'ելլեն։ 37 – Եւ անոր համբաւը տարածուեցաւ շրջակայ գաւառին ամէն տեղերը։

38 – Ու ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի տունը մտաւ։ 39 – Սիմոնի զօքանչն ալ սաստիկ ջերմով կը տանջուէր, ու անոր համար աղաչեցին իրեն։ 40 – Եւ Յ֊ոնոնո անոր վրայ կայնելով՝ սաստեց ջերմին, որ թողուց զանիկա. և շուտ մը ելաւ ու անոնց պատասխանութիւն կ'ընէր։

41 – Եւ արեւին մտած ատենը՝ ամէն անոնք որ ունէին տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ, իրեն բերին զանոնք. ինք ալ անոնցմէ ամէն մէկուն վրայ ձեռք դնելով՝ բժշկեց զանոնք։ 42 – Դեւեր ալ կ'ելլէին շատերէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին թէ Դուն ես Բրիստոս, Աստուծոյ Որդին. և ինք կը սաստէր ու թող չէր տար անոնց որ խօսին, վասն զի գիտէին թէ ինք Բրիստոսն է։

43 – Ու երբ ցորեկ եղաւ, ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և ժողովուրդները կը փնտռէին զանիկա. եկան մինչև անոր, ու կը սպիպէին զանիկա որ իրենցմէ չ'երթայ. 44 – Բայց անիկա ըսաւ անոնց, Պէտք է ինծի որ ուրիշ քաղաքներու ալ Աստուծոյ թագաւորութիւնը քարոզեմ, քանզի ա՛յս բանին համար դրկուած եմ։ 45 – Ու Գալիլեայի ժողովարաններուն մէջ կը քարոզէր։

## Գլ. Ե

Ու եղաւ որ երբ ժողովուրդը անոր բոլորտիքը դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար, ինք ալ Գեննեսարեթի ծովակին քով կեցեր էր։ 2 – Ու տեսաւ երկու նաւեր որոնք ծովակին քով կեցեր էին, և ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուռկանները կը լուային։ 3 – Ինք այն նաւերէն մէկուն մէջ մտաւ որ Սիմոնին էր, և աղաչեց անոր որ քիչ մը ցամաքէն դ֊ոնոնո մէջ տանի. և նստելով՝ նաւուն մէջէն ժողովուրդներուն կը սորվեցնէր։

4 – Ու երբ խօսելէն դադարեցաւ, ըսաւ Սիմոնի, Աւազ տար Նո֊ը դէպ ի խորունկը, և ուռկանները իջեցէք ձ֊ոնոնո որսալու։ 5 – Եւ Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ անոր, Վարդապետ, բոլոր գիշերս աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուռկանը ձգեմ։ 6 – Ու երբ զայս ըրին, խիստ շատ ձուկեր ժողվեցին մէջը, ու իրենց ուռկանը կը պատռուէր։ 7 – Եւ ա֊չք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց. և եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, մինչև որ ընկղմելու մօտ եղան։ 8 – Սիմոն Պետրոս երբ տեսաւ, Յիսուսի ծունկերուն ինկաւ ու ըսաւ, Տէր, իմ՝ քովէս մեկնի գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ։ 9 – Վասն զի ապշութիւնը պատեց զանիկա և անոր հետ եղող ամէնը՝ այն իրենց բռնած ձուկերուն որսին համար. 10 – Նոյնպէս ալ Զեբեդեոսի որդիները, Յ֊ոնոնոս և Յ֊ոնաննէս, որոնք Սիմոնի ընկերներն էին. ու Յիսուս ըսաւ Սիմոնի, Մի վախնար, ասկէ ետև մարդոց որսորդ պիտի ըլլաս։ 11 – Եւ նաւերը ցամաքը հանելով՝ ամէն բան թողուցին ու անոր ետևէն գացին։

12 – Ու եղաւ որ երբ ինք քաղաքի մը մէջ էր, ա֊ա մարդ մը բորոտութիւնով լեցուն՝ երբ Յիսուսը տեսաւ, երեսի վրայ իյնալով աղաչեց անոր ու ըսաւ, Տէր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել։ 13 – Եւ Յ֊ոնոնո իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր, ու ըսաւ, Կ'ուզեմ՝ մաքրուէ. և շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց։ 14 – Ու ինք պատուիրեց անոր որ մարդո՛ւ չըսէ, հապա, ըսաւ, գնա՛, ցոյց քեզ քահանային ցուցուր, և Մովսէսի պատուիրածին պէս քու մաքրուելուդ ընծան տուր, անոնց վկայութիւն ըլլալու համար։ 15 – Եւ անոր վրայով խօսքը աւելի կը տարածուէր ու շատ ժողովուրդներ կը ժողվուէին մտիկ ընելու, և անով իրենց հիւանդութիւններէն բժշկուելու։ 16 – Ու ինք անապատ տեղեր կը քաշուէր և աղօթք կ'ընէր։

17 – Ու եղաւ որ օր մը ինք կը սորվեցնէր, ու փարիսեցիներ և օրինաց վարդապետներ նստած էին, որոնք Գալիլեայէ ու Հրէաստանի ու Երուսաղէմի բոլոր գիւղաքաղաքներէն ժողվուած էին. ու Տէրոջը զօրութիւնը ներսիս էր զանոնք բժշկելու։ 18 – Եւ ա֊ա քանի մը մարդիկ անդամալոյծ մարդ մը մահիճովը բերին, և ջնորը կը փնտռէին թէ ի՛նչպէս զանիկան ներս խոթեն ու դնեն անոր առջև։ 19 – Ու երբ բազմութենէն ճա֊բայ չէին գտներ՝ որ անկէ ներս խոթեն զանիկա, տանիքին վրայ ելան, և զանիկա կղմինտրներուն մէջէն մահիճովը մէջտեղը Յիսուսի առջև իջեցուցին։ 20 – Եւ անիկա տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անոր, Ով մարդ, քու մեղքերդ քեզի ներուած են։ 21 – Եւ դպիրները ու փարիսեցիները սկսան խորհիլ ու ըսել, Ո՞վ է ասիկա՝ որ հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ 22 – Եւ Յիսուս իմանալով անոնց խորհուրդները՝ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Սիրտերնուդ մէջ ի՞նչ կը խորհիք։ 23 – Ո՞րը աւելի դիւրին է, Քու մեղքերդ քեզի ներուած են՝ ըսե֊լը, թէ ելիր ու քալէ՝ ըսելը։ 24 – Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ անդամալոյծին,) Քեզի կ'ըսեմ՝ ելիր մահիճդ առ ու տունդ գնա։ 25 – Ան ալ իսկոյն անոնց առջև ելաւ, ու վրան առաւ ինչ բանի վրայ որ պառկած էր, և գնաց իր տունը, ու Աստուծոյ փառք կու տար։ 26 – Եւ ամէնը զարմանք մնացին, ու Աստուծոյ փառք կու տային, և վախով լեցուած՝ կ'ըսէին թէ Այսօր նորանշան բաներ տեսանք։

27 – Եւ այս բաներէն ետև ելաւ անկէ, ու տեսաւ մաքսաւոր մը, որուն անունը Ղեւի էր որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Եւ ա֊ե֊կու։ 28 – Ան ալ թողուց ամէնը և ելաւ ետևէն։ 29 – Ու Ղեւի անոր մեծ կոչունք մը ըրաւ իր տանը մէջ. և շատ բազմութիւն կար մաքսաւորներու և ուրիշներու՝ որ անոնց հետ սեղան նստեր էին։ 30 – Եւ անոնց դպիրները ու փարիսեցիները սկսան տրտնջալ կ'ընէին անոր աշակերտներուն ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն և մեղաւորներու հետ կ'ուտէք ու կը խմէք։ 31 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն. 32 – Ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները՝ ապաշխարութեան։

33 – Անոնք ալ ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն և աղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցիներուն ա֊լէ֊ր֊ն֊ե֊ը. և քուկիներդ կ'ուտեն ու կը խմեն։ 34 – Անիկա ալ ըսաւ անոնց, Կրնա՞ք հարսնիքին աղոյը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց հետ է։ 35 – Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ապա այն օրերը ծոմ պիտի պահեն։ 36 – Առակ մըն ալ ըսաւ անոնց, Թէ Մէկը չէգեր նոր լաթէն կտոր հին հանդերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը պատռուածք ալ կ'ընէ, ու հինցածին հետ ալ չի֊պատանը այն նոր լ֊ր֊ն֊ե֊ն եղած կտորը։ 37 – Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ չդներ. եթէ ոչ՝ նոր գինին *տիկերը կը պատռէ, ինք կը թափի ու տիկերը կը կորսուին. 38 – Հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է, ու երկուքն ալ կը պահուին։ 39 – Եւ մէկը հին չ֊է֊ն֊ի֊ն խմելէն եւս անմիջապէս նորը չ֊ու֊զ֊ե֊ր, քանզի կ'ըսէ թէ Հինը աւելի ախորժելի է։

## Գլ. Զ

Ու եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը ինք արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները ցո֊ր֊ե֊ն֊ե֊ր֊ն֊ձ֊ե֊ն֊ձ֊ե֊ն֊ձ֊ե

անոնց բաւ, Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք և անոնք որ իրեն հետ էին, 4 – Ինչպէս անիկա Աստուծոյ տունը մտաւ, և առաջաւորութեան հացերը առաւ ու կերաւ, և առաւ անոնց ալ որ իրեն հետ էին. զորոնք Քրմա՛ – օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն։ 5 – Եւ բաւ անոնց, Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է։

6 – Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինք ժողովարանը մտաւ ու կը սորվեցնէր. և հոն մարդ մը կար որուն աջ ձեռքը չորցած էր։ 7 – Եւ գպիրները ու փարիսեցիները անոր կը սպասէին՝ թէ շաբաթ օրը չէ՞ կը բժշկէ՞, որպէս զի ամբաստանութեան առի՛ն մը գտնեն անոր դէմ։ 8 – Իսկ ինք գիտնալով անոնց խորհուրդները, բաւ այն մարդուն որուն ձեռքը չորցած էր, Ելիր, մէջտեղը կայնէ. ան ալ ելաւ կայնեցաւ։ 9 – Ա՛ն ատեն Յիսուս բաւ անոնց, Ձեզի բա՛ն մը հարցնեմ։ Շաբաթ օրը լա՞ւ արժան է. բարի՞ը ընել թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնե՞լ թէ մեռցնել։ 10 – Եւ շրջանակի ամէնուն վրայ նայելով՝ բաւ անոր, Ձեռքդ երկնցուր. ան ալ այնպէս ըրաւ, ու անոր ձեռքը ողջացաւ միւսին պէս։ 11 – Եւ անոնք կատաղութեամբ լեցուեցան, ու իրարու հետ կը խօսէին թէ ի՞նչ ընեն Յիսուսի։

12 – Ու եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ընելու, ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով անցուց։ 13 – Ու երբ առտու եղաւ, կանչեց իր աշակերտները, ու անոնցմէ տասներկու հոգի ընտրեց, զորոնք առաքեալ ալ անուանեց. 14 – Սիմո՛նը՝ զոր Պետրոս ալ անուանեց, և անոր եղբայրը Անդրէասը, Յակոբոսը ու Յովհաննէսը, 15 – Փիլիպպոսը և Բարթողոմէոսը, Մատթէոսը և Թովմասը, Ալփէոսեան Յակոբոսը և Նախանձայոյզ բաւած Սիմոնը, 16 – Յակոբոսի եղբա՛յրը Յուդան, և Իսկարիովտացի Յուդան, որ և մատնիչ եղաւ։ 17 – Եւ անոնց հետ իջնելով՝ տափարակ տեղ մը կայնեցաւ, նաև իր աշակերտներուն ժողովը՝ ու մեծ բազմութիւն մը ժողովուրդներու՝ բոլոր Հրէաստանէ ու Երուսաղէմէ և Տիւրոսի ու Սիդոնի ծովեզերքէն. 18 – Որոնք եկան անոր խօսիլը մտիկ ընելու, ու իրենց հիւանդութիւններէն բժշկուելու. և պիղծ ոգիներէն նեղութիւն կրողներն ալ էին ու կը բժշկուէին։ 19 – Եւ բոլոր ժողովուրդը կ'ուզէր իրեն դպչիլ, վասն զի զօրութիւն կ'ելլէր իրմէ ու ամէնը կը բժշկէր։

20 – Եւ ինք իր աչքերը դէպ իր աշակերտները վերցուց ու բաւ, Երանի՛ չէք աղքատներուդ, վասն զի ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը։ 21 – Երանի՛ չէք որ հիմա անօթի էք, վասն զի պիտի կշտանաք. երանի՛ չէք որ հիմա կուլայք, վասն զի պիտի խնդաք։ 22 – Երանի՛ է ձեզի՝ երբ մարդիկ ձեզ ատեն, ու երբ ձեզ էրէնց ընէ՛ր – ըՒՆԵՆ մերժեն ու նախատեն, և ձեր վրայով գէշանուն հանեն Որդւոյ մարդոյ պատճառաւ։ 23 – Ուրախ եղէք դուք այն օրը ու ցնծացէք, որ ա՛յս ձեր վարձքը շատ է երկինքը. վասն զի իրենց հայրերը այդպէս կ'ընէին մարգարէներուն։ 24 – Բայց վա՛յ ձեզի հարուստներուդ, վասն զի ձեր մխիթարութիւնը առած էք։ 25 – Վա՛յ ձեզի որ կուշտ էք, վասն զի պիտի անօթենաք. վա՛յ ձեզի որ հիմա կը ծիծաղիք, վասն զի սուգ պիտի ընէք ու լա՛ք։ 26 – Վա՛յ ձեզի երբ *մարդիկ ձեր վրայով աղէկ խօսին, վասն զի իրենց հայրերը այդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն։

27 – Բայց կ'ըսե՛մ ձեզի որ մտիկ կ'ընէք, Սիրեցէք ձեր թշնամիները, ձեզ ատողներուն բարի ըրէք։ 28 – Ձեզ անիծողները օրհնեցէք, ձեզի նեղութիւն տուողներուն համար աղօթք ըրէք։ 29 – Ան որ քու մէկ ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ մօտեցուր անոր. և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ, մի արգիլեր անկէ շապիկդ ալ։ 30 – Ա՛յն ամէնուն որ քեզմէ կ'ուզե՛ տուր, ու քու բաներդ առնողէն պահանջ մի պահանջեր։ 31 – Եւ ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք։ 32 – Եւ եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները։ 33 – Եւ եթէ դուք ձեզի բարի ընողներուն բարի ընէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն։ 34 – Եւ եթէ այնպիսի մարդոց փոխ տաք՝ որոնցմէ յոյս ունէք

*Ո՛ահ, բոլոր մարդիկ



առնելու, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան, որպէս զի նոյն չափով ետ առնեն։ 35 – Հապա սիրեցէք ձեր թշնամիները, ու բարի ըրէք, և փոխ տուէք առանց փոխարէնի մի սպասելու, և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ, ու Բարձրեալին որդիները պիտի ըլլաք. վասն զի անիկա բարերար է ապերախտներուն ու չարերուն։ 36 – Ուրեմն գթած եղէք, ինչպէս ձեր Հայրն ալ գթած է։ 37 – Մի դատէք, ու պիտի չդատուիք. մի դատապարտէք, ու պիտի չդատապարտուիք. ներեցէք, ու ձեզի պիտի ներուի. 38 – Տուէք, ու ձեզի պիտի տրուի. սղէկ չափով, կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը. քանզի ան չափովը որով դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի։

39 – Առակ մըն ալ բաւ անոնց, Միթէ կոյրը կուրին կրնա՞յ առաջնորդութիւն ընել. չէ՞ որ երկուքն ալ փոսը պիտի իյնան։ 40 – Աշակերտը իր վարդապետէն մեծ չէ, բայց ամէն կատարելապէս վարժուածը իր վարդապետին պէս կ'ըլլայ։

41 – Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր։ 42 – Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Եղբայր, թո՛ղ տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ։ և դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ. կեղծաւոր, առաջ քու աչքիդ գերանը հանէ, ու ետքը պարզ պիտի տեսնես քու եղբօրդ աչքին մէջի շիւղը հանելու։ 43 – Քանզի չկայ բարի ծառ մը որ չար պտուղ բերէ, ալ չկայ ծառ մը որ բարի պտուղ բերէ. 44 – Վասն զի ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի. քանզի փուշերէն թուզ չեն քաղեր, ու մէրճերէն խաղող չեն ժողվեր։ 45 – Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարութիւն կը բղխե, և չար մարդը իր սրտին չար գանձէն չարութիւն կը բղխե. վասն զի իր բերանը սրտին առատութենէն կը խօսի։

46 – Եւ ինչո՞ւ զիս Տէր, Տէր, կը կոչէք, ու բաած բաներս չէք կատարեր։ 47 – Ա՛յն ամէնը որ ինծի կու գայ և իմ խօսքերս կը լսէ ու զանոնք կը կատարէ, ձեզի ցուցնեմ թէ որո՛ւ կը նմանի։ 48 – Անիկա տուն շինող մարդու կը նմանի, որ փորեց ու խորընկուզց, ու հիմը վէմի վրայ դրաւ. և ջուրերուն յորդած ատենը գետը զարկաւ այն տանը, ու չկրցաւ զանիկա շարժել, վասն զի վէմի վրայ հաստատած էր։ 49 – Բայց ան որ էմ Խօսէ՛ր կը լսէ ու չկատարեր, կը նմանի այն մարդուն՝ որ հողի վրայ առանց հիմի տուն կը շինէ. որուն գետը զարկաւ, և շուտ մը փլաւ, ու այն տանը կործանումը մեծ էր։

## Գլ. Է

Ու երբ իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն Խօսէ՛ր լմնցուց, մտաւ Կափառնայումի։ 2 – Եւ հարիւրապետի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր անոր։ 3 – Երբ Յիսուսի վրայով լսեց, Հրեաներէն Խո՛ր մը ծերեր ղրկելով՝ աղաչեց անոր որ գայ իր ծառան ապրեցնէ։ 4 – Անոնք ալ եկան Յիսուսի և թախանձանքով կ'աղաչէին անոր ու կ'ըսէին թէ Անիկա արժանի է՝ որու այս ընե՛րձը պիտի ընես. 5 – Վասն զի մեր ազգը կը սիրէ, ու ժողովարանը անիկա շինեց մեզի։ 6 – Եւ Յիսուս անոնց հետ գնաց. երբ տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը ղրկեց անոր Խո՛ր մը բարեկամներ, ու բաւ անոր, Տէր, մի յոգնիր, վասն զի ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ մտնես. 7 – Անոր համար ես ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու. հապա խօսքով ղրկե՛ւ, և իմ ծառաս պիտի բժշկուի։ 8 – Վասն զի ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ մըն եմ, ու իմ հրա՛մանս տակ զինուորներ ունեմ։ և տասը կ'ըսեմ՝ Գնա՛, ու կ'երթայ. և միւսին՝ Թէ եկուր, ու կու գայ. և ծառայիս՝ Թէ Ա՛յս բանը ըրէ, ու կ'ընէ։ 9 – Յիսուս այս բաները լսելով՝ զարմացաւ անոր վրայ. և իր հետևէն գացող ժողովուրդին դարձաւ ու բաւ, Ձեզի կ'ըսեմ՝ որ Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ։ 10 – Ու պատգամաւորները նորէն տուն դարձան, և հիւանդ ծառան առողջացած գտան։

11 – Ու եղաւ որ հետևեալ օրը քաղաք մը կ'երթար, որուն անունը Նային էր, և անոր հետ կ'երթային իր աշակերտներէն շատերը ու մեծ բազ-

մաԹԻԱՒՆ։ 12 – Ու երբ քաղաքին դրանը մօտեցաւ. ահա մեռել մը դուրս կը հանէին, իր մօրը մէկ հատիկ տղան. և անիկա որբևայրի էր, ու քաղաքին շատ ժողովուրդը անոր հետ էր։ 13 – Եւ Տէրը զանիկա տեսնելով խղճաց անոր վրայ, ու ըսաւ անոր, Մի լար։ 14 – Եւ մօտենալով դպաւ, ու տանողները կանգ առին. և ըսաւ, Ովի պատանի, քեզի կ'ըսեմ, ելիր ։ 15 – Ու մեռելը ելաւ նստաւ, ու սկսաւ խօսիլ. ու առաւ զանիկա իր մօրը։ 16 – Եւ ամէնն ալ վախով բռնուեցան, ու զԱստուած կը փառաւորէին՝ ըսելով Թէ Մեծ մարգարէ մը ելեր է մեր մէջ. և Թէ Աստուած իր ժողովուրդին այցելութիւն բրաւ։ 17 – Եւ այս ձայնը անոր վրայով բոլոր Հրէաստան ելաւ, ու բոլոր շրջակայ տեղերը։

18 – Եւ Յովհաննէսի պատմեցին իր աշակերտները այս ամէն բաներուն վրայով ։ 19 – Յովհաննէս ալ իր աշակերտներէն երկուքը իրեն կանչեց, և ղրկեց՝ ըսելով, Դուն ա՞ն ես որ գալու էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ 20 – Եւ այն մարդիկը եկան անոր ու ըսին, Յովհաննէս մկրտիչը մեզ ղրկեց քեզի, ու կ'ըսէ, Դուն ա՞ն ես որ գալու էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ 21 – Եւ նոյն ժամուն շատերը բժշկեց էբէնց հիւանդութիւններէն ու հարուածներէն և չար ոգիներէն, ու շատ կոյրերու տեսութիւն շնորհեց։ 22 – Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գացէք Յովհաննէսի պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք. որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն, աղքատներուն աւետարան կը քարոզուի։ 23 – Եւ երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր։

24 – Ու երբ Յովհաննէսի ղրկած մարդիկը գացին, Յ[illegible] սկսաւ ժողովուրդներուն ըսել Յովհաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէջ. եղէ՞գ մը հովին շարժուած։ 25 – Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փափուկ հանդերձներ հագած մարդ մը. ահա անոնք որ փառաւոր հագուստներով ու փափկութեան մէջ են, թագաւորական պալատներն են։ 26 – Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞. այո, կ'ըսեմ ձեզի, մարգարէէ մէն ալ աւելի։ 27 – Վասն զի ասիկա է՝ որուն համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ։ 28 – Քանզի կ'ըսեմ ձեզի, կիներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտիչէն մեծ մարգարէ չկայ. սակայն Աստուծոյ թագաւորութեանը մէջ ամէնէն պզտիկը անկէ մեծ է։

29 – Եւ բոլոր ժողովուրդը ու մաքսաւորները երբ լսեցին, արդարացուցին զԱստուած, որ Յովհաննէսի մկրտութիւնով մկրտուեցան։ 30 – Բայց փարիսեցիները և օրինականները իրենց անձին դէմ Աստուծոյ խորհուրդը մերժեցին, և անկէ չմկրտուեցան։

31 – Ուստի որո՞ւ նմանցնեմ այս ազգին մարդիկը, և որո՞ւ կը նմանին։ 32 – Կը նմանին տղոց, որոնք շուկաները նստելով իրարու կը կանչեն ու կ'ըսեն, Փող հնչեցուցինք ձեզի, ու չպարեցիք, ողբ կարդացինք ձեզի, ու չլացիք։ 33 – Վասն զի Յովհաննէս մկրտիչ եկաւ, ոչ հաց կ'ուտէր և ոչ գինի կը խմէր, ու կ'ըսէք, Դեւ կայ անոր ներսիդին։ 34 – Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսէք, Ահա ուտող և որբեցող մարդ մը, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ։ 35 – Եւ իմաստութիւնը արդարացաւ իր բոլոր որդիներէն։

36 – Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր անոր որ իրեն հետ հաց ուտէ. ան ալ փարիսեցիին տունը մտաւ ու սեղան նստաւ։ 37 – Եւ ահա քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ իմացաւ թէ անիկա փարիսեցիին տունը սեղան նստեր է, շիշ մը անուշահոտ իւղ բերաւ. 38 – Ու ետևի կողմէն անոր ոտքերուն քով կեցեր՝ կուլար, և արցունքովը սկսաւ անոր ոտքերը թրջել, ու իր գլխուն մազերովը կը սրբեր, և կը համբուրէր անոր ոտքերը, ու իւղով կ'օծէր։ 39 – Ու երբ տեսաւ փարիսեցին, որ զանիկա հրաւիրեր էր, կ'ըսէր իր միտքին մէջ, Ասիկա եթէ մարգարէ ըլլար, պիտի գիտնար Թէ ո՛վ և ի՞նչպէս կին է իրեն դպչողը, վասն զի մեղաւոր է։ 40 – Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Սիմո՛ն, քեզի բան մը ունիմ ըսելու. ան ալ ըսաւ, Ըսէ, վարդապետ։

41 – Փոխատուող մը երկու պարտականի ունէր, մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ուներ, ու միւսը յիսուն։ 42 – Եւ որովհետև հատուցանելու բան չունէին, երկուքին ալ շնորհեց։ Հիմա ըրուշ, Անոնցմէ որը աւելի պիտի սիրէ զանիկա։ 43 – Պատասխան տուաւ Սիմոն ու ըսաւ, Կ'ենթադրեմ այսպէս կ'երևնայ, Թէ որո՛ւ շատ շնորհեց. ան ալ ըսաւ անոր, Ուղղ դատեցիր։ 44 – Ու դառնալով դէպ ի այն կինը՝ ըսաւ Սիմոնի, Կը տեսնե՞ս այս կինը. ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց այսիկա էր արցունքովը ոտքերս թրջեց, և իր *մազերովը սրբեց։ 45 – Դուն ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկա ես մտնելէս ի վեր ոտքերս համբուրելէն չդադարեցաւ։ 46 – Դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ իւղով օծեց։ 47 – Ասոր համար կ'ըսեմ քեզի, Ներուած են ասոր շատ մեղքերը, վասն զի շատ սիրեց. բայց որուս որ քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ. 48 – Ու ըսաւ անոր, Քու մեղքերդ ներուած են։ 49 – Եւ անոր հետ սեղան նստողները սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է ասիկա որ մեղքերու թողութիւն ալ կուտայ։ 50 – Եւ ինք ըսաւ կնոջը, Քու հաւատքդ քեզ †փրկեց, գնա խաղաղութեամբ։

## ԳԼ. Ը

Ու եղաւ որ անկէ ետև ա՛լ ինք քաղաքէ քաղաք ու գիւղ գիւղ պտըտելով՝ կը քարոզէր, և Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր, ու տասներկուքը իրեն հետ էր։ 2 – Նաև քանի մը կիներ՝ որոնք չար ոգիներէ ու հիւանդութիւններէ բժշկուեր էին. Մարիամ որ Մագդալենացի կ'ըսուէր, որմէ եօթը դև ելեր էր, 3 – Եւ Յովհաննա, Հերովդէսի տանը վերակացուին Քուզային կինը, ու Շուշան և շատ ուրիշներ, որոնք իրենց ստացուածքովը ‡անոր ծառայութիւն կ'ընէին։

4 – Ու երբ մեծ բազմութիւն ժողվուեցաւ և շատ քաղաքներէ իրեն ե-

*Ոմանք, գլուխն մազերովը
†կամ, բժշկեց
‡Ոմանք, անոնց



կան, առակով մը ըսաւ անոնց, 5-Սերմնացանող մը ելաւ իր սերմը ցանելու. ու ցանած ատենը մէկ քանին ճամբուն քովի՝ ինկաւ և ոտքէ տակ կոխուեցաւ, ու երկինքի թռչունները կերան զանիկա։ 6-Եւ ուրիշը ապառաժի վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ, հոգն հիւթ չունենալուն համար։ 7 – Եւ ուրիշը փուշերու մէջ ինկաւ, ու փուշերը միասին հետ բուսնելով, խեղդեցին զանիկա։ 8 – Եւ ուրիշը աղէկ հողի մէջ ինկաւ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ։ Երբ այս բաները կը ըսէր, կ'աղաղակէր, Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

9 – Եւ իր աշակերտները կը հարցնէին իրեն՝ ըսելով Թէ ի՞նչ պիտի ըլլայ այն առակը։ 10 – Ան ալ ըսաւ, Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն առակներով կ'ըսուի. որպէս զի տեսնելով՝ չտեսնեն, և լսելով չհասկնան։

11 – Արդ առակը այս է. Սերմը Աստուծոյ խօսքն է։ 12 – Ու ճամբուն քովինները անոնք են՝ որ կը լսեն, ու ետքը Սատանայ կու գայ, անոնց սրտէն կը հանէ խօսքը, որպէս զի չըլլայ Թէ հաւատան ու փրկուին։ 13 – Եւ ապառաժին վրայինները անոնք են՝ որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը, բայց արմատ չունին. տանն մը կը հաւատան, ու փորձութեան ժամանակ կը հեռանան։ 14 – Եւ փուշերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց հոգերով ու հարստութիւնով և այս կեանքին ցանկութիւններովը ղրաղած ըլլալով՝ կը խեղդուին և անպտուղ կ'ըլլան։ 15 – Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը անոնք են՝ որ բարի և յօժար սրտով լսելով խօսքը կ'ընդունին ու համբերութիւնով պտուղ կուտան։

16 – Չկայ մէկը որ ճրագ վառէ ու ամանի մը տակ կամ մահիճին ներքև դնէ, հապա աշտանակի վրայ կը դնէ, որպէս զի ներս մտնողները լոյսը տեսնեն։ 17 – Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտնուի, ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չգիտցուի ու երևան չելլէ։ 18 – Ուստի նայեցէք թէ ի՞նչպէս կը լսէք. քանզի ով որ ունի՝ անոր պիտի տրուի, և ով որ չունի՝ այն ալ որ ինչ կը կարծէ Թէ ունի, անկէ պիտի առնուի։

19 – Եւ անոր մայրը ու եղբայրները իրեն եկան, ու բազմութենէն չէին կրնար անոր քովը երթալ։ 20 – Եւ անոր լմնցուցին ըսելով, Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, ու քեզ տեսնել կ'ուզեն։ 21 – Եւ անոնց պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Իմ մայրս ու իմ եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկա կը կատարեն։

22 – Ու եղաւ որ օր մը նաւը մտաւ ինք և իր աշակերտներն ալ, ու ըսաւ անոնց, Ծովակին միւս կողմն անցնինք. և ճամբայ ելան։ 23 – Ու երբ նաւով կ'երթային, ինք քնացաւ. ու հովի փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ, և նաւը կը լեցուէր, ու իրենք վտանգի մէջ էին։ 24 – Մօտեցան, արթնցուցին զանիկա ու ըսին, Վարդապետ, վարդապետ, ահա կը կորսուինք. ան ալ ելաւ ոտտեց հովին ու ջուրերուն խռովութեանը, և հանդարտեցաւ, ու խաղաղութիւն եղաւ։ 25 – Եւ ըսաւ անոնց, Ո՞ւր է ձեր հաւատքը. և անոնք վախի մէջ ինկած՝ զարմացան, ու իրարու կ'ըսէին, Արդեօք ո՞վ է սակայն որ հովերուն ու ջուրին ալ հրամայ կու տայ, և կը հնազանդին ասոր։

26 – Ու նաւելով իջան *Գադարացւոց երկիրը, որ Գալիլեայի դիմացի կողմն է։ 27 – Եւ ինք ցամաքը ելլելուն պէս՝ այն քաղաքէն մարդ մը եկաւ դիմացը, որուն ներսը շատ ատենէ ի վեր դեւեր կային. ու անիկա հանդերձ չէր հագներ, ոչ ալ տան մէջ կը բնակէր, հապա գերեզմաններու մէջ։ 28 – Եւ Յիսուսը տեսնելով՝ աղաղակեց ու ինկաւ անոր առջեւ, ու բարձր ձայնով բաւ, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ Բարձրեալ. կ'աղաչեմ՝ քեզի, զիս մի տանջեր։ 29 – (Վասն զի հրամայեց պիղծ ոգիին որ այն մարդէն ելլէ. ուրովհետեւ շատ ատեն էր որ զանիկա յափշտակեր էր, և անիկա շղթաներով ու ոտնակապերով կապուած կը պահուէր, բայց կապերը կը կոտրտէր ու դեւէն անապատը կը քշուէր։) 30 – Հարցուց անոր Յիսուս ու բաւ, Անունդ ի՞նչ է. ան ալ բաւ, Լեգէոն. վասն զի շատ դեւեր մտեր էին անոր ներսիդին։ 31 – Եւ կ'աղաչէին անոր որ անդունդը երթալու հրաման չընէ իրենց։ 32 – Եւ այնտեղ շատ խոզերու երամակ մը կար, որոնք լեռը կ'արածուէին. ու աղաչեցին անոր որ իրենց հրաման տայ անոնց մէջ մտնելու. և հրաման տուաւ անոնց։ 33 – Ու դեւերը մարդէն ելլելով՝ խոզերուն մէջ մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովակը վազեց ու խեղդուեցաւ։ 34 – Եւ խոզարածները այս եղած բանը տեսնելով փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները։ 35 – Եւ հրթէ ելան եղած բանը տեսնելու, ու եկան Յիսուսի, և գտան այն մարդը՝ ուրկէ դեւերը ելեր էին, հագուստ ու խելքը վրան Յիսուսի ոտքերուն քովնստած, ու վախցան։ 36 – Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց թէ ինչպէս դիւահարը ազատեցաւ։ 37 – Եւ Գադարացւոց շրջակայ տեղերը գանուող բոլոր բազմութիւնը կ'աղաչէր անոր, որ իրենցմէ երթայ, վասն զի մեծ վախով բռնուած էին. ան ալ նաւը մտնելով՝ ետ դարձաւ։ 38 – Եւ այն մարդը՝ ուրկէ դեւերը ելեր էին, կ'աղաչէր անոր որ հետը ըլլայ, բայց Յիսուս արձակեց զանիկա ու բաւ, 39 – Դարձիր քու տունդ, ու պատմէ ինչ որ Աստուած քեզի բրաւ. ան ալ գնաց, ու բոլոր քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս իրեն բրաւ։

40 – Ու երբ Յիսուս ետ դարձաւ, ժողովուրդը զանիկա ընդունեց, վասն զի ամէնը անոր կը սպասէին։ 41 – Եւ ահա Յայրոս անունով մարդ մը եկաւ, ու ինք ժողովարանին իշխանն էր. և Յիսուսի ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր որ իր տունը մտնէ. 42 – վասն զի մէկ հատիկ աղջիկ մը ունէր, գրեթէ տասներկու տարեկան, որ մեռնելու մօտ էր. ու երբ անիկա կ'երթար, բազմութիւնը կը նեղէր զանիկա։

43 – Եւ կին մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնի տեռատեսութեան մէջ էր, ու իր բոլոր ունեցածը բժիշկներուն ծախք բրած էր, և իրեն ոչ մէկին բժշկուելու ճար մը եգած էր, 44 – եկաւ էն մտնելով՝ անոր հանդերձին քղանցքին դպաւ, և իսկոյն իր արիւնին հոսումը դադրեցաւ։ 45 – Եւ Յիսուս բաւ, Ո՞վ էր ան որ ինծի դպաւ. երբ ամէնը կ'ուրանային, բաւ Պետրոս ու անոր հետ եղողները, Վարդապետ, բազմութիւնը քեզ կը նեղէ ու կը նեղէ, ու կըսե՞ս Թէ Ո՞վ ինծի դպաւ։ 46 – Եւ Յիսուս բաւ, Մէկը ինծի դպաւ, քանզի իմացայ որ ինծմէ զօրութիւն մը ելաւ։ 47 – Երբ տեսաւ կինը որ բնաւ չպահուեցաւ, դողալով եկաւ ու անոր առջեւ ինկաւ, և բոլոր ժողովուրդին առջեւ անոր պատմեց Թէ ինչ բանի համար անոր դպեր էր, և Թէ ինչպէս ինք իսկոյն բժշկուեցաւ։ 48 – Եւ Յիսուս բաւ անոր, Դուստրիկ, ապրիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց, գնա խաղաղութեամբ։

49 – Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ ու բաւ անոր, Աղջիկդ մեռաւ, ալ վարդապետը մի յոգնեցներ։ 50 – Բայց Յիսուս երբ լսեց, պատասխան տուաւ անոր ու բաւ, Մի վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի։ 51 – Եւ երբ տունը մտաւ, ուրիշ մէկը Թող չտուաւ որ մտնէ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը ու աղջկան հայրը ու մայրը։ 52 – Ամէնն ալ կուլային ու կ'ողբայինն անոր վրայ. և ինք բաւ, Մի լաք, անիկա մեռած չէ, հապա կը քնանայ։ 53 – Եւ անոնք ծաղր կ'ընէին զանիկա, քանզի գիտէին Թէ մեռաւ։ 54 – Ու ինք ամէնն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն ու կանչեց՝ ըսելով, Աղջիկ, ելիր։ 55 – Եւ անոր հոգին դարձաւ, ու իսկոյն ոտք ելաւ. և Յիսուս հրաման ըրաւ որ ուտելիք տան անոր։ 56 – Ու անոր ծնողքըապշած մնացին. և ինք անոնց պատուիրեց որ եղած բանը մարդո՛ւ չպրուցեն։

*Ո՛ռն., Գերգեսացւոց



## Գ Լ. Թ

Եւ իր տասներկու *աշակերտները մէկտեղ իրեն կանչելով՝ անոնց զօրութիւն ու իշխանութիւն տուաւ բոլոր դեւերուն վրայ և ախտերը բժշկելու։ 2 – Ու զանոնք ղրկեց որ Աստուծոյ Թագաւորութիւնը քարոզեն ու հիւանդները բժշկեն։ 3 – Եւ ըսաւ անոնց, Ճամբու համար բան չառնէք, ոչ գաւազան և ոչ պարկ, ոչ հաց և ոչ ստակ, ոչ ալ կրկին հանդերձ ունենաք։ 4 – Եւ ո՛ր տուն որ մտնէք, հոն մնացէք ու անկէ ելէք։ 5 – Ու ո՛ր տեղ որ ձեզ չեն ընդունիր, երբ այն քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին անդամ Թօթուեցէք՝ իրենց դէմ վկայութիւն ըլլալու համար։ 6 – Եւ անոնք ելան ու գեղէ գեղ կը պտըտէին, և ամէն տեղ աւետարանը կը քարոզէին ու բժշկութիւն կ'ընէին։

7 – Եւ Հերովդէս չորրորդապետը ասոր բոլոր գործերը լսելով՝ տարակուսանքի մէջ էր. որովհետեւ ոմանք բսած էին 8 – Թէ Յովհաննէս յարութիւն առաւ մեռելներէն, և ոմանք՝ Թէ Եղիա յայտնուեցաւ, և ուրիշներն ալ՝ Թէ Առաջուան մարգարէներէն մէկը յարութիւն առաւ։ 9 – Եւ Հերովդէս բսաւ, Յովհաննէսը ես գլխատեցի, հապա ասիկա ո՞վ պիտի ըլլայ, որուն վրայով այսպիսի բաներ կը լսեմ։ ու կ'ուզէր որ տեսնէ զանիկա։

10 – Եւ առաքեալները դարձան ու պատմեցին անոր ինչ որ ըրին. և առաւ զանոնք, առանձին անապատ տեղ մը քաղաքէ մը քով՝ որուն անունը Բեթսայիդա էր։ 11 – Եւ ժողովուրդները երբ իմացան՝ անոր ետևէն գացին, ու զանոնք ընդունելով՝ կը խօսէր անոնց Աստուծոյ Թագաւորութեանը վրայով. և որոնք որ բժշկութեան կարօտ էին՝ կը բժշկէր։

12 – Ու երբ օրը սկսաւ իրիկնանալ մօտենալ, տասներկուքը եկան ու ըսին անոր, Արձակէ ժողովուրդները, որպէս զի շրջակայ գեղերը ու ագարակները երթան իջևանին ու կերակուր գտնեն, վասն զի հոս անապատ տեղ մըն ենք։ 13 – Բսաւ անոնց, Դուք տուէք ուտելիք. անոնք ալ ըսին, Մենք հինգ նկանակն ու երկու ձուկն ասկէ բան չունինք, եթէ չերթանք այդ բոլոր ժողովուրդին համար կերակուր չգնենք։ 14 – (Քանզի հինգ հազարի չափ այր մարդիկ կային։) Ու բսաւ իր աշակերտներուն, Անոնք դասդասս յիսուն, նստեցուցէք։ 15 – Եւ այնպէս ըրին ու ամէնն ալ նստեցուցին։ 16 – Եւ այն հինգ նկանակը ու երկու ձուկը առնելով՝ դէպ ի երկինք նայելով՝ օրհնեց զանոնք ու կոտրեց, և կու տար աշակերտներուն, որպէս զի ժողովուրդին առջեւ դնեն։ 17 – Եւ կերան ու կշտացան ամէնն ալ, ու աւելցած կտորտանքները տասներկու կողով վերցուցին։

18 – Ու եղաւ որ երբ ինք առանձին աղօթք կ'ընէր, աշակերտներն ալ

*Ո՛ռն., առաքեալները

քրեն հետ էին, և հարցուց անոնց՝ բանալով, ժողովուրդները լինչի համար ո՞վ կ'ըսեն թէ եմ։ 19 – Անոնք ալ պատասխան տալով ըսին, Ո՛Նո֊ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիա, ուրիշներ ալ՝ թէ Աւետարանիչներէն մէկը յարութիւն առեր է։ 20 – Եւ ինք ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ։ պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ, Աստուծոյ Քրիստոսը։ 21 – Եւ ինք ասոնիկ պատուիրեց անոնց որ այս բանը մարդո՛ւ չպատմեն։ 22 – Ու ըսաւ թէ Պէտք է որ Որդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, և ծերերէն ու քահանայապետներէն և դպիրներէն մերժուի ու սպանուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ։ 23 – Եւ ամէնուն կ'ըսէր, Եթէ մէկը կ'ուզէ իմ ետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցնէ, ու իմ ետևէս գայ։ 24 – Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորնչնէ զանիկա. և ով որ լինծի համար իր անձը կորսընչնէ, պիտի ապրեցնէ զանիկա։ 25 – Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի, և իր անձը կորնչնէ կամ վնաս ընէ։ 26 – Վասն զի ով որ ինծ ու իմ խօսքերս դ֊ո֊ւ֊ի֊ր ամէն մեպ, Որդին մարդոյ ալ զանիկա դ֊ո֊ւ֊ի֊ր ամէն պիտի մեպ՝ երբ գայ իր ու Հօրը և սուրբ հրեշտակներուն փառքովը։ 27 – Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Հոս կայնողներէն մէկ քանիները կան՝ որոնք մինչեւ ան չմանը պիտի չտանեն, մինչև տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը։

28 – Ու եղաւ որ այս խօսքերէն գրեթէ ութ օր ետքը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առնելով, լեռը ելաւ աղօթք ընելու։ 29 – Ու երբ ինք աղօթք կ'ընէր, իր երեսին տեսքը ուրիշ կերպ մը եղաւ, ու իր հագուստը ճերմակ ու փայլուն եղաւ։ 30 – Եւ ահա երկու մարդիկ իրեն հետ կը խօսէին, որոնք Մովսէս ու Եղիա էին, 31 – փառքով երևցած, և անոր այ֊ե֊ա֊ն֊է֊ն ելլելուն վրայով կը խօսէին, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր։ 32 – Բայց Պետրոս և անոր հետ եղողները քունով ծանրացած էին, ու երբ արթնցան, տեսան անոր փառքը և այն երկու մարդիկը որոնք անոր քով կեցեր էին։ 33 – Ու եղաւ որ երբ անոնք զատուեցան անոր քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսի. Վարդապետ, ապէկ է որ հոս կենանք, ու երեք խրճիթ շինենք. մէկը քեզի՝ և մէկը Մովսէսի՝ ու մէկը Եղիայի, չգիտնար ինչ կ'ըսէր։ 34 – Եւ քանի որ անիկա այս բաները կը խօսէր, ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ, և ամպին մտկ մնացած ատենին վախցան։ 35 – Ու ձայն մը եղաւ ամպէն՝ ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս, ասոր մտիկ ըրէք։ 36 – Եւ երբ այն ձայնը եղաւ, Յիսուս միայնակ գտնուեցաւ։ Ու իրենք լուռ կեցան, և իրենց տեսածներէն այն օրերը մարդո՛ւ բան մը չպատմեցին։

37 – Ու եղաւ որ հետևեալ օրը, երբ անոնք լեռնէն վար իջան, շատ ժողովուրդ անոր դէմ ելաւ։ 38 – Եւ ահա ժողովուրդին մէջէն մարդ մը աղաղակեց ու ըսաւ, Վարդապետ, կ'աղաչեմ քեզի, նայէ իմ որդիիս, քանզի իմ մէկ հատիկս է։ 39 – Եւ ահա ոգի մը կը բռնէ զանիկա. ան ալ յանկարծ կը կանչուըռտէ, և զանիկա ցնցելով կը փրփրեցնէ, ու հազիւ կը զատուի անկէ՝ ջարդուբուրդ ընելով զանիկա. 40 – Եւ քու աշակերտներուդ աղաչեցի որ հանեն զանիկա. ու չկրցան։ 41 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ ու ձեզի համբերեմ։ Հոս բեր քու որդիդ։ 42 – Ու երբ դեռ կը մօտենար, դևը զանիկա գետինը զարկաւ ու սաստիկ ցնցեց։ Յիսուս սաստեց պիղծ ոգիին, և բժշկեց աղան ու զանիկա իր հօրը տուաւ։ 44 – Եւ ամէնը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ։

Ու քանի որ ամէնը կը զարմանային Յիսուսի ըրած բոլոր գործերուն վրայ, անիկա ըսաւ իր աշակերտներուն, Դուք այս խօսքերը ականջներնիդ դրէք, վասն զի Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը։ 45 – Բայց անոնք չէին իմանար այն խօսքը, և անոնցմէ ծածկուած էր որպէս զի չգիտենան, ու կը վախնային այն խօսքին համար իրեն հարցնելու։

46 – Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ՝ թէ արդեօք իրենց մէջ ո՞վ է մեծ։ 47 – Իսկ Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով՝ աղայ մը առաւ ու զանիկա իր քով կայնեցուց, 48 – Եւ ըսաւ անոնց, Ով որ այս աղան իմ անունովս կ'ընդունի՝ ինձ կ'ընդունի. և ան որ ինձ կ'ընդունի՝ անկէ զիս ղրկողը կ'ընդունի. վասն զի ան որ ձեր ամենուն մէջ պզտիկ է, անիկա մեծ պիտի ըլլայ։

49 – Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըսաւ, Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դևեր կը հանէր, և զանիկա արգիլեցինք, վասն զի մեզի հետ չպտրաստիր։ 50 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Մի արգիլէք, քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մե՛զ կողմն է։

51 – Ու եղաւ որ երբ իր †վե֊ր֊ա֊ռ֊նա֊լ֊ու֊ օրերը կը կատարուէին, ինք ալ ‡հաստատ որոշեց՝ Երուսաղէմ երթալ։ 52 – Եւ իր երեսին առջևէն պատգամաւորներ ղրկեց. և երբ գացին, Սամարացւոց մէկ գեղը մտան որպէս զի իրեն համար պատրաստութիւն մը ընեն։ 53 – Եւ չընդունեցին զանիկա, վասն զի անոր երեսը դէպ ի Երուսաղէմ երթալու չ֊ե֊ռ֊ա֊ւ էր։ 54 – Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, տեսան, ըսին, Տէր, կ'ուզե՞ս որ ըսենք, ու երկինքէն կրակ իջնէ և սատկեցնէ զանոնք, ինչպես Եղիա ալ ըրաւ։ 55 – Եւ դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով, Չէք գիտեր թէ ի՛նչ հոգիի տէր էք դուք։ 56 – ‡Վասն զի Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորնչնեցնելու, հապա փրկելու։" և ուրիշ գեղ մը գացին։

57 – Ու երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը ըսաւ անոր, Տէր, քու եռևէդ գամ՝ ուր որ երթաս։ 58 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր ունին, ու երկինքի թռչուններ՝ բոյներ, բայց Որդին մարդոյ տեղ չունի, ուր էր գլուխը դնէ։

59 – Ուրիշի մըն ալ ըսաւ, Եկուր իմ եռևէս։ ան ալ ըսաւ, Տէր, ինծի հրամայեմ առաջ երթամ իմ հայրս թաղեմ։ 60 – Յիսուս ըսաւ անոր, Թող մեռելները իրենց մեռելները թաղեն իրենց մեռելները, բայց դուն գնա Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ։

61 – Ուրիշ մըն ալ ըսաւ, Տէր, ես քու եռևէդ պիտի գամ, բայց ինծի հրամայեմ առաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարական ողջոյն տամ։ 62 – Յիսուս ըսաւ անոր, Ոչ մէկը որ ձեռքը մանճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար է։

*Ո՛Նո֊, ձեզի հակառակ չէ, ձեր
†Յ֊ո֊ւ֊ն. երեսը հաստատեց
‡Ո՛Նո֊ ը֊ն֊ն֊ի֊ն



## ԳԼ. Ժ

Ա֊յս բաներէն ետև Տէրը ուրիշ եօթանասուն ալ որոշեց, և զանոնք իր առջևէն երկու երկու ղրկեց բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր ինք պիտի երթար։ 2 – Եւ կ'ըսէր անոնց, Հունձքը շատ է, ու մշակները քիչ. ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք որ մշակներ հանէ իր հունձքին։ 3 – Գացէք. ահա ես ձեզ կը ղրկեմ իբրև գառներ գայլերու մէջ։ 4 – Ձեզի հետ քսակ մի առնէք, ոչ ալ պարկ, և ոչ կօշիկներ, ու ճամբան մարդո՛ւ բարև մի տաք։ 5 – Եւ ո՛ր տուն որ մտնէք՝ առաջ ըսէք, *Խաղաղ այս տանը։ 6 – Ու եթէ հոն †բարեւի սիրահաւոր մարդ՝ կայ, ձեր բարեւը պիտի հանդչի անոր վրայ, ապա թէ ոչ՝ ձեզի պիտի դառնայ։ 7 – Եւ այն տանը մէջ մնացէք, ու անոնցմէ կերէք ու խմեցէք, վասն զի մշակը իր վարձքին արժանի է. տունէ տուն մի փոխուիք։ 8 – Եւ ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ ընդունին, ինչ որ ձեր առջև դրուի՝ կերէք. 9 – Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները, և ըսէք անոնց, Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։ 10 – Բայց ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ չընդունին, անոր հրապարակները ելլելով ըսէք, 11 – Ա֊յ֊ն փոշին ալ որ ձեր քաղաքէն մեր ոտքերո֊ւ֊ն փակած է, ձեզի կը թօթվենք. միայն թէ զայս գիտնաք որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։ 12 – Ձեզի կ'ըսեմ որ այն օրը Սոդոմի դ֊ո֊ւ֊ռ֊ն֊ը աւելի դիւրին պիտի ըլլայ քան թէ այն քաղաքին։ 13 – Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնցմէ քուրձով ու մոխրի մէջ նստելով ապաշխարած պիտի ըլլային։ 14 – Բայց դատաստանին օրը Տիւրոսի ու Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ քան թէ ձեզի։

*Յ֊ա֊ղ. Խաղաղութիւն
†Յ֊ա֊ղ. խաղաղութեան որդի

15 – Եւ դուն, Կափառնայում՝, որ մինչեւ երկինք բարձրացած ես, մինչեւ դժոխք պիտի իջնես։ 16 – Ան որ ձեզի մտիկ կ՝ընէ, ինծի մտիկ կ՝ընէ. և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ. և ան որ զիս կը մերժէ, զիս ղրկողը կը մերժէ։

17 – Եւ եօթանասուն ալէկոչները դարձան ուրախութեամբ ու ըսին, Տէր, քու անունովդ դեւերն ալ մեզի կը հնազանդին։ 18 – Եւ ըսաւ անոնց, Սատանան փայլակի պէս երկինքէն վար ինկած կը տեսնէի։ 19 – Ահա ձեզի իշխանութիւն կու տամ օձերու ու կարիճներու և թշնամիին բոլոր զօրութեանը վրայ կոխկռտելու. ու բնաւ բան մը ձեզի պիտի չվնասէ։ 20 – Բայց դուք անոր վրայ մի ուրախանաք որ ջոկ ոգիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէք որ ձեր անուննները երկինքը գրուած են։

21 – Ա՛յն նոյն ժամուն Յիսուս Հոգիով ուրախացաւ ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկնի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր խմաստուններէն և գիտուններէն, ու տղոց յայտնեցիր. այո, ով Հայր, վասն զի քու առջեդ այսպէս հաճելի եղաւ։ 22 – Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս, ու մէ՛կը չգիտեր թէ ո՛վ է Որդին, բայց միայն Հայրը. և թէ ո՛վ է Հայրը, բայց միայն Որդին, և ան՝ որու Որդին կ՝ուզէ յայտնել։

23 – Եւ աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ, Երանի՛ այն աչքերուն՝ որոնք ձեր տեսածները կը տեսանեն. 24 – Քանզի կ՝ըսեմ ձեզի, որ շատ մարգարէներ և թագաւորներ ուզեցին ձեր տեսածները տեսնել, ու չտեսան, և ձեր լսածները լսել, ու չլսեցին։

25 – Եւ ահա օրինական մի ելաւ, ու զանիկա փորձելով՝ ըսաւ, Վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ 26 – Անիկա ալ ըսաւ անոր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է, ինչպէս կը կարդաս։ 27 – Պատասխան տուաւ անիկա ու ըսաւ, Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօրութենէդ ու քու բոլոր միտքէդ, և քու ընկերդ քու անձիդ պէս։ 28 – Եւ ինք ըսաւ անոր, Շիտակ պատասխան տուիր. տարիկա ըրէ ու պիտի ապրիս։ 29 – Իսկ անիկա ուզելով ինքզինք արդարացնել, ըսաւ Յիսուսի, Բայց իմ ընկերս ո՞վ է։ 30 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Մարդ մը Երուսաղէմէ Երիքով կ՝իջնէր, ու աւազակներու չորս ինկաւ, որոնք մերկացուցին զանիկա ու վիրաւորելով կխատեա թողուցին ու գացին։ 31 – Եւ պատահեցաւ որ քահանայ մը այն ճամբայէն կիջնէր, ու զանիկա տեսնելով՝ անդին կողմէն անցաւ։ 32 – Նոյնպէս Ղեւտացի մըն ալ այն տեղ հասնելով՝ գնաց ու տեսաւ, և անդին կողմէն անցաւ։ 33 – Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն կ՝ընէր, եկաւ անոր քով, ու զանիկա տեսնելով խղճաց. 34 – Եւ մօտեցաւ, անոր վէրքերը փաթթեց, վրան ձէթ և գինի թափելով, ու իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ զանիկա պանդոկ մը, և անոր հոգ տարաւ։ 35 – Ու հետեւեալ օրը երբ կ՝ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին տուաւ և անոր ըսաւ, Հոգ տար տուր, ու ինչ որ աւելի ծախք ընես, ես դառնալուս ես քեզի կը վճարեմ։ 36 – Հիմա այն երեքէն ո՞րը քեզի կ՝երեւնայ ընկեր ըլլալ աւազակներուն չորս ինկողին։ 37 – Եւ անիկա ըսաւ, Ան որ ողորմած եղաւ անոր։ Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ անոր, Գնա, դուն ալ այնպէս ըրէ։

38 – Ու եղաւ որ երբ անոնք կ՝երթային, ինք գեղ մը մտաւ, և կին մը, Մարթա անունով, զանիկա իր տունը ընդունեց։ 39 – Եւ անիկա քոյր մը ունէր, որուն անունը Մարիամ՝ էր, որ եկաւ Յիսուսի ոտքերուն քով նստաւ, ու անոր խօսքերը մտիկ կ՝ընէր։ 40 – Բայց Մարթա շատ սպասաւորութիւնով զբաղած էր. եկաւ անոր քով ու ըսաւ, Տէր, քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ թողուց սպասաւորութեան մէջ. ուսաի ատոր զրուցէ որ ինծի օգնէ։ 41 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Մարթա, Մարթա, դուն շատ բաներու համար հոգ ընելով կը տագնապիս. 42 – Բայց մէ՛կ բան պէտք է, և Մարիամ այն ազէկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի։



## Գ.Լ. ԺԱ.

Ու եղաւ որ տեղ մը աղօթք կ՝ընէր. ու երբ դադարեցաւ, իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն, Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր, ինչպէս Յովհաննէս ալ իր աշակերտներուն սորվեցուց։ 2 – Եւ ըսաւ անոնց, Երբ աղօթք կ՝ընէք՝ ըսէք, Ով Հայր *մեր, որ երկինքն ես՝, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. *քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ.՝ 3 – Մեր ամէն օրուան հացը օրէ օր մեզի տուր. 4 – Եւ մեզի ներէ մեր մեղքերը, քանզի մենք ալ կը ներենք այն ամէնուն՝ որ մեզի պարտական են. ու մեզ փորձութեան մի տանիր, *հապա չարէն մեզ ազատէ։՝

5 – Եւ ըսաւ անոնց, Ձեզմէ ո՞վ է այ որ բարեկամ մը ունենայ, ու կէսգիշերուան մէջ երթայ անոր և ըսէ ատոր, Բարեկամ, ինծի երեք նկանակ փոխ տուր. 6 – Վասն զի իմ մէկ բարեկամս ճամբայէ ինծի եկաւ, ու բան մը չունիմ անոր առջեւ դնելու։ 7 – Անիկա ալ ներսէն պատասխան տայ և ըսէ, Զիս մի յոգնեցներ, արդէն դուռը դոցուած է, ու տղաքս իմ քովս անկողնին մէջ են. չեմ՝ կրնար ելլել ու քեզի հաց տալ։ 8 – Ձեզի կ՝ըսեմ, Թէև բարեկամութեան համար չելլէ տայ անոր, սակայն անոր թախանձանքին համար պիտի ելլէ՝ ու պէտք եղածը տայ անոր։ 9 – Ես ալ կ՝ըսեմ՝ ձեզի, խնդրեցէք և պիտի տրուի ձեզի, փնտռեցէք ու պիտի գտնէք, դռնբ զարկէք և պիտի բացուի ձեզի. 10 – Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ՝առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ դռնբ կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ 11 – Ձեզմէ ո՞վ է այն Հայրը, որմէ իր որդին հաց որ ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ա՞ռ, միթէ ձուկին տեղ օ՞ձ պիտի տայ անոր. 12 – Եւ կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կաթո՞ղ պիտի տայ անոր։ 13 – Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն ազէկ ընծաներ տալ գիտէք, ո՛րչափ աւելի չէր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։

14 – Ու դեւ մը կը հանէր, և անիկա համր էր. ու եղաւ որ երբ դեւը ելաւ, համրը խօսեցաւ, և ժողովուրդները զարմացան։ 15 – Բայց անոնցմէ մէկ քանիները ըսին, Աստիկա դեւերուն Բէեզեղբուղ իշխանին միջոցով դեւերը կը հանէ։ 16 – Ուրիշներն ալ փորձելով երկինքէն նշան մը կ՝ուզէին անկէ։ 17 – Բայց ինք գիտնալով անոնց խորհուրդները՝ ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ՝աւերի, և տուն մը *իրեն դէմ բաժնուած՝ կ՝իյնայ։ 18 – Հապա եթէ Սատանայ իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը ի՞նչպէս պիտի կենայ. որովհետև կ՝ըսէք թէ Բէեզեղբուղով դեւերը կը հանեմ։ 19 – Իսկ եթէ ես Բէեզեղբուղով դեւերը կը հանեմ՝, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։ 20 – Բայց եթէ ես Աստուծոյ մատովը կը հանեմ՝ դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։ 21 – Երբ զօրաւոր մարդ մը զէնքերը վրան առած՝ իր տունը բակը կը պահպանէ, անոր բաները խաղաղութեան մէջ կը մնան. 22 – Բայց երբ անկէ աւելի զօրաւորը վրան գալով յաղթէ զանիկա, անոր զէնքերը կ՝առնէ՝ որոնց ինք յուսացեր էր, և անկէ ա՛ռած կողոպուտը կը բաժնէ։ 23 – Ան որ ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ չժողվեր՝ ցիրուցան կ՝ընէ։

24 – Երբ պիղծ ոգին մարդէ մը կ՝ելլէ, անջուր տեղեր կը պտրտի, հանգրստութիւն կը փնտռէ. ու երբ չգտներ՝ կ՝ըսէ, Դառնամ նորէն իմ տունս՝ ուրկէ ելայ։ 25 – Եւ կու գայ, զննէ՝ մաքրուած ու յարդարուած կը գտնէ։ 26 – Ա՛յն ատեն կ՝երթայ, և էրեն հետ կ՝առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ՝ըլլայ։

27 – Ու եղաւ որ երբ անիկա այս բաները կը խօսէր, ժողովուրդին մէջէն կին մը ձայնը վերցուց ու ըսաւ անոր, Երանի՛ այն որովայնին՝ որ քեզ կրեց, և այն ծիծերուն՝ որոնք քեզի կաթ տուին։ 28 – Եւ ինք ըսաւ, Մանաւանդ թէ երանի՛ անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն։

*Ոմանք, չունին

*Յուն. տան

29 – Ու երբ ժողովուրդները անոր ձայն կը դիտուէին, ակաւա ըսել, Ասիս ազգը չար է. նշան կ'ուզէ, և անէրէչ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը։ 30 – Ինչպէս Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ, այնպէս Որդին մարդոյ այս ազգին պիտի ըլլայ։ 31 – Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին մարդոցը դէմ պիտի ելլէ, ու պիտի գատապարտէ զանիք, վասն զի երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս։ 32 – Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն, ու պիտի դատապարտեն զանիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնով ապրեցան. ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս։

33 – Մէկը ճրագը չվառեր, ծածուկ տեղ մը դներ, ոչ ալ գրեամանի տակ, հապա աշտանակի վրայ, որպէս զի ներս մտնողները լոյսը տեսնեն։ 34 – Մարմինին ճրագը աչքն է. ուստի երբ աչքդ պարզ է, բոլոր մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբ ագէտ վատ է, մարմինդ ալ մութ կ'ըլլայ։ 35 – Ուրեմն զգոյշ կեցիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ։ 36 – Արդ եթէ քու բոլոր մարմինդ լուսաւոր է, և մութ մաս մը չունի, բոլորն ալ լուսաւոր կ'ըլլայ, ինչպէս երբ ճրագ մը իր փայլունութիւնովը քեզ կը լուսաւորէ։

37 – Ու երբ այս խօսքերը կը խօսէր, փարիսեցի մը կ'աղաչէր անոր որ իր քով ճաշ ուտէ. անիկա ալ մտաւ սեղան նստաւ։ 38 – Իսկ փարիսեցին երբ տեսաւ, զարմացաւ, որ նախ չլուացուեցաւ ճաշէն առաջ։ 39 – Եւ Տէրը ըսաւ անոր, Հիմա դուք, փարիսեցիներ, դուրսի բաժակին ու պնակին դուրսիդին կը մաքրէք, ու ձեր ներսիդին յափշտակութիւնամբ և չարութեամբ լեցուն է։ 40-Անխելքներ, անոր որ դուրսինը ըրաւ, ներսինն ալ ինք չըրա՞ւ։ 41 – Սակայն անոնց մէջ եղածներէն ողորմութիւն տուէք, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի։ 42 – Բայց վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ անանուխին ու փեգեղային և բոլոր խոտեղէններուն տասանորդը կը վճարէք, ու զանց կ'ընէք իրաւունքը և Աստուծոյ սէրը. ասանք պէտք էր բնել, և զանոնք չձգել։ 43 – Վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ ժողովարաններուն մէջ առաջին աթոռները կը սիրէք, ու շուկաներուն մէջ բարեւները։ 44 – Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անյայտ գերեզմաններու նման էք, որոնց վրայէն մարդիկ կը քալեն ու չեն գիտեր։

45 – Եւ օրինականներէն մէկը պատասխան տալով ըսաւ անոր, Վարդապետ, այդ խօսքերը ըրուցելով մեզ ալ վար կը ջարնես։ 46 – Եւ անիկա ըսաւ, Ձեզի ալ վա՛յ օրինականներուդ, որ տանելու դժուար բեռներ կը բեռցնէք մարդոց, ու դուք ձեր մէկ մատով այն բեռներուն չէք դպչիր։ 47-Վա՛յ ձեզի, որ մարգարէներուն գերեզմանները կը շինէք, ու ձեր հայրերը սպաննեցին զանոնք։ 48 – Ուրեմն կը վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հայրերուն գործերուն. վասն զի իրենք սպաննեցին զանոնք, ու դուք անոց գերեզմանները կը շինէք։ 49 – Անոր համար ալ Աստուծոյ իմաստութիւնը ըսաւ, Պիտի ղրկեմ անոնց մարգարէներ ու առաքեալներ, և անոնցմէ ո՛րը պիտի սպանեն ու ո՛րը հալածեն. 50 – Որպէս զի աշխարհի սկիզբէն հետէ թափուած բոլոր մարգարէներուն արիւնը այս ազգէն պահանջուի, 51 – Աբելի արիւնէն մինչև Զաքարիայի արիւնը, որ սեղանին ու տաճարին մէջտեղ կորսուեցաւ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Այս ազգէն պիտի պահանջուի։ 52 – Վա՛յ ձեզի օրինականներուդ, որ գիտութեան բանալին վերցուցիք. դուք չմտաք, և մտնողներն ալ արգիլեցիք։

53 – Ու երբ այս բաները անոնց կը ըրուցէր, դպիրները ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ, և շատ բաներու վրայով անոր բերնէն խօսք փնտռել. 54 – Եւ անոր դարան պատրաստելով, կը փնտռէին թէ ի՛նչպէս անոր բերնէն բան մը որսան, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն։

## Գլ. ԺԲ

Այս միջոցին երբ բնաբար ժողովուրդներ վրան ժողվուեցան, մինչև մէկզմէկ կը կոխէին, սկսաւ ըսել իր աշակերտներուն, Ա՛ԺԷնէն առաջ ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցիներուն խմորէն, որ է կեղծաւորութիւն։ 2 – Վասն զի բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, և գաղտուկ որ պիտի չգիտցուի։ 3 – Ուստի ինչ որ մութ տեղը ըրուցեցիք, անիկա լոյս տեղը պիտի լսուի. և այն որ ներքին սենեակներուն մէջ ականջի խօսեցաք, տանիքներուն վրայ պիտի քարոզուի։ 4 – Բայց ձեզի իմ բարեկամներուս կը ըսեմ, Մի վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, ու անկէ ետև ուրիշ բան մը ընելու չունին։ 5 – Հապա ձեզի ցուցնեմ թէ որմէ պիտի վախնաք. Անկէ վախցէք որ սպաննելէն ետև իշխանութիւն ունի գէհենը ձգելու. այո, կ'ըսեմ ձեզի, Անկէ վախցէք։ 6 – Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու դանկի կը ծախուի, և ասոնցմէ մէ՛կը մոռցուած չէ Աստուծոյ առջև։ 7 – Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած են. ուրեմն մի վախնաք, վասն զի դուք շատ ճնճղուկներէն աւելի ոսկի էք։ 8 – Եւ ձեզի կ'ըսեմ, Ամէն ով որ ինծ կը դաւանի մարդոց առջև, Որդին մարդոյ ալ զայն իր պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն առջև։ 9 – Բայց ան որ ինծ մարդոց առջև կ'ուրանայ, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջև։ 10 – Եւ ամէն ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ, պիտի չներուի անոր։ 11 – Ու երբ ձեզ ժողովարանները և իշխանութիւններու ու պետութիւններու առջև տանելու ըլլան, հոգ մի ընէք թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պատասխան պիտի տաք, կամ ի՛նչ պիտի ըսէք. 12 – Վասն զի Սուրբ Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ։

13 – Ժողովուրդին մէջէն մէկը ըսաւ անոր, Վարդապետ, ըրուցէ եղբօրս, որ ինձ հետ ժառանգութիւնը բնդհ հետ բաժնէ։ 14 – Ան ալ ըսաւ անոր, Մարդ, ո՞վ դիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին ընդ դրաւ։ 15-Եւ ըսաւ անոնց, Նայեցէք և զգուշացէք ագահութենէ. վասն զի մարդուս առատութիւնը անոր կեանքը չէ իր ունեցածներուն մէջէն։ 16 – Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով, Հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր տուին. 17 – Եւ ինք կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր, Ի՞նչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, ուր իմ բերքերս ժողվեմ։ 18 – Եւ ըսաւ, Այս ընեմ. իմ ամբարներս քակեմ ու մե՛ծ ուրիշ մեծ շինեմ, և հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս. 19 – Եւ իմ անձիս ըսեմ. Ով անձս, շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողված. հանգչէ, կեր, խմէ և ուրախ եղիր։ 20 – Բայց Աստուած ըսաւ անոր, Անմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի. ուստի այն քու պատրաստած բաներդ որո՞ւ պիտի ըլլան։ 21 – Այսպէս է անիկա որ իր անձին համար գանձ կը դիզէ, ու Աստուծոյ չհարստանար։

22 – Եւ ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար կ'ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ոչ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. 23 – Վասն զի կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն։ 24 – Նայեցէք ագռաւներուն, որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն, որոնք ոչ շտեմարաններ ունին, ոչ ալ ամբարներ, ու Աստուած զանոնք կը կերակրէ. քա՛նի մ'աւելի լաւ էք դուք թռչուններէն։ 25 – Եւ ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել։ 26 – Հապա եթէ ամենափոքր բանին կարող չէք, ուրիշ բաներու համար ինչո՞ւ հոգ կ'ընէք։ 27 – Նայեցէք շուշաններուն, ի՛նչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն. բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկ'ուն պէս չհագուեցաւ։ 28 – Ուստի եթէ խոտը որ այսօր դաշտի մէջ է, ու վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձեզ, թերահաւատներ։ 29 – Ալ դուք մի փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք և ի՛նչ պիտի խմէք, ու մի շփոթիք. 30 – Վասն զի այդ բոլոր բաները աշխարհիս ազգերը կը փնտռեն. ու ձեր Հայրը գիտէ որ այդ բաները ձեզի պէտք են։ 31 – Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք, և այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին։ 32 – Մի վախնար, պզտիկ հօտ, վասն զի ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի տայ։ 33 – Ծախեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն տուէք. ձեզի չհինցնալու քսակներ պատրաստեցէք, ո՛ր երկինքը չպակսելու գանձ մը, ուր ոչ գողը կը մօտենայ և ոչ ցեցը

կ'ապականէ։ 34 – Քանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ։ 35 – Ձեր մէջքերը գօտեպատած ըլլան, ու ճրագները վառուած։ 36 – Եւ դուք այն մարդոց նմանի որոնք իրենց տէրոջը կը սպասեն, թէ ե՛րբ պիտի դառնայ հարսնիքէն. որպէս զի երբ գայ և դո՛ռը զարնէ, իսկոյն բանան անոր։ 37 – Երանի՛ այն ծառաներուն, որ տէրը երբ գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ինք գօտին մէջքը պիտի կապէ ու սեղան նստեցնէ զանոնք, և առաջ անցնելով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց։ 38 – Եւ եթէ էէլերորդ երկրորդ պահուն գայ, կամ երրորդ պահուն գայ ու այնպէս գտնէ, երանելի են այն ծառաները։ 39 – Բայց զայս գիտցէք, որ եթէ տանուտերը գիտնար թէ ո՛ր ատեն գողը կու գայ, արթուն կը կենար ու թոյլ չէր տար որ իր տունը ծակեն։ 40 – Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ այնպիսի ժամու մը մէջ որ դուք չէք կարծեր։

41 – Եւ Պետրոս ըսաւ անոր, Տէր, այդ առակը մեզի՞ կ'ըսես թէ ամէնուն ալ։ 42 – Եւ Տէրը ըսաւ, Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ ու խմաստուն անտեսը, զոր տէրը իր դերդաստանին վրայ պիտի դնէ, որպէս զի ատենին անոնց ուտելիքը տայ։ 43 – Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած ատենը այնպէս գըտած պիտի գտնէ։ 44 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա։ 45 – Հապա եթէ այն ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ. և սկսի ծառաները ու աղախինները ծեծել, և ուտել ու խմել ու գինովնալ, 46 – Այն ծառային տէրը պիտի գայ այնպէս օր մը որ չսպասեր, և այնպէս ժամ մը որ չգիտեր, և զանիկա մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը անհաւատարիմներուն հետ պիտի դնէ։ 47 – Եւ այն ծառան որ իր տէրոջը կամքը գիտէ ու չպատրաստուիր, ոչ ալ անոր կամքը ի գործ կը դնէ, շատ ծեծ պիտի ուտէ։ 48 – Բայց ան որ չգիտեր ու ծեծի արժանի բան մը կ'ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ. որու որ շատ որսեցաւ, շատ պիտի ուզուի անկէ, և որու որ աւելի յանձնուեցաւ, ա՛լ աւելի պիտի պահանջուի անկէ։

49 – Ես կրակ ձգելու եկայ երկրի վրայ, ու ի՞նչ կ'ուզեմ եթէ արդէն բորբոքած է։ 50 – Բայց մկրտութիւնն մը ունիմ մկրտուելու, և ինչպէս կը տագնապիմ մինչև կատարուի։ 51 – Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՞ւն տալու եկայ. ձեզի կ'ըսեմ, Ոչ, հապա բաժանմունք. 52 – Վասն զի ասկէ ետև մէկ տան մէջ հինգը իրարմէ բաժնուած պիտի ըլլան, երեքը երկուքին ու երկուքը երեքին. 53 – Հայրը պիտի բաժնուի որդիին, և որդին հօրմէն, մայրը աղջկէն ու աղջիկը մօրմէն, կեսուրը իր հարսին ու հարսը իր կեսուրէն։

54 – Եւ ըսաւ ժողովուրդներուն, Երբ արեւմտեան կողմէն ամպ մը երած կը տեսնէք, շուտ մը կ'ըսէք թէ Անձրեւ պիտի գայ, և այնպէս կ'ըլլայ։ 55 – Ու երբ հարաւային հովը կը փչէ, կ'ըսէք թէ Տաք պիտի ըլլայ, և այնպէս կ'ըլլայ։ 56 – Կեղծաւորներ, երկրի ու երկինքի երեսը քննելը գիտէք, հապա այս ժամանակը ինչպէս չէք քններ։ 57 – Եւ ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրաւունքը։ 58 – Երբ դուն քու ոսոխիդ հետ իշխանին երթալու ըլլաս, ճամբուն մէջ անկէ աղատուելու համար ջանք բրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջև քաշէ, ու դատաւորը դահիճին ձեռքը տայ քեզ, ու դահիճն ալ բանտը դնէ։ 59 – Քեզի կ'ըսեմ, բնաւ պիտի չելլես անկէ, մինչև վերջին լուման չվճարես։

## ԳԼ. ԺԳ

Եւ ոմանք այն ատեն ներկայ գըտնուելով պատմեցին անոր Գալիլեացւոց վրայով, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց։ 2 – Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Կը կարծէ՞ք որ այն Գալիլեացիները աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին։ 3 – Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա եթէ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։ 4 – Կամ թէ այն տասնըութ հոգին որոնց վրայ Սէլոյամի մէջի աշտարակը ինկաւ, և զանոնք մեռցուց. կը կարծէ՞ք որ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին։ 5 – Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա եթէ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։



6 – Ա՛յս առակն ալ ըսաւ. Մարդ մը իր այգիին մէջ անկուած թզենի մը ունէր, ու եկաւ անկէ պտուղ փնտռելու և չգտաւ։ 7 – Ուստի ըսաւ այգեպանին, Ա՛յս երեք տարի է որ կու գամ այդ թզենիին վրայ պտուղ փնտռելու, ու չեմ գտներ, ալ տուիկա կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ։ 8-Անիկա պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Տէր, այս տարի ալ տուիկա թող տուր, մինչև սաղը բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ; 9 – Եւ եթէ պտուղ տայ՝ ապէ, ապա թէ ոչ՝ գալ դարձի կարես տուիկա։

10 – Եւ ինք ժողովարաններէն մէկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցնէր։ 11 – Եւ ահա կին մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնըութ տարիէ ի վեր, ու կծկուած էր և ամենևին չէր կրնար շիտակ կայնիլ։ 12 – Ու երբ Յիսուս զանիկա տեսնելով էրէն կանչեց և ըսաւ անոր, Ով կին, դուն քու հիւանդութենդ արձակուած ես։ 13 – Ու ձեռքը անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտակուեցաւ ու փառք կու տար Աստուծոյ։ 14 – Իսկ ժողովարանին իշխանը պատասխան տուաւ բարկանալով որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց, և ըսաւ ժողովուրդին, Վեց օր կայ, որոնց մէջ արժան է գործ գործել. ուստի այն օրերը եկէք բժշկուեցէք, ու ոչ թէ շաբաթ օրը։ 15 – Ա՛յն ատեն Տէրը պատասխան տուաւ անոր ու ըսաւ, *Կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր եղը կամ էշը մսուրէն չ'ըձակեր, սրպէս զի տանի ջուր տայ։ 16 – Հապա ասիկա որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասնըութ տարի Սատանայ գանիկա կապեց, չէ՞ր վայելը որ շաբաթ օրը այն կապէն արձակուի։ 17 – Եւ երբ այս բանը ըսաւ, իրեն հակառակ կեցողները ամէնն ալ ամօթով մնացին. ու բոլոր ժողովուրդը կ'ուրախանար այն ամէն փառաւոր գործերուն համար՝ որոնք անկէ կ'ըլլային։

18 – Եւ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցնեմ զանիկա։ 19 – Մանանեխի հատի նման է, զոր մարդ մը առաւ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու մեծ ծառ եղաւ, ու երկինքի թռչուները անոր ճիւղերուն վրայ բնակեցան։

20 – Դարձեալ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցընեմ։ 21-Խմորի նման է, զոր կին մը առաւ, երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև ամէնն ալ խմորեցաւ։

22 – Եւ քաղաքները ու գեղերը պտըտելով կը սորվեցնէր, ու դէպ ի Երուսաղէմ ճամբայ կ'ընէր։ 23 – Եւ մէկը ըսաւ անոր, Տէր, քիչե՞ր են անոնք որ պիտի փրկուին։ 24 – Անիկա ալ ըսաւ անոնց, Ջանք բրէք որ նեղ դռնէն մտնէք, քանզի կ'ըսեմ ձեզի որ շատերը մտնել պիտի ուզեն և պիտի չկրնան։ 25 – Անկե ետև երբ տանուտերը ելլէ ու դուռը գոցէ, և դուք սկսիք դուրսը կենալ, ու դուռը զարնել և ըսել, Տէր, Տէր, բաց մեզի. ան ալ պատասխան տալով պիտի ըսէ ձեզի, Չեզ չեմ ճանչնար ուրկէ՛ էք։ 26 – Ա՛յն ատեն պիտի սկսիք ըսել, Մենք քու առջևդ կերանք ու խմեցինք, և դուն մեր փողոցներուն մէջ սորվեցուցիր։ 27 – Եւ անիկա պիտի ըսէ, Չեզի կ'ըսեմ, Չեզ չեմ ճանչնար ուրկէ՛ էք. ինկդի կեցէք ինծմէ, բոլոր անիրաւութիւն գործողներդ։ 28 – Հոն պիտի լայ լալ ու ակռաներ կրճտել, երբ տեսնէք Աբրահամը ու Իսահակը և Յակոբը ու բոլոր մարգարէները Աստուծոյ թագաւորութեանը մէջ, ու ձեզ դուրս հանած։ 29 – Եւ պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն և հիւսիսէն ու հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեանը մէջ։ 30 – Եւ ահա կան յետիններ՝ որոնք առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ որոնք յետիններ պիտի ըլլան։

31 – Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու ըսին անոր, Ելիր ու գնա ասկէ, վասն զի Հերովդէս քեզ սպանել կ'ուզէ։ 32 – Եւ ինք ըսաւ անոնց, Գացէք, այն աղուէսին ըսէք, Ահա ես դևեր կը հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և վաղը, ու երրորդ օրը պիտի կատարուիմ։ 33 – Միւրդ օրը պիտի կատարուիմ։ 33 – Միայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և միւս օրը պտրտիմ, վասն զի կարելի չէ որ մարգարէ մը Երուսաղէմէ դուրս կորսուի։ 34 – Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպանէիր, ու քեզի ղրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու տղաքներդ

*Ո՛ռւն, կեղծաւորները

ժողվել ուզեցի, ինչպէս Հաւը իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ, և դուք չուզեցիք։ 35 – Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ։ սակայն ձեզի կ'ըսեմ, որ Ա՛լ ինձ պիտի չտեսնէք, մինչև գայ այն ժամանակը որ պիտի ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։

## ԳԼ. ԻԴ

Ու եղաւ որ երբ ինք շաբաթի օր մը վարիսեցւոց գլխաւորներէն մէկուն տունը մտաւ Հաց ուտելու, ու անոնք անոր կը սպասէին։ 2 – Եւ ահա հոն ջրգոզեալ մարդ մը կար իր առջեւ։ 3 – Եւ Յիսուս պատասխան տուաւ ու խօսեցաւ օրինականներուն ու փարիսեցիներուն՝ ըսելով, Արժա՞ն է շաբաթի օրը բժշկել։ 4 – Անոնք ալ լուռ կեցան. և ինք բռնեց զանիկա, բժշկեց ու ճամբեց։ 5 – Եւ պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Ձեզմէ որո՞ւն էշը կամ եզը Հորը խնայուբ ըլլայ, ու շուտ մը չհաներ զանիկա շաբաթի օրը։ 6 – Եւ այս բաներուն չկրցան անոր պատասխան տալ։

7 – Աւտակ մը նրուցեց այն հրաւիրուած մարդոց ալ, երբ տեսաւ թէ ինչպէս առաջին բազմոցները կ'ընտրէին, ու ըսաւ անոնց, 8 – Երբ մարդէ մը հարսնիքի հրաւիրուիս, առաջին բազմոցին վրայ մի նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուաւոր մէկն ալ հրաւիրուած ըլլայ անկէ։ 9 – Եւ ան որ քեզ ու զանիկա հրաւիրեց, գայ ըսուցէ քեզի, Այսոր տեղ տուր, և անկէ ետև ակսիս ամօթով յետին տեղը բռնել։ 10 – Հապա երբ հրաւիրուիս, գնա յետին տեղը նստէ. որպէս զի երբ քեզ հրաւիրողը գայ, քեզի ըսէ, Բարեկամ, վեր հրամայէ. այն ատեն քեզի հետ նստողներուն առջեւ քեզի փառք կ'ըլլայ։ 11 – Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի. և ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ։

12 – Ու զինք հրաւիրողին ալ ըսաւ, Երբ ճաշ կամ ընթրիք կ'ընես, մի կանչեր քու բարեկամներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու ազգականներդ, ու ոչ հարուստ դրացիներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն, ու քեզի հատուցում ըլլայ։ 13 – Հապա երբ հացկերոյթ կ'ընես, աղքատներ, պակասաւորներ, կաղեր ու կոյրեր հրաւիրէ. 14 – Ու երանելի պիտի ըլլաս, վասն զի անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատուցանել. քանզի արդարներուն յարութիւնն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հատուցուի։

15 – Եւ անոնց նստողներէն մէկը երբ լսեց այս խօսքը՝ ըսաւ անոր, Երանի՛ անոր որ Աստուծոյ թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ։ 16 – Եւ ինք ըսաւ անոր, Մարդ մը մեծ ընթրիք ըրաւ ու շատ մարդիկ հրաւիրեց։ 17 – Եւ ընթրիքին ատենը ղրկեց իր ծառան, որպէս զի հրաւիրուածներուն կանչէ ըսելով, Եկէք, վասն զի արդէն ամէն բան պատրաստ է։ 18 – Եւ ամէնը միկէն սկսան ետ քաշուիլ. առաջինը անոր ըսաւ, Ես արտ մը ծախու առի, ու պէտք է որ ելլեմ տեսնեմ զանիկա. կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ։ 19 – Եւ միւսը ըսաւ, Ես հինգ զոյգ եզ ծախու առի, ու կ'երթամ որ զանոնք փորձեմ. կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ։ 20 – Եւ միւսը ըսաւ, Կին առի, ու անոր համար չեմ կրնար գալ։ 21 – Եւ այն ծառան եկաւ ու իր տէրոջը պատմեց այս բաները. այն ատեն բարկացաւ տանուտէրը ու ըսաւ իր ծառային, Շուտով քաղաքին հրապարակներուն ու փողոցները ելլը, և աղքատները ու պակասաւորները և կաղերը ու կոյրերը հոս մուցուր։ 22 – Ծառան ալ ըսաւ, Տէր, եղաւ ինչ որ հրամայեցիր, ու տակաւին տեղ կայ։ 23 – Եւ տէրը ըսաւ ծառային, Ելիր ճամբաները ու ցանկերը, և ֆռոնդէրէդ ստիպէ հոս մտնելու, որպէս զի տունս լեցուի։ 24 – Քանզի կ'ըսեմ ձեզի, որ այն հրաւիրուածներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ։

25 – Ու իրեն հետ շատ ժողովուրդներ կ'երթային. և դառնալով անոնց ըսաւ, 26 – Եթէ մէկը ինձի կու գայ, ու չատեր իր հայրը և մայրը, ու կինը և զաւակները, ու եղբայրները և քոյրերը, նաև իր կեանքն ալ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 27 – Եւ ով որ իր խաչը չվերցնէր ու իմ ետևէս գար, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 28 – Վասն զի ձեզմէ ո՞վ աշտարակ մը շինել ուզելով, առաջ չնստիր ու հաշիւ չընէր ծախքը, թէ զանիկա լմնցնելու բաւական ունի՞. 29 – Որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բոլոր տեսողները սկսին զանիկա ծաղր ընել, 30 – Եւ ըսել, Թէ Ադա մարդը սկսաւ շինել ու չկրցաւ լմնցնել։ 31 – Կամ թէ ո՞ր թագաւորը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալով, առաջ չնստիր ու խորհիր, թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ։ 32 – Ապա թէ ոչ՝ քանի որ անիկա հեռու է, դեսպան ղրկելով խաղաղութիւն կը խնդրէ։ 33 – Ահա այսպէս ալ ձեր մէջէն ամէն մէկը եթէ իր բոլոր ստացուածքէն ետ չկենայ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 34 – Աղը աղէկ բան է. բայց եթէ աղը իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի համեմուայ։ 35 – Ոչ հողի ու ոչ թրիքի տեղ օգտակար կ'ըլլայ, հապա զանիկա դուրս կը նետեն։ Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

## ԳԼ. ԻԵ

Եւ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր կը մօտենային իրմէ լսելու համար։ 2 – Եւ փարիսեցիները ու դպիրները տրտունջ կ'ընէին ու կ'ըսէին, Այրկա մեղաւորները կ'ընդունի, ու անոնց հետ կ'ուտէ։

3 – Եւ անիկա այս առակը խօսեցաւ անոնց՝ ըսելով, 4 – Ձեզմէ ո՞վ է այն մարդը որ հարիւր ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը կորսնցնէ, իննսունըինը չը՞ ձգեր անապատին մէջ, ու այն կորսուածին ետևէն երթայ, մինչև զանիկա գտնէ, 5 – Ու երբ կը գտնէ, ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ զանիկա։ 6 – Եւ տունը գալով, կը կանչէ բարեկամները ու դրացիները, ու անոնց կ'ըսէ, Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ։ 7 – Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ ապաշխարող մեղաւորի համար որ կ'ապաշխարէ, քան թէ իննսունըինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ։ 8 – Կամ թէ ո՞վ է այն կինը որ տասը դրամ ունենայ, ու եթէ դրամ մը կորսնցնէ, ճրագ չը՞վառեր, ու տունը մէջ ու եր յարներ և զգուշութեամբ փնտռեր, մինչև գտնէ։ 9 – Ու երբ կը գտնէ, կը կանչէ բարեկամները ու դրացիները, և կ'ըսէ, Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսնցուցած դրամս գտայ։ 10 – Այնպէս ես, ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ ապաշխարող մեղաւորի համար որ կ'ապաշխարէ։

11 – Եւ ըսաւ, Մարդ մը երկու որդի ունէր։ 12 – Ու անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ, Հայր, տո՛ ասոցուածքէդ ինձի հասնելու բաժինը տուր ինծի. ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը։ 13 – Եւ շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները ժողվեց ու հեռու երկիր մը գնաց, և հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց։ 14 – Ու երբ ամէնը հատցուց, այն երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ, ու ինք սկսաւ չքաւոր ըլլալ։ 15 – Եւ գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մնաւ, ան ալ իր ագարակը ղրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար։ 16 – Եւ կը փափաքեր խոզերուն կերած եղինջներէն իր փորը լեցնել, ու մէկը չէր տար անոր։ 17 – Եւ ինքզինքին գալով՝ ըսաւ, Քանի՛ բանուորներ կան իմ հօրս տունը հացով լեցուած, ու ես հոս սովամահ կը կորաւիմ։ 18 – Ելլեմ, երթամ իմ հօրս, և ըսեմ անոր, Հայր, մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեւդ, 19 – Եւ ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու. զիս քու վարձկաններէդ մէկուն պէս ըրէ։ 20 – Ու ելաւ իր հօրը եկաւ. և մինչ դեռ ինք շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա ու գութը շարժեցաւ, և վազելով անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա։ 21 – Որդին ալ ըսաւ անոր, Հայր, մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեւդ, և ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու։ 22 – Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն, Հանեցէք առաջին պատմուճանը ու հագցուցէք անոր, և մատանի դրէք անոր ձեռքը, ու կօշիկներ՝ անոր ոտքերը։ 23 – Եւ պարարտ զուարակը բերէք, մորթեցէք, և ուտենք և ուրախ ըլլանք. 24 – Վասն զի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ. և սկսան ուրախ ըլլալ։ 25 – Ու անոր մեծ որդին ագարակն էր, ու երբ կու գար ու տունը մօտեցաւ, նուագարաններուն և պարերուն ձայնը լսեց։ 26 – Ու ծառաներէն

ներէն մէկը լրեն կանչելով կը հարցընէր թէ այս ինչ է։ 27 – Անիկա ալ ըսաւ անոր, Եղբայրդ եկաւ, ու Հայրդ պարարտ զոհարակը մորթեց, վասն զի առողջ ձեռք ձգեց զանիկա։ 28 – Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել. ուստի իր Հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր։ 29 – Եւ անիկա պատասխան տալով ըսաւ Հօրը, Ահա այսչափ տարի է որ քեզի կը ծառայեմ, ու բնաւ քու խօսքիդ դուրս չելայ, ու ինծի երբէք ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի։ 30 – Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուածքդ բոլորերուս հետ կերաւ, անոր մորթեցիր պարարտ զոհարակը։ 31 – Եւ անիկա ըսաւ անոր, Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես, ու իմ բոլոր ունեցածս քուկդ է։ 32 – Սակայն պէտք էր ուրախ ըլլալ և խնդալ, վասն զի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ։

## ԳԼ. ԺԶ

Ու իր աշակերտներուն ալ ըսաւ, Հարուստ մարդ մը կար, որ անտես մը ունէր, և անոր վրայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ունեցածը կը փճացնէ։ 2 – Ուստի կանչեց զանիկա ու ըսաւ անոր, Ի՞նչ է այս զոր քեզի համար կը լսեմ. քու անտեսութեանդ հաշիւը տուր, վասն զի ա՛լ չես կրնար անտես ըլլալ։ 3 – Եւ անտեսը իր մտքին մէջ ըսաւ, Ի՞նչ ընեմ, որովհետև իմ տէրս անտեսութիւնը ինծմէ կ'առնէ. *Հողագործութիւն չեմ կրնար ընել", մնալուկ կ'ամչնամ։ 4 – Գիտեմ ի՛նչ պիտի ընեմ, որպէս զի երբ իմ անտեսութենէս մերժուիմ, ոմն իրենց տունը ընդունին։ 5 – Եւ իր տէրոջը պարտականները մէկիկ մէկիկ իրեն կանչելով ըսաւ առաջինին, Դուն իմ տէրոջս ո՞րչափ պարտք ունիս։ 6 – Ան ալ ըսաւ, Հարիւր մոր ձէթ. և ըսաւ անոր, Գիրդ առ ու շուտով նստ՝ յիսուն գրէ։ 7 – Եաքը միւսին ըսաւ, Դուն ալ ո՞րչափ պարտք ունիս. և ան նիկա ըսաւ, Հարիւր քուռ ցորեն. ու ըսաւ անոր, Գիրդ առ և ութսուն գրէ։ 8 – Ու տէրը անիրաւ անտեսը գովեց, որ խելացութիւնով ըրաւ. վասն զի այս աշխարհին որդիները իրենց ցեղին մէջ լուսոյ որդիներէն աւելի խելացի են։ 9 – Եւ ես ալ ձեզի կ'ըսեմ, Անիրաւ մամոնային ձեզի բարեկամներ ըրէք, որպէս զի *երբ անիկա պակսի", ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ ընդունին։ 10 – Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, շատի մէջ ալ հաւատարիմ է. և ան որ քիչի մէջ անիրաւ է, շատի մէջ ալ անիրաւ է։ 11 – Ուստի եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի։ 12 – Ու եթէ օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի։ 13 – Ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառայութիւն ընել, վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ, կա՛մ †մէկուն պիտի յարի և միւսը արհամարհէ. չէք կրնար Աստուծոյ և մամոնայի։

14 – Եւ փարիսեցիներն ալ, որոնք արծաթասէր էին, այս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկա։ 15 – Եւ ըսաւ անոնց, Դուք էք որ մարդոց առջև ինքզինքնիդ կ'արդարացնէք, բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը. վասն զի մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջև պիղծ է։ 16 – Օրէնքը ու մարգարէները մինչև Յովհաննէս էին. անկէ եւս Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի, և ամէն մէկը անոր մէջ մտնելու կ'արտորայ։ 17 – Դիւրին է որ երկինք ու երկիրը անցնին, քան թէ օրէնքին մէկ նշանագիրը իյնայ։ 18 – Ով որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, և ով որ երիկէ արձակուած կին մը առնէ, շնութիւն կ'ընէ։

19 – Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր, և ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կ'ընէր։ 20 – Ու Ղազարոս անունով աղքատ մը կար վէրքերով լեցուն, որ անոր դրանը առջև դրուած էր. 21 – Եւ կը փափաքէր որ այն հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը լեցնէ. նաև շուներն ալ կու գային և անոր վէրքերը կը լզէին։ 22 – Ու եղաւ որ այն աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զանիկա. հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ։ 23 – Եւ դժոխքին մէջ երբ տանջանքի մէջ էր, իր աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը անոր գոգը հանգչած։ 24 – Եւ ինք աղաղակեց ու ըսաւ, Հայր Աբրահամ, ողորմէ ինծի ու ղրկէ Ղազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թաթխէ, ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ։ 25 – Եւ Աբրահամ ըսաւ, Որդեակ, միտքդ բեր, որ դուն քու կեանքիդ առներդ քու բարիքներդ առիր, նոյնպէս Ղազարոս՝ չարիքներ. հիմա անիկա [հոս] կը միսիթարուի, ու դուն կը տանջուիս։ 26 – Եւ այս ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր մէջտեղ մեծ անդունդ մը կայ հաստատուած, այնպէս որ ձեզի անցնիլ ուզողները չկրնան, ոչ ալ անկէ մեզի փոխուիլ նէրէը անցնին։ 27 – Ան ալ ըսաւ, Ուրեմն կ'աղաչեմ քեզի, Հայր, որ զանիկա իմ Հօրս տունը ղրկես, 28 – Քանզի հինգ եղբայր ունիմ, որպէս զի երէ անոնց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք ալ այս չարչարանքին տեղը գան։ 29 – Եւ Աբրահամ ըսաւ անոր, Անոնք Մովսէսը ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն։ 30 – Ան ալ ըսաւ, Ոչ, Հայր Աբրահամ, հապա եթէ մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն։ 31 – Եւ անիկա ըսաւ անոր, եթէ Մովսէսի ու մարգարէներուն մտիկ չեն ըներ, ոչ ալ եթէ մեռելներէն մէկը յարութիւնն առնելու ըլլայ, պիտի հաւատալուին։

## ԳԼ. ԺԷ

Եւ ըսաւ իր աշակերտներուն, Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վա՛յ անոր, որուն ձեռքով կու գան։ 2 – Անոր աւելի աղէկ է, որ անոր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի, ու անիկա ծովը ձգուի, քան թէ այս պզտիկներէն մէկը գայթակղեցնէ։ 3 – Զգուշացէք ձեր անձերնուն։ եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, յանդիմանէ զանիկա, ու եթէ ապաշխարէ, ներէ անոր։ 4 – Եւ եթէ օրը եօթը անգամ քեզի դէմ մեղանչէ, ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու ըսէ, Կ'ապաշխարեմ", ներէս անոր։

5 – Եւ առաքեալները ըսին Տէրոջը, Մեր հաւատքը աւելցուր։ 6 – Եւ Տէրը ըսաւ, Եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, այս թմենիին կրնայիք ըսել, Արմատաքի խլուէ ու ծովուն մէջ անկուէ, ան ալ պիտի հնազանդէր ձեզի։

7 – Բայց ձեզմէ ո՞վ է այն հարեր՝ որ ունենայ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա երբ տգարակէն դառն մտնէ, շուտով ըսէ անոր թէ Անցիր սեղան նստէ։ 8 – Հապա չը՞սէր անոր թէ Պատրաստէ իմ ընթրիքս, ու գօտիդ կապած ինծի սպասաւորութիւն ըրէ, մինչև ես ուտեմ ու խմեմ, ու եաքը դուն ալ կերը ու խմէ։ 9 – Միթէ շնորհակա՞լ կ'ըլլայ այն ծառային, իրեն հրամայուած բաները կատարելուն համար. չեմ կարծեր։ 10 – Նոյնպէս դուք երբ բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի զոյն որ պարտական էինք ընելու՝ ըրինք։

11 – Ու եղաւ որ երբ ինք Երուսաղէմ կ'երթար, Սամարիայի և Գալիլեայի մէջտեղէն կ'անցնէր։ 12 – Ու երբ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուն կայնեցան։ 13 – Եւ ձայներնին վերացուին ու ըսին, Յիսուս վարդապետ, ողորմէ մեզի։ 14 – Եւ տեսնելով՝ ատնոնց ըսաւ, Գացէք դուք ձեզ քահանաներուն ցուցուցէք. ու եղաւ որ երբ կ'երթային, մաքրուեցան։ 15 – Եւ ատնոնցմէ մէկը երբ տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք կու տար Աստուծոյ. 16 – Ու երեսի վրայ անոր ոտքը ինկալով շնորհակալ կ'ըլլար անոր. և ինք Սամարացի էր։ 17 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ այն ինները ո՞ր են. 18 – Այս օտարազգիէն զատ դարձնող չգտնուեցա՞ն որ դառնալով Աստուծոյ փառք տան։ 19 – Եւ ըսաւ անոր, Ելիր գնա, քու հաւատդ քեզ բժշկեց։

20 – Ու երբ փարիսեցիները իրեն հարցուցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ, պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը դիտումով երեւ-

*Յոյն. չեմ կրնար բրել

*Այսինքն, ձեր կատարելութեան ժամանակը

†Կամ, մէկը պիտի մեծարէ

ցած բաներով չդար։ 21 – Ու պիտի չըլլեն թէ Ա՛հա հոս է, կամ Ա՛հա հոն, վասն զի տա՛ս Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է։

22 – Աշակերտներուն ալ ըսաւ, Օրեր պիտի գան որ դուք Որդւոյ մարդոյ օրերէն մէկը տեսնելու պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք։ 23 – Եւ էրէ ըսեն ձեզի թէ Ա՛հա հոս է, կամ Ա՛հա հոն, մի երթաք ու անոնց մի հետեւիք։ 24 – Վասն զի ինչպէս փայլակը երկինքին տակ մէկ դիէն փայլատակելով մինչև երկինքին տակ միւս դին լոյս կու տայ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին մարդոյ իր ֆալըն օրը։ 25 – Մէյնթէ պէտք է որ ինք առաջ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս ազգէն։ 26 – Եւ ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ։ 27 – Կ՛ուտէին, կը խմէին, կին կ՛առնէին, երկան կը տրուէին, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ ու ամէնը կորնցուց։ 28 – Նմանապէս, ինչպէս Ղովթի օրերը եղաւ, կ՛ուտէին, կը խմէին, ծախու կ՛առնէին, կը ծախէին, կը տնկէին, կը շինէին։ 29 – Բայց այն օրը որ Ղովթ Սոդոմ ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կորնցուց։ 30 – Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը որուն մէջ Որդին մարդոյ պիտի յայտնուի։ 31 – Այն օրը ան որ տանիքին վրայ է և իր կապասիները տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու. և ան որ արտին մէջ է, նոյնպէս թող ետ չդառնայ։ 32 – Մի՛տքերնիդ բերէք Ղովթի կինը։ 33 – Ով որ իր կեանքը կ՛ուզէ ապրեցնել՝ պիտի կորնցնէ զանիկա, և ով որ կը կորնցնէ՝ պիտի ապրեցնէ զանիկա։ 34 – Ձեզի կ՛ըսեմ, Ա՛յն գիշերը երէք երկու հոգի մէկ անկողինի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. 35 – և՝ երէք երկու կին մէկտեղ աղալու ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ ԵՒ երէք երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 36 – Եւ պատասխան տալով ըսին անոր, Տէր, ո՞ւր պիտ ըլլայ այս բանը։ 37 – Ան ալ ըսաւ անոնց, Ուր մարմինն կայ, հոն պիտի ժողովուին արծիւները։

## Գ.Լ. ԺԸ

Ա՛նոնց առակ մըն ալ ըսաւ այս բանին վրայով թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ։ 2 – Ըսաւ, Դատաւոր մը կար քաղաքի մը մէջ, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր ամչնար։ 3 – Եւ նոյն քաղաքին մէջ որբևայր մը կար, որ անոր կու գար ու կ՛ըսէր, Իրաւունք ըրէ ինծի ― ազատ ինձ իմ ոսոխէս։ 4 – Եւ անիկա ժամանակ մը չէր ուզեր անոր դէմ ընել։ բայց ետքը ըսաւ իր մտքին մէջ, Թէև Աստուծմէ չեմ վախնար ու մարդէ չեմ ամչնար, 5 – Գոնէ այս որբևայրին ինծի ձանձրացնելուն համար իրեն իրաւունք ընեմ, որպէս զի չգայ ամէն առեն ինծի թախանձէ։ 6 – Եւ Տէրը ըսաւ, Լսեցէք, անիրաւ դատաւորը ի՛նչ կ՛ըսէ։ 7 – Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ՛աղաղակեն, թէև երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ։ 8 – Ձեզի կ՛ըսեմ որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ. բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ։

9 – Եւ մէկ քանիներուն, որոնք ի՛րենց անձերուն վրայ կը վստահանային թէ արդար են, և ուրիշները կ՛անարգէին, այս առակը ըսաւ. 10 – Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր։ 11 – Փարիսեցին կայներ էր, ու առանձին այսպէս աղօթք կ՛ընէր. Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ այս մաքսաւորին պէս. 12 – Հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացուածքիս տասնորդը կու տամ։ 13 – Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ երկինքը վերցնել, հապա իր կուրծքը ծեծելով կ՛ըսէր, Աստուած, ողորմի ինծի մեղաւորիս։ 14 – Ձեզի կ՛ըսեմ թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իր տունը իջաւ. վասն զի ով որ ինքզինք կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։

15 – Մանր տղաք ալ բերին իրեն, որպէս զի անոնց դպչի. ու աշակերտները տեսնելով կը յանդիմանէին զանոնք։ 16 – Բայց Յիսուս զանոնք իրեն կանչելով ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան, և մի արգիլէք զանոնք, վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է։ 17 – Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղոց մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ։

18 – Եւ իշխան մը հարցուց անոր ու ըսաւ, Բարի վարդապետ, ի՞նչ գործեմ որպէս զի յաւիտենական կեանքը ժառանգեմ։ 19 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ՛անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած։ 20 – Պատուիրանքները գիտես. Շնութիւն մի ընէր, Սպանութիւն մի ընէր, Գողութիւն մի ընէր, Սուտ վկայութիւն մի ընէր, Քու հայրդ ու մայրդ պատուէ։ 21 – Ան ալ ըսաւ, Ատոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ։ 22 – Զայս լսելով Յիսուս ըսաւ անոր, Բան մըն ալ պակաս է քեզի. քու բոլոր ունեցածդ ծախէ և աղքատներուն բաշխէ, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ հետեւէս։ 23 – Անիկա երբ այս բանը լսեց, տրտմեցաւ, վասն զի շատ հարուստ էր։ 24 – Եւ Յիսուս երբ զանիկա տրտմած տեսաւ, ըսաւ, Ո՛րչափ դժուար է անոնց որ հարստութիւն ունին, Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ 25 – Ուռնդի գիւրին է որ ուղտը ասղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ։ 26 – Եւ անոնք որ լսեցին, կ՛ըսէին, Ա՛ով կրնայ փրկուիլ։ 27 – Եւ ինք ըսաւ, Մարդոց կողմանէ անկարելի եղած բաները Աստուծոյ կողմանէ կարելի են։ 28 – Ու Պետրոս ըսաւ, Ա՛հա մենք ամէն բան թողուցինք և քու հետեւեցանք։ 29 – Ու անիկա ըսաւ անոնց, Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի թէ Մարդ մը չկայ որ թողուց տուն, կամ ծնողք, կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիներ Աստուծոյ թագաւորութեանը համար, 30 – Որ պիտի չառնէ բազմապատիկ այս առեներն մէջ, և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը։

31 – Եւ տասներկուքը իր քով առնելով ըսաւ անոնց, Ա՛հա մենք երուսաղէմ կ՛ելլենք, և մարգարէներուն ձեռքով Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին։ 32 – Վասն զի հեթանոսներուն պիտի մատնուի, ու ծաղր պիտի ըլլայ և պիտի նախատուի, ու պիտի թքնեն անոր, 33 – Եւ պիտի ձեծեն ու սպանեն զանիկա, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ 34 – Բայց անոնք այս բաներէն մէկն ալ չհասկցան. ու այս խօսքը անոնցմէ ծածկուած էր, և ըսած բաները չէին իմանար։

35 – Ու եղաւ որ երբ Երիքովի կը մօտենար, կոյր մը ճամբուն քովը նստեր էր մուրալու։ 36 – Երբ լսեց բազմութեանը անցնելը, հարցուց թէ ի՞նչ է այն։ 37 – Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազովրեցի կ՛անցնի։ 38 – Ասոր աղաղակեց ու ըսաւ, Յիսուս, Որդի Դաւթի, ողորմէ ինծի։ 39 – Եւ անոնք որ առջևէն կ՛երթային, կը յանդիմանէին զանիկա, որպէս զի լռէ. բայց անիկա աւ՛ելի կ՛աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմէ ինծի։ 40 – Եւ Յիսուս կանգ առնելով՝ հրամայեց բերուիլ զանիկա իրեն մօտեցաւ, հարցուց անոր ու ըսաւ, 41 – Ի՞նչ կ՛ուզես որ քեզի ընեմ. անիկա ալ ըսաւ, Տէր, որ աչքերս բացուին։ 42 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Թող բացուին. քու հաւատքդ քեզ բժշկեց։ 43 – Եւ իսկոյն անոր աչքերը բացուեցան, ու անոր ետեւէն կ՛երթար, և փառք կու տար Աստուծոյ. բոլոր ժողովուրդն ալ տեսնելով զԱստուած կը գովաբանէին։

## Գ.Լ. ԺԹ

Եւ մտնելով Երիքովի միջէն կ՛անցնէր։ 2 – Ա՛հա մարդ մը կար, ա՛նունը Զաքէոս ըսուած, որ մաքսապետ էր ու ինք հարուստ էր։ 3 – Եւ կ՛ուզէր տեսնել թէ ո՛վ է Յիսուս, ու բազմութենէն չէր կրնար, վասն զի հասակով կարճ էր։ 4 – Եւ առաջ վազեց ու ժանտաթզենիի մը վրայ ելաւ, որպէս զի զանիկա տեսնէ, վասն զի անկէ պիտի անցնէր։ 5 – Ու երբ Յիսուս այն տեղը եկաւ, վեր նայելով զանիկա տեսաւ, ու ըսաւ անոր, Զաքէոս, շուտ բրէ, ասկէ վար իջիր, վասն զի պէտք է ինծի այսօր քու առնդ կենալ։ 6 – Եւ արտարօտով

վոր իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զանիկա։ 7 – Երբ մէկն ալ տեսաւ, կը տրտնջէին ու կ'ըսէին թէ Մեղաւոր մարդու քով մնաւ իջեւան ընելու։ 8 – Եւ Զաքէոս կայնեցաւ ու ըսաւ Տէրոջը, Տէր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կու տամ, ու եթէ ոյպառութեամբ մէկուն զրկանք ըրած եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ անոր։ 9 – Եւ Յիսուս ըսաւ անոր, Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, քանզի ասիկա ալ Աբրահամի որդի է։ 10 – Վասն զի Որդին մարդոյ եկաւ որպէս զի կորսուածը փնտռէ ու փրկէ։

11 – Ու երբ անոնք այս բաները կը լսէին, առակ մըն ալ ըսաւ իր երուսաղէմ մօտենալուն համար, և անոնց այնպէս կարծելուն համար թէ շուտ մը Աստուծոյ թագաւորութիւնը պիտի յայտնուի։ 12 – Ուստի ըսաւ, Ազնուական մարդ մը հեռաւ երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առնելու և դառնալու։ 13 – Եւ իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց, Բանեցուցէք այնչափ մինչեւ ես գամ։ 14 – Եւ անոր քաղաքացիները զանիկա կ'ատէին, ու դեսպաններ զրկեցին անոր ետեւէն, ըսելով թէ Զենք ուզեր որ ասիկա մեր վրայ թագաւորութիւն բնէ։ 15 – Ու եղաւ որ երբ անիկա թագաւորութիւնը առնելով ետ դարձաւ, իրեն կանչել տուաւ այն ծառաները որոնց ոսկը տուեր էր, որպէս զի գիտնայ թէ ո՛վ ի՛նչ շահ բրած է։ 16 – Եւ առաջինը եկաւ ու ըսաւ, Տէր, քու մնագ տասը մնաս շահ ըրաւ։ 17 – Եւ ըսաւ անոր, Ապրիս, բարի ծառայ, որովհետեւ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունենչիր։ 18 – Ու երկրորդը եկաւ ու ըսաւ, Տէր, քու մնագ հինգ մնաս շահ ըրաւ։ 19 – Եւ ըսաւ անոր, Դուն ալ հինգ քաղաքի վրայ եղիր։ 20 – Եւ ուրիշ մը եկաւ ու ըսաւ, Տէր, ահա քու մնագդ որ թաշկինակի մէջ ծրած կը պահէի. 21 – Քանզի կը վախնայի քեզմէ, վասն զի դուն խիստ մարդ մըն ես, չգրած բանդ կը վերցնես ու չսերմնածդ կը հնձես։ 22 – Եւ անոր ըսաւ անոր, Քու բերնէդ քեզ պիտի դատեմ, ով չար ծառայ. գիտէիր որ ես խիստ մարդ մըն եմ, չգրած բանս կը վերցնեմ՝ ու չսերմնածս կը հնձեմ։ 23 – Եւ ինչո՞ւ համոր իմ ոսկս սեղանաւորներուն չտուիր, որպէս զի ես եկած ատենս շահովը առնէի զանիկա։ 24 – Եւ հոն կայնողներուն ըսաւ, Առէք ասկէ մնասը ու տուէք անոր որ տասը մնաս ունի։ 25 – (Եւ ըսին իրեն, Տէր, անիկա տասը մնաս ունի.) 26 – Քանզի կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ունեցողին պիտի տրուի, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ 27 – Բայց այն իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ, հոս բերէք ու իմ առջեւս սպաննեցէք։ 28 – Եւ այս բաները խօսելէն ետեւ՝ յառաջ գնաց Երուսաղէմ երթալու։

29 – Ու եղաւ որ երբ Բեթփագէի ու Բեթանիայի մօտեցաւ՝ դէպ ի այն լեռը որ Զիթենեաց լեռ կ'ըսուի, իր աշակերտներէն երկուքը զրկեց, 30 – Եւ ըսաւ, Գացէք Ձեր դիմացի գեղը, և անոր մէջ մտնելնուդ պէս պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ ընաւ մարդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք։ 31 – Եւ եթէ մէկը ձեզի հարցնէ թէ ինչո՞ւ կ'արձակէք, այսպէս ըսէք անոր, թէ Տէրոջը պետք է։ 32 – Երբ գացին առնէք որ զրկուեցան, ինչպէս իրենց զրուցեր էր՝ գտան։ 33 – Ու երբ աւանակը կ'արձակէին, անոր տէրերը ըսին անոնց, Ինչո՞ւ կ'արձակէք զայդ աւանակը։ 34 – Անոնք ալ ըսին, Տէրոջը պետք է։ 35 – Եւ զանիկա Յիսուսի բերին ու իրենց հանդերձները աւանակին վրայ ձգելով՝ Յիսուսը հեծցուցին։ 36 – Ու երբ կ'երթար, իրենց հանդերձները ճամբուն վրայ կը փռեին։ 37 – Ու երբ ա՛լ մօտեցաւ, և Զիթենեաց լեռանը զառիթ վայրէն կ'իջնէր, աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ գլխաւորած օրհնել բարձր ձայնով՝ այն բոլոր հրաշքներուն համար զորոնք տեսեր էին. 38 – Ու կ'ըսէին, Օրհնեալ է այդ թագաւորը որ Տէրոջը անունովը կու գայ. երկինքի մէջ խաղաղութիւն, ու փառք՝ բարձրութեան մէջ։ 39 – Եւ բազմութեանը մէջէն փարիսեցիներէն մէկ քանիները ըսին անոր, Վարդապետ, այդ քու աշակերտներդ յանդիմանէ։ 40 – Եւ անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Զգի կ'ըսեմ, եթէատոնք լռեն կենան, քարերը պիտի աղաղակեն։

41 – Ու երբ մօտեցաւ, քաղաքը տեսնելով լացաւ անոր վրայ և ըսաւ, 42 – Գոնէ այս քու օրուանդ մէջ դիտնայիր քու խաղաղութիւնդ. բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ։ 43 – Վասն զի օրերը պիտի գան քու վրադ՝ որ թշնամիներդ քու բովտրիքդ պատնէշ պիտի շինեն, ու քեզ պիտի պաշարեն, և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն. 44 – Եւ հիմնայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած զաւակներդ, և քար մը քարի վրայ ամենեւին պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չճանչցար քու այցելութեանդ ժամանակը։

45 – Եւ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախողները և գնողները։ 46 – Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ Իմ տունս աղօթքի տուն է. բայց դուք սուիկա աւազակներու ապր ըրիք։

47 – Եւ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէր. բայց քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին գլխաւորները կը փնտռէին թէ ինչպէս կորսընցնեն զանիկա։ 48 – Ու բան մը չէին կրնար գտնել թէ ինչ ընեն, վասն զի բոլոր ժողովուրդը անոր կապուեր էին մտիկ ընելու։

## ԳԼ. Ի

Ու եղաւ որ այն օրերէն մէկը, երբ տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցնէր և աւետարանը կը քարոզէր, քահանայապետները ու դպիրները ծերերուն հետ մէկտեղ վրայ հասան, 2 – Եւ անոր հետ խօսելով՝ ըսելով, Ցրուցէ մեզի, ինչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզի տուողը։ 3 – Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, և ըսէք ինծի. 4 – Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ։ 5 – Եւ անոնք իրենց մէջ խորհեցան ու ըսին, 6 – Եթէ ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, բոլոր ժողովուրդը մեզ պիտի քարկոծեն, վասն զի հաւատք համզուած են թէ Յովհաննէս մարգարէ էր։ 7 – Եւ պատասխան տուին թէ չեն գիտեր ուրկէ՛ էր։ 8 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։

9 – Սկսաւ այս առակը ըսել ժողովուրդին. Մարդ մը այգի տնկեց և զանիկա մշակներու յանձնեց, ու ինքը օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց։ 10 – Եւ ատենին ծառայ մը ղրկեց մշակներուն, որպէս զի այգիին պտուղէն անոր տան. իսկ մշակները ծեծեցին զանիկա ու պարապ ճամբեցին։ 11 – Եւ ուրիշ ծառայ մըն ալ ղրկեց. իսկ անոնք զանիկա ալ ծեծեցին, անարգեցին ու պարապ ճամբեցին։ 12 – Ու երրորդ մըն ալ ղրկեց. իսկ անոնք զանիկա ալ վիրաւորեցին ու դուրս հանեցին։ 13 – Այն ատեն այգիին տէրը ըսաւ, Ի՞նչ ընեմ. իմ սիրելի որդիս ղրկեմ, թերեւս զանիկա տեսնելով ամչնան. 14 – Բայց մշակները երբ տեսան զանիկա, իրարու հետ խորհուրդ բրին՝ ըսելով, Ասիկա է ժառանգը, եկէք զանիկա սպաննենք, որպէս զի ժառանգութիւնը մերը ըլլայ։ 15 – Եւ զանիկա այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին. ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ անոնց. 16 – Պիտի գայ ու կորսընցնէ այն մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ։ 17 – Երբ ըսյուլեցին, ըսին, Ֆա՛ւ լիցի։ Եւ ինք աչքերնուն նայելով՝ ըսաւ, Հապա ի՞նչ է այս գրուածը, թէ Այն քարը զոր շինողները մերժեցին, անկիւնին գլուխը եղաւ։ 18 – Ամէն ով որ այն քարին վրայ կ'ինայ, պիտի կոտրտի, և որու վրայ որ կ'ինայ, պիտի փոշի զանիկա։ 19 – Եւ քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ի՛նչպէս նոյն ժամուն ձեռք զարնեն անոր, բայց ժողովուրդէն վախցան. քանզի իմացան որ այն առակը իրենց համար ըսաւ։

20 – Ու Եւթը չարաչար ոտքերէ սպասելով, ղրկեցին քանի մը խարեբայ մարդիկ, որոնք կեղծաւորութեամբ ինքզինքնին արդար կը ձեւացնէին, որպէս զի անկիւնէն խօսքով բռնեն՝ ետքը զանիկա մատնելու։ 21 – Ու անոր հարցուցին՝ ըսելով, Վարդապետ, գիտենք որ դուն ուղիղ կ'ըսես և կ'ուսուցանես, և անկողմնակալ չես, հապա ճշմարտութեամբ կ'ուսուցանես զՏէրոջ ճանապարհը։ 22 – Արդեօք մեզի հարկ է կայսեր տալ կամ չէ։ 23 – Բայց նա նենգութիւնները նկատելով՝ ըսաւ անոնց, 24 – Ինծի դահեկան մը ցուցուցէք. ո՞ւր է պատկերն ու գրութիւնը անոր։ Պատասխան տուին ու ըսին, Կայսեր։ 25 – Ան ալ ըսաւ անոնց, Ուրեմն տուէք կայսեր կայսերը, և Աստուծոյ Աստուծոյը։ 26 – Եւ չկրցան անոր խօսքը ժողովուրդին առջեւ բռնել, և զարմանալով անոր պատասխանին՝ լռեցին։

27 – Ու մերձեցան անոր Սադուկեցիներէն մի քանիները, որոնք կ'ուրանան թէ յարութիւն կայ, 28 – Ու հարցուցին զանիկա՝ ըսելով, Վարդապետ, Մովսէս մեզի գրեց թէ եթէ մէկուն եղբայրը կնոջ հետ մեռնի, և զաւակ չթողու, թող իր եղբայրը անոր կնոջը առնէ և իր եղբօրը սերունդ յարուցանէ։ 29 – Եղան եօթը եղբայրներ. և առաջինը կին առաւ ու մեռաւ զաւակ չթողլով։ 30 – Եւ երկրորդը առաւ զանիկա, և ան ալ մեռաւ զաւակ չթողլով։ 31 – Եւ երրորդը առաւ զանիկա, և նոյնպէս եօթն ալ թողին ու մեռան զաւակ չթողլով։ 32 – Վերջապէս կինն ալ մեռաւ։ 33 – Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ ո՞ւր կնոջ պիտի ըլլայ. վասն զի եօթն ալ զանիկա կին առեր էին։ 34 – Յիսուս ըսաւ անոնց, Այս աշխարհի որդիները կ'առնուին և կու տրուին. 35 – Բայց անոնք որ արժանի համարուեցան հասնելու այն աշխարհին և մեռելներէն յարութեան, ո՛չ կ'առնուին և ո՛չ կու տրուին. 36 – Վասն զի ալ չեն կրնար մեռնիլ, որովհետեւ հրեշտակներու պէս են, և յարութեան որդիներ են՝ Աստուծմէ։ 37 – Ու որ մեռելները յարութիւն կ'ունենան, Մովսէս ալ ցուցուց թուփին մէջ, երբ Տէրը կոչեց Աբրահամի Աստուած և Իսահակի Աստուած և Յակոբի Աստուած։ 38 – Ան մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն. վասն զի անոր համար բոլորը կենդանի են։ 39 – Ատենին գրագէտներէն մէկ քանիները ըսին անոր, Վարդապետ, լաւ ըսիր։ 40 – Եւ ա՛լ չհամարձակեցան անոր ոչինչ հարցնել։

41 – Ան ալ ըսաւ անոնց, Ինչպէ՞ս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւթի որդի է։ 42 – Մինչդեռ Դաւիթ ինքը Սաղմոսաց գիրքին մէջ կ'ըսէ, Տէրը ըսաւ իմ Տէրոջս, Նստէ՛ աջ կողմս, 43 – Մինչեւ որ քու թշնամիներդ քու ոտքիդ պատուանդան ընեմ։ 44 – Ուրեմն Դաւիթ զանիկա Տէր կ'ըսէ, ինչպէ՞ս ուրեմն անոր որդին է։ 45 – Եւ ամբողջ ժողովուրդին ականջալուր եղած ատենը՝ ըսաւ իր աշակերտներուն, 46 – Զգուշացէք գրագէտներէն որ կ'ուզեն երկայն պատմուճաններով պտտիլ, և շուկաներուն մէջ ողջոյնները, ժողովարանին գլխաւոր աթոռները և ճաշերուն գլխաւոր տեղերը կը սիրեն. 47 – Որոնք այրերու տուները կ'ուտեն, և երկայն աղօթք կ'ընեն պատրուակով, անոնք աւելի դատապարտութիւն պիտի կրեն։

## ԳԼ. ԻԱ

Ու նայեցաւ և տեսաւ զհարուստները որ իրենց ընծաները կը ձգէին գանձանակին մէջ, 2 – Տեսաւ նաև աղքատ այրի մը որ հոն երկու լումայ ձգեց։ 3 – Եւ ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս աղքատ այրին բոլոր ձգողներէն աւելի ձգեց. 4 – Վասն զի ասոնք բոլորն ալ իրենց առատութենէն ձգեցին ընծաներուն մէջ, բայց ասիկա իր կարիքէն ձգեց զամէն ինչ որ ունէր, իր ամբողջ կեանքը։

5 – Ու երբ ոմանք տաճարին համար կ'ըսէին թէ գեղեցիկ քարերով և ընծաներով զարդարուած է, ըսաւ, 6 – Այն բաները որ կը տեսնէք, օրեր պիտի գան որ քար քարի վրայ չպիտի մնայ որ չքանդուի։ 7 – Հարցուցին զանիկա՝ ըսելով, Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այս բաները, և ի՞նչ նշան պիտի ըլլայ երբ այս բաները պիտի կատարուին։ 8 – Ան ալ ըսաւ, Զգուշացէք որ չմոլորիք, վասն զի շատեր պիտի գան իմ անունովս՝ ըսելով, Ես եմ, և ժամանակը մերձեցաւ. ուրեմն անոնց ետեւէ մի երթաք։ 9 – Երբ պատերազմներու և խռովութիւններու համբաւ լսէք, մի՛ վախնաք, վասն զի այս բաները նախ պիտի ըլլան, բայց վախճանը անմիջապէս չէ։ 10 – Ապա ըսաւ անոնց, Ազգ պիտի յարձակի ազգի մը վրայ և թագաւորութիւն թագաւորութեան դէմ. 11 – Եւ մեծ երկրաշարժներ պիտի ըլլան տեղ տեղ, և սովեր և համաճարակներ, և սարսափներ և մեծ նշաններ պիտի ըլլան երկնքէն։ 12 – Բայց այս բոլորէն առաջ ձեռք պիտի զարնեն ձեզի վրայ ու հալածեն, մատնելով ժողովարաններուն և բանտերուն, թագաւորներու և կուսակալներու առջեւ տանելով՝ իմ անուանիս համար։ 13 – Ասիկա ձեզի պիտի ըլլայ վկայութեան համար։ 14 – Ուրեմն մտածեցէք ձեր սրտերուն մէջ որ նախապէս պատրաստութիւն չընէք պատասխանելու համար։ 15 – Վասն զի ես ձեզի բերան և իմաստութիւն պիտի տամ որ ձեր բոլոր հակառակորդները չկրնան դիմանալ և հակառակել։ 16 – Ձեր ծնողներն ալ, եղբայրներ ալ, ազգականներ ալ և բարեկամներ ալ պիտի մատնեն ձեզ, և ձեզմէ ոմանք պիտի մեռցնեն։ 17 – Եւ ամէն մարդ պիտի ատէ ձեզ իմ անուանիս համար։ 18 – Բայց ձեր գլխուն մազ մը անգամ պիտի չկորսուի։ 19 – Ձեր համբերութեամբ պիտի շահիք ձեր անձերը։

20 – Երբ տեսնէք որ Երուսաղէմ զօրքերով պաշարուած է, այն ատեն գիտցէք որ անոր աւերումը մերձեցաւ։ 21 – Այն ատեն որ Հրէաստանի մէջ կը գտնուին՝ թող լեռները փախչին, և որ անոր մէջտեղը կը գտնուին՝ թող հեռանան, և որ արտերուն մէջ կը գտնուին՝ թող չմտնեն անոր մէջ։ 22 – Վասն զի վրէժխնդրութեան այս օրերն են որ ամէն գրուածները կատարուին։ 23 – Վա՜յ յղիներուն և ծծկեր ունեցողներուն այն օրերը. վասն զի մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրի վրայ և այս ժողովուրդին վրայ։ 24 – Եւ սուրի բերանով պիտի իյնան, և գերի պիտի տարուին ամէն ազգերու մէջ, և Երուսաղէմ պիտի կոխկրտուի հեթանոսներէն մինչեւ որ հեթանոսներուն ժամանակները լրանան։

25 – Եւ նշաններ պիտի ըլլան արեւուն և լուսնին և աստղերուն մէջ, և երկրի վրայ ազգերուն նեղութիւն՝ ծովուն և ալեաց գոռալուն պատճառով, որ մարդիկ պիտի նուաղին երկիւղէն և այն բաներուն սպասելէն որ աշխարհի վրայ պիտի գան. վասն զի երկնքի զօրութիւնները պիտի շարժին։ 27 – Եւ այն ատեն պիտի տեսնեն զՄարդոյ Որդին որ ամպերու մէջ կու գայ զօրութեամբ և մեծ փառաւորութեամբ։ 28 – Երբ այս բաները սկսին ըլլալ, ուղղեցէք ձեր գլուխները և վերցուցէք ձեր աչքերը, վասն զի ձեր ազատութիւնը մերձեցաւ։

29 – Ու առակ մը ըսաւ անոնց, Թզենիին և բոլոր ծառերուն նայեցէք. 30 – Երբ որ արդէն ծաղկին, տեսնելով՝ գիտէք որ ամառը մերձ է։ 31 – Նոյնպէս դուք ալ երբ որ այս բաները տեսնէք որ կը կատարուին, գիտցէք որ Աստուծոյ թագաւորութիւնը մերձ է։ 32 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս ազգը չպիտի անցնի մինչեւ որ այս բոլորը կատարուին։ 33 – Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս չպիտի անցնին։

34 – Ուրեմն զգուշացէք որ ձեր սրտերը չծանրանան շռայլութեամբ և արբեցութեամբ և կենցաղի հոգերով, և այդ օրը յանկարծ ձեզի վրայ չհասնի։ 35 – Վասն զի որոգայթի պէս պիտի հասնի բոլոր երկրի երեսին բնակողներուն վրայ։ 36 – Արթուն կացէք ամէն ժամ աղօթելով, որ արժանի համարուիք այս բոլոր պատահելիքներէն ազատելու և Մարդոյ Որդիին առջեւ կենալու։ 37 – Ու ցերեկները տաճարին մէջ կը սորվեցնէր, իսկ գիշերները ելլելով կը մնար Ձիթենեաց կոչուած լերան վրայ։ 38 – Եւ ամբողջ ժողովուրդը կանուխ կու գար անոր մօտ տաճարին մէջ՝ լսելու համար զինք։

պես, գիտենք որ չիտակ կը խօսիս ու կը սոլվեցնես, և աչառութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սոլվեցնես։ 22 – Մեզի արժա՞ն է Կայսրին տուրք տալ թէ ոչ։ 23 – Եւ անոնց խորամանկութիւնը հասկնալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք։ 24 – Ցուցուցէք ինծի դահեկան մը։ Որո՞ւն պատկերը ու գիրը ունի վրան։ Պատասխան տուին ու ըսին, Կայսրինը։ 25 – Եւ ինք ըսաւ անոնց, Ուրեմն զոյն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և զոյն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։ 26 – Եւ չկրցան զանիկա խօսքով մը բռնել ժողովուրդին առջեւ, ու զարմանալով անոր պատասխանին վրայ՝ լռեցան։

27 – Եւ սադուկեցիներէն ոմանք եկան, (որոնք հակառակութիւն կ'ընեն թէ յարութիւն չկայ,) և անոր հարցուցին՝ 28 – Ըսելով, Վարդապետ, Մովսէս մեզի գրեց, Եթէ մէկուն եղբայրը կին ունենալով մեռնելու ըլլայ, ու մեռած ատենը զաւակ չունենայ, անոր եղբայրը առնի այն կինը և իր եղբօրը զաւակ հանէ։ 29 – Արդ եօթը եղբայրներ կային. ու առաջինը կին մը առնելով զաւակ չունեցած մեռաւ։ 30 – Երկրորդն ալ առաւ այն կինը և ինք ալ մեռաւ առանց զաւակի։ 31 – Երրորդն ալ առաւ զանիկա. նմանապէս եօթն ալ, ու զաւակ չձգեցին ու մեռան։ 32 – Ամէնէն ետքը կինն ալ մեռաւ։ 33 – Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ, վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան։ 34 – Եւ Յիսուս պատասխան տալով անոնց՝ ըսաւ, Այս աշխարհին որդիները կին կ'առնեն ու երկան կը տրուին։ 35 – Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին հասնելու ու մեռելներէն յարութիւն առնելուն, ոչ կին կ'առնեն և ոչ երկան կը տրուին. 36 – Որովհետեւ ա՛լ չեն կրնար մեռնել. քանզի հրեշտակներուն հաւասար են, ու Աստուծոյ որդիներ են, վասն զի յարութեան որդիներ են։ 37 – Բայց մեռելներուն յարութիւն առնելը Մովսես ալ իմացուց մորենին պատմութեանը մէջ, երբ կը կոչէ Տէրը՝ Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը։ 38 – Ու Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն, վասն զի ամէնը անոր կենդանի են։ 39 – Եւ դպիրներէն մէկ քանին պատասխան տուին ու ըսին, Վարդապետ, աղէկ ըսիր։ 40 – Ու ա՛լ մէկը համարձակութիւն չէր ըներ անոր բան մը հարցնելու։

41 – Եւ ըսաւ անոնց, Ինչպէս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է. 42 – Եւ ինք Դաւիթ Սաղմոսներուն գիրքին մէջ կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, 43 – Մինչեւ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։ 44 – Ուրեմն Դաւիթ որ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։

45 – Եւ բոլոր ժողովուրդին առջեւ ըսաւ իր աշակերտներուն, 46 – Զգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն փառաւոր հանդերձներով պարիլ, և շուկաներուն մէջ բարեւներ կը սիրեն. ու ժողովարաններուն մէջ՝ առաջին աթոռները, և ընթրիքներուն մէջ՝ առաջին բազմոցները. 47 – Որոնք որբևարիներուն տուները կ'ուտեն, ու ծպտուն երեւնալու համար աղօթքը կ'երկնցնեն. ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին։

## Գլ. ԻԱ.

Ու նայելով՝ տեսաւ հարուստները որոնք իրենց ընծաները գանձանակը կը ձգէին։ 2 – Տնանկ որբևարի մըն ալ տեսաւ, որ հոն երկու լումայ ձգեց։ 3 – Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս աղքատ որբևարին ամէնէն աւելի ձգեց. 4 – Վասն զի ամէն անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ ընծաներուն մէջ ձգեցին, բայց ասիկա իր չբաւարութենէն բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց։

5 – Ու երբ մէկ քանիները տաճարին համար կ'ըսէին թէ Գեղեցիկ քարերով ու նուէրներով զարդարուած է, ըսաւ, 6 – Այդ բաները զորո՞ք կը տեսնէք, օրեր պիտի գան որ այն ատեն քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի։ 7 – Հարցուցին իրեն ու ըսին, Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ է նշանը՝ երբ այդ բաները պիտի ըլլան։ 8 – Ան ալ ըսաւ, Զգուշ կեցէք, չխաբուիք, վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ըսելով թէ Ես եմ Քրիստոսը, ու ժամանակը մօտեցած է. ուրեմն անոնց հետեւիլ չերթաք։ 9 – Բայց երբ լսէք հեռուէն չերթաք։ պատերազմներ և խռովութիւններ, մի վախնաք, վասն զի պէտք է առաջ այս բաները ըլլան, բայց վախճանը իսկոյն չէ։ 10 – Անկ ատեն ըսաւ անոնց, Ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագաւորութեան վրայ. 11 – Եւ տեղ տեղ մեծ երկրաշարժութիւններ պիտի ըլլան, ու սովեր և մահատարաժամներ, նաեւ երկինքէն սոսկալի բաներ և մեծ նշաններ պիտի ըլլան։ 12 – Բայց այս ամէն բաներէն առաջ իրենց ձեռքերը ձեզի պիտի դնեն ու հալածեն, և ժողովարաններու և բանտերու պիտի մատնեն. և իմ անուանս համար թագաւորներու և կուսակալներու առջեւ պիտի տարուիք։ 13 – Եւ այս բաները վերջը ձեզի վկայութիւն մը պիտի ըլլան։ 14 – Ուստի ձեր սրտին մէջ դրէք՝ որ առաջուընէ չմտածէք պատասխան տալու վրայով։ 15 – Վասն զի ես ձեզի բերան ու իմաստութիւն պիտի տամ, որու պիտի չկրնան դէմ խօսիլ կամ դէմ կենալ ձեր ամէն հակառակորդները։ 16 – Եւ պիտի մատնուիք ծնողքներէ ու եղբայրներէ և ազգականներէ ու բարեկամներէ, ու ձեզմէ պիտի սպաննեն. 17 – Եւ իմ անուանս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք։ 18 – Բայց մազ մը ձեր գլխէն պիտի չկորսուի։ 19 – Ձեր համբերութիւնովը հոգիներդ պիտի գտնէք։

20 – Ու երբ տեսնէք Երուսաղէմը շուրջ կողմէն զօրքերով պատած, այն ատեն գիտցէք որ անոր աւերումը մօտ է։ 21 – Այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին, ու անոր մէջ եղողները թող հեռանան, և անոնք որ ագարակներն են՝ թող չմտնեն անոր մէջ։ 22 – Վասն զի այն օրերը վրէժխնդրութեան օրեր են, որպէս զի բոլոր գրուածները կատարուին։ 23 – Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն, վասն զի մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրին վրայ, ու բարկութիւն պիտի գայ այս ժողովուրդին վրայ. 24 – Ու սուրի բերնով պիտի իյնան, ու բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տարուին. ու Երուսաղէմ ազգերուն ատից կոխան պիտի ըլլայ, մինչեւ ազգերուն ժամանակները լմնան։ 25 – Ու արեգակին և լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան, ու երկրի վրայ ազգերը ապշութեամբ պիտի տագնապին, և ծովը ու ալիքները պիտի գոռան. 26 – Մարդոց սիրտերը պիտի նուաղին երկնից վախէն և աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն, վասն զի երկինքի զօրութիւնները պիտի շարժին։ 27 – Եւ այն ատեն պիտի տեսնեն Որդին մարդոյ ամպի մէջ եկած զօրութիւնով ու մեծ փառքով։ 28 – Ու երբ այս բաները սկսին ըլլալ, եւ լէք ու գլուխնիդ բարձրացուցէք, վասն զի ձեր փրկութիւնը մօտ է։

29 – Եւ առակ մը ըսաւ անոնց, Տեսէք թզենին ու ամէն ծառերը. 30 – Երբ կը բողբոջին, տեսնելով դուք ձեզմէ կ'իմանաք թէ ալ ամառը մօտ է։ 31 – Նոյնպէս դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է։ 32 – Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ այս ամէն բաները ըլլան։ 33 – Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։ 34 – Իսկ դուք ղուշացէք ձեր անձերուն. չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու գինովութիւնով և աշխարհային զբաղմունքներով ծանրանայ, ու յանկարծակի ձեր վրայ հասնի. 35 – Վասն այն օրը ձեր վրայ հասնի. 36 – Ուսոի արթուն կեցէք, ու ամէն ատեն աղօթք ըրէք, որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուելու և Որդւոյ մարդոյ առջեւ կայնելու։

37 – Ու ցորեկները տաճարին մէջ կը սորվեցնէր. և գիշերները կ'ելլէր կը սորվեցնէր։ և գիշերները կ'ելլէր Ձիթենեաց լեռած լեռը կը կենար։ 38 – Եւ բոլոր ժողովուրդը առաւոտնց կանուխ իրեն կ'երթային տաճարը իր խօսելը լսելու։

## Գլ. ԻԲ

Բաղարջակերաց տօնը մօտեցաւ որ Զատիկ կ'ըսուէր. 2 – Եւ քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս սպաննեն զանիկա, քանզի ժողովուրդէն կը վախնային։

3 – Եւ Սատանայ՝ Իսկարիովտացի մականուանեալ Յուդայի ներսը մտաւ, որ տասներկուքին համրանքէն էր։ 4 – Եւ գնաց քահանայապետներուն ու իշխաններուն հետ խօսք ըրաւ թէ ի՛նչպէս զանիկա մատնէ անոնց։ 5- Անոնք ալ ուրախացան և խոստացան անոր տալ տալ։ 6 – Ու ինք վրան ածաւ, և պատեհութիւն մը կը փնտռէր որպէս զի զանիկա մատնէ անոնց առանց բազմութեանը ժողվուելուն։

7 – Եւ բաղարջակերաց օրը եկաւ, որուն մէջ պէտք էր ղատիկը մորթել։ 8 – Ու ղրկեց Պետրոսը և Յովհաննէսը ու ըսաւ, Գացէք պատրաստեցէք մեզի զատիկը որպէս զի ուտենք։ 9 – Անոնք ալ ըսին անոր, Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք։ 10 – Եւ ըսաւ անոնց, Ահա երբ քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի պատահի որ սափէ ջուր կրէ տոպր մը կը տանի. անոր տեղէն գացէք այն տունը ուր ինք կը մտնէ. 11 – Եւ այն տանը տէրոջ ըսէք, Վարդապետը կ'ըսէ քեզի, Ո՞ւր է օթեւանը ուր աշակերտներուս հետ մկոեղ զատիկը ուտեմ։ 12 – Ան ալ ձեզի յարդարուած մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ, հոն պատրաստեցէք։ 13- Եւ գացին գտան ինչպէս իրենց ըսաւ, ու զատիկը պատրաստեցին։

14 – Ու երբ ժամը հասաւ, սեղան նստաւ և տասներկու առաքեալները իրեն հետ։ 15 – Ու ըսաւ անոնց, Փափաքելով փափաքեցայ որ այս զատիկը ձեզի հետ ուտեմ իմ չարչարուելէս առաջ։ 16 – Քանզի կ'ըսեմ ձեզի որ ալ բնաւ տակէ պիտի չուտեմ՝ մինչև Աստուծոյ թագաւորութեանը մէջ կատարուի։ 17 – Եւ գաւաթը առաւ, գոհացաւ ու ըսաւ, Առէք ասիկա ու բաժնեցէք ձեր մէջ. 18 – Վասն զի ձեզի կ'ըսեմ որ բնաւ որթին բերքէն պիտի չխմեմ՝ մինչև Աստուծոյ թագաւորութիւնը գայ։

19 – Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց ու ըսաւ, Այս է իմ մարմինս, որ ձեզի համար տրուած է. ասիկա բրէք զիս յիշելու համար։ 20 – Նոյնպէս ալ գաւաթը ճաշէն ընծրիքէն հետև ու ըսաւ, Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի։

21 – Բայց ահա ինձ մատնողին ձեռքը ինծի հետ այս սեղանն է։ 22 – Եւ իրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝ ինչպես սահմանուած է, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով անիկա կը մատնուի։ 23 – Եւ անոնք սկսան իրենց մէջ հարցափորձ ընել՝ թէ իրենցմէ ո՛վ է որ այն բանը պիտի ընէ։

24 – Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջ՝ թէ իրենցմէ ո՛վ մեծ պիտի սեպուի։ 25 – Եւ անոնք ըսաւ անոնց, Ազգաց թագաւորները անոնց կը տիրեն, և անոնք որ կ'իշխեն անոնց բարերար կը կոչուին։ 26 – Բայց դուք այնպէս պիտի չըլլաք, հապա ան որ ձեր մէջ մեծ է, պզտիկին պէս թող ըլլայ, և առաջնորդը սպասաւորին պէս։ 27 – Քանզի ո՞վ է մեծը, սեղան նստո՞ղը թէ սպասաւորը. չէ՞ որ սեղան նստողը. սակայն ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ։ 28 – Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ կը կենայիք իմ փորձութիւններուս մէջ. 29- Եւ ես ալ ձեզի Թագաւորութիւն մը ուխտ կ'ընեմ, ինչպէս իմ Հայրս ինծի թագաւորութիւն մը ուխտ ըրաւ. 30 – Որպէս զի դուք իմ սեղանիս ուտէք ու խմէք իմ թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ նստիք Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։

31 – Եւ Տէրը ըսաւ, Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա Սատանայ ձեզ փնտռեց, որ ցորենի պէս խարխլէ. 32 – Բայց ես քեզի համար աղօթք ըրի որպէս զի քու հաւատքդ չպակսի. և դուն երբ դարձի գաս, քու եղբայրներդ ալ հաստատէ։ 33 – Իսկ ինք ըսաւ անոր, Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ բանտ երթալու ալ, մեռնելու ալ։ 34 – Եւ անիկա ըսաւ, Պետրո՛ս, քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չկանչի մինչև դուն երեք անգամ ուրանաս՝ ըսելով թէ զիս չես ճանչնար։

35 – Եւ ըսաւ անոնց, Երբ ձեզ ղրկեցի առանց քսակի ու պարկի և կօշիկներու, բանի մը կարօտ եղա՞ք։ 36 – Անոնք ալ ըսին, Բանի մըն ալ չէ. հարը ըսաւ, Բայց հիմա ան որ քսակ ունի, թող երթէ հետ առնէ, նոյնպէս ալ պարկը. և ան որ չունի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը ծախու առնէ. 37 – Քանզի կ'ըսեմ ձեզի որ այս գրուածքանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի, Եւ անօրէններու հետ սեպուեցաւ. քանզի ինչ որ ինծի համար



պէտք է, կատարուելու վրայ է։ 38 – Անոնք ալ ըսին, Տէր, ահա հոս երկու թուր կայ. ան ալ ըսաւ անոնց, Հերիք են։

39 – Ու ելաւ իր սովորութեանը պէս Ձիթենեաց լեռը գնաց. աշակերտներն ալ իր ետևէն գացին։ 40 – Երբ այն տեղը հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չմտնէք։ 41 – Եւ ինք անոնցմէ զատ ուեցաւ քարընկէցի մը չափ, ու ծունկի վրայ դալով աղօթք կ'ընէր, 42- Ու կ'ըսէր, Հայր, եթէ կ'ուզես, այս գաւաթը ինծմէ անցուր. բայց ոչ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ։ 43 – Ու երկինքէն հրեշտակ մը երևեցաւ անոր և կը զօրացնէր զանիկա. ու աստիճ նեղութեան մէջ ըլլալով աւելի ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր։ 44 – Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր, որ գետինը կը թափուէր։

45 – Եւ աղօթքէն կելլելով աշակերտներուն քով եկաւ, ու գտաւ զանոնք տրտմութենէն քնացած. 46 – Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք. ելէք աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չմտնէք։

47 – Ու երբ դեռ կը խօսէր, ահա բազմութիւն մը, և Յուդա ըսուածն ալ, տասներկուքէն մէկը, անոնց առաջևէն կ'երթար, ու Յիսուսի մօտեցաւ որպէս զի զանիկա համբուրէ։ 48- Բայց Յիսուս ըսաւ անոր, Յուդա, համբոյրո՞վ կը մատնես Որդին մարդոյ։ 49 – Երբ անոր բոլորտիքը եղողները տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէր, թուրով զարնո՞ւք։ 50 – Եւ անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց անոր ականջը։ 51 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Թող տուէք մինչև այդ տեղը. և դպաւ անոր ականջին ու բժշկեց զանիկա։ 52 – Եւ Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ, Իբր թէ աւազակի՞ վրայ ելած սուրերով ու բիլերով։ 53 – Անչեն օր ձեզի հետ էի տաճարին մէջ, և ինծի ձեռք չզարկիք. բայց այս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը։

54 – Ու զանիկա բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին. Պետրոս ալ հետևանց անոր հետևէն կ'երթար։ 55 – Երբ կրակ վառեցին գաւիթին մէջ ու մէկտեղ նստան, Պետրոս ալ նստաւ անոնց մէջ։ 56- Աղախին մը տեսնելով զանիկա որ կրակին քով նստեր էր, նայեցաւ անոր ու ըսաւ, Այսիկ ալ անոր հետ էր։ 57 – Բայց Պետրո՞ս ուրացաւ զանիկա ու ըսաւ, Ով կին, ես զանիկա չեմ ճանչնար։ 58 – Եւ քիչ մը հետը ուրիշ մը տեսաւ զանիկա ու ըսաւ, Դուն ալ անոնցմէ ես։ և Պետրոս ըսաւ, Ով մարդ, ես անոնցմէ չեմ։ 59 – Եւ ժամաւ մը չանցնելէն հետև՝ ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր, Ճշմարիտ սոսկա ալ անոր հետ էր, վասն զի Գալիլեացի է։ 60 – Բայց Պետրոս ըսաւ, Ով մարդ, չեմ գիտեր ի՛նչ կը դուռգես դուն. և քանի որ իր խօսքը բերանն էր, իսկոյն հաւը խօսեցաւ։ 61 – Եւ Տէրը դարձաւ ու Պետրոսի նայեցաւ. Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը որ ըսեն ըսեր էր թէ Դուն հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս։ 62- Ու Պետրոս դուրս ելլելով դառնապէս լացաւ։

63 – Եւ այն մարդիկը որոնք Յիսուսը կը պահէին, ծաղր կ'ընէին զանիկա ու կը ծեծէին. 64 – Եւ անոր աչքերը ծածկելով՝ անոր երեսին կը զարնէին, ու կը հարցնէին իրեն՝ ըսելով, Մարգարեացիր, Ո՞վ է ան որ քեզի զարկաւ։ 65 – Եւ ուրիշ շատ բաներ կը դուռգեին իրեն հայհոյելով։

66 – Ու երբ առաւօտ եղաւ, ժողովուրդին ծերակոյտը, քահանայապետները և դպիրները ժողվուեցան, ու տարին զանիկա իրենց ատեանը և ըսին, Եթէ Քրիստոսը դուն ես, ըսէ մեզի։ 67 – Ըսաւ անոնց, Եթէ ձեզի ըսեմ ալ՝ պիտի չհաւատաք. 68 – Եւ եթէ ձեզի բան մը հարցնեմ, ինծի պատասխան պիտի չտաք, ալ ձե՛ պիտի արձակէք։ 69 – Ասկէ հետև Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեանը աջ կողմը պիտի նստի։ 70 – Եւ ամէնը ըսին, Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես. ինք ալ ըսաւ անոնց, Դուք կ'ըսէք թէ ես եմ։ 71 – Եւ անոնք կ'ըսէք թէ ես եմ։ 71 – Եւ անոնք ըսին, Ալ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, վասն զի մենք մեզմէ ասոր բերնէն լսեցինք։

## ԳԼ. ԻԹ

Եւ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով՝ տարին զանիկա Պիղատոսի. 2 – Ու սկսան անոր վրայով ամբաստանութիւն ընել ու ըսել, Այսիկա գտանք, որ ժողովուրդը կը մոլորեցնէր, ու կայսրին հարկ տալէ կ'արգիլէր, և իրեն Քրիստոս թէ ինք Թագաւոր է: 3 – Իսկ Պիղատոս հարցուց անոր ու ըսաւ, Հրէից Թագաւորը դո՞ւն ես. անիկա ալ պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Դուն կ'ըսես: 4 – Ա.յն ատեն Պիղատոս քահանայապետներուն ու ժողովուրդներուն ըսաւ, Ես այս մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ: 5 – Բայց անոնք ոտք կը կոխէին ու կ'ըսէին թէ ժողովուրդը իրար կ'անցնէ, ու բոլոր Հրէաստանի մէջ կը սորվեցնէ՝ Գալիլեայէ սկսած մինչև այս տեղ: 6 – Եւ Պիղատոս երբ լսեց Գալիլեայի համար, հարցուց թէ այդ մարդը Գալիլեացի՞ է: 7 – Ու երբ իմացաւ թէ Հերովդէսի իշխանութեան տակէն էր, զանիկա Հերովդէսի ղրկեց, քանզի ան ալ այն օրերը Երուսաղէմ էր:

8 – Եւ Հերովդէս երբ Յիսուսը տեսաւ, շատ ուրախացաւ, վասն զի ինք շատոնցուընէ կը փափաքէր զանիկա տեսնել. քանզի անոր վրայով շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ եղած նշան մը տեսնէ: 9 – Ու շատ խօսքերով հարցուփորձ կ'ընէր անոր, բայց անիկա բնաւ իրեն պատասխան մը չտուաւ: 10 – Քահանայապետները ու դպիրներն ալ կեցեր էին, և սաստիկ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայ: 11 – Իսկ Հերովդէս անարգեց զանիկա իր զօրականներուն հետ, ու ծաղր ընելէն ետև փառաւոր հանդերձներ հագցուց անոր, և նորէն Պիղատոսի ղրկեց: 12 – Ու այն օրը Պիղատոս և Հերովդէս իրարու հետ բարեկամ եղան. որովհետև առաջ իրենց մէջտեղ թշնամութիւն կար:

13 – Եւ Պիղատոս քահանայապետները ու իշխանները և ժողովուրդը մէկտեղ կանչեց: 14 – Եւ ըսաւ անոնց, Այս մարդը առջեւս բերիք ժողովուրդը մոլորեցնողի մը պէս, և ահա ես ձեր առջև քննութիւն ընելով՝ ասոր համար ձեր բրած ամբաստանութիւններէն յանցանք մը չգտայ այդ մարդուն վրայ: 15 – Ոչ ալ Հերովդէս, վասն զի ձեզ անոր ղրկեցի, և ահա ասիկա մահու արժանի գործ մը բրած չէ: 16 – Ուրեմն պատիժ մը տամ՝ ասոր ու արձակեմ: 17 – (Իսկ ասոնին առնելը պէտք էր որ մէկը արձակէր անոնց.) 18 – Եւ բոլոր բազմութիւնը մէկտեղ աղաղակեցին՝ ըսելով, Վերցուր ասիկա, ու Բարաբբան արձակէ մեզի: 19 – (Որ քաղաքին մէջ եղած խռովութեան մը և մարդասպանութեան համար բանտը դրուած էր:) 20 – Եւ Պիղատոս Յիսուսը արձակել ուզելով՝ նորէն խօսեցաւ անոնց: 21 – Բայց անոնք կ'աղաղակէին ու կ'ըսէին, Խաչը հանե՛ ասիկա, խաչը հանե՛: 22 – Եւ ինք երրորդ անգամ՝ ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ բրած է ասիկա. ես ասոր վրայ մահու արժանի յանցանք մը չգտայ. ուրեմն պատիժ մը տամ՝ ասոր ու արձակեմ: 23 – Իսկ անոնք մեծաձայն աղաղակներով սոսկ կը կոխէին, ու կ'ուզէին որ անկիա խաչուի. և անոնց ու քահանայապետներուն ձայները զօրացաւ եղան: 24 – Ու Պիղատոս վճռեց որ անոնց խընդրելը ի գործ դրուի: 25 – Եւ անոնց ուզած մարդը, որ խռովութեան և մարդասպանութեան համար բանտը դրուած էր, արձակեց ատնոնց, և Յիսուսը իրենց կամքին յանձնեց:

26 – Ու երբ զանիկա կը տանէին, Սիմոն Կիւրենացի ըսուած մէկը բանեցին՝ որ արտէն կու գար, և խաչը անոր վրայ դրին որպէս զի Յիսուսի հետևէն բերէ: 27 – Ու անոր հետևէն կ'երթար մեծ բազմութիւն ժողովուրդներու, նաև կիներու, որոնք կ'ողբային ու կու լային անոր համար: 28 – Եւ Յիսուս դարձաւ անոնց ու ըսաւ, Ով երուսաղէմի աղջիկներ, իմ վրաս մի լաք, հապա ձեր անձերուն վրայ ու ձեր զաւակներուն վրայ լացէք: 29 – Վասն զի ահա օրեր կու գան, որոնց մէջ պիտի ըսեն, Երանի՛ ամուլներուն, և այն որովայններուն որոնք չծնան, և ծիծերուն որոնք կաթ չտուին: 30 – Ա.յն ատեն պիտի սկսին ըսել լեռներուն, Մեր վրայ իյնկէք, ու բլուրներուն՝ Մեզ ծածկեցէք: 31 – Վասն զի եթէ դալար փայտին այսպէս կ'ընեն, չորին ի՞նչ պիտի ըլլայ:

32 – Ուրիշ երկու՛ք ալ, չարագործներ, բերուեցան անոր հետ սպաննուելու: 33 – Երբ Գագաթ ըսուած տեղը գացին, հոն խաչը հանեցին զանիկա, և այն չարագործներն ալ, մէկը աջ կողմէն ու մէկալը ձախ կողմէն, խաչեցին: 34 – Եւ Յիսուս, Հայր, թողու՛ր թիւն տուր ատոնց, վասն զի չեն գիտեր ի՛նչ կ'ընեն: Ու անոր հանդերձները բաժնելու առեղնին վիճակ ձգեցին: 35 – Եւ ժողովուրդը կայներ կը նայէր. իշխաններն ալ անոնց հետ կը նախատէին զանիկա ու կ'ըսէին, Ուրիշները ազատեց, թող ինքզինքն ալ ազատէ, եթէ ասիկա է Քրիստոս, Աստուծոյ ընտրեալը: 36 – Զօր կ'ընէին զանիկա զինուորներն ալ, առջևը կու գային քացախ կը մատուցանէին ատնոր, 37 – Ու կ'ըսէին, Եթէ դուն ես Հրէից Թագաւորը, քու անձդ ազատէ: 38 – Եւ գիր մը գրուած էր անոր վրայ Յունարէն ու Լատիներէն և Եբրայեցերէն գիրերով, Թէ Ասիկա է Հրէից Թագաւորը:

39 – Եւ այն կախուած չարագործներէն մէկը Հայհոյութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Եթէ դուն Քրիստոսն ես, ազատէ քու անձդ ու մեզ ալ: 40 – Իսկ միւսը պատասխան տուաւ և զանիկա յանդիմանելով՝ ըսաւ, Ուրացիր չե՞ս վախնար, որովհետև նոյն դատապարտութեան մէջ ես: 41 – Ու մենք իրաւունքով, քանզի ահա մեր բրածներուն արժանաւոր չափաւորմը կ'առնենք. բայց ասիկա դէշ բան մը չբրաւ: 42 – Եւ ըսաւ Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ քու թագաւորութիւնդ գաս: 43 – Յիսուս ալ ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Դուն այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս:

44 – Եւ ժամը վեցին տասներկուն էր, ու բոլոր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը. և արևը խաւարեցաւ, 45 – Ու տաճարին վարագոյրը մէջտեղէն պատռեցաւ. 46 – Եւ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս. ու երբ զայս ըսաւ, հոգի տուաւ:

47 – Եւ հարիւրապետը եղած բանը տեսնելով՝ Աստուծոյ փառք տուաւ ու ըսաւ, Իրաւցընէ այս մարդը արդար էր: 48 – Եւ այս տեսարանը դիտելու համար ժողոված բոլոր բազմութիւնները եղած բաները տեսնելով՝ կուրծքերնուն կը զարնէին ու ետ կը դառնային: 49 – Ա.յլն իր ճանչնալորներն ալ հեռուն կայներ էին, նայնպես ալ այն կիները՝ որոնք իր ետևէն եկեր էին Գալիլեայէ, ու կը տեսնէին այս բաները:

50 – Եւ ահա մարդ մը Յովսէփ անունով՝ խորհրդական էր, բարի ու արդար մարդ մը, 51 – (Ասիկա անոնց խորհուրդին ու գործին հաւանութիւն տուած չէր,) Հրեաներուն Արիմաթիա քաղաքէն, որ ինք ալ Աստուծոյ թագաւորութեանը կը սպասէր: 52 – Ասիկա Պիղատոսի գնաց, ու Յիսուսի մարմինը խնդրեց: 53 – Եւ զանիկա խաչէն իջեցնելով՝ կտաւով փաթթեց, ու քարէ փորուած գերեզմանի մը մէջ դրաւ, ուր բնաւ մէկը դրուած չէր: 54 – Եւ այն օրը ուրբաթ էր, ու շաբաթը պիտի *սկսէր:

55 – Եւ անոր ետևէն գացին այն կիները, որոնք իրեն հետ Գալիլեայէ եկած էին, ու տեսան գերեզմանը, և թէ ի՛նչպէս անոր մարմինը հոն դրուեցաւ: 56 – Եւ դառնալով՝ խունկեր ու իւղեր պատրաստեցին, և շաբաթ օրը հանգստացան պատուիրանքին համեմատ:

## ԳԼ. ԻԹ

Ու մէկշաբթի օրը առտուանց շատ կանուխ գերեզմանը եկան, ու բերին այն խունկերը զորնք պատրաստեր էին, և ուրիշ կիներ ալ անոնց հետ: 2 – Ու քարը գերեզմանէն մէկդի գլորուած գտան: 3 – Եւ ներս մտնելով՝ Տէր Յիսուսի մարմինը հոն չգտան: 4 – Ու եղաւ որ երբ անոնք այս բանին համար տարակուսանքի մէջ էին, ահա երկու մարդիկ լուսափայլ հանդերձներով հասան անոնց: 5 – Ու երբ վախով լեցուած՝ երեսնին գետի դեմքը ծռեցին, այն մարդիկը ըսին անոնց, Ինչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ կը փնտռէք. 6 – Հոս չէ ան, հապա յարութիւն առաւ. մի՛ւթերնիդ բերէք ի՛նչպես խօսեցաւ ձեզի երբ դեռ Գալիլեայի մէջ էր, 7 – Ըսելով թէ Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը ելլէ, ու

*Յոյն. լուսանար

երրորդ օրը յարութիւն առնէ։ 8 – Եւ միաքերնին լերին անոր խօսքերը։ 9- Ու գերեզմանէն դառնալով՝ այս ամէն բաները պատմեցին տասնմէկին ու ըսլոը ուրիշներուն։ 10 – Եւ էին Մարիամ Մագդաղենացի ու Յովհաննա և Յակոբոսի մայրը Մարիամ, ու անոնց հետ ուրիշներ ալ, որոնք այս բաները առաքեալներուն պատմեցին։ 11 – Եւ անոնց առջև ցնորական խօսքեր երևցաւ անոնց ու չէին հաւատար անոնց։ 12 – Բայց Պետրոս ելաւ վազեց դէպ ի գերեզմանը, ու ծռելով նայեցաւ և տեսաւ որ միայն կտաւները կը կենային. ու գնաց՝ իր մտքին մէջ զարմանալով այն եղածին վրայ։

13 – Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը գեղ մը կ'երթային, որ Երուսաղէմէ վաթսուն ասպարէզ հեռու էր, և անոր անունը Էմմաուս էր։ 14- Եւ անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր եղած անցքերուն վրայով։ 15- Ու եղաւ որ երբ անոնք կը խօսակցէին ու խորհրդածութիւն կ'ընէին, Յիսուս ինք ալ մօտենալով անոնց հետ կ'երթար։ 16 – Բայց անոնց աչքերը բռնուած էին, որպէս զի զինք չճանչնան։ 17 – Եւ ըսաւ անոնց, Ի՞նչ են այդ խօսքերը՝ որ քալելով իրարու հետ կը խօսակցիք, ու տրտմած ալ էք։ 18 – Պատասխան տուաւ անոնցմէ մէկը, որուն անունը Կղէոպաս էր, ու ըսաւ անոր, Դո՞ւն միայն Երուսաղէմի մէջ կը կենաս, ու չես գիտեր թէ ինչե՛ր եղան հոն այս օրերս։ 19 – Եւ ինք ըսաւ անոնց, Ի՞նչ. անոնք ալ ըսին իրեն, Նազովրեցի Յիսուսի համար, որ Աստուծոյ և բոլոր ժողովուրդին առջև գործով ու խօսքով զօրաւոր մարգարէ մը եղաւ. 20 – Ինչպէս քահանայապետները ու մեր իշխանները մահուան դատաստանի մատնեցին զանիկա և խաչը հանեցին։ 21 – Իսկ մենք կը յուսայինք թէ անիկա էր որ Իսրայէլը պիտի ազատէր. և այս ամէնուն վրայ այս երրորդ օրն է որ այս բաները եղան։ 22-Նաև մեր մէջէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմացուցին, որոնք առտուանց կանուխ գերեզմանը գացին, 23-Ու անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ըսին թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսան, որոնք ըսեր են թէ անիկա ողջ է։ 24 – Եւ մերիններէն մէկ քանիներն ալ գերեզմանը գացին ու այնպէս գտան, ինչպէս այն կիները ըսուցեցին, միայն թէ զինք չտեսան։ 25-Ան ալ ըսաւ անոնց, Ով անմիտներ ու թուլասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներուն, զորոնք մարգարէները խօսեցան. 26-Չէ՞ որ Քրիստոսի պէտք էր այս չարչարանքները կրել, և իր փառքը մտնել։ 27 – Ու սկսելով Մովսէսէ և բոլոր մարգարէներէն, կը մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ էր։ 28 – Երբ մօտեցան այն գեղին՝ ուր կ'երթային, ինք ալ կը ցուցնէր որպէս թէ աւելի հեռու տեղ մը պիտի երթար։ 29 – Բայց ստիպեցին զինք ու ըսին, Մեր քով կեցիր, վասն զի երկրկնաը մօտ է և օրը լրացած է. և մնաւ անոնց հետ կենալու։ 30- Ու եղաւ որ երբ ինք անոնց հետ սեղան նստաւ, հաց առաւ, օրհնեց, ու կտրելով տուաւ անոնց։ 31 – Ա՛յն ատեն անոնց աչքերը բացուեցան ու զինք ճանչցան, և ինք անոնցմէ անհետացաւ։ 32 – Ու իրարու կ'ըսէին, Չէ՞ որ սիրտերնիս մեր ներսիդին կը բորբոքէր, երբ ինք մեզի հետ կը խօսէր ճամբուն մէջ, և գիրքերը կը մեկնէր մեզի։

33 – Ու եղան նոյն ժամուն երուսաղէմ դարձան, ու մէկտեղ ժողովուած գտան տասնմէկը ու անոնց հետ եղողները, 34 – Որոնք կ'ըսէին թէ Իրաւցընէ Տէրը յարութիւն առաւ, ու Սիմոնի երևցաւ։ 35 – Եւ իրենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ, և թէ ինչպէս ինքզինք իրենց ճանչցուց հացը կոտրած առնելնէ։

36 – Եւ քանի որ այս բաները կը խօսէին, Յիսուս ինք կայնեցաւ անոնց մէջտեղը ու ըսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի։ 37 – Բայց անոնք զարհուրելով կը վախնային, ու կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն։ 38 – Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռոված էք, և ինչո՞ւ սիրտերնուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն։ 39 – Տեսէք ձեռքերս ու ոտքերս, որ ես ինքնս եմ. շօշափեցէք զիս ու տեսէք, վասն զի ոգին մարմին և ոսկորներ չունենար, ինչպէս զիս կը տեսնէք որ ունիմ։ 40 – Եւ զայս ըսելով՝ ձեռքերը ու ոտքերը ցուցուց անոնց։ 41 – Ու երբ տակաւին երէցն ուրախութենէն չէին հաւատար, և զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց, Ունէ՞ք մը ուրիշ հոս։ 42 – Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղրախոհիսխ տուին իրեն։ 43 – Եւ առաւ կերաւ անոնց առջև։ 44 – Եւ ըսաւ անոնց, Ասոնք են այն խօսքերը զորոնք ձեզի խօսեցայ երբ դեռ ձեզի հետ էի, թէ Պէտք է որ կատարուին այն ամէնը՝ որոնք Մովսէսի օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ և սաղմոսներուն մէջ ինձի համար գրուած են։ 45- Ա՛յն ատեն անոնց միաքը բացաւ որպէս զի գիրքերը հասկնան։ 46 – Եւ ըսաւ անոնց թէ Ա՛յսպէս գրուած է, և այսպէս պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնել։ 47 – Եւ անոր անունովը ապաշխարութիւն ու մեղքերու թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերու մէջ՝ Երուսաղէմէ սկսած։ 48 – Ու դուք էք այս բաներուն վկաները։ 49 – Եւ ահա ես իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը ղրկեմ. բայց դուք Երուսաղէմ քաղաքին մէջ նստեցէք, մինչեւ վերէն զօրութիւն առնէք ձեր վրայ։

50 – Եւ զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր ձեռքերը վեր վերցնելով օրհնեց զանոնք։ 51 – Եւ եղաւ որ երբ զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ ու վեր կ'ելլէր երկինք։ 52- Անոնք ալ երկրպագութիւն ընկալ անոր՝ մեծ ուրախութեամբ երուսաղէմ դարձան։ 53 – Եւ ամէն ատեն տաճարին մէջ էին, ու կը գովաբանէին և կ'օրհնէին զԱստուած։ Ամէն։

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ԳԼ. Ա

Սկիզբն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քով էր, և Բանը Աստուած էր։ 2 – Անիկա սկիզբէն Աստուծոյ քով էր։ 3 – Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ 4 – Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր։ 5 – Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր, ու խաւարը զանիկա չճանչցաւ։

6 – Աստուծմէ զրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր։ 7 – Ան ինք վկայութեան եկաւ որպէս զի լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնը անոր միջոցով հաւատան։ 8- Ինք չէր այն լոյսը, հապա եկաւ որպէս զի լոյսին համար վկայութիւն տայ։

9 – Ճշմարիտ լոյսը ան էր, որ աշխարհ *եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ։ 10 – Ինք աշխարհի մէջ էր, և աշխարհ անով եղաւ, ու աշխարհ զանիկա չճանչցաւ։ 11 – Իրեններուն եկաւ, և իրենները զինք չընդունեցին։ 12 – Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը։ 13 – Որոնք ոչ արիւնէ և ոչ մարմնի կամքէ, ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան։ 14 – Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (և անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն։

15 – Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղակեց՝ ըսելով, Անիկա է, որուն համար կը ըսէի, Ան որ իմ ետեւէս կուգայ, ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր։ 16-Եւ անոր լեցունութենէն մենք ամէնս շնորհք առինք շնորհքի տեղ։ 17 – Վասն զի օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, բայց շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքով եղան։ 18- Մէկը երբէք զԱստուած տեսած չէ, բայց միածին Որդին որ Հօրը ծոցն է, անիկա պատմեց։

19 – Ու Յովհաննէսի վկայութիւնը այս է, երբ Հրեաները Երուսաղէմէ քահանաներ ու Ղեւտացիներ ղրկեցին որպէս զի հարցնեն անոր թէ Դուն ո՞վ ես։ 20 – Եւ անիկա խոստովանեցաւ ու չուրացաւ, խոստովանեցաւ թէ ես

*կամ, գալով

Բրխատոսը չեմ։ 21 – Ու Հարցուցին անոր, Հապա ի՞նչ. Եղիա՞ն ես. և ըսաւ, Չեմ. Ան մարգարէ՞ն ես. պատասխան տուաւ Թէ Ոչ։ 22 – Ան ետեն ըսին անոր, Ո՞վ ես. ըսէ մեզ, որպէս զի պատասխան տանինք մեզ ղրկողներուն. դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար։ 23 – Ըսաւ, Ես անոր ձայնն եմ, որ անապատին մէջ կը կանչէ, Շիտակեցուցէք Տէրոջը ճամբան, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ։ 24-Եւ այն ղրկուածները փարիսեցիներէն էին. 25 – Ու Հարցուցին իրեն ըսելով, Հապա ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես, եթէ դուն Բրիստոսը չես, ու ոչ Եղիան, և ոչ մարգարէն։ 26 – Պատասխան տուաւ անոնց Յովհաննէս ու ըսաւ, Ես ջրով կը մկրտեմ, բայց ձեր մէջ մէկը կայ զոր դուք չէք ճանչնար. 27 – Անիկա է իմ ետևէս եկողը որ ինծմէ առաջ եղաւ, որուն կօշիկին կապը քակելու ես արժանի չեմ։ 28 – Ասոնք բաները Բեթաբարայի մէջ եղան Յորդանանու անդիի կողմը, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր։

29 – Հետևեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ իրեն կու գար, և ըսաւ, Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ։ 30 – Անիկա է որուն համար ես կը ըսուցէի, Իմ ետևէս մարդ մը կու գայ որ ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր։ 31-Ու ես զանիկա չէի ճանչնար, բայց անոր համար ես եկայ ջրով մկրտելու, որպէս զի անիկա Իսրայէլի յայտնուի։ 32 – Եւ Յովհաննէս վկայութիւն տուաւ ըսելով Թէ Կր տեսնէի Հոգին որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջնէր, ու անոր վրայ կը հանգչէր։ 33 – Ես ես զանիկա չէի ճանչնար, բայց ան որ պիս ղրկեց ջրով մկրտելու, ինք ըսաւ ինծի, Որու վրայ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի անոր վրայ, անիկա է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ։ 34 – Ես ալ տեսայ, ու վկայեցի Թէ ասիկա է Աստուծոյ Որդին։

35 – Հետևեալ օրը դարձեալ Յովհաննէս կայներ էր, և իր աշակերտներէն երկուքը։ 36 – Ու նայելով Յիսուսի վրայ որ կը պտրաէր, ըսաւ, Ահա Աստուծոյ Գառը։ 37 – Եւ լսեցին անիկէ երկու աշակերտները երբ կը խօսէր, ու գացին Յիսուսի ետևէն։ 38 – Յիսուս երբ դարձաւ ու տեսաւ զանոնք որ էր ետևէն կու գային, ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք. անոնք ալ ըսին իրեն, Ռաբբի, (որ թարգմանուելով վարդապետ լսել է,) ո՞ր է քու օթևանդ։ 39 – Ըսաւ անոնց, Եկէք ու տեսէք, եկան ու տեսան ուր տեղ որ էր իր օթևանը. և այն օրը անոր քով կեցան, վասն զի ժամը տասնի մոտ էր։ 40-Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրեաս այն երկուքէն մէկն էր, որոնք լսեցին Յովհաննէսէ և անոր ետևէն գացին։ 41 – Ասիկա նախ իր Սիմոն եղբայրը կը գտնէ և կ'ըսէ անոր, Գտանք Մեսիան, (որ *Բրիստոս կը թարգմանուի.) 42 – Ու տարաւ զանիկա Յիսուսի քով. Յիսուս անոր նայելով ըսաւ, Դուն ես Յովհաննի որդին Սիմոն. դուն կեփաս պիտի ըսուիս, որ †Պետրոս կը թարգմանուի։

43 – Հետևեալ օրը Յիսուս Գալիլեա ելլել ուզեց, և Փիլիպպոսը գտնելով ըսաւ անոր, Եկուր իմ ետևէս։ 44 – Եւ Փիլիպպոս Բեթսայիդայէ էր. Անդրեասի ու Պետրոսի քաղաքէն։ 45 – Փիլիպպոս կը գտնէ Նաթանայէլը և կ'ըսէ անոր. Ան, որու համար Մովսէս օրէնքին մէջ գրեց, և մարգարէներն ալ, զանիկա գտանք, այսինքն Յիսուս Նազովրեցին, Յովսէփի որդին։ 46 – Եւ Նաթանայէլ ըսաւ անոր, Նազարէթէ կարելի՞ է որ ուղէկ բան մը ըլլայ. ըսաւ անոր Փիլիպպոս, Եկուր ու տես։ 47 – Յիսուս երբ տեսաւ Նաթանայէլը որ իրեն կու գար, ըսաւ անոր համար, Ահա իրաւցնէ Իսրայէլացի մը, որուն ներսը նենգութիւն չկայ։ 48 – Նաթանայէլ ըսաւ անոր, Ուրկէ՞ կը ճանչնաս պիս. պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Դեռ Փիլիպպոս քեզ չկանչած, դուն որ թզենիին տակ էիր, ես քեզ տեսայ։ 49-Պատասխան տուաւ Նաթանայէլ ու ըսաւ անոր, Ռաբբի, դուն ես Աստուծոյ Որդին, դուն ես Իսրայէլի թագաւորը։ 50 – Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Ասոր համար՝ որ քեզի ըսի Թէ քեզ թզենիին տակ տեսայ, կը հաւատա՞ս. տակ աւելի մեծ բաներ պիտի տեսնես։ 51 – Ու ըսաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև պիտի տեսնէք երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակները՝ որ կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ։

*Ա. յոհ., Օծեալ †Ա. յոհ., վէմ



## Գ.Լ. Բ

Ու երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի Կանա †ալէտը, և Յիսուսի մայրը հոն էր։ 2 – Յիսուս ալ կանչուեցաւ այն հարսնիքը, ու իր աշակերտներն ալ։ 3 – Ու երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր, Գինի չունին, 4 – Յիսուս ըսաւ անոր, Ով կին, դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ։ 5 – Իր մայրը պատասխաներուն ըսաւ, Ինչ որ ձեզի ըսէ, ըրէք։ 6 – Հոն վեց հատ քարէ կարասներ դրուած էին Հրէից մաքրութեանը սովորութեա՞ն համեմատ, որոնց ամէն մէկը երկու կամ երեք մետր բան կ'առնէր։ 7 – Յիսուս ըսաւ անոնց, Լեցուցէք այդ կարասները ջրով. ու լեցուցին զանոնք մինչև բերանը։ 8 – Եւ ըսաւ անոնց, Հիմա հանեցէք ու սեղանապետին տարէք. անոնք ալ տարին։ 9 – Ու սեղանապետը երբ գինի եղած ջուրին համը առաւ, և չէր գիտեր ուրկէ ըլլալը, (բայց պատասխաները որոնք ջուրը քաշեր էին, գիտէին,) սեղանապետը կը խօսի փեսային, 10 – Ու անոր կ'ըսէ, Ամէն մարդ սղէկ գինին առաջ կը մատուցանէ, ու երբ խմած կ'ըլլան, այն ատեն սորտագոյնը. Բայց դուն սղէկ գինին մինչև հիմա պահեցիր։ 11 – Յիսուս հրաշքներուն սկիզբը զայս ըրաւ Գալիլեայի Կանա †ալէտին մէջ, և իր փառքը յայտնեց. ու իր աշակերտները հաւատացին իրեն։

12 – Անկէ ետև Յիսուս Կափառնայում իջաւ, ինք և իր մայրը ու իր եղբայրները և իր աշակերտները, ու շատ օրեր հոն չկեցան։

13 – Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու Յիսուս Երուսաղէմ ելաւ. 14 – Եւ տաճարին մէջ գտաւ արջառ ու ոչխար և աղաւնի ծախողները, ու ստակ փոխողներն ալ՝ որոնք նստեր էին. 15 – Եւ չուռան խարազան մը շինելով ամէնը տաճարէն դուրս հանեց, ոչխարներն ալ ու արջառներն ալ, և ստակ փոխողներուն պղինձները ցիրուցան ըրաւ, ու սեղանները կործանեց. 16 – Եւ աղաւնի ծախողներուն ըսաւ, Ասկէ վերցուցէք ասոնք, իմ Հօրս տունը առևտուրի տուն մի ընէք։ 17-Եւ իր աշակերտները միտքերնին բերին որ գրուած է, Քու տանդ նախանձը պիս կերաւ։

18 – Ան ատեն պատասխան տուին Հրեաները ու ըսին անոր, Ի՞նչ նշան կը ցուցնես մեզի՝ որ այդ բաները կ'ընես։ 19-Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Փակեցէք այս տաճարը, ու երեք օրուան մէջ զանիկա պիտի կանգնեմ։ 20 – Եւ Հրեաները ըսին, Քառասունըվեց տարուան մէջ շինուեցաւ այս տաճարը, և դուն երեք օրուան մէջ պիտի կանգնե՞ս զանիկա։ 21 – Բայց ինք իր մարմնին տաճարին համար կ'ըսէր։ 22 – Ուստի երբ ինք մեռելներէն յարութիւն առաւ, իր աշակերտները միտքերնին բերին Թէ այս բանը ըսած էր*, ու հաւատացին գիրքին և Յիսուսի ըսած խօսքին։

23 – Ու երբ զատկի տօնին տունը Երուսաղէմ էր, շատ մարդիկ անոր ըրած հրաշքները տեսնելով՝ հաւատացին անոր անուանը։ 24 – Բայց ինք Յիսուս իր անձը անոնց չէր հաւատար, վասն զի ինք գիտեր ամէն մարդ. 25-Ու պէտք չէր որ մէկը մարդուս համար վկայութիւն տար իրեն, քանզի ինք գիտեր Թէ ինչ կայ մարդուն ներսիդին։

## Գ.Լ. Գ

Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նիկոդեմոս անունով, որ Հրէից իշխան էր։ 2 – Ասիկա գիշերով †Յիսուսի քով եկաւ, և ըսաւ անոր, Ռաբբի, գիտենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես, վասն զի մէկը չկրնար ընել այդ հրաշքները զորոնք դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ։ 3-Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը ‡նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել։ 4 – Նիկոդեմոս ըսաւ անոր, Ինչպէ՞ս կրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է. հնարաւո՞ր բան է որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի։ 5-Յիսուս պատասխան տուաւ, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ 6 – Մարմինէն ծնածը մարմին է, ու

*Մատթ., Յարեցին, իրենց †Մատթ., անոր ‡Կամ, վերէն

Հոգիէն ծնածը հոգի է։ 7 – Դուն մի զարմանար որ քեզի ըսի , Պէտք է ձեզի նորէն ծնանիլ ։ 8 – Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ, և անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ կամ ո՛ւր կերթայ . այսպես ալ է այն ամէնը որ Հոգիէն կը ծնանի։ 9 – Պատասխան տուաւ Նիկոդեմոս ու ըսաւ անոր, Այդ ի՞նչպես կրնայ ըլլալ ։ 10- Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Դուն Իսրայէլի դէվ վարդապետ մըն ես, և այս բաները չե՞ս գիտեր։ 11 – Ճշմարիտ ճշմարիտ կ՛ըսեմ քեզի, Թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու մեր վկայութիւնը չէք ընդունիր։ 12 – Եթէ երկրաւոր բաները ձեզի զրուցեցի ու չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք եթէ երկնաւոր բաները ձեզի զրուցեմ։ 13 – Եւ մէ՛կը երկինք չելաւ. բայց անկից միայն որ երկինքէն իջաւ, Որդին մարդոյ որ երկինքն է։ 14 – Եւ ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, այնպէս պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ։ 15 – Որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ 16 – Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչև իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ 17 – Վասն զի Աստուած իր Որդին չղրկեց աշխարհ, որպէս զի աշխարհը դատէ, հապա՝ որպէս զի աշխարհ անով փրկուի։ 18 – Ան որ կը հաւատայ անոր՝ չդատապարտուիր. և ան որ չհաւատար՝ անիկա արդէն դատապարտած է, վասն զի Աստուծոյ միածին Որդւոյն անհաւատացաւ։ 19 – Եւ այս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, քանզի իրենց գործերը չար էին։ 20 – Վասն զի ամէն ով որ չար կը գործէ, անիկա լոյսը կ՛ատէ. և լոյսին քով չգայր, որպէս զի իր գործերը չյանդիմանուին։ 21 – Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ, լոյսին քով կու գայ, որպէս զի իր գործերը յայտնի ըլլան թէ Աստուծով գործուեցան։

22 – Այս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշակերտները Հրէաստանի երկիրը, և հոն կը կենար անոնց հետ մկրտէր, ու մկրտութիւն կ՛ընէր։ 23- Յովհաննէս ալ Այինոնի մէջ Սաղիմի մօտ մկրտութիւն կ՛ընէր , որովհետև հոն շատ ջուր կար, ու կու գային և կը մկրտուէին. 24 – Վասն զի Յովհաննէս դեռ բանտը գրուած չէր ։

25 – Այն ատեն վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսի աշակերտներէն *Հրեաներուն հետ՝ մաքրութեան վրայով։ 26-Ու եկան Յովհաննէսի և ասոնք ըսին, Ռաբբի, անիկա որ քեզի հետ Յորդանանու անդին կողմն էր, որուն համար դուն վկայութիւն տուիր, ահա ինք կը մկրտէ և ամէնը անոր կու գան։ 27 – Պատասխան տուաւ Յովհաննէս և ըսաւ, Մարդ մը չկրնար բան մը առնել, եթէ երկինքէն տրուած չըլլայ անոր։ 28 – Դուք ձեզի կը վկայէք թէ ինծի համար, որ ըսի թէ Ես Քրիստոսը չեմ, հապա անոր առջևէն զրկուած եմ։ 29 – Ան որ հարսն ունի, փեսան անիկա է. բայց փեսային բարեկամը որ կը կենայ ու կը լսէ անոր, մեծապէս կ՛ուրախանայ փեսային ձայնին համար. ուստի այս իմ ուրախութիւնս լցուած է։ 30 – Անիկա պէտք է որ մեծնայ, բայց ես պզտիկնամ։ 31 – Ան որ վերէն կու գայ՝ ամէնէն վեր է. ան որ երկրէ է՝ երկրաւոր է, ու երկրէ կը խօսի. ան որ երկինքէն կու գայ՝ ամէնէն վեր է. 32 – Եւ ինչ որ տեսաւ ու լսեց, զայն կը վկայէ, ու անոր վկայութիւնը մէ՛կ չընդունիր։ 33 – Ան որ անոր վկայութիւնը կ՛ընդունի, կնքեց թէ Աստուած ճշմարիտ է։ 34 – Վասն զի ան զոր Աստուած ղրկեց, Աստուծոյ խօսքերը կը խօսի, վասն զի Աստուած անոր չափով չտար Հոգին։ 35 – Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բան անոր ձեռքը տուած է։ 36 – Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի. և ան որ Որդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ ։

## Գլ. Դ

Այդ երբ Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեր են՝ թէ Յիսուս Յովհաննէսէ աւելի աշակերտներ կ՛ընէ և կը մկրտէ, 2-(Թէպէտ ոչ թէ Յիսուս ինք կը մկրտէր, հապա իր աշակերտները,) 3-Թողուց Հրէաստանը անորէն Գալիլեա գնաց։ 4 – Ու պէտք եղաւ որ Սամարիայի մէջէն անցնի։ 5 – Ուստի եկաւ Սամարացւոց մէկ քաղաքը, որուն անունը Սուքար էր, այն տեղին մօտ՝ զոր Յակոբ իր որդւոյն Յովսէփի տուաւ. 6 – Եւ հոն Յակոբի մէկ աղբիւրը կար. Յիսուս ալ ճամբայէն յոգնած ըլլալով՝ այն աղբիւրին վրայ նստաւ. և ժամը վեցին առեներն էր ։

7 – Սամարիայէ կին մը եկաւ ջուր հանելու. Յիսուս ըսաւ անոր, Ինծի ջո՛ւր տուր խմելու. 8 – (Քանզի իր աշակերտները քաղաքը գացեր էին, որպէս զի ուտելիք առնեն։) 9 – Այն առեն Սամարացի կինը ըսաւ անոր, Դուն որ Հրեայ ես , ի՞նչպէս կ՛ուզես ջո՛ւր խմել ինծմէ, Սամարացի կնոջմէ մը . վասն զի Հրեաները Սամարացւոց հետ հաղորդակցութիւն չեն ըներ ։ 10 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, և թէ ո՛վ է ան որ քեզի կ՛ըսէ, Ինծի ջո՛ւր տուր խմելու , դուն անկէ պիտի ուզէիր, և ինք քեզի կենդանի ջուր պիտի տար։ 11 – Կինը ըսաւ անոր, Տէր, դուն ջրհան ալ չունես, ու այս ջուր խորունկ է. ուրեմն ուրկէ՞ պիտի ունենաս այն կենդանի ջուրը։ 12 – Մի՞թէ դուն մեր Յակոբ հօրմէն աւելի մե՞ծ մըն ես, որ այս հորը մեզի տուաւ, և ասկէ խմեց ինք ու իր որդիները և իր անասունները։ 13 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Ամէն ով որ այդ ջուրէն խմի, նորէն պիտի ծարաւի, բայց ով որ խմէ այն ջուրէն զոր ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չծարաւի. 14 – Հապա այն ջուրը զոր ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսիդին ջուրի աղբիւր մը՝ որ յաւիտենական կեանքի համար կը բղխէ։ 15 – Կինը ըսաւ անոր, Տէր, տուր ինծի այն ջուրը, որպէս զի չծարաւիմ, և հոս չգամ ջուր հանելու։ 16 – Յիսուս ըսաւ անոր, Գնա քու այրդ կանչէ, ու հոս եկուր։ 17 – Կինը պատասխան տալով ըսաւ, Ես այր չունիմ. Յիսուս ըսաւ անոր, Ես այր չունիմ՝ ըսելդ ճիշտ ըսիր. 18 – Վասն զի հինգ այր ունեցեր ես, և ան զոր հիմա ունիս՝ քու այրդ չէ. ասիկա շիտակ զրուցեցիր։ 19 – Կինը ըսաւ անոր, Տէր, կը տեսնեմ որ դուն մարգարէ մըն ես։ 20 – Մեր հայրերը այս լեռան վրայ երկրպագութիւն ըրին, և դուք կ՛ըսէք թէ Մէ՛ջն Երուսաղէմ է տեղը, ուր պէտք է երկրպագութիւն ընել ։ 21 – Յիսուս ըսաւ անոր, Ով կին, հաւատա ինծի որ ժամանակ կու գայ, երբ ոչ այս լեռան վրայ, և ոչ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօրը։ 22 – Դուք անոր երկրպագութիւն կ՛ընէք, զոր չէք ճանչնար. մենք անոր երկրպագութիւն կ՛ընենք, զոր կը ճանչնանք. վասն զի փրկութիւնը Հրեաներէն է։ 23 – Բայց ժամանակ կու գայ ու հիմա ալ է, երբ ճշմարիտ երկրպագուները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութիւնով, վասն զի Հայրն ալ իրեն այնպիսի երկրպագուներ կ՛ուզէ։ 24 – Աստուած Հոգի է, և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն։ 25 – Կինը ըսաւ անոր, Գիտեմ որ Մեսիան կու գայ, (Քրիստոս ըսուածը,) երբ ինք գայ՝ ամէն բան մեզի պիտի պատմէ։ 26 – Յիսուս ըսաւ անոր, Ես ան եմ՝ որ քեզի հետ կը խօսիմ։ 27 – Եւ այս խօսքին վրայ իր աշակերտները եկան, ու զարմացան որ ան կնոջ հետ կը խօսէր. բայց անոնցմէ մէ՛կը չըսաւ թէ Ի՞նչ կ՛ուզես, կամ Ի՞նչ կը խօսիս անոր հետ։ 28 – Այն ատեն կինը ձգեց իր սափորը ու քաղաքը գնաց, և ըսաւ մարդոցը, 29- Եկէք տեսէք մարդ մը՝ որ ըսաւ ինծի ինչ որ գործեր եմ . արդեօք ան Քրիստոսը՞ է։ 30 – Եւ անոնք քաղաքէն ելան ու անոր կու գային ։

31 – Եւ այս միջոցին աշակերտները իրեն կ՛աղաչէին ու կ՛ըսէին, Ռաբբի, հաց կեր։ 32 – Անիկա ըսաւ անոնց, Ես կերակուր ունիմ՝ ուտելու՝ զոր դուք չէք գիտեր։ 33 – Ուստի աշակերտները կ՛ըսէին իրարու, Արդեօք մէկը ուտելու բան մը բերա՞ւ։ 34 – Յիսուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս այն է որ ես զիս զրկողին կամքը բնեմ, և անոր գործը կատարեմ։ 35 – Չէ՞ որ դուք կ՛ըսէք թէ Տակաւին չորս ամիս կայ որ հունձքի ատենը գայ. ահա ես ձեզի կ՛ըսեմ, Աչքերնիդ վերցուցէք ու արտերուն նայեցէք, որ արդէն ճերմկած՝ հնձուելու պատրաստ են։ 36 – Եւ ան որ կը հնձէ՝ վարձք կ՛առնէ, ու

*Կամ, Հրեայի մը

յաւիտենական կեանքի համար պատրաստ կը ժողվէ, որպէս զի սերմանողը ու հնձողը միասին ուրախանան։ 37 – Վասն զի այս բանին մէջ ճշմարիտ է այն խօսքը թէ Ուրիշը կը սերմանէ և ուրիշը կը հնձէ։ 38 – Ես ձեզ ղրկեցի հնձելու այն որ դուք չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան, ու դուք անոնց աշխատանքին մէջ մտաք։

39 – Ու այն քաղաքէն շատ Սամարացիները իրեն հաւատացին այն կնոջ խօսքին համար որ վկայեց, ըսելով թէ Ինչ որ ես գործեր էի՝ բոլորը ինծի ըսաւ։ 40 – Ու երբ Սամարացիները անոր մօտ եկան, կ'աղաչէին անոր որ իրենց քով կենայ. ու երկու օր հոն կեցաւ։ 41 – Ու ավ շատերը իրեն հաւատացին իր խօսքին համար։ 42 – Ու կ'ըսէին կնոջը, Ակէ եւս ոչ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, վասն զի մենք մեզի լսեցինք, և գիտենք որ ասիկա է ճշմարտապէս աշխարհի Փրկիչը, Քրիստոս։

43 – Ու երկու օրէն եւս ելաւ անկէ և Գալիլեա գնաց։ 44 – Վասն զի Յիսուս ինք վկայեց թէ Մարգարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունենար։ 45 – Ու երբ Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զինք ընդունեցին, քանզի տեսած էին այն բոլոր հրաշքները, զոր ինք ըրաւ Երուսաղէմի մէջ տօնին տաւնը. վասն զի իրենք ալ այն տօնին գացեր էին։

46 – Ես Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց Կանա քաղաքը, ուր ջուրը գինի ըրած էր. և հոն պաշտօնական մէկը կար, որուն որդին հիւանդ էր Կափառնայումի մէջ։ 47 – Ասիկա լսելով որ Յիսուս Հրէաստանէն Գալիլեա եկեր է, եկաւ անոր ու կ'աղաչէր որ իջնէ և իր որդին բժշկէ, վասն զի մեռնելու վրայ էր։ 48 – Ա՛յն ատեն Յիսուս ըսաւ անոր, Եթէ նշաններ ու հրաշքներ չտեսնէք, բնաւ պիտի չհաւատաք։ 49 – Պաշտօնականը ըսաւ անոր, Տէր, իջիր քանի որ իմ տղաս մեռած չէ։ 50 – Յիսուս ըսաւ անոր, Գնա, քու որդիդ ողջ է. մարդն ալ հաւատաց այն խօսքին զոր Յիսուս իրեն ըսաւ, ու գնաց։ 51 – Ու երբ կ'իջնէր, իր ծառաները դիմաւորեցին զինք, և աւետիս տուին բսելով թէ Քու տղադ ողջ է։ 52 – Ուստի հարցուց անոնց թէ ո՛ր ժամին սկսաւ աղէկի դառնալ. և ըսին իրեն, Երէկ ժամը եօթնին տենդը թողուց զանիկա։ 53 – Ա՛յն ատեն գիտցաւ անոր Հայրը թէ այն ժամն էր երբ Յիսուս իրեն ըսաւ թէ Քու որդիդ ողջ է. ու հաւատաց ինք և իր բոլոր տունը։ 54 – Ա՛յս նորէն երկրորդ հրաշքն էր զոր Յիսուս ըրաւ, երբ Հրէաստանէ եկաւ Գալիլեա։

## ԳԼ. Ե

Ասկէ ետև Հրեից տօն էր, և Յիսուս Երուսաղէմ եկաւ։ 2 – Ու Երուսաղէմի մէջ Ոչխարաց դրան քով աւազան մը կայ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա կ'ըսուի, որ հինգ սրահ ունի։ 3 – Ա՛նոնց մէջ խիստ շատ հիւանդները պառկած էին, կոյրեր, կաղեր, չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն։ 4 – Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր ու ջուրերը կը խառնէր, և ով որ ջուրին խառնուելէն ետև ամենէն առաջ անոր ներս կը մտնէր, կը բժշկուէր ինչ հիւանդութիւն որ ունենար։ 5 – Ես հոն մարդ մը կար, որ երեսունըութ տարիէ ի վեր հիւանդութիւն մը ունէր։ 6 – Յիսուս երբ տեսաւ զանիկա որ ինկած պառկած էր, ու գիտցաւ որ շատ ժամանակէ ի վեր է, ըսաւ անոր, Կ'ուզե՞ս առողջանալ։ 7 – Հիւանդը պատասխան տուաւ անոր, Տէր, մարդ մը չունիմ որ երբ ջուրերը խառնուին զիս աւազանը ձգէ. Հապա քանի որ ես դէռ կը շարժիմ, ինծմէ առաջ ուրիշ մը կ'իջնէ։ 8 – Յիսուս ըսաւ անոր, Ելիր, մահիճդ առ ու քալէ։ 9 – Ես իսկոյն մարդը առողջացաւ, ու իր մահիճը վերցնելով կը քալէր. ու այն օրը շաբաթ էր։ 10 – Ա՛յն ատեն Հրեաները ըսին բժշկուած մարդուն, Շաբաթ է, և արժան չէ որ մահիճդ վերցնես։ 11 – Պատասխան տուաւ անոնց ան ըսաւ, Ան որ զիս բժշկեց, ինք ինծի ըսաւ, Մահիճդ առ ու քալէ։ 12 – Ուստի հարցուցին անոր, Ո՞վ է այն մարդը որ քեզի ըսաւ, Մահիճդ առ ու քալէ։ 13 – Ես բժշկուածը չէր գիտեր թէ ո՛վ է ան, վասն զի Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ այն տեղ բազմութիւն ըլլալուն համար։ 14 – Ա՛նկէ ետքը Յիսուս զանիկա տաճարին մէջ գտնելով ըսաւ անոր, Ա՛հա բժշկուեցար, ալ մեղք մի գործեր, որ ալ աւելի չար բան մը չպատահի քեզի։ 15 – Գնաց մարդը, ու Հրեաներուն պատմեց թէ Յիսուս էր որ զինք բժշկեց։

16 – Ես ասոր համար Հրեաները կը հալածէին Յիսուսը, և կը փնտռէին զանիկա սպաննել, որ այս բաները շաբաթ օրը կ'ընէր։ 17 – Ես Յիսուս պատասխան տուաւ անոնց, Իմ Հայրս մինչև հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ։ 18 – Ա՛սոր համար ա՛լ աւելի կը փնտռէին Հրեաները զանիկա սպաննել, վասն զի ոչ թէ միայն շաբաթ օրը կը լուծեր, հապա նաև Աստուած իր Հայրը կ'անուանէր, ու այսպէս ինքզինք Աստուծոյ հաւասար կ'ընէր։ 19 – Ի՛սկ Յիսուս պատասխան տուաւ ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որդին ինքնիւրէ բան մըն ալ չկրնար ընել, միայն թէ ինչ որ տեսնէ զոր Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ։ 20 – Քանզի Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ. և աւանդմէ ալ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք։ 21 – Վասն զի ինչպէս Հայրը մեռելները կը յարուցանէ ու կենդանի կ'ընէ, այնպէս ալ Որդին զորոնք կ'ուզէ կը կենդանացնէ։ 22 – Քանզի Հայրը մ'ոչ կը դատէ, հապա ամէն դատաստանը Որդւոյն տուաւ։ 23 – Որպէս զի ամէնը պատուեն Որդին, ինչպէս Հայրը կը պատուեն. ան որ Որդին չպատուեր, զանիկա զրկող Հայրը չպատուեր։ 24 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանքը ունի, ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահէ անմահ դէպ ի կեանք անցած է։ 25 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ պիտի գայ և ա՛լ հիմա է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն ձայնը, և անոնք որ կը լսեն, պիտի ապրին։ 26 – Վասն զի ինչպէս Հայրը իր անձին մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդւոյն տուաւ որ իր անձին մէջ կեանք ունենայ. 27 – Ես դատաստան ընելու ալ իշխանութիւն տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է։ 28 – Ասոր վրայ մի զարմանաք. վասն զի ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, 29 – Ու գուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են՝ կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար։ 30 – Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ, և իմ դատաստանս արդար է, վասն զի ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա անոր կամքը որ զիս զրկեց։ 31 – Եթէ ես ինծի համար վկայեմ, իմ վկայութիւնս ճշմարիտ չէ։ 32 – Ուրիշ մըն է որ ինծի համար կը վկայէ. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը՝ զոր ինք ինծի համար վկայեց։ 33 – Դուք Յովհաննէսի զրկեցիք, և ինք ճշմարտութեանը վկայեց։ 34 – Բայց ես ոչ թէ մարդոցմէ վկայութիւն կ'առնեմ, հապա այս բաները կ'ըսեմ որպէս զի դուք փրկուիք։ 35 – Անիկա ճրագ մըն էր որ կը վառէր ու կը լուսաւորէր, և դուք քիչ մը ատեն ուզեցիք անոր լուսովը ուրախանալ։ 36 – Բայց ես Յովհաննէսի վկայութենէն՝ աւելի մեծ վկայութիւն ունիմ, քանզի այն գործերը զորոնք Հայրը ինծի տուաւ որ գործեմ, այն գործերը զորոնք ես կը գործեմ, ինծի համար կը վկայեն թէ Հայրը զիս զրկեց։ 37 – Ու Հայրը որ զիս զրկեց, ինք վկայեց ինծի համար. դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք, ոչ ալ անոր կերպարանքը տեսաք. 38 – Ես ոչ անոր խօսքը ձեր մէջ բնակած ունիք, քանզի զոր անով ինք զրկեց, դուք անոր չէք հաւատար։ 39 – Գիրքերը քննեցէք, վասն զի դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ, և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն. 40 – Ես դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունենաք։ 41 – Ես մարդոցմէ փառք չեմ առներ։ 42 – Բայց զիտեմ ձեզ որ Աստուծոյ սէրը ձեր մէջ չունիք։ 43 – Ես իմ Հօրս անունովս եկայ, ու զիս չէք ընդունիր. եթէ նորէն եկայ, ու զիս չէք ընդունիր. 44 – Դուք ինչպէս պիտի ընդունիք՝ որ փառք կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք, և այն փառքը որ մէկ Աստուծմէն է՝ չէք փնտռեր։ 45 – Մի կարծէք թէ ես ձեզի համար մեղադրող պիտի գամ. անոր համար որ Մովսէս որուն դուք յոյս կը դնէք՝ ան է որ ձեզի համար պիտի մեղադրէ։ 46 – Ես եթէ դուք Մովսէսի հաւատայիք՝ ինծի ալ պիտի հաւատայիք, քանզի ան իմ վրաս գրեց։ 47 – Ես եթէ անոր գրուածքներուն չհաւատաք՝ ինչպէ՞ս կրնաք իմ խօսքերուս հաւատալ։

*Ո՛ւռա, Հօրը

մանութիւն պիտի ընեմ Հօրը. կայ ինչ որ ձեզի համար ամբաստանութիւն կ'ընէ, Մովսէս՝ որու դուք յուսացած էք։ 46 – Վասն զի եթէ դուք Մովսէսի հաւատայիք, ինծի ալ պիտի հաւատայիք, քանզի անիկա ինծի համար գրեց։ 47-Բայց եթէ անոր գրածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս ինչպէս պիտի հաւատաք։

## ԳԼ. Զ

Ա յս բաներէն ետքը Յիսուս Գալիլեայի, այսինքն Տիբերիայի, ծովուն անդին կողմը գնաց։ 2 – Եւ անոր ետեւէն շատ ժողովուրդ կ'երթար, վասն զի կը տեսնէին այն հրաշքները զորս Հիւանդներուն վրայ կ'ընէր։ 3 – Եւ Յիսուս լեռը ելաւ, ու հոն նստաւ իր աշակերտներուն հետ միասին։ 4 – Եւ Հրեից զատկի տօնը մօտ էր։

5 – Յիսուս երբ իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն, ըսաւ Փիլիպպոսի, Ուրկէ՞ հաց ծախու առնենք որպէս զի ասոնք ուտեն։ 6 – (Եւ զայս կ'ըսէր զանիկա փորձելու համար, քանզի ինք գիտեր ինչ պիտի ընէր։) 7 – Փիլիպպոս պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դահեկանի հաց ասոնց հերիք չէ, որ ամէն միւսկը քիչ մը առնէ։ 8- Իր աշակերտներէն միւսկը, Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրեաս, ըսաւ իրեն, 9 – Հոս պատանի մը կայ, որ հինգ գարեղէն հաց ու երկու ձուկ ունի, բայց ասոնք ինչ պիտի ըլլան այդչափ մարդոց։ 10 – Իսկ Յիսուս ըսաւ, Նստեցուցէք այդ մարդիկը. և այն տեղ շատ խոտ կար ; ու մարդիկը նստան թիւով հինգ հազարի չափ։ 11 – Եւ Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ, և աշակերտներուն բաժնեց, աշակերտներն ալ նստողներուն, նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուզեցին։ 12 – Ու երբ կշտացան, ըսաւ իր աշակերտներուն, Ժողվեցէք աւելցած կտորտանքները , որպէս զի բան մը չկորսուի։ 13 – Ուստի ժողվեցին, և տասներկու կողով լեցուցին այն հինգ գարեղէն հացերէն ճաշած կտորտանքները, որոնք ուտողներէն աւելցան։ 14 – Իսկ մարդիկը երբ Յիսուսի բրած հրաշքը տեսան, կ'ըսէին Թէ Արիկա է ճշմարտապէս այն մարգարէն որ աշխարհ պիտի գար։ 15 – Եւ Յիսուս գիտնալով որ պիտի գան զինք յափշտակեն, որպէս զի զինք թագաւոր ընեն, նորէն միայնակ լեռը գնաց։ 16 – Ու երբ իրիկուն եղաւ, իր աշակերտները ծովեզերքը իջան։ 17 – Եւ նաւը մտնելով ծովուն անդին կողմը Կափառնայում կ'երթային և արդէն մըթը կոխեր էր, ու Յիսուս դեռ իրենց եկած չէր։ 18 – Ծովը ալ Հովին սաստիկ փչելէն տակնուվրայ կ'ըլլար։ 19 – Ու երբ թէի քաշելով քսանըհինգ կամ երեսուն ասպարէզի չափ գացին, տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով նաւուն կը մօտենար, ու վախցան։ 20 – Բայց ինք ըսաւ անոնց, Ես եմ, մի վախնաք։ 21 – Ան ատեն ուզին զանիկա նաւը առնել. և նաւ մը նաւը այն երկիրը հասաւ՝ ուր կերթային։

22 – Հետևեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդին կողմն էր, և տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար հոն այն մէկէն զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին, և որ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր, հապա միայն անոր աշակերտները գացեր էին։ 23 – (Բայց Տիբերիայէ ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ՝ ուր Տէրջը գոհանալովը հացը կերեր էին.) 24 – Ան ատեն ժողովուրդը տեսնելով Թէ ոչ Յիսուս հոն է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը մտան ու եկան Կափառնայում Յիսուսը փնտռելու։ 25 – Ու երբ զանիկա ծովուն անդին կողմը գտան, ըսին անոր, Ռաբբի, ե՞րբ եկար դուն հոս։ 26 – Յիսուս պատասխան տուաւ անոնց և ըսաւ, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Դուք զիս կը փնտռէք՝ ոչ Թէ անոր համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար որ հացերէն կերաք ու կշտացաք։ 27 – Գործեցէք, գործեցէք, ոչ Թէ կորսուական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ, զոր Որդին մարդոյ ձեզի պիտի տայ. վասն զի Հայրն Աստուած զանիկա կնքեց։ 28 – Ան ատեն ըսին անոր, Ինչ ընենք որպէս զի Աստուծոյ գործերը գործենք։ 29 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ա յս է Աստուծոյ գործը, որ անոր ղրկածին հաւատաք։ 30-Ըսին անոր, Բայց դուն ինչ նշան կ'ընես որ տեսնենք ու քեզի հաւատանք. ի՞նչ կը գործես։ 31 – Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան. ինչպես գրուած է, Երկինքէն հաց տուաւ անոնց որպէս զի ուտեն։ 32 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը ։ 33 – Վասն զի Աստուծմէ իջած հացը այն է որ երկինքէն կ'իջնէ, ու աշխարհի կեանք կու տայ ։ 34 – Ուստի ըսին անոր, Տէր , ամէն ատեն այդ հացը մեզի տուր։ 35 – Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ, երբէք պիտի չսնօթենայ, և ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւի։ 36 – Բայց ես ձեզի ըսի որ դուք զիս տեսաք ալ, ու չէք հաւատար։ 37 – Ա յն ամէնը զոր Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ, և ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ։ 38 – Վասն զի ես երկինքէն իջայ՝ ոչ Թէ իմ կամքս ընելու, հապա անոր կամքը՝ որ զիս ղրկեց։ 39 – Եւ զիս ղրկող Հօրը կամքը այս է որ այն ամէնը զոր ինք ինծի տուաւ, չկորսնցնեմ անկէ, հապա անոր յարութիւն առնել տամ վերջին օրը։ 40-Քանզի զիս ղրկողին կամքը այս է, որ այն ամէնը որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր, յաւիտենական կեանք ունենայ. ես ալ անոր յարութիւն առնել տամ վերջին օրը։

41 – Ուստի Հրեաները սրտնեղ կ'ընէին իրեն համար, վասն զի ըսաւ Թէ ես եմ երկինքէն իջած հացը. 42- Եւ կ'ըսէին, Արիկա Յովսէփի որդին Յիսուս չէ՞, որուն հայրը ու մայրը մենք կը ճանչնանք. ուրեմն ինչպէս կ'ըսէ արիկա Թէ ես երկինքէն իջայ։ 43 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Տրտունջ մի ընէք ձեր մէջ։ 44 – Մէկը չկրնար ինծի գալ, եթէ զիս ղրկող Հայրը զանիկա չքաշէ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը։ 45 – Մարգարէներուն մէջ գրուած է, Եւ ամէնն ալ Աստուծմէ սորված պիտի ըլլան . ան ամէնը որ Հօրմէն կը լսէ ու կը սորվի, ինծի կու գայ։ 46 – Ոչ Թէ մէկը Հայրը տեսած է, եթէ ոչ ան՝ որ Աստուծմէ է, անիկա Հայրը կ'ըսէ տեսած է։ 47 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Ան որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի։ 48 – Ես եմ կեանց հացը։ 49 – Ձեր հայրերը անապատին մէջ մանանան կերան ու մեռան։ 50 – Ա յս է այն հացը որ երկինքէն կ'իջնէ, որպէս զի եթէ մէկը ուտէ, չմեռնի։ 51 – Ես եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ. 52 – Եթէ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան պիտիապրի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է, զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար։

53 – Ա նոր վրայ Հրեաները իրարու հետ կը վիճէին ու կ'ըսէին, Ինչպէս կրնայ ասիկա էր մարմինը մեզի տալ ուտելու։ 54 – Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար։ 55- Ով որ իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը։ 56 – Վասն զի իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է։ 57 – Ան որ իմ մարմինս կ'ուտէ և իմ արիւնս կը խմէ, անիկա իմ նէրսիդիս կը բնակի ու ես անոր նէրսիդին։ 58- Ինչպէս կենդանի Հայրը զիս ղրկեց, ու ես կենդանի եմ Հօրը ձեռքով, այսպէս ալ ան որ զիս կ'ուտէ, ինք ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ։ 59 – Ա յս է ան հացը որ երկինքէն իջած է. ոչ Թէ ինչպէս հայրերնիդ մանանան կերան ու մեռան. ով որ այս հացը ուտէ, յաւիտեան պիտի ապրի։

60 – Ա յս բաները զրուցեց Ժողովրդեանին մէջ՝ երբ Կափառնայումի մէջ կը սորվեցնէր ։

61 – Ու աշակերտներէն շատերը երբ լսեցին՝ ըսին, Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ անոր մտիկ ընել։ 62 – Յիսուս երբ իրենցմէն գիտցաւ որ իր աշակերտները այդ բանին համար արտունչ կ'ընեն, ըսաւ անոնց, Արիկա ձեզ կը գայթակղեցնէ՞։ 63 – Հապա ինչ պիտի ըսէիք, եթէ տեսնէք Որդին մարդոյ որ երթէ ուր առաջ էր։ 64 – Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չըներ. այն խօսքերը զորոնք ես ձեզի *կը խօսիմ, հոգի ու կեանք են։ 65 – Բայց

*Որ-ն+, խօսեցայ

ձեր մէջէն կան մանուկ որ չեն հաւատար. վասն զի Յիսուս սկիզբէն գիտէր թէ ո՛վ են անոնք որ չեն հաւատար, և ո՛վ է ան որ զինք պիտի մատնէ։ 66 – Ու կ՚ըսէր, Ասոր համար ձեզի ըսի որ մէ՛կը չկրնար ինծի գալ, եթէ իմ Հօրմէս արուած չըլլայ անոր։

67 – Այս պատճառաւ իր աշակերտներէն շատերը ետ գացին, և ալ իրեն հետ չէին պըտըտեր։ 68 – Այն ատեն Յիսուս տասներկուքին ըսաւ, Միթէ դուք ալ կ՚ուզէ՞ք երթալ։ 69 – Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր, Տէր, որո՞ւ պիտի երթանք, դուն յաւիտենական կեանքի խօսքերունիս։ 70 – Եւ մենք հաւատացինք ու գիտցանք թէ դուն ես Քրիստոսը *Աստուծոյ Որդին։ 71 – Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞, ու ձեզմէ ալ մէկը սատանայ է։ 72 – Զայս կ՚ըսէր Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային համար, վասն զի անիկա էր որ զինք պիտի մատնէր, ու տասներկուքէն մէկն էր։

## ԳԼ. Է

Եւ այս բաներէն ետեւ Յիսուս Գալիլեայի մէջ կը պտրտէր, քանզի չէր ուզեր Հրէաստանի մէջ պտրտիլ, վասն զի Հրէաները զինք սպաննել կ՚ուզէին։ 2 – Եւ Հրեաներուն տաղաւարահանգստեան տօնը մօտ էր։ 3 – Ուստի իր եղբայրները ըսին իրեն, Ելիր ասկէ ու Հրէաստան գնա, որպէս զի քու աշակերտներդ ալ տեսնեն քու գործերդ զորոնք կ՚ընես. 4 – Վասն զի մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինք յայտնի ըլլալ ուզէ. եթէ դուն այդ բաները կ՚ընես, ինքզինքդ աշխարհի յայտնէ։ 5 – Քանզի իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն։ 6 – Ուստի Յիսուս ըսաւ անոնց, Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։ 7 – Աշխարհ ձեզ չկրնար ատել, բայց զիս կ՚ատէ, վասն զի ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործերը չար են։ 8 – Դուք երթաք այս տօնին. ես [դեռ] չեմ երթար այս տօնին, վասն զի իմ ժամանակս դեռ լրացած չէ։ 9 – Զայս ըսելով անոնց՝ ինք Գալիլեա մնաց։ 10 – Բայց երբ իր եղբայրները երթան, ետքը ինք ալ երթաւ տօնին, ոչ թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերպով մը։

11 – Եւ Հրեաները տօնին տաեն կը փնտռէին զինք, ու կ՚ըսէին, Ո՞ւր է անիկա։ 12 – Եւ ժողովուրդին մէջ շատ չշնչիւն կար անոր վրայով. մանուկ կ՚ըսէին թէ Ադեկ մարդ է. ուրիշները կ՚ըսէին, Ոչ, հապա ժողովուրդը կը մոլորեցնէ։ 13 – Սակայն մէ՛կը անոր վրայով համարձակ չէր խօսեր Հրեաներուն վախէն։

14 – Իսկ երբ տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը երթաւ ու կը սորվեցնէր։ 15 – Եւ Հրեաները կը զարմանային ու կ՚ըսէին, Ինչպէս սուրբ գիրքերը գիտէ, որ սորված չէ։ 16 – Յիսուս պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա զիս ղրկողինն է։ 17 – Եթէ մէկը կ՚ուզէ առնոր կամքը ընել, պիտի գիտնայ այս վարդապետութեան համար թէ արդեօք Աստուծմէ՞ է թէ ես ինքիմէս կը խօսիմ։ 18 – Ան որ ինքիմէն կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ, բայց ան որ զինք ղրկողին փառքը կը փնտռէ, անիկա ճշմարիտ է, և անոր քով անիրաւութիւն չկայ։ 19 – Մովսէս չտուա՞ծ ձեզի օրէնքը, ու ձեզմէ մէ՛կն ալ չպահեր օրէնքը։ 20 – Ինչո՞ւ կը փնտռէք զիս սպաննել։ պատասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ, Դեւ կայ քու ներսդ. ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել։ 21 – Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց, Գործ մը գործեցի, ու ամէնդ ալ զարմացեր էք։ 22 – Արդ Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, (որ ոչ թէ Մովսեէ էր՝ հապա նախահայրերէն,) ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք։ 23 – Եթէ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ՚առնէ՝ որպէս զի Մովսէսի օրէնքը չքակուի, ինծի կը բարկանա՞ք որ ես շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի։ 24 – Աչքի երեւցածին պէս դատաստան մի ընէք, հապա արդար դատաստան ըրէք։

25 – Այն ատեն Երուսաղէմացիներէն ոմանք կ՚ըսէին, Արդեօք ան չէ՞ զոր կը փնտռեն սպաննել։ 26 – Եւ ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր անոր. միթէ իշխանները գիտցա՞ծ են թէ արդիկ ճշմարտապէս Քրիստոսն է։ 27 – Սակայն մենք արդիկ ուրկէ՛ է. բայց Քրիստոս երբ գայ, մէ՛կը չգիտեր ուրկէ՛ է։ 28 – Եւ Յիսուս

*Որմէ՛ն, կենդանի Աստուծոյ



քանի որ կը սորվեցնէր, տաճարին մէջ աղաղակեց՝ ըսելով, Զիս ալ գիտէք, և ուրկէ ըլլալս ալ գիտէք. ու ես ինքիմէս եկած չեմ, հապա ան որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, զոր դուք չէք գիտեր։ 29 – Բայց ես գիտեմ՝ զանիկա, վասն զի ես անկէ եմ, և անիկա զիս ղրկեց։ 30 – Ուստի կը փնտռէին զինք բռնել, բայց մէ՛կն ալ իրեն ձեռք չզարկաւ, վասն զի իր ժամանակը դեռ հասած չէր։ 31 – Ու ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն, և կ՚ըսէին, Քրիստոս երբ գայ, աստուածէ աւելի նշանա՞ներ պիտի ընէ, որչափ ասիկա կ՚ընէ։

32 – Փարիսեցիները լսեցին ժողովուրդին այս չշնչիւնը անոր վրայով. ու փարիսեցիները և քահանայապետները սպասաւորներ ղրկեցին, որպէս զի զանիկա բռնեն։ 33 – Իսկ Յիսուս *ըսաւ, Դեռ մի ժամանակ ալ ձեզի հետ եմ, ու կ՚երթամ անոր որ զիս ղրկեց։ 34 – Զիս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։ 35 – Ա՛յնատեն Հրեաները ըսին իրարու, Ո՞ւր պիտի երթայ ատիկա, որ մենք զինք պիտի չգտնենք. միթէ †Հելլենացիներուն մէջ ցրուեալն եղող Հելլենացի՞ներուն պիտի երթայ, և Հելլենացիներո՞ւն պիտի սորվեցնէ։ 36 – Ի՞նչ է այն խօսքը զոր ըսաւ, Զիս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։

37 – Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կայներ էր, կ՚աղաղակէր ու կ՚ըսէր, Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի գայ ու խմէ։ 38 – Ան որ ինծի կը հաւատայ, ինչպէս գիրքը կ՚ըսէ, անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բղխեն։ 39 – Զայս ըսաւ Հոգիին համար զոր իրեն հաւատացողները պիտի առնէին, վասն զի Սուրբ Հոգին դեռ չէր տակաւին, քանզի Յիսուս դեռ փառաւորուած չէր։ 40 – Ժողովուրդէն շատ մարդիկ երբ այս խօսքը լսեցին՝ կ՚ըսէին, Իրաւցընէ ասիկա է մարգարէն։ 41 – Ուրիշները կ՚ըսէին, Ասիկա է Քրիստոսը. ուրիշներն ալ կ՚ըսէին, Միթէ Քրիստոսը Գալիլեայէ՞ կու գայ։ 42 – Չէ՞ որ գիրքը կ՚ըսէ թէ Քրիստոս Դաւիթի սերունդէն ու Դաւիթի

*Որմէ՛ն, անոնց ըսաւ
†Յու՛ն. Յոյներուն

եղած գեղէն Բեթղեհեմէ կու գայ։ 43 – Ուստի ժողովուրդին մէջ երկպառակութիւն եղաւ անոր համար։ 44 – Եւ անոնցմէ ոմանք ուզեցին բռնել զանիկա, բայց մէ՛կը անոր ձեռք չզարկաւ։

45 – Ու սպասաւորները դարձան եկան քահանայապետներուն և փարիսեցիներուն, ու ասոնք ըսին անոնց, Ինչո՞ւ զանիկա հո՛ չբերիք։ 46 – Պատասխան տուին սպասաւորները, Երբէք մէ՛կը այս մարդուն պէս խօսած չէ։ 47 – Այն ատեն փարիսեցիները պատասխան տուին անոնց և ըսին, Միթէ դո՞ւք ալ մոլորեցաք։ 48 – Իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր. 49 – Բայց այս ամբոխ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզոված են։ 50 – Նիկոդէմոս ըսաւ անոնց, (որ առաջուընէ գիշերը ատեն իրեն եկեր էր, և անոնցմէ մէկն էր,) 51 – Մի՞թէ մեր օրէնքը մարդ կը դատէ՞, եթէ առաջ անկէ բան մը չլսէ, և չգիտնայ թէ ի՞նչ կ՚ընէ։ 52 – Պատասխան տուին ու ըսին անոր, Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէ ես. քննէ ու նայէ որ Գալիլեայէ մարգարէ չելլէր։ 53 – Եւ ամէն մէկը իր տունը գնաց։

## ԳԼ. Ը

Եւ Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց։ 2 – Ու առտուանց նորէն տաճարը եկաւ, և բոլոր ժողովուրդը իրեն կուգար. ու ինք նստեր կը սորվեցնէր անոնց։ 3 – Եւ գպիրները ու փարիսեցիները շնութեան մէջ բռնուած կին մը բերին անոր, ու զանիկա մէջտեղը կայնեցնելով՝ 4 – Ըսին իրեն, Վարդապետ, այս կինը շնութեան մէջ այս մեղքը գործած տաեն բռնուեցաւ. 5 – Եւ օրէնքին մէջ Մովսէս մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել. հիմա դուն ի՞նչ կ՚ըսես ասոր համար։ 6 – Զայս կ՚ըսէին՝ զանիկա փորձելով, որպէս զի անոր վրայ ամբաստանութիւն ընելո՞ւ մը ունենան. բայց Յիսուս դեպ ի վար ծռելով մատովը գետնին վրայ կը գրէր. 7 – Սակայն երբ վրան լնկան՝ տարցնելով իրեն, վեր նայեցաւ ու ըսաւ անոնց, Ձեզմէ անմեղ եղողը՝ առաջ անիկա թող քար ձգէ ասոր վրայ։ 8 – Եւ նորէն դեպ ի վար ծռելով գետնին վրայ կը գրէր։ 9 – Եւ անոնք զայս լսելով ու իրենց խղճմտանա-

քէն յանդիմանուելով՝ մէկիկ մէկիկ դուրս կ'ելլէին, ծերերէն սկսած մինչեւ յետիններէն. և Յիսուս մնաց միայն, ու կինը մէջտեղը կայնած։ 10 – Եւ Յիսուս վեր նայելով ու կնոջմէն զատ մ'կը չտեսնելով՝ ըսաւ անոր, Ովե՞ կին, ո՞ր են անոնք որ քու վրայովդ ամբաստանութիւն կ'ընէին. մ'կը քեզ չդատապարտե՞ց։ 11 – Եւ անկէ ըսաւ, Ո՛չ մէկը, Տէր. ու Յիսուս ըսաւ անոր, Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու ասկէ ետեւ մեղք մի գործեր։

12 – Դարձ Յիսուս նորէն խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ։ 13 – Ուստի փարիսեցիները ըսին անոր, Դուն քու անձիդ համար կը վկայես, քու վկայութիւնդ ճշմարիտ չէ։ 14 – Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Թէեւ ես իմ անձիս համար կը վկայեմ, բայց իմ վկայութիւնս ճշմարիտ է, վասն զի գիտեմ ուրկէ՛ եկայ և ո՛ւր կ'երթամ. բայց դուք չէք գիտեր ուրկէ՛ կու գամ կամ ո՛ւր կ'երթամ։ 15 – Դուք մարմինին նայելով դատաստան կ'ընէք, ես ընաւ մէկը չեմ դատեր. 16. Ու թէեւ դատելու ալ ըլլամ, իմ դատաստանս ճշմարիտ է. վասն զի ես միանակ չեմ, հապա ես՝ և Հայրը որ զիս ղրկեց։ 17 – Ու ձեր օրէնքին մէջ ալ գրուած է թէ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է։ 18 – Ես եմ որ իմ անձիս համար կը վկայեմ, ու կը վկայէ ինծի համար Հայրն ալ որ զիս ղրկեց։ 19 – Անոնք ըսին անոր, Ո՞ւր է քու Հայրդ. Յիսուս պատասխան տուաւ, Ո՛չ զիս գիտէք՝ և ո՛չ իմ Հայրս. եթէ զիս գիտնայիք, իմ Հայրս ալ պիտի գիտնայիք։

20 – Յիսուս այս խօսքերը խօսեցաւ գանձատունը՝ երբ տաճարին մէջ կը սորվեցնէր. ու մէկը չբռնեց զանիկա, վասն զի դեռ անոր ժամանակը հասած չէր։

21 – Եւ Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ես կ'երթամ՝ ու զիս պիտի փնտռէք, և ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ։ 22 – Ասոր վրայ Հրեաները կ'ըսէին, Մի՞թէ ինքզինք պիտի սպանէ՞, որ կ'ըսէ թէ Ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ։ 23 – Եւ ըսաւ անոնց, Դուք վարէն էք, ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ. 24 – Անոր համար ձեզի ըսի թէ Ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք, վասն զի եթէ չհաւատաք թէ ես եմ, ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք։ 25 – Ան ատեն ըսին անոր, Դուն ո՞վ ես. և Յիսուս ըսաւ անոնց, Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ։ 26 – Շատ բաներ ունիմ ձեզի համար խօսելու և դատելու. բայց ան որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ որ լսեմ լսեցի, զանիկա կը խօսիմ աշխարհի մէջ։ 27. Անոնք չհմացան թէ Հօրը համար կը զրուցեր իրենց։

28 – Ուստի Յիսուս ըսաւ անոնց, Երբ Որդին մարդոյ բարձրացնէք, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ, ու ինքիմէս բան մը չեմ ըներ, հապա Հայրս ինչպես ինծի սորվեցուց՝ այնպես կը խօսիմ. 29 – Եւ զիս ղրկողը ինծի հետ է. Հայրը զիս մինակ չթողուց, վասն զի ես միշտ անոր հաճելի եղած բաները կ'ընեմ։

30. Երբ ասոնք խօսեցաւ, շատ մարդիկ իրեն հաւատացին։ 31 – Ան ատեն Յիսուս իրեն հաւատացող Հրեաներուն ըսաւ, Եթէ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. 32 – Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ։ 33. Պատասխան տուին իրեն, Մենք Աբրահամի սերունդ ենք, ու երբէք մէկու չծառայեցինք. դուն ինչպէս կ'ըսես Թէ Ազատ պիտի ըլլաք։ 34 – Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա մեղքի ծառայ է։ 35 – Եւ ծառան տանը մէջ յաւիտեան չմնար, բայց որդին յաւիտեան կը մնայ։ 36 – Ուստի եթէ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք։ 37 – Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք, բայց կը փնտռէք զիս սպանել, վասն զի իմ խօսքս ձեր ներսիդին տեղ չունի։ 38 – Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովն ըսայն կը խօսիմ, և դուք ալ ինչ որ տեսաք ձեր հօրը քովն ըսայն կ'ընէք։ 39 – Պատասխան տուին ու ըսին անոր, Մեր հայրը Աբրահամ է. ըսաւ անոնց Յիսուս, Եթէ Աբրահամի որդիները ըլլայիք, Աբրահամի գործերը պիտի գործէիք։



40 – Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս, այդ՝ մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւնն խօսեցայ, զոր Աստուծմէ լսեցի։ Աբրահամ այդ բանը չըրաւ։ 41 – Դուք ձեր հօրը գործերը կ'ընէք. ան ատեն ըսին անոր, Մենք պոռնկութենէ չենք ծնած, մենք մէկ Հայր ունինք, որ է Աստուած։ 42 – Յիսուս ըսաւ անոնց, Եթէ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս. վասն զի ես Աստուծմէ ելայ ու եկայ. և ոչ թէ ես ինքիրմէս եկայ, հապա անիկա զիս ղրկեց։ 43 – Ինչո՞ւ դուք իմ զրուցուածքս չէք հասկնար. անոր համար որ չէք կրնար իմ խօսքս մտիկ ընել։ 44 – Դուք չեր հօրմէն Սատանայէ էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել. անիկա սկիզբէն հետէ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, վասն զի անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ. երբ անիկա սուտ խօսի, բուն իրեններէն կը խօսի, քանզի անիկա սուտախօս է և անոր հայրը։ 45 – Բայց որովհետեւ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար։ 46 – Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար. իսկ եթէ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինչո՞ւ ինծի չէք հաւատար։ 47 – Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ. դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք։ 48 – Պատասխան տուին Հրեաները ու ըսին անոր, Ազէկ չե՞նք ըսեր մենք Թէ դուն Սամարացի ես, ու դեւ կայ քու ներսդ։ 49 – Յիսուս պատասխան տուաւ Ես դեւ, Իմ ներսս դեւ չկայ, հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և դուք զիս կ'անարգէք։ 50 – Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր. կայ մէկը որ կը փնտռէ ու կը դատէ։ 51 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ պիտի չտեսնէ։ 52 – Ան ատեն Հրեաները ըսին անոր, Հիմա գիտցանք որ քու ներսդ դեւ կայ. Աբրահամ մեռաւ, ու մարգարէները, և դուն կ'ըսես, եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահուան համը պիտի չառնէ։ 53 – Մի՞թէ դուն աւելի՛ մեծ ես մեր հօրմէն Աբրահամէ, որ մեռաւ, ու մարգարէներն ալ մեռան. դուն քեզ ո՞վ կ'ընես։ 54 – Յիսուս պատասխան տուաւ, Եթէ ես ինքզինքս փառաւորեմ, իմ փառքս բան մը չէ. իմ Հայրս է որ զիս կը փառաւորէ, ո՛ր-

## ԳԼ. Թ

Ու երբ կ'անցնէր, մարդ մը տեսաւ կոյր ծնած. 2 – Եւ իր աշակերտները հարցուցին իրեն ու ըսին, Ուսուցի՛չ, ո՞վ է մեղքը, ասո՞ր Թէ իր ծնողքին, որ անիկա կոյր ծնաւ։ 3 – Պատասխան տուաւ Յիսուս, Ո՛չ ասորն է մեղքը, ո՛չ ալ իր ծնողքին, հապա որպէս զի Աստուծոյ գործերը տասը վրայ յայտնի ըլլան։ 4 – Բանի որ ցորեկ է, պէտք է որ զիս ղրկողին գործերը գործեմ. գիշերը կու գայ երբ մ'կը չկրնար գործել։ 5 – Բանի որ ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ։ 6 – Երբ զայս ըսաւ, թքաւ գետինը և թուքով կաւ շինեց, ու այն կաւը կոյրին աչքերուն վրայ ծեփեց. 7 – Եւ ըսաւ անոր, Գնա, լուացուէ Սելովամի աւազանին մէջ, (որ դրկուած կը Թարգմանուի.) ուստի գնաց ու լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր։ 8 – Ուստի դրացիները և անոնք որ առաջուընէն տեսած էին զանիկա որ †կոյր էր, կ'ըսէին, Արդեօք չէ՞ որ կը նստէր և կը մուրար. ոմանք կ'ըսէին, Անիկա է. 9 – Ուրիշները չ'ըսէին, Անոր նման ձեւն է. հապա ինքը կ'ըսէր Թէ Ես եմ։ 10 – Ուստի ըսին իրեն, Հապա ի՞նչպէս բացուեցան քու աչքերդ։ 11 – Ինք պատասխան տուաւ ու ըսաւ, Յի-

---

*Որ՝ն+, Զեր
†Որ՝ն+, մուրացկան

առա կոչուած մարդ մը կաս չլինեց ու աչքերս ծեփեց , և լուսաւ ինձի , Գնա Սելովամի աւազանը ու լուացուէ. ես ալ գացի, լուացուեցայ ու կը տեսնեմ։ 12 – Եւ ըսին իրեն, Ո՞ւր է անիկա. ըսաւ անոնց, Չեմ գիտեր։

13 – Փարիսեցիներուն տարին զանիկա որ առեղով կոյր էր։ 14 – Եւ շաբաթի օր էր երբ Յիսուս կաւը շինեց, ու անոր աչքերը բացաւ։ 15 – Նորէն փարիսեցիներն ալ կը հարցնէին իրեն, Թէ ի՛նչպես կը տեսնէ . անիկա ալ ըսաւ անոնց , Կաւ դրաւ աչքերուս վրայ, ու լուացուեցայ և կը տեսնեմ ։ 16 – Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ՚ըսէին, Այն մարդը Աստուածմէ չէ, վասն զի շաբաթի օրը չպահեր. ուրիշները կ՚ըսէին, Ի՞նչպես կրնայ մեղաւոր մարդ մը այսպիսի հրաշքներ ընել. ու անոնց մէջ երկպառակութիւն կար։ 17 – Նորէն ըսին կոյրին, Դուն ի՞նչ կ՚ըսես անոր համար որ քու աչքերդ բացաւ. ան ալ ըսաւ Թէ Մարգարէ մըն է։ 18 – Իսկ Հրեաները չէին հաւատար անոր համար՝ Թէ կոյր էր ու բացուեցաւ, մինչև որ այն աչքը բացուածին ծնողքը կանչեցին։ 19 – Եւ անոնց հարցուցին ու ըսին, Ա՞յս է ձեր որդին, որու համար դուք կ՚ըսէք Թէ կոյր ծնաւ. Հապա հիմա ի՞նչպես կը տեսնէ։ 20 – Անոր ծնողքը պատասխան տուին անոնց ու ըսին , Գիտենք որ սիկա է մեր որդին, և որ ինք կոյր ծնաւ. 21 – Բայց հիմա ի՛նչպես կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ Թէ ո՛վ բացաւ անոր աչքերը՝ մենք չենք գիտեր. ինք չափահաս է , իրեն հարցուցէք . Թող ինք խօսի իրեն համար։ 22-Այս բանին անոր ծնողքը՝ Հրեաներէն վախնալնուն համար, քանզի Հրեաները միաբան հաստատեր էին որ եթէ մէկը զանիկա Քրիստոս դաւանի, ժողովարանէն դուրս ձգուի։ 23 – Ասոր համար անոր ծնողքը ըսին Թէ Ինք չափահաս է, իրեն հարցուցէք։ 24 – Եւքը նորէն կանչեցին այն մարդը որ կոյր էր, ու ըսին անոր, Աստուծոյ փառք տուր. մենք գիտենք որ այն մարդը մեղաւոր է։ 25 – Անիկա ալ պատասխան տուաւ ու ըսաւ, Եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտեր . միայն այս գիտեմ որ կոյր էի և հիմա կը տեսնեմ։ 26 – Նորէն ըսին անոր, Ի՞նչ բրաւ քեզի, քու աչքերդ ի՞նչպես բացաւ։ 27-Պատասխան տուաւ անոնց , Հիմա ըսի ձեզի ու չլսեցիք. ինչո՞ւ համար նորէն լսել կ՚ուզէք. միթէ դո՞ւք ալ կ՚ուզէք անոր աշակերտ ըլլալ։ 28 – Անոնք նախատելով զանիկա ըսին, Դուն ես անոր աշակերտը, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք ։ 29 – Մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ, բայց սիկա չենք գիտեր Թէ ուրկէ՛ է։ 30 – Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց, Ատիկա է զարմանալի բանը՝ որ դուք չէք գիտեր Թէ ուրկէ՛ է, և անիկա իմ աչքերս բացաւ։ 31 – Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չըներ, բայց եթէ մէկը աստուածավախ ըլլայ ու անոր կամքը կատարէ, անոր մտիկ կ՚ընէ։ 32 – Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած է։ 33 – Եթէ Աստուածմէ չըլլար այն մարդը, բան մըն ալ չէր կրնար ընել։ 34 – Պատասխան տուին և ըսին անոր, Դուն բոլորովին մեղքերու մէջ ծնած ես, ու մեզի վարդապետութի՞ւն կ՚ընես. և դուրս ըրին զանիկա ։

35 – Յիսուս լսեց որ զանիկա դուրս ըրին, ու երբ գտաւ զանիկա, ըսաւ անոր, Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդիին ։ 36 – Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Տէր, ո՞վ է՝ որ հաւատամ անոր ։ 37 – Եւ Յիսուս ըսաւ անոր , Տեսար ալ զանիկա, և քեզի հետ խօսողը ան է։ 38 – Անիկա ալ ըսաւ, Կը հաւատամ, Տէր . ու անոր երկրպագութիւն բրաւ։ 39 – Եւ Յիսուս ըսաւ, Ես դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէս զի չտեսնողները տեսնեն և տեսնողները կուրանան։

40 – Եւ փարիսեցիներէն ոմանք ուրանք իրեն հետ էին, այս բաները լսելով ըսին իրեն, Միթէ մե՞նք ալ կոյր ենք։ 41 – Յիսուս ըսաւ անոնց , Եթէ կոյր ըլլայիք , դուք մեղք չէիք ունենար, բայց հիմա կ՚ըսէք Թէ Կը տեսնենք, ասոր համար ձեր մեղքը չէր վայ կը մնայ ։

## Գ Լ . Ժ

Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ան որ դռնէն չմտներ ոչխարներուն բակը, հապա ուրիշ տեղէ կ՚ելլէ, անիկա գող ու աւազակ է։ 2 – Բայց ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է։ 3 – Դռնապանը կը բանայ անոր, և ոչխարները անոր ձայնին կը լսեն, ու իր ոչխարները անունովնին կը կանչէ, և դուրս կը հանէ զանոնք։ 4 – Ու երբ իր ոչխարները կը հանէ , անոնց առջևէն կ՚երթայ , ու ոչխարները իր ետևէն կ՚երթան, վասն զի անոր ձայնը կը ճանչնան ։ 5 – Սակայն օտարի ետևէ չեն երթար , հապա անկէ կը փախչին, վասն զի օտարներուն ձայնը չեն ճանչնար ։

6 – Յիսուս այս առակը բսաւ անոնց, բայց անոնք չէին խմանար Թէ ի՛նչ էր զոր իրենց կը խօսէր ։ 7 – Եւ Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Ես եմ ոչխարներուն դուռը։ 8 – Ամէն անոնք որ ինծմէ առաջ եկան, գող ու աւազակ էին , բայց անոնց չլսեցին ոչխարները ։ 9 – Ես եմ դուռը. եթէ մէկը ինծմէ ներս մտնէ, պիտի փրկուի , ու պիտի մտնէ ու ելլէ և արօտ գտնէ ։ 10 – Գողը չգար, միայն Թէ գողնալու և սպաննելու ու կորսնցնելու համար . ես եկայ որ կեանք ունենան, և ալ աւելի առատ ունենան։ 11 – Ես եմ բարի հովիւը. բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ։ 12 – Բայց վարձկանը որ հովիւ չէ ու ոչխարները իրը չեն, երբ կը տեսնէ գայլը որ կու գայ, կը թողու ոչխարները ու կը փախչի . և գայլը կը յափշտակէ ոչխարները ու զանոնք կը ցրուէ։ 13 – Եւ վարձկանը կը փախչի , վասն զի վարձկան է ու իր հոգը չէ ոչխարներուն համար ։ 14 – Ես եմ բարի հովիւը, և կը ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիններէս։ 15 – Ինչպես Հայրը զիս կը ճանչնայ, ես ալ Հայրը կը ճանչնամ , ու իմ կեանքս ոչխարներուն համար կը դնեմ։ 16 – Ուրիշ ոչխարներ ալ ունիմ , ոնք այս բակէն չեն . զանոնք ալ պէտք է որ բերեմ, ու իմ ձայնիս պիտի լսեն, և պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ։ 17-Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ , որ ես իմ կեանքս կը դնեմ, որպէս զի նորէն առնեմ զանիկա։ 18 – Մէկը չէ՛ առներ զանիկա ինծմէ, հապա ես կը դնեմ զանիկա ինքիրմէս. իշխանութի՛ւն ունիմ զանիկա դնելու, և իշխանութի՛ւն ունիմ զանիկա նորէն առնելու ։ այս պատուէրը իմ Հօրմէս առի ։



19 – Նորէն երկպառակութի՛ւն կ՚ըլլար Հրեից մէջ այս խօսքերուն համար։ 20 – Եւ անոնցմէ շատերը կ՚ըսէին, Դեւ կայ ասոր ներսիդին, ու խելագած է. ինչո՞ւ ասոր մտիկ կ՚ընէք ։ 21 – Ուրիշները կ՚ըսէին, Այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն . միթէ դեւը կրնա՞յ կոյրերուն աչքերը բանալ ։ 22-Այն ատեն Երուսաղէմ նաւակատիքի տօնը եղաւ, ու ձմեռ էր ։ 23 – Եւ Յիսուս կը պարտէզը տաճարին մէջ Սողոմոնի սրահը։ 24 – Եւ Հրեաները անոր չորս կողմը առին ու ըսին անոր, Մինչև ե՞րբ մեզ տարակուսանքի մէջ կը թողուս. եթէ Քրիստոսը դուն ես, մեզ զի համարձակ ըսէ։ 25 – Յիսուս պատասխան տուաւ անոնց , Ձեզի ըսի ու չէք հաւատար. այն գործերը զորնք ես իմ Հօրս անունովը կը գործեմ, անոնք կը վկայեն ինծի համար ։ 26 – Բայց դուք չէք հաւատար , վասն զի իմ ոչխարներէս չէք , *ինչպես ձեզի ըսի։ 27 – Իմ ոչխարները իմ ձայնիս կը լսեն, ես ալ զանոնք կը ճանչնամ, ու իմ ետևէս կու գան . 28 – Եւ ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, ու յաւիտեան պիտի չկորսուին, և ա՛ոկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք։ 29 – Իմ Հայրս որ զանո՛ւ ինծի տուաւ, ամէնէն մեծ է, և ա՛ոկը չկրնար իմ Հօրս ձեռքէն յափշտակել ։ 30 – Ես ու Հայրը մէկ ենք։

31 – Այն ատեն Հրեաները նորէն քարեր վերցուցին, որպէս զի զանիկա քարկոծեն։ 32 – Յիսուս պատասխան տուաւ անոնց , Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս, անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը քարկոծէք ։ 33 – Հրեաները պատասխան տուին անոր՝ ըսելով , Բարի գործի համար քեզ չենք քարկոծեր, հապա հայհոյութեան համար, և քանզի դուն որ մարդ ես , ինքզինքդ Աստուած կ՚ընես։ 34 – Յիսուս պատասխան տուաւ անոնց , Չէ՞ որ ձեր օրէնքին մէջ գրուած է , Ես ըսի Թէ դուք աստուածներ էք։ 35 – Եթէ աստուածներ կ՚անուանէ զանոնք, որոնց Աստուծոյ խօսքը եղաւ, (ու կարելի չէ որ այն գրուածը ապրուի.) 36 – Հապա զայն որ Հայրը սրբեց և աշխարհ ղրկեց , դուք անոր կ՚ըսէ՞ք Թէ հայհոյութի՛ւն կ՚ընես՝ Աստուծոյ Որդին եմ ըսելուս համար։

*Ոմանք ըսինէն

տուածդ Որդի եմ ըսելուս համար։ 37 – Եթէ իմ Հօրս գործերը չեմ գործեր , ինծի մի հաւատաք։ 38 – Ապա եթէ կը գործեմ, թէեւ ինծի չէք հաւատար, գոնե գործերուն հաւատացէք , որպէս զի գիտնաք ու *հաւատաք թէ Հայրը իմ մէջս է, և ես անոր մէջ ։

39 – Դարձեալ կը փնտռէին զանիկա բռնել , և անոնց ձեռքէն ելաւ ։ 40 – Ու նորէն գնաց Յորդանանս անդիի կողմը, այն տեղը ուր Յովհաննէս առաջ կը մկրտէր, ու հոն կեցաւ։ 41 – Եւ շատերը եկան անոր ու կ'ըսէին, Իրաւ Յովհաննէս հրաշք մը չըրաւ ։ 42 – Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր։ ԵՒ շատ մարդիկ հոն անոր հաւատացին ։

## Գլ. ԺԱ.

Ու Մարիամի և անոր քրոջ Մարթայի գիւղէն, Բեթանիայէ, Ղազարոս անունով մէկը հիւանդ էր ։ 2 – Անիկա այն Մարիամն էր որ Տէրը իւղով օծեց, ու անոր ոտքերը իր մազերովը սրբեց , որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ 3 – Ուստի էր քոյրերը խրկեցին անոր ու ըսին, Տէր, ահա անիկա զոր դուն կը սիրես, հիւանդ է։ 4 – Յիսուս երբ լսեց՝ ըսաւ, Այս հիւանդութիւնը մահուան համար չէ , հապա Աստուածդ փառքին համար , որպէս զի Աստուածդ Որդին անով փառաւորուի։ 5 – Աւրդ Յիսուս կը սիրէր Մարթան և անոր քոյրը ու Ղազարոսը։ 6 – Ուստի երբ լսեց թէ հիւանդ է , եղած տեղը երկու օր ալ կեցաւ։ 7 – Ետ անկէ ետքը բսաւ աշակերտներուն , Երթանք, նորէն Հրէաստան երթանք։ 8 – Աշակերտները իրեն ըսին, Ռաբբի , Հրէաները հիմա քիչ կը փնտռէին քարկոծելու , ու նորէն հո՞ն կ'երթաս ։ 9 – Պատասխան տուաւ Յիսուս, Չէ՞ որ օրը տասներկու ժամ է ։ Եթէ մէկը ցորեկը քալէ՝ չսայիր , վասն զի այս աշխարհին լոյսը կը տեսնէ. 10 – Բայց եթէ մէկը գիշերը քալէ՝ կը սայի , վասն զի իրեն հետ լոյս չկայ։ 11 – Ա՛յս բաները ըսաւէն ետև բսաւ անոնց , Ղազարոս մեր բարեկամը քնացած է , բայց կ'երթամ որպէս զի զանիկա արթնցնեմ։ 12-Իր աշակերտները ըսին,

*Ոմանք, ճանչնաք

Տէր, եթէ քնացած է, պիտի առողջանայ։ 13 – Իսկ Յիսուս անոր մեռնելուն համար կ'ըսէր, բայց անոնք կը կարծէին թէ քունն քնանալուն համար կ'ըսէր։ 14 – Ապա տուն Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց, Ղազարոս մեռաւ. 15 – Եւ ես ուրախ եմ ձեզի համար որ հոն չէի, որպէս զի դուք հաւատաք . բայց երթ+ երթանք անոր ։ 16 – Թովմաս, որ Երկուորեակ կ'ըսուէր , ըսաւ էր աշակերտակիցներուն, Մենք ալ երթանք, որպէս զի անոր հետ մեռնինք։

17 – Յիսուս երբ եկաւ , գտաւ որ անիկա արդէն չորս օրուան գերեզմանը դրուած էր։ 18 – Ու Բեթանիա Երուսաղէմի մօտ էր մօտաւորապէս տասը բերդի չափ ։ 19 – Եւ Հրէաներէն շատերը Մարթային ու Մարիամի եկած էին որպէս զի մխիթարեն զանոնք իրենց եղբօրը համար ։ 20 – Աւրդ երբ լսեց Մարթա թէ Յիսուս կու գայ , դանիկա դիմաւորելու գնաց , բայց Մարիամ տանը մէջ նստեր էր։ 21 – Եւ Մարթա ըսաւ Յիսուսի, Տէր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ. 22 – Բայց գիտեմ որ հիմա ալ դուն ինչ որ խնդրես Աստուծմէ, Աստուած պիտի տայ քեզի ։ 23 – Յիսուս ըսաւ անոր, Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ։ 24 – Մարթա ըսաւ անոր, Գիտեմ որ յարութեան ժամանակը, վերջին օրը, յարութիւն պիտի առնէ։ 25 – Յիսուս ըսաւ անոր, Ես եմ յարութիւնը ու կեանքը. ան որ ինծի կը հաւատայ , յաւիտեան պիտի չմեռնի . դուն կը հաւատա՞ս սոր ։ 27 – Ըսաւ անոր, Այո, Տէր, ես հաւատացեր եմ որ դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ գալու էիր։ 28 – Ու երբ զայս ըսաւ, գնաց իր քոյրը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝ ըսելով , Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ։ 29 – Անիկա լսածին պէս՝ շուտ մը եղաւ ու եկաւ անոր ։ 30 – Իսկ Յիսուս գեռ գեղը եկած չէր, հապա այն տեղ էր, ուր Մարթա դանիկա դիմաւորեց։ 31 – Բայց Հրէաները որ անոր հետ տանը մէջ էին ու կը մխիթարէին զանիկա , երբ տեսան որ Մարիամ շուտ մը եղաւ ու գնաց, երէնէ+ ալ անոր եռանէն գացին՝ ըսելով թէ Գերեզմանը կ'երթայ որպէս զի հոն

*Ոմանք, քարը , ուր պառկած էր մեռելը



լայ։ 32 – Իսկ Մարիամ երբ Յիսուսի եղած տեղը եկաւ ու զանիկա տեսաւ, անոր ոտքը ինկնալով՝ ըսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլլայիր՝ իմ եղբայրս չէր մեռներ։ 33 – Յիսուս երբ տեսաւ զանիկա որ կու լար, և անոր հետ եղող Հրեաները որոնք կու լային , իր հոգւոյն մէջ հառաչեց ու խռովեցաւ, 34. Եւ ըսաւ , Ո՞ւր դրած էք զանիկա. ըսին իրեն, Տէր, եկուր ու տես ։ 35 – Յիսուս լացաւ։ 36 – Ուստի Հրեաները կ'ըսէին, Նայեցէք ո՛րչափ կը սիրէր զանիկա։ 37-Անոնցմէ ոմանք ալ կ'ըսէին, Արիկա որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար ընել որ ան ալ չմեռնէր։ 38 – Յիսուս նորէն իր սրտին մէջ հառաչելով գերեզմանն կու գայ . և անիկա քարայր մըն էր, ու անոր վրայ քար մը դրուած էր։ 39-Յիսուս ըսաւ, Մէկդի բերէք այդ քարը. մեռելին քոյրը Մարթա ըսաւ անոր , Տէր , արդէն հոտած պիտի ըլլայ, վասն զի չորս օրուան է։ 40 – Ըսաւ անոր Յիսուս, Քեզի չըսի՞ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես։ 41 – Ա՛ր առին մեկդի բերին քարը . և Յիսուս էր աչքերը վեր վերցուց ու ըսաւ , Հայր, շնորհակալ եմ քեզմէ, որ ինծի լսեցիր։ 42 – Ու ես գիտէի որ միշտ ինծի կը լսես, բայց այս բոլորտիքը կայնող ժողովուրդին համար ըսի, որպէս զի հաւատան թէ դուն զրկեցիր զիս։ 43 – Եւ զայս ըսելէն ետքը՝ մեծ ձայնով մը կանչեց, Ղազարոս, դուրս եկուր։ 44 – Մեռելն ալ եկաւ՝ ոտքերը ու ձեռքերը պատանքով կապած և երեսը վարշամակով պատած . Յիսուս ըսաւ անոնց, Արձակեցէք տիկա ու թողէք որ երթայ։

45 – Եւ Հրեաներէն շատերը որոնք Մարիամի եկեր էին, երբ Յիսուսի բրածը տեսան , հաւատացին իրեն ։ 46 – Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն , ու Յիսուսի բրածը անոնց պատմեցին։

47 – Ուստի քահանայապետները և փարիսեցիները ժողով գումարեցին ու ըսին, Ի՞նչ ընենք, քանզի այս մարդը շատ հրաշքներ կ'ընէ։ 48 – Եթէ զանիկա այսպէս թող տանք , ամէնն ալ անոր պիտի հաւատան, և Հռովմայեցիք պիտի գան ու մեր տեղը ու ազգը պիտի վերցնեն։ 49 – Եւ անոնցմէ մէկը, Կայիափա անունով, որ այն տարուան քահանայապետն էր , ըսաւ անոնց, 50 – Դուք բան մը չէք գիտեր , և չէք ալ խորհիր թէ ազէկ է մեզի՝ որ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, ու բոլոր ազգը չկորսուի։ 51 – Բայց այս բանը ոչ թէ ինքիմէ ըսեցեր , հապա այն տարուան քահանայապետը ըլլալով , մարգարեացաւ թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնէր. 52 – Եւ ոչ թէ միայն ազգին համար , հապա որ Աստուծոյ ցիրուցան եղած որդիներն ալ մէկտեղ ժողվէ ։

53 – Ալ այն օրէն հոս խորհուրդ բրին որ սպանանեն զանիկա ։ 54 – Ուստի Յիսուս անկէ հաքը համարձակ չէր պարեր Հրէից մէջ, հապա անկէ անապատին մօտ տեղ մը գնաց , քաղաք մը որուն անունը Եփրայիմ էր , ու իր աշակերտներուն հետ հոն կը կենար ։

55 – Եւ Հրէից զատիկը մօտ էր , ու այն տեղէն շատ մարդիկ զատիկէն առաջ Երուսաղէմ եկան , որպէս զի ինքզինքնին մաքրեն։ 56-Ետ կը փնտռէին Յիսուսը, ու տաճարին մէջ կեցած ատեննին իրարու կ'ըսէին , Ձեզի ինչպէս կ'երեւնայ , թէ այս տօնին քնաւ պիտի չգա՞յ։ 57 – Իսկ քահանայապետները ու փարիսեցիները պատուէր տուեր էին , որ եթէ մէկը գիտնայ անոր ուր ըլլալը՝ իմացնէ , որպէս զի զանիկա բռնեն ։

## Գլ. ԺԲ

Իսկ Յիսուս զատիկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ , ուր էր Ղազարոս մեռեալը, զոր Յիսուս մեռելներէն յարուցց։ 2 – Եւ հոն անոր ընթրիք մը բրին , ու Մարթա սպասաւորութիւն կ'ընէր, և Ղազարոս անոր հետ սեղան նստողներէն մէկն էր։ 3-Իսկ Մարիամ մէկ լիտր նարդոսի պատուական մեծագին իւղ առնելով , Յիսուսի ոտքերը օծեց ու իր մազերովը անոր ոտքերը սրբեց. և տունը իւղին անուշահոտութիւնովը լեցուեցաւ ։ 4 – Ա՛յն տեսնելուն աշակերտներէն մէկը , Իսկարիովտացի Սիմոնեան Յուդա որ զանիկա պիտի մատնէր, բսաւ, 5 – Ինչո՞ւ համար այդ իւղը չծախուեցաւ երեք հա-

*Ոմանք, քարը , ուր պառկած էր մեռելը

բիւր դահեկանի , որ աղքատներուն տրուէր: 6 – Ջայս բսաւ , ոչ Թէ աղքատներուն հոգաց էր համար իր հոգն էր. հապա որ գող էր ու գանձանակը ինք կը պահէր, և ինչ որ ձգուէր՝ ինք կը կրէր : 7–Ասկ Յիսուս բսաւ , Թող տուր ատոր. այդ բանը իմ թաղմանս օրուանը համար պահէց: 8 – Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք, բայց զիս ամէն ատեն չունիք :

9 – Ուսոի Հրեաներէն շատ ժողովուրդ անոր հան ըլլալը իմացան, ու եկան ոչ Թէ միայն Յիսուսի համար , հապա որպէս զի Ղազարոսն ալ տեսնեն, զոր մեռելներէն յարուց : 10 – Ասկ քահանայապետները խորհուրդ ըրին որ Ղազարոսն ալ մեռցնեն. 11 – Վասն զի Հրեաներէն շատերը անոր պատճառաւ կ'երթային ու կը հաւատային Յիսուսի:

12 – Հետեւեալ օրը շատ ժողովուրդ որ տօնին եկած էին , երբ լսեցին Թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ , 13–Արմաւենիի ոստեր առին ու ելան դիմակա գիմաւորելու , և կ'աղաղակէին , Ովսաննա, օրհնեալ է Իսրայէլի Թագաւորը՝ որ Տէրոջը անունովը կու գայ: 14 – Եւ Յիսուս ասանկ մը գտնելով անոր վրայ նստաւ, ինչպէս գրուած է, 15 – Մի վախնար, ով Սիովնի աղջիկ , ահա քու Թագաւորդ կու գայ նստած ի էշուս ասանկի վրայ նստած: 16 – Եւ անոր աշակերտները առաջ չիմացան այս բաները, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն ատեն միտքերնին եկաւ Թէ այս բաները անոր համար գրուած էին , և Թէ իրենք այս բաները ըրին անոր : 17 – Եւ իրեն հետ եղող ժողովուրդը վկայութիւն կու տար Թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց , ու մեռելներէն յարուցց զանիկա: 18 – Ասոր համար ալ ժողովուրդը դանիկա դիմաւորեց , վասն զի լսեցին Թէ անիկա այս հրաշքը ըրած էր : 19 – Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին, Կը տեսնէ՞ք որ օգուտ մը չէք կրնար բնել , ահա բոլոր աշխարհ անոր եռեւէն գնաց:

20 – Եւ հան քանի մը Յոյներ կային տօնին երկրպագութիւն բնելու ելլողներուն մէջ : 21 – Ասոնք Փիլիպպոսի եկան , որ Գալիլեայի Բեթսայիդայէն էր, և կ'աղաչէին անոր ու կ'ըսէին , Տէր, կ'ուզենք Յիսուսը տեսնել : 22 – Փիլիպպոս եկաւ, ու Անդրէասի ըսաւ, և նորէն Անդրէաս ու Փիլիպպոս Յիսուսի ըսին : 23 – Յիսուս ալ պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ժամանակը հասաւ որ փառաւորուի Որդին մարդոյ: 24 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենին հատը հողին մէջ իյնալով չմեռնի , ինք մինակ կը մնայ, ապա եթէ մեռնի , շատ պտուղ կը բերէ : 25 – Ան որ իր անձը կը սիրէ, պիտի կորնցնէ զանիկա . և ան որ իր անձը այս աշխարհին մէջ կ'ատէ , յաւիտենական կեանքի համար պիտի պահէ զանիկա : 26 – Եթէ մէկը ինձի կը ծառայէ, Հայրը պիտի պատուէ զանիկա : 27 – Հիմա իմ հոգիս խռոված է, և ի՞նչ ըսեմ. Հայր , զիս ազատէ այս ժամէն. բայց ես սորա համար եկայ այս ժամին: 28 – Հայր, փառաւորէ քու անունդ. այն ատեն ձայն մը եկաւ երկինքէն, Փառաւորեցի ալ, ու նորէն պիտի փառաւորեմ: 29 – Եւ ժողովուրդը որ կայներ էր ու կը լսէր, կ'ըսէին, Որոտաւ կ'ըլլայ. ամնք ալ կ'ըսէին, Հրեշտակ խօսեցաւ իրեն հետ: 30 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ, Ա՛յս ձայնը ինձի համար չեկաւ, հապա ձեզի համար: 31 – Հիմա է այս աշխարհին դատաստանը , հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի ձգուի: 32 – Եւ ալ երբ երկրէ բարձրանամ, ամէնն ալ ինձի պիտի քաշեմ : 33 – Ա՛յս բանը կը ղրուցէր՝ իմացնելով Թէ ի՞նչ կերպ մահով պիտի մեռնէր: 34– Ժողովուրդը անոր պատասխանեց , Մենք օրէնքէն լսեցինք որ Քրիստոս յաւիտեան կը մնայ. և դուն ի՞նչպէս կ'ըսես Թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ . ո՞վ է այդ Որդին մարդոյ: 35 – Եւ Յիսուս անոնց բսաւ, Փիչ մը ատեն ալ լոյսը ձեզի հետ է . քանի որ լոյսը ունիք, քալեցէք, որ չըլլայ Թէ մութը ձեր վրայ հասնի. վասն զի խաւարի մէջ քալողը չգիտեր Թէ ո՛ւր կ'երթայ : 36 – Քանի որ լոյսը ունիք, հաւատացէք այն լոյսին, որպէս զի լուսոյ որդիներ ըլլաք : Յիսուս այս բաները ըրաւ, ու գնաց պահուեցաւ անոնցմէ:

37 – Եւ Թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր անոնց առջև , բայց անոնք չէին հաւատար իրեն . 38 – Որպէս զի



կատարուի Եսայի մարգարէին խօսքը՝ զոր ըսաւ , Տէր , ո՞վ հաւատաց մեր պատգամին , և Տէրոջը բազուկը ո՞ւր յայտնուեցաւ: 39 – Անոր համար չէին կրնար հաւատալ , որ դարձեալ կ'ըսէ Եսայի, 40–Անոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը թմրեցուց, որ չըլլայ Թէ աչքովներն տեսնեն ու սրտով նին խնաման և դարձի գան, ու ես զանոնք բժշկեմ: 41–Այս խօսքերսաւ Եսայի՝ երբ տեսաւ անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով : 42–Այսու ամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւատացին, բայց փարիսեցիներուն համար չէին դաւաներ, որպէս զի ժողովարանէն դուրս չհանուին . 43 – Վասնզի մարդոց փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին:

44 – Իսկ Յիսուս կ'աղաղակէր ու կ'ըսէր, Ան որ ինձի կը հաւատայ, ինձի չհաւատար , հապա զիս ղրկողին . 45 – Եւ ան որ զիս կը տեսնէ , զիս ղրկողը կը տեսնէ : 46 – Ես լոյս եկայ աշխարհ, որպէս զի ամէն ով որ ինձի հաւատայ, խաւարի մէջ չմնայ: 47 – Եւ եթէ մէկը իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, ես զանիկա չեմ դատեր, քանզի ես չեկայ որպէս զի աշխարհը դատեմ, հապա որպէս զի աշխարհը փրկեմ: 48 – Ան որ զիս կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանիկա կը դատէ. այն խօսքը զոր ես խօսեցայ, ան պիտի դատէ զանիկա վերջին օրը : 49 – Վասն զի ես ինքնիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս ղրկեց՝ ինք ինձի պատուիրեց ինչ որ պիտի բսեմ և ինչ որ պիտի խօսիմ: 50–Եւ գիտեմ որ անոր պատուիրածը յաւիտենական կեանք է. ուստի ինչ որ ես կը խօսիմ , ինչպէս Հայրը ինձի բսաւ, այնպէս կը խօսիմ :

## ԳԼ. ԺԳ

Զատկի տօնին առաջ՝ Յիսուս գիտնալով Թէ իր ժամանակը հասեր է որ այս աշխարհէն ելլէ Հօրը քով , սիրելով իրենները որոնք աշխարհի մէջ էին , մինչև վերջն ալ սիրեց զանոնք:

2 – Եւ երբ ընթրիքը կ'ըլլար , (Սատանայ արդէն Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի սրտին մէջ դրեր էր , որ զանիկա մատնէ.) 3–Յիսուս գիտնալով Թէ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, և Թէ ինք Աստուծմէ ելաւ ու Աստուծոյ քով կ'երթայ , 4 – Ընթրիքէն ելաւ , և հանդերձները մէկդի դրաւ ու գենջակ մը առնելով մէջքը փաթթեց: 5 – Յաքը կոնքին մէջ չաւ լեցուց, ու սկսաւ աշակերտներուն առքերը լուալ , և այն իր փաթթուած գենջակովը սրբել : 6 – Ուսոի եկաւ Սիմոն Պետրոսի. ան ալ բսաւ անոր , Տէր, դո՞ւն իմ ոտքերս պիտի լուանաս: 7 – Յիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Ես ինչ որ կ'ընեմ, դուն հիմա չես իմանար, հապա ետքը պիտի իմանաս: 8–Պետրոս բսաւ անոր, Բնաւ դուն իմ ոտքերս պիտի չլուանաս . պատասխան տուաւ անոր Յիսուս , Եթէ քեզ չլուամ, դուն ինձի հետ բաժին չունիս: 9 – Սիմոն Պետրոս բսաւ անոր, Տէր , ոչ Թէ միայն ոտքերս , հապա նաև ձեռքերս ու գլուխս: 10 – Յիսուս բսաւ անոր , Լուացուածին ոտքերը լուալէն զատ ուրիշ բան պէտք չէ , այլ բոլորովին մաքուր է. և դուք մաքուր էք, բայց ոչ Թէ ամէնդ : 11 – Վասն զի գիտէր զանիկա որ զինք պիտի մատնէր. անոր համար բսաւ , Ոչ Թէ ամէնդ ալ մաքուր էք : 12 – Ու երբ անոնց ոտքերը լուաց, և իր հանդերձները առնելով նորէն սեղան նըստաւ, բսաւ անոնց, Գիտէ՞ք , ինչ ըրի ձեզի: 13 – Դուք զիս Վարդապետ ու Տէր կը կոչէք , և ալէկ կ'ըսէք , վասն զի այնպէս եմ: 14 – Հապա եթէ ես Տէրս ու Վարդապետս ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ իրարու ոտքերը լուաք: 15 – Վասն ձեզի օրինակ մը տուի , որպէս զի ինչպէս ես ձեզի ըրի՝ դուք ալ ընէք: 16 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ծառան իր տէրոջմէն մեծ չէ, ոչ ալ ղրկուածը զինք ղրկողէն մեծ է : 17 – Եթէ դուք այս բաները գիտէք , երանելի էք եթէ առնք կատարէք : 18 – Ոչ Թէ ձեր ամէնուն համար կ'ըսեմ , Ջսան զիս կը ճանչնամ զանոնք որ ես ընտրեցի , հապա որպէս զի այն գրուածը կատարուի Թէ Ան որ ինձի հետ հաց կ'ուտէր, ինձի դէմ կրունկ վերցուց : 19– Հիմակուընէ կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որպէս զի երբ ըլլայ , հաւատաք Թէ ես ան եմ : 20 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Ով որ կ'ընդունի զանիկա զոր ես կը ղրկեմ , զիս կ'ընդունի. և ով որ զիս կ'ընդունի, զիս ղրկողը կ'ընդունի:

21-Յիսուս երբ զայս ըսաւ, էր Հոգւին մէջ խռովեցաւ, և վկայեց ըսելով, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ։ 22-Աւետարանները տարակուսած իրարու կը նայէին թէ որո՛ւ համար կը զրուցէ։ 23 – Ու աշակերտներէն մէկը կար Յիսուսի *բովանդակ , զոր Յիսուս կը սիրէր։ 24 – Եւ Սիմոն Պետրոս անոր ակնարկ կ'ընէր հարցնելու թէ ո՛վ պիտի ըլլայ անիկա՝ որու համար կը զրուցէ։ 25 – Ան ալ Յիսուսի կուրծքին վրայ իյնալով՝ ըսաւ անոր, Տէր, ո՞վ է ան։ 26 – Յիսուս պատասխան տուաւ, Անիկա է՝ որուն պատառը թրջելով կուտամ։ Եւ թրջելով պատառը Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային տուաւ։ 27 – Ու պատառէն ետքը Սատանայ անոր ներսը մտաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր , Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ։ 28-Բայց այս բանը սեղան նստողներէն մէկը չէհասկցաւ , թէ ինչո՛ւ համար ըսաւ անոր ։ 29 – Վասն զի ոմանք կը խորհէին թէ որովհետև գանձանակը Յուդա կը պահէր, Յիսուս ուրիշ կ'ըսէր, Ծախու առ ինչ որ մեզի այս տօնին պէտք է , կամ՝ որպէս զի ազգքաներուն բան մը տայ ։ 30 – Անիկա ալ պատառը առածին պէս շուտ մը դուրս ելաւ, ու գիշեր էր ։

31 – Ու երբ անիկա դուրս ելաւ , Յիսուս ըսաւ, Հիմա փառաւորուեցաւ Որդին մարդոյ , ու Աստուած փառաւորուեցաւ անով. 32-Եթէ Աստուած անով փառաւորուեցաւ , Աստուած ալ զանիկա իր անձովը պիտի փառաւորէ , և շուտով պիտի փառաւորէ զանիկա։ 33 – Որդեակներ, քիչ մը առեն ալ ձեզի հետ եմ , զիս պիտի փնտռէք . և ինչպէս Հրեաներուն ըսի թէ Ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ , հիմա ձեզի ալ կ'ըսեմ ։ 34 – Նոր պատուիրան մը կուտամ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք ալ մէկզմէկ սիրէք։ 35 – Ասով ամէնը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք , եթէ իրարու վրայ սէր ունենաք ։ 36 – Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ո՞ւր կ'երթաս։ Յիսուս պատասխան տուաւ անոր, Ուր ես կ'երթամ, դուն հիմա չես կրնար իմ ետևէս գալ , բայց ետքը պիտի գաս իմ ետևէս։ 37 – Պետրոս ըսաւ անոր, Տէր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար քու ետևէդ գալ . ես իմ կեանքս ալ քեզի համար պիտի դնեմ։ 38 – Յիսուս պատասխան տուաւ անոր , Քու կեանքդ պիտի դնես ինձի համար . ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Հաւը պիտի չկանչէ՝ մինչև դուն երեք անգամ զիս ուրանաս ։

## Գլ. ԺԴ

Սրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք ։ 2-Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզի պիտի ըսէի, Երթամ կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ։ 3 – Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կու գամ և ձեզ քովս կ'առնեմ, որպէս զի ուր ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք ։ 4 – Եւ ուր ես կ'երթամ՝ դիտէք, ու ճամբան ալ դիտէք ։

5 – Թովմաս ըսաւ անոր, Տէր , չենք գիտեր ո՛ւր կ'երթաս, և ինչպէս կրնանք ճամբան գիտնալ ։ 6 – Յիսուս ըսաւ անոր , Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը և կեանքը . մէկը Հօրը քով չգայ՝ եթէ ոչ ինծմով ։ 7 – Եթէ զիս ճանչնայիք , իմ Հայրս ալ կը ճանչնայիք. և ասկէ ետև կը ճանչնաք զանիկա ու տեսած ալ զանիկա ։

8 – Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը մեզի ցուցուր, ու հերիք է մեզի։ 9-Ըսաւ անոր Յիսուս , Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և դիս չճանչցա՞ր, Փիլիպպոս . ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ , և դուն ինչպէս կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր ։ 10 – Չե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է . այն խօսքերը զորս ես ձեզի կը խօսիմ , ոչ թէ ինքնիմէս կը խօսիմ, հապա Հայրը որ իմ մէջս բնակած է, անիկա կը գործէ այն գործերը ։ 11 – Հաւատացէք ինծի , թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է . 12 – Ապա թէ ոչ՝ գոնէ գործերուն համար ինծի հաւատացէք ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը զորս ես կը գործեմ, ինք ալ պիտի գործէ , և անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ , վասն զի ես Հօրս քով կ'երթամ ։ 13 – Եւ իմ անունովս ինչ որ

*Յոան. գոգը



ինդրէք , պիտի կատարեմ զանիկա , որպէս զի Հայրը Որդիովը փառաւորուի։ 14-Եթէ իմ անունովս բան մը խնդրէք, զանիկա պիտի կատարեմ ։ 15 – Եթէ զիս կը սիրէք , իմ պատուիրանքներս պահեցէք։ 16 – Ես ալ Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէս զի յաւիտեան ձեզի հետ բնակի։ 17 – Ճշմարտութեան Հոգին, զոր այս աշխարհը չկրնար ընդունիլ վասն զի չտեսներ զանիկա ու չճանչնար զանիկա. բայց դուք կը ճանչնաք զանիկա , վասն զի ձեր քով կը բնակի և ձեր մէջ պիտի ըլլայ ։ 18 – Ձեզ որբ չեմ թողուր, կու գամ ձեզի։ 19-Փոչ մը առենէն հաւ ա՛լ աշխարհ զիս չտեսներ . բայց դուք պիտի տեսնէք զիս, վասն զի ես կենդանի եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք։ 20 – Ան օրը պիտի գիտնաք թէ ես իմ Հօրս մէջ եմ, և դուք իմ մէջս, ես ալ ձեր մէջ։ 21 – Ան որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք , անիկա է զիս սիրողը. և ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրս պիտի սիրուի. ու ես զանիկա պիտի սիրեմ , և ինքզինքս անոր պիտի յայտնեմ ։

22 – Ըսաւ անոր Յուդա, (ոչ Իսկարիովտացին , ) Տէր , ինչպէ՞ս կ'ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի յայտնես , և ոչ թէ աշխարհին։ 23 – Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր , Եթէ մէկը զիս կը սիրէ , իմ խօսքս պիտի պահէ . ու իմ Հայրս զանիկա պիտի սիրէ , ու անոր քով օթևան պիտի ընենք ։ 24 – Ան որ զիս չսիրեր , իմ խօսքերս չպահեր . ու այն խօսքը զոր կը լսէք՝ իմս չէ , հապա Հօրը՝ որ զիս ղրկեց ։ 25 – Այս բաները ձեզի խօսեցայ, քանի որ ձեր քով եմ ։ 26 – Բայց Մխիթարիչը , Սուրբ Հոգին, զոր Հայրը իմ անունովս պիտի ղրկէ , անիկա ձեզի բոլորը պիտի սորվեցնէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ։ 27 – Խաղաղութիւն կը թողում ձեզի , իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի . ոչ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ. սիրտերնիդ չխռովի ու չվախնայ։ 28 – Լսեցիք որ ես ըսի ձեզի թէ Կ'երթամ ու ձեզի կու գամ. եթէ զիս սիրէիք՝ պիտի ուրախանայիք, *թէ ես Հօրը քով կ'երթամ , վասն զի իմ Հայրս ինծմէ մեծ է։ 29 – Եւ հիմա ուրնէ դեռ չեղած ըսի ձեզի, որպէս զի երբ ըլլայ՝ հաւատաք։ 30-Ալ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ, վասն զի այս աշխարհին իշխանը կու գայ , և իմ վրաս բան մը չունի. 31-Միայն թէ աշխարհ գիտնայ որ ես Հայրը կը սիրեմ , ու ինչպէս Հայրը ինծի պատուիրեց, այնպէս կ'ընեմ. ելէք , տակէ երթանք ։

## Գլ. ԺԵ

Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է։ 2 – Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չբերեր, կը կտրէ զանիկա. և ամէնը որ պտուղ կը բերէ, կը մաքրէ զանիկա, որպէս զի ալ աւելի պտուղ բերէ ։ 3 – Դուք հիմակուընէ մաքուր էք այն խօսքով զոր ձեզի խօսեր եմ ։ 4 – Իմ մէջս կեցէք, ու ես ձեր մէջ . ինչպէս ճիւղը չկրնար ինքիրմէ պտուղ բերել , եթէ որթին վրայ հաստատուած չըլլայ , նոյնպէս դուք ալ եթէ իմ վրաս հաստատուած չըլլաք։ 5-Ես որթն եմ՝ դուք ճիւղերն էք . ան որ իմ վրաս հաստատուած է՝ և ես անոր վրայ, անիկա շատ պտուղ կը բերէ, վասն զի առանց ինծի բան մը չէք կրնար ընել ։ 6-Եթէ մէկը իմ վրաս հաստատուած չէ , անիկա ճիւղի մը պէս դուրս ձգուած ու չորցած է . և կը ժողվեն զանիկա ու կրակը կը նետեն, ու կ'այրին։ 7 – Եթէ դուք իմ մէջս կենաք, և իմ խօսքերս ալ ձեր մէջ կենան , ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք , ու պիտի ըլլայ ձեզի ։ 8 – Ասով իմ Հայրս փառաւորուեցաւ, որպէս զի դուք շատ պտուղ բերէք , ու իմ աշակերտներս ըլլաք։

9 – Ինչպէս Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սիրեցի . իմ սիրոյս մէջ հաստատ կեցէք ։ 10 – Եթէ իմ պատուէրներս պահէք, իմ սիրոյս մէջ պիտի կենաք . ինչպէս ես իմ Հօրս պատուէրները պահեցի, և անոր սիրոյն մէջ կեցեր եմ ։ 11 – Այս բաները ձեզի խօսեցայ , որպէս զի իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ, ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ ։ 12 – Այս է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի։ 13 – Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ , որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ ։ 14 – Դուք

*Ոմանք, որ ըսի թէ

իմ բարեկամներս էք, եթէ ընելու ըլ-
լաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ։
15 – Ա՛ոկէ եառքը ձեզ ծառայ չեմ
անուաներ, վասն զի ծառան չգիտեր
իր տէրը ինչ կ՚ընէ. հապա ես ձեզ
բարեկամ անուանեցի, վասն զի այն
ամէն բաները զորոնք իմ Հօրմէս լսեցի,
ձեզի յայտուցի։ 16 – Ոչ թէ դուք
զիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրե-
ցի, ու դրի ձեզ որպէս զի դուք եր-
թաք և պտուղ բերէք, ու ձեր պտու-
ղը մնայ. որպէս զի իմ անունովս ինչ
որ Հօրմէն խնդրէք, ձեզի տայ։ 17 –
Զայս կը պատուիրեմ ձեզի որ միմեանք
սիրէք։

18 – Եթէ աշխարհ ձեզ կ՚ատէ,
գիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատեց։
19 – Եթէ աշխարհէն եղած ըլլայիք,
աշխարհ իրենները կը սիրէր. բայց ո-
րովհետև աշխարհէն չէք, հապա ես
ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար
աշխարհ ձեզ կ՚ատէ։ 20 – Մխիթա-
րեցէք այն խօսքը զոր ձեզի ըսի
թէ Ծառան իր տէրէն մեծ չէ. և-
թէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի
հալածեն. եթէ իմ խօսքս պահեցին,
ձերն ալ պիտի պահեն։ 21 – Բայց այս
ամէն բաները պիտի ընեն ձեզի իմ ա-
նունս համար, վասն զի չճանչցան
զանիկա որ զիս ղրկեց։ 22 – Եթէ ես
եկած և անոնց խօսած չըլլայի, անոնք
մեղք չէին ունենար. բայց հիմա իրենց
մեղքին պատճառանք մը չունին։ 23-
Ան որ զիս կ՚ատէ, իմ Հայրս ալ կ՚ա-
տէ։ 24 – Եթէ այն գործերը իրենց
մէջ ըրած չըլլայի, զորոնք ուրիշ մէկը
չէ ըրած, անոնք մեղք չէին ունենար.
բայց հիմա տեսան, ու ատեցին զիս
ալ իմ Հայրս ալ։ 25 – Սակայն այս է-
ա՛ – որպէս զի կատարուի այն խօսքը
որ իրենց օրէնքին մէջ գրուած է թէ,
Զուր տեղը զիս ատեցին։ 26 – Բայց
երբ Մխիթարիչը գայ, զոր ես Հօրմէն
ձեզի պիտի ղրկեմ, ճշմարտութեան
Հոգին՝ որ Հօրմէն կ՚ելլէ, անիկա ին-
ձի համար պիտի վկայէ. 27-Եւ դուք
ալ կը վկայէք, վասն զի սկիզբէն ի վեր
ինձի հետ էք։

## ԳԼ. ԺԶ

Ա՛յս բաները ձեզի խօսեցայ որպէս
զի չգայթակղիք։ 2 – Իրենց ժողովա-
րաններէն դուրս պիտի ձգեն ձեզ. ու
ժամանակ ալ պիտի գայ որ ամէն ով
որ ձեզ սպաննէ, այնպէս պիտի սեպէ
թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցա-
նէ։ 3 – Եւ այս բաները չեզի պիտի ը-
նեն՝ անոր համար որ ոչ Հայրը ճանչ-
ցան, ոչ ալ զիս։ 4 – Բայց այս բաներ-
ը ձեզի խօսեցայ, որպէս զի երբ ժա-
մանակը գայ, միաքերնիդ բերէք թէ
ես ըսի ձեզի. և այս բաները սկիզբէն
չըսի ձեզի, վասն զի ես ձեզի հետ էի։

5 – Սակայն հիմա ես կ՚երթամ զիս
ղրկողին քով, և ձեզմէ մէկն ալ
չհարցներ ինձի թէ Ո՞ւր կ՚երթաս։ 6-
Բայց որովհետև այս բաները ձեզի խօսե-
ցայ, ձեր սիրտերը սրտմտութենով լե-
ցան։ 7-Բայց ես ճշմարիտը կ՚ըսեմ ձե-
զի. Աղէկ է ձեզի եթէ ես երթամ. քան-
զի եթէ ես չերթամ, Մխիթարիչը ձեզի
չգար. հապա եթէ երթամ, զանիկա
ձեզի կը ղրկեմ։ 8 – Եւ ինք երբ գայ,
աշխարհը պիտի յանդիմանէ մեղքին
համար և արդարութեան համար
ու դատաստանի համար։ 9 – Մեղ-
քի համար՝ որ ինձի չեն հաւատար.
10 – Արդարութեան համար՝ որ ես իմ
Հօրս քով կ՚երթամ, և ալ զիս չեք
տեսներ. 11 – Եւ դատաստանի համար՝
որ այս աշխարհին իշխանը դատապար-
ուած է։ 12-Ձեզի տակաւին շատ բա-
ներ ունիմ ըսելու, բայց հիմա չեք
կրնար տանիլ։ 13 – Իսկ երբ ինք ճըշ-
մարտութեան Հոգին գայ, ամէն ճըշ-
մարտութեան պիտի առաջնորդէ ձեզի-
վասն զի ոչ թէ ինքնիրմէ պիտի խօսի,
հապա ինչ որ լսէ զայն պիտի խօսի
ու գալիքները ձեզի պիտի պատմէ։ 14-
Անիկա զիս պիտի փառաւորէ, վասն
զի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատ-
մէ։ 15 – Ա՛յն ամէն բաները զորոնք
Հայրը ունի՝ իմ են. անոր համար
ձեզի ըսի թէ իմինէս պիտի առնէ ու
ձեզի պատմէ։ 16 – Փիչ մը առեներէն
ա՛լ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ
քիչ մը առեներէն զիս պիտի տեսնէք,
քանզի ես Հօրը կ՚երթամ։

17 – Ասոր համար աշակերտներէն
ոմանք իրարու կ՚ըսէին, Ի՞նչ է այս որ
մեզի կ՚ըսէ թէ Փիչ մը առեներէն ա՛լ
զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ մը
առեներէն զիս պիտի տեսնէք, և, Ի՞անզի
ես Հօրը կ՚երթամ։ 18 – Ու կ՚ըսէին,
Ի՞նչ պիտի ըլլայ այն Փիչ մըն ալ
որ կ՚ըսէ. չենք գիտեր ի՞նչ կը զրուցէ։
19 – Իսկ Յիսուս գիտնալով որ կ՚ու-



զեն իրեն հարցնել, ըսաւ անոնց, Ա-
ռա՞ջ Հոգիս իրարու կը հարցնէք, որ
ըսի թէ Փիչ մը առեներէն ա՛լ զիս պի-
տի չտեսնէք, և դարձեալ քիչ մը ա-
ռեներէն զիս պիտի տեսնէք։ 20 – Ճշմա-
րիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Դուք
պիտի լաք ու ողբաք, բայց աշխարհ
պիտի ուրախանայ. դուք պիտի տրտու-
միք, սակայն ձեր տրտմութիւնը ու-
րախութեան պիտի փոխուի։ 21 – Կին
մը երբ ծնանելու վրայ է՝ տրտմու-
թիւն կ՚ունենայ, վասն զի իր ժամը
հասած է. բայց երբ տղան ծնանի, ալ
նեղութիւնը միտք չբերեր ուրախու-
թենէն որ աշխարհ մարդ մը ծնաւ։
22 – Եւ յիրաւի դուք հիմա տրտմու-
թիւն ունիք. բայց ես ձեզ նորէն պի-
տի տեսնեմ, և ձեր սիրտերը ուրախ
պիտի ըլլան, ու ձեր ուրախութիւնը
մէկը ձեզմէ պիտի չվտանէ։ 23 – Եւ
այն օրը ինձի բան մը պիտի չհարցնէք։
Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ
իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն,
պիտի տայ ձեզի։ 24 – Մինչև հիմա
իմ անունովս բան մը չխնդրեցիք.
խնդրեցէք ու պիտի առնէք, որպէս զի
ձեր ուրախութիւնը լման ըլլայ։ 25 –
Ա՛յս բաները առակներով խօսեցայ
ձեզի. Բայց ժամանակ պիտի գայ, որ
ալ ձեզի առակներով պիտի չխօսիմ,
հապա յայտնապէս Հօրը վրայով պի-
տի պատմեմ ձեզի։ 26 – Ա՛յն օրը իմ
անունովս պիտի խնդրէք. և չեմ ըսեր
ձեզի թէ ես ձեզի համար պիտի աղա-
չեմ Հօրը։ 27 – Քանզի ինք Հայրը ձեզ
կը սիրէ, վասն զի դուք զիս սիրեցիք
և հաւատացիք թէ ես Աստուծմէ ե-
լայ։ 28 – Հօրմէն ելայ ու աշխարհ ե-
կայ. նորէն կը թողում աշխարհը և
Հօրը կ՚երթամ։

29 – Ըսին անոր իր աշակերտները,
Ահա հիմա յայտնապէս կը խօսիս, և
առակ մըն ալ չես ըսեր։ 30 – Հիմա
իմացանք որ ամէն բան գիտես, և ի-
ՆՔ ՉԵ պէտք չէ որ մէկը քեզի հարցնէ.
ասով կը հաւատանք որ Աստուծմէ
ելար։ 31 – Յիսուս պատասխան տուաւ
անոնց՝ ԸՆԵ, հիմա կը հաւատաք.
32 – Ահա ժամանակ պիտի գայ, ու
եկած ալ է, որ ցիրուցան պիտի ըլլաք
ամէն մէկը իր տեղը, ու զիս միմակ
պիտի թողուք. բայց ես միմակ չեմ,
վասն զի Հայրը ինձի հետ է։ 33 – Ա՛յս
բաները ձեզի խօսեցայ, որպէս զի ինձ-
մով խաղաղութիւն ունենաք. աշխար-
հի մէջ նեղութիւն պիտի ունենաք.
բայց քաջսիրտ եղէք, ես աշխարհի
յաղթեցի։

## ԳԼ. ԺԷ

Յիսուս երբ ատոնք խօսեցաւ, իր
աչքերը դէպ ի երկինք վերցուց ու ը-
սաւ, Հայր, ժամանակը հասեր է, փառ-
աւորէ քու Որդիդ, որպէս զի քու Որ-
դիդ ալ քեզ փառաւորէ. 2-Ինչպէս ի-
րեն իշխանութիւն տուիր ամէն մարմնի
վրայ, որ յաւիտենական կեանք տայ
այն ամէնուն զոր իրեն տուիր։ 3 – Եւ
այս է յաւիտենական կեանքը, որ
ճանչնան քեզ միմիայն ճշմարիտ Աստ-
ուած, ու Յիսուս Քրիստոսը զոր դուն
ղրկեցիր։ 4 – Ես քեզ երկրի վրայ փառ-
աւորեցի, այն գործը զոր ինձի տուիր
ընելու՝ լմնցուցի։ 5 – Եւ հիմա, ով
Հայր, փառաւորէ զիս քու քովդ այն
փառքովը զոր աշխարհի ըլլալէն առ-
աջ քովդ ունէի։ 6 – Քու անունդ
յայտնի ըրի այն մարդոց զորոնք աշ-
խարհէ ինձի տուիր. քուկդ էին, ու
ինձի տուիր զանոնք և քու խօսքդ
պահեցին։ 7 – Հիմա գիտցան թէ այն
ամէն բաները զորոնք ինձի տուիր,
քեզմէ են. 8 – Վասն զի այն խօսքերը
զորոնք ինձի տուիր, ես անոնց տուի,
անոնք ալ ընդունեցին, և ճշմարտու-
թեամբ լմնցան որ ես քեզմէ ելայ,
ու հաւատացին թէ դուն ղրկեցիր զիս։
9 – Ես անոնց համար կ՚աղաչեմ. ոչ
թէ աշխարհի համար կ՚աղաչեմ, հա-
պա անոնց համար՝ զորոնք դուն ինձի
տուիր, վասն զի քուկդ են անոնք։ 10-
Եւ ինչ որ իմն է՝ այն բոլորը քուկդ է,
և ինչ որ քուկդ է՝ այն իմն է, ու ես
անոնցմով փառաւորուած եմ։ 11 –
Եւ ես ա՛լ աշխարհի մէջ չեմ, բայց
անոնք աշխարհի մէջ են, ու ես քեզի
կու գամ. ով Սուրբ Հայր, քու անու-
նովդ պահէ զանոնք որ դուն ինձի
տուիր, որպէս զի մէկ ըլլան, ինչպէս
մենք մէկ ենք։ 12 – Քանի որ աշխարհի
մէջ անոնց հետ էի, ես կը պահէի զա-
նոնք քու անունովդ. զորոնք որ դուն
ինձի տուիր, ես պահեցի, և անոնցմէ
մէ՛կը չկորսուեցաւ, միայն թէ այն
կորստեան որդին, որպէս զի գրուածը
կատարուի։ 13 – Իմ հիմա քեզի կու
գամ, ու աշխարհի մէջ այս բաները

կը խօսիմ , որպէս զի իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան: 14 – Եւ քու խօսքդ առնից տալ, ու աշխարհ զանոնք ատեց. վասն զի աշխարհէ չեն, ինչպես ես աշխարհէ չեմ : 15 – Չեմ աղաչեր որ զանոնք աշխարհէ վերցնես, հապա որ զանոնք չարէն պահես : 16 – Անոնք աշխարհէ չեն , ինչպես ես աշխարհէ չեմ : 17 – Սրբէ զանոնք քու ճշմարտութիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է : 18 – Ինչպես դուն զիս աշխարհ ղրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ ղրկեցի: 19 – Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որպէս զի իրենք ալ ճշմարտութիւնով սրբացած ըլլան : 20 – Բայց ոչ թէ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր հնձի հաւատացողներուն համար ալ . 21 – Որպէս զի ամէնն ալ մէկ ըլլան, ինչպես դուն, ով Հայր, իմ մէջս՝ ու ես քու մէջդ, որպէս զի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, սրպէս զի աշխարհ հաւատայ թէ դուն ղրկեցիր զիս : 22 – Եւ այն փառքը զոր դուն ինծի տուիր, ես անոնց տուի, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպես մենք մէկ ենք . 23 – (Ես անոնց մէջ՝ և դուն իմ մէջս.) որպէս զի իրենք կատարեալ ըլլան միաբանութեան մէջ . ու աշխարհ գիտնայ թէ դուն ղրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպես զիս սիրեցիր : 24 – Ով Հայր , զանոնք որ դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր որ ես եմ՝ անոնք ալ ինծի հետ ըլլան , որպէս զի տեսնեն իմ փառքս զոր ինծի տուիր . վասն զի դուն զիս սիրեցիր աշխարհի սկիզբէն առաջ : 25- Ով արդար Հայր, աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ, և սոսկք ճանչցան թէ դուն զիս ղրկեցիր: 26 – Եւ քու անունդ անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցնեմ, որպէս զի այն սէրը որով դուն զիս սիրեցիր , անոնց մէջ ըլլայ, ու ես ալ անոնց մէջ :

## ԳԼ. ԺԸ

Յիսուս այս բաները ըսելէն ետև՝ իր աշակերտներուն հետ Կիդրոն հեղեղատին անդիի կողմը ելաւ , ուր պարտէզ մը կար , որուն մէջ մտաւ ինքը ու իր աշակերտները: 2 – Եւ Յուդա ալ , որ զանիկա պիտի մատնէր , գիտէր այն տեղը, վասն զի Յիսուս շատ անգամ իր աշակերտներուն հետ հոն ժողվուած էր : 3 – Ուստի Յուդա զինուորներուն գունդը ու քահանայապետներէն և փարիսեցիներէն պատառուներ իրեն հետ առնելով՝ այն տեղ եկաւ ջահերով ու լապտերներով և զէնքերով : 4 – Իսկ Յիսուս իր վրայ գալու բոլոր բաները գիտնալով՝ ելաւ ու ըսաւ անոնց, Ո՞վ կը փնտռէք: 5 – Պատասխան տուին անոր , Նազովրեցի Յիսուսը. ըսաւ անոնց Յիսուս, Ես եմ. Յուդա ալ , որ զանիկա կը մատնէր , անոնց հետ կայներ էր : 6 – Ու երբ ըսաւ թէ Ես եմ; կա ետ դացին ու գետինը ինկան : 7 – Եւ նորէն հարցուց անոնց , Ո՞վ կը փնտռէք. անոնք ալ ըսին, Նազովրեցի Յիսուս: 8 – Յիսուս պատասխան տուաւ, Զեղի ըսի թէ Ես եմ: ուստի եթէ զիս կը փնտռէք, թող տուէք տանիք որ երթան : 9 – Որպէս զի կատարուի այն խօսքը զոր ինք ըսեր էր թէ Զանոնք որ ինծի տուիր, անոնցմէ մէկն ալ չկորնցուցի : 10 – Սիմոն Պետրոս, որ սուր մը ունէր, քաշեց զանիկա ու քահանայապետին ծառային պարնելով՝ անոր աջ ականջը կտրեց հանեց. և այն ծառային անունը Մաղքոս էր: 11 – Իսկ Յիսուս ըսաւ Պետրոսի , Սուրդ էջ պատեանը դիր . այն գաւաթը զոր Հայրը ինծի տուաւ՝ պիտի չխմե՞մ զանիկա:

12 – Ուստի զինուորներուն գունդը ու հազարապետը և Հրէից պատառուները բռնեցին Յիսուսը ու կապեցին . 13 – Եւ առաջ զանիկա Աննայի տարին , քանզի ինք այն տարուան քահանայապետին, Կայիափայի, աներն էր : 14 – Եւ այս Կայիափան էր, որ Հրէից խրատ տուաւ թէ Ադեկ է որ մարդ մը կորսուի ժողովուրդին համար : 15 – Ու Յիսուսի եաւէն կ'երթային Սիմոն Պետրոս և ուրիշ աշակերտ մը . և այն աշակերտը քահանայապետին ճանչնալով ըլլալով՝ Յիսուսի հետ քահանայապետին դահլիճը մտաւ : 16 – Բայց Պետրոս դուրսը դրանը քով կը կենար . ուստի ելաւ միւս աշակերտը , որ քահանայապետին ճանչնալն էր , և ըսաւ դռնապանին , ու ներս մղեցուց Պետրոսը: 17 – Այն աղջիկ դռնապան աղջիկը ըսաւ Պետրոսի , Մի՛թէ դո՛ւն ալ այն մարդոյն աշակերտներէն ես . ան ալ ըսաւ, Չեմ: 18-Իսկ ծառաները ու սպասաւորները հոն կայներ էին , և



կրակ վառած կը տաքնային , քանզի ցուրտ էր: Պետրոս ալ անոնց հետ կայներ էր ու կը տաքնար : 19 – Եւ քահանայապետը Յիսուսի հարցուց անոր աշակերտներուն ու վարդապետութեանը վրայով : 20 – Յիսուս պատասխան տուաւ անոր, Ես աշխարհի յայտնի խօսեցայ . ես ամէն ատեն ժողովարաններուն մէջ ու տաճարին մէջ սորվեցուցի, ուր բոլոր Հրեաները կը ժողվուին, ու ծածկաբար բան մը չխօսեցայ : 21 – Ինչո՞ւ ինծի կը հարցնես , լսողներուն հարցուր թէ ինչ խօսեցայ իրենց . ահա ինչ որ խօսեցայ՝ գիտեն իրենք: 22 – Երբ զայս ըսաւ , սպասաւորներէն մէկը որ հոն կայներ էր , Յիսուսի ապտակ մը զարկաւ՝ ըսելով , Այդպէ՞ս պատասխան կու տաս քահանայապետին : 23-Յիսուս անոր պատասխանեց, եթէ չար խօսեցայ, վկայէ չարին համար. իսկ եթէ բարի խօսեցայ, ինչո՞ւ կը զարնես ինծի : 24 – Եւ Աննա զանիկա կապած՝ Կայիափա քահանայապետին ղրկեց: 25-Սիմոն Պետրոս ալ հոն կայներէր ու կը տաքնար. և ըսին իրեն , Մի՛թէ դո՛ւն ալ անոր աշակերտներէն ես . անիկա ուրացաւ ու ըսաւ թէ Չեմ : 26 – Քահանայապետին ծառաներէն մէկն ալ , այն մարդոն ազգականը որուն ականջը Պետրոս կտրեր էր, ըսաւ , Չէ՞ որ ես քեզ տեսայ պարտէզին մէջ անոր հետ: 27- Այն ատեն Պետրոս նորէն ուրացաւ , և շուտ մը հաւը խօսեցաւ :

28 – Եւ Յիսուսը Կայիափային տանէն կառավարչին պալատը տարին, և առաւօտ էր . ու իրենք պալատը չմտան , որպէս զի չպղծուին , հապա որպէս զի զատիկը ուտեն: 29 – Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց ու ըսաւ, Ի՞նչամբաստանութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ: 30 – Պատասխան տուին ու ըսին իրեն, Եթէ ատիկա չարագործ մը չըլլար, քեզի չէինք մատներ զանիկա: 31 – Այն ատեն Պիղատոս ըսաւ անոնց, Դուք առէք զանիկա , ու ձեր օրէնքին համեմատ անոր դատաստան տեսէք : Հրեաները իրեն ըսին , Մեզի օրինաւոր չէ մարդ մը մեռցնել . 32 – Որպէս զի կատարուի Յիսուսի խօսքը , զոր ըսաւ յիմնդրելով թէ ինչ մահով ինք պիտի մեռնէր: 33 – Իսկ Պիղատոս նորէն պալատը մտաւ, կանչեց Յիսուսը ու ըսաւ անոր , Դո՞ւն ես Հրէից թագաւորը : 34 – Յիսուս պատասխան տուաւ անոր , Ատիկա դուն քեզմէ՞ կ'ըսես , թէ ինծի համար ուրիշները քեզի ըսին : 35 – Պատասխան տուաւ Պիղատոս, Մի՞թէ ես Հրեա՞յ եմ. քու ազգդ և քահանայապետները քեզ ինծի մատնեցին . ի՞նչ ըրած ես դուն : 36 – Յիսուս պատասխան տուաւ , Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս , իմ ապառասուներս կը կռուէին որպէս զի ես Հրէից ձեռքը չմատնուէի, բայց հիմա իմ թագաւորութիւնս ասկէ չէ: 37 – Ան ատեն Պիղատոս ըսաւ անոր , Ուրեմն դուն թագաւո՞ր մըն ես. պատասխան տուաւ Յիսուս, Դուն կ'ըսես , քանզի թագաւոր եմ. ես այս բանին համար ծնած եմ , և սոսր համար աշխարհ եկած , որպէս զի ճշմարտութեան համար վկայեմ. այն ամէնը որ ճշմարտութենէն է՝ իմ ձայնիս ականջ կը դնէ : 38 – Պիղատոս ըսաւ անոր , Ի՞նչ է ճշմարտութիւնը . և զայս ըսելով՝ նորէն գուրս ելաւ Հրեաներուն և ըսաւ անոնց , Ես յանցանք մը չեմ գտներ անոր վրայ : 39 – Բայց սովորութիւն ունիք որ Զատիկի ձեզի զատկնա. հիմա կ'ուզե՞ք որ Հրէից թագաւորը արձակեմ ձեզի: 40 – Ան ատեն ամէնն ալ նորէն ազդակեցին՝ ըսելով , Մի՛ զայնիր ատիկա , հապա Բարաբբան. ու Բարաբբա աւազակ մըն էր :

## ԳԼ. ԺԹ

Ան ատեն Պիղատոս առաւ Յիսուսը ու ծեծեց : 2 – Զինուորներն ալ փուշերէ պսակ հիւսելով՝ անոր գլխուն դրին , և անոր ծիրանի հանդերձ մը հագցուցին . 3 – Ու կ'ըսէին , Ողջոյն քեզ , Հրէից թագաւոր. և ապտակներ կը զարնէին անոր: 4 – Պիղատոս նորէն դուրս ելաւ ու ըսաւ անոնց, Ահա պանիկա դուրս կը բերեմ ձեզի, որպէս զի գիտնաք թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ: 5 – Ան ատեն Յիսուս դուրս ելաւ՝ փշեղէն պսակն ու ծիրանի հանդերձը հագած . և Պիղատոս ըսաւ անոնց , Ահա այն մարդը : 6 – Քահանայապետները ու սպասաւորները երբ տեսան զանիկա, աղաղակեցին ու ըսին, Խաչը հանէ , խաչը հանէ [ ատիկա ] : Պիղատոս ըսաւ անոնց , Դո՛ւք առէք

ատիկա ու խաչը Հանեցէք , վասն զի
ես առաջ վրայ չտանցանք մը չեմ գտներ։
7 – Հրեաները պատասխան տուին ի-
րեն, Մենք օրէնք ունինք, և մեր օրէն-
քին համեմատ պէտք է որ մեռնի ,
վասն զի ինքզինք Աստուծոյ Որդի ը-
րաւ ։ 8 – Երբ Պիղատոս այս խօսքը
լսեց, ալ աւելի վախցաւ ։ 9 – Ու նո-
րէն պալատը մտնելով՝ ըսաւ Յիսուսի,
Ուրկէ՞ ես դուն. բայց Յիսուս պատաս-
խան չտուաւ անոր ։ 10 – Ուստի Պի-
ղատոս ըսաւ անոր , Ինծի հետ չե՞ս
խօսիր . չէ՞ս գիտեր որ ես իշխանու-
թիւն ունիմ քեզ խաչ հանելու , ու
իշխանութիւն ունիմ քեզ արձակելու։
11 – Յիսուս պատասխան տուաւ, Դուն
իմ վրաս մէկ իշխանութիւն ալ չէիր
ունենար, եթէ քեզի վերէն տրուած
չըլլար. անոր համար՝ ան որ զիս քեզի
մատնեց , անոր մեղքը աւելի մեծ է ։
12-Ալ անկէ եւս Պիղատոս կը փնտ-
ռէր թէ ՚ի՞նչպէս զանիկա արձակէ .
բայց Հրեաները կ'աղաղակէին ու կ'ը-
սէին, եթէ զատիկա արձակես , Կայս-
րին բարեկամը չես . ամէն ով որ ինք-
զինք թագաւոր կ'անուանէ , անիկա
Կայսրին հակառակ կը խօսի։ 13 – Ինչ
Պիղատոս երբ այս խօսքը լսեց , դուրս
հանեց Յիսուսը, ու նստաւ բեմին վրայ,
այն տեղը որ Քարայատակ կ'ըսուէր, և
Եբրայեցերէն՝ Կապպաթա. 14-(Զատ-
կին ուրբաթ օրն էր ու ժամը վեցին
տանէներն էր.) և Հրեաներուն ըսաւ ,
Ա՛հա ձեր թագաւորը ։ 15 – Բայց ա-
նոնք աղաղակեցին , Վերցուր , վեր-
ցուր, խաչը Հանէ զատիկա ։ Պիղատոս
ըսաւ անոնց , Ձեր թագաւորը խա՞չը
Հանեմ։ Քահանայապետները պատաս-
խան տուին, Մենք Կայսրէն զատ թա-
գաւոր չունինք ։ 16 – Ա՛յն ատեն ա-
նոնց ձեռքը տուաւ զանիկա որպէս զի
խաչուի ։

17 – Անոնք ալ առին Յիսուսը ու
կը տանէին. և ինք իր խաչը վերցնելով՝
ելաւ Գագաթի ըսուած տեղը, որ Եբ-
րայեցերէն Գողգոթա կ'ըսուի։ 18-Հոն
զանիկա խաչը Հանեցին , և անոր հետ
ուրիշ երկուք ալ՝ մէկ դին ու միւս
դին, և մէջտեղը Յիսուսը։ 19 – Տախ-
տակ մըն ալ գրեց Պիղատոս, ու դրաւ
խաչին վրայ , և այսպէս գրուած էր .
Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրեից ։
20 – Եւ այն տախտակը Հրեաներէն
շատերը կարդացին, վասն զի քաղաքին
մօտ էր այն տեղը՝ ուր Յիսուս խաչուե-
ցաւ . ու գրուած էր Եբրայեցերէն ,
Յունարէն և Լատիներէն ։ 21 – Ա՛յն
ատեն Հրեից քահանայապետները Պի-
ղատոսի ըսին , Մի գրեր Թագաւոր
Հրեից, հապա թէ ինք ըսաւ, Թագա-
ւոր եմ Հրեից ։ 22 – Պիղատոս պա-
տասխան տուաւ, Ինչ որ գրեցի՝ գրեցի։

23 – Եւ զինուորները երբ Յիսուսը
խաչը Հանեցին , անոր Հանգերձները
առին ու չորս բաժին ըրին , ամէն մէկ
զինուորին բաժին մը . նաև պատմու-
ճանը. իսկ պատմուճանը առանց կարի
էր վերէն վար բոլորը հիւսուած. 24 –
Ուստի ըսին իրարու , Ա՛յնիկա չպատ-
ռուինք , հապա վիճակ ձգինք ասոր
վրայ թէ որո՛ւ պիտի ըլլայ . որպէս զի
կատարուի այն գրուածը որ կ'ըսէ, Իմ
Հանգերձներս իրենց մէջ բաժնեցին ,
և իմ պատմուճանիս վրայ վիճակ
ձգեցին. ա՛յնա զինուորները այս բաներ-
ը ըրին ։

25 – Եւ Յիսուսի խաչին քով կայ-
ներ էին իր մայրը և իր մօրը քոյրը Մա-
րիամ, Կղէովպասի կ՚ԻՆ , ու Մարիամ
Մագդաղենացի ։ 26 – Ուստի Յիսուս
երբ տեսաւ իր մայրը, և այն աշակեր-
տը զոր կը սիրէր, որ մօրը կայներ էր,
ըսաւ իր մօրը, Ով կին , ա՛յնա քո որ-
դիդ ։ 27 – Յետքը ըսաւ աշակերտին ,
Ա՛յնա քո մայրդ . և այն ժամանակէն
աշակերտը զանիկա իր քով առաւ։

28 – Անկէ եւս Յիսուս գիտնալով
թէ արդէն ամէն բան լմնցած է , (որ-
պէս զի գրուածը կատարուի,) ըսաւ ,
Ծարաւ եմ ։ 29 – Եւ հոն քացախով
լեցուն սաման մը կար . անոնք ալ քա-
ցախով սպունգ մը լեցնելով , զոպսրի
ցղէէի վրայ փաթթած՝ անոր բերնին
մօտեցուցին ։ 30 – Ուստի Յիսուս երբ
քացախը առաւ՝ ըսաւ , Ա՛յն բան կա-
տարուեցաւ . ու գլուխը ծռելով հո-
գին աւանդեց ։

31 – Իսկ Հրեաները, որովհետև ուր-
բաթ օր էր, որ չըլլայ թէ այն մարմին-
ները խաչին վրայ մնան մինչև շաբաթ
օրը , (վասն զի այն շաբաթը մեծ օր
էր,) Պիղատոսի աղաչեցին որ անոնց
սրունքները կոտրուին , ու վերցուին ։
32 – Ուստի զինուորները եկան և ա-
ռաջինին սրունքները կոտրատեցին. նաև
միւսինը՝ որ անոր հետ խաչը ելած էր։
33 – Բայց երբ Յիսուսի եկան ու տե-
սան որ արդէն մեռած էր, անոր սրունք-



ները չկոտրատեցին. 34-Հապա զինուոր-
ներէն մէկը գեղարդով անոր կողը խո-
ցեց, և շուտ մը արիւն ու ջուր ելաւ ։
35 – Եւ ան որ տեսաւ՝ ա՛յս բ՚ոներ՚ը
վկայեց, ու անոր վկայութիւնը ճշմա-
րիտ է, և ինք գիտէ որ ճշմարիտ կ'ը-
սէ, որպէս զի դուք [ալ] հաւատաք ։
36 – Վասն զի այս բաները եղան որ-
պէս զի կատարուի այն գրուածը թէ
Անոր մէ՛կ ոսկորը պիտի չկոտրուի ։
37 – Եւ մէյ մըն ալ ուրիշ գրուած մը
կ'ըսէ թէ Պիտի նային անոր՝ զոր խո-
ցեցին։

38 – Անկէ եւս Յովսէփ , որ Արի-
մաթիայէ էր , (Յիսուսի աշակերտ ե-
ղած՝ բայց գաղտուկ Հրեաներուն վա-
խէն,) աղաչեց Պիղատոսի, որ Յիսուսի
մարմինը վերցնէ. Պիղատոս ալ հրա-
ման տուաւ. ուստի եկաւ ու վերցուց
Յիսուսի մարմինը։ 39 – Նիկոդեմոս ալ
եկաւ , (որ առաջուընէ գիշերով Յի-
սուսի եկեր էր ,) ու բերաւ հարիւր
լիտրի չափ զմիւռնի ու հալուէի խառ-
նուրդ մը ։ 40 – Եւ Յիսուսի մարմինը
առին, ու խառնկերով փաթթեցին զա-
նկա կտաւներու մէջ . ինչպէս Հրեա-
ները սովորութիւն ունին թաղելու ։
41 – Եւ այն տեղը ուր խաչուեցաւ ,
պարտէզ մը կար , ու այն պարտէզին
մէջ նոր գերեզման մը , որուն մէջ ա-
ւետնեին մարդ դրուած չէր ։ 42-Հրեա-
ներուն ուրբաթին համար . հոն դրին
Յիսուսը. վասն զի գերեզմանը մօտ էր։

## Գլ. Ի

Եւ մէկշաբթի օրը Մարիամ Մագ-
դաղենացի առաւոտուն գոն չլուցած
գերեզմանը կու գայ , ու կը տեսնէ որ
քարը գերեզմանին դռնէն վերցուած
է ։ 2 – Ետքը կը վազէ կու գայ Սիմոն
Պետրոսի և միւս աշակերտին զոր Յի-
սուս կը սիրէր , և կ'ըսէ անոնց, Տէրը
գերեզմանէն վերցուցին , ու չենք գի-
տեր ո՛ւր դրին զանիկա ։ 3 – Ուստի ե-
լաւ Պետրոս և միւս աշակերտը , ու
դէպ ի գերեզմանը կու գային ։ 4 – Ու
երկուքն ալ մէկտեղ կը վազէին . և
միւս աշակերտը Պետրոսէ առելի շուտ
վազելով՝ առաջ գերեզմանը հա-
կաւ ։ 5 – Եւ ծռելով նայեցաւ , ու
տեսաւ որ կտաւները հոն կը կենային .
բայց ինք ներս չմտաւ ։ 6 – Սիմոն Պետ-
րոս ալ հասաւ , որ անոր եւսէն կու-
գար, ու գերեզմանը մտաւ, և տեսաւ
կտաւները որոնք հոն կը կենային։ 7 –
Ու վարշամակը որ անոր գլուխն էր՝
ո՛րէ կտաւներուն հետ չէր , հապա
ծալլած զատ մէկ կողմը դրուած էր ։
8 – Ա՛յն ատեն ներս մտաւ միւս աշա-
կերտն ալ՝ որ առաջ գերեզմանը եկեր
էր, տեսաւ ու հաւատաց ։ 9 – Վասն
զի գեռ գրուածը չէին գիտեր , թէ
Պէտք է որ անիկա մեռելներէն յա-
րութիւն առնէ։ 10 – Ետքը աշակերտ-
ները նորէն իրենց տո՛ւնը գացին ։

11-Բայց Մարիամ գերեզմանին դուրս
կայներ էր և կուլար, ու երբ կուլար՝
դէպ ի գերեզմանը ծռեցաւ նայելու .
12-Եւ տեսաւ երկու հրեշտակներ ճեր-
մակ հանդերձներով , որ նստեր էին ուր
Յիսուսի մարմինը դրուած էր, մէկը գլ-
խուն կողմէն ու միւսը ոտքին կողմէն։
13 – Եւ անոնք իրեն ըսին , Ով կին ,
ինչո՞ւ կուլաս . ըսաւ անոնց , Անոր
համար որ իմ Տէրս վերցուցին, ու չեմ գիտեր ո՛ր դրին զա-
նիկա։ 14 – Ձայս որ ըսաւ՝ հետն դար-
ձաւ և տեսաւ Յիսուսը որ կայներ էր ,
ու չէր գիտեր թէ Յիսուս է ։ 15 – Յի-
սուս անոր ըսաւ , Ով կին, ինչո՞ւ կու-
լաս, ո՞վ կը փնտռես ։ Ինք կարծելով
թէ անիկա պարտիզպանն է , ըսաւ ա-
նոր, Տէր, եթէ դուն վերցուցիր զանի-
կա, ըսէ ինծի, ո՞ւր դրիր զայն, որպէս
զի ես զանիկա առնեմ։ 16 – Յիսուս ը-
սաւ անոր, Մարիամ. ան ալ դարձաւ
ու [Եբրայեցերէն] անոր ըսաւ , Ռաբ-
բունի, որ Վարդապետ ըսել է ։ 17 –
Յիսուս ըսաւ անոր , Ինծի մի դպչիր ,
վասն զի գեռ Հօրս քով ելած չեմ .
հապա գնա եղբայրներուս և ըսէ ա-
նոնց , Ես կ'ելլեմ իմ Հօրս քով ու
ձեր Հօրը քով , և իմ Աստուածոյս քով
ու ձեր Աստուածոյն քով ։ 18-Մարիամ
Մագդաղենացի եկաւ ու աշակերտնե-
րուն պատմեց թէ Տէրը տեսաւ , և
թէ անիկա այս բաները իրեն ըսաւ ։

19 – Եւ նոյն օրը , մէկշաբթի իրի-
կունը , աշակերտներուն ժողովուած
տեղին դուռները գոց ըլլալով՝ Հրեանե-
րէն վախնալնուն համար, Յիսուս եկաւ
և անոնց մէջտեղը կայնեցաւ, ու ըսաւ
անոնց, Խաղաղութիւն ձեզի։ 20 – Ու
զայս ըսելով՝ իր ձեռքերը ու կողը ցու-
ցուց անոնց. աշակերտներն ալ ուրա-
խացան երբ Տէրը տեսան։ 21 – Ու Յի-
սուս նորէն ըսաւ անոնց , Խաղաղու-

թիւն ձեզի. ինչպէս Հայրը ինծ ղրկեց, ես ալ ձեզ կը ղրկեմ ։ 22 – Եւ զայս ըսելով՝ անոնց վրայ փչեց , ու ըսաւ ա-նոնց, Առէք Հոգի Սուրբ ։ 23 – Որոնց մեղքերը թողուք, թողուած ըլլայ ա-նոնց, և որոնց ձգէրէք ետ բռնէք, ըըռ-նուած ըլլայ։

24 – Բայց տասուերկուքէն մէկը , Երկուարեակ ըսուած Թովմաս , անոնց հետ չէր՝ երբ Յիսուս եկաւ։ 25 – Ու-ա-րի միւս աշակերտները կ'ըսէին անոր թէ Տէրը տեսանք . ան ալ ըսաւ ա-նոնց, եթէ իր ձեռքերուն վրայ բևեռ-ներուն նշանը չտեսնեմ, ու մատս բե-ւեռներուն տեղը չխոթեմ , և իմ ձեռքս անոր կողը չխոթեմ՝ չեմ հա-ւատար ։

26 – Եւ ութ օրէն եւս դարձեալ աշակերտները ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ . եկաւ Յիսուս , դռները գոց ըլլալով , ու կայնեցաւ անոնց մէջ-տեղը և ըսաւ , Խաղաղութիւն ձեզի ։ 27 – Ետքը ըսաւ Թովմասի , Մատդ հոս բեր և նայէ իմ ձեռքերս , ու բեր քու ձեռքդ և իմ կողս խոթէ , ու մի ըլլար անհաւատ , հապա հաւատացե-ալ ։ 28 – Եւ Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Իմ Տէրս և իմ Աստուածս։ 29 – Յիսուս ըսաւ անոր, *Որովհետև դուն ինծ տեսար՝ հաւա-տացիր. երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան։

30 – Եւ Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր աշակերտներուն առջև, որոնք այս գիրքին մէջ գրուած չենն 31 – Բայցասոնք գրուեցան, որպէս զի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, և որպէս զի հաւատա-լով կեանք ունենաք անոր անունով։

## ԳԼ. ԻԱ

Յակէ ետև Յիսուս նորէն ինքզինք իր աշակերտներուն յայտնեց Տիբերի-ադայ ծովուն եղերքը, և այսպէս յայտ-նեց։ 2 – Մէկտեղ էին Սիմոն Պետրոս ու Թովմաս, Երկուարեակ ըսուածը, և Նաթանայէլ որ Գալիլեացի Կանա քա-ղաքէն էր , ու Զեբեդէոսի որդիները և աշակերտներէն ուրիշ երկուք ալ ։ 3 – Սիմոն Պետրոս ըսաւ անոնց , Ես ձուկ որսալու կ'երթամ. ըսին անոր ,

*Ոմանք, Թովմաս, որովհետև

Մենք ալ կու գանք քեզի հետ . ելան և շուտ մը նաւը մտան , ու այն գիշե-րը բան մը չբռնեցին ։ 4 – Ու երբ ա՛լ առաւօտ եղաւ, Յիսուս ծովուն եղերքը կայներ էր, բայց աշակերտները չճանչ-ցան թէ Յիսուս է ։ 5 – Ետ Յիսուս ը-սաւ անոնց , Տղաք , ուտելու բան մը ունի՞ք. պատասխան տուին իրեն , Ոչ ։ 6 – Եւ ըսաւ անոնց , Ուռկանը նաւուն աջ կողմը ձգեցէք ու պիտի գտնէք . ուստի ձգեցին , և ձուկերուն շատու-թենէն՝ ա՛լ չէին կրնար զանիկա քա-շել։ 7 – Ա՛յն ատեն այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսի, Անի-կա Տէրն է. իսկ Սիմոն Պետրոս երբ լսեց թէ Տէրն է , վերարկուն վրան առաւ , վասն զի մերկ էր , ու ծովը նետուե-ցաւ։ 8 – Եւ միւս աշակերտները նա-ւակովը եկան, (վասն զի ցամաքէն հե-ռու չէին , միայն թէ երկու հարիւր կանգուն չափ,) և ուռկանը ձուկե-րովը կը քաշէին ։ 9 – Ու երբ ցամաքը ելան , հոն վառած կրակ տեսան , ու վրան ձուկ դրուած, և հաց ։ 10 – Յի-սուս ըսաւ անոնց , Բերէք այդ ձուկե-րէն զորոնք դուք հիմա բռնեցիք ։ 11 – Սիմոն Պետրոս նաւը *մտաւ , և ուռ-կանը ցամաք քաշեց հարիւր հիսուն-ուերկք խոշոր ձուկերով լեցուն. և այն-չափ բան կար ու չպատռեցաւ ուռ-կանը։ 12 – Յիսուս ըսաւ անոնց, Եկէք ճաշ ըրէք . ու աշակերտներէն մէ՛կն ալ չէր համարձակեր անոր հարցնել թէ Դուն ո՞վ ես. վասն զի գիտէին թէ Տէրն է։ 13 – Ա՛յն ատեն Յիսուս եկաւ ու առաւ հացը և անոնց տուաւ, նոյն-պէս ալ ձուկը։ 14 – Ա՛յս երրորդ ան-գամն է որ Յիսուս իր աշակերտներուն երևցաւ՝ մեռելներէն յարութիւն առ-նելէն ետև։

15 – Ու երբ ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսի. Սիմո՛ն, Յովհաննի որդի, դիս ասոնցմէ աւելի կը սիրե՞ս. անիկա ըսաւ անոր, Ա՛յո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ՝ ըսաւ անոր, Արածէ իմ գառնուկները։ 16 – Նորէն երկրորդ ան-գամ ըսաւ անոր, Սիմո՛ն, Յովհաննի որդի, դիս կը սիրե՞ս. ըսաւ անոր, Ա՛յո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ՝ ըսաւ անոր, Արածէ իմ ոչխարները։ 17 – Ըսաւ անոր երրորդ անգամ , Սիմո՛ն , Յովհաննի որդի, դիս կը սիրե՞ս . Պետրոս

*Յոան. ելաւ



տրտմեցաւ որ երեք անգամ իրեն ը-սաւ Թէ Զիս կը սիրե՞ս. և ըսաւ անոր, Տէր , դուն ամէն բան գիտես , դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ՝ ըսաւ ա-նոր Յիսուս , Ախորժէ իմ ոչխարներս ։ 18 – Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ երբ դուն պատանի էիր , ինքզինքդ գօտի կը կապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր. բայց երբ ծերանաս , ձեռ-քերդ վեր պիտի բանես, և ուրիշը քեզի գօտի պիտի կապէ ու պիտի տանի ուր չես ուզեր ։ 19 – Ա՛յս բանը ըսաւ՝ ցուցնելով թէ անիկա ի՛նչ մեռելով պիտի փառաւորէ զԱստուած . ու երբ զայս ըսաւեց՝ ըսաւ անոր , Եկուր իմ հետևէս ։ 20 – Եւ Պետրոս դարձաւ ու տեսաւ այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, որ եւս կ'երթար , (որ նաև ընթրիքին առենը անոր կուրծքին վրայ հնկեր և ըսեր էր, Տէր, ո՞վ է որ քեզ պիտի մատնէ ։) 21 – Պետրոս զանիկա տեսնելով՝ ըսաւ Յիսուսի, Տէր, հապա սորիկա ի՞նչ պիտի ըլլայ ։ 22 – Յիսուս ըսաւ անոր , Եթէ ես ուզեմ որ սորիկա կենայ մինչև ես գամ , քու ի՞նչ հոգդ է. դուն իմ հետևէս եկուր։ 23 – Ա՛յ այս խօսքը եղաւ եղբայրներուն մէջ Թէ այն աշակերտը պիտի չմեռնի. սակայն Յիսուս չըսաւ անոր Թէ Պիտի չմեռնի , հապա՝ Եթէ ես ուզեմ որ սորիկա կենայ մինչև ես գամ , քու ի՞նչ հոգդ է ։

24 – Ա՛սիկա այն աշակերտն է՝ որ կը վկայէ այս բաներուն համար , որ գրեց ալ այս բաները . ու գիտենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է։ 25 – Եւ ուրիշ շատ բաներ ալ կան, զորոնք Յիսուս ըրաւ, որոնք եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, կարծեմ Թէ աշխարհս ալ բաւական պիտի չըլլար պարունա-կելու այն գիրքերը որ գրուած ըլլա-յին ։ Ամէն ։

# ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԼՈՒԽ Ա

Առաջին պատմութիւնը ըրի, ով Թէոփիլոս , այն ամէն բաներուն վրայ զորոնք Յիսուս սկսաւ ընել և սորվե-ցընել , 2 – Մինչև այն օրը որ Հոգ-ւոյն Սրբոյ միջոցով պատուէր տուաւ իր ընտրած առաքեալներուն, ու համ բարձաւ . 3 – Որոնց ինքզինք ցուցուց կենդանի իր չարչարանքներէն ետև շատ ապացոյցներով , քառասուն օր-ւան մէջ անոնց երևնալով ու Աս-տուծոյ թագաւորութեանը վրայ խօ-սելով ։ 4 – Եւ անոնց հետ ժկտելէ *դանուած առենը կ'ապսպրէր անոնց որ Երուսաղէմէ չհեռանան , հապա սպասեն Հօրը խոստումնիքին , զոր ինծ-մէ լսեցիք, ըսելով ։ 5 – Վասն զի Յով-հաննէս ջրով մկրտեց , բայց դուք սակէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգի-ով պիտի մկրտուիք ։ 6 – Անոնք ալ մէկտեղ գալով կը հարցնէին իրեն ու կ'ըսէին, Տէր, Իսրայէլի թագաւորու-թիւնը այս ժամանակո՞ւն մէջ նորէն պիտի հաստատես։ 7 – Եւ ըսաւ անոնց , Ձեզի չվերաբերիր ժամերը և ժամա-նակները զորոնք Հայրը իր իշ-խանութեանը մէջ դրաւ . 8 – Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած առենը զօրութիւն պիտի առնէք, ու ինծի հա-մար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի ու Սամարի-այի մէջ ու մինչև երկրի ծայրերը ։ 9 – Եւ երբ այս բաները ըսաւ, մինչ անոնք կը նայէին, համբարձաւ , և ամպ մը զանիկա անոնց աչքէն առաւ։ 10 – Ու քանի որ աչքերնին անկած դէպ ի եր-կինք կը նայէին անոր երթալուն վրայ, ահա երկու մարդ իրենց քով կայնե-ցան ճերմակ հանդերձներով ։ 11 – Ո-րոնք նաև ըսին, Ով Գալիլեացի մար-դիկ, ինչո՞ւ կայներ դէպ ի երկինք կը նայիք. այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչ-պէս տեսաք անոր երկինք երթալը ։ 12 – Ա՛յն ատեն Երուսաղէմ դարձան

*Կամ, հաց կերած

Զքեզնեանց ըսաւած լեռնէն , որ շատ քաջ օրւան ճամբու չափ մօտ է Եբսեսաղէմի: 13 – Ու երբ *ապտէ մտան, ելան վերնատունը , ուր կը բնակէին Պետրոս և Յակոբոս , Յովհաննէս և Անդրէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բարթողոմէոս և Մատթէոս , Յակոբոս Ալփեոսեան ու Սիմոն Նախանձայոյզ և Յուդա †Յակոբեան : 14 – Ասոնք ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին կիներուն հետ , և Յիսուսի մօրը Մարիամի ու անոր եղբայրներուն հետ մէկտեղ :

15 – Եւ այն օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն մէջ , (ասոր հարիւր քսան հոգիի չափ ժողովուած բազմութիւն կար ,) ու ըսաւ, 16 – Մարդիկ եղբայրներ , պէտք էր որ կատարուէր այս գրուածը, զոր առաջուընէ Հոգին Սուրբ Դաւիթի բերնով ըսաւ Յուդայի համար, որ Յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ. 17 – Վասն զի անիկա մեզի հետ էր մեր համրանքին մէջ , և այս պաշտօնին ալ բաժին ունէր: 18- Ահեկա անբրաւութեան վարձքով արտարակ մը առաւ , ու գլխիվար կայնալով մէջտեղէն ճեղքուեցաւ , և իր ամէն փորոքիքը դուրս թափեցաւ : 19- Ու այս բանը Երուսաղէմ բնակողներուն ամէնուն յայտնի եղաւ , մինչև հիմայ լեզուով այն արտարակին անունը Ակէլդամա դրուեցաւ , այսինքն Արեան արտարակ: 20 – Վասն զի Սաղմոսներու դիրքին մէջ գրուած է թէ Անոր բնակարանը աւերակ ըլլայ , ու անոր մէջ բնակող մը չըլլայ , և անոր պաշտօնը ուրիշը առնէ : 21 – Ուրեմն պէտք է որ այս մարդոցմէն որոնք մեզի հետ եղան այն բոլոր առնեն , երբ Տէր Յիսուս մեր մէջ մուտ ու ելաւ , 22-Յովհաննէսի մկրտութենէն սկսած մինչև այն օրը որ մեզմէ համրարձաւ , ասոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեանը : 23 – Եւ երկու հոգի կայնեցուցին , Յուսէփը որ Բարսաբա կը կոչուէր , որ Յուստոս ալ մականուանեցաւ , ու Մատթիան : 24 – Եւ աղօթք բնելով ըսին , Դուն, ով Տէր , որ ամէնուն սիրտը գիտես , այս երկուքէն մէկը , զոր ընտրեցիր , Ձեզի յայտնէ . 25 – Որպէս զի այս պաշտօնին և առաքելութեանը վիճակը առնէ, որմէ Յուդա ինկաւ իր տեղը երթալու : 26 – Եւ անոնց համար վիճակ ձգեցին , ու վիճակը Մատթիասի ելաւ , և անիկա տասնմէկ առաքեալներուն հետ սեպուեցաւ :

*Ա յլեւս , Յակոբոսի եղբայրը , ըստ ընդհանուր կարծեաց :

## ԳԼ. Բ

Եւ երբ Պենտեկոստէի օրը հասաւ , ամէնն ալ միասին մէկտեղ էին : 2 – Ու յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ աստակաշունչ հովի մը չափին պէս, և բոլոր տունը լեցուց՝ ուր նստեր էին : 3 – Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց որպէս թէ կրակէ, ու մէկն մէկուն վրայ նստաւ: 4-Եւ ամէնն ալ Հոգւով Սրբով լեցուեցան , ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ , ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար : 5- Ու Երուսաղէմի մէջ բնակած Հրեաներ կային , աստուածավախ մարդիկ երկինքի տակ եղած բոլոր ազգերէն : 6-Ու երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը մէկտեղ եկաւ ու խռովեցաւ , վասն զի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: 7 – Ամէնն ալ կը զարմանային և կը զարմանային և իրարու կ'ըսէին , Չէ՞ որ ահա ասոնք ամէնն ալ որ կը խօսին, Գալիլեացի են. 8 – Եւ ինչպէս կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք . 9 – Պարթեւներ և Մարեր ու Եղամացիներ , և անոնք որ կը բնակին Միջագետի մէջ , և Հրէաստանի ու Կապադովկիայի մէջ , Պոնտոսի ու Ասիայի մէջ , 10 – Փռիգիայի և Պամփիւլիայի մէջ , Եգիպտոսի մէջ , և Կիւրենէի մօտ Լիբէացւոց կողմերուն մէջ , նաև Հռովմայեցի պանդուխտներ , 11 – Թէ՛ Հրէաներ և թէ՛ նորահաստատներ , Կրետացիներ և Արաբացիներ , կը լսենք անոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին Աստուծոյ մեծամեծ բաները : 12 – Կը զարհուրային ամէնն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ այս: 13 – Ոմանք ալ ծաղր բնելով՝ կ'ըսէին թէ Անոնք նոր գինիով լեցուեր են :

14 – Բայց Պետրոս ելաւ տասնմէկին հետ մէկտեղ , ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց, Ով Հրեայ մարդիկ և դուք ամէնդ որ Երուսաղէմ կը բնակիք, այս ձեզի յայտնի ըլլայ, ու ականջ դրէք իմ խօսքերուս : 15 – Քանզի ոչ թէ ասոնք գինովցած են, ինչպես դուք կը կարծէք, վասն զի դէռ օրւան երրորդ ժամն է. 16 – Հապա սպիկա այն է որ Յովէլ մարգարէին ձեռքով ըսուեցաւ. 17 – Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ, ու ձեր տղաքը և ձեր աղջիկները պիտի մարգարէանան , ու ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն. 18 – Եւ իմ ծառաներուս վրայ ու իմ աղախիններուս վրայ ալ այն օրերը իմ Հոգիս պիտի թափեմ, և պիտի մարգարէանան : 19 – Ու վերը երկինքը հրաշքներ պիտի ցուցնեմ , ու վերը երկիրը՝ նշաններ , արիւն ու կրակ և ծուխի մուռախուռ. 20 – Արեւը խաւարի պիտի դառնայ, և լուսինը՝ արիւնի, դեռ Տէրոջը մեծ ու երեւելի օրը չեկած : 21 – Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի: 22 – Ով Իսրայելացի մարդիկ, լսեցէք այս խօսքերը . Յիսուս Նազովրեցին , Աստուածմէ ձեզի ցուցուած մարդ մը զօրութիւններով ու հրաշքներով և նշաններով , զորոնք Աստուած անոր ձեռքով ըրաւ ձեր մէջ , ինչպես դուք ալ գիտէք, 23 – Անիկա Աստուծոյ սրոշած խորհրդովը և կանխագիտութիւնովը մատնուած ըլլալով՝ առիք և * անօրէններու ձեռքով փայտի վրայ գամելով սպաննեցիք. 24 – Զոր Աստուած յարուց՝ մահուան ցաւերը քակելով , քանզի հնար չէր որ ինք անկէ բռնուի: 25 – Վասն զի Դաւիթ անոր համար կ'ըսէ , Միշտ առջեւս Տէրը կը տեսնէի իմ առջեւս, քանզի իմ աջ կողմս է, որպէս զի չսասանիմ . 26 – Անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս, ու իմ լեզուս ցնծաց . նաև իմ մարմինս ալ յուսով պիտի հանգստանայ. 27 – Վասն զի իմ անձս †գերեզմանին մէջ պիտի չթողուս, ու քու Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս : 28 – Կենաց ճամբաները ինծի ծանչցուցիր . քու երեսիդ ուրախութիւնովը զիս պիտի լեցնես: 29 – Մարդիկ եղբայրներ, արժան է համարձակ ըսուցել ձեզի Դաւիթ նահապետին համար, թէ մեռաւ ու թաղուեցաւ , և անոր գերեզմանը մինչև այսօր մեր մէջ է : 30 – Արդ որովհետև անիկա մարգարէ էր, և գիտէր թէ Աստուած հաստատ երդում ըրաւ իրեն , թէ իր երիկամունքներուն պտուղէն մարմնով կազմանէ Քրիստոսը պիտի յարուցանէ որ իր աթոռը նստի, 31 – Ինք կանխատեսելեմամբ խօսեցաւ Քրիստոսի յարութիւնը համար , թէ անոր անձը գերեզմանը չթողուեցաւ, և անոր մարմինը ապականութիւն չտեսաւ : 32 – Այս Յիսուսը Աստուած յարուցց, որուն մենք ամէնս ալ վկայ ենք: 33 – Ուստի Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով , ու Հոգւոյն Սրբոյ խոստմունքը Հօրմէն առնելով՝ տարածեց ասիկա , զոր դուք հիմա կը տեսնէք և կը լսէք: 34 – Վասն զի Դաւիթ երկինքը չելաւ, բայց ինք կ'ըսէ , Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս , 35 – Մինչև քու թշնամիներդ սաքերուդ պատուանդան դնեմ: 36 – Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող գիտենայ , որ Աստուած զնիկա Տէր ալ բրաւ՝ Օծեալ ալ , այն Յիսուսը զոր դուք խաչեցիք:

37 – Ու զայս երբ լսեցին, էբէնց սիրտերնուն մէջ զղջացին, և ըսին Պետրոսի ու միւս առաքեալներուն, Մարդիկ եղբայրներ, ինչ ընենք: 38 – Եւ Պետրոս ըսաւ անոնց , Ապաշխարեցէք , ու ձեզմէ ամէն մէկը Յիսուս Քրիստոսի անունովը մեղքերու թողութեան համար, և Հոգւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդունիք: 39 – Վասն զի խոստմունքը ձեզի է ու ձեր որդիներուն , և ամէն հեռու եղողներուն՝ զորոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ : 40 – Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն կու տար , ու կը յորդորէր զանոնք և կ'ըսէր , Ազատեցէք ձեզ այս խոտորած ազգէն ինքզինքնիդ: 41 – Եւ անոնք որ սրտանց ընդունեցին անոր խօսքերը , մկրտուեցան . ու այն օրը երեք հազար հոգի չափ աւելցան: 42 – Եւ միշտ առաքեալներուն վարդապետութեանը հետէ էին , ու միաբանութեանը և հաց կոտրելուն ու աղօթքներուն:

43 – Եւ ամէն մարդու վրայ վախ ինկաւ . և առաքեալներուն ձեռքով շատ հրաշքներ ու նշաններ կը գործուէին: 44 – Ու բոլոր հաւատացեալ-

*Կամ, անօրէնն
†Կամ, գժոխքին

ներըը մեկտեղ էին, և ամէն բաներնին հասարակաց էր։ 45 – Ու ստացուածքնին և ունեցած բաներնին կը ծախէին, ու անոնց գինը կը բաժնէին ամէնուն, որու որ բան մը պէտք ըլլար։ 46 – Եւ ամէն օր միաբանութեամբ տաճարը երթալու հաւէտ էին, և տուներնին հաց կը կոտրէին, ու կերակուրնին կ'ուտէին ուրախութեամբ և միամտութեամբ սրտի. 47 – ԶԱստուած կ'օրհնէին, ու բոլոր ժողովուրդին առջև շնորհք կը գտնէին. և Տէրը օրէ օր փրկուածները կ'աւելցնէր եկեղեցիին։

## Գլ. Գ

Պետրոս ու Յովհաննէս իններորդ ժամու աղօթքին տաճարը մեկտեղ կ'երթային։ 2 – Եւ իր մօրը ծոցէն կաղ ծնած մարդ մը կը բերուէր, զոր ամէն օր տաճարին Գեղեցիկ կոչուած դրանը քով կը դնէին, որպէս զի տաճարը մտնողներէն ողորմութիւն խնդրէ։ 3 – Ա՛րկաս տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը որ տաճարը մտնելու վրայ էին, կ'աղաչէր որ ողորմութիւն առնէ։ 4 – Իսկ Պետրոս Յովհաննէսի հետ մեկտեղ անոր նայեցաւ ու ըսաւ, Մեզի նայէ։ 5 – Ան ալ դէպ ի անոնք դարձաւ ու կը յուսար անոնցմէ բան մը առնել։ 6 – Եւ Պետրոս ըսաւ, Արծաթ ու ոսկի չունիմ՝ , հապա ինչ որ ունիմ՝ զայն քեզի կու տամ՝ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը ելիր ու քալէ։ 7 – Եւ անոր աջ ձեռքէն բռնեց վերցուց զանիկա, ու իսկոյն անոր ոտքերն թմրեցան ու կոճերը զօրացան։ 8 – Եւ վեր ցատկելով կայնեցաւ ու կը քալէր, և անոնց հետ տաճարը մտաւ, քալելով ու ցատկելով և զԱստուած օրհնելով։ 9 – Ու բոլոր ժողովուրդը տեսաւ զանիկա որ կը քալէր ու կ'օրհնէր զԱստուած. 10 – Եւ կը ճանչնային թէ անիկա էր, որ ողորմութեան համար տաճարին Գեղեցիկ կոչուած դրանը քով կը նստէր. և զարմանքով ու ապշութեամբ լեցուեցան անոր եղած բանին համար։

11 – Եւ քանի որ *անիկա Պետրոսի ու Յովհաննէսի յարեր էր, բոլոր ժողովուրդը զարմացած մեկտեղ վազեցին անոնց քով՝ այն սրահը որ Սողոմոնին կ'ըսուէր։ 12 – Զայս տեսնելով Պետրոս՝ պատասխան տուաւ ժողովուրդին, Ով Իսրայէլացի մարդիկ, ինչո՞ւ զարմացեր էք սոր վրայ, կամ ինչո՞ւ աչքերնիդ անկած մեզի կը նայիք, որպէս թէ մենք մեր զօրութիւնովը կամ բարեպաշտութիւնովը ատոր քալել տուած ըլլանք։ 13 – Աբրահամի ու Իսահակի և Յակոբի Աստուածը, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց իր *Որդին Յիսուս, զոր դուք մատնեցիք, և ուրացաք Պիղատոսի առջև՝ երբ ինք վճռեց որ արձակէ։ 14 – Բայց դուք այն Սուրբը և Արդարը ուրացաք, ու խնդրեցիք որ մարդասպան մարդ մը ձեզի շնորհուի. 15 – Եւ կենաց Առաջնորդը սպաննեցիք, զոր Աստուած մեռելներէն յարուցց, որու մենք վկայ ենք։ 16 – Եւ անոր անունովը հաւատքով՝ անոր անունը հաստատեց ասիկա, զոր դուք կը տեսնէք ու գիտէք. և այն հաւատքը որ անով է՝ այս առողջութիւնըատր տուաւ ձեր ամէնուն առջև։ 17 – Եւ հիմա, եղբայրներ, գիտեմ որ չգիտնալով ըրիք, ինչպես ձեր իշխաններն ալ։ 18 – Բայց Աստուած ինչ որ առաջուընէ իր բոլոր մարգարէներուն բերնով յայտներ էր Քրիստոսի չարչարելուն վրայով, այսպէս կատարեց։ 19 – Ուստի ապաշխարեցէք ու դարձի եկէք, որպէս զի մեղքերնիդ ջնջուի. 20 – Որպէս զի սփոփանոց ժամանակները գան Տէրոջը երեսէն, և առաջուընէ †ձեզի քարոզուած՝ Յիսուս Քրիստոսը ղրկէ։ 21 – Զոր պէտք է որ երկինք ընդունի մինչև այն առեներ՝ որ ամէն բաները կարգադրուին, որոնց համար Աստուած սկիզբէն ի վեր իր սուրբ մարգարէներուն բերնով խօսած է։ 22 – ‡Մովսէս ճշ Հայրերուն ըսաւ թէ Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներուն ինձի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի. անոր մտիկ ըրէք՝ ամէն ինչ որ ձեզի խօսի։ 23 – Եւ պիտի ըլլայ թէ ամէն ով որ այն մարգարէին մտիկ չընէ, ժողովուրդին մէջէն պիտի կորսուի։ 24 – Ու բոլոր մարգարէները սրտնք Սամուէլէ ի վեր խօսեցան,

*Ոմանք, այն բժշկուած կաղը

*Կամ, ծառան
†Ոմանք, ձեզի համար առհմնուած
‡Ոմանք, Քանզի Մովսէս



այս օրերուն համար ալ լմնցուցին։ 25 – Դուք էք մարգարէներուն որդիները և այն ուխտին, զոր Աստուած մեր հայրերուն հետ ըրաւ, ու ըսաւ Աբրահամի, Եւ քու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը։ 26 – Աստուած իր *Որդին յարուցանելով՝ առաջ ձեզի ղրկեց զանիկա, որպէս զի ձեզ օրհնէ, ամէն մեկդ ձեր չարութիւններէն դարձնելով։

## Գլ. Դ

Ու երբ անոնք ժողովուրդին կը խօսէին, քահանաները ու տաճարին իշխանը և սադուկեցիները անոնց վրայ հասան, 2 – Դժգոհելով որ անոնք ժողովուրդին կը սովրեցնէին, և Յիսուսի միջոցով մեռելներուն յարութիւն առնելը կը քարոզէին. 3 – Ու ձեռք զարկին անոնց և բանտ դրին մինչև հետևեալ օրը, վասն զի ալ իրիկուն էր։ 4 – Բայց այն խօսքը լսողներէն շատերը հաւատացին, ու մարդոց թիւը հինգ հազարի չափ եղաւ։

5 – Ու եղաւ որ հետևեալ օրը մեկտեղ ժողովեցան անոնց իշխանները և ծերերը ու դպիրները Երուսաղէմի մէջ, 6 – Նաև Աննա քահանայապետը ու Կայիափա ու Յովհաննէս ու Աղէքսանդրոս և այն ամէնը որ քահանայապետի ցեղէ էին. 7 – Եւ զանոնք մէջտեղ կայնեցուցած՝ կը հարցնէին, Ինչ զօրութիւնով կամ ինչ անունով ըրիք դուք այս բանը։ 8 – Ա՛յն ատեն Պետրոս Հոգւով Սրբով լեցուած՝ ըսաւ անոնց, Ով ժողովուրդին իշխաններ և Իսրայէլի ծերերը, 9 – Եթէ մենք այսօր տակաւ մարդու մը եղած բարիքին համար կը քննուինք, թէ ինչ միջոցով անիկա բժշկուեցաւ, 10 – Յայտնի ըլլայ ձեզի ամէնուդ ու բոլոր Իսրայէլի ժողովուրդին, որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը, զոր դուք խաչեցիք, և զոր Աստուած մեռելներէն յարուց, ահա անով սիկա ձեր առջև բժշկուած կեցեր է։ 11 – Անիկա է այն քարը ձեզմէ շինողներէդ անարգուած, որ անկիւնի գլուխ եղաւ. 12 – Եւ ուրիշ մեկո՛վ փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկուիլ։ 13 – Իսկ անոնք Պետրոսի ու Յովհաննէսի համարձակութեանը նայելով, և հասկնալով որ տգէտ ու առանց ուսման մարդիկ են, կը զարմանային. և ճանչցան որ անոնք Յիսուսի հետ էին. 14 – Ու այն բժշկուած մարդը տեսնելով որ անոնց հետ կայներ էր, չէին կրնար ան՛նչ դէմ բան մը խօսիլ։ 15 – Եւ հրամայելով անոնց որ ատեանէն դուրս ելլեն, իրարու հետ խորհուրդ ըրին, 16 – Եւ ըսին, Ի՞նչ ընենք այս մարդոց. վասն զի երուսաղէմի բոլոր բնակիչներուն յայտնի է թէ անոնց ձեռքով երևելի հրաշք մը եղաւ, ու մենք չենք կրնար ուրանալ։ 17 – Մինչդեռ թէ ժողովուրդին մէջ աւելի չտարածուելու համար՝ ատոնիկ սպառնալիք ընենք անոնց, որ այն անունով մէյմին ալ չըլլայ որ մարդու բան խօսին։ 18 – Եւ զանոնք կանչելով պատուիրեցին անոնց որ ամենևին չխօսին և չսորվեցնեն Յիսուսի անունով։ 19 – Բայց Պետրոս ու Յովհաննէս պատասխան տուին անոնց ու ըսին, Եթէ Աստուծոյ առջև ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձեզի մտիկ ընենք, դուք դատեցէք։ 20 – Վասն զի մենք զայն որ տեսանք ու լսեցինք՝ չենք կրնար չխօսիլ։ 21 – Իսկ անոնք նորէն սպառնալիք ընելէ ետև արձակեցին զանոնք, բան մը չգտնելով թէ ինչպէս պատժեն զանոնք, ժողովուրդին համար, քանզի ամէնն ալ զԱստուած կը փառաւորէին եղած բանին համար։ 22 – Վասն զի այն մարդը քառասուն տարեկանէ աւելի էր, որուն վրայ այս բժշկութեան հրաշքը եղաւ։

23 – Եւ անոնք արձակուելով՝ իրենցներուն քով եկան, ու պատմեցին ինչ որ քահանայապետները և ծերերը իրենց ըսին։ 24 – Անոնք ալ երբ լսեցին, միաբանութեամբ ձայներնին Աստուծոյ վերցուցին՝ ըսելով, Ով Տէր, դուն ես այն Աստուածը, որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները ստեղծեցիր, 25 – Որ քու Ծառայիդ Դաւիթի բերնով խօսեցար, Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն ըրին, ու ժողովուրդները պարապ բաներ մտածեցին. 26 – Երկրի թագաւորները պատրաստ կայնեցան, և իշխանները մեկտեղ ժողովեցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ։ 27 –

*Ոմանք, Որդին Յիսուսը

Քանդի տրդատև [այս քաղաքին մէջ] ժողովուեցան քոյ սուրբ Որդւդդ Յիսուսի վրայ, զոր դուն օծեցիր, Հերովդէս և Պոնտացի Պիղատոս, ազգերուն հետ ու Իսրայէլի ժողովուրդներուն հետ, 28 – Ընել ինչ որ քու ձեռքդ և խորհուրդդ առմնեց առաջուընէ որ ըլլայ : 29 – Եւ հիմա, ով Տէր, նայէ անոնց սպառնալիքներուն, ու շնորհէ քու ծառաներուդ, որպէս զի բոլոր համարձակութիւնով քու խօսքդ խօսինք, 30 – Քու ձեռքդ երկնցնելով բժշկելու, և քու սուրբ Որդւդդ Յիսուսի անունովը նշաններ ու հրաշքներ ըլլալու : 31 – Ու երբ անոնք աղօթք ըրին, շարժեցաւ այն տեղը՝ ուր ժողովուած էին, և ամէնը Հոգւով Սրբով լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը խօսէին :

32 – Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի ունէին . և անոնցմէ մէ՛կը չէր ըսեր իր առացուածքներէն մէկուն համար՝ թէ իրն է, հապա իրենց ամէն բանները հասարակաց կը սեպէին : 33 – Եւ մեծ զօրութիւնով առաքեալները վկայութիւն կու տային Տէր Յիսուսի յարութեանը, և անոնց ամէնուն վրայ մեծ շնորհք կար: 34 – Ու անոնց մէջ կարօտութիւն քաշող մը չկար, վասն զի անոնք որ ագարակներու կամ տուներու տէր էին, կը ծախէին և ծախուածներուն դիները կը բերէին, 35 – Ու առաքեալներուն ոտքը կը դնէին. և ամէն մէկուն իր կարօտութեանը նայելով կը բաժնուէր : 36 – Եւ Յովսէս, որ առաքեալներէն Բառնաբաս մականուանեցաւ, (որ կը թարգմանուի Մխիթարութեան որդի,) Ղեւտացի, ծնունդով Կիպրացի, 37 – Ագարակ մը ունենալով, ծախեց ու սակը բերաւ՝ առաքեալներուն ոտքը դրաւ:

## ԳԼ. Ե

Բայց մարդ մը Անանիա անունով՝ իր կնոջ Սափիրայի հետ մէկտեղ ստացուածք մը ծախեց . 2 – Եւ անոր գինէն խորհեց, մինչ կինն ալ գիտէր , ու մէկ բաժինը բերաւ առաքեալներուն ոտքը դրաւ : 3 – Եւ Պետրոս ըսաւ, Անանիա, ինչո՞ւ Սատանայ քու սիրտդ լեցուց, որ դուն Հոգւոյն Սրբոյ ստւտ խօսիս , ու ագարակին գինէն խորհիս. 4 – Չէ՞ որ քու կալդ էր այն՝ քոնի որ կեցեր էր, ու ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակ էր . ինչ է որ քու սրտիդ մէջ այս բանը դրիր . աչ Թէ մարդոց ստւտ խօսեցար , հապա Աստուծոյ: 5 – Եւ Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգի ուտւտ : և մեծ վախ ինկաւ ամէնուն վրայ որոնք զայս լսեցին: 6 – Ու երիտասարդները ելան ու պատեցին զանիկա , և դուրս հանելով թաղեցին : 7 – Ու երբ երեք ժամու չափ վրան անցաւ, անոր կինը չգիտնալով ինչ որ եղեր էր, ներս մտաւ . 8 – Եւ Պետրոս ըսաւ անոր, Ըսէ ինծի , ագարակը այդչափ ծախեցիք . ան ալ ըսաւ, Այո , այնչափ: 9 – Ու Պետրոս ըսաւ անոր , Այդ ինչ է որ դուք միաբանեցաք Տէրոջը Հոգին փորձելու . ահա քու այրդ թաղողներուն ոտքերը դրսնը քով են, քեզ ալ դուրս պիտի հանեն: 10 – Եւ իսկոյն անոր ոտքերուն քով ինկաւ ու հոգի տուաւ . և երիտասարդները ներս մտնելով՝ զանիկա մեռած գտան , ու հանելին իր կրկնը քով թաղեցին : 11 – Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին վրայ ու ամէնուն վրայ որոնք այս բաները լսեցին :

12 – Եւ առաքեալներուն ձեռքով շատ նշաններ ու հրաշքներ կ'ըլլային ժողովուրդին մէջ . և ամէնը միասնութեամբ Սողոմոնի սրսհին մէջ էին: 13 – Եւ ուրիշներէն մէ՛կը չէր համարձակեր անոնց յարիլ , հապա ժողովուրդը կը մեծարէր զանոնք: 14 – Եւ Տէրոջը հաւատացողները աւելի կը շատնային , բազմութիւն այրերու ու կիներու. 15 – Այնպէս որ հիւանդները հրապարակները կը հանէին , և պառկարակներով ու մահիճներով կը դնէին , որպէս զի Պետրոսի անցնելուտւտնէն՝ գոնէ անոր շուքը անոնց մէկուն վրայ հանի : 16 – Ու շրջակայ քաղաքներուն բազմութիւնը երուսաղէմ կը ժողվուէր, հիւանդներ և պիղծ ոգիներէ նեղութիւն կրողներ բերելով, որոնք ամէնն ալ կը բժշկուէին :

17 – Ոտք ելաւ քահանայապետը և բոլոր իրեն հետ եղողները որոնք սադուկեցւոց պտնդէն էին, նախանձով լեցուած , 18 – Ու առաքեալներուն ձեռք զարկին և հասարակաց բանտը դրին զանոնք: 19 – Բայց Տէրոջը հրեշտակը գիշերով բանտին դռները բացաւ , ու դուրս հանելով զանոնք՝ ըսաւ , 20 – Գացէք և տաճարին մէջ կայնելով ժողովուրդին խօսեցէք այս կենաց բոլոր խօսքերը , 21 – Ու երբ լսեցին, տաճարը մտան առտուընց և կը սորվեցնէին . խակ քահանայապետը եկաւ ու իրեն հետ եղողները , ու մէկտեղ կանչեցին ժողովը ու Իսրայէլի որդիներուն բոլոր ծերակոյտը , և ղրկեցին բանտը , որպէս զի զանոնք բերուն : 22 – Ու երբ սպասաւորները գացին, զանոնք բանտին մէջ չգտնելով՝ ետ գարձան , պատմեցին , 23 – Եւ ըսին Թէ բանտը ամէն զգուշութիւնով գոցուած գտանք, ու պահապանները գուներուն առջև կայնած, բայց բանալով՝ ներսը մարդ չգտանք : 24 – Ու երբ ճէ քահանան և տաճարին իշխանը ու քահանայապետները լսեցին այս խօսքերը , կը զարմանային անոնց համար Թէ ինչ պիտի ըլլայ այն: 25 – Եւ մէկը եկաւ պատմեց ատնոց Թէ Ա.Ա այն մարդիկը զորնք բանտը դրիք , տաճարը կայներ են և ժողովուրդին կը սորվեցնեն: 26 – Այն ատեն իշխանը սպասաւորներովը մեկտեղ գնաց զանոնք բերաւ առանց բռնութեան , քանդի ժողովուրդէն կը վախնային , որ չքարկոծուին: 27 – Ու բերին զանոնք տաճարը կայնեցուցին . և քահանայապետը անոնց հարցուց՝ 28 – Ըսելով , Չէ՞ որ աստիկ պատուիրեցինք ձեղի որ այս անունով չսորվեցընէք. և տա՛ս Երուսաղէմը ձեր ուսմունքովը լեցուցիք , և այն մարդուն արիւնը կ'ուզէք մեր վրայ բերել :

29 – Պատասխան տուաւ Պետրոս և առքեալները ու ըսին , Աստուծոյ հնազանդիլ պէտք է քան Թէ մարդոց: 30 – Մեր հայրերուն Աստուածը Յիսուսը յարուցց, զոր դուք փայտին կախելով սպանեցիք : 31 – Զանիկա Աստուած իր աջ ձեռքով Առաջնորդ ու Փրկիչ ըլլալու բարձրացուց , Իսրայէլի ապաշխարութիւն և մեղքերու թողութիւն տալու : 32 – Եւ մենք այս բաներուն համար անոր վկաներ ենք, ու Սուրբ Հոգին ալ՝ զոր Աստուած իրեն հնազանդ եղողներուն տուաւ : 33 – Եւ անոնք զայս լսելով խիստ կատղեցան , ու կը խորհէին որ զանոնք մեռցնեն:

34 – Եւ տաճարին մէջ փարիսեցի մը ատքի վրայ ելաւ , որուն անունը Գամաղիէլ էր , օրէնսից վարդապետ մը, բոլոր ժողովուրդին առջև պատուաւոր մէկը, ու հրաման ըրաւ որ առաքեալները քիչ մը դուրս հանեն . 35 – Եւ ըսաւ անոնց, Ով Իսրայէլացի մարդիկ , դուք ձեզի զգուշացեք այս մարդոց համար Թէ ինչ պիտի ընէք : 36 – Քանզի այս օրերէն առաջ Թեւդաս ելաւ , իրեն համար ըսելով Թէ էքլէլ մէկն է , ու Թուով չորս հարիւրի չափ մարդիկ իրեն յարեցան . ինք սպանուեցաւ , և այն ամէնը որ իրեն հնազանդեր էին, ցրուեցան ու աչքնչ եղան: 37 – Անոր ետևէն Յուդա Գալիլեացի եկաւ աշխարհագիր եղած օրերը , և շատ ժողովուրդ իր կողմը ձգեց. ինք ալ կորուեցաւ , և այն ամէնը որոնք իրեն հնազանդեր էին, ցրուեցան եղան : 38 – Եւ հիմա ձեզի կ'ըսեմ, Ա.Ր մարդոցմէ մեկդի կեցէք ու Թող տուէք զանոնք , վասն զի եթէ այդ խորհուրդը կամ գործը մարդոցմէ է՝ պիտի քակուի . 39 – Ա.պա եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար ատիկա քակել . չըլլայ Թէ Աստուծոյ դէմ մարտնչող ալ գտնուիք: 40 – Եւ անոնք հաւանութիւն տուին անոր, ու առաքեալները կանչելով՝ ծեծեցին, և պատուիրելով որ ՚ի՛չ ՚ի Յիսուսի անունով չխօսին , արձակեցին զանոնք : 41 – Անոնք ալ ժողովքին առջևէն գացին , ուրախանալով որ Տէրոջը անուանը համար արժանի եղան անարգուելու : 42 – Եւ ամէն օր տաճարը ու տուներուն մէջ չէին դադարեր սորվեցնելէ ու Յիսուս Քրիստոսը քարոզելէ :

## ԳԼ. Զ

Եւ այն օրերը երբ աշակերտները շատցան, *Հէլլենացիները կողմէն սրսուտնչ մը եղաւ Եբրայեցւոց դէմ, վասն զի իրենց որբևարիները ամէն օրուան առաքմանը մատակարարուելուն մէջ անտես կ'ըլլային : 2 – Եւ տասներկուքը կանչեցին աշակերտներուն բազմութիւնը ու ըսին , Մեզի չվայելեր Աստուծոյ խօսքը ձգել ու սեղաններուն ծառայութիւն ընել : 3 – Ուստի եղբայրներ, ձեզմէ եօթը հոգի ընտրեցէք՝ բուէ վկայուած , Հոգւով Սրբով և

*Այսինքն, Հելլենախօս Հրէից

իմաստութիւնով լեցուն, որպէս զի գնանք այս գործին վրայ դնենք. 4 – Եւ մենք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պաշտօնին պարապինք: 5 – Եւ այս խօսքը բոլոր բազմութեան առջեւ հաճոյ երեւցաւ. ու ընտրեցին Ստեփանոս, Հաւատքով ու Հոգւով Սրբով լեցուն մարդ մը, ու Փիլիպպոս, և Պրոքորոնը, ու Նիկանորան, և Տիմոնը, ու Պարմենան և Նիկողայոս նորահաւատ Անտիոքացին: 6 – Առնք առաքեալներուն առջեւ կայնեցուցին. անոնք ալ աղօթք ընելով ձեռքերնին անոնց վրայ դրին: 7 – Եւ Աստուծոյ խօսքը կ'աճեր, ու աշակերտներուն թիւը խիստ կը շատնար Երուսաղէմի մէջ. և քահանաներէն մեծ բազմութիւն հաւատքին կը հնազանդէին:

8 – Եւ Ստեփանոս, որ *Հաւատքով ու զօրութիւնով լցուած մըդ մըն էր, մեծ հրաշքներ և նշաններ կ'ընէր ժողովուրդին մէջ: 9 – Բայց ոմանք այն ժողովարանէն, որ Ազատացելոց և Կիւրենացւոց ու Աղէքսանդրացւոց հողվարան կ'ըսուէր, և անոնք որ Կիլիկիայէ ու Ասիայէ էին, ելան ու Ստեփանոսի հետ վիճաբանութիւն կ'ընէին: 10 – Եւ չէին կրնար դէմ դնել այն իմաստութեանը ու Հոգիին, որով կը խօսէր: 11 – Այն ատեն հրապուրեցին քանի մը մարդիկ, որպէս զի ըսեն թէ Մենք լսեցինք որ սուրբ Հայհոյական խօսքեր կը խօսի Մովսէսի ու Աստուծոյ դէմ: 12 – Եւ գրգռեցին ժողովուրդը ու ծերերը և դպիրները, ու անոր վրայ հասնելով զինք բռնեցին ու առեանը տարին: 13 – Եւ սուտ վկաներ կայնեցուցին, որոնք կ'ըսէին, Այս մարդը չդադարիր Հայհոյական բաներ խօսիլ սուրբ տեղիս և օրէնքին դէմ: 14 – Քանզի լսեցինք ատկէ որ կ'ըսէր թէ այս Նազովրեցի Յիսուսը պիտի քակէ այս տեղը, ու պիտի փոխէ Մովսէսի մեզի աւանդած սովորութիւնները: 15 – Եւ առեանը նստողներուն ամէնը երբ անոր նայեցան, անոր երեսը հրեշտակի երեսի պէս տեսան:

## Գլ. Է

Այն ատեն քահանայապետը ըսաւ, Իրա՞ւ են այդ բաները այդպէ՞ս են:

*Ոմանք, շնորհքով.

2-Եւ անկէ ըսաւ, Մարդիկ եղբայրներ ու հայրեր, մտիկ ըրէք. Փառաց Աստուածը մեր հօրը Աբրահամի երեւցաւ, քանի որ Միջագետքի մէջ էր, դեռ Խառանի մէջ չնստած, և ըսաւ անոր, 3 – Ելիր քու երկրէդ և քու ազգականներէդ, ու եկուր այն երկիրը որ ես քեզի պիտի ցուցնեմ: 4 – Այն ատեն Քաղդէացւոց երկրէն ելլելով Խառանի մէջ բնակեցաւ. և անոր հօրը մեռնելէն ետև անկէ փոխադրեց զինքը այս երկիրը, ուր դուք կիսնա կը բնակիք: 5 – Եւ ասոր մէջ անոր ժառանգութիւն չտուաւ, ոչ ալ ոտքի քայլ մը տեղ, բայց խոստացաւ որ ասիկա իրեն ապ իրրև կալուածք, և իրմէ ետև իր սերունդին, երբ դեռ ինք որդի չունէր: 6 – Եւ Աստուած այսպէս խօսեցաւ, թէ անոր սերունդը օտար երկրի մէջ պանդխտ պիտի ըլլայ, ու պիտի ծառայեցնեն զանոնք և չարչարեն չորս հարիւր տարի: 7 – Եւ այն ազգը, որուն պիտի ծառայեն, ես պիտի դատեմ, ըսաւ Աստուած, և անկէ ետև պիտի ելլեն ու այս տեղս պաշտեն: 8 – Եւ անոր թլփատութեան ուխտը տուաւ, ու ետքը Աբրահամ Իսահակը ծնաւ, և թլփատեց զանոնք ութերորդ օրը. Իսահակ ալ Յակոբը ծնաւ, Յակոբ ալ՝ տասներկուս Հայրապետները: 9 – Եւ նահապետները Յովսէփի վրայ նախանձելով՝ Եգիպտոս գերեվարելու ծախեցին. բայց Աստուած անոր հետ էր, 10 – Ու փրկեց զանոնք իր ամէն նեղութիւններէն, և անոր շնորհք ու իմաստութիւն տուաւ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին առջեւ. ան ալ զանոնք իշխան դրաւ Եգիպտոսի ու իր բոլոր տանը վրայ: 11 – Ու Եգիպտոսի և Քանանայ բոլոր երկրին վրայ սով մը եկաւ ու մեծ նեղութիւն, և մեր հայրերը ուտելիք չէին գտներ: 12 – Եւ Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը գտնուի, առաջին անգամին մեր հայրերը ղրկեց: 13 – Եւ երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչցուց ինքզինք. ու Յովսէփի ազգը փարաւոնի յայտնի եղաւ: 14 – Եւ Յովսէփ ղրկեց՝ ու կանչեց իր հայրը Յակոբը ու բոլոր ազգատոհմը, եօթանասունհինգ հոգի: 15 – Եւ Յակոբ Եգիպտոս իջաւ, ու մեռաւ ինք ու մեր հայրերը. 16 – Եւ Սիւքեմ տարուելով՝ այն գերեզմանին մէջ



դրուեցան, զոր Աբրահամ արծաթի դնով ծախու առեր էր Սիւքեմի հօրը Եմմորի որդիներէն: 17 – Ու երբ մօտեցաւ խոստմունքին ատենը, զոր Աստուած երդումով խոստացեր էր Աբրահամի, ժողովուրդը աճեցաւ ու շատցաւ Եգիպտոսի մէջ, 18 – Մինչեւ ուրիշ թագաւոր մը եկաւ, որ Յովսէփը չէր ճանչնար: 19 – Անիկա հնարք բանեցուց մեր ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը, մինչեւ անգամ անոնց տղաքը դուրս ձգել ըսելով, որպէս զի չապրին: 20 – Այն ժամանակ Մովսես ալ ծնաւ, և Աստուծոյ առջեւ գեղեցիկ էր, որ իր հօրը տունը մեծցաւ եռք ամիս: 21 – Ու երբ անիկա դուրս ձգուեցաւ, Փարաւոնի աղջիկը զանիկա վերցուց, և իրեն իրրև որդի մեծցուց: 22 – Ու Մովսես Եգիպտացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործերովը: 23 – Ու երբ քառասուն տարեկան եղաւ, իր սիրտը ինկաւ իր եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, այցելութիւն ընել: 24 – Ու Իսրայէլացիներէն մէկը հարստահարուած տեսնելով պաշտպանեց, և զրկուածին վրէժը առաւ՝ այն Եգիպտացին սպանելով: 25-Կը կարծէր թէ իր եղբայրները պիտի իմանային որ Աստուած իր ձեռքով անոնց ազատութիւն պիտի տար, բայց անոնք չիմացան: 26 – Ու հետեւեալ օրը անոնց դիմաց ելաւ երբ կը կռուէին, և խաղաղութիւն ընելու սիրեց զանոնք՝ ըսելով, Մարդիկ, դուք եղբայրներ էք, ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք: 27 – Բայց ան որ ընկերը կը զրկէր, մերժեց զանիկա, ու ըսաւ, Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ. 28-Չե՞ս ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ Եգիպտացին սպաննեցիր: 29 – Եւ Մովսես այս խօսքին վրայ փախաւ, ու Մադիամու երկրին մէջ պանդխտ եղաւ, ուր երկու որդի ծնաւ: 30 – Եւ քառասուն տարի անցնելէն ետև՝ Սինա լեռանը անապատին մէջ Տէրոջը հրեշտակը երեւցաւ անոր մորենիի կրակի բոցով: 31 – Մովսես ալ երբ տեսաւ, զարմացաւ այն տեսիլքին վրայ, ու երբ մօտեցաւ զննելու, Տէրոջը ձայնը եկաւ անոր որ ըսէր, 32 – Ես եմ քու հայրերուդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը. Մովսես ալ վախէն դողալով չէր համարձակեր զննել: 33 – Եւ Տէրը ըսաւ անոր, Ոտքերուդ կօշիկները հանէ, վասն զի այդ տեղը սուրբ գետնի կայներ ես՝ սուրբ երկիր է: 34 – Յիրաւի Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը տեսայ, ու լսեցի անոնց հառաչանքը, և իջայ զանոնք ազատելու. և հիմա եկուր քեզ Եգիպտոս ղրկեմ: 35 – Այն Մովսէսը զոր ուրացան ու կ'ըսէին, Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր դրաւ, Աստուած զանիկայիշխան և փրկիչ ղրկեց այն հրեշտակին ձեռքով՝ որ մորենին մէջ անոր երեւցաւ: 36-Անիկա հանեց զանոնք, հրաշքներ ու նշաններ ընելով Եգիպտոսի երկրին ու Կարմիր ծովուն մէջ, և անապատին մէջ քառասուն տարի: 37-Այս Մովսէսն է որ ըսաւ Իսրայէլի որդիներուն, Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինձի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի, անոր մտիկ ըրէք: 38 – Այսիկա՛ն է որ անապատը ժողովքին մէջ էր՝ Սինա լեռան վրայ իրեն խօսող հրեշտակին հետ ու մեր հայրերուն հետ, որ կենդանի պատգամներ առաւ մեզի տալու. 39 – Որուն մեր հայրերը չուզեցին հնազանդ ըլլալ, հապա մերժեցին և իրենց սիրտերովը Եգիպտոս դարձան, 40 – Եւ ըսին Ահարոնի, Մեզի աստուածներ շինէ, որպէս զի մեր առջեւէն երթան. քանզի այն Մովսէսը որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց, չենք գիտեր թէ ինչ եղաւ անոր: 41 – Եւ այն օրերը ոսկի մը շինեցին, ու կուռքին զոհ մատուցին, և իրենց ձեռքերուն գործերովը կը զուարճանային: 42 – Աստուած ալ երես դարձուց, ու թողուց զանոնք որ երկինքի զօրքը պաշտեն. ինչպէս գրուած է մարգարէներուն գիրքին մէջ, Մի՞թէ անապատին մէջ քառասուն տարի զոհեր ու պատարագներ մատուցիք ինձի, ով Իսրայէլի տուներ. 43 – Եւ Մողոքի վրանը տարէք ու ձեր Հեռիփա աստուածային աստղը, այն պատկերները զորոնք շինեցիք անոնց երկրպագութիւն ընելու. ես ալ ձեզ Բաբելոնէ անդին պիտի փոխագրեմ: 44 – Վկայութեան խորանը անապատին մէջ մեր հայրերուն հետ էր, ինչպէս Մովսէսի հետ խօսողը հրամայեց բրած որ տեսած օրինակին պէս շինէ զանիկա. 45-Զոր մեր հայրերն ալ յաջորդաբար առնելով՝

Յեռաւի հետ բերին զնիկա այն ազգեգերուն կալուածքը, զորոնք Աստուած վաճառեց մեր հայրերուն առջեւէն մինչեւ Դաւիթի օրերը, 46 – Որ Աստուծոյ առջեւ շնորհք գտաւ, և ուզեց որ Յակոբի Աստուծոյն բնակարան մը գտնէ։ 47 – Ու Սողոմոն անոր տուն մը շինեց։ 48 – Սակայն Բարձրեալը ձեռքով շինուած տաճարներու մէջ չբնակիր, ինչպէս մարգարէն կ'ըսէ, 49 – Երկինք իմ աթոռս է, ու երկիր իմ ոտքերուս պատառանդանն է. ո՞րպիսի տուն պիտի շինէք ինծի, կ'ըսէ Տէրը, կամ ինչ պիտի ըլլայ իմ հանգստութեան տեղը. 50 – Չէ՞ որ այս ամէնը իմ ձեռքս շիներ է։ 51 – Ով խստապարանոցներ ու սրտով և ականջով չթլփատուածներ, դուք ամէն ատեն Հոգւոյն Սրբոյ հակառակ կը կենաք, ինչպէս ձեր հայրերը՝ այնպէս ալ դուք։ 52 – Մարգարէներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրերը, ու սպաննեցին զանոնք որ առաջուբնէ պատմեցին այն Արդարին գալուստն համար, որուն դուք հիմա մատնիչները և սպաննողները եղաք. 53 – Դուք որ օրէնքը առիք հրեշտակներուն միտակարարութիւնովը ու չպահեցիք։

54 – Եւ անոնք այս բաները լսելով՝ սիրտերնուն մէջ կը կատղէին ու ակռաներնին անոր վրայ կը կրճտէին։ 55 – Բայց անիկա Հոգւով Սրբով լեցուած՝ երկինքը նայեցաւ և տեսաւ Աստուծոյ փառքը, ու Յիսուսն ալ որ Աստուծոյ աջ կողմը կայներ էր, և ըսաւ, Ահա կը տեսնեմ երկինքը բացուած, ու Որդին մարդոյ՝ Աստուծոյ աջ կողմը կայնած։ 56- Իսկ անոնք մեծաձայն աղաղակելով՝ ականջներնին գոցեցին, և ամէնը մէկէն վազեցին անոր վրայ. 57 – Ու քաղաքէն դուրս հանելով՝ կը քարկոծէին զնիկա. և վկաները իրենց հանդերձները պահ կը դնէին երիտասարդի մը ոտքերուն քով, որ Սօղոս կ'ըսուէր։ 58-Եւ կը քարկոծէին Ստեփանոսը, որ աղօթք կ'ընէր ու կ'ըսէր, Տէր Յիսուս, ընդունէ իմ հոգիս։ 59 – Ու ծունկի վրայ գալով բարձրաձայն աղաղակեց, Տէր, այս մեղքը մի սեպեր ասոնց. և զայս ըսելով՝ ննջեց։ Սօղոս ալ կամակից էր անոր սպանդնուելուն։

## ԳԼ. Ը

Եւ այն օրը մեծ հալածում եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին վրայ, և առաքեալներէն զատ ամէնն ալ ցիրուցան եղան Հրէաստանի ու Սամարիայի երկիրներուն մէջ։ 2 – Եւ աստուածավախ մարդիկ Ստեփանոսը վերցուցին, ու անոր վրայ մեծ ողբ ըրին։ 3 – Բայց Սօղոս եկեղեցիին չար վնաս կուտար, տուներէն կը մտնէր, այրեր ու կիներ կը քաշէր՝ բանտ դնել կուտար։

4 – Եւ այն ցիրուցան եղածները կը պտըտէին ու խօսքը կը քարոզէին։ 5 – Փիլիպոս ալ Սամարիայի մէկ քաղաքը իջնելով՝ Քրիստոսը կը քարոզէր անոնց։ 6 – Եւ ժողովուրդները միաբան Փիլիպոսի բսածներուն ուշադրութիւն կուտային՝ լսելով ու տեսնելով այն նշանները զորս կ'ընէր։ 7 – Վասն զի շատ դեւահարներէն պղտիկ ոգիները մեծաձայն աղաղակելով կ'ելլէին։ 8 – Եւ շատ անդամալոյծներ ու կաղեր կը բժշկուէին։ 9 – Ու մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքին մէջ։ Բայց Սիմոն անունով մարդ մը կար, որ առաջուընէ այն քաղաքին մէջ մոգութիւն կընէր, ու Սամարացւոց ազգը կ'ապշեցնէր, իրեն համար ըսելով թէ մեծ մէկն է. 10 – Որուն ուշադրութիւն կուտային ամէնն ալ, պզտիկէն մինչեւ մեծը, և կ'ըսէին, Այրկա Աստուծոյ մեծ [բաւած] զօրութիւնն է։ 11 – Շատ ժամանակէ ի վեր կախարդութիւններով զանոնք ապշեցնելուն համար՝ իրեն ուշադրութիւն կուտային։ 12 – Բայց երբ Փիլիպոսի հաւատացին, որ Աստուծոյ թագաւորութեանը ու Յիսուս Քրիստոսի անունը վրայով կը բարոզէր, կը մկրտուէին թէ՛ այրեր և թէ՛ կիներ։ 13 – Եւ Սիմոն ինք ալ հաւատաց, ու մկրտուելով՝ միշտ Փիլիպոսի հետ էր. և տեսնելով այն նշանները ու մեծ զօրութիւնները որ կ'ըլլային՝ կը զարմանար։ 14 – Իսկ Երուսաղէմի մէկ եղող առաքեալները երբ լսեցին թէ Սամարացիք Աստուծոյ խօսքը ընդուներ են, Պետրոսը ու Յովհաննէսը անոնց ղրկեցին. 15 – Որոնք իջնելով՝ աղօթք ըրին անոնց համար որպէս զի Սուրբ Հոգին առնեն. 16 – (Վասն զի դեռ անոնց



մէկ՛ուն վրայ իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտուած էին.) 17 – Այն ատեն ձեռքերնին դրին անոնց վրայ, ու Սուրբ Հոգին կ'առնէին։ 18 – Երբ տեսաւ Սիմոն թէ առաքեալներուն անոնց վրայ ձեռք դնելովը Սուրբ Հոգին կը տրուի, անոնց առակ մատուց ու ըսաւ, 19 – Ինծի ալ այս իշխանութիւնը տուէք, որպէս զի որու՛ը վրայ ձեռք դնեմ՝ անիկա Սուրբ Հոգին առնէ։ 20 – Բայց Պետրոս ըսաւ անոր, Քու արծաթդ քեզի հետ թող կորսուի, վասն զի Աստուծոյ պարգեւը կարծեցիր թէ առակով կ'առնուի։ 21 – Դուն այդ բանին մէջ մաս ու բաժին չունիս, վասն զի քու սիրտդ Աստուծոյ առջեւ շիտակ չէ։ 22 – Ուստի այդ քու չարութենդ ղեղջի եւ Աստուծոյ աղաչէ, թերեւս ներուի քեզի քու սրտիդ ծոր խորհուրդը։ 23 – Վասն զի ես քեզ մաղձի դառնութեան մէջ և անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ։ 24 – Սիմոն պատասխան տուաւ ու ըսաւ, Դուք ինծի համար ազօթք ըրէք Տէրոջը, որպէս զի այդ ձեր բսածներէն բան մը իմ վրաս չգայ։ 25 – Անոնք ալ վկայութիւն տալով Տէրոջը խօսքը խօսեցին եւ քարձան Երուսաղէմ՝ և Սամարացւոց շատ գեղերուն մէջ աւետարանը քարոզեցին։

26 – Եւ Տէրոջը հրեշտակը Փիլիպոսի խօսեցաւ՝ ըսելով, Ելիր ու գնա դէպ ի հարաւային կողմը, այն ճամբան, որ Երուսաղէմէ դէպ ի Գազա կ'իջնէ, որ անապատ տեղ մըն է։ 27 – Ան ալ ելաւ գնաց. և ահա Եթովպացի նեռքինի մարդ մը, Եթովպացւոց Կանդակա թագուհիին մէկ զօրաւորը, որ անոր ըոլոր գանձերուն վրայ էր, որ Երուսաղէմ երկրպագութիւն ընելու. 28 – Կ'անէր ետ կը դառնար, ու իր կառքը նստած Եսայի մարգարէին գիրքը կը կարդար։ 29 – Եւ Հոգին ըսաւ Փիլիպոսի, Մօտեցիր և այդ կառքին քով գնա։ 30 – Փիլիպոս ալ վազելով մօտ գնաց, ու մարիկ կ'ընէր որ Եսայի մարգարէին գիրքը կը կարդար, և ըսաւ, Կարդացածդ կը հասկնա՞ս արդեօք։ 31 – Ան ալ ըսաւ, Ինչպէս կրնամ հասկնալ, եթէ մէկը ինծի չառաջնորդէ. ու աղաչեց Փիլիպոսի, որ ելլէ իր քով նստի։ 32 – Եւ գիրքին գլ կարդացած տեղը այս էր. Ոչխարի պէս մորթուելու տարուեցաւ, ու իր խուզողին առջեւ մնացած էշոշ գառնուկի պէս՝ այնպէս իր բերանը չբանար. 33-Իր խոնարհութեանը մէջ իր դատաստանը վերցուեցաւ, և անոր ազգաւորմը ո՞վ պիտի պատմէ. վասն զի անոր կեանքը երկրէ կը վերցուի։ 34 – Ներքինին պատասխան տուաւ Փիլիպոսի ու ըսաւ, Կ'աղաչեմ քեզի, մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ զայս. իրե՞ն համար թէ ուրիշի մը համար։ 35 – Իսկ Փիլիպոս իր բերանը բացաւ, և գիրքին այս խօսքէն սկսելով՝ Յիսուսը քարոզեց անոր։ 36 – Ու երբ էրէնց ճամբան կ'երթային, ջուրի մը քով եկան. ու ըսաւ ներքինին, Ահա ջուր, ո՞րչափ բան կու կ'արգիլէ մկրտուիլէ։ 37 – [Եւ Փիլիպոս ըսաւ անոր, եթէ քու բոլոր սրտիդ կը հաւատաս՝ կարելի է. անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է։] 38 – Ու հրաման ըրաւ որ կառքը կայնեցնեն. և երկուքն ալ ջուրը իջան, Փիլիպոս ու ներքինին, և մկրտեց զանիկա։ 39 – Ու երբ ջուրէն դուրս ելան, Տէրոջը Հոգին յափշտակեց Փիլիպոսը, և ա՛լ ներքինին զանիկա չտեսաւ, իր ճամբան կ'երթար ուրախութեամբ։ 40 – Բայց Փիլիպոս Ազովտոսի մէջ գտնուեցաւ. ու պտըտելով բոլոր քաղաքներուն աւետարան կը քարոզէր, մինչեւ ինք Կեսարիա եկաւ։

## ԳԼ. Թ

Բայց Սօղոս տակաւին Տէրոջը աշակերտներուն դէմ՝ սպառնալիք ու մահ փչելով՝ քահանայապետին քով գնաց. 2 – Եւ անկէ թուղթեր ուզեց Դամասկոս ժողովարանները գրելու, որպէս զի եթէ այն ճամբուն հետեւողներ գտնէր ըլլայ, այրեր կամ կիներ, կապած երուսաղէմ բերէ։ 3 – Ու երբ կ'երթար ու Դամասկոսի մօտենար, յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս մը փայլատակեց. 4 – Եւ ինք գետինը իյնալով՝ ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն, Սաւո՛ղ, Սաւո՛ղ, ինչո՞ւ զիս կը հալածես։ 5 – Եւ անիկա ըսաւ, Ո՞վ ես դուն, Տէր. և Տէրը ըսաւ, Ես եմ Յիսուսը զոր դուն կը հալածես. *դժուար

*Որմէ կանչին

քան է քեզի խթանել դէմ կեց զօրենել : 6 – Ան ալ գողով ու ապշու-
թեամբ ըսաւ, Տէր , ինչ կ'ուզես որ ընեմ: 7 – Եւ Տէրը ըսա՝ անոր, Ելիր
ու քաղաքը մտիր, և քեզի պիտի ըսուի ինչ որ պարտ է ընել . իսկ այն
մարդիկը որոնք իրեն հետ կ'երթային, ապշած կեցեր էին , ձայնը միայն կը
լսէին, բայց մէկը չէին տեսներ : 8 – Եւ Սօղոս գետնէն ելաւ, ու բաց աչ-
քերով մէկը չէր տեսներ . ուստի ա-
նոր ձեռքէն բռնեցին ու Դամասկոս
մտցուցին : 9 – Եւ երեք օր կեցաւ ա-
նանց տեսնելու, և ոչ կերաւ , ոչ ալ
խմեց:

10-Ու Անանիա անունով աշակերտ
մը կար Դամասկոսի մէջ . և Տէրը տե-
սիլքի մէջ անոր ըսաւ, Անանիա : ան
ալ ըսաւ, Տէր, ահա հո՛ ես: 11 – Եւ
Տէրը ըսա՝ անոր , ելիր ու գնա այն
փողոցը որ Ուղիղ կ'ըսուի, և հան Յու-
դայի տանը մէջ փնտռէ Սօղոս անու-
նով Տարսոնացի մը. վասն զի ահա ա-
նիկա աղօթք կ'ընէ. 12 – Ու տեսիլքի
մէջ մարդ մը տեսաւ Անանիա անու-
նով ներս մտած և ձեռքը իր վրայ
դրած, որպէս զի տեսնէ: 13 – Անանիա
ալ պատասխան տուաւ, Տէր, շատերէ
լսեցի այն մարդուն համար թէ ո՛ր-
չափ չարիքներ ըրաւ քու սուրբերուդ
Երուսաղէմի մէջ . 14 – Եւ հոս ալ
քահանայապետներէն իշխանութիւն
ունի կապելու այն ամէնը որոնք քու
անունդ կը կանչեն : 15 – Եւ Տէրը ը-
սաւ անոր, Գնա դուն, վասն զի անի-
կա ինծի ընտիր աման մըն է , իմ ա-
նունս կրելու հեթանոսներուն ու թա-
գաւորներուն և Իսրայէլի որդիներուն
առջև . 16 – Քանզի ես անոր պիտի
ցուցնեմ թէ ո՛րչափ պէտք է իրեն իմ
անուանս համար նեղութիւն կրել :
17 – Եւ Անանիա գնաց ու այն տունը
մտաւ, և ձեռքերը անոր վրայ դնելով
ըսաւ , Սաւուղ եղբայր , Տէրը զիս
ղրկեց, այն Յիսուսը որ ճամբուն մէջ
քեզի երեցաւ երբ կուգայիր , որպէս
զի տեսութիւնդ առնաս, ու Հոգւով
Սրբով լեցուիս : 18 – Եւ շուտ մը ա-
նոր աչքերէն թեփերու պէս բաներ ին-
կան. և իսկոյն տեսաւ ու ելաւ մկրտու-
եցաւ. 19 – Եւ կերակուր ուտելով
ոյժ վրան եկաւ, *ու քանի մը օր Դա-

*Ոմանք, ու Սաւուղ

մասկոսի մէջ եղող աշակերտներուն
հետ կեցաւ :

20 – Եւ անմիջապէս ժողովարան-
ներուն մէջ կը քարոզէր *Յիսուսը ,
թէ անիկա է Աստուծոյ Որդին : 21 –
Եւ ամէն լսողները մեծապէս զարմա-
ցեր էին, ու կ'ըսէին . Արդեօք ան չէ՞
որ Երուսաղէմի մէջ կը կործանէր զա-
նոնք որ այս անունը կը կանչէին . և
հոս ալ այն բանին համար եկած էր ,
որպէս զի զանոնք կապած՝ քահանա-
յապետներուն տանի : 22 – Բայց Սօ-
ղոս ա՛լ աւելի կը զօրանար , և Դա-
մասկոսի մէջ բնակող Հրեաները կը
պապանձեցնէր , ապացուցանելով թէ
Քրիստոսը սիկա է: 23 – Ու շատ օրեր
անցնելէն ետքը Հրեաները խորհուրդ
բրին որ զանիկա սպաննեն : 24 – Բայց
Սօղոսի յայտնուեցաւ անոնց նենգու-
թիւնը. և ցորեկ ու գիշեր դռները կը
սպասէին, որպէս զի զանիկա սպաննեն:
25 – Իսկ աշակերտները գիշերով ա-
ռին զանիկա, ու զամբիւղով մը կա-
խելով պատէն վար իջեցուցին:

26 – Երբ Սօղոս Երուսաղէմ եկաւ,
կը ջանար աշակերտներուն յարիլ ,
բայց ամէնն ալ կը վախային անկէ ,
չհաւատալով թէ անիկա աշակերտ
էր : 27 – Բայց Բառնաբաս զանիկա
առնելով՝ առաքեալներուն տարաւ ,
ու պատմեց անոնց թէ ինչպէս ճամ-
բուն վրայ Տէրը տեսաւ , և թէ անոր
հետ խօսեցաւ, և թէ ինչպէս Դամաս-
կոսի մէջ համարձակ քարոզեց Յիսու-
սի անունովը : 28 – Ու Երուսաղէմի
մէջ անոնց հետ կը մնար ու կ'երթար՝
Տէր Յիսուսի անունովը համարձակ
քարոզելով : 29 – Նաև †Հեղլենացե-
ւոց դէմ կը խօսէր և վիճաբանութիւն
կ'ընէր. անոնք ալ կը փնտռէին զա-
նիկա սպաննել : 30 – Իսկ եղբայրները
իմանալով՝ զանիկա Կեսարիա իջեցու-
ցին, և անկէ Տարսոն ղրկեցին զանիկա:

31 – Ա՛յն ատեն եկեղեցիները բոլոր
Հրէաստանի և Գալիլեայի ու Սամա-
րիոյի մէջ խաղաղութիւն ունեցան ,
և շինութիւն կ'ընդունէին, ու Տէրոջը
երկիւղովը և Հոգւոյն Սրբոյ մխիթա-
րութիւնովը քալելով կ'աճէին :

32 – Ու երբ Պետրոս ամէն տեղ կը
պտըտէր, Լիւդդեա բնակող սուրբե-

*Ոմանք, Քրիստոսը
†Այլինչ, Հեղլենախօս Հրէից



րուն քով ալ իջաւ: 33-Եւ հոն մարդ
մը գտաւ , որուն անունը Ենէաս էր ,
ութ տարիէ ի վեր մահիճը պառկած
անդամալոյծ . 34 – Եւ ըսաւ անոր
Պետրոս, Ենէաս, Յիսուս Քրիստոս քեզ
կը բժշկէ. ելիր ու քու անկողինդ շիտա-
կէ . ան ալ շուտ մը ելաւ : 35 – Եւ
Լիւդդեայի ու Սարոնի մէջ բնակող-
ները ամէնը զանիկա տեսան, ու Տէ-
րոջը դարձան : 36 – Եւ Յոպպէի մէջ
աշակերտ եղած կին մը կար , անունը
Տաբիթա . (որ թարգմանուելով Ա՛յ-
ծեմիկ կ'ըսուի .) սիկա լեցուած էր
բարի գործերով ու ողորմութիւննե-
րով զորանք կընէր: 37 – Ու եղաւ
որ այն օրերը կին հիւանդացաւ ու մե-
ռաւ: լուացին զանիկա և վերի սեն-
եակ մը դրին: 38 – Ու Լիւդդեա Յոպ-
պէի մօտ էր . ուստի աշակերտները
լսելով թէ Պետրոս հոն է , անոր ե-
կու մարդ ղրկեցին, աղաչելով որ չու-
շանայ իրենց գալու : 39 – Պետրոս ալ
ելաւ անոնց հետ եկաւ. ու երբ եկաւ,
վերի սենեակը հանեցին զանիկա . և
բոլոր որբևայրիները անոր բողոքները
կայնեցան, կու լային ու կը ցուցնէին
այն բաճկոնները և հանդերձները *ո-
րոնք կ'ընէր Ա՛յծեմիկ՝ քանի որ իրենց
հետ էր: 40 – Պետրոս ալ ամէնը դուրս
հանելով՝ ծունկի վրայ եկաւ ու աղօթք
ըրաւ , և դէպ ի մարմինը դառնալով՝
ըսաւ, Տաբիթա , ելիր կայնէ . ան ալ
իր աչքերը բացաւ, ու Պետրոսը տես-
նելով՝ նըս՝ շիտակ նստաւ : 41 – Ինք
ալ ձեռքը անոր տուաւ , ու վերցուց
զանիկա, և սուրբերը ու որբևայրները
կանչելով՝ անոնց առջև աղջ կայնեցուց
զանիկա: 42 – Եւ այս բանը բոլոր Յոպ-
պէի մէջ իմացուեցաւ, ու շատերը Տէ-
րոջը հաւատացին : 43 – Եւ եղաւ որ
ինչ շատ օրեր Յոպպէ կեցաւ Սիմոն
անուանով կաշի բանողի մը քով:

## Գլ. Ժ

Կեսարիայի մէջ մարդ մը կար Կոռ-
նելիոս անունով, Իտալիական†
լեգէոնի ըսուած գունդէն. 2 – Բարեպաշտ
ու ատաուածավախ իր բոլոր տունովը,
որ ժողովուրդին շատ ողորմութիւններ
կու տար , և ամէն ատեն Աստուծոյ
աղօթք կ'ընէր : 3 – Անիկա օրուան
ժամ իննին տեսիլքի մէջ
Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ,

*Ոմանք ։'ասելնէն, Անիկա քեզի պիտի
ըսուցէ ինչ որ պարտիս ընել,
†Ոմանք, Կոռնելիոսի
‡Ոմանք, իրեն իջաւ

Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն. 20 – Ուստի ելիր իջիր, և անոնց հետ գնա առանց խղճահարութեան, վասն զի ես զրկեցի զանոնք : 21 – Պետրոս ալ *այն մարդոց քով իջնելով՝ ըսաւ, Ահա ես եմ անկիա զոր դուք կը փնտռէք. ի՞նչ բանի համար եկած էք: 22- Անոնք ալ ըսին, Կառնելիոս հարիւրապետը, արդար և աստուածավախ մարդ, լսելը Հրեից ազգին վկայուած, սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ, որ քեզ իր տունը կանչէ և քեզմէ խօսքեր լսէ: 23-Ան տեղ ներս կանչեց զանոնք և իր քով մնոր դրաւ :

Ու հետևեալ օրը Պետրոս ելաւ, անոնց հետ գնաց, և քանի մըն ալ Յոպպէէ եղող եղբայրներէն իրեն հետ գացին: 24 – Ու հետևեալ օրը Կեսարիա մտան. Կառնելիոս ալ իր ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝ անոնց կը սպասէր: 25 – Ու երբ Պետրոս ներս կը մտներ, Կառնելիոս անոր դիմաց ելաւ , ու անոր ոտքը իյնալով երկրպագութիւն կ'ընէր : 26 – Բայց Պետրոս զանիկա կանգնեցուց ու ըսաւ, Ելիր կայնէ . ես ինքնս ալ մարդ եմ : 27 – Եւ անոր հետ խօսակցելով ներս մտաւ, ու հոն շատ մարդիկ ժողվուած գտաւ . 28 – Եւ ըսաւ անոնց , Դուք գիտէք թէ ի՛նչպես ապօրինաւոր բան է Հրեայ մարդու մը օտարազգիի հետ հաղորդակցութիւն ընելը կամ անոր մտնելնոյը. բայց Աստուած ինծի ցուց որ մարդոմէ մէկո՛ւն պիղծ կամ անմաքուր չըսեմ : 29 – Անոր համար ես ալ ա՛ր կանչուելուդ , առանց դէմ խօսելու եկայ. բայց հիմա կը հարցնեմ, ի՞նչ բանի համար զիս կանչեցիք: 30- Կառնելիոս ալ ըսաւ , Չորս օր առաջ մինչև այս ժամը ծոմ կը պահէի , ու ժամը իննին տան մէջ աղօթք կ'ընէի. և ահա փայլուն հանդերձներով մարդ մը կայնեցաւ առջևս ու ըսաւ , 31 – Կառնելիոս, քու աղօթքդ լսուեցաւ , և քու ողորմութիւններդ Աստուծոյ առջև յիշուեցան. 32 – Ուստի մարդ զրկէ Յոպպէ , ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կ'ըսուի . անիկա ծովեզրն մեռ Սիմոն անուանով կաշի բանող մը տանը մէջ իբրև հիւր կը կենայ. որ երբ գայ , քեզի պիտի խօսի : 33 – Ուստի անմիջապես մարդիկ զրկեցի քեզի, դուն ալ ազնիկ ըրիր որ եկար . և հիմա մենք ամենս Աստուծոյ առջև կեցեր ենք՝ լսելու այն ամէն բաները որ քեզի Աստուծմէ հրամայուած են քեզի:

34 – Պետրոս իր բերանը բացաւ ու ըսաւ, Ճշմարտութեամբ կը հասկնամ որ Աստուծոյ քով աչառութիւն չկայ. 35 – Հապա ամէն ազգի մէջ ան որ անկէ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ , անոր ընդունելի է : 36 – Ան խօսքը ղրկեց Իսրայելի որդիներուն՝ երկեց Յիսուս Քրիստոսի ձեռքով . (ասիկա է ամէնուն Տէրը.) 37 – Դուք ազգով գիտէք այն բանը , որ բոլոր Հրեաստանի մէջ եղաւ Գալիլեայէ սկսած , այն մկրտութենէն հետո զոր Յովհաննէս քարոզեց. 38 – Յիսուսը որ Նազարեթէ էր , զոր Աստուած օծեց Սուրբ Հոգիով և զօրութիւնով , որ պտըտեցաւ բարիք ընելով ու Աստուածպէտ բոլոր տանջուածները բժշկելով, քանզի Աստուած իրեն հետ էր : 39 – Եւ մենք վկայ ենք այն ամէն բաներուն զորոնք ըրաւ Հրեաստանի երկրին մէջ ու Երուսաղէմի մէջ , զոր փայտէն կախած սպաննեցին ալ : 40 – Աստուած զանիկա երրորդ օրը յարուցց, և յայտնի ըրաւ զանիկա , 41 – Ոչ թէ բոլոր ժողովուրդին , հապա մեզի, առաջուընէ Աստուծմէ վկայ ըլլալու ընտրուածներուս , որ իրեն հետ կերանք ու խմեցինք ալ անոր մեռելներէն յարութիւն առնելէն ետքը: 42 – Եւ մեզ պատուիրեց մեզի՝ որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք, թէ անիկա է Աստուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մեռելներուն Դատաւորը: 43 Անոր կը վկայեն բոլոր մարգարէները, թէ ամէն ըրեն հաւատացողները իր անունով մեղքերու թողութիւն կ'առնեն :

44 – Ու երբ Պետրոս այս խօսքերը կը խօսէր , Հոգին Սուրբ իջաւ ամենուն վրայ՝ որոնք խօսքը կը լսէին : 45 – Եւ թլփատուածներէն եղող հաւատացեալները , որոնք Պետրոսի հետ եկած էին , զարմացան որ հեթանոսներուն վրայ ալ Հոգւոյն Սրբոյ պարգեւը կը թեցուէր: 46-Քանզի կը լսէին անոնցմէ որ ա՜րէն լեզուներով կը խօսէին , և զԱստուած կը փառաւորէին : 47 – Ան ատեն Պետրոս պատասխան տուաւ , Կրնա՞յ մէկը ջուրը արգիլել որ ասոնք չմկրտուին, որոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցին մեզի պէս : 48 – Ու հրաման ըրաւ որ Տէրոջը անունովը մկրտուին. այն ատեն իրեն աղաչեցին որ քանի մը օր հոն մնայ :

## Գլ. ԺԱ.

Եւ առաքեալները ու եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին , լսեցին որ հեթանոսներն ալ Աստուծոյ խօսքը ընդուներ են : 2 – Ու երբ Պետրոս Երուսաղէմ ելաւ , թլփատուածներէն եղողները անոր հետ կը վիճէին, 3 – Ու կ'ըսէին թէ Դուն անթլփատ մարդոց քով մտար, և անոնց հետ հաց կերար: 4 – Պետրոս ալ սկսաւ բանը կարգով պատմել անոնց , ու ըսաւ , 5 – Ես Յոպպէ քաղաքը աղօթք կ'ընէի , ու մտքի յափշտակութեան մէջ տեսիլք մը տեսայ. ամէն մի մեծ կտաւի պէս՝ չորս ծայրերէն երկինքէն կախուած իջաւ , ու մինչև ինծի հասաւ . 6 – Որուն վրայ աչքս անկեր կը նայէի , և տեսայ երկրի չորքոտանիները ու գազանները և սողուններն ու երկինքի թռչունները: 7 – Եւ ձայն մը լսեցի որ կ'ըսէր ինծի, Ելիր, Պետրոս, մորթէ ու կեր: 8 – Բայց ես ըսի, Ջա՛ւ լիցի, Տէր, վասն զի պիղծ կամ անմաքուր բան մը ամենևին մտած չէ իմ բերանս : 9 – Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ այն ձայնը երկինքէն, Ջայն որ Աստուած մաքրեց, դուն պիղծ մի սեպեր : 10 – Ա՛յս երեք անգամ եղաւ , ու նորէն բոլորը երկինքը քաշուեցաւ : 11 – Եւ ա՛յս իսկայն երեք մարդ կեսարիայէ ինծի ղրկուած՝ եկան իմ եղած տանս առջև կեցան : 12 – Հոգին ալ ինծի ըսաւ որ անոնց հետ երթամ առանց խղճահարութեան . այս վեց եղբայրներն ալ ինծի հետ գացին, ու մտանք այն մարդուն տունը : 13 – Եւ անիկա մեզի պատմեց թէ ի՛նչպես իր տանը մէջ հրեշտակը տեսաւ, որ կայներ էր և իրեն կ'ըսէր , Մարդ ղրկէ Յոպպէ , ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կը կոչուի . 14 – Ան քեզի խօսքեր պիտի խօսի , որոնցմով փրկուելու դուն և քու բոլոր տունդ : 15 – Ու երբ սկսայ խօսիլ , Հոգին Սուրբ անոնց վրայ իջաւ , ինչպես առաջուընէ մեր վրայ ալ : 16 – Ան ատեն յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր , Յովհաննէս ջրով մկրտեց , բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք : 17 – Ուստի եթէ Աստուած միևնոյն շնորհքը տուաւ անոնց , ինչպէս մեզի ալ , երբ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացին , ես ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ դէմ դնել : 18 – Ա՛յս բաները լսելով՝ ձայներնին կարեցին, և գԱստուած կը փառաւորէին ու կ'ըսէին , Ուրեմն Աստուած հեթանոսներուն ալ կեանքի համար ապաշխարութիւն տուաւ :

19 – Եւ Ստեփանոսի մահուանը վրայ եկած նեղութենէն ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպրոս և Անտիոք հասան , ու մէկ՛էն Աստուծոյ խօսքը չէին խօսեր , միայն Թէ Հրեաներուն : 20 – Բայց անոնցմէ ոմանք Կիպրացի և Կիւրենացի մարդիկ էին , որոնք երբ Անտիոք մտան , *Հելլենացիներուն հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարոզելով : 21 – Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր , և բազմութիւ մարդիկ հաւատալով Տէրոջը դարձան : 22 – Եւ անոնց վրայով այս լուրը Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ. ու Բառնաբասը ղրկեցին որպէս զի մինչև Անտիոք երթայ . 23 – Որ երբ եկաւ և Աստուծոյ շնորհքը տեսաւ՝ ուրախացաւ, ու կը յորդորէր ամէնն ալ որ յամառ սրտով Տէրոջը հետ կպոլա՜ի մնան. 24 – Քանզի ինք բարի մարդ էր, ու Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն . ու Տէրոջը շատ ժողովուրդ աւելցաւ: 25 – Եւ ելաւ Բառնաբաս Տարսան երթալ Սողոսը փնտռելու, և զանիկա գտնելով Անտիոք բերաւ: 26 – Ու եղաւ որ անոնք լման տարի մը եկեղեցիին հետ մեկտեղ ժողովուրդով շատ ժողովուրդի սորվեցուցին . ու ամէնէն առաջ Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ անուանեցան:

27 – Ա՛յն օրերը Երուսաղէմէ մարգարէներ իջան Անտիոք : 28 – Եւ անոնցմէ մէկը, Ագաբոս անունով, երթալ իմացուց Հոգիին զօրութիւնովը , թէ մեծ սով մը պիտի ըլլայ բոլոր աշխարհի, որ և եղաւ †Կղովդիոսի օրերը: 29 – Եւ աշակերտները որոշեցին որ իրենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ Հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն օգնութիւն ղրկեն . 30 – Զոր կատարե-

*Ո՛մանք, Յոյներուն
†Ո՛մանք, Կղովդիոս կայսրին

ցին ալ , երեցներուն ղրկելով Բառնաբաս ու Սօղոմ ձեռքով ։

## ԳԼ. ԺԲ

Ա.յն առենները Հերովդէս Թագաւորը ձեռք զարկաւ եկեղեցիին մէկ քանիները չարչարել ։ 2 – Եւ Յովհաննէսի եղբայրը Յակոբոսը սրով սպաննեց ։ 3 – Ու տեսնելով որ Հրեաներուն հաճելի է, անոր վրայ Պետրոսն ալ բռնեց . ու բաղարջակերքի օրերն էին։ 4 – Զանիկա երբ բռնեց , բանտը գրաւ . և չորս կարգ չորսական զինուորներու յանձնեց, որպէս զի պահեն, և կ'ուզէր զայն եւս ժողովուրդին հանել զանիկա ։ 5 – Ուստի Պետրոս բանտին մէջ պահուած էր, բայց եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ անոր համար ։ 6 – Ու երբ Հերովդէս ուզեց զանիկա դուրս բերել , այն գիշերը Պետրոս երկու զինուորներու մէջտեղ կը քնանար կրկին շղթաներով կապուած . ու պահապանները դրանը առջև բանտը կը պահպանէին։ 7 – Եւ տէ՛ս Տէրոջը հրեշտակը էւ– վրան կայնեցաւ, ու տանը մէջ լոյս մը ծագեց, և Պետրոսի կողը խթելով արթընցուց զանիկա , ու ըսաւ, Շուտով ելիր . ու շղթաները անոր ձեռքերէն վար իյնան ։ 8 – Եւ հրեշտակը բսաւ անոր , Գօտիդ կապէ ու հողաթափներդ ոտքդ հագիր . անիկա ալ այնպէս ըրաւ . և բսաւ անոր , Հանդերձդ վրադ առ ու եկուր իմ ետևէս ։ 9 – Ան ալ ելլելով անոր ետևէն կ'երթար, և չէր գիտեր թէ այն հրեշտակէն եղած բանը իրաւ է , հապա կը կարծէր թէ տեսիլք կը տեսնէ ։ 10 – Ու երբ անոնք առաջին ու երկրորդ պահապաններէն անցան , եկան մինչև երկաթի դուռը՝ որ քաղաքին մէջ կը տանէր, որ ինքիրմէ բացուեցաւ անոնց. և անկէ ելլելով՝ փողոց մը անցան, հրեշտակն ալ իսկոյն անկէ զատուեցաւ ։ 11 – Ու Պետրոս ինքզինքին գալով ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ՝ որ Տէրը իր հրեշտակը ղրկեց, և ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու Հրեից ժողովուրդին բոլոր ակնկալութենէն ։ 12 – Եւ մտածելով՝ եկաւ Մարկոս ըսուած Յովհաննէսի մօրը Մարիամի տունը, ուր շատեր ժողոված աղօթք կ'ընէին։ 13 – Եւ դռնը դուռը դուռը

*զարկաւ, Հռովդէ անունով աղախին մը գնաց ականջ դնելու. 14 – Ու երբ Պետրոսի ձայնը ճանչցաւ , ուրախութենէն դուռը չբացաւ, հապա ներս վազելով պատմեց թէ Պետրոս դրանը առջև կայներ է։ 15 – Իսկ անոնք ըսին անոր , Խելքդ գնաց ես . բայց ինք կը պնդէր թէ այնպէս է . անոնք ալ կ'ըսէին , Անոր հրեշտակը պիտի ըլլայ ։ 16 – Սակայն Պետրոս անդադար կը զարնէր. ու երբ բացին , զինք տեսնելով ապշեցան։ 17 – Բայց անիկա ձեռքով նշան կ'ընէր անոնց՝ որ լուռ կենան , ու պատմեց անոնց թէ Ի՛նչպէս Տէրը զինք բանտէն հանեց. և ըսաւ , Ասիկա Յակոբոսի ու եղբայրներուն պատմեցէք. և ելաւ ուրիշ տեղ մը գնաց։ 18 – Ու երբ առաւօտ եղաւ , մեծ խռովութիւն կար զինուորներուն մէջ՝ թէ արդեօք ի՛նչ եղաւ Պետրոս։ 19 – Հերովդէս ալ երբ ուզեց զանիկա ու չգտաւ, պահապաններուն հարցուփորձ ընելով՝ հրաման ըրաւ որ պատնուին. և ինք Հրէաստանէ Կեսարիա իջաւ , ու հոն կը կենար։

20 – Եւ Հերովդէս խիստ թշնամացած էր Տիւրացիներուն ու Սիդոնացիներուն հետ . անոնք ալ միաբանաբար համան մը ներկայացուցին Բղաստոս սենեկապետը համոզելով՝ հաշտութիւն կը խնդրէին . վասն զի երկիրը թագաւորին ներէն ապրուստ կ'առնէր ։ 21 – Եւ որոշուած օր մը Հերովդէս թագաւորական հանդերձը հագած ու առեւտր նստած՝ անոնց առեղծանութիւն կ'ընէր։ 22– Ժողովուրդն ալ կ'աղաղակէր թէ Աստուծոյ ձայն է՝ ու ոչ թէ մարդու։ 23-Եւ իսկոյն Տէրոջը հրեշտակը զանիկա զարկաւ , Աստուծոյ փառք չտալուն համար. և որդնոտից լուսով մեռաւ ։

24-Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը շատնար։ 25-Եւ Բառնաբաս ու Սօղոս երբ Երուսաղէմէն դարձան, Մարկոս ըսուած Յովհաննէսն ալ իրենց հետ առնելով ։

## ԳԼ. ԺԳ

Եւ Անտիոքի մէջ եղած եկեղեցիին քանի մը մարգարէներ ու վարդապետներ կային , Բառնաբաս ու Շմաւոն, որ Նիգեր կ'ըսուէր, և Ղուկիոս Կիւրենացի ու Մանայէն , Հերովդէս Տետրարքպետին սննդակիցը, և Սօղոս։ 2 – Երբ տանք Տէրոջը պաշտօնին մէջ էին, և ծոմ կը պահէին, Հոգին Սուրբ ըսաւ , Զատեցէք ինծի Բառնաբասը և Սօղոսը այն գործին համար , որու ես կանչեր եմ զանոնք։ 3-Ա.յն առեն ծոմ պահելով և աղօթք ընելով՝ ձեռք դրին անոնց վրայ ու ղրկեցին ։ 4 – Անոնք ալ Սուրբ Հոգիէն ղրկուած՝ Սելևկիա իջան , ու անկէ նաւով Կիպրոս գացին ։ 5 – Եւ Սալամինա հասնելով՝ Հրեից ժողովարաններուն մէջ Աստուծոյ խօսքը կը քարոզէին , ու Յովհաննէսն ալ էբէնց սպասաւոր ունէին ։ 6 – Եւ պտըտելով այն [բոլոր] կղզին մինչև Պափոս, հոն գտան մէկ մոգաբար՝ Հրեայ մոգ մը , որուն անունը, Նը Բարեյիսուս էր . 7 – Որ փոխանորդ բդեշխին հետ էր, որ էբ–էր Սերգիոս Պօղոս, խելացի մարդ մը. սիկա Բառնաբասը և Սօղոսը հրաւիրելով՝ ուզեց Աստուծոյ խօսքը լսել ։ 8 – Սակայն անոնց դէմ կեցաւ Եղիմաս մոգ, (քանզի այսպէս կը թարգմանուի անոր անունը,) որ կ'ուզէր փոխանորդ բդեշխը հաւատքէն դարձնել ։ 9 – Բայց Սօղոս, որ Պօղոս ալ կ'ըսուէր , Հագուով Սրբով լեցուած , աչքերը անոր վրայ անկաց , 10 – Ու ըսաւ , Ով ամէն խարեբայութիւնով և ամէն խորամանկութիւնով լեցուած՝ Սատանայի որդի, թշնամի բոլոր արդարութեան, պիտի չդադրիս Տէրոջը շիտակ ճամբաները ծռելէ ։ 11 – Եւ հիմա Տէրոջը ձեռքը ահա քու վրադ է , ու կոյր պիտի ըլլաս՝ առանց մը արեւը չտեսնելով ։ Եւ իսկոյն անոր վրայ մէգ ու խաւար մը իջաւ , ու պարուրելով առաջնորդ կը փնտռէր ։ 12 – Ա.յն առեն փոխանորդ բդեշխը երբ այս բաները տեսաւ՝ հաւատաց , մեծապէս զարմանալով Տէրոջը վարդապետութեանը վրայ ։

13 – Եւ Պօղոս ու իր ընկերները Պափոսէ ելան , ու եկան Պամփիւլիայի Պերգէն . բայց Յովհաննէս անոնցմէ պատուելով՝ Երուսաղէմ դարձաւ ։ 14– Անոնք ալ Պերգէէ գացին ու եկան Պիսիդիայի Անտիոքը , և շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝ նստան ։ 15-Ու օրէնքին և մարգարէներուն կարդացուելէն հետ՝ ժողովրդապետները յղե-



ղրկեցին իրենց ու ըսին, Մարդիկ եղբայրներ, եթէ դուք ժողովուրդին համար խօսք մը ունիք՝ խօսեցէք ։ 16 – Ա.յն առեն Պօղոս առաքի վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ու ըսաւ , Ով Իսրայէլացի մարդիկ , և դուք որ Աստուծմէ կը վախնաք, մտիկ ըրէք ։ 17 – Ա.յս Իսրայէլ ժողովուրդին Աստուածը մեր հայրերը ընտրեց , ու ժողովուրդը բարձրացուց Եգիպտոսի երկրին մէջ պանդխտութեան առեներ , և բարձր բազուկով զանոնք հանեց։ 18 – Ու քառասուն տարուան ժամանակի չափ անապատին մէջ կերակրեց զանոնք ։ 19 – Եւ Քանանու երկրին մէջ եօթը ազգ կործանելով՝ անոնց երկիրը իրենց տուաւ որ ժառանգեն ։ 20 – Եւ անկէ ետև չորս հարիւր հնսուն տարիի չափ դատաւորներ տուաւ անոնց մինչև Սամուէլ մարգարէն ։ 21 – Ու ետքը թագաւոր ուզեցին. և Աստուած Կիսի որդին Սաւուղը տուաւ անոնց , Բենիամինի ցեղէն մարդ մը, քառասուն տարի։ 22– Ու երբ զանիկա փոխեց, Դաւիթը հանեց իրենց թագաւոր , որու համար վկայութիւն տալով՝ ըսաւ , Յեսսէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ ։ 23 – Ա.սոր սերունդէն Աստուած էր խոստմունքին պէս Իսրայէլի Փրկիչ Յիսուս հանեց. 24 – Եւ դեռ անիկա էր պաշտօնէ չեղած՝ Յովհաննէս առաջուընէ Իսրայէլի բոլոր ժողովուրդին ապաշխարութեան մկրտութիւնը քարոզեց ։ 25-Ու երբ Յովհաննէս իր ընթացքը կը կատարէր՝ ըսաւ, Ո՞վ կը կարծէք թէ եմ։ ես Քրէսթոս չեմ, հապա անիկա ահա իմ ետևէս կու գայ , որուն ոտքերուն կօշիկները քակելու արժանի չեմ ։ 26 – Մարդիկ եղբայրներ, Աբրահամի տոհմին որդիներ, ու անոնք որ ձեր մէջ աստուածավախ են , այս փրկութեան խօսքը ձեզի ղրկուեցաւ ։ 27 – Քանզի Երուսաղէմ բնակողները և անոնց իշխանները ոչ զանիկա ճանչցան , ոչ ալ մարգարէներուն ձայները՝ որոնք ամէն շաբաթ օրերը կը կարդացուին, հապա զանոնք կատարեցին՝ զիրենք դատապարտելով ։ 28 – Եւ մնհսուան պատճառ մըն ալ չգտած՝ Պիղատոսէ խնդրեցին որ անիկա սպաննուի ։ 29 – Ու երբ անոր համար բոլոր գրուած

*Ոմանք, Պետրոս զարկաւ

քանները կատարեցին, փայտէն վար իջեցնելով զերեզմանի մէջ դրին. 30- Բայց Աստուած զանկիկ յարուց մեռելներէն. որ շատ օրեր երեցաւ անոնց 31 – Որ իրեն հետ Գալիլեայէ ելած էին, որոնք հիմա անոր վկաներն են ժողովուրդին առջև։ 32 – Մենք ալ ձեզի կը քարոզենք այն խոստումնիքը որ հայրերուն եղած էր, 33 – Զոր Աստուած կատարեց մեզի որ անոնց զաւակներն ենք, յիշուածը յարուցանելով, ինչպես երկրորդ սաղմոսին մէջ ալ գրուած է, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ։ 34 – Եւ որ զանկիկ մեռելներէն յարուց, ու մէյմըն ալ ապականութիւն պիտի չտեսնէ, այսպես կ'ըսէ թէ Ձեզի պիտի տամ Դաւիթի հաստատուած սուրբ խոստումները։ 35 – Ուստի ուրիշ սաղմոսի մէջ ալ կ'ըսէ, Դուն Սուրբիդ ապականութիւն տեսնել պիտի չտաս։ 36-Վասն զի Դաւիթ իր դարուն մէջ Աստուծոյ կամքին ծառայելով մեռաւ, ու իր հայրերուն քով դրուեցաւ և ապականութիւն տեսաւ։ 37 – Բայց ան զոր Աստուած յարուցի՝ ապականութիւն չտեսաւ։ 38 – Ուրեմն յայտնի ըլլայ ձեզի, մարդիկ եղբայրներ, որ սոսր միջոցով ձեզի մեղքերու թողութիւն կը քարոզուի. 39 – Եւ այն ամէն բաներէն որոնցմէ Մովսէսի օրէնքովը չկրցաք արդարանալ, սորվ ամէն ով որ հաւատայ, կ'արդարանայ։ 40 – Ա՛րդ զգուշացէք որ չպլլայ թէ ձեր վրայ գայ այն որ մարգարէներուն մէջ ըսուած է, 41 – Նայեցէք, արհամարհողներ, և զարմացէք ու ոչնչացէք. վասն զի գործ մը պիտի ընեմ ձեր օրերուն մէջ, այնպիսի գործ մը՝ զոր եթէ մէկը ձեզի պատմէ, պիտի չհաւատաք։

42 – Ու երբ անկէ դուրս ելաւ, *կազմէին որ †հետեւեալ շաբաթ՝ ալ նոյն խօսքերը իրենց խօսուին։ 43 – Եւ ժողովուրդը երբ արձակուեցաւ, Հրեաներէն ու նորահաւատ բարեպաշտներէն շատերը Պօղոսի ու Բառնաբասի հետեւէն կ'երթային. որոնք կը խօսէին անոնց հետ ու կը յորդորէին զանոնք, որ միշտ Աստուծոյ շնորհքին մէջ հաստատ կենան։ 44 – Եւ հետեւեալ շաբաթ օրը գրեթէ բոլոր քաղաքը ժողովուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու։ 45- Իսկ Հրեաները երբ տեսան այն բազմութիւնը, նախանձով լեցուեցան, ու Պօղոսի վրայ հայհոյութիւններ ընելով՝ կ'ընդդիմանային։ 46-Այն ատեն Պօղոս և Բառնաբաս համարձակեցան ու ըսին, Պէտք էր որ առաջ ձեզի խօսուէր Աստուծոյ խօսքը, բայց որովհետև դուք զանիկա կը մերժէք, ու ինքզինքնիդ յաւիտենական կեանքի արժանի չէք սեպեր, տա՛ մենք հեթանոսներուն կը դառնանք։ 47 – Վասն զի Տէրը այսպէս պատուիրած է մեզի. Քեզ հեթանոսներուն լոյս դրի, որպէս զի դուն փրկութեան պատճառ ըլլաս մինչև երկրի ծայրերը։ 48 – Ա՛յս լսելով հեթանոսները կ'ուրախանային, ու Աստուծոյ խօսքը կը փառաւորէին. և որոնք որ յաւիտենական կեանքի սահմանուած էին, հաւատացին։ 49 – Ու Տէրոջը խօսքը բոլոր գաւառը կը տարածուէր։ 50 – Բայց Հրեաները գրգռեցին բարեպաշտ և պատուաւոր կիները ու քաղաքին մեծերը, և Պօղոսի ու Բառնաբասի վրայ հալածանք հանելով՝ զանոնք իրենց սահմաններէն դուրս ըրին։ 51 – Անոնք ալ իրենց ոտքերուն փոշին անոնց դէմ թօթափելով՝ Իկոնիոն եկան։ 52-Ու աշակերտները ուրախութեամբ և Հոգւով Սրբով կը լեցուէին։

## Գլ. ԺԴ

Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք միասին Հրեաներուն ժողովարանը մտան, և այնպէս խօսեցան որ խիստ շատ Հրեաներ և Յոյներ հաւատացին։ 2-Բայց չհաւատացող Հրեաները գրգռեցին ու չարութեան գրգռեցին հեթանոսներուն սիրտը եղբայրներուն դէմ։ 3 – Իսկ անոնք շատ ժամանակ հոն կենալով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմով, որ իր շնորհոյ խօսքին կը վկայէր, և նշաններ ու հրաշքներ ընել կու տար անոնց ձեռքով։ 4 – Եւ քաղաքին բազմութիւնը մէջ երկպառակութիւն մը եղաւ. ոմանք Հրեաներուն կողմն էղան, ոմանք ալ առաքեալներուն։ 5 – Ու երբ հեթանոսները և Հրեաները իրենց իշխաններովը անոնց վրայ յարձակեցան՝ զանոնք նախատելու ու քարկոծելու, 6-Իրենք իմանալով Լիկաոնացւոց քաղաքները փախան, Լիւստրա և Դերբէ և շրջակայ տեղերը, ու հոն ուրախարար կը քարոզէին։

7 – Եւ Լիւստրայի մէջ մարդ մը նստեր էր ոտքերովը տկար՝ իր մօրը ծոցովայնէն կաղ ծնած, որ բնաւ քալած չէր։ 8 – Անկա Պօղոսի խօսքերը մտիկ կ'ընէր, ան ալ աչքը անոր անկելով և տեսնելով թէ բժշկուելու հաւատք ունի, 9 – Բարձր ձայնով մը ըսաւ, Ելիր ոտքերուդ վրայ շիտակ կայնէ. ան ալ ցատկելով կը քալէր։ 10 – Եւ ժողովուրդները երբ Պօղոսի գործը տեսան, ձայներնին վերցնելով Լիկաոնեարէն ըսին, Աստուածները մարդոց նմանութիւնով մեզի իջեր են։ 11 – Ու Բառնաբասի Դիոս կը կոչէին, և Պօղոսի՝ Հերմէս, վասն զի անիկա էր դլխաւոր խօսողը։ 12 – Իսկ քահանան առջև եղած Դիոսի քաղաքին ցուլեր և պսակներ բերելով դուռներուն առջև, բազմութեանը հետ մէկտեղ կ'ուզէր որ պոշ ընէ։ 13 – Բայց Բառնաբաս ու Պօղոս առաքեալները երբ լսեցին, իրենց հանդերձները պատռելով դուրս ցատկեցին բազմութեանը մէջ, կ'աղաղակէին, 14-Ու կ'ըսէին, Մարդիկ, ինչո՞ւ համար այդ բաները կ'ընէք. մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ ենք, ու կը քարոզենք ձեզի որ այդ փուճ բաներէն կենդանի Աստուծոյն դառնաք, որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները։ 15 – Որ անցած դարերուն մէջ թող տուաւ ամէն ազգերուն իրենց ճամբաներով երթալու։ 16 – Սակայն ամենայնիւ ինքզինք առանց վկայութեան չթողուց, բարերարութիւնով երկինքէն *մեզի անձրևներ ու պտղաբեր եղանակներ տալով, կերակուրներով և ուրախութիւնով †մեր սիրտերը լեցնելով։ 17 – Ու այս բաները ընելով՝ հազիւ կրցան ժողովուրդները զգացնել, որ իրենց զոհ չընեն։

18 – Սակայն Անտիոք ու Իկոնիոնէ Հրեաները հասան, ու ժողովուրդները համոզեցին, և Պօղոսը քարկոծեցին ու քաղաքէն դուրս քաշելին՝ կարծելով թէ մեռած է։ 19 – Բայց աշակերտները երբ անոր բոլորտիքը պատեցին, եղաւ քաղաքը մտաւ, ու հետևեալ օրը Բառնաբասի հետ մեկտեղ Դերբէ ելաւ։ 20 – Եւ անոնք այն քաղաքին մէջ աւետարանը քարոզելով, ու շատերը աշակերտ ընելով՝ Լիւստրա և Իկոնիոն և Անտիոք դարձան, 21 – Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յորդորելով որ հաստատ մնան հաւատքի մէջ, և ը՛սելէն թէ շատ նեղութիւններով պէտք է մեզի Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ 22 – Ու երբ անոնց ամէն մէկ եկեղեցիին երեցներ ձեռնադրեցին, ծոմապահութեամբ աղօթք ընելով զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որուն հաւատացեր էին։ 23 – Եւ Պիսիդիայի մէջէն պատուելով՝ եկան Պամփիւլիա։ 24 – Պերգէի մէջ ալ Տէրոջը խօսքը խօսելէ ետև Աթալիա իջան։ 25 – Անկէ ալ նաւով Անտիոք դացին, ուրկէ Աստուծոյ շնորհքին յանձնուած էին այն գործին համար զոր կատարեցին։ 26 – Ու երբ եկան, եկեղեցին մէկտեղ ժողվելով՝ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ, և որ հեթանոսներուն հաւատքի դուռ բացեր էր։ 27 – Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ կեցան։

## Գլ. ԺԵ

Եւ մէկ քանիներ Հրեաստանէ իջած՝ եղբայրներուն կը սորվեցնէին որ եթէ Մովսէսի սահմանած սովորութեանը համեմատ չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ։ 2 – Ուստի Պօղոսի և Բառնաբասի անոնց դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ընելէն ետքը, վճռեցին որ Պօղոս ու Բառնաբաս և ուրիշ քանիներն ալ անոնցմէ՝ Երուսաղէմ երթան առաքեալներուն ու երէցներուն այս խնդրին համար։ 3 – Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրուած՝ Փիւնիկէ ու Սամարիայէ անցնելով, հեթանոսներուն դարձի գալը կը պատմէին, և մեծ ուրախութիւն կու տային բոլոր եղբայրներուն։ 4 – Ու երբ Երուսաղէմ հասան, եկեղեցիին ու առաքեալներուն և երէցներուն ընդունուեցան, և պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ։ 5 – Փարիսեցւոց աղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան, ու կ'ըսէին թէ Պէտք է թլփատել զանոնք ու պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն։

*Ոմանք, հեթանոսները կ'աղաչէին
†Կամ, շաբթու մէջ

*Ոմանք, ձեզի †Ոմանք, ձեր

6 – Եւ առաքեալները ու երէցները ժողովուեցան այս բանին վրայով խորհելու։ 7 – Եւ շատ վիճաբանութիւն ըլլալէ ետեւ, Պետրոս ոտքի վրայ ելաւ ու ըսաւ անոնց, Մարդիկ եղբայրներ, դուք գիտէք որ առաջին օրերէն Աստուած ինք ընտրեց մեր մէջէն, որպէս զի իմ բերնովս հեթանոսները աւետարանին խօսքը լսեն ու հաւատան։ 8 – Եւ սրտագէտ Աստուած վկայեց անոնց՝ Սուրբ Հոգին տալով անոնց, ինչպէս մեզի ալ։ 9 – Եւ խտրութիւն մը չըրաւ մեր ու անոնց մէջտեղ, հաւատքով անոնց սիրտերը մաքրելով։ 10 – Ուստի հիմա ինչո՞ւ կ'Աստուած կը փորձէք, աշակերտներուն պարանոցին վրայ այնպիսի լուծ մը դնելով, զոր ոչ մեր հայրերը ոչ ալ մենք կրնանք վերցնել։ 11 – Բայց կը հաւատանք որ Տէր †Յիսուսի շնորհքովը կը փրկուինք մենք, ինչպէս անոնք ալ։

12 – Եւ բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ ու մտիկ կ'ընէր Բառնաբասի ու Պօղոսի, որոնք կը պատմէին թէ Աստուած ո՛րչափ նշաններ ու հրաշքներ ըրեր էր հեթանոսներուն մէջ իրենց ձեռքով։ 13 – Եւ անոնք խօսքերնին կատարէլէն ետեւ՝ Յակոբոս պատասխան տուաւ ու ըսաւ, Մարդիկ եղբայրներ, լսեցէ՛ք մտիկ ըրէք։ 14 – Շմէոն պատմեց թէ Աստուած ինչպէս առաջ այցելութիւն ըրաւ, որպէս զի հեթանոսներէն ժողովուրդ առնէ իր անունին համար։ 15 – Եւ այս բանին մարգարէներուն խօսքերն ալ կը վկայանին, ինչպէս գրուած է, 16 – Ետեւ կու գամ ու պիտի դառնամ ու Դաւիթի ինկած խորանը նորէն պիտի շինեմ, և անոր կործանուած տեղերը նորէն պիտի շինեմ, և կանգնեմ զանիկա։ 17 – Որպէս զի մնացած մարդիկը Տէրը փնտռեն, և բոլոր հեթանոսները՝ որոնց վրայ իմ անունս կոչուած է, կ'ըսէ Տէրը որ այս ամէն բաները կ'ընէ։ 18 – Յայտնի են †Աստուծոյ իր բոլոր գործերը աշխարհի սկիզբէն հետէ։ 19 – Ուստի ես յորմոր կը դատեմ նեղութիւն չտալ անոնց որոնք հեթանոսներէն Աստուծոյ կը դառնան։ 20 – Հապա թուղթ մը գրել անոնց՝ որ ետ կենան կուռքերու պղծութիւններէն և պոռնկութենէ ու խեղդուածէ և արիւնէ։

21 – Վասն զի Մովսէս հին դարերէն ի վեր ամէն քաղաքի մէջ զինք քարոզողներ ունի, և ժողովարաններու մէջ ամէն շաբաթ օր կը կարդացուի։

22 – Այն ատեն առաքեալներուն ու երէցներուն՝ բոլոր եկեղեցիին հետ մէկտեղ ազնիկ երեսփոխ որ իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք դրկեն Պօղոսի ու Բառնաբասի հետ, Բարսաբա մականուանեալ Յուդան և Շիղան, որոնք գլխաւոր մարդիկ էին եղբայրներուն մէջ։ 23 – Ու անոնց ձեռքով նո՛ր դրկեցին այսպէս գրուած.

Առաքեալներ ու երէցներ և եղբայրները, Անտիոքի ու Սիւրիոյի և Կիլիկիոյ մէջ հեթանոսներէն եղած եղբայրներուդ ողջոյն։ 24 – Որովհետեւ լսեցինք թէ մեզմէ մեր մէջէն ելլելով ձեզ խօսքերով խռովեցուցեր և ձեր անձերը խախտեր են, ըսելով թէ պէտք է թլփատուիլ ու օրէնքը պահել, ոքոնց մենք այսպէս չպատուիրեցինք, 25 – Մեզի միաբանութեամբ ժողովածներուս ազնիկ երեսփոխ որ մարդիկ ընտրելով ձեզի դրկենք մեր սիրելիներուն, Բառնաբասի ու Պօղոսի, հետ, 26 – Որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը համար անձերնին մատնած մարդիկ են։ 27 – Ուստի դրկեցինք Յուդան և Շիղան, որպէս զի իրենք ալ բերնով նոյն բաները չէք զրուցեր. 28 – Վասն զի ազնիկ երեսփոխ Սուրբ Հոգիին ու մեզի ալ ձեր վրայ աւելի բեռ չդնել այս հարկաւոր բաներէն զատ, 29 – Որ ետ կենաք կուռքերու զոհուածէ և արիւնէ ու խեղդուածէ և պոռնկութենէ. որոնցմէ ինքզինքնիդ պահելով ազնիկ պիտի ընէք։ Ողջ եղէք։

30 – Անոնք ալ ճամբայ գրուելով Անտիոք գացին, և ժողովուրդը մէկտեղ ժողվելով թուղթը տուին։ 31 – Ու երբ կարդացին, ուրախացան այն մխիթարութեանը վրայ։ 32 – Իսկ Յուդա ու Շիղա, որ իրենք ալ մարգարէ էին, շատ խօսքերով յորդորեցին եղբայրները ու հաստատեցին։ 33 – Եւ ատեն մը հոն կենալէ ետեւ, եղբայրներէն խաղաղութեամբ ճամբայ դրուեցան առաքեալներուն քով։ 34 – Բայց Շիղայի ազնիկ երեսփոխ։ 35 – Պօղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ կը կենային, և ուրիշ շատերու հետ Տէրոջը խօսքը կը սորվեցնէին ու կը քարոզէին։

*Ոմանք, Յիսուս Քրիստոսի †Ոմանք, Տէրոջը



36 – Եւ քանի մը օրերէ ետեւ Պօղոս ըսաւ Բառնաբասի, Դառնանք ու այցելութիւն ընենք եղբայրներուն՝ ամէն մէկ քաղաքները, ուր Տէրոջը խօսքը քարոզեցինք, և տեսնենք թէ ինչպէս են։ 37 – Իսկ Բառնաբաս կ'ուզէր որ Յովհաննէսն ալ առնեն, որ Մարկոս կ'ըսուէր. 38 – Բայց Պօղոս արժան չսեպեց որ Պամփիւլիայի մէջ իրենցմէ զատուողը ու իրենց հետ գործի չեկողը իրենց հետ առնեն։ 39 – Այսպէս անոնց մէջ գժտութիւն մը եղաւ, մինչեւ իրարմէ զատուեցան. և Բառնաբաս առաւ Մարկոսը ու նաւով Կիպրոս գնաց։ 40 – Պօղոս ալ Շիղան ընտրեց ու ելաւ, եղբայրներէն Աստուծոյ շնորհքին յանձնուելով։ 41 – Եւ Սիւրիայի ու Կիլիկիայի մէջ կը պատեր ու եկեղեցիները կը հաստատէր։

## ԳԼ. ԺԶ

Եւ հասաւ Դերբէ ու Լիւստրա. և ահա հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անունով, որ հաւատացեալ Հրեայ կնոջ մը զաւակ էր, և հայրը Յոյն էր. 2 – Որ Լիւստրացի ու Իկոնացի եղբայրներէն ալ բարի վկայուած էր։ 3 – Պօղոս ուզեց որ սիրկա իրեն հետ ելլէ, և առաւ թլփատեց զանիկա այն տեղերը եղած Հրեաներուն համար, վասն զի ամէնն ալ գիտէին թէ անոր հայրը Յոյն էր։ 4 – Եւ քաղաքներէն անցնելով, երբ ատեղեր եղած առաքեալներն ու երէցներէն ապաստիած հրամանները կ'աւանդէին անոնց՝ որ պահեն։ 5 – Եկեղեցիները ալ հաւատքի մէջ կը հաստատուէին, և օրէ օր անոնց թիւը կ'աւելնար։

6 – Եւ Փռիւգիա ու Գաղատացւոց կողմերը պտտեցան. և Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Ասիոյ խօսքը Աստի մէջ չխօսին, 7 – Երբ Միւսիոյի կողմերը եկան, կը ջանային գնալ ի Բիւթանիա երթալ. և [Յիսուսի] Հոգին թոյլ չտուաւ անոնց։ 8 – Եւ Միւսիոյի քովէն անցնելով Տրովադա իջան։ 9 – Եւ հոն գիշերը Պօղոսի տեսիլք մը երեւցաւ. Մակեդոնացի մարդ մը կայներ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Մակեդոնիա անցիր և օգնէ մեզի։ 10 – Ու երբ այն տեսիլքը տեսաւ, շուտ մը ուզեցինք Մակեդոնիա ելլել, հասկնալով որ Տէրը մեզ կը հրաւիրէ ասոնց աւետարան քարոզելու։

11 – Ուստի նաւով Տրովադայէ ելանք ու շիտակ Սամոթրակէ գացինք, ու հետեւեալ օրը Նէապոլիս. 12 – Եւ անկէ ալ Փիլիպպէ, որ է Մակեդոնիայի առի մասին գլխաւոր քաղաքը *կղզիներու. և այն քաղաքին մէջ քանի մը օր կեցանք. 13 – Ու շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերքին քով՝ ուր սովորութիւն ունէին աղօթք ընելու, ու նստելով ժողոված կիներուն կը խօսէինք։ 14 – Եւ Թիւատիրէ քաղաքէն ծիրանավաճառ կին մը Լիդիա անուն, որ աստուածավախ մէկն էր, մտիկ կ'ընէր. որուն սիրտը Տէրը բացաւ Պօղոսի բաններուն ուշադրութիւն ընելու։ 15 – Ու երբ մկրտուեցաւ ինք և իր տունը, աղաչեց ու ըսաւ, եթէ դուք Տէրոջը հաւատացեալ կը սեպէք, իմ տունս մտէք բնակեցէք. և ստիպեցուց մեզ։

16 – Ու եղաւ որ երբ մենք աղօթքի կ'երթայինք, աղախին մը պատահեցաւ մեզի որ Հոգւոյ սգի ունէր, որ գուշակութիւն ընելով իր տէրերուն շատ վաստակ կը բերէր։ 17 – Այիկա Պօղոսի և մեր ետեւէն իյնալով՝ կը պոռար ու կ'ըսէր, Ա՛յս մարդիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որոնք †մեզի փրկութեան ճամբան կը քարոզեն։ 18 – Եւ այս բանը շատ օրեր կ'ընէր. բայց Պօղոս վշտանալով՝ դարձաւ ու ըսաւ այն ոգիին, Յիսուս Քրիստոսի անունովը հրամայեմ կ'ընեմ քեզի, ելիր ատկէ. և նոյն ժամուն ելաւ։ 19 – Երբ տեսան անոր տէրերը որ իրենց վաստակին յոյսը կորսնցաւ, Պօղոսը ու Շիղան բռնելին ու հրապարակը քաշելին իշխաններուն առջեւ. 20 – Եւ տարին զանիկա զօրագլուխներուն քով ու ըսին, Ա՛յս մարդիկը մեր քաղաքը իրար կ'անցնեն. իրենք Հրեայ են, 21 – Եւ այնպիսի սովորութիւններ կը քարոզեն, զորոնք արժան չէ մեզի ընդունիլ, ոչ ալ ընել, վասն զի Հռովմայեցի ենք։ 22 – Եւ բազմութիւնը անոնց վրայ դիզուեցաւ. զօրագլուխներն ալ բռնութեամբ անոնց հանգերձները հանեցին, և հրաման ըրին որ ջնտ† ծեծեն։ 23 – Եւ անոնց շատ

*Ա յէ†ո, գաղղակացիներու տեղ †Ոմանք, ձեզի

վերքեր տալէ եւս բանալը դրին, պատաւիրելով բանտապետին որ զգուշութեամբ պահէ զանոնք : 24 – Ան ալ այսպէս հրաման առնելով՝ զանոնք ներսի բանտը դրաւ ու ոտքերնին կոճղի մէջ ամրացուց :

25 – Եւ կէսգիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ'ընէին և գԱստուած կ'օրհնէին, ու բանտարկեալներն ալ անոնց մտիկ կ'ընէին: 26 – Եւ յանկարծակի մեծ շարժ մը եղաւ, այնպես որ բանտին հիմերը սասանեցան , և անմիջապէս բոլոր դռները բացուեցան, ու ամէնուն կապերը արձակուեցան : 27 – Եւ բանտապետը, երբ արթնցաւ ու բանտին դռները բացուած տեսաւ , թրուբը քաշեց և ինքզինք պիտի սպաններ , կարծելով թէ կապուածները փախեր են : 28 – Բայց Պօղոս բարձր ձայնով կանչեց ու ըսաւ , Դուն քեզ անձիդ մի՛ մի ըներ , վասն զի ամէնս ալ հոս ենք : 29 – Եւ անիկա ճրագ մը ուզեց ու ներս վազեց , և դողալով Պօղոսի ու Շիղայի առջև ինկաւ. 30 – Եւ զանոնք դուրս բերելով ըսաւ, Տէրեր, ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուի՛մ : 31 – Անոնք ալ ըսին , Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի , ու պիտի փրկուիս դուն և քու տունդ : 32 – Եւ Տէրոջը խօսքը խօսեցան անոր, ու այն ամէնուն որոնք իր տանը մէջ էին: 33 – Եւ ատոր զանոնք գիշերուան նոյն ժամուն ու անոնց վէրքերը լուաց, և շուտ մը մկրտուեցաւ ինք ու բոլոր իրենները : 34 – Եւ զանոնք իր տունը տանելով՝ անոնց առջև սեղան դրաւ , և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով : 35 – Եւ երբ առաւօտ եղաւ , զօրագլուխները դրկեցին պատաւորները ու ըսին , Արձակէ այդ մարդիկը : 36 – Բանտապետն ալ այն խօսքերը Պօղոսի պատմեց, Թէ Զօրագլուխները դրկեցին որ արձակուի՛ք. ուստի հիմա ելէք և խաղաղութեամբ գացէք: 37 – Բայց Պօղոս ըսաւ անոնց, Մեզ չյայտնապես ծեծելով՝ որ չդատապարտած Հռովմայեցի մարդիկ ենք, բանտը դրին, ու հիմա գաղտի՞ւկ կը հանեն մեզ . ոչ այդպէս, հապա թող իրենք գան ու մեզ հանեն: 38 – Եւ պատաւորները զօրագլուխներուն պատմեցին այն խօսքերը . անոնք ալ երբ լսեցին թէ Հռովմայեցի են՝ վախցան, ու եկան քաղցրութեամբ խօսեցան ու նոնց հետ . 39 – Եւ դուրս հանելով՝ կ'աղաչէին որ այն քաղաքէն երթան : 40 – Անոնք ալ բանտէն ելլելով՝ Լիդիայի դո՞ւռը մնան , ու եղբայրները տեսնելով՝ մխիթարեցին զանոնք և գացին :

## ԳԼ. ԺԷ

Եւ Ամփիպոլիսէ ու Ապողոնիայէ պատաելով՝ Թեսաղոնիկէ եկան , ուր էր Հրեաներուն ժողովարանը : 2 – Պօղոս ալ իր սովորութեանը պէս անոնց մէջ մտաւ, և երեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ գիրքերէն , 3 – Մեկնելով և անոնց առջև դնելով թէ պէտք էր Քրիստոսի չարչարուիլ , ու մեռելներէն յարութիւն առնել , և թէ Ա՛յն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ՝ ըսաւ, Քրիստոսն է: 4 – Եւ ոմանցմէ ոմանք հաւատացին ու Պօղոսի և Շիղային հետ միացան . ասոնց մեծ բազմութիւն , ու երեւելի կիներէն ալ հաւատացողը քիչ չէին : 5 – Բայց չհաւատացող Հրեաները նախանձեցան , և քանի մը դատարկապորտ անօրէն մարդիկ առնելով՝ ազմուկ հանեցին ու քաղաքը տակնուվրայ ըրին , և Յասոնի տանը վրայ յարձակելով՝ կ'ուզէին զանոնք ժողովրդին առջև տանիլ : 6 – Ու երբ զանոնք չգտան, Յասոնը ու մէկ քանի եղբայրները քաշելով տարին քաղաքապետներուն առջև , կանչռըտելով թէ Անոնք որ աշխարհս տակնուվրայ ըրին՝ հոս ալ հասեր են . 7 – Զորոնք Յասոն ընդուներ է . և ասոնք ամէնը Կայսրին հրամաններուն դէմ կը գործեն, ըսելով թէ ուրիշ Թագաւոր մը կայ Յիսուս: 8 – Եւ խռովեցուցին ժողովուրդը ու քաղաքապետները, որոնք այս բաները կը լսէին : 9 – Բայց երբ Յասոնէ և ուրիշներէն երաշխաւորութիւն առին, արձակեցին զանոնք: 10 – Իսկ եղբայրները շուտ մը գիշերով Պօղոսը և Շիղան Բերիա դրկեցին . որ երթալ հոն հասնելով՝ Հրէից ժողովարանը գացին : 11 – Ասոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին , որոնք Ա՛ստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին , և ամէն օր գիրքերը կը քննէին թէ այս բաները այսպէ՞ս են : 12 – Ուստի ասոնցմէ շատերը հաւատացին. և պատուական Յոյն կիներէն ու այրերէն հաւատացողներ ալ քիչ չէին : 13 – Բայց երբ իմացան Թեսաղոնիկեցի Հրեաները թէ Բերիայի մէջ ալ Աստուծոյ խօսքը քարոզուեցաւ Պօղոսէ , հոն ալ եկան ու ժողովուրդը գրգռեցին: 14 – Ա՛յն ատեն եղբայրները շուտ մը Պօղոսը ղրկեցին՝ որ մինչև ծովեզերքը երթայ. բայց Շիղա ու Տիմոթէոս հոն մնացին : 15 – Եւ անոնք որ Պօղոսը կը տանէին, մինչև Աթենք բերին զանիկա. և երբ հրաման առնելով Շիղային ու Տիմոթէոսի համար որ շուտով իրեն գան, գացին:

16 – Եւ Պօղոս Աթէնքի մէջ անոնց սպասելով՝ իր հոգին անհանգիստ էր ներսիդին , վասն զի քաղաքը բոլորովին կուապաշտութեան մէջ ընկղմած կը տեսնէր: 17 – Ուստի ժողովարանին մէջ կը խօսէր Հրեաներուն ու բարեպաշտ մարդոց , և ամէն օր հրապարակներուն մէջ՝ որոնց պատահէր: 18 – Ու Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներէն ալ քանիները իրեն հետ հակաճառութիւն կ'ընէին . և ոմանք կ'ըսէին , Ա՛յս սերմանաքաղը ի՞նչ ըսել կ'ուզէ . ուրիշներն ալ՝ Է՛ւրէվի թէ օտար աստուածներու քարոզիչ է. վասն զի Յիսուսը ու յարութիւնը կ'աւետարանէր անոնց : 19 – Եւ առին զանիկա Արիսպագոս տարին ու կ'ըսէին, Կրնա՞նք իմանալ թէ ի՞նչ է այդ նոր վարդապետութիւնը զոր դուն կը զրուցես . 20 – Քանզի մեր ականջներուն օտար բաներ կը բերես . ուրեմն կ'ուզենք իմանալ թէ ի՞նչ պիտի բլլան անոնք : 21 – (Վասն զի Աթենացիները ամէնն ալ , ու հոն կեցող օտարականները ուրիշ բանի չէին պարապեր, բայց միայն նոր բան ըրաւ ցեղու կամ լսելու:)

22 – Ա՛յն ատեն Պօղոս Արիսպագոսի մէջ կայնեցաւ ու ըսաւ, Ով Աթենացի մարդիկ, ամէն կողմանէ խիստ կրօնասէր կը տեսնեմ ձեզ: 23 – Քանզի ես պտըտելով ու ձեր պաշտամունքը զննելով՝ սեղան մը գտայ , որուն վրայ գրուած էր , ԱՆԾԱՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՑՆ . ուստի զանիկա զոր դուք չճանչնալով կը պաշտէք , ես նոյնը ձեզի կը քարոզեմ : 24 – Աստուած որ աշխարհը ստեղծեց , և անոր մէջի բոլոր բաները , անիկա երկինքի ու երկրի Տէրն ըլլալով՝ ոչ ձեռագործ տաճարներու մէջ կը բնակի , 25 – Ոչ ալ մարդոց ձեռքով կը պաշտուի՝ բանի մը կարօտի պէս. քանզի ինք կու տայ ամէնուն կեանք ու շունչ և ամէն բան . 26 – Ու բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ , որպէս զի բոլոր երկրի երեսին վրայ բնակին . և որոշած ժամանակներ հաստատեց , ու անոնց բնակութեան սահմանները՝ զԱստուած փնտռելու . 27 – Որ ըլլայ թէ խարխափելով զինք գտնեն . թէպէտև մեր ամէն մէկուն ալ հեռու չէ. 28 – Վասն զի անով կ'ապրինք և կը շարժինք ու կանք , ինչպէս ձեր բանաստեղծներէն մէկ քանիներն ալ ըսին, Քանզի մենք անոր ցեղէն ալ ենք: 29 – Ուստի, որովհետև Աստուծոյ ցեղէն ենք, պէտք չէ որ այնպէս սեպհնք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդու վարպետութիւնով ու խելքով քանդակուած է: 30 – Արդ Աստուած ազգութեան տեսնները անտես ընելով՝ հիմա ամէն տեղ կը պատուիրէ բոլոր մարդոց որ ապաշխարեն : 31 – Վասն զի ինք օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդուն ձեռքով՝ զոր որոշեց, ու ամէնուն հաւատացուց՝ զանիկա մեռելներէն յարուցանելով :

32 – Երբ մեռելներուն յարութիւնը լսեցին, ոմանք ծաղր կ'ընէին , ոմանք ալ կ'ըսէին , Այդ բանին համար ուրիշ անգամ մտիկ պիտի բնենք քեզի: 33 – Եւ այսպէս Պօղոս անոնց մէջէն ելաւ: 34 – Սակայն քանի մը մարդիկ իրեն յարելով հաւատացին , որոնց մէջ էր Դիոնեսիոս Արիսպագացի և Դամարիս անուանով կին մը, ու անոնց հետ ուրիշներ ալ :

## ԳԼ. ԺԸ

Ա՛ետև եւս Պօղոս Աթէնքէ ղատաւելով՝ Կորնթոս եկաւ, 2 – Եւ Հրեայ մը գտաւ Ակիւղաս անունով , ծնունդով Պոնտացի , որ իր Պրիսկիղլա կնոջ հետ նոր եկեր էր Իտալիայէ , (Կղօդիոս հրամայած հրամանին համար որ բոլոր Հրեաները Հռովմէ հեռանան ,) ու անոնց քով գնաց : 3 – Եւ որովհետև ինք արհեստակից էր, անոնց քով կեցաւ և կը բաներ, վասն զի արհեստով վրանագործ էին: 4 – Ու ամէն շաբաթ

օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները ու Յոյները կը համոզէր։ 5- Ու երբ Շիղա և Տիմոթէոս Մակեդոնիայէ իջան, Պօղոս Հոգին եռանդով վառուած ըլլալով, Հրեաներուն վկայութիւնով կը հաստատէր թէ Յիսուսը Քրիստոսն է։ 6 - Անոնք ալ երբ դէմ կեցան ու կը հայհոյէին, ինք հանդերձները թօթուելով ըսաւ անոնց, Ձեր արիւնը ձեր գլուխը, ես անպարտ եմ. ասկէ ետև հեթանոսներուն պիտի երթամ։ 7 - Ես անկէ երթալով մտաւ մէկուն տունը, որուն անունը *Յուստոս էր, աստուածավախ մարդ մը, որուն տունը ժողովարանին կից էր։ 8 - Եւ ժողովրդապետը, Կրիսպոս, իր բոլոր տունովը հաստատց Տէրոջը. և Կորնթացիներէն շատերը լսելով հաւատացին, ու մկրտուեցան։ 9 - Եւ գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ Պօղոսի, Մի վախնար, հապա խօսէ և լռեւ մի կենար, 10 - Վասն զի ես քեզի հետ եմ, և մէկը քեզի դէմ պիտի չելլէ՝ քեզի չարա մը հասցնելու. քանզի այս քաղաքին մէջ ես շատ ժողովուրդ ունիմ։ 11 - Եւ հոն տարի մը ու վեց ամիս կեցաւ, ու Աստուծոյ խօսքը անոնց մէջ կը սորվեցնէր։

12-Եւ Աքայիայի փոխանորդ Գեղէքն, Գաղիոնի, օրերը Հրեաները միաբանելով Պօղոսի դէմ եղան, և զանիկա առեանը տարին, 13 - Ըսելով թէ Աւիկա կը հրապուրէ մարդիկ օրէնքէն դուրս պաշտել։ 14 - Ու երբ Պօղոս իր բերանը բանալու պատրաստ էր, Գաղիոն ըսաւ Հրեաներուն, Եթէ անիրաւութեան մը կամ չար գործի մը համար ըլլար, ով Հրեաներ, արժան էր ինձի որ ձեզի մտիկ ընէի։ 15 - Բայց եթէ վէճ խօսքի ու անուններու և ձեր օրէնքին վրայով է, դուք ձեզմէ տեսէք. վասն զի ես այդպիսի բաներուն դատաւոր ըլլալ չեմ ուզեր։ 16 - Եւ զանոնք առեանէն վռնտեց։ 17 - Ա՛յն ատեն բոլոր Յոյները Սոսթենէսը ժողովրդապետը բռնեցին ու առեանին առջև կը ծեծէին, և այս բաներուն վրայով Գաղիոն բնաւ հոգ չէր ընէր։

18 - Պօղոս ալ տակաւին շատ մը օրեր հոն մնալէ ետքը, եղբայրներէն հրաժարելով նաւով դէպ ի Սիւրիա գնաց, ու իրեն հետ ալ Պրիսկիլլա և Ակիւղաս, որոնք կէնքրէայի մէջ էր գլուխը փորթած, վասն զի ուխտաւոր էր։ 19 - Ու երբ Եփեսոս հասաւ, զանոնք հոն ձգեց, և ինք ժողովարանը մտնելով Հրեաներուն հետ կը խօսէր։ 20 - Եւ իրեն կ'աղաչէին որ ա՛լ աւելի ժամանակ իրենց քով մնայ, բայց չհամաձայնեցաւ. 21 - Հապա հրաժարեցաւ անոնցմէ ըսելով, *Պէտք է որ անպատճառ այս առաջիկայ տօնը Երուսաղէմի մէջ ընեմ, բայց Աստուծոյ կամքովը նորէն ձեզի կը դառնամ։ ու Եփեսոսէ նաւով ճամբայ ելաւ։ 22 - Եւ Կեսարիա հասնելով ելաւ՝ աղ եղաւ, ու եկեղեցին բարեւ տուաւ, ու Խթէը իջաւ Անտիոք։ 23 - Եւ ատեն մը հոն կենալէ ետև ելաւ, ու կարգաւ Գաղատացւոց երկիրը ու Փռիւգիա կը պտրտէր, ու բոլոր աշակերտները կը հաստատէր։

24 - Եւ Ապողոս անունով Հրեայ մը, ծնունդով Աղեքսանդրացի, ճարտասան մարդ մը, եկաւ Եփեսոս, որ զօրաւոր էր սուրբ գիրքերով։ 25- Ապիկա Տէրոջը ճամբուն մէջ վարժուած էր, և ջերմեռանդ հոգի ունենալով կը խօսէր ու կը սորվեցնէր ճշդութեամբ Տէրոջը վրայով. բայց ինք միայն Յովհաննէսի մկրտութիւնը գիտէր։ 26 - Աւիկա սկսաւ ժողովարանին մէջ համարձակ խօսիլ. ու երբ Ակիւղաս ու Պրիսկիլլա լսեցին անկէ, ալ զանիկա իրենց քով առին, և աւելի ճշդիւ Աստուծոյ ճամբան անոր հասկցուցին։ 27 - Ու երբ անկից ուզեց Աքայիա երթալ, եղբայրները քաջալերեցին զինքը, ու գիր գրեցին այն թէղէ աշակերտներուն որ զանիկա ընդունին, որ հոն հասնելով շատ օգտակար եղաւ շնորհքով հաւատացեալներուն. 28 - Քանզի հրապարակաւ ատտիկ կը յաղթէր Հրեաները, աստուծոյ գիրքերէն ցուցնելով թէ Յիսուսը Քրիստոսն է։

## Գլ. ԺԹ

Եւ քանի որ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօղոս վերի կողմերը պտրտելով Եփեսոս եկաւ, և քանի մը աշակերտներ գտնելով 2 - Ըսաւ անոնց,

*Ոմանք, Տէրոջ Յուստոս



Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առիք որոգեօք. անոնք ալ ըսին իրեն, Բայց մենք լսած ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ։ 3 - Եւ ըսաւ անոնց, Հապա ինչո՞վ մկրտուեցաք. անոնք ալ ըսին, Յովհաննէսի մկրտութիւնովը։ 4 - Պօղոս ալ ըսաւ, Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնով մկրտեց, ժողովուրդին ըսելով թէ ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այսինքն Քրիստոս Յիսուսի։ 5 - Ու երբ ասոնք լսեցին, Տէր Յիսուսի անունովը մկրտուեցան։ 6 - Եւ Պօղոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ, և լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային։ 7 - Եւ այն բոլոր մարդիկը աստուերկու-քի չափ էին։ 8 - Ու ժողովարանը մտնելով երեք ամիս համարձակութեամբ Աստուծոյ թագաւորութեանը վրայով կը խօսէր ու կը համոզէր։ 9 - Իսկ երբ մէկ քանիները կը յամառէին ու դէմ կը դնէին՝ բամբասելով, ինք անոնցմէ հեռացաւ և աշակերտները զատեց, ու ամէն օր Տիւրան անուն մէկուն դպրատանը մէջ կը խօսէր։ 10 - Եւ տարի երկու տարի տևեց, մինչև բոլոր Ասիայի մէջ բնակող Հրեաները ու Յոյները *Տէրոջը խօսքը լսեցին։ 11 - Եւ Աստուած նշանաւոր հրաշքներ կ'ընէր Պօղոսի ձեռքով. 12 - Այնպէս որ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ կը տանէին հիւանդներուն, և իրենց ցաւերէն կը բժշկուէին, ու չար ոգիները կ'ելլէին։ 13 - Բայց ասոնք դպիրներ Հրեաներէն մէկ քանիները, որոնք երդմնեցուցիչ էին, †յանդգնեցան Տէր Յիսուսի անունը կանչել անոնց վրայ որոնք չար ոգիներ ունէին, և կ'ըսէին, Ձեզ կ'երդմնցնենք Յիսուսով, զոր Պօղոս կը քարոզէ։ 14 - Եւ այս բանը ընողները Սկեւա քահանայապետի մը եօթը որդիներն էին։ 15 - Իսկ չար ոգին պատասխան տուաւ ու ըսաւ, Յիսուսը կը ճանչնամ ու Պօղոսը գիտեմ, բայց դուք ո՞վ էք։ 16 - Եւ այն մարդը որուն ներսիդին էր չար ոգին, անոնց վրայ ցատկելով բռնեց զանոնք ու յաղթեց, մինչև որ այն տունէն մերկ ու վիրաւորուած դուրս փախան։ 17- Եւ այս բանը Եփեսոսի մէջ բնակող բոլոր Հրեաներուն ու Յոյներուն յայտնի եղաւ. և անոնց ամէնուն վրայ վախ մը ինկաւ, ու Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր։ 18 - Եւ հաւատացեալներէն շատերը կու գային, ու կը խոստովանէին ու կը պատմէին իրենց րրածները։ 19 - Եւ կախարդութեան հետևողներուն շատերը գիրքերնին մէկտեղ բերելով՝ ամէնուն առջև կ'այրէին. և անոնց գինը հաշուեցին ու գտան տասը արծաթի դահեկան գաան։ 20-Այսպէս Տէրոջը խօսքը մեծապէս կ'աճէր և կը զօրանար։

21 - Ու երբ այս բաները լմնցան, Պօղոս միտքը դրաւ որ Մակեդոնիայէ ու Աքայիայէ պտրտելով Երուսաղէմ երթայ. ու կ'ըսէր թէ Հոն երթալէս ետքը պէտք է ինծի որ Հռովմ ալ տեսնեմ։ 22 - Եւ իրեն ազատասորութեան ընդներէն երկուքը, Տիմոթէոսը ու Երաստոսը, զրկեց Մակեդոնիա, ու ինք տահն մընն ալ Ասիայի մէջ կեցաւ։

23 - Եւ այն տարիները շատ խռովութիւն եղաւ Տէրոջը ճամբուն համար։ 24 - Քանզի Դեմետրիոս անուանով արծաթագործ մը Արտեմիսի փոքրիկ տաճարներ կը շինէր արծաթէ, ու քիչ շատ չէր բերեր վարպետներուն. 25 - Զորոնք տակաւ մէկտեղ ժողվեց նոյն արհեստին բանուորներուն հետ, ու բսաւ, Մարդիկ, դուք գիտէք որ այս գործէն է մեր շահը. 26 - Եւ կը տեսնէք ու կը լսէք որ այս Պօղոսը ոչ միայն Եփեսացւոց, հապա գրեթէ բոլոր Ասիացւոց շատ ժողովուրդները համոզելով միտքերնին դարձուց, ըսելով թէ Ձեռքով շինուածները աստուածներ չեն։ 27 - Ուստի վտանգ կայ որ ոչ միայն այս մեր *կողմը պիտի նախատուի, հապա մեծ աստուածուհւոյն, Արտեմիսի, տաճարն ալ ոչինչ պիտի սեպուի, և անոր մեծափառութիւնը պիտի խափանուի, զոր բոլոր Ասիա ու աշխարհ կը պաշտեն։ 28 - Ու երբ ասոնք լսեցին, բարկութեամբ լեցուած կը կանչռըռտէին ու կ'ըսէին, Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։ 29 - Եւ բոլոր քաղաքը խռովութեամբ լեցուեցաւ. և յափշտակելով Գայիոս

*Կամ, արհեստը

*Ոմանք, Տէր Յիսուսի
†Յոյն. ձեռք զարկին

ու Աբիսագաքոս Մակեդոնացիները, Պօղոսի ճանապարհորդակիցները, ամէնը մէկէն թեսաղոնիկը վազեցին։ 30-Իսկ Պօղոս երբ ուզեց ժողովուրդին մէջ մտնել, աշակերտները թոյլ չտուին զինք։ 31-Ասիոյ պետերէն ալ ոմանք որոնք իր բարեկամներն էին, մարդ ղրկելով իրեն՝ կ'աղաչէին որ չէամարձակի թեսաղոնիկ երթալ։ 32-Ուստի մէկը մէկ կերպ ու միւսը ուրիշ կերպ բան կը կանչէին ընդհանուրին, վասն զի ժողովքը շփոթութեան մէջ էր, և շատերը չէին գիտեր թէ ինչ բանի համար ժողված են։ 33-Եւ բազմութենէն մէջէն յոյներ բերին Աղեքսանդրոսը, զոր Հրեաները յառաջ քշեցին. Աղեքսանդրոս ալ ձեռքը շարժելով՝ կուզէր որ ժողովուրդին պատասխան տայ։ 34-Իսկ երբ գիտցան թէ անիկա Հրեայ է, ամէնը մէկ բերան եղած՝ երկու ժամու չափ կը կանչէին ընդհանուրին թէ Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։ 35-Սակայն տեղապետը բազմութիւնը հանդարտեցնելով՝ ըսաւ, Ով Եփեսացի մարդիկ, ո՞ր մարդն է որ չգիտնայ թէ Եփեսացւոց քաղաքը *մեծ Արտեմիսի և Դիոսէ ինկած կուռքին տաճարին պաշտօնեան է։ 36-Ուրեմն այս որ անվիճելի բան մըն է, պէտք է ձեզի հանդարտ կենալ և չանգգուշութեամբ բան մը չընել։ 37-Քանի դուք այդ մարդիկը հոս բերիք, որոնք ոչ տաճար կողոպտողներ են, ոչ ալ ձեր աստուածուհւոյն հայհոյանք ըրեր են։ 38-Ուստի եթէ Դեմետրիոս և իրեն հետ եղած վարպետները մեկուն հետ բան մը ունին, դատի օրեր կան ու փոխանորդ ունինք կոչ. թող իրարու դէմ ամբաստանութիւն ընեն։ 39-Իսկ եթէ ուրիշ բանէրու համար է ձեր պահանջմունքը, օրինաւոր ժողովքի մէջ թող որոշուի։ 40-Վասն զի մենք ալ այսօրուան ելոյթին համար իրօք խռովայոյզ մարդիկ ամբաստանուելու վտանգի մէջ ենք, քանզի պատճառ մը չկայ որով կարող ըլլանք այս խառնամբոխ բազմութեան համար պատասխան տալ։ Եւ այսպէս ըսելով ժողովքը արձակեց։

*Ոմանք, մեծ աստուածուհւոյն

## ԳԼ. Ի

Եւ աղմուկին դադարելէն ետև Պօղոս աշակերտները իրեն կանչեց, ու հրաժարական ողջոյն տալով՝ ելաւ որ Մակեդոնիա երթայ։ 2-Եւ այն կողմերը պարտելէ ու շատ խօսքերով զանոնք յորդորելէ ետև Ելլադա եկաւ։ 3-Եւ հոն երեք ամիս կենալէ ետքը, Հրեաները իրեն դէմ նենգութեան խորհուրդ ըրին երբ կ'ուզէր Ասիա երթալ. անոր համար որոշեց Մակեդոնացի վերստին դառնալ։ 4-Ու մինչև Ասիա իրեն հետ կ'երթար Բերիացի Պիւռոսի որդին] Սոպատրոս, և Թեսաղոնիկեցիներէն Արիստարքոս ու Սեկունդոս, և Գայիոս Դերբացի ու Տիմոթէոս, և Ասիացիք, Տիւքիկոս ու Տրոփիմոս։ 5-Ասոնք առաջ գացին ու Տրովադայի մէջ մեզի կը սպասէին։ 6-Մենք ալ բաղարջակերքի օրերէն ետև Փիլիպպէ նաւեցինք, և հինգ օրուան մէջ Տրովադա եկանք անոնց քով, ու հոն եօթը օր կեցանք։

7-Եւ մէկշաբթի օրը երբ *ժողովուրդը կերկը՝ հաց կոտրելու, Պօղոս առնոնց կը քարոզէր, վասն զի հետևեալ օրը ճամբայ պիտի ելլէր. և խօսքը երկնցուց մինչև կէս գիշեր։ 8-Ու շատ լապտերներ կային այն վերի սենեակը՝ ուր մենք ժողված էինք։ 9-Եւ երիտասարդ մը, Եւտիքոս անուն, պատուհանին վրայ նստած՝ խորունկ քունի մէջ մտեր էր. երբ Պօղոս խօսքը երկնցուց, անկիա խորունկ քնով բռնուած՝ երրորդ դասիկունէն վար ինկաւ, ու ջանիկա մեռած վերցուցին։ 10-Եւ Պօղոս վար իջնելով անոր վրայ ինկաւ ու գրկեց ըսելով՝ Մի խռովիք, վասն զի ասոր հոգին իր մէջ է։ 11-Եւ վեր ելլելով՝ հացը կոտրեց ու կերաւ. ու երկար խօսելով մինչև առաւօտ, ետքը ելաւ գնաց։ 12-Եւ այն պատանին ողջ բերին. ու մեծապէս մխիթարուեցան։ 13-Իսկ մենք նաւը մտնելով՝ ճամբայ ելանք դէպ ի Ասոն, ուրկէ Պօղոսը պիտի առնէինք, վասն զի այնպէս ապսպրեր էր, որովհետև ինք †ցամաքով պիտի երթար։ 14-Ու երբ Ասոնի մէջ մեզի հանդիպեցաւ, առինք զանիկա և Միտիլենէ

*Ոմանք, աշակերտները ժողովուր էին
†Կամ, քալելով



եկանք։ 15-Անկէ ալ նաւելով հետևեալ օրը Քիոսի դիմաց հասանք. և միւս օրը Սամոս հասանք, ու Տրոգիլիոն կենալով միւս օրը Մելիտոս եկանք. 16-Վասն զի Պօղոս միտքը դրեր էր որ նաւով անցնի Եփեսոսի քովէն, որ չըլլայ թէ Ասիայի մէջ ժամանակ անցնէ, որովհետև կ'արագրագ որ եթէ կարելի է իրեն, Պենտեկոստէն օրը Երուսաղէմ ըլլայ։

17-Եւ Մելիտոսէ *ղրկեց Եփեսոս ու եկեղեցիին երէցները կանչեց։ 18-Ու երբ իրեն եկան, ըսաւ անոնց, Դուք գիտէք որ այն առաջին օրէն հետէ որ ես Ասիա եկայ, ինչպէս ձեզի հետ վարուեցայ բոլոր ժամանակը. 19-Ամենայն խոնարհութեամբ Տէրոջը ծառայելով, և շատ արցունքով ու փորձութիւններով որոնք Հրեից նենգութիւններէն ինծի պատահեցան. 20-Ինչպէս ընթացաւ ես չկեցայ օգտակար բաներէն բնաւ մէկը ձեզի զրուցելէ, ու ձեզի հրապարակաւ և տան մէջ սորվեցնելէ. 21-Վկայութիւն տալով Հրեից և Յունաց ապաշխարութեան դէպ ի Աստուած ապաշխարութեան համար, ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ հաւատալին համար։ 22-Եւ հիմա ահա ես Հոգիով կապուած՝ Երուսաղէմ կ'երթամ, և հոն ինչ որ ինծի պիտի պատահի չեմ գիտեր. 23-Միայն թէ Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ ինծի կը վկայէ ու կ'ըսէ թէ կապեր ու նեղութիւններ ինծի կը սպասեն։ 24-Բայց ես բանի մը համար հոգ չեմ ըներ, և իմ անձս պատուական չեմ սեպեր, միայն թէ իմ ընթացքս ուրախութեամբ կատարեմ, և այն պաշտօնը՝ զոր Տէր Յիսուսէ առի Աստուծոյ շնորհաց աւետարանին վկայ ըլլալու։ 25-Եւ հիմա ահա ես գիտեմ որ ա՛լ իմ երեսս պիտի չտեսնէք դուք ամէնդ, որոնց մէջ պատեցայ Աստուծոյ թագաւորութիւնը քարոզելով։ 26-Ուստի այսօր կը վկայեմ ձեզի, որ ես անպարտ եմ ամէնուն արիւնէն։ 27-Վասն զի ես չկեցայ Աստուծոյ բոլոր կամքը ձեզի յայտնելէ։ 28-Ուրեմն դուշացէք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ *Աստուծոյ եկեղեցին հովուելու զոր իր արիւնովը ստացաւ։ 29-Քանզի գիտեմ որ իմ գաղուելէս ետքը ձեր մէջ *յափշտակող գայլեր պիտի մտնեն, որոնք պիտի չխնայեն հօտին։ 30-Եւ ձեզմէ ալ ոմանք պիտի ելլեն, որոնք ծուռ բաներ պիտի խօսին՝ աշակերտները իրենց ետևէն քաշելու համար։ 31-Ուստի արթուն կեցէք, և միտքերնիդ բերէք՝ որ երեք տարի գիշեր ու ցորեկ չդադարեցայ ամէն մէկը արցունքով խրատելէ։ 32-Եւ հիմա, եղբայրներ, կը յանձնեմ ձեզ Աստուծոյ ու անոր շնորհաց խօսքին, որ կարող է շինելու և բոլոր սրբուածներուն հետ ձեզի ժառանգութիւն տալու։ 33-Մէկու՛ն արծաթին կամ ոսկիին կամ հագուստին չգանկացայ. 34-Դուք ձեզմէ գիտէք որ ինծի և ինծի հետ եղողներուն պէտքերը այս ձեռքերս հոգացին։ 35-Ամէն բան ձեզի ցուցուցի, թէ այսպէս պէտք է աշխատիլ ու տկարներուն օգնութիւն ընել, և միտք բերել Տէր Յիսուսի խօսքը՝ զոր ինք ըսաւ, Աւելի երանելի է տալը քան թէ առնելը։ 36-Եւ երբ զայս ըսաւ, անոնց ամէնուն հետ ծունկի վրայ գալով աղօթք ըրաւ։ 37-Ամէնն ալ սաստիկ կուլային, ու Պօղոսի պարանոցին վրայ ինկալով զանիկա կը համբուրէին։ 38-Միրտերնին կը ցաւէր մանաւանդ այն խօսքին համար՝ որ կ'ըսէր թէ ա՛լ պիտի չտեսնեն իր երեսը. և զանիկա ճամբայ դրին մինչև նաւը երթալ։

## ԳԼ. ԻՄ.

Ու երբ ելանք ու անոնցմէ զատուեցանք, շիտակ նաւելով Կոս եկանք, և միւս օրը Հռոդոս, ու անկէ Պատարա։ 2-Եւ նաւ մը գտանք որ Փիւնիկէ կ'երթար, ու անոր մէջ մտնելով՝ ճամբայ ելանք։ 3-Եւ երբ Կիպրոս երեացաւ, զանիկա ձախ կողմերնիս թողելով դէպ ի Սիւրիա նաւեցինք և Տիւրոս ելանք, վասն զի նաւը հոն պիտի թափէր իր բեռը։ 4-Եւ աշակերտները գտնելով եօթը օր հոն կեցանք, որոնք Սուրբ Հոգիով կ'ըսէին Պօղոսի որ Երուսաղէմ չելլէ։ 5-Ու երբ այն օրերը անցուցինք, ելանք ու կերթայինք. ամէնն ալ կիներով ու տղաք-

*Կամ, վերատակար

ներով մինչև քաղաքէն դուրս մեզ ճամբայ դրին. և Ծովուն եղերքը ծունկի վրայ գալով՝ աղօթք ըրինք ։ 6 – Ու իրարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը ելանք , անոնք ալ տեղերնին դարձան։ 7 – Իսկ մենք Տիւրոսէ ղատ-ելով և Ծովու ճամբորդութիւնը լմնցնելով՝ Պտողեմայիս հասանք, ու եղբայրները բարևելով օր մը անոնց քով կեցանք։ 8 – Եւ հետևեալ օրը *ՅԷն ելանք ու Կեսարիա եկանք , և Փիլիպպոս աւետարանչին տունը մտնելով , որ եօթնէն մէկն էր , անոր քով կեցանք ։ 9 – Անոր չորս կոյս աղջիկ ունէր , որոնք մարգարէութիւն կ'ընէին ։ 10 – Եւ երբ հոն շատ օրեր կեցանք , Հրէաստանէ մարգարէ մը ի-ջաւ Ագաբոս անունով ։ 11 – Ու երբ մեզի եկաւ , Պօղոսի գօտին առնելով իր ձեռքերը ու ոտքերը կապեց , և ըսաւ , Այսպէս կ'ըսէ Հոգին Սուրբ , Այն մարդը՝ որուն է այս գօտին, այսպէս պիտի կապեն Հրէաները Երուսաղէմի մէջ, ու հեթանոսներուն ձեռքը պիտի մատնեն։ 12 – Ու երբ մենք ալ եկանք , ինքզինքնիս աղաչեցինք մենք ալ և տեղացիք ալ որ Երուսաղէմ չելլէ ։ 13 – Իսկ Պօղոս պատասխան տուաւ , Ինչ կ'ընէք , ինչո՞ – կու լայք ու իմ սիրտս կը ճմլէք, քանզի ես ոչ թէ միայն Երուսաղէմի մէջ կապուելու , հապա նաև մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուսի անունին համար ։ 14 – Եւ երբ ինք մեզի չկրնաւ՝ լուռ կեցանք , ու ըսինք, Տէրոջը կամքը թող ըլլայ ։

15-Եւ այն օրերէն ետև պատրաստուելով Երուսաղէմ ելանք։ 16-Կեսարացի աշակերտներէն ալ մէկ քանիներ մեզի հետ եկան, և Ղեւտարին նախանի աշակերտի մը, Կիպրացի Մնասոնի, որուն քով պիտի կենայինք ։ 17 – Ու երբ Երուսաղէմ մնանք , եղբայրները ուրախութեամբ մեզ ընդունեցին։ 18-Եւ հետևեալ օրը Պօղոս մեզի հետ Յակոբոսի քով գնաց , ու բոլոր երէցներն ալ եկան։ 19-Եւ զանոնք բարևելով մի քսա միջէ կը պատմէր ինչ որ Աստուած հեթանոսներուն մէջ ըրաւ իր ծառայութիւնովը ։ 20-Անոնք ալ լսելով՝ փառք կու տային †Տէրոջը. և ըսին իրեն, Կը տեսնե՞ս, եղբայր, քանի՛ բիւրաւոր Հաւատացեալ Հրեաներ կան , ու ամէնն ալ օրէնքին նախանձաւոր են ։ 21 – Բայց քու վրայդ իմացան թէ դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրեաներուն Մովսէսէ ապստամբիլ կը սորվեցնես, ըսելով որ տղաքնին չթլփատեն, և սովորութիւններուն համեմատ չվարուին։ 22 – Արդ ինչ պիտի ըլլայ . անշուշտ բազմութիւն պիտի ժողվուի , վասն զի պիտի լսեն թէ եկեր ես ։ 23 – Ուստի այս բանը ըրէ զոր քեզի կ'ըսենք. Մեր քով չորս մարդ կայ , որոնք իրենց վրայ ուխտ դրած են. 24 – Զանոնք առ , իրենց հետ մաքրուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ իրենց գլուխը սնլեն ։ որպէս զի ամէնն ալ գիտան թէ քու վրայովդ իմացած բաներնին սչինչ է , հապա դուն ալ–ՅԷն հետ կը քալես օրէնքը պահելու մէջ ։ 25 – Բայց հաւատքի եկող հեթանոսներուն համար մենք թուղթ ղրկեցինք՝ ինչպէս որոշեցինք, որ անոնք բնաւ այսպիսի բաներ չպահեն. միայն թէ զգուշանան կուռքերու զոհուածէ ու արիւնէ և խեղդուածէ ու պոռնկութենէ ։ 26 – Այն ատեն Պօղոս այն մարդիկը առաւ , ու հետևեալ օրը անոնց հետ մաքրուած՝ տաճարը մտաւ, մաքրութեան օրերուն լմնալը յայտնելու համար, մինչև որ ամենոնց ամէն մէկուն համար պատարագ մատուցուեցաւ ։

27 – Ու երբ եօթը օրերը լմնալու վրայ էին, Ասիացի Հրեաները զանիկա տաճարին մէջ տեսնելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին, և անոր ձեռք զարկած՝ կը կանչռըտէին, 28 – Իսրայելացի մարդիկ , օգնութեան հասէք. սա այն մարդն է՝ որ ամէն տեղ ժողովուրդին և օրէնքին ու այս տեղին դէմ բան կը սորվեցնէ ամէնուն. մինչև տաճարին մէջ Յոյներ ալ մըտցուց, և այս սուրբ տեղը պղծեց. 29 – (Վասն զի առաջուընէ Եփեսացի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջ տեսեր էին, և կը կարծէին թէ Պօղոս զանիկա տաճարը մտցուց.) 30 – Ու բոլոր քաղաքը շարժեցաւ և ժողովուրդը դիպուեցաւ, ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս քաշեցին . և շատ մը դռները գոցուեցան։ 31-Ու երբ անոնք կ'ուզէին զանիկա սպաննել , լուր հասաւ գունդին հազարապետին թէ բոլոր Երուսաղէմ իրար անցեր է ։ 32 – Ան ալ անմիջապէս զինուորներ և հարիւրապետներ առած անոնց վրայ վազեց. անոնք ալ հազարապետը և զինուորները տեսնելով՝ Պօղոսը ծեծելէ դադրեցան։ 33-Այն ատեն հազարապետը մօտենալով բռնեց զանիկա , և հրամայեց որ կրկին շղթայով կապուի . ու կը հարցնէր թէ անիկա ո՞վ է ու ի՛նչ ըրեր է ։ 34 – Եւ բազմութեանը մէջէն մէկը մէկ կերպ ու մէկը միւս կերպ բան կը կանչռըտէին. իսկ երբ չկրցաւ այն չխոհեմութենէն ստոյգը դիտալ , հրամայեց որ զանիկա բերդը տանին։ 35 – Ու երբ սանդուխը հասաւ, այնպէս պատահեցաւ որ զինուորները վեր վերցնեն զանիկա , ժողովուրդին բռնութեանը համար . 36 – Վասն զի ժողովուրդին բազմութիւնը եւեւէն կ'երթար , ու կ'ըսէին , Վերցուր ատիկա ։ 37 – Ու երբ Պօղոս բերդը մտնելու վրայ էր , հազարապետին ըսաւ, Արդեօք կարելի՞ է որ քեզի բան մը խօսիմ ։ Ան ալ ըսաւ, Յունարէն գիտե՞ս. 38 – Չէ՞ որ դուն այն Եգիպտացին ես , որ այս օրերէն առաջ չորս հազար *սրիկայ մարդիկ ապստամբեցուցիր , ու անապատը հանեցիր։ 39 – Պօղոս ալ ըսաւ, Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկեայ Տարսոնէն, ոչ թէ անշնորհ քաղաքի մը քաղաքացի , ու կ'աղաչեմ քեզի ինծի հրաման տուր որ ժողովուրդին խօսիմ։

40-Ու երբ անիկա հրաման տուաւ , Պօղոս սանդուխին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողովուրդին , ու երբ մեղկ մը լռութիւն եղաւ , Երբայական լեզուով խօսեցաւ անոնց , ու ըսաւ,

## ԳԼ· ԻԲ

Արդիկ եղբայրներ և Հայրեր , լսեցէք ինծի ձեզի պատասխան կու տամ ։ 2 – (Երբ լսեցին որ Երբայական լեզուով կը խօսէր իրենց, ալ աւելի լուռ կեցան ։ 3 – Եւ անիկա ըսաւ,) Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկեայ Տարսոնի մէջ ծնած , և այս քաղաքին մէջ Գամալիէլի ոտքը մեծցած , ու Հէր Հայրերնի օրէնքին ճշդութեանը պէս կրթուած, նախանձաւոր էի Աստուծոյ , ինչպէս այսօր դուք ամէնդ կը ։ 4 – Որ այրեր ու կիներ կապելով , ու բանտերու մտնելով այս ճամբան հալածեցի մինչև ի մահ ։ 5 – Ինչպէս քահանայապետն ալ կը վկայէ ինծի համար , և բոլոր ծերակոյտը ։ որոնցմէ թուղթեր ալ առնելով եղբայրներուն Դամասկոս կ'երթայի , որպէս զի հոն եղածներն ալ կապուած երուսաղէմ բերեմ որ պատժուին։ 6 – Ու եղաւ որ երբ կ'երթայի ու Դամասկոսի մօտեցայ, կէսօրուան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ բովտիքս ։ 7 – Եւ գետինը ինկայ , ու ձայն մը լսեցի որ ինծի կ'ըսէր , Սաւուղ , Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես։ 8 – Ես ալ պատասխան տուի Թէ Դուն ո՞վ ես, Տէր. ան ալ ինծի ըսաւ , Ես Յիսուս Նազովրեցին եմ , զոր դուն կը հալածես ։ 9 – Բայց անոնք որ ինծի հետ էին, լոյսը տեսան ու վախով լեցուեցան, սակայն ինծի խօսողին ձայնը չլսեցին ։ 10 – Եւ ըսի , Ի՞նչ ընեմ , Տէր . և Տէրը ինծի ըսաւ , Ելիր գնա Դամասկոս, ու հոն քեզի պիտի զբաղուսւի այն ամէն բաներուն համար , որ սահմանուած է որ ընես ։ 11 – Ու երբ չէի տեսներ այն լոյսին փառքէն, ինծի հետ եղողները ձեռքէս բռնած՝ Դամասկոս մտայ։ 12 – Եւ Անանիա անուն մարդ մը, օրէնքին համեմատ ատատուածասէր , ու Դամասկոս բնակող բոլոր Հրեաներէն բարի վկայուած, 13 – Ինծի եկաւ , ու քովս կայնելով՝ ինծի ըսաւ , Սաւուղ եղբայր , վեր նայէ ։ 14 – Եւ ես ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն, և անիկա ըսաւ , Մեր Հայրերուն Աստուածը առաջուընէ քեզ ընտրեց, որպէս զի իր կամքը ճանչնաս ու այն Արդարը տեսնես, և անոր բերնէն ձայն լսես ։ 15 – Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ պիտի ըլլաս այն բաներուն համար, զորս նաև տեսար ու լսեցիր։ 16 – Եւ հիմա , ալ ի՞նչ կ'ուշանաս . ելիր, մկրտուէ ու մեղքերդ լուա *անոր անունը կանչելով ։ 17 – Եւ եղաւ որ երբ Երուսաղէմ դարձայ , ու տաճարին մէջ աղօթք կ'ընէի , մտքի յափշտակութիւն մը եկաւ վրաս, 18 – Եւ զինք տեսայ, որ ինծի կ'ըսէր , Արագացիր , շուտով Երուսաղէմէ ելիր , վասն զի քու վկայութիւնդ իմ մասիս չպիտի ընդունին։ 19 – Եւ ես ըսի , Տէր , անոնք գիտեն որ ես զանազան ժողովարանները կը բանտարկէի և կը ծեծէի զանոնք որ քեզի կը հաւատային ։ 20 – Եւ երբ քու վկայ Ստեփանոսիդ արիւնը կը թափէին , ես ալ հոն կայնած և անոր սպանութեանը հաճելի կը տեսնէի , և անոնց հանդերձները պահողը կ'ըլլայի ։ 21 – Ան ալ ըսաւ ինծի , Գնա , վասն զի ես քեզ հեռու հեթանոսներու պիտի ղրկեմ ։

22 – Մինչև այս խօսքը լսեցին , ու իրենց ձայնը վերցնելով՝ ըսին , Երկրէ վերցուր այդպիսին , վասն զի չի վայելեր որ ան կենդանի մնայ ։ 23 – Եւ երբ կ'աղաղակէին , հանդերձները կը նետէին , և հողմ կը ցանէին օդին մէջ , 24 – Հազարապետը զանիկա զինուորանոց տանիլ տուաւ , և հրամայեց որ հարուածներով հարցաքննեն զանիկա , որպէս զի գիտնայ թէ ինչ պատճառով այսպէս կը գոռային անոր դէմ ։ 25 – Երբ ալ զանիկա գոտիներով կը կապէին , Պօղոս ըսաւ հարիւրապետին որ հոն կայնած էր , Հռոմայեցի մարդ մը եղած ատենդ անհատնում դատապարտելու իրաւունք ունի՞ս ։ 26 – Հարիւրապետը լսելով՝ հազարապետին գնաց և ըսաւ , Ի՞նչ ընելու ես , որ այս մարդը Հռոմայեցի է ։ 27 – Հազարապետը եկաւ և ըսաւ , Ըսէ ինծի , Հռոմայեցի ես դուն ։ Ան ալ ըսաւ , Այո ։ 28 – Հազարապետը պատասխանեց , Ես մեծ դրամով այս քաղաքացիութիւնը ձեռք բերի ։ Պօղոս ալ ըսաւ , Ես ալ ծնած եմ անոր մէջ ։ 29 – Ուստի անոնք որ զանիկա պիտի հարցաքննէին , անմիջապէս հեռացան անկէ , և հազարապետն ալ վախցաւ երբ գիտցաւ որ Հռոմայեցի է , և որ կապած էր զանիկա ։

30 – Հետևեալ օրը , ուզելով գիտնալ ստոյգ պատճառը թէ ինչու համար Հրեաները կը մեղադրէին զանիկա , զանազանեց զանիկա , և հրամայեց որ քահանայապետները և անոնց բոլոր ժողովը գան , և Պօղոսը իջեցնելով՝ առջևնին կանգնեցուց ։

## ԳԼ· ԻԳ

Եւ Պօղոս ուշադրութեամբ նայելով ժողովին , ըսաւ , Արդիկ եղբայրներ , ես բոլոր խղճմտանքով մինչև այսօր Աստուծոյ առջև կը վարուէի ։ 2 – Եւ քահանայապետ Անանիա հրամայեց անոնց որ իր քովը կեցողներուն որ բերանը զարնեն ։ 3 – Այն ատեն Պօղոս ըսաւ անոր , Աստուած քեզ պիտի զարնէ , սպիտակացուցած պատ , որ հոն նստած ես դատելու համար օրէնքին համեմատ , և օրէնքին հակառակ հրամայելով որ զիս զարնեն ։ 4 – Անոնք որ հոն կայնած էին ըսին , Աստուծոյ քահանայապետը կը նախատե՞ս ։ 5 – Պօղոս ալ ըսաւ , Չգիտէի , եղբայրներ , թէ քահանայապետ է ։ Վասն զի գրուած է , Ժողովրդեան իշխանին չես անիծանք ։ 6 – Եւ Պօղոս գիտնալով որ անոնց մէկ մասը Սադուկեցի է , և միւս մասը Փարիսեցի , ժողովին մէջ պոռաց , Արդիկ եղբայրներ , ես Փարիսեցի եմ , Փարիսեցիի որդի , մեռելներուն յոյսին համար կը դատուիմ ։ 7 – Երբ ալ զանիկա այս խօսեցաւ , Փարիսեցիներուն և Սադուկեցիներուն մէջ տարակարծութիւն եղաւ , և ժողովը բաժնուեցաւ ։ 8 – Վասն զի Սադուկեցիները կ'ըսեն թէ յարութիւն չկայ , և ոչ հրեշտակ և ոչ հոգի , բայց Փարիսեցիները կը խոստովանին զայս ամէնը ։ 9 – Ուստի մեծ աղաղակ եղաւ , և Դպիրներէն Փարիսեցի կողմին մասնակիցները ելլելով՝ կռուեցան , ըսելով , Այս մարդուն մէջ չարիք մը չենք գտներ , և եթէ հոգի մը կամ հրեշտակ մը խօսեցաւ անոր , մենք չենք կռուիր Աստուծոյ դէմ ։ 10 – Եւ երբ մեծ տարակարծութիւն եղաւ , հազարապետը վախցաւ որ չըլլայ թէ Պօղոսը անոնց կտրտեն , հրամայեց որ զինուորները իջնան և զանիկա անոնց միջէն զօրութեամբ առնելով՝ զինուորանոց տանին ։ 11 – Եւ գիշերը Տէրը անոր մօտ կայնելով ըսաւ , Քաջալերուէ , վասն զի ինչպէս Երուսաղէմ իմ վկայութիւնս ըրիր , նոյնպէս Հռոմ ալ պիտի վկայես ։

12 – Եւ երբ ցերեկ եղաւ , հրեաներ դաշինք ըրին և անէծքով երդում ուտելու և խմելու համար , մինչև որ Պօղոսը սպաննեն ։ 13 – Եւ քառասունէն աւելի հոգի էին որ այս դաշինքը ըրին ։ 14 – Անոնք քահանայապետներուն և երէցներուն մօտ գնալով ըսին , Մենք մեծ անէծքով երդում ըրինք որ բնաւ հաց չուտենք մինչև որ Պօղոսը սպաննենք ։ 15 – Հիմա դուք հազարապետին հետ ժողովին հետ յայտնեցէք որ զանիկա վաղը անոր քով իջեցնէ , ձեզի աւելի լաւ երևնալու համար անոր դատը , և մենք պատրաստ ենք զանիկա սպաննելու մինչև որ հասնի ։ 16 – Բայց Պօղոսի քրոջ որդին լսելով որ անոնք կը դարանակալեն , գնաց և զինուորանոց մտնելով՝ Պօղոսին պատմեց ։ 17 – Պօղոս ալ հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ , Այս պատանին հազարապետին տար , վասն զի բան մը ունի անոր պատմելիք ։ 18 – Ան ալ զանիկա առնելով՝ հազարապետին տարաւ , և ըսաւ , Կալուածոյ Պօղոս զիս կանչեց , և խնդրեց որ այս պատանին քեզի տանիմ , որ բան մը ունի քեզի պատմելիք ։ 19 – Հազարապետը ձեռքէն բռնելով՝ մէկդի քաշուեցաւ , և հարցուց թէ ի՞նչ է այն որ ինծի պատմելիք ունիս ։ 20 – Ան ալ ըսաւ , Հրեաները համաձայնեցան որ վաղը Պօղոսը ժողովին բերես , որպէս թէ անոր վրայ աւելի ստոյգ բան մը ուզեն իմանալ ։ 21 – Դուն ալ անոնց մի՛ հաւատար , վասն զի անոնցմէ քառասունէն աւելի մարդիկ կը դարանակալեն անոր , որոնք անէծքով երդում ըրին որ մինչև որ զանիկա սպաննեն՝ չուտեն ու չխմեն , և հիմա պատրաստ են , սպասելով քու խոստումդ ։ 22 – Ուստի հազարապետը պատանին արձակեց՝ պատուիրելով որ ոչ ոքի յայտնէ թէ դուն այս բաները ինծի պատմեցիր ։

23 – Եւ երկու հարիւրապետներ կանչելով՝ ըսաւ , Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք որ Կեսարիա երթան , և եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր նետաձիգ , երեքերորդ ժամուն գիշերը ։ 24 – Ձիեր ալ պատրաստեցէք որ Պօղոսը հեծցնելով՝ Փելիքս կառավարին քով անվնաս հասցնեն ։ 25 – Եւ նամակ մը գրեց այս ձևով ։ 26 – Կղավդիոս Ղուսիաս Փելիքս կառավարին , ողջոյն ։ 27 – Այս մարդը՝ որ Հրեաները բռնեցին և սպաննել կ'ուզէին , ես զինուորներով գալով՝ զանիկա ազատեցի , երբ գիտցայ որ Հռոմայեցի է ։ 28 – Եւ ուզելով գիտնալ ստոյգ պատճառը թէ ինչու համար կը մեղադրէին զանիկա , զանազանեցի զանիկա անոնց ժողովը ։ 29 – Եւ գտայ որ անոնց Օրէնքին հարցերուն համար կը մեղադրէին զանիկա , բայց մահուան կամ կապանքի համար ոչինչ մեղադրանք ունէր ։ 30 – Եւ երբ ինծի յայտնի եղաւ որ մարդիկ դարան կը մտնեն անոր համար , անմիջապէս անոր քով ղրկեցի , և իր մեղադրողներուն ալ պատուիրեցի որ անոր դէմ ինչ որ ունին՝ քու առջևդ ըսեն ։ 31 – Ուստի զինուորները , ինչպէս իրենց պատուիրուած էր , առնելով Պօղոսը՝ գիշերով Անտիպատրիս տարին ։ 32 – Եւ հետևեալ օրը հեծեալները անոր հետ գնալու համար՝ թողուցին զանիկա և դարձան զինուորանոց ։ 33 – Անոնք Կեսարիա մտնելով՝ կառավարին նամակը տուին , և Պօղոսը անոր առջև կանգնեցուցին ։ 34 – Ան ալ նամակը կարդալով՝ հարցուց թէ ո՞ր նահանգէն է ։ Եւ երբ գիտցաւ որ Կիլիկիայէն է , ըսաւ , 35 – Քու մեղադրողներդ ալ երբ գան , պիտի լսեմ քեզի ։ Եւ հրամայեց որ Հերովդէսի դատարանին մէջ պահեն զանիկա ։

*Ասոնք Յոպպէն , մենք որ Պօղոսի բնակարանին էինք՝

†Ասոնք , Աստուծոյ

*Յուն. սիկարեան , այսինքն , դաշնակիցը մարդասպան

*Ասոնք , Տէրոջը

վասն զի քոյ ինձի համար ըՀ՞ վկայութիւնդ պիտի չընդունին : 19 – Եւ ալ ըսի, Տէր , իրենք պղծէ գիտեն թէ ես էի որ քեզի հաւատացողները բանտը կը դնէի , և ժողովարաններուն մէջ կը ծեծէի. 20 – Ու երբ քոյ Սուրբիանոս վկայիդ արիւնը կը թափուէր, ես ինքս ալ ներկայ էի և համակից էի *անոր սպանութեանն. ու զանիկա սպանողներուն հանդերձները ես կը պահէի : 21 – Եւ ինծի ըսաւ , Գնա , վասն զի ես քեզ հեռաւոր հեթանոս ներուն պիտի ղրկեմ։

22 – Եւ անոնք մինչև այս խօսքը ականջ դրին իրեն , եաքը ձայներնին վերցուցին ու ըսին, Վերցուր աշխարհէ այդպիսի մարդը , քանզի չվայելէր ասոր պէս մնալ : 23-Ու երբ կը կանչուբռտէին ու հանդերձնին կը նետէին և փոշին դէպ ի օդը կը ցանէին, 24 – Հազարապետը հրաման ըրաւ որ զանիկա բերդը մտցնեն , ու ըսաւ որ ծեծով հարցաքննուի անոր , որպէս զի գիտնայ թէ ինչ յանցանքի համար անոր դէմ այնպէս կը կանչուբռտէին : 25 – Ու երբ կռչի կապերով զինք կապեցին , Պօղոս վերակացու հարիւրապետին ըսաւ, Արժա՞ն է ձեզի Հռովմայեցի ու չդատապարտուած մարդ մը ծեծել : 26 – Հարիւրապետը երբ ըՀ՞ լսեց, գնաց հազարապետին պատմեց ու ըսաւ , †Ի՞նչ պիտի ընես, վասն զի այս մարդը Հռովմայեցի է : 27 – Հազարապետն ալ քովը գնաց ու ըսաւ անոր, Ըսէ ինծի, դուն Հռովմայեցի՞ ես. ան ալ ըսաւ , Այ : 28 – Հազարապետը պատասխան տուաւ , Ես շատ մեծով ձեռք բերի այս քաղաքացիութեան իրաւունքը. և Պօղոս ըսաւ , Ես բուն ծոյր ՀՀ ծնած եմ : 29 – Ու անոնք որ իրեն հարցաքննելու պիտի ընէին , շատ մը ետ կեցան իրմէ . և հազարապետն ալ վախցաւ , երբ իմացաւ թէ Հռովմայեցի է , և որովհետև զանիկա կապեր էր :

30 – Ու հետևեալ օրը ուզելով որ շիտակը գիտնայ թէ ինչ է Հրեաներուն ըրած ամբաստանութիւնը անոր դէմ, ‡արձակեց զանիկա , և հրամայեց որ քահանայապետները ու բոլոր ժողովքը մէկտեղ գան . և Պօղոսը իջեցնելով անոնց առջև կայնեցուց :

## Գլ. ԻԳ

Եւ Պօղոս իր աչքերը ժողովքին վրայ դարձնելով ըսաւ , Մարդիկ եղբայրներ , ես բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարեր եմ Աստուծոյ առջև մինչև այսօր: 2 – Անանիա քահանայապետն ալ հրամայեց որ իր բերանին զարնեն : 3 – Այն ատեն Պօղոս ըսաւ անոր, Աստուած քեզի պիտի զարնէ , ծեփած պատ. և դուն նստած ես օրէնքին համեմատ զիս դատելու , և օրէնքէն դուրս հրամայե՞ն կ'ընես որ ինծի զարնեն: 4 – Եւ բոլորտիքը կայնողները ըսին, Աստուծոյ քահանայապե՞տը կը նախատես: 5-Պօղոս ալ ըսաւ, Եղբայրներ, չէի գիտեր որ քահանայապետ է. վասն զի գրուած է, Քու ժողովուրդիդ իշխանին դէմ չարախօսութիւն մի ըներ: 6 – Եւ Պօղոս գիտնալով որ մէկ կողմը սադուկեցիներ են ու մէսը փարիսեցիներ, կ'աղաղակէր ժողովքին մէջ, Մարդիկ եղբայրներ , ես փարիսեցի եմ , փարիսեցիի որդի . մեռելոց յարութեանը յոյսին համար կը դատուիմ: 7 – Ու երբ զայս ըսաւ , փարիսեցւոց և սադուկեցւոց մէջ երկպառակութիւն ինկաւ, և բազմութիւնը բաժնուեցաւ : 8 – Քանզի սադուկեցիք կ'ըսեն թէ յարութիւն չկայ , և ոչ հրեշտակ, ոչ ալ հոգի. բայց փարիսեցիք երկուքն ալ կը դաւանին: 9 – Եւ մեծ աղաղակ մը եղաւ . ու փարիսեցւոց կողմէն եղող գրիչները ոտքի վրայ ելլելով դէմ կը կենային ու կ'ըսէին , Մենք այս մարդուն վրայ չարութիւն մը չենք գտներ . Տապա եթէ հոգի մը կամ հրեշտակ մը ատոր խօսած է, *ԸՀ՞ը: 10 – Ու երբ պրմուկը շատցաւ, հազարապետը , վախնալով որ չըլլայ թէ Պօղոս անոնցմէ պատառուի, զինուորներուն հրամայեց որ իջնեն զանիկա անոնց մէջէն յափրշտակեն ու բերդը բերեն: 11 – Եւ հետևեալ գիշերը Տէրը անոր քով կայնեցաւ ու ըսաւ , Քաջասիրտ եղիր, Պօղոս, վասն զի ինչպես Երուսաղէմի

*Ոմանք չտեսին
†Ոմանք, Նայէ ինչ
‡Ոմանք, կապերէն արձակեց

*Ոմանք , Աստուծոյ հետ չմարտնչինք



մէջ ինծի համար վկայեցիր , այնպես պէտք է քեզի որ Հռովմայ մէջ ալ վկայես:

12 – Ու երբ առտու եղաւ , Հրեաներէն ոմանք միաբանեցան , ու ինքզինքնին անէծքի տակ դրին՝ ըսելով որ չուտեն ու չխմեն մինչև որ Պօղոսը սպաննեն: 13 – Եւ քառասունէ աւելի էին որ այս երդումը հետ ըրին . 14 – Որոնք քահանայապետներուն և ծերերուն գացին ու ըսին , Անէծքով անիծեցինք անձերնիս որ բան մը չուտենք մինչև որ Պօղոսը սպաննենք: 15-Ասոր գուբ ժողովքին հետ մէկտեղ հազարապետին իմացուցէք որ վաղը զանիկա ձեզի իջեցնէ, որպէս թէ դուբ աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզեք անոր վրայով . և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ ենք զանիկա սպաննելու : 16 – Եւ Պօղոսի քրոջ որդին երբ այս դաւաճանութիւնը լսեց , եկաւ բերդը մտաւ ու Պօղոսի պատմեց: 17 – Պօղոս ալ հարիւրապետներէն մէկը կրնէն կանչելով՝ ըսաւ, Այս պատանին հազարապետին տար, վասն զի բան մը ունի անոր իմացնելու : 18 – Ան ալ առաւ զանիկա և տարաւ հազարապետին ու ըսաւ, Բանտարկեալ Պօղոս զիս կանչեց , և աղաչեց որ այս պատանին քեզի բերեմ, որ քեզի խօսելիք ունի : 19 – Եւ հազարապետը անոր ձեռքէն բռնելով մէկդի գնաց , ու հարցուց թէ Ի՞նչ բան ունիս ինծի իմացնելու : 20 – Եւ անիկա ըսաւ, Հրեաները միաբանեցան քեզի աղաչելու որ վաղը Պօղոսը առաջները իջեցնես, որպէս թէ ուզեն աւելի ճիշդ քննութիւն մը ընել անոր վրայով : 21 – Բայց դուն անոնց մարկ չընես, վասն զի անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դաւանամատ եղած են անոր համար, որոնք ինքզինքնին անէծքի տակ դրին որ չուտեն ու չխմեն մինչև զանիկա սպաննեն . ու հիմա պատրաստ են , և քու հրամանիդ կը սպասեն : 22 – Այն ատեն հազարապետը պատանին ճամբեց, պատուիրելով թէ Մարդո՛ւ մի ըսեր որ այս բաները ինծի իմացուցիր :

23-Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց ու ըսաւ , Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, ու եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր գեղարդաւոր, որպէս զի մինչև Կեսարիա երթան գիշերուան ժամը երկուքին : 24 – Եւ գրաստներ պատրաստեցէք , որպէս զի Պօղոսը հեծցնեն ու ապահովութեամբ փելիքս կուսակալին տանին : 25 – Եւ թուղթ մը գրեց այս օրինակին պէս . 26 – Կղօդիոս Լիւսիաս , պատուական փելիքս կուսակալիդ ողջոյն : 27 – Այս մարդը Հրեաներէն բռնուեր էր , և անոնցմէ պիտի սպանուէր, իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազատեցի զանիկա , իմանալով որ Հռովմայեցի է : 28 – Եւ ուզելով պատճառը գիտնալ , որու համար զայսպէս վրայ ամբաստանութիւն կ'ընէին, իջեցուցի տիկա անոնց առաջները . 29 – Զոր գտայ ամբաստանած իրենց օրէնքին վէ՛ բէ՛ բէ՛ ի խնդիրներու համար , և մեռնելու կամ կապուելու արժանի չգտնուեր մը չունէր: 30 – Ու երբ լուր առի որ Հրեաները այդ մարդուն համար որոգայթ պիտի լարեն , իսկոյն քեզի ղրկեցի , հրամայեցի նաև ամբաստանողներուն ալ՝ որ քու առջև խօսին անոր վրայով : Ողջ եղիր։

31 – Զինուորներն ալ իրենց հրամայուածին համեմատ առին Պօղոսը ու գիշերով Անտիպատրոս տարին : 32 – Եւ հետևեալ օրը թողուցին ձիաւորները անոր հետ երթալու, ու իրենք բերդը դարձան : 33 – Անոնք ալ Կեսարիա մտան , ու թուղթը կուսակալին տուին , և Պօղոսը անոր առջև կայնեցուցին: 34-Երբ *կարդաց, հարցուց թէ ո՞ր գաւառէն է , և իմանալով որ Կիլիկիայէ է, 35 – Ըսաւ, Պիտի լսեմ քեզի երբ քու ամբաստանողներդ ալ գան . և հրամայեց որ զանիկա Հերովդէսի պալատը պահեն :

## Գլ. ԻԴ

Եւ հինգ օրէ ետքը Անանիա քահանայապետը ծերերուն հետ ու Տերտիւղոս անուն ճարտասանի մը հետ իջաւ. և ատոնք կուսակալին իմացուցին էրէնց ամբաստանութիւնը Պօղոսի դէմ: 2 – Ու երբ կանչեցին զանիկա , Տերտիւղոս սկսաւ ամբաստանել ու ըսել, Որովհետև քու ձեռքովդ շատ խաղաղութիւն , ու քու խնամքովդ այս ազգին բաներուն ուղիղ կարգադրութիւնը կը վայելենք, 3-Այն կերպով

*Ոմանք, կեսարացի կարդաց

ու ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով, շնորհակալ ենք, ով պատուական Փելիքս ։ 4 – Բայց չըլլայ որ ալ ուրիշ ձանձրութիւն տամ քեզի, կ'աղաչեմ որ քու քաղցրութիւնովդ մեզի տանիք դնես, որ համառօտապէս պիտի խօսիմ։ 5 – Վասն զի մենք այս մարդը գտանք ապականիչ և խաւարասէր բոլոր Հրէաներուն որոնք աշխարհի մէջ են, և նաև զվերջացոց աղանդին առաջնորդ ։ 6 – Որ տաճարն ալ ուզեց պղծել ։ զոր բռնեցինք ու մեր օրէնքին համեմատ ուզեցինք դատաստանը ընել ։ 7-Բայց Լիւսիաս հազարապետը եկաւ մեծ բռնութեամբ մեր ձեռքէն առաւ, 8-Եւ հրաման ըրաւ որ անոր դատախազները քեզի գան , զոր դուն քննելով կարող պիտի ըլլաս տեղեկանալ այն ամէն բաներուն , որոնց համար մենք ամբաստանութիւն կ'ընենք ատոր վրայ ։ 9 – Հրեաներն ալ ամենը մէկ եղած՝ ըսին թէ այդպէս է ։

10 – Պատասխան տուաւ Պօղոս , (երբ կուսակալը անոր ուչք ըրաւ որ խօսի,) Գիտնալով որ շատ տարիներէ հետէ դուն այս ազգին դատաւորն ես, ուրախ յօժարութեամբ ինծի վերաբերեալ բաներուն համար պատասխան կու տամ. 11-Որովհետև կրնաս գիտնալ որ ես տասներկու օրէ աւելի չէ՝ քանի որ երուսաղէմ երայ երկրպագութեան ընելու։ 12-Եւ ոչ տաճարին մէջ մէկ՛ուն հետ վիճաբանութիւն ընելու վրայ , կամ բազմութիւնը մէկտեղ ժողված չգտան , ոչ ալ ժողովարաններուն մէջ , 13 – Եւ ոչ քաղաքին մէջ . ոչ ալ կրնան ապացուցանել այն բաները , որոնց համար հիմա ամբաստանութիւն կ'ընեն ինծի դէմ ։ 14 – Բայց դայս կը խոստովանիմ քեզի՝ թէ այն ճամբուն համեմատ զոր տանք հերձուած կ'ըսեն, ես այնպէս կը պաշտեմ իմ հայրերուն Աստուածոց , Տալատալով այն ամէն բաներուն որոնք օրէնքին և մարգարէներուն մէջ գրուած են. 15-Եւ յոյս ունիմ առ Աստուած, ինչպէս անոնք ալ ակնկալութիւն ունին , որ մեռելներու յարութիւն պիտի ըլլայ , թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն ։ 16 – Եւ ես այս բանին համար կը ջանամ, որ ամէն ատեն մեքենայ խղճմտանք ունենամ Աստուծոյ առջև ու մարդոց առջև։ 17 – Արդ ես շատ տարիներէ հետև եկայ իմ աղգիս ողորմութիւններ բերելու ու ընծաներ դնելու. 18 – Այսպես քանի մը Ասիացի Հրեաները պիտ տաճարին մէջ մաքրուած գտան, ոչ բազմութիւնով և ոչ ամբոխով , 19 – Որոնց պէտք էր առջևդ գալ ու ամբաստանութիւն ընել , եթէ իմ վրայով ըսելու բան մը ունէին ։ 20 – Կամ թէ ատոնք իրենք թող ըսեն, ի՛նչ անիրաւութիւն գտան իմ վրաս , երբ առեւանը կայներ էի ։ 21 – Միայն թէ այս մէկ խօսքս համար, որ երբ իրենց մէջ կայնէի էի, կանչեցի թէ Մեռելներու յարութեանը համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ ։ 22 – Եւ Փելիքս *ուրիշ անգամի թողուց զանոնք, վասն զի աղեկ տեղեկութիւն ունէր այն ճամբուն վրայով ։ ու ըսաւ, Երբ Լիւսիաս հազարապետը հոս իջնէ, պիտի քննեմ ձեր գործը ։ 23 – Եւ հարիւրապետին հրաման ըրաւ որ զանիկա պահէ , և ընդարձակութիւն տայ , ու իրենները չմերձենալ անոր ապաստութիւն ընելէ կամ անոր քով երթալէ ։

24 – Եւ քանի մը օրէն հետև Փելիքս եկաւ իր Դրուսիլլա կնոջ հետ որ Հրեայ էր, ու Պօղոսը կանչել տուաւ, և լսեց անկէ այն հաւատքին համար որ Քրիստոս Յիսուսի վրայ է։ 25 – Ու երբ անիկա արդարութեան ու ժուժկալութեան և գալու դատաստանին վրայով կը խօսէր , Փելիքս վարհատելով պատասխան տուաւ, Դուն հիմա գնա, ու երբ ժամանակ ունենամ, ես քեզ նորէն կը կանչեմ։ 26 – Նաև յոյս ուներ որ Պօղոսի կողմէն իրեն սուակ դրուի , անոր համար շատ անգամ կանչել կու տար զանիկա ու անոր հետ կը խօսակցէր ։ 27 – Բայց երբ երկու տարի եղաւ , Փելիքսի տեղ Պորկիոս Փեստոս եկաւ. Փելիքս ալ Հրեաներուն շնորհք ընել ուզելով Պօղոսը կապուած թողուց ։

## ԳԼ. ԻԸ

Սրբ երբ Փեստոս էր էլեանաւրէան գաւառը հասաւ , երեք օրէն հետև Կեսարիայէ Երուսաղէմ ելաւ ։ 2 – Եւ

*Ոմանք, այս բաները լսելով ուրիշ †Ոմանք , տրուի, որպէս զի զանիկա արձակէ



քահանայապետը ու Հրէից գլխաւորները անոր իմացուցին էբենց ամբաստանութիւնը Պօղոսի դէմ , 3 – Եւ կ'աղաչէին իրեն և շնորհք կը խնդրէին անոր դէմ, որպէս զի զանիկա Երուսաղէմ բերել տայ. ու իրենք դարան կը պատրաստէին ճամբուն մէջ զանիկա սպաննելու։ 4 – Բայց Փեստոս պատասխան տուաւ , որ Պօղոս Կեսարիայի մէջ պահուի , և որ ինք շատ չանցած հոն պիտի երթայ ։ 5 – Ուստի ձեզմէ որոնք որ կարող են , ըսաւ , ընդ հետ թող իջնեն , և եթէ այն մարդուն վրայ յանցանք մը կայ , թող անոր դէմ ամբաստանութիւն ընեն։ 6 – Եւ հոն *աւելի քան տասը օրէ աւելի չկենալով, Կեսարիա իջաւ. ու հետևեալ օրը առեւանը նստելով՝ հրաման որ Պօղոսը բերեն ։ 7 – Ու երբ անիկա եկաւ, Երուսաղէմէ իջնող Հրեաները անոր բոլորտիքը կայնելով , շատ ու ծանր ամբաստանութիւններ կը բերէին Պօղոսի դէմ , զորոնք չէին կրնար ապացուցանել . 8 – Վասն զի Պօղոս պատասխան կու տար թէ ես ոչ Հրեաներուն օրէնքին , և ոչ տաճարին , ոչ ալ Կայսրին դէմ յանցանք մը ըրած եմ ։ 9 – Բայց Փեստոս ուզելով որ Հրեաներուն շնորհք ընէ , պատասխան տուաւ Պօղոսի ու ըսաւ , Կ'ուզե՞ս Երուսաղէմ երթալ , և հոն այդ բաներուն վրայով իմ առջևս դատուիլ ։ 10 – Պօղոս ալ ըսաւ , Կայսրին առեւանը կայներ եմ՝ ուր պէտք է ինծի դատուիլ . ես Հրեաներուն անիրաւութիւն մը ըրած չեմ, ինչպէս դուն ալ աղէկ գիտես։ 11 – Քանզի եթէ անիրաւութիւն մը և մահուան արժանի բան մը ըրած եմ , ես մեռնելէ չեմ քաշուիր, բայց եթէ չկայ էմ վրա այն բաներէն մէկին ալ որոնց համար ամենք ինծի դէմ ամբաստանութիւն կ'ընեն, մէ՛կը չկրնար զիս անոնց շնորհել . Կայսրին կը բողոքեմ։ 12-Այն ատեն Փեստոս խորհրդականներուն հետ խօսելով՝ պատասխան տուաւ Թէ Կայսրին բողոքեցիր, Կայսրին պիտի երթաս։

13 – Եւ քանի մը օր անցնելէն հետև՝ Ագրիպպաս Թագաւորը և Բերնիկէ Կեսարիա եկան Փեստոսը ողջունելու ։ 14 – Եւ երբ շատ օրեր հոն անցուցին, Փեստոս Պօղոսի համար Թագաւորին

*Ոմանք, տասը օրէ աւելի կենալով

խմացուց ու ըսաւ, Հոս մարդ մը կայ զոր Փելիքս բանտարկուած Թողուցեր է, 15 – Որուն վրայով , երբ Երուսաղէմ գացի , քահանայապետները ու Հրեաներուն ծերերը խմացուցին ինծի , և կը խնդրէին որ անոր դէմ դատապարտութեան վճիռ տրուի ։ 16 – Որոնց պատասխան տուի Թէ Հռովմայեցւոց սովորութիւնը չէ մարդ մը կորստեան շնորհել , մինչև ամբաստանուածը ամբաստանողները դիմացը չունենայ, ու այն ամբաստանութեանը պատասխան տալու պատեհութիւն չտրուի իրեն ։ 17 – Ուստի երբ անոնք հոս հոս եկան , ամենևին չուշացուցի, հապա հետևեալ օրը առեւանը նստելով՝ հրաման զոր ու մարդը բերուին ։ 18 – Անոր գաւառացիներն ալ ներկայանալով , իմ կասկած ըրած յանցանքներէս մէ՛կն ալ չտեսան բերեր. 19 – Հապա մէկ քանի խնդիրներ ունէին անոր հետ իրենց կրօնքին վրայ, և Յիսուս անունով մեռածէ մը վրայ , որը հոս Պօղոս կ'ըսէր թէ կենդանի է ։ 20 – Ու երբ տարակուսանքի մէջ էի այս բանին քննութեանը վրայով , զի թէ Ո՞ւզե՞ս երուսաղէմ երթալ , և հոն այս բանին համար դատուիլ ։ 21 – Բայց Պօղոս երբ բողոքեց որ պահուի վ.ճիռը Կայսրին *դիմաց եղելու, հրամանը զի որ պիտի պահեն՝ մինչև Կայսրին զրկեմ։ 22-Եւ Ագրիպպաս ըսաւ Փեստոսի , Ես ալ կ'ուզէի այդ մարդը մտիկ ընել . ան ալ ըսաւ, Վաղը մտիկ կ'ընես ։

23 – Ու հետևեալ օրը երբ Ագրիպպաս ու Բերնիկէ մեծ հանդէսով եկան, ու առեւանը մտան հազարապետներով և քաղաքին պատուաւոր մարդոցմով մէկտեղ , Փեստոս ալ հրամանը ընելով՝ բերին Պօղոսը ։ 24 – Եւ ըսաւ Փեստոս, Ագրիպպաս արքայ , և դուք ալ բոլոր մարդիկ որ մեզի հետ եք, տեսիք կը տեսնէք . ատոր վրայով Հրեաներուն բոլոր բազմութիւնը ինծի ներկայացան Երուսաղէմի մէջ և հոս ալ , ու կ'աղաղակէին Թէ Պէտք չէ որ ա՛լ տեսիկ աղջ մնայ . 25 – Բայց ես որ հասկցայ Թէ անիկա մեռնելու արժանի բան մը բրած չէ, և ինք որ Վեհափառ Կայսրին բողոքեց , որոշեցի որ

*Յուն. քննութեանը

ղրկեմ զանիկա . 26 – Որու համար համառաւ բան մը չունիմ գրելու իմ աեբոջս. ուստի առիկա ձեր առջեւ բերի, և ամենաւանդ քաւ առջեւդ ,ով Ագրիպպաս արքայ , որպէս զի քննութիւն ըլլալէ ետեւ գրելու բան մը ունենամ. 27 – Վասն զի ինծի անվայել կ'երեւնայ որ բանաւորկեալ մը ղրկեմ, և առնոր վրայ դրաւած յանցանքները չիմացնեմ։

## ԳԼ. ԻԶ

Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Հրաման է քեզի որ դուն քեզի համար խօսիս : Այն ատեն Պօղոս ձեռքը երկընցնելով իրեն համար պատասխան տուաւ . 2 – Հրեաներուն իմ վրաս ըրած բոլոր ամբաստանութիւններուն համար , ով Ագրիպպաս արքայ , ես դիս երանելի կը սեպեմ, որ այսօր քաւ առջեւդ պատասխան պիտի տամ . 3 – Մանաւանդ որ դուն Հրեաներուն բոլոր սովորութիւնները և խնդիրները աղէկ գիտես, անոր համար կ'աղաչեմ որ երկայնմտութեամբ ինծի մտիկ ընես։ 4 – Արդ իմ մանկութենէս ի վեր իմ ինչպես ապրելուս , սկիզբէն ելլուս աաղէմ իմ ազգիս մէջ ըլլալվս , բոլոր Հրեաները տեղեակ են։ 5 – Ինծի տառջեւնէն ի վեր դիս գիտեն , (եթէ ուզեն վկայել ,) որ մեր կրօնքին ամենէն զգուշաւոր ճամբուն պէս փարիսեցի ապրեր եմ. 6 – Եւ հիմա ոտքիս կեցեր կը դատուիմ Աստուծմէ մեր հայրերուն եղած խոստումնալեն յոյսին համար . 7 – Որու , մեր տասներկու ցեղը անդադար գիշեր ու ցորեկ պաշտելով , կը յուսան հասնիլ . ես այս յոյսին համար Հրեաներէն կ'ամբաստանուիմ, ով Ագրիպպաս արքայ ։ 8- Ինչ . չհաւատալո՞ւ բան կ'երեւնայ ձեզի թէ Աստուած մեռելները կը յարուցանէ։ 9-Ես ինքս ալ ինծի պարտք կը սեպէի Յիսուս Նազովրեցիի անունն դէմ շատ բաներ ընել . 10 – Զոր ըրի ալ Երուսաղէմի մէջ , և քահանայապետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն շատերը բանտարկեցի , ու ատենները սպանուած ատենը հաւանութիւն տուի : 11 – Եւ բոլոր ժողովարանութիւններուն մէջ շատ անգամ զանոնք պատժելով՝ կը բռնադատէի որ հայհոյեն , և անոնց դէմ աստիճակատ կատղած՝ մինչև օտար քաղաքները կը հալածէի։ 12 – Ասոնց երբ Դամասկոս ալ կ'երթայի , քահանայապետներէն իշխանութիւն ու հրաման առած , 13-Կէսօրուան ատենը ճամբուն վրայ, ով արքայ , երկինքէն լոյս մը տեսայ արեւն լուսատարութենէն աւելի՝ բոլորակը ծագած , նաև անոնց բոլորովքը որոնք ինծի հետ կ'երթային ։ 14 – Ու երբ մենք ամենս գետինը ինկանք, ձայն մը լսեցի որ Եբրայական լեզուով ինծի կ'ըսէր , Սաւուղ , Սաւուղ , ինչո՞ւ զիս կը հալածես . դժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել ։ 15 – Ես ալ ըսի, Դուն ո՞վ ես, Տէր. և անիկա ըսաւ , Ես եմ Յիսուս զոր դուն կը հալածես. 16 – Բայց ելիր ու ոտքիդ վրայ կայնէ . վասն զի սոսր Համար քեզի երեցայ , որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ ընելու այն բաներուն զորոնք տեսար , ու այն բաներուն որոնցմով պիտի երեւնամ քեզի , 17 – Քեզ ազատելով այդ ժողովուրդէն ու հեթանոսներէն, որոնց հիմա քեզ կը ղրկեմ , 18 – Անոնց աչքերը բանալու , խաւարէն լոյսի, ու Սատանայի իշխանութենէն Աստուծոյ դարձնելու , որպէս զի անոնք մեղքերու թողութիւն առնեն, և սուրբերուն հետ մասնակից ըլլան ինծի հաւատալով ։ 19 – Ուստի, Ագրիպպաս արքայ, այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես . 20 – Հապա սաւաջ Դամասկոս ու Երուսաղէմ եղողներուն , և բոլոր Հրէաստանի երկիրը ու հեթանոսներուն քարոզեցի որ ապաշխարեն ու Աստուծոյ դառնան . և ապաշխարութեան արժանաւոր գործեր գործեն ։ 21 – Ա,յս պատճառաւ Հրեաները զիս տաճարին մէջ բռնեցին, և կը ջանային որ սպաննեն։ 22 – Սակայն Աստուծմէ օգնութիւն հասնելով մինչև այսօր ոդջ մնացի՝ պզտիկի ու մեծի վկայութիւն տալով , բան մը չգրուցելով այն բաներէն դուրս՝ զորոնք մարգարէները և Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային . 23 – Թէ Քրիստոս պիտի չարչարուէր , և թէ անիկա առնէն առաջ մեռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէր ժողովուրդին ու հեթանոսներուն։

24 – Եւ քանի որ անիկա այսպէս պատասխան կուտար իրեն համար , Փեստոս բարձր ձայնով մը ըսաւ , Կը խելագարիս , Պօղոս . շատ կարգացողութիւնդ քեզ կը յիմարեցնէ։ 25 – Պօղոս ալ ըսաւ, Ես չեմ խելագարիր , ով պատուական Փեստոս , հապա ճշմարտութեան և զգաստութեան խօսքեր կը զրուցեմ ։ 26 – Թագաւորը գիտէ, որուն առջեւ ես ալ համարձակ կը խօսիմ. քանզի չեմ կարծեր թէ ասոնցմէ բան մը անկէ ծածկուած ըլլայ , վասն զի այս բանը անկիւնի մը մէջ եղած չէ ։ 27- Մարգարէներուն կը հաւատա՞ս , Ագրիպպաս արքայ. գիտեմ որ կը հաւատաս ։ 28 – Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Քիչ մնաց որ զիս Համոզես Քրիստոնեայ ըլլալու։ 29 – Պօղոս ալ ըսաւ, Աստուծմէ կը խնդրէի որ թէ՛ քիչով և թէ՛ շատով , ոչ թէ միայն դուն , հապա ամենն ալ որոնք այսօր ինծի կը լսեն, այնպէս ըլլան ինչպէս ես եմ, այս կապերէն զատ։

30 – Ոտաբի վրայ ելաւ թագաւորը և կուսակալը ու Բերնիկէ , և անոնք որ իրենց հետ նստեր էին ։ 31 – Ու դուրս ելլելէ ետև , իրարու հետ խօսեցան ու ըսին թէ Այս մարդը մեռնելու կամ կապուելու արժանի բան մը չըներ ։ 32 – Ագրիպպաս ալ Փեստոսի ըսաւ , Կարելի էր այս մարդը արձակել , եթէ Կայսրին բողոքած չըլլար։

## ԳԼ. ԻԷ

Երբ որոշուեցաւ որ նաւով Իտալիա երթանք , Պօղոս և ուրիշ քանի մը կապուածներ յանձնեցին Յուլիոս զօրապետի մը, որուն անունը Յուլիոս էր, Աբգուստեան գունդէն ։ 2 – Եւ Ադրամիտացի նաւ մը մտնելով ճամբայ ելանք , ու Ասիայի կողմերէն պիտի նաւերթնք. Թեսաղոնիկէ եղող Արիստարքոս Մակեդոնացի ալ մեզի հետ էր։ 3-Եւ հետևեալ օրը Սիդոն իջանք. և Յուլիոս մարդասիրութիւն ցուցնելով Պօղոսի , հրաման տուաւ որ բարեկամներուն երթայ ու դարման գտնէ։ 4 – Եւ անկէ ելլելով Կիպրոսի վարի կողմէն նաւերցինք հովին՝ դէմ ըլլալուն համար։ 5 – Ետքը Կիլիկիայի ու Պամփիւլիայի ծովուն մէջտեղէն նաւելով Լիկիայի Միւռա *ժողքը իջանք ։ 6 – Եւ հարիւրապետը հոն Աղէքսանդրացի նաւ մը գտնելով , որ Իտալիա կ'երթար, մեզ անոր մէջ մտցուց։ 7 – Եւ շատ օրեր կամաց կամաց նաւելով հազիւ Կնիդոսի քովերը հասանք . և հովը մեզի դէմ ըլլալով կրեցինք վարի կողմէն Սաղմոնայի քովէն նաւեցինք։ 8 – Եւ դժուարաւ անկէ անցնելով տեղ մը եկանք , որ Գեղեցիկ նաւահանգիստ կ'ըսուէր, որու մօտ էր Ղասեա քաղաքը ։

9 – Ու երբ շատ ժամանակ անցաւ , և նաւերն ճամբայ ելլելն ալ վտանգաւոր էր, ծովին տատնն ալ արդէն անցած ըլլալով, Պօղոս խրատ կուտար , 10 – Եւ կ'ըսէր անոնց , Մարդիկ , ես կը տեսնեմ որ այս նաւին ճամբայ ընելը տառապանքով ու շատ վնասով պիտի ըլլայ , ոչ թէ միայն բեռին ու նաւերն՝ հապա մեր անձերուն ալ ։ 11- Բայց հարիւրապետը աւելի նաւապետին և նաւավարին մտիկ կ'ընէր՝ քան թէ Պօղոսի խօսքերուն ։ 12 – Ու որովհետև այն նաւահանգիստը յարմար չէր ձմեռը հոն անցընելու , շատերը խորհեցան անկէ երթալ , որ թերևս կարող ըլլան Փիւնիկէ հասնիլ ու ձմեռը հոն կենալ , որ Կրետէի նաւահանգիստ մըն է , ու դէպ ի հարաւ և արևմտեան հիւսիս կը նայի ։ 13-Ու երբ հարաւային մեղմ հով մը փչեց, կարծելով թէ իրենց դիտաւորութենէը հասեր են , ճամբայ ելան ու Կրետէի քովերէն կ'անցնէին։ 14 – Եւ շատ ատեն չանցած՝ մրրկակից հով մը ելաւ անոր դէմ , որ Եւրակիկլոն կ'ըսուի ։ 15 – Երբ նաւը յափշտակուեցաւ և հովին դէմ չկրցաւ դիմանալ , թող տուած կ'երթայինք կոս գալինք ։ 16- Եւ դէպ ի փոքր կղզիի մը տակը կողմը դիմելով , որ Կղօդա կ'ըսուէր , հազիւ կրցանք մակոյկը բռնել ։ 17 – Զոր առնելն ու օգնութիւններ գործածելով՝ նաւը տակէն կապեցին. և վախնալով որ չըլլայ թէ *յորձանուտը հինան , առագաստը իջեցուցած՝ այնպէս կ'երթային ու կու գային ։ 18 – Եւ որովհետև սաստիկ ալեկոծութեան մէջ էինք , հետևեալ օրը բեռները դուրս նետեցին ։ 19 – Ու երրորդ օրը նաւին գործիքները ձեռքովնիս դուրս նետե-

*Իմա, ծանծաղուտը



*Ոմանք , Եւ երբ այս բաները ըսաւ , առաքի

ցինք։ 20 – Ու երբ շատ օրեր ոչ արև ոչ ալ աստղեր կ՚երևնային, և փոթո րիկը քիչ չէր մեր վրայ, ալ բոլորովին մեր ազատուելու յոյսը վերցաւ։ 21 – Եւ որովհետև շատ օրերէ ի վեր անօթի էին, այն ատեն Պօղոս անոնց մէջ կայնելով ըսաւ, Ով մարդիկ, պէտք էր ձեզի որ ինծի մտիկ ընէիք ու Կրետէէ չելլէիք, և այս տառապանքը ու վնասը չքաշէիք։ 22 – Ու հիմա ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք, քանզի ձեզմէ մեկ՛ուն անձին վնաս մը պիտի չըլլայ, բայց միայն նաւին։ 23 – Վասն զի այս գիշեր երևցաւ ինծի հրեշտակը այն Աստուծոյն, որուն եմ ես և զոր կը պաշտեմ, 24 – Եւ ըսաւ Մի վախնար, Պօղո՛ս, Կայսրին դիմաց պէտք է որ երթաս։ ԵՒ ահա Աստուած քեզի շնորհեց այն ամէնը, որոնք քեզի հետ նաւին մէջ են։ 25 – Ուստի, ովքերիկ, սիրտ առէք, վասն զի ես կը հաւատամ Աստուծոյ որ այսպէս պիտի ըլլայ, ինչպէս ինծի վրաբերեցաւ։ 26 – Մեր թէ պէտք է որ կղզի մը իյնանք։

27 – Ու երբ տասնըչորսերորդ գիշերն էր որ Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէսգիշերին նաւավարները կը կարծէին թէ երկրի մը մօտեցեր են։ 28 – Եւ գնահակը ձգելով քանի գրկաչափ գտան։ ու քիչ մըն ալ յառաջ երթալով նորէն ձգեցին, և տասնըհինգ գրկաչափ գտան։ 29 – Ու վախնալով որ չըլլայ թէ քարտ տեղեր իյնան, ետևի կողմէն չորս խարիսխ ձգեցին, և առտու ըլլալուն կը փափաքէին։ 30 – Իսկ նաւավարները նաւէն փախչիլ ուզելով՝ մնկոյկը ծովը իջեցուցին, պատճառելով որպէս թէ առջևի կողմէն ալ խարիսխներ պիտի ձգեն։ 31 – Բայց Պօղոս ըսաւ հարիւրապետին ու զինուորներուն, Եթէ այնոնք նաւին մէջ չկենան՝ դուք չէք կրնար ազատիլ։ 32 – Այն ատեն զինուորները մնկոյկին չուանները կարեցին, և թողացին որ դուրս իյնայ։ 33- Ու երբ առտու ըլլալու վրայ էր, Պօղոս կ՚աղաչէր ամէնուն որ կերակուր ուտեն, ըսելով, Այսօր տասնըչորս օր է որ դուք ապառելով անօթի մնացեր էք, ու բան մը կերած չէք։ 34 – Ուստի կ՚աղաչեմ ձեզի որ կերակուր ուտէք, վասն զի այս ալ ձեր ազատութեանը համար է. քանզի ձեզմէ մեկո՛ւն գլխէն մազ մը պիտի չկորսուի։ 35 – Եւ այսպէս ըսելով՝ հաց առաւ, ու ամենուն առջև Աստուծմէ գոհացաւ, և կտրելով սկսաւ ուտել։ 36 – Եւ ամէնն ալ սիրտ առին, ու իրենք ալ կերակուր կերան։ 37 – Եւ նաւին մէջ ամէնս երկու հարիւր հօթանասունըվեց հոգի էինք։ 38 – Երբ կշտացան կերակուրով, նաւը թեթևցուցին՝ ցորենը ծովը թափելով։

39 – Ու երբ առաւօտ եղաւ, ցամաքը չէին ճանչնար, միայն թէ ծոց մը կը նշմարէին որ ծովեզերք ունէր, ու կը խորհէին որ եթէ կարելի է նաւը անոր մէջ մխեն։ 40 – Եւ խարիսխները կտրելով՝ ծովը ձգեցին, ու ղեկերուն կապերը թուլցուցին, և առաջասը հովին բանալով՝ դէպ ի այն ծովեզերքը կ՚երթային։ 41 – Եւ այնպիսի տեղ մը հյնալով որուն երկու կողմը ծով էր, նաւը նստեցուցին. և նաւին առջևի կողմը խրելով անշարժ մնայ, ու ետևի կողմը ալիքներուն աստակութենէն կը քակուէր։ 42 – Զինուորներն ալ խորհուրդ ըրին որ կապտածները ապանեն, որ չըլլայ թէ մեկը լողայ ու փախչի։ 43 – Բայց հարիւրապետը, որ Պօղոսը ազատել կ՚ուզէր, արգիլեց զանոնք այն խորհուրդէն, և հրաման ըրաւ թէ որոնք որ կրնան լողալ, թող անոնք առաջ նետուին ու ցամաքը ելլեն. 44 – Եւ մնացածները, մանր տախտակներով և ամնոք նաւին –ոչ բաներովը։ և այսպէս ամէնը ազատեցան, ցամաք ելլուն։

## ԳԼ. ԻԸ

Ու երբ ազատեցան, գիտցան որ այն կղզին անունը Մելիտէ էր. և բարբարոսները քիչ մարգասիրութիւն չցուցուցին մեզի. 2 – Վասն զի կրակ վառեցին, և մեզ ամէնս ալ ընդունեցին՝ մեր վրայ հասած անձրևին համար ու ցուրտին համար։ 3 – Ու երբ Պօղոս շատ մը խոտ ժողվեց և կրակին վրայ դրաւ, տաքութենէն իժ մը ելաւ, անոր ձեռքը բռնեց։ 4 – Բարբարոսներն ալ երբ այն գազանը տեսան անոր ձեռքէն կախուած՝ իրարու կ՚ըսէին, Անշուշտ սպիկա մարդասպան մըն է, որ թէպէտ ծովէն ազատեցաւ, բայց իրաւունքը թոյլ չտուաւ որ ապրի։ 5 – Իսկ անիկա գազանը կրակին մէջ թօթվելով՝ իրեն ջնաս մը չեղաւ։



6 – Ու անոնք կը սպասէին որ անիկա ուռնայ, կամ յանկարծակի մեռած իյնայ. բայց երբ շատ մը սպասեցին, ու տեսան որ իրեն ջնաս մը չեղաւ, կարծիքնին փոխելով կ՚ըսէին թէ աստուած մըն է։ 7 – Եւ այն տեղին բոլորտիքը կղզիին գլխաւոր մարգուն ագարակները կային, որուն անունը Պապղիոս էր, որ մեզ ընդունեց և երեք օր հիւրասիրութեամբ իրեն քով պահեց։ 8- Ու եղաւ որ Պապղիոսի հայրը ջերմով և թանչքով հիւանդացած պառկած էր. ու Պօղոս անոր քով մտաւ, և աղօթք ընելով ձեռքերը անոր վրայ դրաւ ու բժշկեց զանիկա։ 9 – Ու երբ տեսկա եղաւ, ուրիշ հիւանդներ, որոնք այն կղզիին մէջ էին, կու գային և կը բժշկուէին. 10 – Որոնք չատ պատիւներով ալ մեզ պատուեցին, ու մեր երթալուս ատենը պէտք եղած բաները տուին։

11 – Եւ երեք ամիսէն ետև Աղեքսանդրացի նաւով մը ճամբայ ելանք, որ ձմեռը այն կղզին անցուցեր էր, ու Դիոսկուրացւոց նշանը ունէր։ 12 – Եւ Սիրակուսա իջնելով երեք օր հոն կեցանք։ 13 – Անկէ ալ պտոյտ մը ընելով Հռեգիոն հասանք. և մէկ օրէն ետև երբ հարաւ փչեց, երկրորդ օրը Պատիղոս եկանք։ 14 – Ու հոն եղբայրներ գտանք, որոնք ազաչեցին որ եօթը օր իրենց քով մնանք. ու հետը Հռոմ եկանք։ 15 – Եւ անկէ եղբայրները, երբ մեր վրայով լսեցին, մեզ դիմաւորելու ելան մինչև Ապիխոսի վաճառանոցը ու Երեք պանդոկները. և Պօղոս զանոնք տեսնելով գոհութիւն տուաւ Աստուծոյ և սիրտ առաւ։

16 – Ու երբ Հռոմ մտանք, հարիւրապետը կապտածները զօրապետին յանձնեց. իսկ Պօղոսի հրաման եղաւ որ իր պահապան զինուորին հետ զատ կենայ։ 17 – Ու եղաւ որ երեք օրէն ետև անիկա Հրէից ղեկաւորները կանչեց. ու երբ մէկտեղ եկան, ըսաւ ա նոնց, Մարդիկ եղբայրներ, ես ժողովուրդին կամ հայրենական սովորութիւններու դէմ բան մը չըրած, եբուսաղէմէ կապտած՝ Հռովմայեցւոց ձեռքը մատնուեցայ. 18 – Որոնք երբ դիս քննեցին, ուզեցին որ արձակեն, վասն զի իմ վրաս մեռնելու յանցանք մը չկար։ 19 – Բայց երբ Հրեաները հակառակ կեցան, պէտք եղաւ որ Կայսրին բողոքեմ, ոչ թէ իմ ազգիս դէմ ամբաստանութիւն մը ունեցողի պէս։ 20 – Ուստի այս պատճառաւ աղաչեցի որ ձեզ տեսնեմ ու ձեզի խօսիմ. վասն զի Իսրայէլի յոյսին համար ես այս շղթան վրաս ունիմ։ 21 – Անոնք ալ ըսին իրեն, Մենք քու վրայովդ Հրէաստանէ ոչ թուղթեր առինք, և ոչ եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու վրայովդ չարութիւն մը պատմեց կամ խօսեցաւ։ 22 – Բայց կ՚ազաչենք որ քեզմէ լսենք թէ դուն ինչ միտքի վրայ ես. վասն զի մենք այդ աղանդին վրայով տեղեկացած ենք՝ որ ամէն տեղ առը դէմ կը խօսին։ 23 – Ու օր մը որոշելով անոր, շատերը անոր գացին իր բնակած տեղը, որոնց Աստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր վկայութիւնով, և կը համոզէր զանոնք Յիսուսի վրայով Մովսէսի օրէնքէն ու մարգարէներէն՝ առտուընէ մինչև իրիկուն։ 24 – Եւ ոմանք կը հաւատային ըսածներուն, ու ոմանք չէին հաւատար։ 25 – Եւ իրարու հետ չմիաբանած՝ գացին, երբ Պօղոս խօսք մը ըսաւ, թէ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրերուն, Եսայի մարգարէին ձեռքով, 26 – Ես ըսաւ, Գնա այս ժողովուրդին ու ըսէ, Լսելով պիտի լսէք՝ ու չհամնաք, և տեսնելով պիտի տեսնէք՝ ու չտեսնէք. 27 – Վասն զի այս ժողովուրդին սիրտը թմնցաւ, և էրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ էրենց աչքերովը տեսնեն, ու ականջներովը լսեն, և սիրտերովը իմանան, ու դարձի գան, և ես բժշկեմ զանոնք։ 28 – Ուստի յայտնի ըլլայ ձեզի որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսներուն ղրկուեցաւ, և անոնք մտիկ պիտի ընեն։ 29- Ու երբ զայս պրսւցեց, Հրեաները դարձ եղան, շատ վիճաբանութիւն ունենալով իրենց մէջ։

30 – Եւ լման երկու տարի իր վարձքով բռնած տունը կեցաւ։ 31 – Եւ իրեն եկողներուն ամէնը կ՚ընդունէր։ 32 – Կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը, և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգիլուելու կը սորվեցնէր ամենայն համարձակութեամբ։

---

*Մնացած չաբերն այս 29 համարը

ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուսի Քրիստոսի ծառայ, առաքեալ ըլլալու կանչուած, Աստուծոյ աւետարանին համար որոշուած, 2 – (Որ առաջուընէ իր մարգարէներուն ձեռքով սուրբ գիրքերով խոստացաւ,) 3 – Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայով, որ մարմնի կողմանէ Դաւիթի սերունդէն եղաւ, 4 – Որ սրբութեան հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայտնուեցաւ զօրութեամբ՝ մեռելներէն յարութիւն առնելով. 5 – Որով շնորհք և առաքելութիւն առինք՝ հաւատքի հնազանդութեան համար բոլոր ազգերուն մէջ, անոր անունին համար. 6 – Որոնց մէջ դուք ալ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք. 7 – Ձեր ամէնուն որ Հռովմայ մէջ էք, Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ ըլլալու կանչուածներուդ, շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

8 – Նախ կը գոհանամ իմ Աստուծմէս Յիսուս Քրիստոսի ձեռքով ձեր ամէնուն համար, որ ձեր հաւատքը բոլոր աշխարհ կը պատմուի։ 9-Քանզի վկայ է ինծի Աստուած, զոր ես կը պաշտեմ իմ հոգիովս անոր Որդւոյն աւետարանին մէջ, 10 – Թէ ինչպէս անդադար ձեզ կը յիշեմ, ամէն ատեն իմ աղօթքներուս մէջ խնդրելով՝ որ թերևս անգամ մը Աստուծոյ կամքովը ինծի յաջողութիւն մը ըլլայ ձեզի գալու։ 11 – Քանզի կը փափաքիմ ձեզ տեսնել, որ ձեզի հոգևոր շնորհք մը հաղորդեմ՝ որպէս զի հաստատուիք. 12 – Այսինքն ձեզի հետ ես ալ միխիթարուիմ ըլլամ իմ ու ձեր փոխադարձ հաւատքին միջոցով։ 13 – Սակայն չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ շատ անգամ ուզեցի գալ ձեզի, (և մինչև հիմա արգիլուեցայ,) որպէս զի ձեր մէջ ալ պտուղ մը ունենամ. ինչպէս ուրիշ հեթանոսներու մէջ ալ։ 14 – Յոյներուն ու Բարբարոսներուն, իմաստուններուն ու անմիտներուն ալ պարտական եմ։ 15 – Ուստի որչափ որ ձեռքէս կուգայ, յօժարութիւն ունիմ ձեզի ալ, որ Հռովմայ մէջ էք, աւետարանը քարոզելու։

16 – Վասն զի ես ամօթ չեմ սեպեր *աւետարանը, քանզի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար, առաջ Հրեային ու եաքը Յոյնին։ 17 – Վասն զի անով Աստուծոյ արդարութիւնը, որ է հաւատքէն, հաւատքի համար կը յայտնուի. ինչպէս գրուած է թէ Արդարը հաւատքէն պիտի ապրի։

18-Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են։ 19 – Վասն զի Աստուծոյ վրայով գիտնալու բանը իրենց մէջ յայտնի է, որովհետև Աստուած անոնց յայտնեց։ 20 – Քանզի աներևոյթ բաները աշխարհի ակիզբէն ստեղծուածներովը կ'իմացուին, կը տեսնուին, այսինքն է իր մշտնջենաւոր զօրութիւնը ու աստուածութիւնը, որպէս զի անպատասխանի մնան։ 21 – Վասն զի իրենք զԱստուած ճանչնալով՝ Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան. հապա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան, և †սիրտերնին անմտութիւնով խաւարեցաւ։ 22 – Իրենք իմաստուն ենք՝ բսելով յիմարեցան. 23 – Ու անեղ Աստուծոյ փառքը փոխեցին, նմանցնելով եղծանելի մարդու և թռչուններու ու չորքոտանիներու և սողուններու պատկերին։ 24 – Անոր համար Աստուած ալ պղծութեան մատնեց զանոնք իրենց սիրտերուն ցանկութիւններովը՝ իրենց մարմինները իրենց մէջ խայտառակելու. 25 – Որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին, ու երկրպագութիւն և պաշտօն մատուցին ստեղծուածներուն քան թէ Ստեղծողին, որ յաւիտեան օրհնեալ է։ Ամէն։ 26 – Անոր համար Աստուած զանոնք անարգ կիրքերու մատնեց, որ իրենց էգերը անգամ՝ բնական պէսքը բնութեան դէմ եղող պէսով փոխեցին։ 27 – Նոյնպէս ալ արուները կնոջ բնական պէսքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին, և իրենց մոլութեանը վարձած հատուցումը իրենց վրայ կ'ընդունէին։ 28 – Եւ որովհետև չուզեցին զԱստուած էրենց գիտութեանը մէջ պահել, Աստուած ալ զանոնք անարգ խորհուրդներու մատնեց անվայել բաներ ընելու. 29 – Որոնք լեցուած էին ամէն անիրաւութիւնով, պոռնկութիւնով, անզգամութիւնով, ագահութիւնով, չարութիւնով, նախանձով լեցուն, մարդասպանութիւնով, հակառակութիւնով, նենգութիւնով, չարասրտութիւնով, և էն բառներ, 30 – Զարախօսներ, զԱստուած ատողներ, նախատողներ, հպարտներ, ամբարտաւաններ, չար բաներ հնարողներ, ծնողաց անհնազանդներ, 31 – Անմիտներ, ուխտ չպահողներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ. 32 – Որոնք գիտնալով Աստուծոյ դատաստանը, թէ անոնք որ այսպիսի բաներ կ'ընեն՝ մահուան արժանի են, ոչ թէ միայն այն բաները կ'ընեն, հապա ընողներուն հաւանութիւն ալ կուտան։

### ԳԼ. Բ

Ուստի, ով մարդ, ով որ ըլլաս դուն որ կը դատես, պատասխան չունիս տալու. քանզի ինչ բանով որ ուրիշը կը դատես, անով քու անձդ կը դատապարտես. վասն զի դուն ալ որ կը դատես՝ նոյն բաները կ'ընես։ 2 – Բայց գիտենք որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ անոնց վրայ՝ որ այնպիսի բաներ կը գործեն։ 3 – Արդ, ով մարդ, դուն որ այսպիսի բաներ ընողները կը դատես, և դուն նոյն բաները կ'ընես, կարծիքդ կ'անցնի՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն ազատ պիտի մնաս. 4 – Կամ թէ անոր անչափ քաղցրութիւնը և համբերութիւնը ու երկայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ ի ապաշխարութիւն կ'առաջնորդէ։ 5 – Բայց դուն քու խստութիւնովդ և անդղջ սրտովդ քու անձիդ բարկութիւն կը դիզես՝ բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանին յայտնուելու օրուանը համար. 6 – Որ ամէն մէկուն իր գործերուն փոխարէնը պիտի տայ։ 7 – Յամառնականներ՝ անոնց որոնք բարի գործերու մէջ համբերութեամբ յարատևելով փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն. 8 – Բայց անոնց որ հակառակ են, և ճշմարտութեան անշնազանդ ու անիրաւութեան հնազանդ՝ պէտ ըլլ բարկութիւն և սրտմտութիւն, 9-Նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ որ չար կը գործէ, առաջ Հրեային ու եաքը Յոյնին. 10 – Իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն այն ամէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրեային ու եաքը Յոյնին։ 11 – Վասն զի Աստուծոյ քով աչառութիւն չկայ. 12-Քանզի անոնք որ առանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի պիտի կորսուին, և անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին, օրէնքով պիտի դատուին, 13 – (Վասն զի ոչ թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջև արդար են, հապա օրէնքը կատարողները պիտի արդարանան։ 14 – Քանզի հեթանոսները, որոնք օրէնք չունին, երբ բնականաբար օրէնքին գործերը կը գործեն, օրէնք չունենալով իրենց անձերուն օրէնքը բուն իրենք կ'ըլլան, 15 – Որոնք օրէնքին գործը իրենց սրտին մէջ գրուած կը ցուցընեն իրենց խղճմտանքին վկայութիւնովը, և իրենց խորհուրդներնուն իրար յանդիմանելովը կամ իրաւունք տալովը,) 16 – Այն օրը երբ Աստուած մարդոց ծածուկ բաները պիտի դատէ Յիսուս Քրիստոսի ձեռքով իմ †ՈՒՂՁ աւետարանիս համեմատ։

17 – Այհա դուն Հրեայ բսուեր ես,





*Ո՛Հ.,, Քրիստոսի աւետարանը

†Յ.Ն. անմիտ սիրտերնին

և օրէնքին կռթներ էս, ու Աստուծով կը պարծենաս, 18 – Եւ անոր կամքը դիտես, ու տարբեր բաները կը վտանգանես՝ օրէնքէն խրատուած ըլլալով. 19 – Եւ քու անձիդ վրայ վստահութիւն ունիս՝ թէ կոյրերուն առաջնորդ ես, խաւարածներուն լոյս, 20 – Անմիտներուն խրատուղ, տղայոց վարժապետ, և թէ գիտութեան ու ճշմարտութեան կերպարանքը օրէնքէն ունիս։ 21 – Իսկ արդ՝ դուն որ ընկերդ կը սորվեցնես, քու անձիդ չե՞ս սորվեցներ. որ կը քարոզես գողնալիքն չընել, կը գողնա՞ս. 22 – Որ կ'ըսես շնութիւն չընել, շնութի՞ւն կ'ընես. որ կը զզվիս կուռքերէն, սրբապղծութի՞ւն կ'ընես. 23 – Որ օրէնքով կը պարծենաս, օրինազանց ըլլալով՝ Աստուած կ'անարգե՞ս։ 24 – Վասն որ Աստուծոյ անունը ձեր պատճառաւ հեթանոսներուն մէջ կը հայհոյուի, ինչպէս գրուած է։

25-Արդ թլփատութիւնը շահ կ'ունենայ, եթէ օրէնքը պահես. իսկ եթէ օրէնքին դէմ յանցաւոր ես, քու թլփատութիւնդ անթլփատութիւն եղաւ։ 26 – Ուստի եթէ անթլփատութիւնը օրէնքին իրաւունքները պահէ, չէ՞ որ անոր անթլփատութիւնը թլփատութիւն պիտի սեպուի. 27 – Եւ ի բնէ եղած անթլփատութիւնը օրէնքը կատարելով՝ պիտի դատապարտէ քեզ, որ գիրով ու թլփատութիւնով օրէնքին յանցաւոր ես։ 28 – Վասն որ Հրեայ չէ ան որ դրսուննց է, և թլփատութիւն չէ այն որ դրսուննց մարմնով է. 29-Հապա Հրեայ ան է որ ներսունց է, և թլփատութիւն՝ սրտինը հոգիով, ու ոչ թէ գրով, որուն գովութիւնը ոչ թէ մարդոցմէ է, հապա Աստուծմէ։

## Գլ. Գ

Ուրեմն Հրեան ի՞նչ աւելի բան ունի, կամ թլփատութենէն ի՞նչ շահ կայ։ 2 – Շատ՝ ամէն կերպով. ամէնէն առաջ այն՝ որ Աստուծոյ պատգամները անոնց հաւատացուեցան։ 3 – Ինչո՞ւ եթէ անոնցմէ մինչ չհաւատացին, ի՞նչ. միթէ անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատարմութիւնը կը խափանէ՞ր. քա՛ւ լիցի։ 4 – Սակայն Աստուած ճշմարիտ թող ըլլայ, և բոլոր մարդիկ՝ ստուտ. ինչպէս գրուած է, Որպէս զի քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուելու ատենդ դուն յաղթես։ 5 – Ուրեմն եթէ մեր անիրաւութիւնը Աստուծոյ արդարութիւնը յայտնի կը ցուցնէ, ի՞նչ ըսենք. միթէ անիրաւ է Աստուած որ էր բարկութիւնը հոն վրայ կը բերէ. 6-(Մարդկօրէն կ'ըսեմ.) քա՛ւ լիցի. ապա թէ ոչ՝ ի՞նչպէս Աստուած պիտի դատէ աշխարհը։ 7 – Վասն զի եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը իմ ստութիւնովս կ'աւելնայ իր փառքին համար, ալ ես ինչո՞ւ մեղաւորի մը պէս կը դատուիմ։ 8 – Եւ ինչո՞ւ համբ ակ չէ ըսել, ինչպէս ոմանք մեր վրայ չարախօսութիւն ընելով կ'ըսեն թէ մենք կ'ըսենք, Չարը գործենք որպէս զի բարին գայ. որոնց դատապարտութիւնը իրաւունքով է։

9 – Ուստի ալ ի՞նչ ըսենք. բանով մը աւելի՞ ենք հեթանոսներէն. իրաւ որ բանով մըն ալ չենք. վասն զի առաջ մեղադրեցինք Հրեաներէն և հեթանոսները թէ ամէնը մեղքի տակ են։ 10-Ինչպէս գրուած է թէ Արդար մը չկայ, և ոչ մէկ. 11 – Մէկը չկայ որ հասկընայ, մէկը չկայ որ Աստուած փընտռէ։ 12 – Ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան. աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ։ 13 – Անոնց կոկորդը բաց գերեզման է, իրենց լեզուովը նենգաւոր եղան, իժերու թոյն կայ անոնց շրթունքներուն տակ. 14 – Անոնց բերանը անէծքով ու դառնութիւնով լեցուն է. 15 – Անոնց ոտքերը շուտ են արիւն թափելու. 16 – Կործանումն և թշուառութիւն կայ իրենց ճամբաներուն մէջ. 17 – Եւ խաղաղութեան ճամբան չճանչցան։ 18 – Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջեւ։ 19 – Մակայն գիտենք որ օրէնքը ինչ որ կ'ըսէ, անոնց կ'ըսէ՝ որոնք օրէնքին տակ են. որպէս զի ամէն բերան գոցուի, և բոլոր աշխարհ դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջեւ։ 20-Վասն զի անոր առջեւ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը, քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը։

21 – Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրէնքէն և մարգարէներէն վկայուած ըլլալով. 22 – Այսինքն Աստուծոյ արդարութիւնը, որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն է, ամէն հաւատացողներուն ու անոնց ամէնուն վրայ կ'ըլլայ. քանզի խտրութիւն չկայ։ 23-Վասն զի ամէնը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակասած են։ 24-Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Քրիստոս Յիսուսով եղած փրկութիւնովը. 25 – Զոր առաջուընէ սահմանեց Աստուած՝ քաւութիւն ըլլալու անոր արիւնին հաւատքով, Աստուծոյ երկայնմտութեան ատենները առաջուընէ գործուած մեղքերուն թողութիւն տալովը՝ իր արդարութիւնը ցուցնելուս համար. 26 – Այսինքն իր արդարութիւնը այս ժամանակին մէջ ցուցնելու համար, որպէս զի ինք արդար ըլլայ, և արդարացնէ Յիսուսի հաւատքէն եղողը։ 27 – Ուրեմն ո՞ւր մնաց պարծենալը. խափանեցաւ. ո՞ր օրէնքէն, գործերո՞ւ օրէնքէն. ոչ, հապա հաւատքի օրէնքէն։ 28 – Վասն զի կը սեպենք թէ մարդ հաւատքով կ'արդարանայ առանց օրէնքին գործերուն։ 29 – Միթէ Աստուած միայն Հրեաներո՞ւն է ու հեթանոսներուն չէ՞. այո, հեթանոսներուն ալ։ 30 – Որովհետեւ Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը հաւատքէն կ'արդարացնէ, և անթլփատութիւնը՝ նոյն հաւատքով։ 31 – Ուստի մենք հաւատքով օրէնքը կը խափանե՞նք. քա՛ւ լիցի. հապա օրէնքը կը հաստատենք։

## Գլ. Դ

Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ՝ մեր նահապետը մարմնի կողմանէ։ 2 – Վասն զի եթէ Աբրահամ գործով արդարացած ըլլար, ի՛ւրն ալ պարծանք կ'ունենար, բայց ոչ թէ Աստուծոյ առջեւ։ 3 – Ինչո՞ւ գիրքը ի՞նչ կ'ըսէ. Աբրահամ Աստուծոյ հաւատաց, և այն իրեն արդարութիւն սեպուեցաւ։ 4 – Բայց ան որ գործ մը կ'ընէ, վարձքը շնորհքէ չհամարուիր անոր, հապա պարտքէ։ 5 – Իսկ ան որ չգործեր, բայց կը հաւատայ անոր որ ամբարիշտը կ'արդարացնէ, անոր հաւատքը իրեն արդարութիւն կը սեպուի։ 6 – Ինչպէս Դաւիթ ալ կը պրսէ այն մարդուն երանութիւնը, որու Աստուած արդարութիւն կը սեպէ առանց գործերու։ 7 – Երանի՛ անոնց, ի՛ր որոնց անօրէնութիւնները ներուեցան, և որոնց մեղքերը ծածկուեցան։ 8 – Երանի՛ այն մարդուն որու մեղք չսեպեր Տէրը։ 9 – Ուստի այս երանութիւնը թլփատութեա՞ն վրայ է, թէ անթլփատութեան վրայ ալ. քանզի կ'ըսենք թէ Հաւատքը Աբրահամի արդարութիւն սեպուեցաւ։ 10-Ուրեմն ի՞նչպէս սեպուեցաւ. թլփատութեա՞ն մէջ եղած ատենը, թէ անթլփատութեան մէջ. ոչ թէ թլփատութեան մէջ, հապա անթլփատութեան։ 11 – Ու նշո՛ւ թլփատութեան նշանը առաւ՝ երբ անթլփատութեան ատենէն ունեցած հաւատքին արդարութեանը կնիք մը, որպէս զի ինք հայր ըլլայ այն բոլոր հաւատացողներուն որոնք անթլփատութենէ են, (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար,) 12 – Եւ հայր թլփատութեան՝ ոչ թէ միայն թլփատութենէ եղողներուն, հապա անոնց ալ՝ որոնք մեր Տէր Աբրահամի անթլփատութեան ատենի հաւատքին չափով կ'երթան։ 13 – Վասն զի Աբրահամի և անոր սերունդին՝ աշխարհը ժառանգելու համար պատճառ խոստմունքը ոչ թէ օրէնքով եղաւ, հապա հաւատքին արդարութիւնովը։ 14 – Քանզի եթէ օրէնքէն եղողները ժառանգ ըլլային, հաւատքը փուճ պիտի ըլլար, և խոստմունքը պիտի խափանուէր։ 15 – Վասն զի օրէնքը բարկութիւն կը գործէ. քանզի ուր օրէնք չկայ, օրինազանցութիւն ալ չկայ։ 16-Ասոր համար յաւիտենական հաւատքէն է, որպէս զի շնորհքով եղած ըլլայ, խոստմունքը հաստատուն ըլլալու համար բոլոր սերունդին, ոչ թէ միայն անոր որ օրէնքէն է, հապա անոր ալ՝ որ Աբրահամի հաւատքէն է, որ մեր ամէնուն հայրն է, 17-(Ինչպէս գրուած է թէ Քեզ շատ ազգերու հայր ըրի,) Աստուծոյ առջեւ, որու ինք հաւատաց, ան որ մեռելները կ'ողջնցնէ, և չեղած բաները եղածներու պէս կը կանչէ։ 18 – Որ չյուսացուելու բանին յուսով հաւատաց՝ թէ ինք շատ ազգերու հայր պիտի ըլլայ, (ինչպէս ըսուեցաւ ալ, թէ Քու սերունդդ այսպէս պիտի ըլլայ.) 19 – Եւ ինք հաւատքի մէջ չտկարացած՝ չնայեցաւ իր մարմինին արդէն մեռածի պէս ըլլալուն, (որովհետեւ ինք հարիւր տարեկանի չափ էր,) ոչ ալ Սառայի արգանդին մեռածի

ըլլալուն . 20 – եւ անհաւատութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ խոստմունքին, հապա հաւատքով զօրացած՝ Աստուծոյ փառք տուաւ, 21 – եւ իր մտքին մէջ հաստատ պահեց թէ ան որ խոսք տուաւ, կարող է ընելու ալ : 22 – Ասոր համար իրեն արդարութիւն սեպուեցաւ:

23 – Բայց ոչ թէ միայն անոր համար գրուեցաւ որ իրեն սեպուեցաւ. 24 – հապա մեզի համար ալ՝ որոնց պիտի սեպուի, որ կը հաւատանք անոր որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը , 25 – Որ մեր յանցանքներուն համար մատնուեցաւ, և մեզ արդարացնելու համար յարութիւն առաւ :

## ԳԼ. Ե

Ասոր համար մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով. · 2 – Որուն միջոցով ընդունեցինք հաւատքով այս շնորհքին մտնելն ալ, որուն մէջ կեցեր ենք, և Աստուծոյ փառքին յուսովը կը պարծինք : 3 – Եւ ոչ միայն այսպէս՝ հապա նաև նեղութիւններու մէջ կը պարծինք. վասն զի գիտենք թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ, 4 – Եւ համբերութիւնը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս . 5 – Եւ յոյսը ամօթով չձգեր. վասն զի Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռքով, որ մեզի տրուեցաւ : 6 – Վասն զի երբ մենք դեռ տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ: 7 – Վասն զի արդարի մը համար հազիւ կ'ըլլայ որ մեկը մեռնի . (բայց բարի մարդու մը համար՝ կրնկի է որ մեկը համարձակի մեռնիլ .) 8 – Սակայն Աստուած իր սէրը մեզ մեր վրայ ասոր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, 9 – Քրիստոս մեզի համար մեռաւ. ուրեմն հիմա որ իր արիւնով արդարացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատուինք բարկութենէն : 10 – Վասն զի եթէ մեր թշնամի եղած ատենս Աստուծոյ հետ հաշտեցանք իր Որդւոյն մահովը, ո՛րչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը : 11 – Եւ ոչ միայն այս , հապա Աստուծով կը պարծենանք ալ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով , որով հիմա հաշտութիւնը ընդունեցինք:

12 – Վասն զի ինչպես մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, և այն մեղքէն մահը , և այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը , *քանզի ամէնը մեղանչեցին : 13 – (Վասն զի մինչև օրէնքին տանը աշխարհի մէջ մեղք կար. բայց մեղք չսեպուիր՝ ուր օրէնք չկայ: 14 – Սակայն մահը Ադամէ մինչև Մովսես թագաւորեց, նաև Ադամի յանցանքին նման չմեղանչողներուն վրայ ալ , որ օրինակ էր անոր որ եկոր պիտի գար: 15 – Բայց ոչ թէ ինչպես յանցանքը՝ այնպես շնորհքն է. վասն զի եթէ մէկուն յանցանքովը շատեր մեռան, ալ ո՛րչափ աւելի Աստուծոյ շնորհքը և այն պարգեւը որ Յիսուս Քրիստոսու մէկ մարդուն շնորհքովը է, շատերու վրայ աւելցաւ : 16 – Եւ ոչ թէ այս պարգեւը այնպես է՝ ինչպես մէկէն որ մեղանչեց. վասն զի դատաստանը մէկ դէպէն դատապարտութեան մէջ չէբ, բայց շնորհքը շատ մեղքերէ արդարութեան գոհար: 17 – Վասն զի եթէ մէկ մարդուն մեղքովը մահը թագաւորեց այն մէկովը , ո՛րչափ աւելի անոնք որ շնորհքի ու արդարութեան պարգեւին առատութիւնը կ'առնեն, կեանքի մէջ պիտի թագաւորեն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռքով : 18 – Ուրեմն ինչպես մէկուն յանցանքովը բոլոր մարդոց դատապարտութեան կողմը եղաւ , այնպես մէկուն արդարութիւնովը բոլոր մարդոց կեանքի արդարութեան կողմը եղաւ. 19 – Վասն զի ինչպես մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան , այնպես մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան: 20 – Սակայն օրէնքը մէջտեղ ինկաւ որպէս զի յանցանքը շատնայ . բայց ուր աւելի եղաւ մեղքը , ալ աւելի եղաւ շնորհքը. 21 – Որպէս զի ինչպես մեղքը թագաւորեց մահով, այնպես շնորհքը թագաւորէ արդարութիւնով մինչև յաւիտենական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով :

*կամ, որով



## ԳԼ. Զ

Ալ հիմա ի՞նչ պիտի ըսենք . մեղքի մէջ մնա՞նք արդեօք , որպէս զի շնորհքը շատնայ: 2 – Ի՛նչ լեզի. մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս դեռ ապրի՛նք մէջ կենանք: 3 – Չէ՞ք գիտեր, թէ մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք: 4 – Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար . որպէս զի ինչպես Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն , այնպես մենք կեանքի նորոգութեան մէջ պտըտինք: 5 – Վասն զի եթէ մենք անկակից եղանք անոր մահուանը նմանութիւնովը , նաև անոր յարութեանը նմանութիւնովը ալ ենթադրե պիտի ըլլանք: 6 – Զայս գիտնանք որ մեր հին մարդը անոր հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը փճանայ , որպէս զի ասկէ եւս մեղքի չծառայենք : 7 – Վասն զի ան որ մեռաւ է , մեղքէ արդարացած է: 8 – Արդ եթէ մենք Քրիստոսի հետ մեռանք, կը հաւատանք որ անոր հետ պիտի ապրինք ալ : 9 – Գիտնալով որ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած ըլլալով՝ նորէն չմեռնիր, ալ մահը անոր վրայ իշխանութիւն չունի : 10 – Վասն զի քանի որ մեռաւ՝ մեղքի մեռաւ մէկ անգամ , և որ կենդանի է՝ Աստուծոյ կենդանի է: 11 – Այսպէս դուք ձեր անձերը մեղքի մեռած սեպեցէք, բայց Աստուծոյ կենդանի է՝ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով : 12 – Ուստի ա՛լ մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ, որ անոր ցանկութիւններուն հնազանդիք: 13 – Եւ ձեր անդամները անիրաւութեան գործիք ըլլալու մի ընծայէք մեղքի , հապա ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք , որպէս թէ մեռելներէն ողջնացած . և ձեր անդամները արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ : 14 – Քանզի մեղքը ձեր վրայ պիտի չիշխէ . վասն զի օրէնքի տակ չէք, հապա շնորհքի տակ :

15 – Ուրեմն ինչ . մե՞զ գործենք վասն զի օրէնքի տակ չենք , հապա շնորհքի տակ . քա՛ւ լեցի : 16 – Չէ՞ք գիտեր թէ որու որ անձերնիդ ծառայ կ'ընծայէք հնազանդելու , ծառայ էք անոր՝ որու որ կը հնազանդիք , թէ՛ մեղքի՝ որ մահուան կ՚ը տանի , և թէ՛ հնազանդելու՝ որ արդարութեան: 17 – Բայց գոհութիւն Աստուծոյ , որ ըլլա՛ք մեղքի ծառայ էիք , սակայն սրտանց հնազանդեցաք այն վարդապետութեան գաղափարին որ ձեզի յանձնուեցաւ : 18 – Ուստի դուք մեղքէ ազատ ըլլալով՝ արդարութեան ծառայ եղաք . 19 – (Մարդուս սովորութեան պէս կ'ըսեմ՝ ձեր մարմնին տկարութեանը համար.) քանզի ինչպէս ձեր անդամները անօրէնութեան ծառայեցուցիք՝ պղծութեան և անօրէնութեան ծառաներ ըլլալու, այնպէս հիմա ձեր անդամները արդարութեան համար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլլալու : 20 – Վասն զի երբ դուք մեղքի ծառաներ էիք , արդարութենէն ազատ էիք: 21 – Ուրեմն այն ժամանակ ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնցմով հիմա կ'ամչնաք . վասն զի անոնց վերջը մահ է : 22 – Բայց հիմա մեղքէ ազատուած և Աստուծոյ ծառաներ եղած՝ ձեր պտուղը ունիք սրբութիւնով , ու վերջը յաւիտենական կեանք: 23 – Քանզի մեղքին վարձքը մահ է , բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով:

## ԳԼ. Է

Մի՞թէ չէ՞ք գիտեր , եղբայրներ , (քանզի ես օրէնքը գիտցողներուն կը խօսիմ՝ ,) որ օրէնքը մարդուս վրայ կ'իշխէ՝ որչափ ժամանակ որ ողջ է : 2-Վասն զի այր կնկան կապուած է օրէնքով . բայց եթէ այրը մեռնի, արձակուած է երկանը օրէնքէն : 3 – Ուրեմն քանի որ այրը ողջ է , շուն պիտի բսուի՝ եթէ ուրիշ երկան մը ըլլայ. բայց եթէ այրը մեռնի, այն օրէնքէն ազատ կ'ըլլայ, այնպէս որ չնացող չըլլար՝ եթէ ուրիշ երկան մը ըլլայ: 4 – Ուստի դուք ալ, իմ եղբայրներս , Քրիստոսի մարմնովը օրէնքին մեռաք . որպէս զի ուրիշի մը ըլլաք, անոր՝ որ մեռելներէն յարութիւն առեր է , որպէս զի Աստուծոյ պտուղ բերող ըլլանք: 5 – Քանզի երբ մենք մարմնով էինք՝ մեղքերու կիրքերը որոնք օրէնքով կ'ըլլային, մեր անդամներուն մէջ կը ներգործէին , որպէս զի մենք մահուան պտուղ բերինք: 6 – Բայց հիմա այն օրէնքէն ա-

ձակուեցանք. վասն որոյ՝ զրով բանասաց էինք, որպես զի մենք ծառայիցք Հոգւոյն նորոգութիւնով, և ոչ թէ գրոյն հնութիւնով։

7 – Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ լիցի. բայց ես մեղքը չէի ճանչնար, եթէ ոչ՝ օրէնքով. ինչպես ցանկութիւնն ալ չէի գիտեր, եթէ օրէնքը ըսած չըլլար, Մի ցանկար։ 8 – Բայց մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ իմ մէջս բոլոր ցանկութիւնները գոյացուց. վասն զի առանց օրէնքի մեղքը մեռած է։ 9 – Ես ալ առանց օրէնքի առեն մը կենդանի էի. բայց երբ պատուիրանքը հասաւ, մեղքը աղջնցաւ, 10 – Եւ ես մեռայ. ու այն պատուիրանքը որ կեանքի համար էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ։ 11 – Վասն զի մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ զիս խաբեց, ու անով մեռցուց։ 12 – Ուստի օրէնքը սուրբ է, ու պատուիրանքը սուրբ և արդար ու բարի։

13–Ուրեմն բարին ինծի մա՞հ եղաւ. քա՛ւ լիցի. հապա մեղքը, որպէս զի երևնայ մեղքը որ այն բարի բանով ինծի մահ գործեց, որպէս զի մեղքը պատուիրանքով աւելի մեղաւոր ըլլայ։ 14 – Վասն զի գիտենք որ օրէնքը հոգևոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքի տակ ծախուած։ 15 – Բանզի ինչ որ կ'ընեմ՝ չեմ ճանչնար. ոչ թէ ինչ որ կ'ուզեմ՝ զայն կընեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝ զայն կ'ընեմ։ 16 – Բայց եթէ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն կու տամ օրէնքին թէ բարի է։ 17 – Իսկ արդ ոչ թէ ես կ'ընեմ զանիկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս կը բնակի։ 18 – Բանզի գիտեմ որ իմ ներսիդիս, այսինքն իմ մարմնիս մէջ, բարի բան մը չբնակիր. վասն զի կամեցողութիւն կայ քովս, բայց բարին ի գործ դնելը չեմ գտներ։ 19 – Բանզի ոչ թէ բարին զոր կ'ուզեմ, կ'ընեմ, հապա չարը զոր չեմ ուզեր, զայն կ'ընեմ։ 20 – Իսկ եթէ չուզած բանս կ'ընեմ, ալ ոչ թէ ես կ'ընեմ զանիկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս բնակած է։ 21 – Ուստի ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ բարին ընելը կը կամենամ, չարը իմ քովս է։ 22 – Վասն զի ներքին մարդուն նպատով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ. 23 – Բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներուս մէջ, որ իմ մտքիս օրէնքին դէմ կը պատերազմի, և զիս գերի կ'ընէ մեղքի օրէնքին որ իմ անդամներուս մէջ է։ 24 – Ո՛նչ խղճալի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմինէն։ 25 – Գոհութիւն Աստուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով։ Ուրեմն ես ինքնս մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, ու մարմնով՝ մեղքի օրէնքին։

## Գ.Լ. Ը

Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր*։ 2-Բանզի Քրիստոս Յիսուսով կեանքի հոգւոյն օրէնքը զիս ազատեց մեղքի և մահուան օրէնքէն։ 3 – Վասն զի այն որ անկարելի էր օրէնքին, որովհետև տկար էր մարմնով, Աստուած իր Որդին ղրկեց մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար, և դատապարտեց մեղքը այն մարմնին մէջ. 4 – Որպէս զի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ, որ մարմնաւորապէս չենք քալեր, հապա հոգևորապէս։ 5 – Բանզի մարմնաւոր եղողները մարմնին բաները կը մտածեն, ու հոգևոր եղողները՝ հոգւոյն բաները։ 6 – Վասն զի մարմնաւոր խորհուրդը մա՛հ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղաղութիւն։ 7 – Բանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. վասն զի Աստուծոյ օրէնքին չհնազանդիր, մանաւանդ չկրնար ալ։ 8 – Վասն զի մարմնով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ։ 9 – Բայց դուք մարմնով չէք՝ հապա հոգիով, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ մեկը Քրիստոսի Հոգին չունի, անիկա անոր չէ։ 10 – Եւ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ալ մարմինը մեռած է մեղքի համար, ու Հոգին կենդանի է արդարութեան համար։ 11 – Իսկ եթէ Յիսուս մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնակած է, ալ անիկա որ Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, ձեր մահկանացու մարմիններդ իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի։

*Մանաւ՛ա–է ըսենէն, այլ Հոգևոր կերպով



12 – Ասպա ուրեմն, եղբայրնե՛ր, պարտապան ենք, ոչ թէ մարմինին՝ մարմնաւորապէս ապրելու. 13 – Վասն զի եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի մեռնի՛ք. բայց եթէ Հոգիով մարմինին գործերը սպաննի՛ք, պիտի ապրի՛ք։ 14 – Վասն զի որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն են։ 15 – Քանզի դուք ծառայութեան հոգին չառի՛ք կրկին վախնալու, հապա որդեդրութեան հոգին առի՛ք, որ անով կը կանչենք Աբբա Հայր։ 16 – Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք։ 17 – Եւ եթէ որդիներ, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ. որպէս զի, եթէ էր չարչարանքներուն կցորդ ըլլանք, էր փառքին ալ հաղորդ ըլլանք։

18 – Վասն զի ես այսպէս կը դատեմ որ այս ժամանակին չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով որ մեզի պիտի յայտնուի։ 19 – Բանզի ստեղծուածները ուրախութեամբ կսպասեն Աստուծոյ որդիներուն յայտնուելուն կը սպասե։ 20 – Վասն զի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները, (ոչ թէ իրենց կամքովը՝ հապա անոր համար որ հնազանդեցուց,) 21 – Այն յոյսով, որ ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէն ազատուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին։ 22 – Բանզի գիտենք որ ամէն ստեղծուածները մինչև հիմա ակտեղ կը հառաչեն ու ծնունդ ցաւ կը քաշեն։ 23 – Եւ ոչ միայն այս՛ոնց, հապա մենք ալ որ Հոգւոյն առաջին պտուղը ունինք, մենք մեզմե՛ր անձերուն մէջ կը հառաչենք որդեգրութեան, այսինքն մեր մարմնին ազատութեանը, սպասելով 24 – Վասն զի յոյսով փրկուեցանք. բայց յոյսը որ կը տեսնուի, յոյս չէ. վասն զի այն բանին, զոր կը տեսնէ մեկը, ալ ինչո՞ւ պիտի յուսայ։ 25 – Իսկ եթէ չտեսած բաներնուս կը յուսանք, ա՛ն համբերութիւնով կը սպասենք անոր։ 26 – Նոյնպէս Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ի՛նչ բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն՝ չենք գիտեր. բայց ինք Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով։ 27 – Եւ սիրտերը քննողը գիտէ Հոգիին ի՛նչ խորհիլը, քանզի Աստուծոյ համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար։

28 – Մեզի գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն, որոնք անոր նախասահմանութիւնովը կանչուած են։ 29 – Վասն զի զանոնք որ առաջ կը ճանչնար, առաջուընէ ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու. որպէս զի անիկա անդրանիկ ըլլայ շատ եղբայրներու մէջ։ 30-Եւ զորոնք առաջուընէ սահմանեց, նաև կանչեց զանոնք. և զորոնք կանչեց, նաև արդարացուց զանոնք. և զորոնք արդարացուց, նաև փառաւորեց զանոնք։ 31 – Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ։ 32 – Ան որ իր Որդւոյն չխնայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս անոր հետ ամէն բաները մեզի չպարգևեր։ 33 – Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ. Աստուած է որ կ'արդարացնէ։ 34 – Ո՞ւր է՞ն ո՞վ է որ կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ թէ յարութիւն ալ առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաև մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ։ 35 – Ո՞ւր՞ն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապա՞նքը, կամ նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտա՞նգը, կամ սա՞բրը. 36 – (Ինչպես գրուած է, Ամէն օր քեզի համար կը սպանուինք. մորթելու ոչխարի պէս կը սեպուինք։) 37 – Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք անով որ մեզ սիրեց։ 38 – Վասն զի ես համոզուած գիտեմ թէ ոչ մահը, և ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, և ոչ իշխանութիւնները, ու ոչ զօրութիւնները, և ոչ ներկայ բաները, ու ոչ գալու բաները, 39 – Եւ ոչ բարձրութիւնը, ու ոչ խորունկութիւնը, և ոչ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է։

## ԳԼ. Թ

Սայգը կ'ըսեմ Քրիստոսով — չեմ սուր, (իմ խիղճս ալ լինծի կը վկայէ Հոգւով Սրբով,) 2 – Որ մեծ տրտմութիւն է լինծի, ու իմ սրտիս անպակաս ցաւ։ 3 – Քանզի ես ինքնս կը խնդրէի նզովուած ըլլալ Քրիստոսէ, իմ մարմնի կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս համար, 4 – Որոնք Իսրայէլացի են. որոնցն է որդեգրութիւնը ու փառքը և ուխտերը ու օրինադրութիւնը և պաշտօնը ու խոստմունքները. 5 – Որոնցն են նահապետները, որոնցմէ էր՝ Քրիստոս ալ մարմնի կողմանէ, որ է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս։ Ամէն։ 6 – Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը դադրին ինկած է. քանզի ոչ թէ ամէն Իսրայէլէ եղողները Իսրայէլացի են։ 7 – Եւ ոչ թէ Աբրահամի սերունդ ըլլալնուն համար ամէնը որդիներ են. հապա Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի։ 8 – Այսինքն՝ ոչ թէ անոնք որ մարմնի որդիները են՝ Աստուծոյ որդիները ալ են, հապա խոստմունքի որդիները սերունդ կը սեպուին։ 9 – Վասն զի խոստմունքին խօսքը այս էր, թէ Այս ատեն պիտի գամ, ու Սառա որդի պիտի ունենայ։ 10 – Եւ ոչ միայն այսքան, հապա Ռեբեկայէ ալ յայտնի է որ յղացաւ մեկէն, այսինքն մեր Իսահակ հօրմէն. 11 – Վասն զի երբոր դեռ չծնած, և գեռ ազեկ կամ գէշ բան մը չգործած, (որպէս զի Աստուծոյ նախաընտրութիւնը հաստատ մնայ ընտրութեանը պէս, 12 – Ոչ թէ գործերէն, հապա անկէ որ կանչէ,) իրեն ըսուեցաւ թէ, 13 – Մեծը պզտիկին պիտի ծառայէ. ինչպէս գրուած է թէ Յակոբը սիրեցի, բայց Եսաւ ատեցի։ 14 – Ուրեմն ի՞նչ ըսենք. Միթէ Աստուծոյ քով անիրաւութի՞ւն կայ. քա՛ւ լիցի։ 15 – Վասն զի Մովսէսի կ'ըսէ, Որու որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ։ 16 – Ուրեմն ոչ անկէ է որ կը կամի, ու ոչ անկէ՝ որ կը վազէ, հապա Աստուծմէ՝ որ կ'ողորմի։ 17 – Քանզի գիրքը Փարաւոնի կ'ըսէ, Անոր համար քեզ վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ 18 – Ուստի որու որ կ'ուզէ՝ կ'ողորմի, և զոր կ'ուզէ՝ կը խստացնէ։ 19 – Ուրեմն ինծի պիտի ըսես Թէ Ալ ինչո՞ւ մեղադիր կ'ըլլայ. վասն զի ո՞վ անոր կամքին դէմ դրաւ։ 20 – Բայց դուն ո՞վ ես, ով մարդ, որ Աստուծոյ դէմ պատասխան կուտաս. միթէ ստեղծուածը իր Ստեղծողին կրնա՞յ ըսել Թէ Ինչո՞ւ այդպէս շինեցիր։ 21 – Բրուտը իշխանութի՞ւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն շաղուածքէն ման շինելու, մէկը պատուի՝ և միւսը անարգանքի համար։ 22 – Հապա ի՞նչ ըսէլ+ ուէ՞ն ալ, եթէ Աստուած իր բարկութիւնը ցուցնել՝ ու իր զօրութիւնը յայտնել ուզելով, շատ երկայնմտու, թեամբ համբերեց կորսուելու պատրաստուած բարկութեան ամանները։ 23 – Եւ ի՛նչ որպէս զի իր փառքին մեծութիւնը յայտնի ընէ ողորմելու ամաններուն վրայ, զորոնք փառքի համար առաջուընէ պատրաստեց. 24 – Այսինքն մեզ զորոնք կանչեց, ոչ Թէ միայն Հրեաներէն, հապա հեթանոսներէն ալ. 25 – Ինչպէս Ովսէէի մէջ ալ կ'ըսէ, Իմ ժողովուրդս չեզողին իմ ժողովուրդս պիտի կանչեմ՝, ու սիրելի չեզողին՝ սիրելի։ 26 – Եւ պիտի ըլլայ Թէ այն տեղ ուր անոնց ըսուեցաւ Թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք Կենդանի Աստուծոյ որդիները պիտի ըսուին։ 27 – Եսայի ալ Իսրայէլի համար կ'աղաղակէ, Թէև Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին պէս ըլլայ, դարձ մնացորդ մը պիտի ազատի։ 28 – Քանզի Տէրը համառօտ և կարճ բան մը կ'ընէ երկրի վրայ։ 29 – Եւ ինչպէս Եսայի առաջուընէ ըսաւ, եթէ զօրաց Տէրը մեզի սերունդ մը թողուցած չըլլար, մենք Սոդոմի պէս պիտի ըլլայինք, ու Գոմորի պիտի նմանէինք։

30 – Ուրեմն ի՞նչ ըսենք. Թէ հեթանոսները որոնք արդարութեան չէին հետևեր՝ արդարութեան հասան, այն արդարութեան՝ որ հաւատքէն է. 31 – Բայց Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը հետևէր, արդարութեան օրէնքին չհասաւ։ 32 – Ինչո՞ւ համար. վասն զի ոչ Թէ հաւատքէն, հապա որպէս Թէ օրէնքին գործերէն ուզեց արդարանալ. վասն զի գայթակղութեան վէմին վրայ զլորեցան. 33 – Ինչպէս գրուած է, Ահա Սիոնի մէջ գայթակղութեան քար մը կը դնեմ ու գլորելու վէմ մը, և ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ։

## ԳԼ. Ժ

Եղբայրնե՛ր, իմ սրտիս փափաքը ու աղօթքը առ Աստուած *Իսրայէլի փրկուելուն համար է։ 2 – Վասն զի ես կը վկայեմ՝ անոնց համար, Թէ Աստուծոյ նախանձաւորութիւնը ունին, բայց ոչ Թէ դիտութեամբ։ 3 – Վասն զի անոնք Աստուծոյ արդարութիւնը չգիտնալով, ու իրենց արդարութիւնը հաստատել ուզելով, Աստուծոյ արդարութեանը չհնազանդեցան։ 4 – Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալի արդարութեան համար։

5 – Վասն զի Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը կը նորագրէ Թէ, Զանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի։ 6 – Բայց հաւատքէն եղած արդարութիւնը այսպէս կ'ըսէ, Մի ըսեր քու սրտիդ մէջ, Ո՛վ պիտի ելլէ երկինք, (այսինքն Քրիստոսը իջեցընելու.) 7 – Կամ Թէ Ո՛վ պիտի իջնէ անդունդը, (այսինքն Քրիստոսը մեռելներէն հանելու։) 8 – Հապա ի՞նչ կ'ըսէ. Խօսքը քեզի մօտ է, քու բերնիդ մէջ և քու սրտիդ մէջ է. այսինքն հաւատքին խօսքը զոր մենք կը քարոզենք։ 9 – Վասն զի եթէ քու բերնովդ Յիսուս Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջ հաւատաս Թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուցց, պիտի փրկուիս. 10 – (Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու։) 11 – Քանզի գիրքը կ'ըսէ, Ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ։ 12 – Վասն զի հրեային ու Յունին մէջ չկայ Հրեային ու Յունին Տէրը նոյնն է, առատ ամենուն որոնք իրեն կը կանչեն։ 13 – Քանզի ով որ Տէրոջը անունը կանչէ, պիտի փրկուի։

14 – Ուրեմն ինչպէս պիտի կանչեն անոր՝ որու չհաւատացին. կամ ինչպէս պիտի հաւատան անոր՝ որուն վրայով չլսեցին. կամ ինչպէս պիտի լսեն՝ առանց մեկուն քարոզելուն։ 15 – Կամ ինչպէս պիտի քարոզեն՝ եթէ չղրկուին. ինչպէս գրուած է, Ինչպէս գեղեցիկ են խաղաղութիւն աւետարանողներուն ու բարի բաներու աւետիս տուողներուն ոտքերը։ 16 – Բայց ամէնը հնազանդ չեղան աւետարանին. քանզի Եսայի կ'ըսէ, Տէր, ո՞վ հաւատաց մեր պատմած լուրին։ 17 – Ուրեմն հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն։ 18 – Բայց կ'ըսեմ, Միթէ չլսեցի՞ն. մանաւանդ Բոլոր երկիր ելաւ անոնց հնչիւնը. ու անոնց խօսքը՝ մինչև աշխարհի ծայրերը։ 19 – Բայց կ'ըսեմ, Միթէ Իսրայէլ չգիտցա՞ւ. առաջ Մովսէս կ'ըսէ, Ես ձեզ նախանձի պիտի գրգռեմ *անպիտան ժողովուրդով մը, ու անմիտ ազգով մը ձեզ պիտի բարկացնեմ։ 20 – Բայց Եսայի կը համարձակի ու կ'ըսէ, Ես անոնց գտնուեցայ՝ որոնք զիս չէին փնտռեր, յայտնի եղայ անոնց՝ որոնք զիս չէին հարցներ։ 21 – Սակայն Իսրայէլի վրայով կ'ըսէ, Բոլոր օրը իմ ձեռքերս երկնցուցի անհնազանդ ու հակառակող ժողովուրդի մը։

## ԳԼ. ԺԱ

Ուրեմն կ'ըսեմ, Միթէ Աստուած իր ժողովուրդը մերժե՞ց. քա՛ւ լիցի. վասն զի ես ալ Իսրայէլացի եմ, Աբրահամի սերունդէն, Բենիամինի ցեղէն։ 2 – Աստուած իր ժողովուրդը զոր ինք առաջուընէն ճանչցաւ. միթէ չէ՞ք գիտեր Եղիայի պատմածը Ինծի մէջ գիրքը ի՞նչ կ'ըսէ. ինչպէս անիկա Իսրայէլի համար դանդաղ կ'ընէ Աստուծոյ, ըսելով, 3 – Տէր, քու մարգարէներդ մեռցուցին ու քու սեղաններդ փլցուցին, ու միայն ես մնացեր եմ, և իմ անձս կը փնտռեն։ 4 – Բայց ի՞նչ կ'ըսէ անոր՝ աստուածայնին պատասխանը. Ինծի թողուցի, կ'ըսէ, եօթը հազար մարդիկ՝ որոնք Բահաղի ծնրադրութիւն չըրին։ 5 – Նոյնպէս ալ այս ատեն շնորհքի ընտրութեանը համեմատ մնացորդ մը կայ։ 6 – Եւ եթէ շնորհքով, ուրեմն ա՛լ գործերէն չէ. ապա Թէ ոչ՝ շնորհքը ա՛լ շնորհք չըլլար. †եկ եթէ գործերէն է, ա՛լ շնորհք չէ. ապա Թէ ոչ՝ գործը ա՛լ գործ չըլլար։ 7 – Ուրեմն ի՞նչ. Իսրայէլ չհասաւ այն բանին զոր կը փնտ-

*Յոան. ոչ

†Յունա. լսանին

*Յունա. անանց

ռէր. բայց ընտրուածներդ հասան, ու
միացածները կուբցան , 8 – (Ինչպէս
գրուած է , Աստուած անոնց թէմրու-
թեան ոգի տուաւ, աչքեր՝ որոնցմով
պիտի չտեսնեն , ու ականջներ՝ որոնց-
մով պիտի չլսեն,) մինչև այսօր : 9 –
Եւ Դաւիթ կ'ըսէ , Անոնց սեղանը ի-
րենց որոգայթ ու որս և գայթակղու-
թիւն ու հատուցում ըլլայ : 10 – Ա-
նոնց աչքերը մթանան, որպէս զի չտես-
նեն, ու անոնց կռնակը միշտ վար ծռէ:
11 – Ուրեմն կ'ըսեմ , Մթին անո՞ր
համար անոնք յանցանք ըրին որ կոր-
ծանին. քա՛ւ լիցի. Հապա իրենց յան-
ցանքովը հեթանոսներուն փրկութիւն
եղաւ , որպէս զի զիրենք նախանձի
գրգռէ: 12 – Ուստի եթէ անոնց յան-
ցանքը աշխարհի մեծութիւն եղաւ ,
ու անոնց նուաստութիւնը՝ հեթանոս-
ներուն մեծութիւն, ալ ո՛րչափ աւելի
անոնց լրութիւնը : 13 – Բայց ձեզի
կ'ըսեմ՝ հեթանոսներուդ , Որովհետև
հեթանոսներուն առաքեալ եմ , իմ
պաշտօնս կը մեծարեմ . 14 – Որպէս
զի թերևս իմ մարմինս եղողները նա-
խանձի գրգռեմ, ու անոնցմէ մէկ քա-
նիները ապրեցնեմ: 15-Վասն զի եթէ
անոնց մերժուիլը աշխարհի հաշտու-
թիւն է , հապա անոնց ընդունուիլը
ի՞նչ պիտի ըլլայ , բայց եթէ՝ մեռե-
ղներէն կենդանի ըլլալ : 16 – Արդ եթէ
երախայրին սուրբ է, նաև զանգուածը.
և եթէ արմատը սուրբ է, ո՛րչա՜ճ ճիւ-
ղերն ալ : 17 – Եթէ այն ճիւղերէն
մէկ քանիները կտրեցան, ու դուն որ
վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ
պատուաստուեցար, ու ձիթենիին որ-
մնուին և պարարութեանը հաղորդ
եղար, 18 – ձիւղերուն դէմ մի պար-
ծենար. իսկ եթէ պարծենաս , սչ Թէ
դուն արմատը վեր բռներ ես , հապա
արմատը քեզ : 19 – Ուրեմն պիտի ը-
սես, ճիւղերը կտրեցան որպէս զի ես
պատուաստուիմ : 20 – Աղէկ , անոնք
անհաւատութիւնով կտրեցան , ու
դուն հաւատքով հաստատուեցար .
մի հպարտանար, հապա վախցիր . 21-
Վասն զի եթէ Աստուած բնական ճիւ-
ղերուն չխնայեց , դուցէ քեզի ալ
չխնայէ : 22 – Ուստի տես Աստուծոյ
քաղցրութիւնը ու խստութիւնը. կոր-
ծանուածներուն վրայ խստութիւնը ,
և քու վրադ քաղցրութիւնը , եթէ
այն քաղցրութեանը մէջ կենաս, ապա
Թէ ոչ՝ դուն ալ պիտի կտրուիս : 23-
Եւ անոնք ալ եթէ էբենց անհաւատու-
թեանը մէջ չկենան, պիտի պատուաս-
տուին, վասն զի կարող է Աստուած
զանոնք նորէն պատուաստել : 24 –
Քանզի եթէ դուն *եղէ բնական եղող
վայրենի ձիթենիէն կտրուեցար , ու
այն բարի ձիթենիին վրայ, որ *եղէ բնա-
կան չէր, պատուաստուեցար , ալ ո՛ր-
չափ աւելի անոնք որ բնական ճիւղեր
են, պիտի պատուաստուին իրենց ձի-
թենիին վրայ: 25 – Վասն զի չեմ ու-
զեր, եղբայրներ, որ չգիտնաք այս խոր-
հուրդը, (որպէս զի ինքզինքնիդ իմաս-
տուն չսեպէք,) որ բան մասին կուբու-
թիւն եղաւ Իսրայէլի , մինչև հեթա-
նոսներուն լրութիւնը մտնէ . 26 – Եւ
այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի.
ինչպէս գրուած է , Սիոնէ պիտի գայ
Փրկիչը, ու Յակոբէ ամբարշտութիւնը
ներէ մեկզի պիտի դարձնէ . 27 – Եւ
այս է իմ ուխտս անոնց , երբ անոնց
մեղքերը վերցնեմ: 28 – Աւետարանին
նայելով՝ անոնք թշնամի են ձեր սիրոյն
համար. բայց ընտրութեանը նայելով՝
սիրելի են էբենց հայրերուն սիրոյն հա-
մար: 29 – Վասն զի Աստուծոյ պար-
գեւները ու կոչումը առանց ղղջնա-
լու են: 30 – Վասն զի ինչպէս դուք
ալ առաջ մը Աստուծոյ չէիք հաւա-
տար , ու հիմա ողորմութիւն գտաք
*անոնց անհաւատութիւնովը , 31 –
Նոյնպէս անոնք ալ հիմա անհաւատա
եղան , որպէս զի ձեր ողորմութիւն
գտնելովը՝ անոնք ալ ողորմութիւն
գտնեն : 32 – Վասն զի Աստուած ա-
մէնն ալ անհաւատութեան մէջ ար-
գիլեց, որպէս զի ամէնուն ողորմի :
33 – Ո՛վ Աստուծոյ մեծութեան ու
իմաստութեան և գիտութեան խորուն-
կութիւնը . Ինչպէս անքննելի են իր
դատաստանները , ու անհնելի են իր
ճամբաները: 34 – Վասն զի *ո՞վ գիտ-
ցաւ Տէրոջը միտքը , կամ *ո՞վ անոր
խորհրդակից եղաւ. 35 – Կամ *ո՞վ ա-
ռաջուընէ անոր բան մը տուաւ, որ փո-
խարէնը իրեն տրուի: 36-Վասն զի ամէն
բաներդ անկէ ու անով և անոր համար
են. իրեն փառք յաւիտեանս : Ամէն:

*Կամ , անոնց անհաւատութեան պա-
տճառն, Նոյնպէս անոնք ալ հիմա ան-
հաւատ եղան ձեր ողորմութիւն գտած
ընելնիդ՝ որպէս զի անոնք



## ԳԼ. ԺԲ

Արդ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ,
Աստուծոյ ողորմութիւնովը , որ ձեր
մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝
սուրբ , Աստուծոյ հաճելի , որ է ձեր
բանաւոր պաշտօնը : 2 – Եւ մի կերպա-
րանքի այս աշխարհին կերպարանքովը,
հապա ձեր մտքին նորոգութիւնովը
նորոգուելեցէք, որպէս զի քննէք թէ ի՛նչ
է Աստուծոյ կամքը , որ բարի ու հա-
ճելի և կատարեալ է: 3 – Քանզի ինծի
տրուած *շնորհքով զձեզ կ'ըսեմ՝ ձեր
մէջ եղող ամէն մէկուն, որ զգայն
եղածը մտածելէն աւելի բան չմտածէ,
հապա զգաստ կենալ մտածէ , ինչ-
պէս Աստուած ամէն մէկուն բաժնեց
հաւատքին չափ : 4 – Վասն զի ինչ-
պէս մէկ մարմինի մէջ շատ անդամ
ներ ունինք, ու այն ամէն անդամները
միևնոյն գործը չունին . 5 – Նոյնպես
մենք շատերնիս մէկ մարմին ենք
Քրիստոսով . և ամէն մէկերնիս իրարու
անդամներ ենք: 6 – Ուստի մենք պա-
հանան պարգևներ ունենալով՝ այն
շնորհքին համեմատ որ մեզի տրուած
է, եթէ մարգարէութիւն՝ հաւատքին
չափովը ըրչենք. 7 – Եթէ պաշտա-
օնութիւն՝ պաշտաօնութեան մէջ
ըլլանք . եթէ ան որ կը սորվեցնէ՝ սոր-
վեցնելու եռանդ ըլլայ. 8 – Եթէ ան որ
կը յորդորէ՝ յորդորելու եռանդ, ան որ
կը բաշխէ՝ պարզմտութեամբ թող ընէ,
ան որ վերակացու է՝ ջանքով , ան որ
կ'ողորմի՝ յոժարութեամբ . 9 – Սէրը
առանց կեղծաւորութեան ըլլայ, չա-
րչն զզուելով , բարիին յարելով . 10 –
Եղբայրասիրութեան մէջ իրարու վրայ
գորովալից եղէք . պատուելու մէջ
իրարմէ անցէք. 11 – Ջանքի մէջ թու-
լասիրտ չըլլաք. հոգիով բորբոքեցէք .
Տէրոջը ծառայեցէք. 12 – Յուսով ու-
րախ եղէք . նեղութեան մէջ համբե-
րեցէք. աղօթքի կեցէք . 13 –
Սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէք.
հիւրասիրութեան եռանդ եղէք . 14 –
Ձեզ հալածողները օրհնեցէք , օրհնե-
ցէք ու մի նզովէք. 15 – Խնդացողնե-
րուն հետ խնդացէք, և լացողներուն
հետ լացէք . 16 – Իրարու վրայ միեւ-
նոյն խորհուրդը ունեցէք . ամբարտա-
ւանութիւն մի ընէք, հապա խոնարհ-

*Ոմանք, Աստուծոյ շնորհքով

ներուն հետ խոնարհեցէք. ինքզինքնիդ
իմաստուն մի դնէք . 17 – Ձա-
րութեան փոխարէն մէկո՛ւն չարու-
թիւն մի հատուցանէք. ամէն մարդոց
առջև բարի բաներ ընելու հոգ տարէք:
18 – Որչափ կարելի է ձեզի՝ ամէն մար-
դոց հետ խաղաղութիւն ունեցէք :
19 – Սիրելիներ, վրէժխնդրութիւն մի
ընէք ձեր անձերնուն համար, հապա
բարկութեան տեղ տուէք . վասն զի
գրուած է, Վրէժխնդրութիւնը իմ է,
ես պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը :
20 – Ուստի եթէ քու թշնամիդ անօ-
թեցեր է՝ չոգ տուր անոր , և եթէ
ծարաւ է՝ ջուր տուր անոր . քանզի
զայս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի
կայծեր պիտի դիզես: 21-Չարէն մի յաղ-
թուիր, հապա բարիով յաղթէ չարին:

## ԳԼ. ԺԳ

Ամէն մարդ էբ վրայ եղած իշխա-
նութիւններուն թող հնազանդի. վասն
զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ
չըլլայ . և *անոնք որ կան՝ Աստուծմէ
կարգուած են : 2 – Ուրեմն ով որ իշ-
խանութեան դէմ կը կենայ, Աստուա-
ծոյ հրամանին դէմ կը կենայ. և անոնք
որ դէմ կը կենան, անձերնուն դատա-
պարտութիւն կ'ընդունին : 3 – Վասն
զի իշխանները բարի գործերու վախ
չեն, հապա չարերու. կ'ուզե՞ս
չվախնալ իշխանութենէն . բարի գոր-
ծէ, ու անկէ գովութիւն պիտի ընդու-
նես . 4 – Վասն զի անիկա Աստուծոյ
պատաւորն է քեզի բարիի համար .
բայց եթէ դուն չար կը գործես՝ վախ-
ցիր . վասն զի դատարկ տեղ սէրքը
թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ
պատաւորն է, և վրէժխնդիր՝ բար-
կութիւն հասցնելու անոր վրայ որ չար
կը գործէ : 5 – Ասոր համար պէտք է
հնազանդ ըլլալ, ոչ Թէ միայն բար-
կութեանը համար, հապա խղճմտանքի
համար ալ : 6 – Ա՛յս պատճառաւ է
որ տուրք ալ կու տաք . վասն զի Ա-
ստուծոյ պատաւորներն են այն նոյն
բանին հոգ տանելուս : 7 – Ուստի հա-
տուցէք պէտք եղածը ամէնուն . որուս
որ տուրք *պատ-ելս-ե՝ տուրքը , որուս որ
մաքս՝ մաքսը , որուս որ վախ՝ վախնալը,
որուս որ պատիւ՝ պատիւը :

*Ոմանք, այն իշխանութիւնները

8 – Բնաւ մէկուն պարտական մի գանուիք, մէկդի թէ մէկզմէկ սիրելու. վասն զի ով որ ընկերը կը սիրէ՝ օրէնքը կը կատարէ: 9 – Վասն զի այն Մի շնար, Մի սպանաներ, Մի գողանար, Սուտ վկայութիւն մի ընար, Մի ցանկար, և ուրիշ ինչ պատուէր որ կայ՝ Բոլոր այս խօսքին մէջ կը բովանդակուի, թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: 10 – Սէրը ընկերին գէշութիւն չընէր. ուրեմն օրէնքին լրումը սէր է:

11 – Եւ այսպէս ըէ՛, գիտնալով այս ատեն, որ հիմա ժամանակ է մեզի քունէ արթնանալու. վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք: 12 – Գիշերը շատ անցած է ու ցորկը մօտեցած. ասոր մէկդի ընենք խաւարին գործերը, ու մեր վրայ հագնինք լուսոյ զէնքերը: 13 – Որպէս թէ ցորկ ատեն՝ պարկեշտութեամբ պտրտինք, ոչ թէ անառակութիւններով ու գինովութիւններով, և ոչ թէ խառնակ անկողիններով ու պղծութիւններով, և ոչ թէ հակառակութիւնով ու նախանձով. 14 – Հապա Տէր Յիսուս Քրիստոսը, ու մսոյին խնամք մի տանիք ցանկութիւններու համար:

## ԳԼ. ԺԴ

Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէք՝ ոչ թէ *տարակուսական որոշմունքներով: 2 – Մէկը կը հաւատայ որ ամէն բան կրնայ ուտել, և ան որ տկար է՝ կանաչեղէն կ'ուտէ: 3 – Ան որ կ'ուտէ՝ չուտողը թող չնսեղծէ, ու ան որ չուտեր՝ ուտողը թող չդատէ, վասն զի Աստուած զանիկա ընդուներ է: 4 – Դուն ո՞վ ես որ ուրիշին ծառան կը դատես. իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ. բայց պիտի կանգնի, վասն զի †Աստուած կարող է զանիկա կանգնեցնել: 5 – Մէկը մէկ օրը ուրիշ օրէ աւելի կը սեպէ, մէկն ալ ամէն օրը հաւասար կը սեպէ. թող ամէն մարդ իր միտքը հաստատէ: 6 – Ան որ կը հոգայ օրը, Տէրոջը կը հոգայ, և ան որ չհոգար օրը, Տէրոջը չհոգար. ու ան որ կ'ուտէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի Աստուծմէ կը գոհանայ. և ան որ չուտեր, Տէրոջը չուտեր, ու Աստուծմէ կը գոհանայ: 7 – Վասն զի մեզմէ մէ՛կը իր անձին համար չապրիր, ու մէ՛կը իր անձին համար չմեռնիր: 8 – Քանզի եթէ ապրինք, Տէրոջը համար կ'ապրինք, և եթէ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք. ուրեմն թէ՛ ապրինք և թէ՛ մեռնինք, մենք Տէրոջն ենք: 9 – Վասն զի Քրիստոս ալ անոր համար մեռաւ *ու ապրեցաւ, որ թ– հաւրաւ մեռելներուն ու կենդանիներուն իշխէ: 10 – Իսկ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես, կամ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կ'անարգես. վասն զի ամէնս ալ Քրիստոսի առաջին առջև պիտի կայնինք: 11 – Վասն զի գրուած է, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինձի պիտի ծռի, և ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստովանի: 12 – Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին համար: 13 – Ուստի ալ դիրար չդատենք, հապա աւելի այս որոշումը ըրէք միտքերնուդ մէջ՝ խոչ կամ գայթակղութիւն չդնել եղբօրը: 14 – Ջայս գիտեմ ու հաստատուած եմ Տէր Յիսուսով, որ բան մը ինքիրմէ պիղծ չէ, բայց ով որ պիղծ կը սեպէ բան մը, անոր պիղծ է այն: 15 – Իսկ եթէ կերակուրի համար քու եղբայրդ տրտմի, ալ դուն սիրով չվարուեցար. քու կերակուրովդ մի կորնցներ զանիկա՝ որուս համար Քրիստոս մեռաւ: 16 – Ա՛րդ չդրկայ որ ձեր բարիին համար չար խօսին: 17 – Վասն զի Աստուծոյ արքայութիւնը կերակուր ու խմիլիք չէ, հապա արդարութիւն և խաղաղութիւն ու խնդութիւն Հոգւով Սրբով: 18 – Քանզի եթէ մէկը այս բաներով Քրիստոսի կը ծառայէ, անիկա Աստուծոյ հաճելի է՝ ու մարդոց գովելի: 19 – Ա՛պա ուրեմն խաղաղութեան և իրարու շինութեան եւաէ բաներ: 20 – Ջրկայ որ կերակուրի պատճառաւ Աստուծոյ գործը քակես. ամէն բան մաքուր է. միայն թէ այն մարդուն է գէշ, որ ո՞բէչ գայթակղութիւն տալով կ'ուտէ: 21 – Ա՛նկ է մի՛ չուտել և գինի չխմել, ոչ ալ բան մը ընել որով քու եղբայրդ կը գայթակղի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: 22 – Դուն հաւատագ ունի՞ս. զանիկա քեզի պահէ Աստուծոյ առջև. երանի՛ անոր որ իր անձը չդատապարտեր անով, զոր ինչ *կ'ընդունի: 23 – Բայց ան որ խիղճ կ'ընէ, եթէ ուտէ՝ կը դատապարտուի, վասն զի ոչ թէ հաւատքով կ'՚ուտէ, քանզի ինչ բան որ հաւատքով չէ՝ մեղք է:

## ԳԼ. ԺԵ

Պէտք է մեզի որ կարող ենք՝ տկարներուն տկարութիւնը վերցնել, և ոչ թէ գոյ մեր անձին հաճոյ ըլլալ. 2 – Հապա մեզմէ ամէն մէկը շինութեան համար իր ընկերին հաճոյ ըլլայ բարի բաներու մէջ: 3 – Քանզի Քրիստոս ալ ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ, հապա ինչպէս գրուած է, Քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս ինկան: 4 – Վասն զի ինչ որ առաջուընէ գրուեցաւ, մեր սորվելուն համար գրուեցաւ, որպէս զի համբերութիւնով ու Գիրքերուն մխիթարութիւնովը յոյս ունենանք: 5 – Եւ համբերութեան ու մխիթարութեան Աստուածը տայ ձեզի իրարու հետ միաննոյն խորհուրդը ունենալ՝ Քրիստոս Յիսուսի օրէնքին պէս. 6 – Որպէս զի մէկ սրտով ու մէկ բերնով փառաւորէք զԱստուած ու մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հայրը: 7 – Ա՛սոր համար մէկզմէկ ընդունեցէք, վասն զի Քրիստոս ալ †ձեզ ընդունեց Աստուծոյ փառքին համար:

8 – Բայց կ'ըսեմ թէ Յիսուս Քրիստոսի թլփատութեան պաշտօնեայ եղաւ Աստուծոյ ճշմարտութեանը համար եր, որպէս զի նախահայրերուն պրոմիսէ խոստմունքները հաստատէ. 9 – Ասկայն հեթանոսները սրտմտութեան համար զԱստուած փառաւորեն. ինչպէս գրուած է, Ա՛սոր համար ազգերուն մէջ քեզի պիտի գովեմ, և քու անուանդ սաղմոս պիտի երգեմ: 10 – Եւ դարձեալ կ'ըսէ թէ, Ով ազգեր, անոր ժողովուրդին ուրախակից եղէք: 11 – Եւ դարձեալ թէ, Օրհնեցէք Տէրը, ով բոլոր ազգեր, ու գովեցէք զանիկա, ով բոլոր ժողովուրդներ: 12 – Եւ դարձեալ Եսայի կ'ըսէ, Յեսսէի մէկ արմատը պիտի ըլլայ, ու ան որ ազգերուն իշխան պիտի կայնի, ազգերը անոր պիտի յուսան: 13 – Ա՛րդ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով հաւատալու մէջ, որպէս զի առատանաք յուսով Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը:

14 – Ես ինքնս ալ հաստատուած եմ ձեզի համար, իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարութիւնով, լեցուած էք ամէն գիտութիւնով, և կրնաք մէկզմէկ խրատել: 15 – Սակայն մէկ կողմանէ համարձակաբար գրեցի ձեզի, իմ եղբայրներս, որպէս թէ միտքերնիդ ձգելով այս բաներէն մին շնորհքին պատճառաւ որ Աստուծմէ ինծի տրուած է, 16 – Որպէս զի ես Յիսուս Քրիստոսի սպասաւորը ըլլամ հեթանոսներուն մէջ, և Աստուծոյ աւետարանը մնասակարաբար՝ որպէս զի հեթանոսներուն ընծայաբերը ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգւով սրբուելով: 17 – Ուստի Աստուծոյ քով պարծանք ունիմ Քրիստոս Յիսուսով: 18 – Վասն զի չեմ համարձակիր խօսիլ այն բաներէն մէկը, զոր Քրիստոս իմ ձեռքովս գործած չէ հեթանոսները հնազանդեցնելու համար՝ խօսքով ու գործով, 19 – Նշաններու ու հրաշքներու զօրութիւնով, *Աստուծոյ Հոգւոյն զօրութիւնովը. այնպէս որ ես Երուսաղէմէ սկսա՝ և շրջան ընելով մինչև Լիւրիկացւոց կողմերը Քրիստոսի աւետարանը լեցուցի: 20 – Ա՛յնպէս ջանացի աւետարանը քարոզել, ոչ թէ ուր որ Քրիստոսի անունը յիշուած էր, որ չըլլայ թէ ուրիշի մը դրած հիման վրայ շինեմ. 21 – Հապա ինչպէս գրուած է թէ, Անոնց որոնց չպատմուեցաւ անոր վրայով՝ պիտի տեսնեն, ու որոնք չլսեցին՝ պիտի իմանան: 22 – Ա՛նոր համար ալ շատ արգիլուեցայ ձեզի գալէ: 23 – Բայց հիմա որ այս կողմերը տ՚ը չինծի տեղ չկայ, ու շատ տարիներէ ի վեր խիստ կը փափաքիմ ձեզի գալ, 24 – Երբ գնամ ի Սպանիա երթամ, †կը յուսամ որ անցնելու ատենս ձեզ տեսնեմ, ու ձեզմէ յուզարկուիմ հոն երթալու, եթէ առաջ քիչ մը ձեզմով լեցուիմ: 25 – Բայց հիմա Երուսաղէմ կ'երթամ սուրբերուն սպասաւորելոյս:

---

Յատն. կարծեաց †Ոմանք, Տէրը

*Ոմանք, ու յարութիւն առաւ, և նորէն

*Կամ, կը փորձէ †Ոմանք, ձեզ

*Ոմանք, Սուրբ

†Ոմանք, ձեզի պիտի գամ. վասն զի կը յուսամ

26 – Վասն զի Մակեդոնացիք և Աքայեցիք յօժարեցան որ Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ մը հաղորդութիւն ընեն : 27 – Յօժարեցան, քանզի անոնց պարտական ալ են. վասն զի եթէ անոնց հոգևոր բաներուն հաղորդ եղան հեթանոսները, կը պարտաւորին որ հաղորդութիւն ընեն անոնց՝ մարմնաւոր բաներու մէջ ալ : 28 – Ուրեմն ասիկա կատարելով, ու կնքելով անոնց այս պտուղը, ձեզմէ Սպանիա պիտի անցնիմ: 29 – Եւ զայս գիտեմ որ իմ ձեզի գալս առենն՝ Քրիստոսի *աւետարանին լեցուն օրհնութիւնովը պիտի գամ:

30 – Ձեզի կ'աղաչեմ , եղբայրնե՛ր , մեր Տէր Յիսուս Քրիստոսով ու Հոգւոյն սիրովը, որ ինծի հետ պատերազմիկից ըլլաք ձեր աղօթքներուն մէջ առ Աստուած՝ ինծի համար , 31 – Որպէս զի Հրէաստանի մէջ հաւատքի չհնազանդողներէն ազատուիմ, ու իմ Երուսաղէմ ընծա՝ պատաւորութիւնս սուրբերուն ընդունելի ըլլայ , 32 – Որպէս զի Աստուծոյ կամքովը ուրախութեամբ ձեզի գալով ձեզի հետ հանգչիմ : Եւ խաղաղութեան Աստուածը ձեր ամենուդ հետ ըլլայ՝ Ամէն:

## ԳԼ. ԺԶ

Ձեզի կը յանձնեմ մեր փիրէ քոյրը, որ Կենքրէայի եկեղեցւոյն սպասաւորն է. 2 – Որպէս զի զանիկա ընդունիք Տէրոջմով՝ ինչպէս սուրբերուն արժան է . և անոր խնամք տանիք ինչ գործի մէջ որ ձեր օգնութիւնը կարօտի. քանզի ինք ալ շատերու խնամք տարաւ, ու ինծի ալ :

3 – Բարև ըրէք Պրիսկէի ու Ակիւղասի՝ Քրիստոս Յիսուսով իմ գործակիցներուս . 4 – (Որոնք իմ կեանքիս համար իրենց պարանոցները տուին . որոնցմէ ոչ թէ միայն ես շնորհակալ կ'ըլլամ , հապա հեթանոսներուն բոլոր եկեղեցիներն ալ .) 5 – Եւ անոնց տանը մէջի եկեղեցիին ալ : Բարև ըրէք Եպենետոս իմ սիրելիիս, որ †Ասիոյ առաջին պտուղ մըն է Քրիստոսի : 6 – Բարև ըրէք Մարիամի, որ մեր վրայ շատ աշխատեցաւ : 7 – Բարև ըրէք Անդրոնիկոսի ու Յունիայի, իմ ազգակիցներուս և գերութեան ընկերներուս , որոնք առաքեալներուն մէջ երևելիներ են, որոնք ինծմէ ալ առաջ Քրիստոսի եղան: 8 – Բարև ըրէք Ամպղիա իմ սիրելիիս Տէրոջմով : 9 – Բարև ըրէք Ուրբանոս մեր գործակցին Քրիստոսով, ու Սաքէս իմ սիրելիիս: 10 – Բարև ըրէք Ապելղէսի որ ընտրեալ է Քրիստոսով : 11 – Բարև ըրէք անոնց որոնք Արիստոբուղոսի տունէն են : Բարև ըրէք Հերովդիոն իմ ազգականիս: Բարև ըրէք անոնց որոնք Նարկիսի տունէն են , Տէրոջմով : 12 – Բարև ըրէք Տրիփենէի ու Տրիփոսէի , Տէրոջմով աշխատողներուն: Բարև ըրէք Պերսիդէ սիրելիին , որ շատ աշխատեցաւ Տէրոջմով : 13 – Բարև ըրէք Ռուփոսի, Տէրոջմով ընտրուածին, ու անոր մօրը և իմին: 14 – Բարև ըրէք Ասինկրիտոսի, Փղեգոնի , Երմիսի , Պատրոբայի , Երմէսի ու անոնց հետ եղող եղբայրներուն : 15 – Բարև ըրէք Փիղոլոգոսի ու Յուլիայի, Նեռէոսի ու անոր քրոջը, և Ողիմպասի ու անոնց հետ եղող բոլոր սուրբերուն: 16 – Բարև ըրէք իրար սուրբ համբոյրով : Բարև կ'ընեն ձեզի Քրիստոսի [բոլոր] եկեղեցիները:

17 – Կ'աղաչեմ ձեզի, եղբայրնե՛ր , որ դիտէք այնպիսիները որոնք ձեր ասված վարդապետութենէն դուրս հերձուածողութիւններ ու գայթակղութիւններ կ'ընեն , և անոնցմէ հեռ կեցէք : 18 – Վասն զի այնպիսիները մեր Տէրոջը *Քրիստոսի չեն ծառայեր, հապա իրենց որովայնին . և անոյշ խօսքերով ու գովութիւններով պարզամիտներուն սիրտերը կը խաբեն: 19 – Քանզի ձեր հնազանդութիւնը ամենուն հասած է . ուստի ձեր վրայ ուրախ եմ . բայց կ'ուզեմ որ դուք իմաստուն ըլլաք բարիին , ու միամիտ չարին: 20 – Եւ խաղաղութեան Աստուածը խորտակէ Սատանան շուտով ձեր ոտքերուն տակ : Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ:†

21 – Բարև կ'ընէ ձեզի Տիմոթէոս իմ գործակիցս, և Ղուկիոս ու Յասոն և Սոսիպատրոս , իմ ազգականներս : 22 – (Բարև կ'ընեմ ձեզի Տէրոջմով ես ալ Տերտիոս , որ այս թուղթը գրեցի:) 23 – Բարև կ'ընէ ձեզի Գայիոս, իմ ու ըլլոր եկեղեցիին հիւրընկալը : Բարև կ'ընէ ձեզի Երաստոս, քաղաքիս գանձապետը , ու Կուարտոս եղբայրը: 24-Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ: Ամէն:

25 – Այդ անոր , որ կարող է ձեզ հաստատել իմ աւետարանիս պէս ու Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս, այն խորհուրդին յայտնութիւնը պէս՝ որ յաւիտենական ատենները չէր ծածկուած էր, 26 – Եւ հիմա յայտնուեցաւ, ու մարգարէական գիրքերով յաւիտենական Աստուծոյ հրամանով ըլլոր հեթանոսներուն ճանչցուեցաւ հաւատքի հնազանդելու համար, 27 – Մի միայն իմաստուն Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի ձեռքով, փառք յաւիտեանս: Ամէն:

*Ոմանք չառնին †կամ, Ասիայէ

*Ոմանք, Յիսուս Քրիստոսի †Ոմանք չ'ունին, Ամէն :



ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Ա. ՈՐ ԿՈՐՆԹԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Աստուծոյ կամքովը Յիսուս Քրիստոսի առաքեալ ըլլալու կանչուած, ու Սոսթենէս եղբայրը , 2 – Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցւոյն, Քրիստոս Յիսուսով սրբուածներուն, սուրբեր ըլլալու կանչուածներուն, այն ամենուն հետ՝ որոնք ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը կը կանչեն, իրենցը ու մերը . 3 – Ձեզի շնորհք և խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ :

4 – Ամէն առեն իմ Աստուծմէս ձեզի համար կը գոհանամ Աստուծոյ շնորհքին վրայ, որ ձեզի տրուած է Քրիստոս Յիսուսով. 5 – Որ դուք անով ամէն բանի մէջ հարստացաք ամէն խօսքով և ամէն գիտութիւնով . 6 – Ինչպէս Քրիստոսի վկայութիւնը ձեր մէջ հաստատուեցաւ . 7 – Որպէս զի դուք բնաւ շնորհքով մըն ալ չնուաճիք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն սպասելով . 8 – Որ նաև ձեզ պիտի հաստատէ մինչև վերջը՝ անմեղադրելի ըլլալու մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը : 9 – Հաւատարիմ է Աստուած, որով կանչուեցաք Հաղորդ ըլլալու իր Որդւոյն , մեր Տէր Յիսուս Քրիստոսի:

*Յոյն. կատարեալ պատուաստ

ոչինչ չըլլայ։ 18 – Բանզի խաչին քարոզութիւնը կորսուածներուն յիմարութիւն է, բայց մեզի փրկուածներուս Աստուծոյ զօրութիւնն է։ 19 – Վասն զի գրուած է, Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորնչեցնեմ, ու հանճարեղներուն հանճարը պիտի խափանեմ։ 20 – Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է գիրը, ո՞ւր է այս աշխարհին քննողը. չէ՞ որ Աստուած յիմարեցուց այս աշխարհին իմաստութիւնը։ 21 – Բանզի որովհետեւ Աստուծոյ իմաստութիւնովը աշխարհ չճանչցաւ զԱստուած էդ իմաստութիւնովը, Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցընել։ 22 – Վասն զի Հրեաները նշան կ'ուզեն, և Յոյները իմաստութիւն կը փնտռեն. 23 – Իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, Հրեաներուն գայթակղութիւն, ու Յոյներուն յիմարութիւն։ 24 – Բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն և թէ՛ Յոյներուն, Քրիստոսը Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ իմաստութիւնը։ 25 – Վասն զի Աստուծոյ յիմարը մարդոցմէ աւելի իմաստուն է, և Աստուծոյ տկարը մարդոցմէ աւելի զօրաւոր է։ 26 – Աղաչեմ ձեզ եղբայրներ, որ ոչ թէ մարմնի կողմանէ շատ իմաստուններ, և ոչ թէ շատ զօրաւորներ, և ոչ թէ շատ ազնուականներ կանչուեցան. 27 – Բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէս զի ամօթով ընէ իմաստուններուն. ու աշխարհիս տկարները ընտրեց Աստուած, որպէս զի ամօթով ընէ զօրաւորները. 28 – Եւ աշխարհիս ցածագիները ու անարգները ընտրեց Աստուած, և ոչինչները, որպէս զի բան մը եղողները խափանէ. 29 – Որպէս զի մարմին մը չպարծի Աստուծոյ առջեւ։ 30 – Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ մեզի Աստուծմէ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն եղաւ. 31 – Որպէս զի, ինչպէս գրուած է, Ան որ կը պարծենայ, Տէրոջմով թող պարծենայ։

## Գլ. Բ

Եւ ես, եղբայրներ, որ ձեզի եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաստութեան գերազանցութիւնով մը Աստուծոյ վկայութիւնը ձեզի յայտնելու եկայ։ 2 – Վասն զի ես միտքս չդրի ձեր մէջ ուրիշ բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, ու զայն խաչը եղած։ 3 – Եւ ես տկարութիւնով ու վախով և շատ դողով ձեր քով կեցայ. 4 – Ու իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ *մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն և զօրութեան ապացուցութիւնովը. 5 – Որպէս զի ձեր հաւատքը մարդոց իմաստութիւնովը չըլլայ, հապա Աստուծոյ զօրութիւնովը։ 6 – Սակայն կատարեալներուն հետ իմաստութիւն կը խօսինք, բայց ոչ թէ այս աշխարհին իմաստութիւնը, և ոչ այս աշխարհին աչնչանալու իշխաններուն. 7 – Հապա Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք խորհրդով, զոր աշխարհէ առաջ ասմանեց Աստուած մեր փառքին համար. 8 – Զոր այս աշխարհի իշխաններէն մէ՛կը չճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլային, ալ փառաց Տէրը խաչը չէին հաներ. 9 – Հապա ինչպէս գրուած է, Աչն բաները զորոնք աչք չէ տեսեր և ականջ չէ լսեր ու սրտի մարդու սրտին մէջ չեն բնկեր, Աստուած պինք սիրողներուն պատրաստեց։ 10 – Բայց Աստուած մեզի յայտնեց իր Հոգիովը, վասն զի Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ։ 11 – Վասն զի մարդոցմէ ո՞վ գիտէ մարդուն բաները, բայց միայն մարդուն հոգին որ իր մէջ է. նոյնպէս ալ Աստուծոյ բաները մէ՛կը չգիտեր, բայց միայն Աստուծոյ Հոգին։ 12 – Իսկ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, հապա այն Հոգին որ Աստուծմէ է, որպէս զի մենք ճանչնանք այն բաները որոնք Աստուծմէ որուեցան մեզի. 13 – Զորոնք նաև կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա †Հոգիին սորվեցուցածներովը, և հոգեւոր բաները հոգեւորի հետ կը յարմարցնենք։ 14 – Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, վասն զի անոնք իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ գիտնալ, վասն զի հոգեւոր կերպով կը քննուին։ 15 – Բայց ան որ հոգեւոր է՝ ամէն բան կը քննէ, ու ինք ուրիշէն չքննուիր։ 16 – Բանզի «Ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, որ անոր խրատ տուղ». բայց մենք Քրիստոսի միտքը ունինք։

*Որուն է՝ Ադամին

†Որուն է՝ Սուրբ Հոգիին

## Գլ. Գ

Եւ ես, եղբայրներ, չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս թէ հոգեւորներու, հապա որպէս թէ մարմնաւորներու, 2 – Որպէս թէ Քրիստոսով տղայոց, ձեզի կաթ կերցուցի և ոչ թէ կերակուր, վասն զի դեռ կարող չէիք, ու հիմա ալ տակաւին կարող չէք, վասն զի դեռ մարմնաւոր էք։ 3 – Որովհետեւ տակաւին ձեր մէջ նախանձ ու հակառակութիւն և բաժանումներ կան, չէ՞ որ մարմնաւոր էք, ու մարդկօրէն կը քալէք։ 4 – Բանզի երբ ըսէ մէկը կ'ըսէ թէ Ես Պօղոսինն եմ, և միւսը՝ թէ Ես Ապողոսինն, չէ՞ որ մարմնաւոր էք։ 5 – Ուրեմն ո՞վ է Պօղոս կամ ո՞վ է Ապողոս. պաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք, և ինչպէս Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն։ 6 – Ես տնկեցի, Ապողոս ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց։ 7 – Ուստի ոչ տնկողը բան մըն է, և ոչ ջուր տուողը, հապա Աստուած՝ որ աճեցուց։ 8 – Տնկողը ու ջուր տուողը մէկ են, և ամէն մէկը իր վարձքը պիտի առնէ իր աշխատութեան չափովը։ 9 – Վասն զի մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինութիւնն էք։ 10 – Աստուծոյ շնորհքին չափովը, որ ինձի որուեցաւ, իմաստուն ճարտարապետի մը պէս հիմ դրի, բայց ուրիշ մը վրայ շինողը ուրիշ է. միայն թէ ամէն մէկը թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ։ 11 – Վասն զի մէկը ալ ուրիշ հիմ չկրնար դնել դրուածէն զատ, որ է Յիսուս Քրիստոս։ 12 – Եթէ մէկը այս հիմին վրայ կը շինէ ոսկի, արծաթ, պատուական քարեր, փայտ, խոտ, եղէգ, 13 – Ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլլայ. քանզի օրը երեւան պիտի հանէ, վասն զի կրակով պիտի յայտնուի. և ամէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլալը կրակը պիտի փորձէ։ 14 – Եթէ մէկուն շինած գործը մնայուն ըլլայ, ինք վարձք պիտի առնէ. 15 – Եւ եթէ մէկուն շինածը այրուելու ըլլայ, անիկա վնաս պիտի քաշէ. բայց ինք պիտի ազատի, սակայն այնպէս՝ իբր թէ կրակի միջէ։ 16 – Չէ՞ զի դուք որ Աստուծոյ տաճար էք դուք, և Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է։ 17 – Եթէ մէկը Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած զանիկա պիտի ապականէ, վասն զի Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք։

18 – Ձըլլայ որ մէկը ինքզինք խաբէ. եթէ ձեզմէ մէկը դինք իմաստուն կը սեպէ այս աշխարհի մէջ, թող յիմար ըլլայ՝ որպէս զի իմաստուն ըլլայ։ 19 – Վասն զի այս աշխարհի իմաստութիւնը Աստուծոյ առջեւ յիմարութիւն է. վասն զի գրուած է թէ Անիկա իմաստունները իրենց խորամանկութեան մէջ կը բռնէ։ 20 – Եւ դարձեալ՝ թէ Տէրը գիտէ իմաստուններուն խորհուրդները, որոնք ունայն են։ 21 – Ուրեմն մէ՛կը թող չպարծենայ մարդոցմով. 22 – Վասն զի ամէն բան ձերն է, թէ՛ Պօղոս, թէ՛ Ապողոս, թէ՛ Կեփաս, թէ՛ աշխարհ, թէ՛ կեանք, թէ՛ մահ, թէ՛ ներկայ բաները և թէ՛ գալիքները. ամէն բան ձերն է. 23 – Դուք ալ Քրիստոսի էք, և Քրիստոս՝ Աստուծոյ։

## Գլ. Դ

Թող մարդիկ մեզ այսպէս սեպեն, որպէս թէ Քրիստոսի սպասաւորները ու Աստուծոյ խորհուրդներուն անտեսները։ 2 – Ուստի անտեսներուն մէջ կը փնտռուի որ մէկը հաւատարիմ գտնուի։ 3 – Բայց ինծի ամենեւին չէնչ բան մըն է, որ ձեզմէ դատուիմ, կամ՝ մարդոց *դատաստանէն, մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր. 4 – (Վասն զի ես իմ անձիս վրայով բան մը չեմ գիտեր. բայց ոչ թէ ասով կ'արդարանամ.) Հապա միս դատողը Տէրն է։ 5 – Ուրեմն ժամանակէն առաջ դատաստանի մի ընէք, մինչեւ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտնիքը լոյս պիտի հանէ, ու սիրտերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ. և այն ատեն ամէն մէկուն գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ։

6 – Ասոնք օրինակ ընէի, եղբայրներ,

*Յուն. օրուընէն

իմ վրաս ու Ապողոսի վրայ ձեզի համար, որպէս զի դուք մեզմէ սորվիք ճշդոյ վերայ գրուածէն ուրիշ բան մը չխորհիլ, որ չըլլայ թէ ձեզմէ մեկը հպարտանայ մեկուն համար ուրիշի մը դէմ։ 7 – Քանզի ո՞վ է ան որ քեզ տարբեր կ'ընէ ։– բէնէնդէն . և ի՞նչ ունիս որ չես առեր դուն. և եթէ առիր, ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս ։

8 – Արդէն կշտացած էք , արդէն հարստացաք , առանց մեզի թագաւորեցիք. և երանի՛ թէ թագաւորէիք. որպէս զի մենք ալ ձեզի հետ թագաւորէինք ։ 9 – Քանզի կարծեմ թէ Աստուած յետիններ ըրաւ մեզ առաքեալներս մինչապարանոցներ նման . վասն զի տեսարան եղանք աշխարհի և հրեշտակներուն ու մարդոց ։ 10 – Մենք յիմարներ ենք Քրիստոսի համար, և դուք խմաստուններ Քրիստոսով . մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ ։ 11 – Մինչև այսօրուան ատեն կ'անօթեւենանք ալ , կը ծարաւինք ալ , մերկ ալ կը մնանք, կը ծեծուինք ալ , աստանդական ալ կը պարսինք, 12 – Եւ մեր ձեռքերով գործելով կ'աշխատինք . երբ մեզ կը նախատեն՝ կ'օրհնենք. երբ կը հալածեն՝ կը համբերենք. 13 – Երբ գէշ կը խօսին՝ կ'ապաչենք. երբ աշխարհի աղտեղութիւնը ամենուն անարգը ըլլալով մինչև հիմա ։ 14 – Ա.յս բաները կը գրեմ՝ ոչ թէ ձեզ ամչցնելու համար , հապա կը խրատեմ՝ չէ սիրելի որդիներուս պէս ։ 15 – Վասն զի թէև դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով , բայց ոչ թէ շատ հայրեր ։– Դէ՛ , վասն զի Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ ես ևաւետարանով։ 16 – Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, ինձի նմանող եղէք։ 17 – Ասոր համար ձեզի ղրկեցի Տիմոթէոսը, որ իմ սիրելի որդիս է, ու Տէրոջմով հաւատարիմ . որ ձեր միտքը պիտի ձգէ Քրիստոսով իմ ըրածդ ճամբաներս, ինչպէս ամէն տեղ ամէն եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ ։ 18 – Մեկ քանիները հպարտացան , որպէս թէ ես պիտի չգամ ձեզի։ 19 – Բայց շուտով պիտի գամ ձեզի , եթէ Տէրը կամենայ, և պիտի հասկնամ ոչ թէ հպարտացողներուն խօսքերը , հապա զօրութիւնը ։ 20 – Վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ոչ թէ խօսքով է, հապա զօրութիւնով ։ 21 – Ինչպէս կ'ուզէք. գաւազանո՞վ գամ ձեզի , թէ սիրով և հեզութեան հոգիով ։

## Գլ. Ե

Սու հասարակ կը լսուի ձեր մէջ պոռնկութիւն ըլլալ . և այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսներուն մէջ ալ *չկայ , որպէս թէ մեկը իր հօրը կինը ունենայ։ 2 – Ու դուք հպարտացեր էք, և ոչ մանաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վերցուի այս բանը ։ 3 – Վասն զի թէպէտ ես մարմնով հեռու եմ, բայց հոգիով ներկայ եմ . ուստի հիմա որպէս թէ ներկայ ըլլալով որոշեցի, որ այս բանը ընողը, 4 – Երբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը մեկտեղ ժողվուիք դուք ու իմ հոգիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնովը, 5 – Այնպիսին Սատանային մատնեք , մարմնին կորուստուն համար , որպէս զի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը։ 6 – Ա.յդ ձեր պարծանքը աղէկ չէ. չը՞ս գիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ ։ 7 – Մաքրեցէք հին խմորը մեկզի , որպէս զի ըլլաք նոր զանգուած , ինչպէս անխմոր էք . վասն զի Քրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ ։ 8 – Ուստի տօն կատարենք , ոչ թէ հին խմորով և ոչ թէ չարութեան ու անզգամութեան խմորովը, հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը։ 9 – Գրեցի ձեզի թուղթին մէջ , որ պոռնիկներուն հետ չխառնուիք ։ 10 – Ես չըսե՛մ՝ ոչ թէ այս աշխարհի պոռնիկներուն հետ , կամ ագահներուն հետ, կամ յափըշտակողներուն հետ , կամ կռապաշտներուն հետ . ապա թէ ոչ՝ պէտք էր որ դուք աշխարհէ դուրս ելլէիք։ 11 – Բայց հիմա ձեզի գրեցի չխառնուիլ , այսինքն եթէ մեկը եղբայր ըսուած՝ կա՛մ պոռնիկ ըլլայ , կա՛մ ագահ , կա՛մ կռապաշտ , կա՛մ նախատող , կա՛մ գինով , կա՛մ յափշտակող , այնպիսին հետ հաց ալ չուտել ։ 12 – Վասն զի ի՞նչ պէտք է ինձի դուրսինները ալ դատել . չէ՞ որ դուք ներսինները կը դատէք. 13 – Իսկ դուրսինները Աստուած պիտի դատէ . ուստի չարը ձեր մէջէն վերցուցէք ։

## Գլ. Զ

Զեզմէ մեկը, եթէ բան մը ունենայ իր ընկերին հետ, կը համարձակի՞ ներբառներուն առջև դատուիլ , ու ոչ թէ սուրբերուն առջև ։ 2 – Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխարհը . ու եթէ աշխարհ ձեզմէ կը դատուի, ուրեմն արժանի չէ՞ք դուք չնչին դատեր պրպտե՞ս ։ 3 – Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակներ պիտի դատենք . ո՞ր կը մնան հապա աշխարհային բաները ։ 4 – Ուրեմն եթէ ձեր մէջ աշխարհային դատեր ունիք, եկեղեցին անարգները ձեզի դատաւոր դրէք ։ 5 – Ձեզ ամչցնելու համար կը պրսեցեմ. այնչափ եղաւ որ ձեր մէջ իմաստուն մը չկա՞յ, որ կարող ըլլայ իրաւունքը որոշել իր եղբայրներուն մէջ . 6 – Հապա եղբայր եղբօր հետ դատի կը մտնե, այն ալ անհաւատներուն առջև։ 7 – Աբգարև բոլորովին յանցանք մըն է այս ձեր մէջ , որ իրարու հետ դատեր ունիք . ինչո՞ւ մանաւանդ դուք անիրաւութիւն չէք կրեր . ինչո՞ւ մանաւանդ դուք զրկանք չէք քաշեր ։ 8 – Հապա դուք անիրաւութիւն ու զրկանք կ'ընէք, և այն ալ եղբայրներուն։ 9 – Չէ՞ք գիտեր որ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն . մի խաբուիք . ոչ պոռնիկները , ոչ կռապաշտները , ոչ շնացողները, 10 – Ոչ իգացողները , ոչ արուագործները , ոչ գողերը , ոչ ագահները, ոչ գինովետները, ոչ նախատողները — ոչ յափշտակողները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն։ 11 – Եւ դուք մեկ ժամանակ այնպիսիներ էիք. բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք, բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը ու մեր Աստուծոյն Հոգիովը։

12 – Ամէն բան ինձի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան օգտակար . ամէն բան ինձի օրինաւոր է , բայց ես բանի մը իշխանութեան տակ պիտի չըլլամ։ 13 – Կերակուրները փորին համար են, փորն ալ կերակուրներուն . բայց Աստուած զայս ալ , զանոնք ալ պիտի խափանէ։ Իսկ մարմինը պոռնկութեան համար չէ, հապա Տէրոջը, ու Տէրը՝ մարմնին համար։ 14 – Եւ Աստուած որ Տէրը յարուցանեց, մեզ ալ պիտի յարուցանէ իր զօրութիւնովը ։ 15 – Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են . ուստի Քրիստոսի անդամները առնեմ՝ պոռնիկի անդամնե՞ր ընեմ. քա՞ւ լիցի ։ 16 – Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի կը մտնենայ , անոր հետ մեկ մարմին կ'ըլլայ. քանզի Բէ՛բէ՛ը կ'ըսէ, Երկուքը մեկ մարմին պիտի ըլլան։ 17 – Իսկ ան որ Տէրոջը կը մտնենայ, անոր հետ մեկ հոգի կ'ըլլայ։ 18 – Պահեցուցէք փախեք. ամէն մեղք զոր մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի, իր մարմինին դէմ կը մեղանչէ։ 19 – Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջ է , զոր Աստուածմէ ունիք , ու դուք ձեր անձին պէտք չէք. 20 – Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ , որոնք Աստուծոյ են ։

## Գլ. Է

Արդ այն բաներուն համար որ դուք գրեցիք, աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ։ 2 – Բայց պոռնկութիւնը պատճառս համար ամէն մարդ իր կինը ունենայ, ու ամէն կին իր այրը ունենայ ։ 3 – Այրը իր կնոջ պարտքը վճարէ, նոյնպես կինն ալ իր երկան։ 4 – Կինը իր մարմնին չիշխեր , հապա այրը . նոյնպես այրն ալ իր մարմնին չիշխեր, հապա կինը ։ 5 – Մէկզմէկ մի զրկէք , եթէ ոչ՝ միաբանութեամբ առեն մը , աղօթքի պարապելու համար, ու նորէն իրարու դարձէք, որպէս զի Սատանայ ձեզ չփորձէ ձեր անժուժկալութեան համար։ 6 – Այս կը զրուցեմ թոյլ տալով և ոչ թէ հրամայելով ։ 7 – Քանզի կ'ուզէի որ ամէն մարդիկ ինձի պէս ըլլային. բայց ամէն մեկը իր պարգեւը ունի Աստուածմէ, մեկը այսպէս ու միւսը այնպէս։ 8 – Բայց չամուսնացածներուն ու որբևայրիներուն կ'ըսեմ, Աղէկ է անոնց՝ եթէ ինձի պէս կենան։ 9 – Հապա եթէ ժուժկալութիւն չունին՝ թոյլ ամուսնանան , վասն զի աղէկ է ամուսնանալ քան թէ բորբոքիլ ։ 10 – Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ ոչ թէ ես,

*Որմէ, չմիշտիլը

Հապա Տէրը, որ կ'ինը այրէն չզատուի։ 11 – (Իակ եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ, կամ իր երկան հետ հաշտուի,) ու այրը իր կինը թող չձգէ։ 12 – Բայց ուրիշներուն ես կ'ըսեմ, ոչ թէ Տէրը. Եթէ եղբայր մը անհաւատ կին ունենայ, ու անոր հաճելի բլլայ իրեն հետ բնակիլ, թող չձգէ զանիկա։ 13 – Եւ կին մը որ անհաւատ այր ունենայ, ու անոր հաճելի բլլայ իրեն հետ բնակիլ, թող չձգէ զանիկա։ 14 – Վասն զի անհաւատ այրը սրբուած է կնոջմովը, և անհաւատ կինը սրբուած է այրովը. ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ պիտի բլլային, բայց հիմա սուրբ են։ 15 – Իակ եթէ անհաւատը զատուի՝ թող զատուի. եղբայր մը կամ քոյր մը այնպիսի պարագաներու մէջ գերի չէ. սակայն Աստուած խաղաղութեան կանչեց մեզ։ 16 – Քանզի ինչ գիտես դուն, ով կին, թերեւս քու այրդ պիտի ապրեցնես. կամ դուն ինչ գիտես, ով այր, թերեւս քու կինդ պիտի ապրեցնես։ 17 – Միայն թէ ամէն մէկուն ինչպէս Տէրը բաժնեց, ամէն մէկը ինչպէս Աստուած կանչեց, այնպես թող երթայ, ու ամէն եկեղեցիներուն մէջ ես այսպէս պատուէր կու տամ։

18 – Եթէ թլփատուած մէկը հաւատքի կանչուեցաւ, թող նորէն անթլփատ չբլլայ. չթլփատուածներէն մէկը կանչուեցաւ, թող չթլփատուի։ 19 – Վասն զի թլփատութիւնը բան մը չէ, ու անթլփատութիւնը բան մը չէ. հապա Աստուծոյ պատուիրանքներուն պահպանութիւնը պէտք է։ 20 – Բայց ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, թող անոր մէջ կենայ։ 21 – Ծառայ կանչուեցար, հոգ չընես քեզի. բայց եթէ կրնաս ազատ բլլալ, զայն ընտրէ։ 22 – Վասն զի այն ծառան որ Տէրոջմով կանչուած է, Տէրոջը ազատացեալն է անիկա. նոյնպէս այն ազատը որ կանչուած է, Քրիստոսի ծառան է։ 23 – Դուք գնով ծախու առնուեցաք, մի՛դուց ծառայ մի բլլաք։ 24 – Եղբայրներ, ամէն մէկը ինչ կոչում մէջ որ կանչուեցաւ, թող անոր մէջ կենայ Աստուծոյ առջեւ։

25 – Բայց կոյսերուն համար Տէրոջմէն հրաման մը չունիմ, միայն թէ Տէրոջմէն հաւատարիմ բլլալու ողորմութիւն գտածի մը պէս խրատ կու տամ։ 26 – Ուրեմն ես կը սեպեմ որ ասիկա ապէկ է հիմակուան նեղութեանը համար, այսինքն ապէկ է մարդուս որ այսպէս բլլայ։ 27 – Կապուա՞ծ ես կնոջ, մի փնտռեր ազատուիլ. ազատա՞ծ ես կնոջմէ, մի փնտռեր կին։ 28 – Իակ եթէ ամուսնանաս՝ չմեղանչեցիր, և եթէ կոյսը ամուսնանայ՝ չմեղանչեց. բայց այնպիսիները մարմնին նեղութիւն պիտի ունենան. սակայն ես ձեզի կը խնայեմ։ 29 – Բայս ղըսս կ'ըսեմ, եղբայրներ, որ ժամանակը կարճցած է. ալ անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին, 30 – Եւ անոնք որ կու լան՝ որպէս թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան՝ որպէս թէ չեն խնդար, և անոնք որ ծախու կ'առնեն՝ որպէս թէ բան մը չունին, 31 – Եւ անոնք որ աշխարհս կը գործածեն՝ որպէս թէ գործ կերպով չեն գործածեր. վասն զի այս աշխարհի կերպարանքը կ'անցնի։ 32 – Բայց ես կ'ուզեմ որ գուք անհոգ բլլաք. Ան որ չամուսնացած մարդը Տէրոջը բաները կը հոգայ, թէ ինչպէս Տէրոջը հաճելի բլլայ։ 33 – Իակ ամուսնացածը աշխարհիս բաները կը հոգայ, թէ ինչպէս իր կնոջ հաճելի բլլայ։ 34 – Եւ ամուսնացած կինը ու կոյսը կը տարբերին իրարմէ. Ան որ կոյսը Տէրոջը բաները կը հոգայ, որպէս զի ինք սուրբ բլլայ հոգւով ու մարմնով. իակ ամուսնացած կինը աշխարհիս բաները կը հոգայ, թէ ինչպէս իր երկան հաճելի բլլայ։ 35 – Բայց այս բանը ձեր օգուտին համար կը զրուցեմ, ոչ թէ ձեր վրայ վարմ մը ձգելու, հապա պարկեշտութեան համար ու առանց զբաղանքի Տէրոջը ծառայելու համար։ 36 – Իակ եթէ մէկը ամօթ կը սեպէ իր կոյսին համար՝ եթէ չափը անցեր է, ու պէտք է այնպէս ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ թող ընէ, մեղք չգործեր. թող ամուսնանան։ 37 – Բայց ան որ իր սրտին մէջ հաստատ կը կենայ, ու իր վրայ հարկ մըն ալ չկայ, հապա իր կամքին վրայ իշխանութիւն ունի, ու իր սրտին մէջ այսպէս որոշեր է որ իր կոյսը պահէ, աղեկ կ'ընէ։ 38 – Ուստի ան որ էրկոջը կ'ամուսնացնէ, աղեկ կ'ընէ. ու ան որ չամուսնացնէր, աւելի աղեկ կ'ընէ։ 39 – Կինը *կապուած է՝ որչափ ժամանակ որ իր այրը ողջ է. ապա եթէ իր այրը մեռնի, ազատ է ամուսնանալու որու որ ուզէ, միայն թէ Տէրոջմով։ 40 – Բայց իմ դատաւճիռս նայելով աւելի երանելի է եթէ այնպէս կենայ. և կարծեմ թէ ես ալ Աստուծոյ Հոգին ունիմ։

*Կամ, անոր համար

## ԳԼ. Ը

Բայց կուռքերու զոհերուն վրայով դիտենք որ ամէնս ալ գիտութիւն ունինք. գիտութիւնը կը հպարտացնէ, բայց սէրը շինութիւն կ'ընէ։ 2 – Եւ եթէ մէկը կը կարծէ թէ բան մը գիտէ, դեռ բնաւ բան մը չգիտեր ինչպէս պէտք է գիտնալ։ 3 – Իակ եթէ մէկը զԱստուած կը սիրէ, ինք անկէ ճանչցուած է։ 4 – Ուստի կուռքերու զոհուածներուն ուտելու վրայով գիտենք որ կուռքը ոչինչ է աշխարհի մէջ, և որ մէկէն զատ ուրիշ Աստուած մը չկայ։ 5-Քանզի թէև բլլան ալ անուանեալ աստուածներ, թէ՛ երկինքը և թէ՛ երկրի վրայ, (ինչպէս կան շատ աստուածներ ու շատ տէրեր,) 6 – Բայց մենք մէկ Աստուած ունինք, Հայրը, որմէ են ամէն բաները, և մենք ալ *անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որմէ են ամէն բաները, ու մենք ալ անով։ 7 – Բայց ամէնուն քով գիտութիւն չկայ. և ամենք կուռքի վրայով խղճմտանք ունենալով մինչև հիմա կ'ուտեն կուռքերու զոհուածի պէս, և իրենց խղճմտանքը, որովհետև տկար է, կը պղծուի։ 8 – Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ առջեւ չկեցներ. քանզի ոչ եթէ ուտենք՝ կ'ուտենք. և ոչ եթէ չուտենք՝ կը պակսինք։ 9 – Բայց դուշ կեցէք, որ չբլլայ թէ այդ ձեր իշխանութիւնը տկարներուն գայթակղութիւն բլլայ։ 10 – Քանզի եթէ մէկը տեսնէ քեզ, որ գիտութիւն ունիս, կուռատունի մէջ սեղան նստած, չէ՞ որ այն տկար մարդուն խղճմտանքը համարձակութիւն պիտի առնէ կուռքերու զոհուածը ուտելու, 11-Եւ քու գիտութիւնովդ այն տկար եղբայրը կորսուի, որու համար Քրիստոս մեռաւ։ 12 – Եւ այսպէս եղբայրներուն դէմ մեղանչելով՝ ու անոնց տկար խղճմտանքը վիրաւորելով՝ Քրիստոսի դէմ կը մեղանչէք։ 13 – Ուստի եթէ կերակուրը կը գայթակղեցնէ իմ եղբայրս, մի պիտի չուտեմ յաւիտեան՝ որպէս զի իմ եղբայրս չգայթակղեցնեմ։

*Ինձմէ, իմ յոյսը վայելելու համար

## ԳԼ. Թ

Չէ՞ որ ես առաքեալ եմ. չէ՞ որ ես ազատ եմ. չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուխտը տեսայ. չէ՞ որ գուք էք իմ գործս Տէրոջմով։ 2 – Թէպէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ՝ ալ, բայց անտարակոյս ձեզի եմ. վասն զի իմ առաքելութեանս կնիքը գուք էք Տէրոջմով։ 3-Իմ պատասխանս անոնց որ ինձ կը քննեն, այս է. 4 – Մի՞թէ մենք իշխանութիւն չունինք ուտելու և խմելու։ 5 – Մի՞թէ մենք իշխանութիւն չունինք Քրիստոս քոյր եղող կին մը չեղ հետ պտըտցնելու, ինչպէս ուրիշ առաքեալները ու Տէրոջը եղբայրները ու Կեփաս (Ընէն)։ 6 – Մի՞թէ ես ու Բառնաբա՞ս միայն իշխանութիւն չունինք չգործելու։ 7 – Ո՞վ իր ռազմաւորով պինաւորութիւն կ'ընէ. ո՞վ այգի կը տնկէ ու անոր պտուղէն չուտեր. կամ ո՞վ ոչխարներ կ'արածէ ու ոչխարներուն կաթէն չուտեր։ 8 – Մի՞թէ մարդկօրէն կը զրուցեմ այս բաները, կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը զրուցէ։ 9 – Քանզի Մովսէսի օրէնքին մէջ ալ գրուած է, Կալի մէջ աշխատող եզին դունչը չկապես։ Մի՞թէ եզերո՞ւն համար Աստուծոյ հոգն էր. 10 – Չէ՞ որ մանաւանդ մեզի համար կ'ըսէ. վասն զի մեզի համար գրուեցաւ. որովհետև ան որ կը հերկէ պէտք է որ յոյսով հերկէ, և ան որ ցորենը կը ձեռնէ՝ պէտք է որ *վայելելու յոյսով ընէ։ 11 – Եթէ մենք ձեզի հոգևոր բաներ սերմանեցինք, մե՞ծ բան մըն է եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք։ 12-Եթէ ուրիշները ձեր վրայ այս իշխանութիւնը ունին, չէ՞ որ ալ աւելի մենք. բայց մենք այս իշխանութիւնը չգործածեցինք, հապա ամէն բանի կը համբերենք, որպէս զի Քրիստոսի աւետարանին արգելք մը չբլլանք։ 13 – Չէ՞ք գիտեր որ տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ'ուտեն, և անոնք որ սեղանին պաշտօնեաներն են՝ սեղանէն բաժին կ'առ-

*Ինձմէ, օրէնքով կապուած

նեն։ 14 – Նոյնպէս ալ Տէրը հրամայեց առաջ, որ աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին։ 15 – Բայց ես այս բաներուն մէկը չգործածեցի, ոչ ալ այդ բաները գրեցի որ ինծի այսպէս ըլլայ. քանզի աւելի աղէկ է ինծի որ մեռնիմ, քան թէ մէկը իմ պարծանքը պարապ հանէ։ 16-Վասն զի եթէ ես աւետարանը քարոզեմ, ինծի պարծանք մը չկայ, վասն զի իմ վրաս հարկ մըն է. մանաւանդ վայ է ինծի՝ եթէ աւետարանը չքարոզեմ։ 17 – Քանզի եթէ ասիկա կամաւ ընեմ, վարձք կ'ունենամ. իսկ եթէ ակամայ՝ այն ինծի յանձնուած անտեսութիւն մըն է։ 18-Ուրեմն ի՞նչ վարձք կ'ըլլայ ինծի. այս է՝ որ քարոզելու ատենս Քրիստոսի աւետարանը ձրի տամ, որ չըլլայ թէ աւետարանին մէջ իմ իշխանութիւնս գէշ կերպով գործածեմ։ 19 – Քանզի թէև ես ամէնէն ազատ էի, իմ անձս ամէնուն ծառայ ըրի, որպէս զի շատերը շահիմ։ 20-Հրեաներուն հետ Հրեայի պէս եղայ, որպէս զի Հրեաները շահիմ. 21 – Օրէնքի տակ եղողներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ, [ոչ թէ ես օրէնքի տակ էի,] որպէս զի օրէնքի տակ եղողներն ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ, (ոչ թէ ես Աստուծմէ օրէնք չունէի, հապա Քրիստոսի օրէնքին տակ էի,) որպէս զի օրէնք չունեցողներն ալ շահիմ։ 22 – Տկարներուն հետ տկարի պէս եղայ, որպէս զի տկարները շահիմ. ամէնուն հետ ամէն բան եղայ, որ ըլլայ թէ մէկ քանիները ազատեցնեմ։ 23 – Եւ ասիկա աւետարանին համար կ'ընեմ, որպէս զի անոր կցորդ ըլլամ։ 24 – Չե՞ք դիտեր որ ասպարէզին մէջ վազողները իրաւ կը վազեն ամէնը, բայց մէկը կ'առնէ մրցանակը. այնպէս վազեցէք որ հասնիք։ 25 – Եւ ամէն ով որ կը մրցի, ամէն բանի մէջ չափաւորութիւն կը պահէ. անոնք եղծանելի պսակը առնելու համար, ու մենք՝ անեղծանելին։ 26 – Ուստի ես այնպէս կը վազեմ՝ ոչ թէ որպէս թէ անստուգութեամբ. ես այնպէս բռնամարտութիւն կ'ընեմ՝ ոչ թէ որպէս թէ հովը ծեծելով. 27 – Բայց իմ մարմինս կը ճնշեմ ու կը նուաճեմ, որպէս զի չըլլայ թէ ուրիշներուն քարոզելէս ետև՝ ես ինքնս խառնի գտնուիմ։

## Գ Լ. Ժ

Զի՛մ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ մեր հայրերը ամէնն ալ ամպին տակ էին, ու ամէնն ալ ծովէն անցան, 2 – Եւ ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ, 3 – Եւ ամէնն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան, 4 – Ու ամէնն ալ նոյն հոգևոր խմիչքը խմեցին, վասն զի կը խմէին այն հոգևոր վէմէն որ անոնց հետ կ'երթար. ու այն վէմը Քրիստոս էր։ 5 – Բայց ոչ թէ անոնցմէ շատերուն հաճեցաւ Աստուած, վասն զի անապատին մէջ փուսուած լինին։ 6 – Ու այն բաները մեզի օրինակ եղան, որպէս զի չար բաներու ցանկացող չըլլանք, ինչպէս անոնք ցանկացան։ 7 – Ոչ ալ կռապաշտ ըլլաք, ինչպէս անոնցմէ ոմանք. ինչպէս գրուած է, Ժողովուրդը նստաւ ուտելու և խմելու, ու ելան խաղալու։ 8 – Եւ պոռնկութիւն չընենք, ինչպէս անոնցմէ ոմանք պոռնկեցան, ու մէկ օրուան մէջ քսան և երեք հազար հոգի լինին։ 9 – Եւ Քրիստոսը չփորձենք, ինչպէս անոնցմէ ոմանք փորձեցին, ու օձերէն ջարդուեցան։ 10 – Եւ տրտնջոց չընենք, ինչպէս անոնցմէ ոմանք տրտնջեցին, ու սատակիչէն ջարդուեցան։ 11 – Բայց այս ամէն բաները իրենց օրինակ կը պատահէին անոնց. իսկ մեզի, որոնց դարերուն վերջը հասաւ, խրատ ըլլալու համար գրուեցան։ 12 – Ուստի ան որ կը սեպէ թէ հաստատուն կեցած է, թող զգուշանայ որ չըլլայ թէ իյնայ։ 13 – Զեզի մարդկային փորձութիւնէ զատ ուրիշ չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու ձեր կարողութենէն աւելի փորձուիլ, հապա փորձութեան հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէս զի կարող ըլլաք համբերել։

14 – Անոր համար, իմ սիրելիներս, կռապաշտութենէ փախէք։ 15 – Որպէս թէ խելամուտներու հետ կը խօսիմ. դուք դատեցէք ինչ որ կը պըտեցեմ։ 16 – Օրհնութեան գաւաթը զոր մենք կ'օրհնենք, չէ՞ որ Քրիստոսի արեանը հաղորդութիւնն է. հացը զոր մենք կը կոտրենք, չէ՞ որ Քրիստոսի մարմինին հաղորդութիւնն է։ 17 – Քանզի մենք շատերս մէկ հաց մէկ մարմին ենք, վասն զի ամէնս ալ այն մէկ հացէն կը վայելենք։ 18 – Նայեցէք մարմնաւոր Իսրայէլի. չէ՞ որ այն զոհասածները ուտողները սեղանին հաղորդ են։ 19 – Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ, Թէ կուռքը բա՞ն մըն է, կամ Թէ կուռքերու զոհասածը բա՞ն մըն է։ 20 – Բայց ըսա՛ կ'ըսեմ Թէ այն բաները զորոնք հեթանոսները զոհ կ'ընեն, դեւերուն կը զոհեն ու ոչ Թէ Աստուծոյ. ու չեմ ուզեր որ դուք դեւերուն հաղորդ ըլլաք։ Չէք կրնար խմել Տէրոջը գաւաթը ու դեւերուն գաւաթը. 21 – Չէք կրնար վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն սեղանէն։ 22 – Նախանձի՞ գրգռենք Տէրը. միթէ մենք անկէ զօրաւո՞ր ենք։

23 – Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ Թէ ամէն բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ Թէ ամէն բան շինութիւն կ'ընէ։ 24 – Չըլլայ որ մէկը փոյթ իր անձին օգո՞ւտը փնտռէ, հապա իր ընկերոջինը։ 25 – Ամէն ինչ որ ապանդանոցին մէջ կը ծախուի՝ կերէք, ու քննութիւն մի ընէք խղճմտանքի համար. 26 – Վասն զի երկիրը իր լրութիւնովը Տէրոջն է։ 27 – Եւ եթէ անհաւատներէն մէկը ձեզ հրաւիրէ, և ուզէք երթալ, ամէն ինչ որ ձեր առջև դրուի՝ կերէք, ու քննութիւն մի ընէք խղճմտանքի համար։ 28 – Ապա եթէ մէկը ձեզի ըսէ Թէ Ասիկա կուռքի զոհասած է, այն ատեն իրեն համար որ չերեւի եղածիդ՝ ու խղճմտանքի համար մի ուտէք.* 29 – Ասկայն խղճմտանք կ'ըսեմ՝ ոչ Թէ ձերը, հապա ընկերինը։ Բայց ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի դատուի ուրիշին խղճմտանքէն։ 30 – Եթէ ես †շնորհակալութեամբ կը վայելեմ՝ ինչո՞ւ հայհոյուիմ, որու համար կը գոհանամ։ 31 – Արդ Թէ՛ ուտէք, Թէ՛ խմէք և Թէ ինչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք։ 32 – Գայթակղութեան պատճառ մի ըլլաք՝ ոչ Հրեաներուն, ոչ ‡հեթանոսներուն և ոչ Աստուծոյ եկեղեցիին։ 33 – Ինչպէս ես ալ ամէն կերպով ամէնուն հաճոյ կ'ըլլամ, ու չեմ փնտռեր իմ անձիս օգուտը, հապա շատերունը՝ որպէս զի փրկուին։

*Ոմանք յ'աւելցնեն, վասն զի երկիրը իր լրութիւնովը Տէրոջն է։

†Կամ, շնորհքով

‡Յոյն. Յոյներուն



## Գ Լ. Ժ Ա.

Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի. 2 – Արդ ձեզ կը գովեմ, եղբայրներ, որ ամէն բանի մէջ զիս կը յիշէք, ու ապրեցածներս կը բռնէք ինչպէս ես ձեզի աւանդեցի։ 3 – Բայց կ'ուզեմ որ գիտնաք Թէ ամէն այր մարդուս գլուխը Քրիստոս է, ու կնոջ գլուխը՝ այր մարդը, և Քրիստոսի գլուխը՝ Աստուած։ 4 – Ամէն այր մարդ որ գլուխը դաց աղօթքի կը կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը։ 5 – Եւ ամէն կին որ գլուխը բաց աղօթքի կը կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը. վասն զի միևնոյն բան է ըսած որպէս Թէ ածիլուած էր։ 6 – Վասն զի եթէ կինը չծածկուիր, Թող իր մազերն ալ կտրէ. իսկ եթէ ամօթ է կնոջ մը իր մազերը կտրել կամ ածիլուիլ, Թող ծածկուի։ 7 – Այր մարդուս պէտք չէ իր գլուխը ծածկել, վասն զի Աստուծոյ պատկերը ու փառքն է. բայց կինը էր երկանը փառքն է։ 8 – Քանզի ոչ Թէ այր մարդը կնոջմէն է, հապա կինը՝ այր մարդէն։ 9 – Վասն զի այր մարդը չստեղծուեցաւ կնոջը համար, հապա կինը՝ երկանը համար։ 10 – Այս պատճառաւ պէտք է որ կինը իր գլխուն *շուք դնէ հրեշտակներուն համար։ 11 – Բայց ոչ կինը առանց այր մարդու կ'ըլլայ, ու ոչ այր մարդը առանց կնոջ՝ Տէրոջմով։ 12 – Վասն զի ինչպէս կինը այր մարդէն է, նոյնպէս այր մարդը կնոջ միջոցաւ, բայց ամէնը Աստուածմէ։ 13 – Դուք ձեզմէ դատեցէք. կը վայլէ՞ կին մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ Աստուծոյ առջև. 14 – Չէ՞ որ բնութիւնն ալ կը սորվեցնէ ձեզի որ այր մարդ մը եթէ երկար մազերով է, իրեն անարգանք է. 15 – Բայց կինը եթէ երկար մազերով է, իրեն փառք է. վասն զի մազերը ծածկոցի տեղ տրուած են իրեն։ 16 – Սակայն եթէ մէկը հակառակող ըլլալ կ'ուզէ, մենք այնպիսի սովորու-

*Յոյն. իշխանութիւն

թիւն չունինք, ոչ ալ Աստուծոյ եկեղեցիները։

17 – Բայց զայս պատուիրելով չեմ գովեր, վասն զի ձեր ժողովուիլը ոչ թէ աղէկի՝ հապա գէշ արդիւնք կ'ունենայ։ 18 – Քանզի նախ՝ երբ մէկտեղ կը ժողովուիք եկեղեցիին մէջ, կը լսեմ որ բաժանմունքներ կան ձեր մէջ, և բան մասին կը հաւատամ։ 19 – Վասն զի հարկաւ ձեր մէջ հերձուածողութիւններ ալ պիտի ըլլան, որպէս զի ձեր մէջ եղող ընտիրները երեան։ 20 – Ուստի դուք որ մէկտեղ կը ժողվուիք, տիրոջ Տէրունական ընթրիքը ուտել չէ. 21 – վասն զի ուտելու ատեն ամէն մէկը առաջ իր ընթրիքը կ'առնէ. ու մէկը անօթի կը մնայ ու միւսը կը գինովնայ։ 22 – Միթէ ուտելու և խմելու համար տուն չունիք, կամ թէ Աստուծոյ եկեղեցիին կ'անարգէք, և ամթոփով կ'ընձեա չբաւարներն. ձեզի ի՞նչ բսեմ, ձեզ գովի՞մ. այդ բանին մէջ չեմ գովեր։ 23 – Վասն զի ես Տէրոջմէն ընդունեցի զայն որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց առաւ. 24 – և գոհանալով՝ կոտրեց ու բսաւ, Առէք — կերէք, այս է իմ մարմինս որ ձեզի համար կը կոտրի. ասիկա բրէք զիս յիշելու համար։ 25 – Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ետև ասաւ ու բսաւ, Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս. ասիկա բրէք քանի անգամ որ խմէլու ըլլաք՝ զիս յիշելու համար։ 26 – Վասն զի քանի անգամ որ այս հացը ուտէք ու այս գաւաթը խմէք, Տէրոջը մահը կը պատմէք՝ մինչև որ գայ։ 27 – Ուստի ով որ այս հացը ուտէ կամ Տէրոջը գաւաթը խմէ անարժանապէս, պատասխան պիտի ըլլայ Տէրոջը մարմնին և արիւնին։ 28 – Ուրեմն թող մարդ իր անձը փորձէ, ու այսպէս այն հացէն ուտէ և այն գաւաթէն խմէ։ 29 – Վասն զի անոր որ անարժանապէս կ'ուտէ ու կը խմէ, իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ, վասն զի Տէրոջը մարմինը չտեսնէր։ 30 – Ասոր համար ձեր մէջ շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, և շատեր ալ կը ննջեն։ 31 – Վասն զի եթէ ինքզինքնիս դատէրս ըլլայինք, պիտի չդատուէինք։ 32 – Իսկ երբ կը դատուինք, Տէրոջմէ կը խրատուինք, որպէս զի աշխարհի հետ չդատապարտուինք։ 33 – Ուստի, իմ եղբայրներս, երբ մէկտեղ կը ժողվուիք ուտելու, իրարու սպասեցէք։ 34 – Իսկ եթէ մէկը անօթի է՝ թող էր տանը մէջ ուտէ, որ չըլլայ թէ դատապարտութեան համար ժողվուիք։ Եւ ուրիշ բաները չեզ եկած ատենս պիտի պատուիրեմ։

## Գ.Կ. ԺԲ

Բայց հոգևոր պարգևներուն վրայ չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտցած ըլլաք։ 2 – Դուք գիտէք որ երբ հեթանոս էիք, մունջ կուռքերուն կը տարուէիք՝ ինչպես կ'առաջնորդուէիք։ 3 – Ուստի ձեզ կ'իմացնեմ թէ մէկը չըլլար որ Աստուծոյ Հոգիովը խօսի ու Յիսուսը նզովեալ կոչէ. և մէկն ալ չկրնար Յիսուսը Տէր կոչել՝ եթէ ոչ Հոգւով Սրբով։ 4 – Եւ պարգևները զանազան են, բայց նոյն Հոգին է։ 5 – Նաև պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրն է։ 6 – Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը ներգործէ ամէնը ամէն բանի մէջ։ 7 – Բայց ամէն մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրուած է օգուտի համար։ 8 – Մէկուն՝ Հոգիով իմաստութեան խօսք տրուած է, ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին պատճէնովը։ 9 – Միւսին հաւատք՝ նոյն Հոգիով, ուրիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն Հոգիով։ 10 – Ուրիշին հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու ընտրութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն։ 11 – Բայց զայս ամէնը միևնոյն Հոգին կը ներգործէ, և ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ՝ ինչպես կ'ուզէ։

12 – Քանզի ինչպես մարմինը մէկ է ու շատ անդամներ ունի, և *այն մարմինին բոլոր անդամները, որոնք շատ են, մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ։ 13 – Վասն զի մենք ամէնս մէկ Հոգիով մէկ մարմին ըլլալու մկրտուեցանք, թէ՛ Հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ, և ամէնս ալ մէկ Հոգւով խմեցինք։ 14 – Վասն զի մարմինը մէկ անդամ չէ, հապա շատ։ 15 – Եթէ ոտքը ըսէ, Որովհետև ես ձեռք չեմ՝ մարմինէն չեմ, ոչ թէ անով այն մարմինէն չէ։ 16 – Եւ եթէ ականջը ըսէ, Որովհետև ես աչք չեմ՝ մարմինէն չեմ, ոչ թէ անով այն մարմինէն չէ։ 17 – Եթէ բոլոր մարմինը աչք ըլլար, ընկերքը ո՞ր պիտի ըլլար. և եթէ բոլորը ընկերք ըլլար, ո՞ր պիտի ըլլար հոտոտելիքը։ 18 – Բայց հիմա Աստուած անդամները դրաւ՝ անոնց ամէն մէկը մարմինին մէջ, ինչպես ինք ուզեց։ 19 – Ապա եթէ ամէնը մէկ անդամ ըլլար, մարմինը ո՞ր պիտի ըլլար։ 20 – Բայց հիմա անդամները շատ են, ու մարմինը՝ մէկ։ 21 – Չկրնար աչքը ըսել ձեռքին թէ Դուն ինձի պէտք չես. և ոչ դարձեալ գլուխը ոտքերուն՝ թէ Ինձի պէտք չէք։ 22 – Մանաւանդ մարմինին այն անդամները որոնք շատ տկար կ'երեւան, աւելի հարկաւոր են։ 23 – Ու մարմինին այն անպատիւները զարնեք յարէա անպատիւ ըլլալ կը տեսնէք, անոնց վրայ աւելի պատիւ կը դնենք. ու այսպէս մեր անվայելչութիւնները աւելի վայելչութիւն ունին։ 24 – Ու մեր վայելչութիւն անդամներուն բան մը պէտք չէ. բայց Աստուած մարմինը բարեխառնեց, ու պակասութիւն ուներ տուաւ, 25 – որպէս զի մարմինին մէջ երկպառակութիւն չըլլայ, հապա անդամները միևնոյն հոգը ունենան իրարու վրայ։ 26 – Եւ եթէ մէկ անդամը նեղութիւն կրէ, բոլոր անդամները կը նեղուին անոր հետ. և եթէ մէկ անդամը պատուուի մէկ անդամի, բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետ։ 27 – Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամները։ 28 – Եւ Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քահանները, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը հրաշքներ, ետքը բժշկութիւններ, պարգևներ, օգնութիւններ, կառավարութիւններ, լեզուներու տեսակներ։ 29 – Միթէ ամէնը առաքեալնե՞ր են. միթէ ամէնը մարգարէնե՞ր են. միթէ ամէնը վարդապետնե՞ր են. միթէ ամէնը հրաշքնե՞ր են։ 30 – Միթէ ամէնը բժշկութեան պարգևնե՞ր ունին. միթէ ամէնը լեզունե՞ր կը խօսին. միթէ ամէնը թարգմանութիւն կ'ընեն։

31 – Բայց դուք նախանձաւոր եղէք այն շնորհքներուն որոնք լաւագոյն են. և ես ալ ուրիշ ճամբայ մը կը ցուցնեմ ձեզի։

*Մարմ., այն մէկ



## Գ.Կ. ԺԳ

Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչեցնող ծնծղաներու պէս։ 2 – Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, ու չգիտնամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, և եթէ ունենամ ամէն հաւատքը մինչև լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ։ 3 – Եւ եթէ իմ բոլոր ստացուածքս ապրուստ կերցնեմ, ու իմ մարմինս այրուելու տամ, և սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար։ 4 – Սէրը երկայնամիտ է, քաղցր է. սէրը չնախանձի, սէրը չդոզաղանար, չպարծանար, չհպարտանար, 5 – Անվայել վարմունք չունենար, իրենը չփնտռեր, բարկութեան չդրգռուիր, չմտածեր չար բանի համար, 6 – Անիրաւութեան վրայ չհնդիր. հապա ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ։ 7 – Ամէն բանի կը դիմանայ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը համբերէ։ 8 – Սէրը երբեք չդադրիր. բայց եթէ մարգարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դադրին, եթէ գիտութիւն՝ պիտի խափանի։ 9 – Վասն զի մասէն քիչը գիտենք, ու մասէն քիչը կը մարգարէանանք։ 10 – Բայց երբ կատարեալը գայ, այն ատեն մասէն քիչը պիտի խափանի։ 11 – Երբ տղայ էի, տղայի պէս կը խօսէի, տղայի պէս կը խորհէի, տղայի պէս կը մտածէի. բայց երբ այր եղայ, տղայութեան բաները մէկդի ձգեցի։ 12 – Քանզի հիմա մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց այն ատեն երես առ երես. հիմա մասէն քիչ մը տեղեակ եմ, բայց այն ատեն այնպէս պիտի ճանչնամ՝ ինչպէս ճանչցուեցայ։ 13 – Ուստի հիմա կը մնայ հաւատք, յոյս, սէր, այս երեքը. ու ասոնց մեծագոյնը սէրն է։

## Գ.Կ. ԺԴ

Սիրոյ ետևէն գացէք, ու Հոգևոր պարգևներուն նախանձաւոր եղէք, մա-

նաւանդ մարգարէութիւն ընելու : 2- Ո՛ման ոլ ան որ օրոր լեզուով կը խօսի՝ ոչ թէ մարդոց կը խօսի , հապա Աստուծոյ . վասն ոլ մէկը չկայ որ իմանայ , բայց անկից հոգիով խորհուրդներ կը խօսի : 3 – Սակայն ան որ կը մարգարէանայ , մարդոց կը խօսի՝ շինութիւն ու յորդորանք և մխիթարութիւն ըսելու : 4 – Ան որ օրոր լեզուով կը խօսի՝ իր անձին շինութիւն կ՚ընէ , ու ան որ կը մարգարէանայ՝ եկեղեցին շինութիւն կ՚ընէ : 5 – Կ՚ուզեմ որ դուք ամէնդ լեզուներ խօսիք , բայց մանաւանդ որ մարգարէութիւն ընէք , վասն ոլ ա՛լ աղէկ է ան՝ որ կը մարգարէանայ , քան թէ ան որ լեզուներ կը խօսի . միայն եթէ թարգմանէ լսողը , որպէս ոլ եկեղեցին շինութիւն առնէ :

6 – Եւ հիմա , եղբայրներ , եթէ ես ձեզի գամ լեզուներ խօսելով , ի՞նչ օգուտ պիտի ընեմ ձեզի՝ եթէ չխօսիմ ձեզի կա՛մ յայտնութիւնով , կա՛մ գիտութիւնով , կա՛մ մարգարէութիւնով , կա՛մ վարդապետութիւնով : 7 – Եւ ձայն առանց անկենդան բաները անգամ , թէ՛ սրինգ և թէ՛ քնար , եթէ ձայներու զանազանութիւն չընեն , ի՞նչպէս պիտի ճանչցուի սրինգով կամ քնարով նկուածը : 8- Վասն ոլ եթէ փողն ալ անորոշ ձայն հանէ , ո՞վ պիտի պատերազմի պատերազմին : 9 – Նոյնպէս դուք ալ եթէ լեզուով բացայայտ խօսք չտրուիք , խօսուածը ի՞նչպէս պիտի հասկցուի . վասն ոլ օդին խօսողներ պիտի ըլլաք : 10 – Աշխարհի մէջ այնքան տեսակ ձայներ կան , և անոնց մէ՛կը առանց նշանակութեան չէ : 11 – Ուստի եթէ այն ձայնին ըմբռնութիւնը չգիտնամ՝ , ես խօսողին բարբարոս մը պիտի ըլլամ՝ , խօսողն ալ ինծի բարբարոս մը պիտի ըլլայ : 12 – Նոյնպէս դուք ալ , որովհետև հոգևոր պարգևներու նախանձաւոր էք , եկեղեցին շինութեանը համար խնդրեցէք որ աւելնաք նոյն պարգևներով : 13 – Անոր համար ան որ օրոր լեզուով կը խօսի , աղօթք թող ընէ որ թարգմանէ ալ : 14 – Քանզի եթէ ես աղօթք ընեմ օրոր լեզուով , իմ հոգիս աղօթք կ՚ընէ , բայց միտքս անպտուղ է : 15 – Ուրեմն ի՞նչ է . աղօթք ընեմ հոգիով , աղօթք ընեմ մտաւութեամբ ալ . ասղմս երգեմ հոգիով , ասղմս երգեմ մտաւութեամբ ալ : 16 – Ապա թէ ոչ՝ եթէ դուն հոգիով օրհնութիւն ընես , անիկա որ ազէտի տեղ կայնիր է , ի՞նչպէս Ամէն պիտի ըսէ քու գոհութեան տալու առնդ . վասն ոլ ան քու պատճառդ չիմանար : 17-Թէպէտ դուն աղէկ գոհութիւն կ՚ընես , բայց միւսը շինութիւն չառներ : 18 – *Աստուածմէ կը գոհանամ որ ձեր ամէնէն աւելի լեզուներով կը խօսիմ . 19 – Բայց եկեղեցիին մէջ կ՚ուզեմ հինգ խօսք մտաւութեամբ խօսիլ , որպէս ոլ ուրիշներուն ալ սորվեցնեմ , քան թէ բիւրաւոր խօսքեր օրոր լեզուով :

20 – Եղբայրներ , միտքով տղայ մի ըլլաք , հապա չարութիւն դիտողութեամբ տղայ եղէք , ու միտքով չափահաս եղէք : 21 – Օրէնքին մէջ գրուած է թէ Օտար լեզուներով ու օտար շրթունքներով այդ ժողովուրդին հետ պիտի խօսիմ , ասկայն և այնպէս ինծի մտիկ պիտի չընեն , կ՚ըսէ Տէրը : 22 – Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներուն , հապա անհաւատներուն , բայց մարգարէութիւնը ոչ թէ անհաւատներուն , հապա հաւատացեալներուն : 23 – Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկտեղ գայ , ու ամէնն ալ օրոր լեզուներով խօսելու ըլլան , և հոն մտնեն ապերանոր կամ անհաւատներ , պիտի չըսե՞ն թէ դուք խենթեցեր էք : 24 – Իսկ եթէ ամէնն ալ մարգարէանան , ու հոն անհաւատ մը կամ ապերանոր մը մտնէ , ամէնէն ալ կը յանդիմանուի , ամէնէն ալ կը քննուի , 25 – Ու անոր սրտին ծածուկ բաները յայտնի կ՚ըլլան , և այսպէս երեսի վրայ իյնկած՝ Աստուծոյ երկրպագութիւն պիտի ընէ , ու խոստովանի թէ իրաւցընէ Աստուած ձեր մէջ է :

26 – Ուստի ի՞նչ է , եղբայրներ . երբ մէկտեղ կը ժողվուիք , ձեզմէ ամէն մէկը սաղմոս ունի , վարդապետութիւն ունի , լեզու ունի , յայտնութիւն ունի , թարգմանութիւն ունի . ամէնը շինութեան համար թող ըլլայ : 27 – Եթէ մէկը օրոր լեզու կը խօսի , երկու հոգի , և թէ շատը՝ երեք թող ըլլան , և այն ալ՝ մէկիկ մէկիկ , ու մէկը թող թարգմանէ : 28 – Բայց եթէ թարգմանող չըլլայ , եկեղեցիին

*Ոմանք , Իմ Աստուածմէս



մէջ լուռ թող կենայ , և ինքնիրեն ու Աստուծոյ թող խօսի : 29 – Իսկ մարգարէները երկու կամ երեք հոգի թող խօսին , ու միւսները թող քննութիւն ընեն : 30 – Իսկ եթէ նստողներէն ուրիշ մէկուն ալ բան մը յայտնուելու ըլլայ , առաջինը թող լռէ : 31 – Վասն ոլ ամէնդ ալ կրնաք մէկիկ մէկիկ մարգարէանալ , որպէս ոլ ամէնն ալ սորվին ու ամէնն ալ միխիթարուին : 32-Եւ մարգարէներուն հոգիները մարգարէներուն հնազանդ են : 33 – Վասն ոլ Աստուած խառնութեան Աստուած չէ , հապա խաղաղութեան , ինչպէս սուրբերուն բոլոր եկեղեցիներուն մէջ :

34-Ձեր կիները եկեղեցիներուն մէջ լուռ կենան , վասն ոլ անոնց հրամայուած չկայ խօսելու , հապա հնազանդ ըլլալու , ինչպէս օրէնքն ալ կ՚ըսէ : 35 – Բայց եթէ բան սորվիլ կ՚ուզեն , տունը քրոջ այրերնուն թող հարցնեն . քանզի կիներուն անվայել է եկեղեցիի մէջ խօսիլ : 36 – Մի՞թէ Աստուծոյ խօսքը ձեզմէ՞ելաւ , կամ թէ միայն ձեզի՞ հասաւ : 37 – Եթէ մէկը կը կարծէ թէ ինք մարգարէ է , կամ հոգևոր , թող հասատա գիտնայ թէ ինչ որ ձեզի գրեցի՝ Տէրոջը պատուէրներն են . 38 – Բայց եթէ մէկը ազէտ է՝ թող ազէտ ըլլայ : 39 – Ուստի , եղբայրներ , մարգարէութիւն ընելու նախանձաւոր եղէք , ու լեզուներ խօսիլն ալ մի արգիլէք : 40 – Եւ ամէն բան վայելչութեամբ և կարգաւ թող ըլլայ :

## Գ Լ . Ժ Ե

Եղբայրներ , ձեզի կ՚իմացնեմ այն աւետարանը զոր ես ձեզի քարոզեցի , զոր նաև ընդունեցիք ու անոր վրայ հաստատուած էք . 2 – Որով կը փրկուիք ալ , եթէ ամուր բռնէք այն խօսքը զոր ես ձեզի քարոզեցի , միայն եթէ պարապ տեղ հաւատացած չէք : 3- Վասն ոլ ամէնէն առաջ ես ձեզի աւանդեցի զանիկա , զոր ես ալ ընդունեցի , թէ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ , գիրքերուն ըստ՚ի հնումեան , 4 – Եւ թէ թաղուեցաւ ու յարութիւն առաւ երրորդ օրը , գիրքերուն ըստ՚ի հնումեան , 5 – Եւ թէ երեւցաւ Կեփասի , ու ետքը տասներկուքսին . 6 – Ետքը հինգ հարիւրէ աւելի եղբայրներուն մէկտեղ երեցաւ , որոնցմէ շատերը մինչեւ հիմա կան , և ոմանք ալ ննջեցեալն . 7 – Ո– ետքը երեւցաւ Յակոբոսի , ետքը բոլոր առաքեալներուն : 8 – Ամենէն ետքը որպէս թէ վիժածի մը՝ ինծի ալ երեւցաւ : 9- Վասն ոլ ես առաքեալներուն ամենէն չեմնէն եմ՝ , որ արժանի ալ չեմ առաքեալ ըսուելու , վասն ոլ Աստուծոյ եկեղեցին հալածեցի : 10 – Միսյն Թէ Աստուծոյ շնորհքովը եմ՝ ինչ որ եմ՝ . և անոր շնորհքը որ իմ վրաս է , պարապ բան մը չեղաւ , հապա ես անոնց ամենէն աւելի աշխատեցայ . և ոչ թէ ես , հապա Աստուծոյ շնորհքը որ ինծի հետ էր : 11 – Ուստի թէ՛ ես և թէ՛ անոնք այսպէս կը քարոզենք , ու դուք այսպէս հաւատացիք :

12 – Ուրեմն եթէ Քրիստոս կը քարոզուի , որ մեռելներէն յարութիւն առած է , ինչպէս ձեզմէ մէկ քանիները կ՚ըսեն թէ Մեռելներու յարութիւն չկայ : 13 – Եթէ մեռելներու յարութիւն չկայ , ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ : 14 – Եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ , ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է , ու ձեր հաւատքն ալ պարապ է . 15 – Եւ մենք ալ Աստուծոյ սուտ վկաները գտնուած կ՚ըլլանք . որովհետև Աստուծոյ համար վկայութիւն տուինք , թէ Ինք Քրիստոսը յարուցած Քրիստոսը , որ իրաւ չյարուցած ընդունիկա , եթէ մեռելները յարութիւն չեն առներ : 16 – Քանզի եթէ մեռելները յարութիւն չեն առներ , Քրիստոս ալ յարութիւն առած չէ . 17 – Եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ , ձեր հաւատքը պարապ է , ու տակաւին ձեր մեղքերուն մէջ էք . 18 – Նոյնպէս Քրիստոսով ննջեցեալներն ալ կորսուած են : 19 – Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի յուսացած ենք , մենք բոլոր մարդոցմէն ալ խղճալի ենք : 20 – Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է , ննջեցեալներուն առաջին պտուղը : 21 – Քանզի որովհետև մարդով եղաւ մահը , մարդով ալ մեռելներու յարութիւնը : 22 – Վասն ոլ ինչպէս Ադամով ամենը կը մեռնին , նոյնպէս ալ Քրիստոսով ամենը կենդանի պիտի ըլլան . 23 – Բայց ամէն մէկը իր կարգովը . առաջինն պտուղը Քրիստոս , ետքը Քրիստոսինները՝ իր գալուստին . 24 – Անկէ ետև

ից– ֆայ վախճանը , երբ թագաւորութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը, երբ խափանէ ամէն իշխանութիւնը և ամէն պետութիւնը ու զօրութիւնը։ 25 – Վասն զի անոր պէտք է թագաւորութիւն ընէ՝ մինչև ըլլը թշնամիները իր ոտքերուն տակ դնէ։ 26 – Վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մէռնի է. վասն զի էէր+ է՝ըե, Աստուծոյ անոր ոտքերուն տակ հնազանդեցուց . 27 – Բայց երբ կ'ըսէ թէ Աստուծոյ անոր հնազանդած է, յայտնի է թէ բացի ի անկէ՝ որ ամէնը անոր հնազանդեցուց ։ 28 – Ու երբ ամէնը անոր հնազանդ ըլլայ, այն ատեն Որդին ինք ալ պիտի հնազանդի անոր՝ որ իրեն հնազանդեցուց ամէնը, որպէս զի Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ ։ 29 – Ապա թէ ոչ ի՞նչ պիտի բնեն անոնք որ մեռելներուն համար կը մկրտուին , եթէ մեռելները բնաւ յարութիւն չառնուին . ինչո՞ւ ուրեմն անոնց համար կը մկրտուին . 30 – Ինչո՞ւ համար մենք ալ վտանգի մէջ կը մտնենք ամէն ժամ ։ 31 – Կ'ըսյ կը բերեմ այն պարծանքը՝ զոր ձեր վրայ ունիմ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով, որ ես ամէն օր կը մեռնիմ։ 32 – Եթէ Եփեսոսի մէջ մարդոց նման գազաններու հետ մարտնչեցայ, ի՞նչ օգուտ է *ինծի , եթէ մեռելները յարութիւն չառնեն. ուտենք ու խմենք , վասն զի վաղը կը մեռնինք։ 33 – Մի խաբուիք. չար ընկերակցութիւնները աղէկ բարքը կ'ապականեն։ 34 – Արդարութեան համ զգաստացէք ու մեղք մի գործէք, վասն զի Աստուծոյ գիտութիւնը չունին . ձեզ ամչցնելու համար կը դրուցեմ ։

35 – Բայց պիտի ըսէ մէկը թէ ի՞նչպէս մեռելները յարութիւն կ'առնեն, կամ թէ ի՞նչ մարմնով կու գան։ 36– Անմիտ , անոկա զոր դուն կը սերմանես, եթէ չմեռնի՝ չկենդանարար. 37– Ու զայն որ կը սերմանես , ոչ թէ այն մարմինը որ պիտի բուսնի՝ կը սերմանես, հապա մերկ հատ մը՝ թէ՛ ցորենի ըլլայ և թէ՛ մէկ ուրիշ սերմ. 38 – Ու Աստուած անոր մարմին կու տայ ինչպէս կ'ուզէ , և ամէն մէկ սերմին իր յատուկ մարմինը ։ 39 – Ամէն մարմին մէկ մարմին չէ . հապա մարդոց մարմինը ուրիշ է, ու անասուններուն մարմինը ուրիշ , ձուկերունն ալ ուրիշ , և թռչուններունը ուրիշ ։ 40 – Երկնաւոր մարմիններ ալ կան , երկրաւոր մարմիններ ալ, բայց երկնաւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւորներունը ուրիշ ։ 41 – Արեւուն փառքը ուրիշ է, ու լուսնին փառքը ուրիշ , և աստղերուն փառքը ուրիշ . ու մէկ աստղը միւս աստղէն տարբեր է փառքով ։ 42 – Այսպես է մեռելներուն յարութիւնն ալ . Սրբիչը ապականութիւնով կը սերմանուի, ու անապականութիւնով յարութիւն կ'առնէ. 43 – Անարգութիւնով կը սերմանուի , ու փառքով յարութիւն կ'առնէ . տկարութիւնով կը սերմանուի, ու զօրութիւնով յարութիւն կ'առնէ . 44 – Կը սերմանուի շնչաւոր մարմին, և յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին. Շնչաւոր մարմին կայ, հոգեւոր մարմին ալ կայ։ 45 – Եւ այսպէս գրուած է , Առաջին մարդը Ադամ՝ կենդանի շունչ եղաւ, վերջին Ադամը՝ կենդանարար հոգի։ 46 – Բայց ոչ թէ առաջ հոգեւորը, հապա շնչաւորը , ու ետքը հոգեւորը։ 47 – Առաջին մարդը երկրէ է՝ հողեղէն, Երկրորդ մարդը Տէր է՝ երկինքէ ։ 48 – Ինչպես էր հողեղէնը՝ նոյնպես ալ հողեղէնները , ու ինչպես երկնաւորը՝ նոյնպես ալ երկնաւորները։ 49 – Եւ ինչպես հողեղէնին կերպարանքը հագեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք։ 50– Բայց զայս կ'ըսեմ , եղբայրներ , որ մարմին ու արիւն Աստուծոյ թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել . ոչ ալ ապականութիւնը կը ժառանգէ անապականութիւն։

51 – Ահա ձեզի խորհուրդ մը կը պատմեմ. Ամէնս պիտի չննջենք, բայց ամէնս ալ պիտի փոխուինք, 52 – Յանկարծակի աչք գոցել բանալու մէջ վերջին փողին հնչելուս ատենը. որովհետև փողը պիտի հնչէ, ու մեռելները յարութիւն պիտի առնեն ապականութեան, և մենք ալ պիտի փոխուինք։ 53 – Վասն զի պէտք է որ այս ապականացու մարմինը անապականութիւն հագնի, ու այս մահկանացուն անմահութիւն հագնի ։ 54 – Բայց երբ այս ապականացու մարմինը անապականութիւն հագնի , և այս մահկանացուն անմահութիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ թէ Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ։ 55 – Ո՞ւր է, ով մահ, քու խայթոցդ. Ա՞ր է, ով գերեզման, քու յաղթութիւնդ։ 56 – Մահուան խայթոցը մեղքն է, ու մեղքին ոյժը՝ օրէնքը ։ 57 – Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով ։ 58 – Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատ եղէք, անշարժ ՝էեյե+ և ամէն ատեն աւելցէք Տէրոջը գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով։

## Գ.· Ժ.

Բայց սուրբերուն համար ալ՝ըէ–Ն ժողվելու վրայով, ինչպես պատուէր տուի Գաղատացւոց եկեղեցիներուն, դուք ալ այնպես ըրէք։ 2 – Ամէն մէկ շաբթի օրերը ձեզմէ ամէն մէկը իր քով թող դիզէ ինչ որ կը յաջողի, 3 – Որ չըլլայ թէ երբ գամ, այն ատեն ժողովումները ըլլան . ու երբ գամ, որոնց որ դուք *հաճիք , ես զանոնք թուղթերով պիտի ղրկեմ ձեր պարգեւները Երուսաղէմ տանելու։ 4 – Եւ եթէ իմ երթալս ալ արժան տեսնուի, ինծի հետ թող երթան ։ 5 – Մակայն ես ձեզի պիտի գամ երբ Մակեդոնիայէ անցնիմ (քանզի Մակեդոնիայէ կ'անցնիմ.) 6 – Եւ կարելի է որ ձեր քով մնամ, կամ ձմեռն ալ անցնեմ. որպէս զի դուք ինծ ճամբայ դնէք, ուր որ ես պիտի երթամ։ 7 – Վասն զի չեմ ուզեր ձեզ հիմա հարևանցի մը տեսնել, բայց յոյս ունիմ որ տանէն մը ձեր քով կենամ, եթէ Տէրը հրամայ տայ։ 8 – Մակայն Հնդ+ ես Եփեսոս պիտի մնամ մինչև Պենտեկոստէ . 9 – Վասն զի ինծի մեծ ու արդիւնաւոր դուռ մը բացուած է, ու շատ հակառակորդներ կան ։

*Կամ, յանձնառութիւն ընէք թուղթերով, ես զանոնք

10 – Արդ եթէ Տիմոթէոս գայ, նայեցէք որ ձեր քով առանց վախի ըլլայ . քանզի անիկա Տէրոջը գործը կը գործէ , ինչպէս ես ալ ։ 11 – Ուստի չըլլայ որ մէկը զանիկա արհամարհէ, հապա խաղաղութեամբ զանիկա ճամբայ դրէք, որպէս զի ինծի գայ. վասն զի անոր կը սպասեմ եղբայրներով մէկտեղ։ 12 – Իսկ Ապողոս եղբօրը համար, շատ աղաչեցի անոր, որ ձեզի գայ եղբայրներուն հետ մէկտեղ. ու բնաւ կամք չունեցաւ որ հիմա գայ, բայց պիտի գայ՝ երբ յարմար ժամանակ գտնէ ։

13 – Արթուն կեցէք, հաստատ մնջ հաստատ կեցէք, ժիր եղէք , զօրացեք ։ 14 – Ձեր ամէն բաները սիրով ըլլան ։

15 – Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, (գիտէք գուք Ստեփանասի ընտանիքը թէ Աքայիայի առաջին պտուղն է, ու անձերնին սրբերուն պաշտօնութեանը նուիրեցին.) 16 – Որ հնազանդ ըլլաք այնպիսիներուն, և ամէնուն որ ֆեղ հե+ մէկտեղ կը գործեն ու կ'աշխատին ։ 17 – Ուրախ եմ ես Ստեփանասի ու Փորտունատոսի ու Աքայիկոսի գալուն վրայ, որ ձեր պակասութիւնը անոնք լեցուցին. 18 – Քանզի հանգստացուցին իմ հոգիս ու ձերը . ուստի այնպիսիները ճանչցէք։

19 – Բարև կ'ընեն ձեզի Ասիայի եկեղեցիները . շատ բարև կ'ընեն ձեզի Տէրոջմով Ակվիղաս ու Պրիսկիլիա՝ իրենց տանը մէջի եկեղեցիով մէկտեղ։ 20 – Բարև կ'ընեն ձեզի բոլոր եղբայրները . բարև տուէք իրարու սուրբ համբուրով ։

21 – Ես բարևը իմ ձեռքիս՝ Պողոսին է ։ 22 – Եթէ մէկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր, նզովեալ ըլլայ *էրճ մեր Տէրը գայ՝ 23 – Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ . 24 – Իմ սէրս ձեր ամէնուն հետ ըլլայ Քրիստոս Յիսուսով ։ Ամէն։

Յոան. (Ասորերէնէն) Մարան աթա

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ կամքովը, ու Տիմոթէոս Ղեր եղբայրը. Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բոլոր Աքայիայի մէջ եղող ամէն սուրբերուն. 2 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3 – Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, գթութեան Հայրը և ամէն մխիթարութեան Աստուածը. 4 – Որ մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որպէս զի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններու մէջ են, այն մխիթարութիւնովը՝ որով մենք Աստուծմէ կը մխիթարուինք. 5 – Քանզի ինչպէս Քրիստոսի չարչարանքները մեր վրայ շատ եղան, նմանապէս Քրիստոսով ձեռքով մեր մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ։ 6 – Եւ եթէ նեղութիւն քաշենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, և եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, որ կը յաջողի համբերելով այն չարչարանքներուն՝ որոնցմով մենք ալ կը չարչարուինք. 7 – Եւ մեր յոյսը հաստատուն է ձեզի համար, վասն զի գիտենք թէ ինչպէս չարչարանքներուն հաղորդ էք, նոյնպէս ալ մխիթարութեանը պիտի ըլլաք։ 8 – Վասն զի Ասիոյ մէջ մեզի պատահած նեղութիւններուն վրայով չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, թէ Ձեր կարողութենէն շատ աւելի ծանրութեան ենթացանք. մինչև կեանքերնիս ալ անյոյս եղանք։ 9 – Բայց մեռնելու վճիռը մենք մեր վրայ պահեցինք, որպէս զի ինքզինքնիս չապաւինինք, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ. 10 – Որ այնպիսի մեծ մահուանէ մեզ փրկեց ու կը փրկէ. 11 – Որու կը յուսանք թէ տակաւին պիտի փրկէ, մեզի համար ձեր ըղձալի աղօթքին օգնականութիւնովը. որպէս զի շատերուն շնորհքին համար՝ շատերէն գոհութիւն արուի մեզի համար։

12 – Վասն զի մեր պարծանքը այս է, մեր խղճմտանքին վկայութիւնը, թէ մենք Աստուծոյ սրբութեամբ և անկեղծութեամբ, և ոչ թէ մարմնաւոր իմաստութիւնով մը, հապա Աստուծոյ շնորհքովը աշխարհի մէջ վարուեցանք, բայց աւելի դեպ ի ձեզ։ 13 – Քանզի ուրիշ բան չենք գրեր ձեզի, հապա զայն որ դուք կը կարդաք ու կը ճանչնաք. և կը յուսամ թէ մինչև վերջը պիտի ճանչնաք. 14 – Ինչպէս քիչ շատ ճանչցաք մեզ, որ ձեր պարծանքն ենք, ինչպէս դուք ալ մերը՝ Տէր Յիսուսի օրը։

15 – Եւ այս վստահութիւնով կ'ուզէի աւաղ ձեզի գալ, որպէս զի դուք երկրորդ անգամ շնորհք ընդունիք. 16 – Ու ձեզմէ անցնիլ դեպ ի Մակեդոնիա, և դարձեալ Մակեդոնիայէ ձեզի գալ, ու ձեզմէ ճամբայ դրուիլ դեպ ի Հրէաստան։ 17 – Ուստի զայս որ ես մտածեցի, միթէ թեթեւութիւնո՞վ շարժեցայ. կամ թէ զայն որ ես կը խորհիմ, մարմնաւորապէ՞ս կը խորհիմ, *որպէս զի իմ կողմանէս այո այո և ոչ ըլլայ՝։ 18 – Սակայն հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքը ձեզի՝ ո՛ հասա՛՝ այո և ոչ չէր։ 19 – Վասն զի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս, որ մեզմով ձեզի քարոզուեցաւ, (ինձմով և Սիղուանոսով ու Տիմոթէոսով,) այո ու ոչ չեղաւ, հապա իր մէջ եղաւ այոն։ 20 – Քանզի որչափ որ Աստուծոյ խոստումները կան իր մէջ Այո են, ու իր մէջ Ամէն են Աստուծոյ փառքին համար մեր ձեռքով։ 21 – Բայց ան որ մեզ ձեզի հետ մեկտեղ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օծեց, Աստուած է. 22 – Որ մեզ կնքեց ալ, և Հոգւոյն գրաւը մեր սիրտերուն մէջ։ 23 – Բայց ես զԱստուած վկայ կը կանչեմ իմ անձիս, որ ձեզի խնայելուս համար տակաւին Կորնթոս չեկայ. սակայն ոչ թէ ձեր հաւատքին վրայ կը տիրապետենք, հապա գործակից ենք ձեր ուրախութեանը. վասն զի դուք հաւատքով կը կենաք։

### ԳԼ. Բ

Սակայն ես ինծմէ զայս որոշեցի, որ նորէն տրտմութիւնով չգամ ձեզի։ 2 – Վասն զի եթէ ես ձեզ տրտմեցնեմ, ալ ո՞վ է որ զիս պիտի ուրախացնէ, եթէ ոչ ան՝ որ ինծմէ կը տրտմի։ 3 – Ու զայս *գրեցի, որ չըլլայ թէ երբ գամ՝ տրտմութիւն մը կրեմ անոնցմէ, ուրկէ պէտք է ինծի ուրախ ըլլալ. քանզի ձեր ամէնուն վրայ վստահ եմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամէնուննէն է։ 4 – Վասն զի շատ նեղութենէ և սրտի տագնապէ ես ձեզի գրեցի շատ արցունքով. ոչ թէ՝ որպէս զի դուք տրտմիք, հապա որպէս զի դուք գիտնաք այն սէրը զոր ես ունիմ աւելի ձեր վրայ։

5 – Բայց եթէ մէկը արտմեցուց, ոչ թէ զիս արտմեցուց, հապա †բոլո մասին (որպէս զի խօսք ծանր չընեմ) ձեզ ամէնդ։ 6 – Հերիք է այնպիսի մարդուն այն պատիժը, որ շատերէ եղաւ։ 7 – Ուստի ընդհակառակն պէտք է աւելի ներել անոր ու մխիթարել, որ չըլլայ թէ այնպիսին աւելի տրտմութենէն ընկղմի։ 8 – Ուստի կ'աղաչեմ ձեզի, որ անոր վրայ չէք սէրը հաստատէք. 9 – (Քանզի ասոր համար ալ գրեցի, որպէս զի ձեզ փորձելով գիտնամ թէ ամէն բանի մէջ հնազանդ էք. 10 – Եւ որու դուք բան մը կը նէնէք, ես ալ։ Նէ՛ս. վասն զի եթէ ես ալ ներեմ, որու որ ներեմ՝ ձեզի համար է Քրիստոսի *կողմանէ.) 11 – Որ չըլլայ թէ զրկանք մը կրենք Սատանայէ. քանզի անոր խորհուրդները չգիտցող չենք։

12 – Աւդ երբ ես Տրովադա հասայ Քրիստոսի աւետարանը բերելու, և ինծի դուռ մը բացեր Տէրոջմով, 13 – Իմ հոգւոյս մէջ հանգստութիւն չունենալէն, վասն զի իմ Տիտոս եղբայրս հոն չգտայ. հապա անոնցմէ հրաժարելով՝ Մակեդոնիա գացի։

14 – Բայց գոհութիւն Աստուծոյ, որ միշտ յաղթող կ'ընէ մեզ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով, յայտնի կ'ընէ ամէն տեղ։ 15 – Վասն զի մենք Աստուծոյ առջև Քրիստոսի անոյշ հոտն ենք փրկուածներուն մէջ և կորսուածներուն մէջ. 16 – Ոմանց մահուան հոտ դէպ ի մահ, և ոմանց կենդանութեան հոտ դէպ ի կեանք. և այս բաներուն ո՞վ բաւական է. 17 – Քանզի մենք շատերուն պէս չենք, որոնք Աստուծոյ խօսքին խարդախութիւն կ'ընեն. հապա որպէս թէ անկեղծութեամբ, հապա որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսինք։

### ԳԼ. Գ

Կը սկսի՞նք նորէն անձերնիս յանձն ընել. կամ թէ ոմանց պէս պէ՞տք է ձեզի յանձնարարութեան թուղթեր ձեզի կամ ձեզմէ։ 2 – Հապա մեր թուղթը դուք էք մեր սիրտերուն մէջ գրուած, ճանչցուած ու կարդացուած ամէն մարդկանէ. 3 – Յայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թուղթն էք մեր ապաստաւորութիւնով, ոչ թէ մելանով գրուած, հապա կենդանի Աստուծոյ Հոգիովը, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա սրտին մարմնեղէն տախտակներուն վրայ։ 4 – Եւ այսպիսի վստահութիւն ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիստոսի ձեռքով. 5 – Ոչ թէ մենք ինքներնիս բաւական ենք բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ, հապա մեր բաւականութիւնը Աստուծմէ է. 6 – Որ մեզ բաւական ալ ըրաւ նոր կտակարանին պաշտօնեաներ ըլլալու, ոչ թէ գիրին, հապա

*Ո՛չ, գրեցի ձեզի

†Կամ, բան մասին, որ ձեր ամէնուն վրայ ծանրութիւն չձգեմ

*Կամ, առջև

հոգիեն . վասն զի դիրը կը սպաննէ , բայց հոգին կ'ապրեցնէ : 7 – Իսկ եթէ քարերու վրայ դրով փորագած մահուան պաշտօնը փառքով եղաւ , որ Իսրայէլի որդիները կարող չեղան Մովսէսի երեսը նայելու՝ անոր երեսին փառքին համար , որ պիտի խափանուէր . 8 – Ո՞րքա՜ն հոգիին պաշտօնը ի՞նչպէս աւելի փառքով պիտի չըլլայ : 9 – Վասն զի եթէ դատապարտութեան պաշտօնը փառքով եր , ո՛րչափ աւելի արդարութեան պաշտօնը փառքով պիտի ըլլայ : 10 – Վասն զի այն որ փառաւոր էր՝ այս մասին փառաւոր չէ գերազանց փառքին պատճառաւ : 11 – Քանզի եթէ այն որ պիտի խափանուէր՝ փառքով եր , ո՛րչափ աւելի այն որ կը կենայ՝ փառքով պիտի ըլլայ : 12 – Ուստի այսպիսի յոյս որ ունինք , շատ համարձակութեամբ կը վարուինք մեր խօսքին մէջ : 13 – Եւ ոչ թէ ինչպէս Մովսէս իր երեսին վրայ ծածկոց կը ձգէր , որպէս զի Իսրայէլի որդիները չնայէին այն խափանուելու բանին վախճանին : 14 – Սակայն անոնց միտքերը կուրցան . վասն զի մինչև այսօր նոյն ծածկոցը ձգուած է հին կտակարանին ընթերցմունքին վրայ , ու չվերնար , (վասն զի Քրիստոսով կը խափանուի ,) 15 – Հապա մինչև այսօր , երբ Մովսէսի գիրքը կը կարդան , անոնց սրտին վրայ ծածկոց մը կը կենայ : 16 – Բայց երբ Տէրոջը դառնան , այն ատեն պիտի վերնայ այն ծածկոցը : 17 – Արդ Տէրը Հոգին է . և ուր Տէրոջը Հոգին կայ , հոն ազատութիւն կայ : 18 – Բայց մենք ամէնս , բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով , նոյն պատկերին կը նորոգուինք փառք ի փառս , որպէս Թէ Տէրոջը Հոգիէն :

## ԳԼ . Դ

Ուստի այս պաշտօնը ունենալով՝ ինչպէս ողորմութիւն գտանք , չենք ձանձրանար . 2 – Հապա հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն , ու խորամանկութեամբ չենք վարուիր , և խարդախութիւն չենք ըներ Աստուծոյ խօսքին մէջ . հապա ճշմարտութիւնը յայտնելով՝ անձերնիս մարգոց ամէն խղճմտանքին կ'ընծայենք Աստուծոյ առջև : 3 – Իսկ եթէ մեր աւետարանը ծածկուած ալ է , կորսուածներուն մէջ ծածկուած է . 4 – Որոնց մէջ այս աշխարհի աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց , որպէս զի Քրիստոսի փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ , որ է Աստուծոյ պատկերը : 5 – Վասն զի ոչ թէ անձերնիս կը քարոզենք , հապա Քրիստոս Յիսուս Տէրը , ու մեզ ձեր ծառաները Յիսուսի համար : 6 – Վասն զի Աստուած որ հրամայեց լոյս խաւարէն լոյս ծագել՝ ինք մեր սիրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը : 7 – Արդ մենք այս գանձը հողէ անօթներու մէջ ունինք , որպէս զի զօրութեան աստուածութիւնը Աստուածմէ ըլլայ , ու ոչ թէ մեզմէ : 8 – Ամէն կողմանէ վշտացած ենք , բայց նեղը չենք . կարօտալը ենք , բայց յուսահատած չենք . 9 – Հալածուած ենք , բայց երեսէ ձգուած չենք . վար ձգուած ենք , բայց կորսուած չենք . 10 – Ամէն ատեն *Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի : 11 – Վասն զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի համար միշտ մահուան կը մատնուինք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն մէջ յայտնի ըլլայ : 12 – Ուստի մահը մեր մէջ կը ներգործէ , և կեանքը՝ ձեր մէջ : 13 – Բայց հաւատքին նոյն հոգին ունինք , ինչպէս գրուած է , Հաւատացի , անոր համար խօսեցայ . մենք ալ կը հաւատանք , ու անոր համար կը խօսինք . 14 – Գայս գիտնալով Թէ ան որ Տէր Յիսուսը յարուց՝ մեզ ալ Յիսուսով պիտի յարուցանէ , ու անոր առջև պիտի կայնեցնէ ձեզմով մեկտեղ : 15 – Վասն զի ամէն բան ձեզի համար է , որպէս զի այն շնորհքը առատացած՝ շատերուն գոհութիւն ընելովը աւելնայ Աստուծոյ փառքին համար :

16 – Վասն որոյ չենք ձանձրանար , բայց թէպէտ այս մեր դուրսի մարդը կ'ապականի , սակայն մեր ներսի մարդը օրէ օր կը նորոգուի : 17 – Վասն զի մեր վայրկենական թեթև նեղութիւնը աւելի քան զառաւել փառաց յաւիտենական գերազանցութիւն կը գործէ մեզի : 18 – Վասն զի մենք երևցած բաներուն չենք նայիր , հապա չերևցածներուն . քանզի երևցած բաները ժամանակաւոր են , բայց չերևցածները՝ յաւիտենական :

*Ո՛նդ, Տէր Յիսուսի



## ԳԼ . Ե

Վասն զի գիտենք որ եթէ մեր վրանի նման երկրաւոր տունը քակուի , շինուածք մը ունինք Աստուածմէ , անձեռագործ յաւիտենական տուն մը երկինքի մէջ : 2 – Եւ յիրաւի տոչորելով կը հառաչենք՝ մեր երկնաւոր բնակութիւնը հագնելու փափագելով . 3 – Մանաւանդ եթէ երբ զգեստաւորուինք , մերկ չգտնուինք : 4 – Վասն զի մենք որ այս վրանին տակ ենք , կը հառաչենք ծանրութիւն քաշելով . վասն զի չենք ուզեր մեր վրայէն հանել , հապա զգեստաւորել վրայէն հագնել , որպէս զի մահկանացուն ընկղմի կեանքէն : 5 – Իսկ ան որ մեզ այս բանին կը պատրաստէ , Աստուած է , որ նաև մեզի տուաւ Հոգւոյն գրաւը : 6 – Ուստի ամէն ատեն վստահութիւն ունինք , և գիտենք Թէ որչափ մարմնի մէջ կը կենանք , Տէրոջմէ հեռու ենք . 7 – (Վասն զի հաւատքով կը քալենք , ու ոչ Թէ երևնալով .) 8 – Ուստի վստահութիւն ունինք՝ և ալ աւելի կ'ուզենք մարմինէն հեռանալ ու Տէրոջը քով կենալ : 9 – Ասոր համար կը ջանանք ալ , որ Թէ՛ կենանք և Թէ՛ հեռանանք՝ անոր հաճոյ ըլլանք : 10 – Վասն զի պէտք է որ ամէնս ալ Քրիստոսի աստուածին առջև ներկայանանք , որպէս զի ամէն մէկը իր մարմնով ըրածներուն փոխարէնը առնէ՝ լինչ որ գործեր է , Թէ՛ բարի և Թէ՛ չար :

11 – Ուստի Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց մտքը կը համոզենք . սակայն մենք Աստուծոյ առջև յայտնի ենք , և կը յուսամ որ ձեր խղճմտանքին մէջ ալ յայտնի ենք : 12 – Ոչ Թէ նորէն անձերնիս ձեզի կ'ընծայենք . հապա առիթ կու տանք ձեզի՝ մեր վրայով պարծենալու . որպէս զի բան մը ունենաք պատասխանելու անոնց՝ որ աչքի երևցածով կը պարծենան , ու ոչ Թէ սրտով : 13 – Վասն զի եթէ խելագնած ենք՝ այն Աստուծոյ համար է , և եթէ զգաստ ենք՝ այն ձեզի համար է . 14 – Վասն զի Քրիստոսի սէրը մեզ կը սահմռկէ . քանզի մեր դատաստանը այս է որ եթէ մէկը ամէնուն համար մեռաւ , ուրեմն ամէնն ալ մեռան . 15 – Եւ ամէնուն համար մեռաւ , որպէս զի կենդանի եղողները ա՛լ իրենց անձերուն կենդանի չըլլան , հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ : 16 – Ուստի մեկէ հետէ մենք մե՛րկը մարմնով չենք գիտեր , ու թէև Քրիստոսը մարմնով ճանչցանք , բայց հիմա ա՛լ այ՛նպէս չենք ճանչնար : 17 – Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է , անիկա նոր ստեղծուած մըն է . հինները անցան , և ահա ամէն բան նոր եղաւ : 18 – Սակայն ամէն բան Աստուածմէ է , որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով , ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը . 19 – Այսինքն Աստուած էր , որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց յանցանքները իրենց չհաշտց , ու հաշտութեան խօսքը մեր մէջ դրաւ : 20 – Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընենք , իբրև Թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով . կ'աղաչենք ձեզի Քրիստոսի կողմանէ , հաշտուեցէք Աստուծոյ հետ : 21 – Վասն զի Անոյշ պանիկա որ մեզ չէր գիտեր , մեզի համար *մեղաւոր սեպեց , որպէս զի մենք անոր միջոցով Աստուծոյ արդարներն ըլլանք :

## ԳԼ . Զ

Ուստի մենք ալ գործակից ըլլալով՝ կ'աղաչենք որ Աստուծոյ շնորհքը պարապ տեղ ընդունած չըլլաք : 2 – Վասն զի՝ Ընդունելի ժամանակի մը մէջ լսեցի քեզի , կ'ըսէ , և փրկութեան օրը օգնութիւն ըրի քեզի . ահա հիմա է ընդունելի ժամանակը , ահա հիմա է փրկութեան օրը : 3 – Ինձմէ բանով մը պատկառելի չենք տար , որպէս զի չը պաշտօնը չարատուի . 4 – Բայց մեկէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք Աստուծոյ պատասխաններու պէս՝ շատ համբերութիւնով վիշտերու մէջ , տագնապներու , նեղութիւններու , 5 – Ծեծերու , բանտերու , խռովութիւններու , աշխատութիւններու , հսկումներու , ծոմերու մէջ ,

*Յա՜ն. մեղք ըրաւ

6 – Մաքրութիւնով , գիտութիւնով, երկայնմտութիւնով , քաղցրութիւնով , Սբրբ Հոգիով , անկեղծ սիրով, 7 – ճշմարտութեան խօսքով , Աստուծոյ զօրութիւնով , արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է. 8 – փառքով ու անարգութիւնով , պարսաւանքով և գովութիւնով . մոլորեցնողներու պէս՝ ու ճշմարիտներ. 9–Անծանօթներու պէս՝ և ծանօթներ. մեռնողներու պէս՝ և ահա կենդանի ենք. պատժուածներու պէս՝ ու չսպանուածներ . 10 – Տրտմածներու պէս՝ ու միշտ ուրախ ենք . աղքատներու պէս՝ ու շատերը կը հարստացնենք. բան մը չունեցողներու պէս՝ և ամէն բան առած ենք : 11 – Մեր բերանը ձեզի բացուած է, ով Կորնթացիք , և մեր սիրտը լայնցած : 12 – Դուք մեր կողմէն չէք նեղուիր, Հապա *ձեր ՚ՈՒեղած գութին կողմէ՛ կը նեղուիք: 13 – Ուստի անոր հատուցումը ընելու համար ( իբրև որդիներուս կը խօսիմ չեմ, ) դուք ալ դուռ յա՛ լայնցէք:

14 – Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի ըլլաք . քանի՞ մ՚ունի համակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ , և ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ , 15 – Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ, կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ . 16 – Եւ ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերու հետ, վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք . ինչպէս Աստուած ըսաւ, թէ Անոնց մէջ պիտի բնակիմ, ու անոնց մէջ պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան : 17 – Ասոր համար ելէք անոնց մէջէն ու զատուեցէք , կ՚ըսէ Տէրը , և պիղծ բանի մի դպչիք . 18 – Ու ես ձեզ պիտի ընդունիմ , և ես ձեզի Հայր պիտի ըլլամ, ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք, կ՚ըսէ Ամենակալ Տէրը:

## Գլ. Է

. Ուստի, սիրելիներ, որովհետև մենք այս խոստումնքները ունինք, մեր անձերը մաքրինի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրենք, և սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը:

2 – Ընդունեցէք մեզ՝ . մարդ՛ը վնաս չտուինք, ոչ մեկը եղծեցինք , ոչ մեկը ղրկեցինք: 3-Ոչ թէ ձեզ դատապարտելու համար ըսած կը ղրուցեմ: որովհետև ես առաջուընէ ըսեր եմ որ դուք մեր սիրտերուն մէջ էք՝ մեռնելու և ապրելու ընկեր հետ : 4 – Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ . շատ է իմ պարծանքս ձեզի համար. լեցուն եմ մխիթարութիւնով , ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջ : 5 – Վասն զի երբ մենք Մակեդոնիա հասանք, ընաւ մեր մարմինը հանգստութիւն չունեցաւ , հապա ամէն կողմանէ նեղութիւն կը քաշէինք. դուրսէն պատերազմներ կային, ո՛ ներսէն՝ վախեր: 6-Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ , մեզ մխիթարեց Տիտոսի գալովը : 7 – Եւ ոչ թէ միայն անոր գալովը , հապա այն մխիթարութիւնովն ալ՝ որով ինք մխիթարուեր էր ձեզմով, երբ մեզի պատմեց ձեր բաղձանքը, ձեր ողբը, ձեր ինծի համար նախանձաւորութիւնը, այնպէս որ ալ աւելի ուրախ եղայ : 8 – Վասն զի եթէ ձեզ տրտմեցուցի այն թուղթով , չեմ ղղջար, (թէև ղղջացեր էի,) քանզի կը տեսնեմ որ այն թուղթը ձեզ տրտմեցուց, թէև քիչ մը ատեն : 9 – Արդ ուրախ եմ , ոչ թէ՝ որ տրտմեցաք , հապա որ ապաշխարութեան համար տրտմեցաք. որովհետև դուք Աստուծոյ ՚ըսածին պէս տրտմեցաք , այնպէս որ բանով մէն ալ մեզմէ վնաս չքաշեք : 10 – Վասն զի Աստուծոյ ՚ըսածին պէս եղած տրտմութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ , որ ղղջանալու բան չէ . բայց աշխարհի տրտմութիւնը մա՛հ կը գործէ : 11 – Քանզի ահա այս բանը որ դուք Աստուծոյ ՚ըսածին պէս տրտմեցաք , ձեր մէջ ի՛րչափ ջանք գործեց , ի՛րչափ չքմեղանութիւն, ի՛րչափ սրտմտութիւն, ի՛րչափ վախ, ի՛րչափ բաղձանք , ի՛րչափ նախանձաւորութիւն , ի՛րչափ վրէժխնդրութիւն. ամէն կերպով ինքզինքնիդ ցուցուցիք թէ այդ բանին մէջ մեքուբ էք : 12 – Ուրեմն այն ղրը ես ձեզի գրեցի, ոչ թէ զրկանքը ընողին համար էր, և ոչ թէ զրկանքը կրողին համար, հապա որպէս զի ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ առջև : 13 – Ուստի այն ձեր մխիթարութեանը համար մենք մխիթարուեցանք . շատ աւելի ալ ուրախացանք Տիտոսի ուրախութեանը համար, վասն զի անոր հոգին ձեր ամէնէն հանգստութիւն գաեր էր: 14 – Վասն զի ինչ որ ես անոր առջև ձեզի համար պարծենցայ՝ ամօթով չելայ . հապա ինչպէս ամէն բան ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջև պարծենալնիս ալ ճշմարիտ եղաւ: 15 – Նաև անոր սէրը աւելի է ձեր վրայ, երբ կը յիշէ ձեր ամէնուն հնազանդութիւնը, թէ ի՛նչպէս վախով ու դողով զանիկա ընդուներ էք: 16 – Ուստի ուրախ եմ որ ամէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն ունիմ:

## Գլ. Ը

Ա՛րդ, եղբայրներ, ձեզի կը ծանուցանենք Աստուծոյ շնորհքը , որ Մակեդոնացւոց եկեղեցիներուն տրուած է . 2 – Որ նեղութեան մեծ փորձին մէջ իրենց ուրախութեանը առատութիւնը եւ իրենց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առատաձեռնութիւն եղաւ: 3 – Վասն զի ես կը վկայեմ՝ որ իրենց կարողութեան չափովը՝ ու կարողութենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով , 4 – Շատ աղաչանքով կ՚աղաչէին որ տուրքերը ու սուբերուն համար եղած պաշտօնին մասնակցութիւնը ընդունինք : 5 – Եւ ոչ թէ որչափ մենք կը յուսայինք, հապա անձերնին ալ տուին առաջ Տէրոջը ու Էրէզ մեզի՝ Աստուծոյ կամքովը . 6 – Որ Տիտոսի ազաչեցինք թէ ինչպէս անիկա առաջուընէն սկսեց, նոյնպէս ալ ձեր մէջ կատարէ այդ շնորհքն ալ: 7 – Բայց ինչպէս ամէն բանով առատացած էք դուք, (հաւատքով ու խօսքով ու գիտութիւնով և ամէն ջանքով ու ձեզմէ մեր վրայ եղած սիրովը ,) նայեցէ՛ք որ այդ շնորհքով ալ առատանաք . 8 – Ոչ թէ հրամայելով մը կը ղրուցեմ՝ հապա ուրիշներուն ջանքին պատճառաւ , և որպէս զի փորձով՝ ձեր սիրոյն հարազատութիւնը : 9 – Քանզի դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը , թէ ինք ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր, որպէս զի դուք անոր աղքատանալովը հարստանաք : 10 – Եւ այս բանին մէջ խրատ մը կուտամ: վասն զի ասիկա ձեր օգտին համար է, դուք որ ոչ թէ միայն ընելը , հապա կամենալն ալ առաջուընէ սկսեցիք անցած տարուընէ հետէ . 11 – Ուստի հիմա ընելն ալ կատարեցէք, որպէս զի ինչպէս կամքի յօժարութիւն կայ , նոյնպէս ալ ընելը ունեցածներնուդ չափովը ըլլայ : 12 – Վասն զի եթէ առաջ յօժարութիւնը ըլլայ՝ ՚ոլը ան՚ընեցածին չափովը ընդունելի է, ու ոչ թէ չունեցածին չափովը : 13 – Վասն զի ոչ թէ ՚ուրիշներուն հանգստութիւն ի՚՚ուիմ ու ձեզի նեղութիւն . 14 – Հապա հաւասարութիւնով՝ հիմակուան առները ձեր աւելին անոնց պակասութիւնը լեցնէ, որպէս զի անոնց աւելին ալ օր մը օգ՚՚ուիմ ըլլայ ձեր պակասութեանը , որպէս զի հաւասարութիւն ըլլայ . 15 – Ինչպէս գրուած է, թէ Ան որ շատ ժողվեց՝ չաւելցաւ, ու ան որ քիչ չպակսեցաւ: 16 – Բայց գոհութիւն Աստուծոյ , որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսի սիրտը ձգեց . 17 – Վասն զի ոչ միայն աղաչանքը ընդունեց, և իր յօժարամտութիւնը շատ ըլլալով՝ իր կամքովը եկաւ ձեզի ՚ուրախ : 18 – Ու անոր հետ զրկեցինք այն եղբայրը , որուն գովութիւնը աւետարանին մէջ է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ : 19 – Եւ ոչ միայն այսքան, հապա նաև եկեղեցիներէն ընտրուեցաւ մեզի ճամբորդութեան ընկեր ըլլալու այս տուրքերուն մէջ , որ մենք կը ծառայենք Տէրոջը փառքին համար, ու *ձեր յօժարութիւնովը : 20 – Բայց այս մասին զգուշութիւն կ՚ընենք, որ չըլլայ թէ մեկը արատ մը դնէ մեր վրայ այս առատաձեռնութեանը մէջ , որուն մենք կը ծառայենք : 21 – Քանզի ոչ թէ միայն Տէրոջը առջև, հապա մարդոց առջև ալ բարի բաներ ընե՚՚ու կը տանինք: 22 – Եւ անոնց հետ մեր եղբայրը ղրկեցինք, զոր շատ բաներու մէջ փորձելով՝ շատ անգամ յօժարամիտ գտեր ենք, ու հիմա ա՛լ աւելի յօժարամի՚՚ այն մեծ վստահութիւնովը զոր ձեր վրայ ա՚՚ի: 23 – Բայց եթէ Տիտոսի

*Կամ, ձեր նեղութիւն

*Կամ, Համբերեցէք մեզի

*Ո՛՚՚ի, մեր

Համար կը հաշտեէ, անիկա իմ ընկերս է, և ձեր մէջ իմ գործակիցս. իսկ եթէ մեր եղբայրներուն համար անոնք եկեղեցիներուն ղրկածներն են, — Բրիստոսի փառքը: 24 – Ուստի ձեր սիրոյն և մեր ձեր վրայով պարծենալուն ապացոյցը առանց վրայ ցուցուցէք եկեղեցիներուն առջև:

## Գլ. Թ

Գանդի սուրբերուն ըլլալու պաշտօնին վրայով լինի աւելորդ է ձեզի գրել: 2 – Վասն զի գիտեմ ես ձեր յօժարամտութիւնը, որուն վրայով կը պարծենամ ձեզի համար Մակեդոնացւոց մէջ, թէ Աքայեցիք անցած տարւընէ հետէ պատրաստ են. ու ձեր բուէն նախանձը շատերը գրգռեց: 3 – Եւ ահա եղբայրները ղրկեցի, որպէս զի մեր ձեզի համար պարծենալը այդ մասին մէջ պարապ չելլէ, հապա պատրաստ գտնուիք, ինչպէս ըսեր եմ. 4 – Որ չըլլայ թէ երբ Մակեդոնացիք լինին հետ գան ու ձեզ անպատրաստ գտնեն, ալ մենք (որ չըսենք թէ դուք) ամօթով մնանք այս *պարծանքին վստահութեանը մէջ: 5 – Ուստի հարկաւոր սեպեցի եղբայրներուն աղաչել, որ առաջուընէ ձեզի գան, ու առաջուընէ կարգի դնեն այն ձեր առաջուընէ ծանուցուած ընծան, որպէս զի պատրաստ ըլլայ, այնպէս որ ընծայի պէս ըլլայ, ու ոչ թէ ագահութեան պէս: 6 – Բայց ասիկա կը նշանակէ թէ Ան որ խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու ան որ առատութեամբ կը սերմանէ՝ առատութեամբ պիտի հնձէ: 7 – Աստիճ մէկը ինչպէս իր սրտովը կը յօժարի՝ նոյն պէսով թող տայ, ոչ թէ տրտմութեամբ կամ ստիպմամբ. վասն զի Աստուած յօժարակամ տուողը կը սիրէ: 8 – Բայց կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առատօրէն տալ, որպէս զի ամէն բանի մէջ ամէն ատեն բոլոր ձեզի պէտք եղածը ունենալով՝ ամէն բարի գործերով առատանաք. 9 – Ինչպէս գրուած է՝ Տարածեց ու աղքատներուն տուաւ. անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ: 10 – Եւ անիկա որ սերմ ցանողին սերմ կը պարգեւէ, *և կերակուրի համար հաց, ձեր սերմանիքը պարգեւէ և աւելցնէ՝, ու ձեր արդարութեան պտուղները †չատցնէ. 11 – Որպէս զի ամէն բանի մէջ հարստանաք ամէն կերպ առատաձեռնութիւնով, որ մեր ձեռքով կը պատճառէ գոհութիւն Աստուծոյ: 12 – Վասն զի այս պաշտօնին մատակարարութիւնը ոչ թէ միայն սուրբերուն պակսութիւնը լեցընելու համար է, հապա նաև աւելի շատցնելու Աստուծոյ գոհութիւն տալը. 13 – երբ այս չէր պաշտօնին փորձովը փառաւորեն զԱստուած՝ Քրիստոսի աւետարանը խոստովանելնուդ հնազանդութեանը համար, և այն առատաձեռնութեանը համար՝ որով հաղորդակցութիւն կ'ընէք անոնց ու ամէնուն. 14 – Եւ իրենց աղօթքը ձեզի համար տարուողնէն, փափաք ունենալով ձեր վրայ՝ Աստուծոյ գերազանց շնորհքին համար որ ձեր մէջ է: 15 – Ա՛ն գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգեւին համար:

## Գլ. Ժ

Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ Քրիստոսի հեզութիւնովը ու քաղցրութիւնովը, որ երես առ երես խոնարհ եմ ձեր մէջ, բայց հեռուէն կը համարձակիմ ձեզի. 2 – Կ'աղաչեմ որ չըլլայ թէ մօտէն ալ համարձակիմ այն վստահութիւնովը՝ որով միտք ունիմ յանդգնիլ մէկ քանիներուն վրայ, որոնք մեր վրայով այնպէս կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք: 3 – Քանզի թէպէտ մարմնի մէջ կը քալենք, բայց ոչ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընենք. 4 – Վասն զի մեր զինուորութեան զէնքերը մարմնաւոր չեն, հապա Աստուծմէ զօրութիւն առած՝ ամրոցներ քակելու. մենք խորհուրդներ կը քակենք, 5 – Եւ Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտքերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք. 6 – Եւ

*Ոմանք՝ կերակուրի համար հաց ալ պիտի պարգեւէ, և ձեր սերմանիքը պիտի աւելցնէ

†Ոմանք՝ պիտի շատցնէ



պատրաստութիւն ունինք վրէժ առնելու ամէն անհնազանդութեան, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ: 7 – Դուք երևոյթին կը նայիք. եթէ մէկը վստահ ըլլայ իր անձին վրայ՝ թէ ինք Քրիստոսին է, զայս նորէն ինքզինքէ խորհի՝ որ ինչպէս ինք Քրիստոսին է, նոյնպէս ալ մենք*: 8 – Քանզի եթէ աւելի ալ պարծենալու ըլլամ՝ այս մեր իշխանութեանը վրայով զոր Տէրը մեզի տուաւ՝ ձեզ շինելու և ոչ թէ քակելու համար, պիտի չամչնամ. 9 – Որպէս զի այնպէս չեսեպուիմ՝ որպէս թէ ես թղթերովս ձեզի վախ մը կը ձգեմ. 10 – Քանզի Անոր թուղթերը, կ'ըսէ ան, ծանր ու զօրաւոր են, բայց անոր մարմինն երեւոյթը տկար է, ու խօսքը՝ անարգ. 11 – Այնպիսի մարդը զայս թող խորհի, որ մենք հեռուէն ինչպես ենք խօսքով մեր թուղթերովը, մօտէն ալ այնպես պիտի ըլլանք գործով: 12 – Վասն զի մենք չենք համարձակիր մեր անձը կշիռքի դնել ու բաղդատել ոմանց հետ, որ ինքզինքնին կը գովեն. բայց անոնք իրենցմով իրենց անձերը չափելով, և զիրենք իրենց հետ բաղդատելով՝ չեն հասկնար: 13 – Բայց մենք չափ դուրս բաներով պիտի չպարծենանք, հապա այն կանոնին չափովը՝ զոր Աստուած մեզի բաժին տուաւ մինչև ձեզի հասնելու: 14 – Ոչ թէ որպէս թէ մենք ձեզի հասած չենք, ու ինքզինքնիս չափէն աւելի կ'երկնցնենք. վասն զի Քրիստոսի աւետարանովը մինչև ձեզի հասանք: 15 – Եւ ոչ թէ չափ դուրս բաներով՝ ուրիշներուն աշխատանքովը կը պարծենանք, հապա յոյս ունինք որ ձեր հաւատքը աւելնալուն՝ մեր կանոնին չափովը ձեզմով աւելի ընդարձակինք, 16 – Ձեզմէ անդին կողմերը աւետարանը քարոզելու, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծենալու ուրիշի մը կանոնով: 17 – Բայց ան որ կը պարծենայ՝ թող Տէրոջմով պարծենայ: 18 – Վասն զի ոչ թէ ան որ իր անձը կը գովէ՝ անիկա է ընտրուածը, հապա ան զոր Տէրը կը գովէ:

*Ոմանք՝ Յ՛ուէնչէն, Քրիստոսին ենք

## Գլ. ԺԱ

Երանի՛ թէ քիչ մը ներէիք իմ անմտութեանս. և իրաւցընէ համբերեցէք ինծի: 2 – Վասն զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը. վասն զի ես ձեզ էրկան մը նշանեցի՝ մաքուր կոյսի մը պէս Քրիստոսի դիմաց հանելու: 3 – Միայն թէ կը վախնամ՝ չըլլայ թէ ինչպէս օձը Եւան խաբեց իր խորամանկութիւնովը, նոյնպէս ալ ձեր մտքերը ապականին Քրիստոսի վրայ եղած միամտութենէն: 4 – Վասն զի եթէ մէկը գալու ըլլայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ զոր մենք չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք՝ զոր չառիք, կամ ուրիշ աւետարան՝ զոր չէք ընդունած, այդպէս-նէ բանէ կը համբերէիք: 5 – Քանզի ես այսպէս կը սեպեմ՝ որ ամէնէն երևելի առաքեալներէն բնաւով մէն ալ պակաս չեմ: 6 – Եւ թէպէտ խօսքի կողմէ անկիրթ եմ, բայց ոչ թէ գիտութեան կողմէ. ասկայն ամէն բանի մէջ բոլորովին անձերնիս ձեզի յայտնի ըրինք: 7 – Մի՞թէ յանցանք գործած եղայ՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի, որպէս զի դուք բարձրանաք: 8 – Ուրիշ եկեղեցիները կողոպտեցի, անոնցմէ թոշակ առնելով ձեզի ծառայելու համար: 9 – Ու ձեր քով գտնուած ատենս երբ պակասութիւն մը ունեցայ, չեզքի մէկո՛ւն ձանձրութիւն չտուի. վասն զի իմ պակասութիւնս լեցուցին Մակեդոնիայէն եկող եղբայրները. և ամէն կերպով ձեզի ծանրութիւն տալէ իմ անձս պահեցի ու պիտի պահեմ ալ: 10 – Քրիստոսի ճշմարտութիւնը իմ ներսիդիս է, որ այս իմ պարծենալս պիտի չփախցնուի ինծմէ Աքայիոյ կողմերը: 11 – Ինչո՞ւ. որպէս թէ չե՞մ սիրեր ձեզ. Աստուած գիտէ: 12 – Բայց ինչ որ կ'ընեմ՝ պիտի ընեմ ալ, որպէս զի կարենամ անոնց պատճառը՝ որոնք պատճառ կը փնտռեն, որպէս զի ինչ բանով որ կը պարծենան, իրենք ալ մեզի պէս գտնուին: 13 – Վասն զի այնպիսիները սուտ առաքեալներ, խարեբայ բանուորներ, Քրիստոսի առաքեալներուն կերպարանքը իրենց վրայ կ'առնեն: 14 – Եւ զարմանք մը չէ. վասն զի ինքը Սատանայ ալ լուսաւոր

հրեշտակի կերպարանք կ'առնէ. 15 – Ա՛ւ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. որոնց վերջը իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ: 16 – Դարձեալ կ'ըսեմ, Չըլլայ որ մէկը զիս անմիտ սեպէ, թող թէ ոչ՝ գոնէ անմիտի մը պէս զիս ընդունեցէք, որպէս զի ես ալ քիչ մը պարծենամ: 17 – Ինչ որ ես կը խօսիմ, ոչ թէ Տէրոջը կ'ըսէ պէս կը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը՝ այդ պարծենալուն վստահութիւնով: 18 – Որովհետեւ շատերը մարմնի կողմանէ կը պարծենան, ես ալ պիտի պարծենամ: 19 – Քանզի դուք իմաստուն ըլլալով, յօժարութեամբ կը համբերէք անմիտներուն: 20 – Վասն զի կը համբերէք, եթէ մէկը ձեզ ծառայեցնէ, եթէ մէկը ձեզ կլո՛ւ չպարտասպ, եթէ մէկը ձեր երեսին զարնէ: 21 – Ամաչո՛ւքանքի ձևով կը խօսիմ, իբր թէ մենք տկար էինք. բայց ինչ բանով որ մէկը պերճախօսութեամբ կը համարձակի, (անմտութեամբ կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ: 22 – Անոնք Եբրայեցի՞ են, ես ալ. Իսրայէլացի՞ են, ես ալ. Աբրահամի՞ սերունդ են, ես ալ. Քրիստոսի՞ պաշտօնեաներ են, (յիմարաբար կը խօսիմ,) ալ աւելի ես. աշխատանքներով աւելի, ծեծերով ալ աւելի, բանտարկութիւններով աւելի, մահուան վտանգներով շատ անգամ. 24 – Հրեաներէն հինգ անգամ քառասունէն մէկ պակաս ձեզ կերայ. 25 – Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւաբեկութեան հանդիպեցայ. գիշեր մը ու ցորեկ մը ծովուն անդունդը մնացի. 26 – Շատ անգամ ճամբորդութիւններու մէջ՝ գետերէն վտանգներ, աւազակներէն վտանգներ, իմ ազգէս վտանգներ, հեթանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովու վրայ վտանգներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ էրէցի. 27 – Ջանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ քնահատութեան մէջ, անօթութեան ու ծարաւութեան մէջ, շատ անգամ ծոմ կենալու մէջ, ցուրտի ու մերկութեան մէջ էի. 28 – Զգէ արտաքին նե՛ր-իւ՛նները, ամէն օրուան զբաղմունքը, բոլոր եկեղեցիներուն հոգը, վրաս կը դիզուէր: 29 – Ո՞վ կը տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՞վ կը գայթակղի, ու իմ սիրտս չայրիր: 30 – Եթէ պարծենալ պէտք ըլլայ, տկարութեանս բաներուն վրայ պարծենամ: 31 – Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ սուտ չեմ զրուցեր: 32 – Դամասկոսի մէջ Արետա Թագաւորին ազգապետը զիս բռնել ուզելով՝ Դամասկացւոց քաղաքը պահապաններ դրեր էր. 33 – Ես ես պատուհանէ մը զամբիւղով պարպուելն վար թող տուեցայ, ու անոր ձեռքէն փախայ:

## ԳԼ. ԺՐ

Պարծենալ *իրաւցընէ ինծի անօգուտ է. միայն թէ Տէրոջը տեսիլքներն ու յայտնութիւններուն գամ: 2 – Մարդ մը գիտեմ Քրիստոսով տասներչորս տարի առաջ, (եթէ մարմինով էր՝ չեմ գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր. Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը: 3 – Ու գիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր. Աստուած գիտէ,) 4 – Որ դրախտը յափշտակուեցաւ ու լսեց չպատմուելու խօսքեր, զորոնք մարդու արժան չէ խօսիլ: 5 – Ես այնպիսիին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ: 6 – Վասն զի եթէ պարծենալ ալ ուզեմ, անմիտ պիտի չըլլամ, որովհետև ճշտութիւնը պիտի զրուցեմ. բայց կը խնայեմ՝ որ չըլլայ թէ մէկը իմ վրաս աւելի համարումէ ունենայ, քան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ: 7 – Եւ որ չըլլայ թէ ես հպարտանամ՝ խիստ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմինի խայթոց մը տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը, զիս նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ: 8 – Անոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մեկդի ընէ ինծմէ: 9 – Ու ըսաւ ինծի, Իմ շնորհքս հերիք է քեզի, վասն զի

*Ո՛նտ, պէտք է, բայց



իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի. ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի: 10 – Անոր համար հաճելի եմ ես տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու և նեղութիւններու՝ Քրիստոսի համար. վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն զօրաւոր եմ: 11 – Ես անմիտ եղայ *պարծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինծի պէտք էր ձեղմէ վկայութիւն առնել, քանզի ես երեւելի առաքեալներէն բնաւով մը պակաս չդտնուեցայ, թէև ես ոչինչ եմ: 12 – Յիրաւի ձեր մէջ առաքեալի նշանները գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով և սքանչելիքներով ու զօրութիւններով: 13 – Վասն զի ալ ի՞նչ կայ, որով պակաս գտնուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն թէ անով որ ես ձեզի ծանրութիւն չտուի. ներեցէք ինծի այդ յանցանքը:

14 – Ա՛հա այս երրորդ անգամ է որ կը պատրաստուիմ ձեզի գալու. և ես ձեզի ծանրութիւն պիտի չտամ, վասն զի ձեր ո՛չնչացը չեմ փնտռեր, հապա ձեզ. որովհետև որդիները պարտաւոր չեն ծնողքներուն համար բան գիզել, հապա ծնողքները՝ որդիներուն համար: 15 – Եւ ես մեծ յօժարութեամբ ծախք պիտի ընեմ, ու ծախք պիտի ըլլամ ալ ձեր անձերուն համար, թէպէտև ձեզ աւելի սիրելովս չնվճիք քիչ սիրուիմ ալ:

16 – Սակայն թող ըլլայ որ ես ձեզի ծանրութիւն մը չտուի, բայց խո՛յտ ճիւ ըլ խորագէտ ըլլալով նենգութեամբ ձեզ բռնեցի: 17 – Միթէ իմ ձեզի ղրկածներէս մէկուն ձեռքով ձեզմէ բան մը քաշեցի՞: 18 – Տիտոսի աղաչեցի, ու անոր հետ այն եղբայրը ղրկեցի. Միթէ Տիտոս ձեզմէ բան մը քաշե՞ց. չէ՞ որ Էրէսո՛ս ալ նոյն հոգիով քալեցինք, չէ՞ որ նոյն ճամբով պոբ-պէ՞նտ:

19 – Դարձեալ, կը կարծէք որ ձեր առջև ջատագովութի՞ւն կ'ընենք մեր անձերուն. Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսինք. և ամէն բան, սիրելիներ, ձեր շինութեանը համար է. 20 – Քանզի կը վախնամ որ չըլլայ թէ երբ գամ՝ ձեզ ուզածիս պէս չգտնեմ, և ես ալ ձեզի ձեր չուզածին պէս գտնուիմ. չըլլայ թէ չեր ըլ ֆռնո՛ւիս վէճեր, նախանձներ, սրամտութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, բանսարկութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ. 21 – Չըլլայ թէ երբ նորէն գամ, իմ Աստուածս զիս նկուն ընէ ձեր քով, ու սուգ ընեմ շատերուն համար, որոնք առաջուընէ մեղք գործեցին, ու չապաշխարեցին իրենց գործած պղծութեանը և պոռնկութեանը ու գի՛ճութեանը վրայ:

## ԳԼ. ԺԳ

Ա՛յս երրորդ անգամ է որ ձեզի կուգամ. երկու կամ երեք վկաներուն բերնէն պիտի հաստատուի ամէն բան: 2 – Աստուածընկեր ըսեր եմ՝ և նորէն առաջուընկը զրուցեմ (որպէս թէ երկրորդ անգամ ներկայ կը գտնուիմ՝ թէև հիմա հեռուէն կը գրեմ) առաջուան մեղանչողներուն և ուրիշ ամէնուն, որ եթէ նորէն գամ՝ պիտի չխնայեմ. 3 – Որովհետև Քրիստոսի ինծմով խօսելուն ապացոյցը կը փնտռէք, որ ձեր վրայ տկարացած չէ, հապա ձեր մէջ զօրացած է. 4 – Որ թէպէտ խաչուեցաւ տկարութիւնով, բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնով. քանզի մենք ալ թէպէտ կը տկարանանք առնով, բայց կենդանի պիտի ըլլանք առնով հետ Աստուծոյ զօրութիւնովը ձեր մէջ: 5 – Փորձեցէք ձեր անձերը թէ հաւատքին մէջ էք. քննեցէք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինքզինքնիդ, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջ է, միայն եթէ խոտելի չըլլաք: 6 – Բայց կը յուսամ որ պիտի գիտնաք թէ մենք խոտելի չենք: 7 – Ու կը խնդրեմ Աստուծմէ որ դուք չարութիւն մը չընէք. ոչ թէ որպէս զի մենք ընտիր երեւինք, հապա որպէս զի դուք բարին գործէք, թէև մենք իրրև խոտելի ըլլանք: 8 – Վասն զի ճշմարտութեան դէմ կարողութիւն մը չունինք, հապա ճշմարտութեան համար: 9 – Քանզի ուրախ ենք՝ երբ մենք կը տկարանանք ու դուք զօրաւոր կ'ըլլաք, և մենք ալ այդ ձեր հաստատութեանը համար կ'աղօթենք: 10 – Ուստի զայս կը գրեմ ձեզի հեռուէն,

*Ո՛նտ չ–ուէլն

որ չըլլայ թէ երբ գամ՝ առատաձեռնութեամբ վարուիմ այն իշխանութեանը համեմատ, զոր Տէրը ինծի տուաւ շինելու և ոչ թէ քակելու համար։

11 – Վերջապէս, եղբայրներ, ողջ եղէք, հասատատ կեցէք, մխիթարուեցէք, միաբան եղէք, խաղաղութիւն ըրէք. և սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ։

12 – Բարև տուէք իրարու սուրբ համբուրով. բարև կ'ընեն ձեզի բոլոր սուրբերը։ 13-Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, առաքեալ եղած, ոչ թէ մարդոցմէ ու ոչ թէ մարդու ձեռքով, հապա Յիսուս Քրիստոսի ձեռքով, և Հօր Աստուծոյ՝ որ զանիկա մեռելներէն յարուցց, 2 – ես բոլոր եղբայրները որոնք ինծի հետ են, Գաղատիոյ եկեղեցիներուդ. 3 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի Հօր Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէ, 4 – Որ իր անձը տուաւ մեր մեղքերուն համար, որպէս զի մեզ փրկէ հիմակուան չար աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը կամքին համեմատ, 5 – Որուն փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

6 – Կը զարմանամ որ այդպէս շուտով ուրիշ աւետարանի կը փոխուիք անկէ՝ որ ձեզ Քրիստոսի շնորհքին կանչեց. 7 – Որ չկայ ուրիշ աւետարան. միայն թէ կան անոնք՝ որոնք ձեզ կը խռովեցնեն, ու կ'ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարել։ 8 – Բայց եթէ մենք կամ երկինքէն հրեշտակ մը ձայ, աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ զոր մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ։ 9 – Ինչպէս առաջ ըսինք, հիմա ալ նորէն կ'ըսեմ, եթէ մէկը ձեր ընդունածէն ուրիշ աւետարան քարոզելու ըլլայ ձեզի, նզովեալ ըլլայ։ 10 – Թանզի հիմա մարդի՞կ կը հաճեցընեմ թէ զԱստուած. կամ մարդո՞ց հաճելի ըլլալ կը փնտռեմ. քանզի եթէ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ալ Քրիստոսի ծառայ չէի ըլլար։

11 – Կը ծանուցանեմ ձեզի, եղբայրներ, այն աւետարանը որ ինծի քարոզուեցաւ, թէ անիկա մարդու բան չէ։ 12 – Որովհետև ես ալ մարդէ չսովրեցայ զանիկա, և ոչ ալ սորվեցայ, հապա Յիսուս Քրիստոսի յայտնութենէն։ 13 – Վասն զի լսած էք դուք իմ առաջուան ժամանակի վարմունքս Հրէութեան մէջ, իւնչպէս չափէ դուրս կը հալածէի Աստուծոյ եկեղեցին, ու կը կործանէի զանիկա. 14 – Եւ իմ հայրենի ազանդութիւններուս մէջ նախանձաւոր ըլլալով՝ իմ տարիս մէջ եղած շատ հասակակիցներէս աւելի յառաջադէմ էի Հրէութեան մէջ։ 15 – Բայց երբ ուզեց Աստուած, (որ որոշեց զիս իմ մօրս որովայնէն, և իր շնորհքովը զիս կանչեց,) 16 – Ինծի իր Որդին յայտնել, որպէս զի զանիկա հեթանոսներուն մէջ քարոզեմ, մէկէն ի մէկ բան մը չխմացուցի մարմինին ու արիւնին, 17 – Ոչ ալ Երուսաղէմ երթալ ինծմէ առաջ առաքեալ եղողներուն քով, հապա Արաբիա գացի, ու նորէն Դամասկոս դարձայ։ 18. Եաքը երեք տարիէն ետև Երուսաղէմ երթալ Պետրոսը տեսնելու, և տասնըհինգ

---

Կամ, Ինծմով



օր անոր քով կեցայ. 19 – Սակայն առաքեալներէն ուրիշ մէկը չտեսայ, բայց միայն Յակոբոս, Տէրոջը եղբայրը։ 20 – Բայց զոր որ կը գրեմ ձեզի՝ ահա Աստուծոյ առջև կը հաւատքէ, որ սուտ չեմ գրուցեր։ 21 – Անկէ ետքը եկայ Սիւրիայի ու Կիլիկիայի կողմերը. 22-Եւ զիս դէմ առ դէմ չէին ճանչնար այն եկեղեցիները՝ որոնք Քրիստոսի մէջ էին Հրէաստանի մէջ. 23 – Միայն թէ անոնք լսած էին թէ Ան որ առեղծ մեզ կը հալածեր, հիմա ինք այն հաւատքը կը քարոզէ՝ զոր առեն մը կը կործաներ. 24 – Ու ինծմով զԱստուած կը փառաւորէին։

### ԳԼ. Բ

Եաքը տասնըչորս տարիէն ետև նորէն Երուսաղէմ երթալ Բառնաբասի հետ՝ Տիտոսն ալ մեզի առնելով։ 2 – Ու երթալ յայտնութենէնով, և անոնց իմացուցի այն աւետարանը՝ զոր հեթանոսներուն մէջ կը քարոզեմ, բայց առանձին անոնց՝ որոնք երևելիներ էին, որ չըլլայ թէ պարապ տեղ վազեմ կամ վազած ըլլամ։ 3 – Բայց ոչ թէ ինծի հետ եղող Տիտոսն ալ, որ Յոյն էր, պարտաւորեցաւ թլփատուիլ. 4 – Մանաւանդ ներս սպրդած սուտ եղբայրներուն համար՝ որոնք մտնելով ներս մտան Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու համար, որպէս զի մեզ ծառայեցնեն։ 5-Որոնց քիչ մը տանեն անգամ մտիկ չըրինք հնազանդելու, որպէս զի աւետարանին ճշմարտութիւնը տասատանեն մեզ մէջ։ 6 – Բայց անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ, (ինչ որ էին՝ այն իմ հոգս չէ. Աստուած մարդոց աչառութիւն չընէր. վասն զի անոնք կարծուածները բան մը չմտցուցին ինծի։ 7 – Հապա անոր հակառակը՝ երբ տեսան որ անթլփատներուն աւետարանը ինծի յանձնուած է, ինչպէս Պետրոսի՝ թլփատուածներուն, 8 – (Վասն զի ան որ Պետրոսի յաջողեց թլփատուածներուն առաքեալութիւն ընել, ինծի ալ յաջողեց հեթանոսներուն,) 9 – Ու երբ ինծի տրուած շնորհքը գիտցան Յակոբոս ու Կեփաս և Յովհաննէս, որոնք սիւներ սեպուած էին, ալ ձեռքերնին տուին ինծի ու Բառնաբասի է նշան հաղորդակցութեան, որպէս զի մենք հեթանոսներուն մէջ երթանք, ու անոնք՝ թլփատուածներուն։ 10 – Միայն թէ չենք ոռնար որ աղքատները յիշենք. զոր ես ալ փոյթ ունեցայ այն բանը ընելու։ 11 – Բայց երբ Պետրոս Անտիոք եկաւ, ես անոր դէմ կեցայ. որովհետև ինք մեղադրելու էր։ 12 – Վասն զի գեռ Յակոբոսի քովէն մէկ քանի հոգի չեկած, ինք հեթանոսներուն հետ անխտիր կ'ուտէր. բայց երբ եկան՝ մէկդի կը քաշուէր, և ինքզինք կը զատէր, վախնալով անոնցմէ՝ որոնք թլփատուածներէն էին։ 13 – Նաև անոր հետ կեղծաւորեցան միւս Հրեաներն ալ, այնպէս որ Բառնաբաս ալ անոնց կեղծաւորութեանը ծուեցաւ։ 14 – Բայց ես երբ տեսայ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ շիտակ չեն քալեր, ամէնուն առջև Պետրոսի ըրուցեցի, եթէ դուն, որ Հրեայ ես, հեթանոսի պէս ու ոչ թէ Հրեայի պէս կ'ապրիս, ի՞նչպէս հեթանոսները կը ստիպես Հրեայի պէս վարուելու։ 15 – Մենք որ բուն Հրեայ ենք, և ոչ թէ հեթանոսներէն մեղաւորներ, 16 – Գայց գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործերէն չկրնար արդարանալ, հապա Յիսուս Քրիստոսի հաւատքէն, մենք ալ Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որպէս զի արդարանանք Քրիստոսի հաւատքէն, և ոչ թէ օրէնքին գործերէն, որովհետև օրէնքին գործերէն մարմին մը պիտի չարդարանայ։ 17 – Իսկ եթէ մենք, որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ, մեղաւոր գտնուինք, արդեօք Քրիստոս մեղքի պաշտօնեա՞յ եղաւ. քա՛ւ լիցի։ 18 – Բանզի եթէ իմ քակած բաներս նորէն կը շինեմ, իմ անձս յանցաւոր կը ցուցնեմ։ 19 – Վասն զի ես օրէնքով մեռայ օրէնքին, որպէս զի Աստուծոյ կենդանի ըլլամ։ 20 – Քրիստոսի հետ խաչը ելայ. և ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս. բայց ես որ հիմա մարմինովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ՝ որ զիս սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց։ 21 – Ես Աստուծոյ շնորհքը չեմ խափաներ. վասն զի եթէ արդարութիւնը օրէնքէն էր, ուրեմն Քրիստոս պարապ տեղ մեռաւ։

## ԳԼ. Գ

Ով անմիտ Գաղատացիներ, քո՛վ ձեզ հրապուրեց* . որոնց աչքերուն առջև Յիսուս Քրիստոս ձեր մէջ խաչը ելած նկարագրուեցաւ: 2 – Ասիկա միայն կ'ուզեմ ձեզմէ սորվիլ . Օրէնքին գործերովը դուք Հոգին առիք՝ թէ հաւատքին լսելովը: 3 – Այդչափ անմի՞տ էք. Հոգիով սկսեցիք, ու հիմա մարմնո՞վ կը վերջանաք : 4 – Այնչափ բան ունեցաք, պարա՞պ տեղ ձեր վրայէն անցան, (եթէ պարապ ըլլայ ալ): 5 – Ուստի ան որ ձեզի Հոգին կ'այլանդակ և ձեր մէջ զօրութիւններ գործեց, օրէնքի՞ն գործերո՞վ էր՝ թէ հաւատքին լսելովը : 6 – Ինչպէս Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու անոր արդարութիւն սեպուեցաւ: 7 – Ուրեմն գիտցէք թէ անոնք որ հաւատքէն են՝ անոնք են Աբրահամի որդիները : 8 – Եւ գիրքը առաջուբնէ գիտնալով թէ Աստուած հեթանոսները հաւատքով կ'արդարացնէ , առաջուբնէ աւետիս տուաւ Աբրահամի , թէ Քեզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը: 9 – Ուստի անոնք որ հաւատքէն են, կ'օրհնուին հաւատացեալ Աբրահամի հետ: 10 – Վասն զի անոնք որ օրէնքին գործերէն են , անէծքի տակ են . վասն զի գրուած է թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենայ՝ որ զանոնք կատարէ: 11 – Եւ թէ օրէնքով մէ՛կը չկրնար արդարանալ Աստուծոյ առջև, այն յայտնի է. քանզի Արդարը հաւատքէն պիտի ապրի : 12 – Բայց օրէնքը հաւատքէն չէ, հապա Ան որ կը կատարէ այն բաները՝ անոնցմով պիտի ապրի : 13 – Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ ինք մեզի համար անէծք ըլլալով . (վասն զի գրուած է թէ Անիծեալ է ան ամէնը՝ որ փայտէ կը կախուի.) 14 – Որպէս զի Աբրահամի օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով . որպէս զի մենք ալ Հոգւոյն խոստումնը ստանանք հաւատքով : 15 – Մարդու սովորութեան պէս կը գրուեմ. եղբայրներ, իրաւ որ մարդու մը հաստատած կտակը մէ՛կը չխափաներ , ոչ ալ անոր վրայ ուրիշ

*Որմէ՞ կ'ապրելցին , ճշմարտութեանը չհնազանդիլ

պատուէր մը կ'աւելցնէ : 16 – Արդ խոստումնները Աբրահամի ու անոր սերունդին եղան, չըսեր , եւ հո՛ս սերունդներո՛ւդ՝ որպէս թէ շատերու համար, հապա որպէս թէ մէկի համար, եւ քու սերունդիդ , որ Քրիստոս է : 17-Բայց զայս կը գրուեցաւ: Այն կտակը , որ առաջուբնէ Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով, օրէնքը չորս հարիւր երեսուն տարիէն եաւ որ գրուեցաւ , չկրնար անվաւեր ընել խոստումնքը խափանելու համար: 18 – Վասն զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն կ'ըլլայ, ուրեմն ա՛լ խոստումնքով չէ . բայց Աբրահամի խոստումնքով շնորհեց Աստուած :

19 – Հապա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանքի համար վրայ աւելցաւ , (մինչև գայ այն սերունդը՝ որուն խոստացեր էր,) հրեշտակներով տրուած՝ միջնորդի մը ձեռքով : 20 – Բայց միջնորդը մէկի՞ն չէ . սակայն Աստուած մէկ է: 21 – Ուրեմն օրէնքը հակառա՞կ բա՛ն մը՞ է Աստուծոյ խոստումնքներուն. քա՛ւ լիցի . քանզի եթէ տրուած ըլլար այնպիսի օրէնք մը, որ կարող ըլլար կենդանի ընել, այն ատեն իրաւցընէ արդարութիւնը օրէնքէն կ'ըլլար: 22 – Բայց գիրքը ամէնը մեղքի տակ գոցեց, որպէս զի խոստումնքը Յիսուս Քրիստոսի հաւատքովը տրուի հաւատացեալներուն : 23 – Բայց քանի որ հաւատքը չէր եկած , օրէնքին տակ գոցուած կը պահուէինք, պատրաստ այն հաւատքին որ պիտի յայտնուէր : 24 – Ուրեմն օրէնքը մեր դաստիարակը եղաւ՝ Ջեզ Քրիստոսի բերելու, որպէս զի մենք հաւատքով արդարանանք: 25 – Բայց երբ հաւատքը եկաւ, ա՛լ դաստիարակի տակ չենք: 26-Վասն զի ամէնդ ա՛լ Աստուծոյ որդիներ էք , Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով : 27 – Քանզի դուք ամէնդ որ Քրիստոսով մկրտուեցաք , Քրիստոսը վրանիդ հագած էք . 28 – Այսուհետև՝ չկայ Հրեայ կայ , ոչ ալ Յոյն. ոչ ծառայ կայ, ոչ ալ ազատ. ոչ արու կայ, ոչ ալ էգ . վասն զի դուք ամէնդ ալ մէկ էք Քրիստոս Յիսուսով : 29 – Ապա եթէ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամի սերունդն էք , ու խոստումնքին նայելով ժառանգներ :



## ԳԼ. Դ

Բայց ըսե՛ կը զրուեցեմ, որչափ ժամանակ որ ժառանգը տղայ է, ծառայէ տարբերութիւն մը չունի , թէեւ ամէնուն տէրն է. 2 – Հապա խնամակալներու ու հոգաբարձուներու տակ է , մինչև հօրը սրոշած ժամանակը : 3 – Նոյնպէս մենք ալ երբ տղայ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ծառայ եղած էինք: 4 – Բայց երբ ժամանակը լեցուեցաւ, ղրկեց Աստուած իր Որդին՝ որ կնոջմէ եղաւ , ու օրէնքին տակ մնաւ. 5 – Որպէս զի օրէնքին տակ եղողները փրկէ, որպէս զի մենք որդեգրութիւնը ընդունինք : 6 – Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդւոյն Հոգին *ձեր սիրտերուն մէջ ղրկեց , որ կ'աղաղակէ Աբբա Հայր: 7 – Ուստի ա՛լ ծառայ չես, հապա որդի. և եթէ որդի, ա՛լ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով : 8 – Բայց այն ատեն որ չէիք գիտեր զԱստուած, կը ծառայէիք անոնց՝ որոնք իւ բնէն Աստուածներ չէին : 9 – Սակայն հիմա որ ճանչցաք զԱստուած , մանաւանդ որ դուք Աստուածմէ ճանչցուեցաք , ինչպէս նորէն կը դառնաք այն ախտ ու չքաւոր սկզբունքներուն, որոնց նորէն կ'ուզէք ծառայութիւն ընել: 10 – Օրերը կը զանազանէք , ու ամիսները և ժամանակները ու տարիները: 11 – Կը վախնամ ձեզմէ, որ գուցէ պարապ տեղ ձեր վրայ աշխատած ըլլամ:

12 – Ինծի պէս եղէք , վասն զի ես ալ ձեզի պէս եղայ, եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ. դուք ինծի ՙիւոտ մը հասուցած չէք: 13 – Գիտէք դուք որ մարմնոյ տկարութիւնովը ձեզի առաջին անգամ աւետարանը քարոզեցի . եւ իմ մարմնիս վրայ կշո՜ փորձութիւնս 14 – Զանարգեցիք ու չարհամարհեցիք, հապա Աստուծոյ հրեշտակի մի պէս ինծի ընդունեցիք՝ Քրիստոս Յիսուսի պէս: 15 – Ուրեմն †ինչ էր՝ այն ձեր երանութիւնը . քանզի ես կը վկայեմ ձեզի, որ եթէ կարելի էր , ձեր աչքերը պիտի հանէիք ու ինծի տայիք : 16 – Ուստի ձեր թշնամին եղայ ձեզի ճշմարտութիւնը խօսելուս համար : 17 – Ձեզի նախանձաւոր են անոնք՝ ոչ թէ բարիին, և կ'ուզեն *ձեզ արգիլել, որպէս զի իրենց նախանձաւոր ըլլաք : 18 – Սակայն աղէկ է ամէն տեն բարիին նախանձաւոր ըլլալ, ու ոչ թէ միայն երբ ձեր մէջ ըլլամ: 19 – Իմ որդեակներս, որ ձեզմով նորէն ծննդական ցաւ կը քաշեմ, մինչև Քրիստոս ձեր մէջ ձեւակերպի , 20 – կ'ուզէի հիմա ձեր մէջ ներկայ ըլլալ , ու փոխել իմ ձայնս. վասն զի ես ձեր վրայով տարակուսած եմ:

21 – Ըսէք ինծի , դուք որ օրէնքին տակ կ'ուզէք ըլլալ , օրէնքը չէք լսեր: 22-Վասն զի գրուած է թէ Աբրահամ երկու որդի ունէր , մէկը՝ ազախինէն, ու միսը՝ ազատ կնոջմէն : 23 – Բայց ան որ ազախինէն էր, մարմնի կողմանէ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն՝ խոստումնքին չամեմատ : 24 – Ասոնք բաները այլաբանօրէն կը մեկնուին . վասն զի սոոնք են երկու կտակարանները , մէկը Սինա լեռնէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի , որ է Հագար. 25 – Վասն զի Հագար Արաբիայի մէջ Սինա լեռն է, և կը համեմատի հիմակուան Երուսաղէմի, որ իր զաւակներով մկակեղ կը ծառայէ : 26 – Բայց վերի Երուսաղէմը ազատ է, որ մեր †մանուն մայրն է: 27-Վասն զի գրուած է, Ով չծնանող ամուլ, ցնծա. ով ծնդական ցաւ չքաշող , գոչէ և աղաղակէ . քանզի երեսէ ձգուածին տղաքները այր ունեցողին տղաքներէն շատ պիտի ըլլան : 28 – Ուստի մենք , եղբայրներ, Իսահակի պէս խոստումնքին որդիներն ենք : 29 – Բայց ինչպէս այն ատեն մարմնի կողմանէ ծնածը կը հալածէր զանիկա որ հոգիին կողմանէ էր, նոյնպէս հիմա ալ : 30 – Սակայն գիրքը ի՞նչ կ'ըսէ . Դուրս հանէ այդ ազախինն ու անոր որդին , վասն զի ազախինին որդին ազատ կնոջը որդւոյն հետ ժառանգութիւն պիտի չունենէ: 31 – Ուստի, եղբայրներ, մենք ազախինէն զաւակները չենք, հապա ազատին:

## ԳԼ. Ե

Ուստի ամուր կեցէք այն ազատութիւնով , որով Քրիստոս մեզ ազատեց. և նորէն ծառայութեան լուծի տակ մի մտնէք: 2 – Ա՛հա ես Պօղոս կը

*Որմէ՞, մեզ

†Որմէ՞ լսանին

*Որմէ՞, մեր

†Կամ, ո՞ւր է

զուրկեմ ձեզի որ եթէ Թլփատուիք, Քրիստոս ձեզի օգուտ մը չընէր։ 3 – Եւ դարձեալ ամէն Թլփատուող մարդու կը վկայեմ թէ պարտական է բոլոր օրէնքը կատարել։ 4-Խափանուած էք դուք Քրիստոսէ, որ օրէնքով արդարանալ կ'ուզէք, ու շնորհքէն ինկած էք։ 5 – Վասն զի մենք Հոգիով կը սպասենք արդարութեան յոյսին հաւատքով։ 6 – Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ոչ Թլփատութիւնը բան մը կարող է, ոչ ալ անթլփատութիւնը, հապա հաւատքը, որ սիրով ի գործ կը գործէ։ 7 – Դուք աղէկ կը վազէիք. ո՞վ ձեզ ետ կեցուց որ ճշմարտութեան չհնազանդիք։ 8-Այս դրդումը անկէ չէ որ ձեզ կանչեց։ 9-Փիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ։ 10 – Բայց ես քեզի վստահութիւն կ'ունիմ ձեր վրայ Տէրոջմով, որ ուրիշ բան մը պիտի չխորհիք. և ան որ ձեզ կը խռովեցնէ, դատապարտութիւն պիտի կրի՝ ով որ ըլլայ։ 11 – Սակայն, եղբայրներ, եթէ ես առաւելն թլփատութիւն կը քարոզեմ, ալ ինչո՞ւ կը հալածուիմ. ուրեմն խաչին գայթակղութիւնը խափանուած է։ 12 – Երանի՛ թէ բոլորովին կարուէին անոնք որ ձեզ կը խռովեցնեն։

13 – Վասն զի դուք ազատութեան կանչուած էք, եղբայրներ. միայն թէ չեր ազատութիւնը մարմնի յանձնարարեսա պատճառ չըլլայ, հապա սիրով իրարու ծառայութիւն ընէք։ 14 – Վասն զի բոլոր օրէնքը այս մէկ խօսքին մէջ կը կատարուի, թէ՝ Դուն ընկերդ սիրես քու անձիդ պէս։ 15 – Ապա եթէ իրար խածնէք և ուտէք, զգույշ կեցէք որ չըլլայ թէ իրարմէ ոչնչանաք։ 16 – Միայն թէ ըսեմ կը զրուցեմ. Հոգիով գացէք, ու մարմինին ցանկութիւնը պիտի չկատարէք։ 17 – Վասն զի մարմինը կը ցանկայ հոգիին հակառակ, ու հոգին՝ մարմինին հակառակ. և ասոնք իրարու հակառակ են, որ չըլլայ թէ ինչ որ կ'ուզէք՝ զայն ընէք։ 18 – Բայց եթէ Հոգիէն կ'առաջնորդուիք, ալ օրէնքին տակ չէք։ 19-Այդ մարմինին գործերը յայտնի են, որ ասոնք են. շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիճութիւն, 20 – կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանումներ, 21-Ջաւր նայուածքներ, մարդասպանութիւններ, գինովութիւններ, անառակութիւններ, ու ինչ որ ասոնց նման են. զոր հիմակուընէ ես ձեզի կը զրուցեմ, ինչպես առաջուընէն ալ կը զրուցէի, որ այսպիսի բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն։ 22-Բայց Հոգիին պտուղը այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, 23 – քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն. այսպիսի բաներու դէմ օրէնք չկայ։ 24 – Եւ անոնք որ Քրիստոսինն են՝ էրենց մարմինը խաչ հանեցին բնական կիրքերով ու ցանկութիւններով միասեղ։ 25 – Եթէ Հոգիով կ'ապրինք, Հոգիին համեմատ քալենք։ 26 – Մնապարծ չըլլանք՝ միկզմիկ գրգռելով ու իրարու վրայ նախանձելով։

## Գլ. Ջ

Եղբայրներ, եթէ մէկը յանկարծ ինչ և իցէ յանցանքով բռնուելու ըլլայ, դուք որ հոգևոր էք, այնպիսին հեզութեան հոգիով ուղղութեան բերէք. քու անձիդ ալ գթութիւն ըրէ որ չըլլայ թէ փորձութեան մէջ ինկնաս։ 2 – Իրարու նեղութիւնները կրեցէք, և այնպես Քրիստոսի օրէնքը կատարեցէք։ 3 – Քանի որ եթէ մէկը ինքզինք բան մը ըլլալ կը սեպէ ու չէ, անիկա իր անձը կը խաբէ։ 4 – Բայց ամէն մարդ իր գործը թող կշռէ, ու հետքը միայն իր անձին վրայ պարծանք ունենայ, և ոչ թէ ուրիշի վրայ։ 5 – Վասն զի ամէն մէկը իր բեռը պիտի կրէ։

6 – Խօսքին աշակերտութիւն ընդունէ վարդապետը ամէն բարի բաներու մասնակից ընէ։ 7 – Մի խաբուիք, Աստուած ծաղր չըլլար։ 8 – Վասն զի ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ. ան որ իր մարմինին կը սերմանէ, այն մարմինին ապականութիւն պիտի հնձէ. ու ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիէն յաւիտենական կեանք պիտի հնձէ։ 9 – Բայց բարի գործելէն չձանձրանանք, քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք եթէ չմուլնանք։ 10 – Ուստի քանի որ ժամանակը ձեռքերնիս է, բարիք ընենք ամենուն, մանաւանդ հաւատքին ընտանիներուն։

11 – Նայեցէք՝ ի՛նչպիսի դիրերով գրեցի ձեզի իմ ձեռքովս։ 12 – Որոնք որ կ'ուզեն մարմնի կողմանէ բարի երևնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ թլփատուիք, միայն որ Քրիստոսի խաչին համար չհալածուին։ 13 – Քանզի անոնք ալ որ թլփատուած են, իրենք օրէնքը չեն պահեր, հապա կ'ուզեն որ դուք թլփատուիք, որպես զի իրենք ձեր մարմնով պարծենան։ 14 – Բայց ես՝ քա՛ւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի։ 15 – Վասն զի Քրիստոս Յիսուսով ոչ Թլփատութիւնը բան մըն է, ոչ ալ անթլփատութիւնը, հապա նոր ստեղծուած ըլլալը բան է։ 16 – Եւ ան ամէնը որ այս կանոնին համեմատ կը քալեն, խաղաղութիւն ու ողորմութիւն ըլլայ անոնց վրայ, ու Աստուծոյ Իսրայէլին վրայ։ 17 – Ածկէ ետև ինծի զիս թող չհոգնեցնէ. վասն զի ես Տէր Յիսուսի վերքին նշանները իմ մարմինս վրայ կը կրեմ։ 18 – Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ։ Ամէն։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

### Գլուխ Ա.

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն և Քրիստոս Յիսուսի հաւատացողներուն. 2 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3 – Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամէն հոգևոր օրհնութիւններով երկնաւորներուն մէջ Քրիստոսով. 4-Ինչպես մեզ անով աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց, որպես զի մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջև սիրով. 5 – Եւ առաջուընէն մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալ Յիսուս Քրիստոսի ձեռքովը իր կամքին հաճութեանը պէս, 6 – Իր փառաւոր շնորհքին գովութեանը համար, որով մեզ զարդարեց Սիրելիին ձեռքովը. 7 – Որով փրկութիւն ունինք մենք իր արեանը միջոցով, մեզի թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեան չափովը. 8 – Զոր մեր վրայ աւելցուց բոլոր իմաստութեամբ ու գիտութեամբ, 9 – Մեզի յայտնելով իր կամքին խորհուրդը իր հաճութեանը պէս, զոր *իր մէջ՝ նախասահմաներ էր. 10 – Որպէս զի ժամանակներուն լրանալուն անառատութեանը մէջ ամէն բան բովանդակէ Քրիստոսով, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ կայ, անով՝ 11 – Որով մենք ալ ժառանգութիւն առինք, առաջուընէն որոշուած ըլլալով անոր նախասահմանութիւնովը, որ ամէն բան իր կամքին խորհրդովը ի գործ կը դնէ. 12 – Որպես զի մենք անոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուընէն Քրիստոսի վրայ յուսացողներս. 13 – Որուն վրայ դուք ալ յո՜ւսացաք՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, որու նաև հաւատալովը՝ խոստացեալ Սուրբ Հոգւոյն ընծեռուեր կնքուեցաք. 14 – Որ մեր ժառանգ ըլլալուն գրաւն է մինչև ատացուածքին փրկութիւնը՝ իր փառքին գովութեանը համար։

*Ո՛նդ, առով

15 – Ուստի ես ալ երբ լսեցի Տէր Յիսուսի վրայ ունեցած հաւատքիդ, ու բոլոր սուրբերուն վրայ ունեցած սէրը, 16 – Չեմ դադարիր ձեզի համար գոհութիւն ընելէ՝ ձեզ իմ աղօթքներուս մէջ յիշելով. 17 – Որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը, փառաց Հայրը, տայ ձեզի իմաստութեան ու յայտնութեան հոգին իր գիտութիւնովը. 18 – Որպէս զի սիրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝ գիտնաք թէ ո՛րն է անոր ձեզ կանչելուն յոյսը, ու ո՛րն է անոր ժառանգութեանը փառքին ճոխութիւնը սուրբերուն մէջ, 19 – Եւ ո՛րն է իր զօրութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներուս մէջ՝ իր կարող զօրութեանը գործադրութիւնովը, 20- Զոր Քրիստոսի վրայ ի գործ դրաւ, երբ զանիկա մեռելներէն յարուցց, ու նաեւ ցուց իր ա՛յ կողմը երկինքի մէջ 21 – Ամէն իշխանութեան ու պետութեան և զօրութեան ու տէրութեան վրայ, և ամէն անունի վրայ որ կ'անուանի, ոչ թէ միայն այս աշխարհին մէջ, հապա գալիքին մէջ ալ. 22 – Եւ ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց, և զանիկա ամէն բաներու վրայ եկեղեցիին գլուխ դրաւ, 23 – Որ անոր մարմինն է, անոր լրումը՝ որ կը լեցնէ ամէնը ամէն բանի մէջ։

## Գլ. Բ

Եւ դուք որ յանցանքներու և մեղքերու մէջ մեռած էիք, Եփ 2:1 Կող 2:13 2 – Որոնց մէջ առնուազ կը քալէիք այս աշխարհին բնական ճամբով, այս օդին իշխանութեանը իշխանին՝ ա՛ն ոգիին՝ որ հիմա ապստամբութեան որդիներուն ներսիդին կը ներգործէ. 3 – Որոնց մէջ առնուազ մենք ամէնս ալ կը պարապէինք մեր մարմնին ցանկութիւններովը, և մարմնին ու միտքին ուզածը կը կատարէինք. և բնութեամբ բարկութեան որդիները էինք՝ ինչպէս ուրիշները. 4 – Բայց Աստուած, որ մեծ է ողորմութիւնով, իր առատ սիրոյն համար, որով մեզ սիրեց, 5 – Երբ յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստոսի հետ կենդանացուց, (դուք շնորհքով փրկուած էք,) 6 – Եւ անոր հետ մեզ յարուցց, ու անոր հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով, 7 – Որպէս զի գալու դարերուն մէջ ցուցնէ իր շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի ցոյց տրած քաղցրութիւնովը։ 8- Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով. և այս ոչ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է. 9 – Ոչ թէ գործերէն, որ մէ՛կը չպարծի. 10 – Վասն զի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար, որոնց Աստուած առաջուընէ պատրաստեց զմեզ, որպէս զի անոնց մէջ քալենք։

11 – Ուստի միտքերնիդ բերէք որ դուք ատեն մը մարմինով հեթանոսներ էյլալով, (որոնք անթլփատութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թլփատութիւն կ'ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած,) 12 – Որ այն ատեն դուք առանց Քրիստոսի էիք, ու հեռացած էիք Իսրայէլի քաղաքակցութենէն, և օտար բացած՝ խոստումներուն ուխտերէն, ու յոյս մը ալ չունէիք, և աշխարհի մէջ անաստուած էիք։ 13 – Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ ատեն մը հեռու էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնովը։ 14 – Վասն զի անիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուքը մէկ ըրաւ, ու միջնակի լսմփացնող պատը, այսինքն էջբա– հեռ եղած թշնամութիւնը, իր մարմինովը քակեց, 15 – Եւ հրամաններով եղած պատուիրանքներուն օրէնքը խափանեց. որպէս զի իրմով այն երկուքը նոր մարդ մը հաստատէ, ու այսպէս խաղաղութիւն ընէ. 16 – Եւ երկուքն ալ մէկ մարմին եղած հաշտեցնէ Աստուծոյ հետ էջ խաչովը. վասն զի անով սպանեց թշնամութիւնը. 17 – Եւ եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի որ հեռուն էիք, ու անոնց՝ որ մօտ էին։ 18 – Քանզի անոր ձեռքով մենք երկուքս ալ մէկ Հոգիով Հօրը մօտենալու ազատութիւն ունինք։ 19 – Ուրեմն ա՛լ օտար ու պանդուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ ընտանիքը՝ 20-Առաքեալներուն ու մարգարէներուն հիման վրայ շինուած, որուն անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոս է. 21 – Որով բոլոր շէնքը միկտեղ յարմարութեամբ կազմուած՝ կ'աճի սուրբ տաճար մը կ'ըլլայ Տէրոջմով. 22 – Որով դուք ալ միկտեղ կը շինուիք՝ Աստուծոյ բնակարան ըլլալու Հոգւով Սբ։

## Գլ. Գ

Ուստի ես Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապուածը ձեզի հեթանոսներուդ համար. 2 – Դուք անշուշտ լսած էք Աստուծոյ շնորհքին առաքելութիւնը, որ ինձի տրուած է ձեզի համար, 3 – Թէ ինծի այն խորհուրդը յայտնութիւնով ցուցուեցաւ. (ինչպէս առաջուընէ ալ ձեզի համառօտաբար գրեցի, 4 – Որով կրնաք կարդալ ու միտք առնել իմ տեղեակ ըլլալս Քրիստոսի խորհուրդին վրայով.) 5 – Որ ուրիշ դարերուն մէջ մարդոց որդիներուն չերեւցաւ, ինչպէս հիմա Հոգւով Սբ՝ իր առաքեալներուն ու մարգարէներուն. 6 – Որպէս զի հեթանոսները Քրիստոսով ժառանգակից ու մարմնակից և անոր խոստումնալիքին հաղորդ ըլլան աւետարանով. 7 – Որու ես սպասաւոր եղայ՝ Աստուծոյ շնորհաց պարգեւին համեմատ՝ որ ինծի տրուեցաւ իր զօրութեան ներգործութիւնովը, 8 – (Ինծի՝ որ ամէն սուրբերուն փոքրագոյնն եմ, այս շնորհքը տրուեցաւ,) հեթանոսներուն մէջ Քրիստոսի անքննելի ճոխութիւնը քարոզելու, 9 – Եւ ամէնը լուսաւորելու, որպէս զի հասկնան թէ ո՛րն է այն խորհուրդին անօրինութիւնը՝ որ իւ յաւիտենից ծածկուած էր Աստուծոյ՝ որ ամէն բանը *ստեղծեց. 10 – Որպէս զի հիմա Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը եկեղեցիին ձեռքով յայտնի ըլլայ երկինքը եղող իշխանութիւններուն ու պետութիւններուն, 11 – Իր յաւիտենական նախասահմանութեանը համաձայն , զոր ըրաւ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով. 12 – Որով մենք ալ համարձակութիւն ու մօտենալու յոյսով հաւատքով անոր։ 13 – Ուստի կ'աղաչեմ որ չհանձրանաք իմ նեղութիւններուս պատճառուած, որոնք ձեզի համար են, և որոնք ձեր փառքն են։ 14-Աստ համար ծունկի վրայ գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը առջև, 15 – Երկրի ամէն ազգատոհմ երկինքի մէջ ու երկրի վրայ անուն կ'առնէ, 16 – Կ'աղաչեմ որ տայ ձեզի իր փառքին ճոխութեանը չափովը զօրութիւնով հաստատուիլ իր Հոգիովը ներսի մարդուն մէջ. 17 – Որպէս զի Քրիստոս հաւատքով ձեր սիրտերուն մէջ բնակի, և դուք սիրով արմատացած ու հաստատուած ըլլաք, 18 – Որպէս զի կարենաք հասկնալ բոլոր սուրբերուն հետ մեկտեղ, թէ ո՛րչ է լայնութիւնը ու երկայնութիւնը և խորութիւնը ու բարձրութիւնը. 19 – Ա՛յսինքն ճանչնալ Քրիստոսի սէրը, որ գիտութենէն գերազանց է, որպէս զի լցուիք Աստուծոյ ամէն լրութիւնովը։ 20 – Այդ անոր որ կարող է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՛ զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործէ, 21 – Իրեն փառք եկեղեցիին մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր դարերուն մէջ յաւիտեանս յաւիտենից։ Ա՛մէն։

## Գլ. Դ

Ուստի կ'աղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար կապուած եմ՝ որ դուք այնպէս քալէք՝ ինչպէս կը վայլէ այն կոչումին որով կանչուեցաք, 2 – Խոնարհութիւնով ու հեզութիւնով, երկայնմտութեամբ. սիրով իրարու ներդաշնամութեամբ ըլլալով. 3 – Ջանալով Հոգւոյն Սբ՝ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել. 4 – Մէկ մարմին ու մէկ Հոգի, ինչպէս կանչուեցաք ձեր կոչումին մէկ յոյսովը. 5 – Տէրը մէկ է, հաւատքը մէկ, մկրտութիւնը մէկ. 6 – Մէկ է Աստուած և ամէնուն Հայրը, որ ամէնուն վրայ ու ամէնուն միջ և *ձեր ամէնուն մէջ է։ 7 – Բայց մեր ամէն մէկուն ալ շնորհք տրուած է Քրիստոսի պարգեւին չափովը։ 8 – Անոր համար կ'ըսէ թէ Բարձրը ելաւ, գերութիւնը գերի բռնեց ու մարդոց պարգեւներ տուաւ։ 9 – Ա՛յն ելաւ բառը ի՞նչ է, միայն թէ՝ որ ինք առաջ երկրի վարի կողմերը իջաւ։ 10 – Ան որ իջաւ՝ նոյն ինքն է, որ բոլոր երկինքներէն վեր ելաւ, որպէս զի ամէն բան լեցնէ։ 11 – Եւ ինք մէկ քահանին տուաւ առաքեալներ ըլլալու, մէկ

*Ոմանք, Յիսուս Քրիստոսով ստեղծեց

*Ոմանք, մեր

քանին մարգարէները, մէկ քանին առաքանիչները, մէկ քանին հովիւները ու վարդապետները. 12 – Սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօնին գործին համար, Քրիստոսի մարմնին շինութեանը համար. 13 – Մինչեւ ամէնս ալ հասնինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու. 14 – Որպէս զի ա՛լ մանկ եւս մրրկի ալիքներէն ու ամէն քամիի վարդապետութեան ամէն հովերէն տագին անդին տարուբերուած՝ մարդոց խարեբայութեամբ, որոնք խորամանկութեամբ կը խարեն մոլորեցնելու. 15 – Հապա սիրով ճշմարտութեան հետեւելով՝ ամէն բան Անով աճեցնենք որ գլուխ է, այսինքն Քրիստոս. 16 – Որմէ բոլոր մարմինը մէկտեղ կազմուած, եւ ամէն յօդուածները իրարու հաղորդութեամբ կցուած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով՝ մարմինին աճումի կու տայ իրեն շինութեանը համար սիրով։

17 – Ուստի զայս կ'ըսեմ ու Տէրոջմով վկայութիւն կ'ընեմ, որ դուք մեզմէն ալ այլեւս չգալէք, ինչպես ուրիշ հեթանոսները կը գալեն իրենց միքին ունայնութեանը մէջ. 18 – Որոնց խնդողութիւնը խաւարած է, ու օտարացած են Աստուծոյ կեանքին, իրենց մէջ եղած տգիտութեան պատճառաւ իրենց սրտին *կուրութեանը համար. 19 – Որոնք անզգայ ըլլալով, ինքզինքնին անառակութեան տուին, ամէն կերպ պղծութիւն գործելու †ագահութիւնով։ 20 – Բայց դուք այսպէս չսորվեցաք Քրիստոսը, 21 – Եթէ անոր վրայով լսեցիք ու անկէ սորված էք, ինչպէս ճշմարտութիւնը Յիսուսի մէջ է. 22 – Որպէս զի ձեր վրայէն մէկդի հանէք այն չար առաջուան վարմունքին պէս եղած հին մարդը, խաբեբայ ցանկութիւններովապականուածը. 23 – Եւ ձեր միքին հոգիով նորոգուիլը, 24 – Եւ նոր մարդը ձեր վրայ հագնիլը, որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով։ 25 – Ուստի առաքութիւնը մէկդի ձգելով՝ ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, վասն զի մենք իրարու անդամներ ենք։ 26 – Երէք բարկանաք՝ մեղք մի գործէք. արեւը ձեր բարկութեանը վրայ մտքը չմտնէ։ 27 – Ու Սատանային տեղ մի տաք։ 28 – Ան որ գողութիւն կ'ընէր, ալ թող չգողնայ. այլ մանաւանդ աղէկ գործի մը պատրաստելով՝ իր ձեռքերովը աշխատի, որպէս զի կարող ըլլայ *տալ կարօտ եղողին։ 29 – Բնաւ ձեր բերնէն ապականեալ խօսք մը չելլէ, հապա ինչ որ աղէկ է՝ պէտք եղած շինութեանը համար, որպէս զի լսողներուն շնորհք տայ։ 30 – Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեցնէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օրուանը համար։ 31 – Ամէն դառնութիւն եւ բարկութիւն ու զայտնութիւն եւ աղաղակ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւնովը միասին։ 32 – Եւ իրարու հետ քաղցր եղէք, գիմած, ներելով իրարու, ինչպես Աստուած Քրիստոսով ներեց ձեզի։

## Գլ. Ե

Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս. 2 – Եւ սիրով վարուեցէք, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց, ու իր անձը մեզի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ։ 3 – Բայց պոռնկութիւն եւ ամէն †բղծութիւն կամ ագահութիւն անունը անգամ չլինի ձեր մէջ, (ինչպէս կը վայլէ սուրբերուն,) 4 – Եւ գարշելի բաներ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն, որ չվայլեր, այլ մանաւանդ գոհութիւն. 5 – †Քանզի զայս գիտէք՝ որ ամէն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի։ 6 – Ձրիլսայ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով. վասն զի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ։ 7 – Ուստի անոնց հաղորդ մի ըլլաք։ 8 – Քանզի ԹԵ առաջ մի գուբ խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. լոյսոյ որդիներու պէս քալեցէք.

*Յոան. ըրթութեանը
†Կամ, անյագութիւնով

*Յոան. հաղորդել
†Կամ, Զայս իմանալով գիտնաք



9 – Վասն զի *Հոգւոյն պտուղը ամէն հեզ բարութիւնով, ու արդարութեամբ ու ճշմարտութիւնով է։ 10 – Քննեցէք ի՛նչ է Տէրոջը հաճելին. 11 – Ու կցորդ մի ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ ջնդո՛ք յանդիմանեցէք. 12 – Վասն զի անոնց մէջ գաղտուկ գործուած բաները խօսիլն ալ ամօթ է. 13 – Բայց ամէն բան յանդիմանուած՝ լուսով յայտնի կ'ըլլայ. վասն զի ամէն բան որ յայտնի կ'ըլլայ՝ լոյս է։ 14 – Անոր համար կ'ըսէ, Արթնցիր դուն որ կը քնանաս, և կանգնի՛ւ մեռելներէն, ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ։

15 – Ուստի նայեցէք թէ ի՛նչպէս զգուշութեամբ պիտի քալէք, ոչ թէ անմիտներու պէս, 16 – Հապա խնայողութիւն ներու պէս. ժամանակը ծախու առէք, վասն զի օրերս չար են։ 17 – Անոր համար անմիտ մի ըլլաք, հապա իմացէք թէ ի՛նչ է Տէրոջը կամքը։ 18 – Եւ մի գինովնա՛ք գինիով, որուն մէջ անառակութիւն կայ, հապա Հոգիով լեցուեցէք. 19 – Եւ սաղմոսներով ու օրհնութիւններով և հոգեւոր երգերով ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէք ու սաղմոսեցէք Տէրոջը ձեր սիրտերուն մէջ։ 20 – Ամէն ատեն ամէն բանի համար գոհութիւն տուէք Աստուծոյ ու Հօրը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը։

21 – Իրարու հնազանդ եղէք †Աստուծոյ վախովը։ 22 – Կիները իրենց այրերուն հնազանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը. 23 – Վասն զի այրը կնոջ գլուխն է, ինչպէս Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, ու ինք մարմինին Փրկիչն է։ 24 – Ուստի ինչպէս եկեղեցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսի, նոյնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց այրերուն։ 25 – Այրեր, սիրեցէք ձեր կիները, ինչպէս Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար. 26 – Որպէս զի զանիկա սրբէ ու մաքրէ ատազանին ջրովը՝ խօսքով. 27 – Որպէս զի ինք իր դիմաց փառաւոր կեցնէ եկեղեցին, որ սրատ մը կամ խոշտանգութիւն կամ ուրիշ ասոնց պէս բան մը չունենայ, հապա որ սուրբ ու անարատ ըլլայ։ 28 – Նոյնպէս ալ պէտք է որ այրերը իրենց կիները սիրեն իրենց մարմիններուն պէս. ան որ

*Ոմանք, լուսոյ †Ոմանք, Քրիստոսի

իր կինը կը սիրէ, իր անձը կը սիրէ. 29 – Վասն զի մէկը բնաւ իր անձը չատեր, հապա կը սնուցանէ ու կը խնամէ զանիկա, ինչպէս *Տէրն ալ եկեղեցին. 30 – Վասն զի մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր մարմինէն ու անոր ոսկորներէն։ 31 – Ասոր համար մարդ պիտի ձգէ իր հայրը ու մայրը՝ և իր կնոջ պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ 32 – Այս խորհուրդը մեծ է, բայց ես կը զրուցեմ Քրիստոսի ու եկեղեցիին վրայով։ 33 – Սակայն ձեզմէ ամէն մէկն ալ իր կինը այնպէս սիրէ՝ որպէս թէ իր անձը, ու կինը իր այրէն ակնածութիւն ընէ։

## Գլ. Զ

Որդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէք Տէրոջմով, վասն զի այն է արժանը։ 2 – Պատուէ քու հայրդ ու մայրդ, (որ առաջին պատուիրանն է խոստմունքով,) 3 – Որպէս զի քեզի աղէկ ըլլայ, ու երկար կեանք ունենաս երկրի վրայ։ 4 – Եւ դուք, հայրեր, ձեր որդիները մի բարկացնէք, հապա զանոնք սնցուցէք Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը։ 5 – Ծառաներ, հնազանդեցէք ձեր մարմնաւոր տէրերուն ահով ու դողով ձեր սրտին միամտութիւնովը, որպես թէ Քրիստոսի. 6 – Ոչ թէ մարդահաճոյի պէս աչքի առջեւ ծառայելով, հապա Քրիստոսի ծառաներու պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը ընելով. 7 – Յօժարութեամբ ծառայելով՝ որպէս թէ Տէրոջը, ու ոչ թէ մարդոց. 8 – Գիտնալով որ ամէն մէկը ինչ բարիք որ ընէ, նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի, թէ՛ ծառայ ըլլայ և թէ՛ ազատ։ 9 – Ասոր պէս ալ, տէրեր, նոյնը ըրէք անոնց, ու սպառնալիքը թող տուէք, գիտնալով որ անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է, ու անոր քով աչառութիւն չկայ։

10 – Ալ ասկէ եւս, եղբայրներս, զօրացէք Տէրոջմով ու անոր զօրութեան կարողութիւնովը։ 11 – Զէք վրայ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէս զի կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ դնել։ 12 – Վասն զի մեր պատերազմը արիւնի ու

*Ոմանք, Քրիստոս

մասինն հետ չէ, հապա իշխանութիւններու ու պետութիւններու հետ, ու այս *խառար աշխարհին իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ոգիներուն հետ։ 13-Աւսոր համար ձեր վրայ ուրախ Աստուծոյ ապառաժնութիւնը, որպէս զի կարող ըլլաք չարութեան օրը դէմ դնել, 14 – Ու ամէն բանը լմնցնելէ ետեւ՝ հաստատուն կայնիլ։ Ուստի չեր գերը կայնեցէք, մէջբերնիդ ճշմարտութեամբ ամուրցընելով, ու արդարութեան զրահը հագնելով. 15 – Ու ոտքերնուդ հագցընելով խաղաղութեան աւետարանին պատրաստութիւնը. 16 – Ու ամէն բանին վրայ հաւատքին վահանը առէք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարել. 17 – Ու փրկութեան սաղաւարտը առէք, ու Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է. 18 – Ամէն աղօթքով ու խնդրուածքով ամէն առեն աղօթք ըրէք Հոգիով, ու այս բանին վրայ հսկեցէք կատարեալ յարատեւութեամբ ու աղաչանքով՝ բոլոր սուրբերուն համար, 19 – Ինծի համար ալ, որպէս զի ինծի խօսք տրուի որ բերանս բանամ համարձակութեամբ աւետարանին խորհուրդը յայտնելու. 20-Որու համար ես դեսպանութիւն կ'ընեմ կապանքով, որպէս զի անով համարձակութիւն ունենամ խօսելու՝ ինչպէս պէտք է։

21 – Բայց որպէս զի դուք ալ գիտնաք իմ վրայովս՝ թէ ինչ կ'ընեմ ես, ամէն բանը պիտի ցուցնէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշտօնեան Տէրոջմով. 22-Զոր յատկապէս այդ բանին համար ձեզի դրկեցի, որպէս զի գիտնաք դուք մեր վրայով, ու ինք ձեր սիրտերը մխիթարէ։

23 – Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատքով մէկտեղ Հօր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ։ 24-Շնորհք այն ամէնուն հետ՝ որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կը սիրեն։ Ամէն։

*Յառ. աշխարհիս խառարին

ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Ա.Ո. ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս և Տիմոթէոս, Յիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որոնք Փիլիպպեցւոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. 2-Շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3 – Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ ձեզ կը յիշեմ, 4 – (Միշտ իմ ամէն խնդրուածքիս մէջ, ձեր ամէնուն համար ուրախութեամբ աղօթք կ'ընեմ,) 5-Աւետարանին հաղորդ ըլլալնուդ համար առաջին օրուընէ մինչև հիմա. 6 – Այս մասին վաստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջ բարի գործ մը սկսաւ, մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ. 7 – Ինչպէս ինծի արժան ալ է ձեր ամենուն վրայ այս բանը խորհիլ՝ *ձեզ իմ սրտիս մէջ ունենալուս՝ համար իմ կապերուս մէջ, և աւետարանին զօրացուցմանը և հաստատութեանը մէջ, և ամենդ ինծի եղած շնորհքին հաղորդ ըլլալնուդ համար։ 8 – Քանզի վկայ է ինծի Աստուած, որ ինչպէս փափաք ունիմ ձեր ամենուն վրայ Քրիստոս Յիսուսի գութովը։ 9 – Եւ այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի շատնայ գիտութեամբ և բոլոր ընտրողութիւնով, 10 – Որպէս զի դուք տարբեր բաները զատնաք, որպէս զի Քրիստոսի օրը անկեղծ և առանց գայթակղութեան ըլլաք. 11 – Արդարութեան պտուղներով լցուած՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ փառքին ու գովեստին համար։

12 – Կ'ուզեմ որ գիտնաք, եղբայրներ, թէ ինչ որ ինծի պատահեցաւ՝ ա'լ աւելի աւետարանին յառաջդիմութեանը պատճառ եղաւ. 13 – Մինչև իմ կապերս, որոնք Քրիստոսի համար են, բոլոր պալատին մէջ և ուրիշ ամէնուն ալ յայտնի եղան. 14 – Եւ Տէրոջմով եղբայրներուն շատերը սիրտ առին իմ կապերս՝ ա'լ աւելի համարձակիլ Աստուծոյ խօսքը խօսելու առանց վախի։ 15 – Ոմանք նախանձէ ու հակառակութենէ և ոմանք բարեհաճութենէ քարոզեն Քրիստոսը կը քարոզեն. 16 – Ոմանք հակառակութեան համար Քրիստոսը կը պատմեն, ոչ թէ անկեղծութեամբ, կարծելով վիշտ աւելցնել իմ կապերուս վրայ. 17 – Իսկ ասոնք սիրոյ համար, վասն զի գիտեն թէ ես աւետարանին համար պատասխան տալու կեցեր եմ։ 18 – Բայց ի՞նչ է. ա'ր կերպով որ ըլլայ, թէ՛ պատճառանքով և թէ՛ ճշմարտութիւնով, Քրիստոս կը պատմուի, ու ասոր վրայ ուրախ եմ և ուրախ ալ պիտի ըլլամ։ 19 – Քանզի գիտեմ որ ասոր վախճանը իմ փրկութեանս համար պիտի ըլլայ ձեր խրնդրուածքովը, ու Յիսուս Քրիստոսի Հոգւոյն օգնականութիւնովը, 20 – Իմ ետնդնէն ակնկալութեանս ու իմ յոյսիս համեմատ, որ բանի՛վ մը ամօթով պիտի չըլլամ. հապա կատարեալ համարձակութիւնով՝ ինչպէս ամէն առեն՝ նայելու ալ հիմա Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի փառաւորի՝ թէ՛ ապրելով և թէ՛ մեռնելով։ 21 – Վասն զի ինծի համար՝ ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը՝ օգուտ. 22 – Այս եթէ մարմինի մէջ ապրիլս իմ գործիս պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր ո'րը ընտրեմ։ 23 – Երկուս կողմանէ ալ նեղը մնացած եմ, մեկնելու ու Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով. քանզի այն շատ աւելի աղեկ է, 24 – Բայց մարմինի մէջ կենալը ձեզի համար աւելի հարկաւոր։ 25 – Եւ այս բանին համոզուած ըլլալով գիտեմ որ ձեր ամէնուն հետ պիտի կենամ ու մնամ, որպէս զի դուք զարգանաք և ուրախ ըլլաք հաւատքով. 26 – Որպէս զի ձեր պարծանքը իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով իմ նորէն ձեզի գալուս պատճառաւ։

27 – Միայն թէ Քրիստոսի աւետարանին ընչպէս կը վայլէ՝ այնպէս վարուեցէք. որպէս զի եթէ գամ ու ձեզ տեսնեմ, և կամ հեռու ըլլամ, ձեր վրայովը լսեմ որ դուք հաստատուն կը կենաք մէկ հոգիով, ու մէկ շունչով պատերազմելով կ'ըլլաք աւետարանին հաւատքին համար. 28 – Եւ բնաւ մէն ալ մի զարհուրիք հակառակորդներէն, որ անոնց կորստեան ապացոյց մըն է, ու ձեզի՝ փրկութեան. 29 – Քանի ալ Աստուծմէ է. վասն զի ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա ան նոր համար չարչարուիլ ալ, 30-Նոյն պատերազմն ունենալով՝ զոր իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը լսէք։

### ԳԼ. Բ

Ուստի եթէ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ, եթէ սիրոյ սփոփանք մը, եթէ Հոգիի հաղորդութիւն մը, եթէ գթութիւն ու ողորմութիւն մը, 2 – Իմ ուրախութիւնս դուք լեցուցէք, նոյն խորհուրդը ունենալով, միևնոյն սէրը չէր ունենալով, մէկ շունչ, մէկ միտք մնալով։ 3 – Ոչ մի գրդռութիւնով կամ ինապարծութիւնով մի ընէք. հապա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք. 4-Մէյնդ անձերնուդ չնայի մի նայիր. հապա ամէն մէկը էր ընկերին ալ։ 5 – Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջ էր. 6 – Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, *յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը. 7 – Հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանքովը մարդու պէս գտնուելով, 8 – Ինքզինք խոնարհեցուց, մինչև մահուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին մահուանը։ 9 – Ասոր համար

*Կամ՝ յափշտակելու բան

*Որան 17երորդ գոնը 16երորդին ա-ոոջ կը գտնի

Աստուած ալ զանիկա խիստ բարձրացուց, ու անոր անուն մը տուաւ՝ որ ամէն անունէն վեր է. 10-Որպէս զի Յիսուսի անունին ամէն ծունկ ծռի, երկնաւորներուն ու երկրաւորներուն և անդտրաս մեռելականներուն, 11 – եւ ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին համար: 12-Ուստի, իմ սիրելիներս , ինչպես ամէն ատեն հնազանդ եղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ա՛լ աւելի հիմա , իմ բացակայութեանս ատեն, ահով ու դողով անձերնիդ փրկութիւնը գործեցէք. 13 – Վասն զի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու քննելը էր հաճութեանը համար : 14 – Ամէն բան առանց տրտունջներու ու վիճաբանութիւններու ըրէք. 15 – Որպէս զի ըլլաք ամբիծ ու անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրելիքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ գոնէ լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհի մէջ, 16 – կենաց խօսքը ամուր բռնելով՝ ինձի պարծանք ըլլալու համար Քրիստոսի օրը, թէ պարապ տեղ չընթացայ, և պարապ տեղ չաշխատեցայ: 17-Բայց թէ եւ ձեր հաւատքին պատարագին ու ծառայութեան վրայ ընծայուիմ , կ'ուրախանամ և ձեր ամէնուն ուրախակից կ'ըլլամ . 18 – Նոյնպէս ալ գոնէ ուրախացէք ու ինծի ուրախակից եղէք:

19 – Արդ կը յուսամ Տէր Յիսուսով՝ որ Տիմոթէոսը շուտով ձեզի ղրկեմ, որպէս զի իմ սիրտս ալ հանդչի , երբ ձեր վիճակը գիտնամ: 20 – Վասն զի անոր նման սրտակից մէկը չունիմ, որ մտերմութեամբ ձեզի համար հոգ տանի: 21 – Քանզի ամէնը իրենցը կը փնտռեն՝ ու ոչ թէ Յիսուս Քրիստոսին : 22 – Բայց գոնէ անոր փորձը գիտէք , որ ինչպես որդի մը հօրը հետ՝ այնպես ինծի հետ ծառայութիւն ըրաւ ուրախութեան մէջ : 23 – Ուստի կը յուսամ զանիկա ղրկել շուտ մը՝ իմ ինչպես ելլուիքս տեսնեմիս պէս: 24 – Բայց վստահութիւն ունիմ Տէրոջմով՝ որ ես ալ քիչ ատենէն պիտի գամ : 25 – Միայն թէ հարկաւոր սեպեցի Եպափրադիտոս իմ եղբայրս և գործակիցս ու զինուորակիցս , ձեր ղրկածը ու իմ պիտոյքիս ծառայողը : 26 – Որովհետև ինք ալ շատ փափաք ունէր ձեզ ամէնդ ալ [տեսնելու]. ու կը տրտմէր , որ դուք լսած էիք թէ ինք հիւանդացաւ : 27 – Եւ արդարև ինք հիւանդացաւ մինչեւ մահ, բայց Աստուած ողորմցաւ անոր . ոչ թէ միայն անոր՝ հապա ինծի ալ , որպէս զի տրտմութեան վրայ տրտմութիւն չունենամ: 28 – Ասոր համար աւելի փութով ղրկեցի , որպէս զի դուք զանիկա տեսնելով նորէն ուրախ ըլլաք, ու ես առանց տրտմութեան ըլլամ : 29 – Ուրեմն ընդունեցէք զանիկա Տէրոջմով՝ ամէն ուրախութեամբ , ու այնպիսիները պատուականներու կարգը բռնեցէք . 30 – Քանզի Քրիստոսի գործին համար մինչև մահուան մտեցաւ՝ իր կեանքը վտանգի մէջ ձգելով, որպէս զի ձեր ինծի ծառայելու պակասութիւնը լնայ ինձ:

## ԳԼ. Գ

Ուստի, իմ եղբայրներս, ուրախ եղէք Տէրոջմով. նոյն բաները ձեզի գրել ինծի ձանձրութիւն չէ, ու ձեզի ապահովութիւն է: 2 – Զգուշացէք շուներէն, զգուշացէք չար մշակներէն, զգուշացէք կրճատութենէն, 3 – Վասն զի թլփատութիւնը մենք ենք, որ Հոգիով Աստուած կը պաշտենք, ու կը պարծննանք Քրիստոս Յիսուսով , և մարմնի վրայ չենք վստահութիւնիս : 4 – Թէպէտ ես ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմնի վրայ. եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնի վրայ, ալ աւելի ես. 5 – Ութ օրուան թլփատուած , Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի Եբրայեցիներէ, օրէնքին նայելով փարիսեցի. 6 – Նախանձաւոր ըլլալու կողմանէ՝ եկեղեցին կը հալածէի. օրէնքին արդարութեանը կողմանէ անարատ էի: 7 – Բայց ինչ որ ինծի շահ էր, զանիկա Քրիստոսի համար վնաս սեպեցի: 8 – Եւ իրաւ բոլոր բաները ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գերազանց գիտութեանը համար, որու համար ամէն բանէն զրկուեցայ, և աղտեղութիւն կը սեպեմ, որպէս զի Քրիստոսը շահիմ, 9 – Ու իր մէջ գտնուիմ , ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, հապա Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէ է հաւատքով: 10 – Ճանչնալու զանիկա և անոր յարութեանը զօրութիւնը ու անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը , անոր մահուան կերպարանքը առնելով . 11 – Որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնիմ: 12 – Ոչ թէ ես արդէն առեր եմ, կամ արդէն կատարեալ եղեր եմ, հապա եռանդ ընկած եմ որ բռնեմ հրցանէը , որու համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ : 13 – Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռներ եմ. բայց բան մը կայ , որ եռանդ եմ, ու առջևի եղածներուն կը դիմեմ. 14- Նպատակը դիտելով Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեմ : 15 – Ուստի մենք ամէնս որ կատարեալ ենք՝ ասիկա խորհինք, և եթէ բան մը ուրիշ կերպով խորհելու ըլլաք , զանիկա ալ ձեզի պիտի յայտնէ Աստուած : 16 – Միայն թէ ինչ որ հասեր ենք, նոյն կանոնին համեմատ քալենք , նոյն խորհուրդը ունենանք: 17 – Ինծի նմանողներ եղէք, եղբայրներ , ու նայեցէք անոնց որ այնպես կը քալեն , ինչպես մեզ ձեզի օրինակ ունիք: 18 – Վասն զի շատերը կը քալեն , որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսեի , և հիմա լալով ալ կը դրուագեմ , այսինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն համար . 19 – Որոնց վերջը կորուստ է , որոնց աստուածը էրենց որովայնն է , ու անոնց փառքը իրենց ամօթն է, որոնք միտքերը երկրաւոր բաները կը մտածեն: 20 – Բայց մեր *քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ ալ Փրկչին կը սպասենք, Տէր Յիսուս Քրիստոս. 21 – Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմնին կերպարանակից ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնը իրեն տակ հնազանդեցնելու:

## ԳԼ. Դ

Ուստի, իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս , իմ ուրախութիւնս ու պսակս, այսպէս տոտատուն կեցէք Տէրոջմով, սիրելիներս:

2 – Եւոդիայի կ'աղաչեմ ու Սինտիքի կ'աղաչեմ, որ միևնոյն խորհուրդը ունենան Տէրոջմով : 3 – Իրաւ քեզի ալ կ'աղաչեմ, էմ հարազատ լծակից, դուն ալ օգնական եղիր անոնց, որոնք ինծի հետ աշխատեցան աւետարանին մէջ Կղեմէսի և իմ ուրիշ գործակիցներուս հետ, որոնց անունները կենաց գիրքին մէջ են . 4 – Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ, ուրախ եղէք: 5 – Ձեր քաղցրութիւնը ամէն մարդոց թող յայտնի ըլլայ. Տէրը մօտ է: 6 – Բնաւ մի՛ հոգար հապ մի ընէք. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մեզկանէք, ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ : 7 – Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ : 8 – Վերջապէս, եղբայրներ , ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պատկառութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն և ինչ գովութիւն որ կայ, այն բաները խորհեցէք : 9 – Ինչ որ սորվեցաք ու առաք և լսեցիք ու տեսաք իմ վրաս, զայն ըրէք. և խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

10-Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, որ իմ վրաս ուշեցաք հոգերնիդ հիմա նորոգուեցաւ, ինչպես կը հոգայիք ալ, միայն թէ պատեհութիւն չունէիք : 11 – Ոչ թէ կարօտութեան համար կ'ըսեմ. վասն զի ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ : 12- Գիտեմ չքաւորութիւն քաշելը , գիտեմ շատ ալ ունենալը. ամէն բանի մէջ ամէն կերպով ազէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը, թէ՛ անօթենալը, թէ՛ շատ ունենալը և թէ՛ պակասութիւն քաշելը: 13 – Ամէն բանի կարող եմ *անով՝ որ զիս զօրացուց: 14 – Բայց ազէկ ըրիք որ իմ նեղութեանս մէջ ինծի հաղորդ եղաք: 15 – Դուք ալ գիտէք, Փիլիպպեցիներ, որ աւետարանին սկիզբը երբ ես Մակեդոնիայէ ելայ, եկեղեցի մըն ալ ինծի հետ հաղորդութիւն չբրաւ տալու և առնելու կողմէ, հապա միայն դուք. 16 – Որ Թեսաղոնիկէի մէջ ալ մէկ երկու անգամ ինծի պէտք եղածը ղրկեցիք: 17 – Ոչ թէ ես տուրքը կը փնտռեմ, հապա պտուղ կը փընտռեմ՝ որ ձեր հաշիւին վրայ աւելնայ:

*Կամ, կենցաղավարութիւնը

*Ովանէ, Քրիստոսով

18 – Բայց ես ամէն բան առած եմ ու առատօրէն ունիմ . լցուած եմ՝ եպափրոդիտոսի ձեռքով ձեր ղրկածներէդ ընդունելով , որ անոյշ հոտ մըն է , ընդունելի պատարագ , Աստուծոյ հաճելի : 19 – Եւ իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պիտի լեցնէ իր ճոխութեանը չափովը փառքով՝ Քրիստոս Յիսուսի ձեռքով : 20 – Արդ Աստուծոյ ու մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

21 – Բարև ըրէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յիսուսով : 22 – Ձեզի բարև կ'ընեն ինծի հետ եղող եղբայրները : 23 – Ձեզի բարև կ'ընեն բոլոր սուրբերը , մանաւանդ անոնք որ Կայսրին տունէն են : 24 – Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ : Ամէն :

## ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԱՌ ԿՈՂՈՍՍԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս , Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը , և Տիմոթէոս եղբայրը , 2-Կողոսայի մէջ եղող սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն Քրիստոսով . 3 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուածմէ մեր Հօրմէն *և Տէր Յիսուս Քրիստոսէ :

Ամէն առեն ձեզի համար աղօթք ընելով՝ կը գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրմէն , 4-Լսելով ձեր հաւատքը՝ որ Քրիստոս Յիսուսի վրայ , և այն սէրը՝ որ բոլոր սուրբերուն վրայ ունէք· 5 – Ամէն յոյսին համար որ երկինքը կը պահուի ձեզի , որուն վրայով առաջուընէ լսեցիք աւետարանին ճշմարտութեան խօսքը· 6 – Որ ձեզի հասաւ՝ ինչպէս բոլոր աշխարհի , ու պտղաբեր ըլլալով [կ'աճի] , ինչպէս ձեր մէջ ալ , այն օրէնէն որ դուք լսեցիք ու ճանչցաք Աստուծոյ շնորհքը ճշմարտութեամբ . 7 – Ինչպէս սորվեցաք մեր սիրելի ծառայակիցն Եպափրասէ , որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մըն է Քրիստոսի· 8 – Որ ինք ալ մեզի պատմեց ձեր սէրը Հոգիով :

9 – Անոր համար մենք ալ , այն օրէնէն որ լսեցինք , չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէ ու խնդրուածք մատուցանելէ , որ կատարեալ ըլլաք անոր կամքին գիտութիւնովը բոլոր իմաստութիւնով ու հոգևոր հանճարով · 10 – Որպէս զի գուք Տէրոջը արժանի կերպով քալէք ամէն բանի մէջ վեր հաճեցնելով , ամէն բարի գործերու մէջ պտղաբեր ըլլալով , ու աճելով Աստուծոյ գիտութիւնովը· 11 – Իր փառաւոր զօրութեանը համեմատ ամենայն ուժով ուժոյցած՝ բոլոր համբերութեան ու երկայնմտութեան համար ուրախութեամբ · 12 – Գոհանալով Հօր Աստուծոյ , որ մեզ լուսոյ մէջ ընդունելութեան արժանի ըրաւ սրբոց ժառանգութեան մէջ · 13 – Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն , ու իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը փոխադրեց · 14 – Որով մենք փրկութիւն ունինք իր արիւնովը , այսինքն մեղքի թողութիւն · 15-Որ աներևոյթի Աստուծոյ պատկերն է , բոլոր ստեղծուածներուն անդրանիկը · 16 – Վասն զի անով ամէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ , անունք որ կ'երևնան և անունք որ չեն երևնար , թէ՛ աթոռները , թէ՛ տէրութիւնները , թէ՛ պետութիւնները , թէ՛ իշխանութիւնները . բոլոր բաները ստեղծուեցան անով ու անոր համար · 17 – Ու անիկա ամէն բանէ առաջ է , և ամէն բան անով հաստատ կը կենայ· 18 – Եւ անիկա է մարմինին , այսինքն եկեղեցւոյն , գլուխը . որ սկիզբն է , մեռելներէն անդրանիկը , որպէս զի ինք ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ . 19 – Վասն զի Հայրը հաճեցաւ որ Ամբողջութիւն բոլոր լեցուներ անոր մէջ բնակի · 20 – Եւ ստնով ամէնը հաշտեցնէ իրեն հետ , խաղաղութիւն ընելով անոր խաչին վրայ թափած արիւնովը , թէ՛ երկրի վրայ և թէ՛ երկինքի մէջ եղողները :

21 – Եւ ձեզ ալ , որ առեն մը օտարացած էիք , ու չար գործերով թշնամիներ՝ ձեր խորհուրդներովը , 22-Հիմա հաշտեցուց բնաւ իր մարմինովը՝ մահուամբ , որպէս զի ձեզ անոր դիմաց սուրբ ու անբիծ և անարատ կացնեցնէ· 23 – Եթէ կենաք հաստատի մէջ հիմնուած ու հաստատ և առանց խախտելու աւետարանին յոյսէն զոր լսեցիք , որ երկինքի տակ եղած բոլոր ստեղծուածներուն քարոզուեցաւ , որու ես Պօղոս պաշտօնեայ եղայ· 24 – Հիմա ուրախ եմ ձեզի համար իմ չարչարանքներուս վրայ , ու Քրիստոսի նեղութիւններուն պակասութիւնը իմ մարմինիս մէջ կը լեցնեմ անոր մարմնին համար , որ եկեղեցին է · 25 – Որու ես պաշտօնեայ եղայ Աստուծոյ անհատութիւնովը՝ որ ինծի տրուեցաւ ձեզի համար՝ Աստուծոյ խօսքը լման քարոզելու , 26 – Այն խորհուրդը՝ որ ծածկուած էր աշխարհէն դարերէն ու ազգերէն հետէ , ու հիմա իր սուրբերուն յայտնուեցաւ· 27 – Որոնց ուզեց Աստուած գիտցնել , թէ ի՞նչ է այս խորհուրդին փառաւոր ճոխութիւնը հեթանոսներուն մէջ · որ է Քրիստոս ձեր մէջ , փառքի յոյսը· 28 – Զոր մենք կը քարոզենք , ու ամէն մարդ կը խրատենք , և կը սորվեցնենք ամէն մարդ բոլոր իմաստութիւնով , որպէս զի ամէն մարդ կատարեալ կեցնենք Քրիստոս Յիսուսով · 29 – Որու համար ես ալ կ'աշխատիմ , ջանք ընելով իր ներգործութեանը համեմատ , որ զօրութիւնով իմ մէջս է գործ կը դնէ :

### ԳԼ· Բ

Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ ի՛նչպէս մեծ անձկութիւն ունիմ ձեզի համար ու Լաւոդիկեացւոց համար , ու ամէն անոնց համար՝ որոնք իմ երեսս մարմինով չեն տեսեր · 2 – Որպէս զի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով միացած , ու կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեանը հասնին , այսինքն Հօր Աստուծոյ և Քրիստոսի խորհուրդին գիտութեանը· 3 – Որուն մէջ իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը պահուած են : 4 – Եւ այս կ'ըսեմ , որ չըլլայ թէ մէկը հրապուրական խօսքերով ձեզ մոլորեցնէ· 5 – Որ թէպէտ մարմնով հեռու եմ , բայց հոգով ձեզի հետ եմ , և կ'ուրախանամ երբ ձեր բարեկարգութիւնը կը տեսնեմ , ու ձեր հաւատքին հաստատութիւնը՝ Քրիստոսի վրայ· 6 – Ուստի ինչպէս ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը , անով քալեցէք , 7 – Արմատակապած ու անոր վրայ շինուած , ու հաստատքին մէջ հաստատուած՝ ինչպէս սորվեցաք , և անոր մէջ աճեցէք գոհութիւնով · 8 – Զգուշացէք , չըլլայ որ մէկը ձեզ գերի վարէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց աւանդութեան պէս է — աշխարհի սկզբունքներուն պէս , և ոչ թէ Քրիստոսի վերաբերեալ պէս· 9 – Վասն զի անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը մարմնապէս : 10 – Եւ դուք ալ անով լցուած էք , որ գլուխ է բոլոր իշխանութեան ու պետութեան · 11 – Որով դուք անձեռագործ թլփատութիւնով թլփատուեցաք *մեղաց մարմինը մերկանալով , Քրիստոսի թլփատութիւնովը · 12 – Թաղուելով անոր հետ մկրտութիւնով , որով նաև անոր հետ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալով , որ զանիկա մեռելներէն յարուցէ : 13 – Եւ ձեզ , որ ապիկ էք յանցանքներու մէջ ու ձեր մարմնին անթլփատութեան մէջ մեռած էիք , կենդանացուց անոր հետ . ձեր ամէն յանցանքները ներէց մեզի , 14 – Ու ջրմաններով եղած մեզի հակառակ եղող ձեռագիրը , որ մեզի դէմ կը կենար , ջնջեց , զանիկա մէջտեղէն վերցուց , ու խաչափայտին վրայ գամեց , 15 – Եւ իշխանութիւնները ու պետութիւնները մերկացուց , ու յայտնապէս խայտառակեց՝ յաղթելով անոնց †անով :

16 – Ուստի ալ մէկը թող չդատէ ձեզ ուտելու կամ խմելու , կամ տօ-

*Յոյն. մարմնի մեղաց

†Կամ , իր անձովը

Ներսե կամ ամմագլուխներսե կամ շաբաթներսե կազմնեն, 17 – Որոնք գալս բառերսեն շաբեն են, բայց բոլոր մարմինը Քրիստոսին է։ 18 – Զքրիստ որ մեկը զրկէ ձեզ մրցանակին, որ ուզէ խոնարհութիւնով ու հրեշտակներսե կրօնքով չտեսած բաներսեն վիջամուխ ըլլալ, իր մարմնին միտքովը փուճ տեղ հպարտանալով. 19 – Եւ չբռնէ գլուխը՝ ուրկէ ըոլոր մարմինը յօդակապներով ու խարիսխով հաղորդուած ու մկռտուդ կցուած՝ Աստուծոյ աճումովը կ'աճի։ 20 – Իսկ եթէ դուք Քրիստոսի հետ այս աշխարհին սկզբունքներէն մեռաք, ալ ինչո՞ համար աշխարհի մէջ կենդանի եղողներսե պես այսպէս կանոններու կը հնազանդիք, ըսելով. 21- Մի մծաներնար, համը մի առներ, մի դպչիր, 22 – (Որոնց ամէնը ապականութեան համար են գործածութեամբ,) մարդոց պատուիրանքներսեն ու սորվեցուցածներսեն համեմատ, 23 – Որոնք իմաստութեան կերպարանք մը ունին ինքնակամ կրօնքով ու խոնարհութիւնով և մարմնին չխնայելով, բայց ոչ թէ պատիւի մը արժանէ են, հապա մարմինը յագեցնելու չէ օգտակէ։

## ԳԼ. Գ

Աթդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը։ 2 – Վերի բաները մտածեցէք, ոչ թէ այս երկրին վրայինները։ 3 – Վասն զի դուք մռեաք, ու ձեր կեանքը պահուած է Աստուծոյ քով Քրիստոսի հետ։ 4 – Երբ Քրիստոս, մեր կեանքը, յայտնուի, այն ատեն դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնուիք։

5 – Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէք. պոռնկութիւնը, պղծութիւնը, անասնոյ կիրքը, չար ցանկութիւնը և ագահութիւնը, որ կռապաշտութիւն է. 6 – Որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որդիներուն վրայ կու գայ. 7 – Որոնց մէջ ատեն մը դուք ալ կը քալէիք, երբ անոնց մէջ կ'ապրէիք ։ 8 – Բայց հիմա մեկդի ձգեցէք դուք ալ այն ամէնը. բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անհամեստ խօսքերը ձեր բերաններէն ։ 9 – Իրարու սուտ մի ըսուցէք. հին մարդը իր գործերովը ձեր վրայէն հանեցէք. 10 – Եւ հագէք այն նորը որ գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղծողին պատկերին պէս. 11 – Ուր Յոյն ու Հրեայ, թլփատութիւն ու անթլփատութիւն, Բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ. հապա Քրիստոս է ամէնը՝ և ամէն բանի մէջ ։ 12 – Ուստի Աստուծոյ ընտրեալ սուբերներու և սիրելիներու պես ձեր վրայ հագէք գութը, ողորմածութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայնմտութիւնը, 13 – Իրարու համբերելով և իրարու ներելով՝ եթէ մեկը մեկուն դէմ տրտունջ մը ունենայ. ինչպէս Քրիստոս ձեզի ներեց, նոյնպէս ալ դուք։ 14 – Եւ այս ամէն բաներուն վրայ սէրը հագեցէք, որ կատարելութեան կապն է ։ 15 – Ու *Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սիրտերուն մէջ թագաւորէ, որու դուք կանչուեցաք մեկ մարմնով. ու գոհացող եղէք ։ 16 – Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի առատապէս ամէն իմաստութիւնով՝ իրար սորվեցնելու ու խրատելու՝ սաղմոսներով և օրհնութիւններով ու հոգևոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհքով զԱստուած օրհնելու ։ 17 – Եւ ամէն ինչ որ կ'ընէք թէ՛ խօսքով և թէ՛ գործով՝ բոլորը Տէր Յիսուսի անունովը ընէք, Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցանելով անոր ձեռքով։

18 – Կիներ, հնազանդ եղէք ձեր այրերուն, ինչպես կը վայլէ Տէրոջմով։ 19 – Ամրեր, սիրեցէք ձեր կիները, ու դառն մի ըլլաք անոնց։ 20 – Որդիներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողներուն, վասն զի այն է Տէրոջը առջև հաճելի։ 21 – Հայրեր, ձեր որդիները մի բարկացնէք, որպէս զի չվհատին։ 22 – Ծառաներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն, ոչ թէ աչքի առջև ծառայելով մարդահաճներու պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով. 23 – Ինչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջը ու ոչ թէ մարդոց, 24 – Գիտնալով որ ժառանգութեան վարձքը Տէրոջմէ պիտի առնէք. վասն զի Տէր Քրիստոսի կը ծառայէք. 25 – Բայց անօրէնը իր անօրէնութեան պատիժը պիտի ընդունի, և աչառութիւն չկայ։

*Ոմանք, Քրիստոսի



## ԳԼ. Գ

Տէրեր, ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը։

2 – Շարունակ աղօթքի հաւէք եղէք, անոր մէջ արթուն մնալով գոհութեամբ ։ 3 – Աղօթք ըրէք նաև մեզի համար, որպէս զի Աստուած խօսքին դուռը բանայ մեզի Քրիստոսի խորհուրդը խօսելու, որու համար կապուած ալ եմ՝ ։ 4 – Որպէս զի յայտնի ընեմ զանիկա՝ ինչպէս ինծի կը վայլէ խօսիլ ։ 5 – Խոհեմութեամբ վարուեցէք դուրսինները՝ ժամանակը ծախսե առնելով ։ 6 – Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով, աղով եփ ըսուած, գիտնալով թէ ինչպես կը վայլէ ձեզի ամէն մէկուն պատասխան տալ։

7 – Ալ իմ վրայովս բոլորը պիտի իմացնէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան ու ծառայակիցը Տէրոջմով։ 8 – Զոր այդ բանին համար ձեզի զրկեցի, որպէս զի *գիտնայ ձեր վրայով, ու ձեր սիրտերը մխիթարէ, 9 – Ոնեսիմոս հաւատարիմ ու սիրելի եղբօր հետ մէկտեղ, որ ձեզմէ ինն է. իրենք ամէն բանը ձեզի պիտի իմացնեն՝ ինչ որ հոս կայ։ 10 – Բարև կ'ընէ ձեզի Արիստարքոս, իմ գերեվարեալ ընկերս, և Մարկոս, Բառնաբասի եղբօրորդին, (որու համար պատուէր առիք. եթէ ձեզի գայ ընդունեցէք զանիկա,) 11 – Եւ Յիսուս՝ որ Յուստոս ըսուած է, որոնք թլփատութենէն են. ասոնք միայն՝ Իմ գործակից եղան Աստուծոյ թագաւորութեանը մէջ, որոնք ինծի մխիթարութիւն եղան։ 12 – Բարև կ'ընէ ձեզի Եպափրաս, Քրիստոսի ծառան, որ ձեզմէ ինն է, ամէն ատեն աղօթքին մէջ ձեզի համար ջանք ընելով, որպէս զի դուք կատարեալ ու լման կենաք Աստուծոյ բոլոր կամքին մէջ ։ 13 – Վկայ եմ անոր վրայով ես կը վկայեմ, թէ շատ նախանձաւորութիւն ունի ձեզի համար ու Լաւոդիկէի և Յիերապոլիսի մէջ եղողներուն համար։ 14 – Բարև կ'ընէ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկը ու Դեմաս ։ 15 – Բարև ըրէք եղբայրներուն, որոնք Լաւոդիկիա են, և Նիմփասի ու անոր տանը մէջի եկեղեցիին։ 16 – Ու երբ այս թուղթը ձեր մէջ կարդացուի, Լաւոդիկեացւոց եկեղեցիին մէջ ալ կարդալ տուէք. և դուք ալ Լաւոդիկիայէ եկածը կարդացէք։ 17 – Ու ըսէք Արքիպպոսի, Զգուշ եղիր քու սպասաւորութեանդ զոր Տէրոջմով տուիր, որ զանիկա կատարես։ 18 – Ա,յս բարևը իմ ձեռքիս՝ Պօղոսին է. իմ կապերս միտքերնիդ թող բլլան։ Շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցիին Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով. 2 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի

*Ոմանք, գիտնաք մեր վրայով ու ինչ ձեր

*Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

Կը գոհանանք Աստուծմէ ամէն ատեն ձեր ամէնուն համար՝ ձեզ յիշելով մեր աղօթքներուն մէջ ։ 3 – Անդադար յիշելով ձեր հաւատքին գործը ու սիրոյ աշխատութիւնը և մեր

*Ոմանք չտեսնէն

Տէր Յիսուս Քրիստոսի յոյսին համեմատութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօրը առջև. 4 – Եւ գիտնալով, Աստուածմէ սիրուած եղբայրներ, ձեր ընտրութիւնը. 5 – Որ մեր աւետարանը ոչ թէ միայն խօքով եղաւ ձեզի, հապա զօրութիւնով ալ և Հոգւով Սրբով ու շատ ապացուցութիւնով, ինչպէս գիտէք ալ թէ ինչպէս կեցանք ձեր մէջ ձեզի համար: 6 – Դուք ալ մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունեցիք խօքը շատ նեղութեան մէջ Հոգւոյն Սրբոյ ուրախութիւնովը. 7 – Այնպէս որ դուք օրինակ եղաք բոլոր Հաւատացեալներուն, որոնք Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ են: 8 – Վասն զի ձեզմէ հնչակուեցաւ Տէրոջը խօքը, ոչ թէ միայն Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ, հապա նաև ամէն տեղ ձեր հաւատքը, որ դէպ ի Աստուած է, տարածուեցաւ, այնպէս որ ա՛լ պէտք չէ մեզի բան մը խօսիլ: 9 – Քանզի իրենք կը պատմեն մեզի համար, թէ ինչպէս եղաւ մեր ձեր քով մտնելը, և ինչպէս դուք կուգերէն Աստուծոյ դարձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու, 10 – Եւ սպասելու անոր Որդւոյն՝ երկինքէն. զոր յինք մեռելներէն յարուցց, այսինքն Յիսուսը, որ կ'ազատէ մեզ գալու բարկութենէն:

## ԳԼ. Բ

Քանզի, եղբայրներ, դուք ինքնիրենիդ գիտէք ձեր մէջ մտնելնիս՝ որ պարապ տեղ չեղաւ. 2-Հապա առաջ Փիլիպպէի մէջ չարչարանք կրելով ու անարգուելով, ինչպէս գիտէք, համարձակութիւն ըրինք մեր Աստուածովը ձեզի պատմել Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութեան մէջ: 3 – Վասն զի մեր յորդորանքը ոչ մոլորութենէ է ու ոչ պղծութենէ և ոչ խաբէութեամբ. 4 – Հապա ինչպէս մենք Աստուծմէ ընտրուեցանք ու աւետարանը ձեզի հաւատացուեցաւ, այնպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, հապա Աստուծոյ՝ որ մեր սիրտերը կը քննէ. 5 – Վասն զի մենք բնաւ շողոքորթութեան խօքեր չգործածեցինք, ինչպէս գիտէք, ոչ ալ ագահութեան պատճառանք, Աստուած վկայ է, 6 – Եւ մարդոցմէ փառք չխնդրեցինք, ոչ ձեզմէ՝ ոչ ալ ուրիշներէն, 7 – Թէև կրնայինք իբրև Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն տալ. բայց մենք հեզ եղանք ձեր մէջ, ինչպէս դայեակ մը իր երախաները կը խնամէ: 8 – Նոյնպէս ալ մենք ձեր վրայ փափաք ունենալով՝ կը յօժարէինք, ոչ միայն Աստուծոյ աւետարանը ձեզի տալ, հապա մեր անձերն ալ. վասն զի դուք մեզի սիրելիները եղաք: 9 – Քանզի կը յիշէք, եղբայրներ, մեր աշխատութիւնը ու չարքը, որ ձեզմէ մի՛ կուզեն ծանրութիւն չտալու համար գիշեր ու ցորեկ գործելով՝ ձեզի Աստուծոյ աւետարանը քարոզեցինք: 10-Դուք վկայ էք, և Աստուած ալ՝ թէ ինչպէս սրբութիւնով ու արդարութիւնով և անարատութիւնով վարուեցանք ձեզի հետ՝ որ հաւատացիք. 11 – Ինչպէս գիտէք ալ, որ ձեզմէ ամէն մէկը, ինչպէս հայր մը իր որդիները՝ 12 – Աչքալեա կը յորդորէինք ու կը մխիթարէինք և վկայութիւն կը դնէինք, որպէս զի դուք Աստուծոյ վայելուչն պէս քալէք, որ ձեզ իր թագաւորութեանը ու փառքին կանչէց: 13 – Այսու համար մենք ալ անդադար կը գոհանանք Աստուծմէ, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով ընդունեցիք, ոչ թէ իբրև մարդոց խօսք, հապա, ինչպէս ճշմարտապէս է, Աստուծոյ խօսք, որ նաև կը ներգործէ ձեր մէջ որ կը հաւատաք: 14 – Քանզի դուք, եղբայրներ, նմանողներ եղաք Աստուծոյ եկեղեցիներուն, որոնք Հրէաստանի մէջ են Քրիստոս Յիսուսով. վասն զի դուք ալ նոյն ջարդարարներէն կրեցիք ձեր համազգիներէն, ինչպէս անոնք ալ՝ Հրեաներէն. 15 – Որոնք Տէր Յիսուսն ալ մեռցուցին՝ *մարգարէներն ալ, և մեզ հալածեցին, ու Աստուծոյ անհաճոյ՝ և բոլոր մարդոց հակառակ են. 16 – Ու մեզ կ'արգիլեն հեթանոսներուն խօսելէ անոնց փրկութեան համար, որպէս զի իրենց մեղքերուն չափը լեցնեն ամէն ատեն. և բարկութիւնը անոնց վրայ հասեր է մինչև վերջը:

17 – Իսկ մենք, եղբայրներ, իրմէ քիչ մը ատեն ձեզմէ որբ մնացինք երեսով ու ոչ թէ սրտով, բայց ուրախ կանացինք ձեր երեսը տեսնել մեծ փափաքով: 18 – Անոր համար ես Պօղոս մէկ երկու անգամ ուզեցի ձեզի գալ, բայց Սատանայ մեզ արգիլեց: 19 – Քանզի ո՞վ է մեր յոյսը կամ՝ ուրախութիւնը կամ՝ պճղ պարծանքին պսակը, եթէ ոչ դուք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առջև անոր գալուստանը: 20 – Որովհետև դուք էք մեր փառքը և ուրախութիւնը:

*Ո՛մանք, իրենց մարգարէներն



## ԳԼ. Գ

Ուստի ա՛լ չկրնալով աւելի համբերել, աղեկ երևցաւ մեզի մնալ Աթենք մենակ. 2 – Եւ Տիմոթէոս մեր եղբայրը ու Աստուծոյ պաշտօնեան և մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ, զրկեցինք ձեզ հաստատելու ու մխիթարելու ձեր հաւատքին համար. 3 – Որպէս զի այս նեղութիւններուն մէջ չեզնի մի՛կը չխախտի. վասն զի դուք ինքնիրենիդ գիտէք որ մենք այդ բաներուն համար կեցեր ենք: 4 – Քանզի երբ մենք ձեր քով էինք, առաջուընէն ձեզի կը զրուցէինք թէ նեղութիւններու պիտի հանդիպինք, ինչպէս եղաւ ալ, ու գիտէք: 5 – Անոր համար ես ալ չկրնալով աւելի համբերել, *ղրկեցի ձեր հաւատքը գիտնալու, որ չըլլայ թէ փորձողը ձեզ փորձած ըլլայ, և մեր աշխատութիւնը պարապ ըլլայ: 6 – Բայց հիմա երբ Տիմոթէոս ձեզմէ մեզի եկաւ, ու ձեր հաւատքին և սիրոյն աւետիսը մեզի տուաւ, որ ամէն ժամանակ մեր բարի յիշատակը ջերմեռանդ ունիք, և կը փափաքիք մեզ տեսնել, ինչպէս մենք ալ ձեզ, 7 – Անոր համար, եղբայրներ, ձեր վրայ մխիթարուեցանք մեր բոլոր դիշերուն ու նեղութիւններուն վրայ ձեր հաւատքովը. 8 – Վասն զի կենդանի ենք մենք, եթէ դուք հաստատուն կենաք Տէրոջմով. 9 – Քանզի ի՞նչ գոհութիւն կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայով, այն ամէն ուրախութեանը համար զոր կ'ուրախանանք ձեզի համար մեր Աստուծոյն առջև, 10 – Եւ գիշեր ու ցորեկ խիստ շատ աղաչանք կ'ընենք ձեր երեսը տեսնելու, ու ձեր հաւատքին պակասութիւնները լեցնելու: 11-Բայց Աստուած ինք ու մեր Հայրը և մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեր ճամբան դէպ ի ձեզ յաջողէ: 12 – Եւ Տէրը աճեցնէ ու առելցնէ ձեր սէրը իրարու վրայ ու ամէնուն վրայ, ինչպէս մենք ալ ձեր վրայ ունինք, 13 – Հաստատելով ձեր սիրտերը անարատ, սրբութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջև, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալուստանը իր բոլոր սուրբերուն հետ մեկտեղ:

## ԳԼ. Դ

Ա՛լ հիմա, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք ու կը յորդորենք Տէր Յիսուսով, որ ինչպէս մեզմէ առաք՝ թէ ինչպէս պէտք է ձեզի քալել ու Աստուծոյ հաճոյ ըլլալ, ալ աւելի առատ չափ շատնաք: 2 – Քանզի գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսով: 3-Վասն զի Աստուծոյ կամքը այս է, պտղութեան ձեր սուրբ ըլլալը, որ դուք ետ կենաք պոռնկութենէ. 4 – Ձեզմէ ամէն մէկը գիտնայ իր ամանը սրբութիւնով ու պատուով առնալ. 5 – Ոչ թէ ցանկութեան կիրքով՝ ինչպէս հեթանոսները, որոնք զԱստուած չեն ճանչնար: 6 – Զըլլայ որ *այդ բանին մէջ չափէ անցնի ու իր եղբայրը զրկէ, վասն զի Տէրը այդ բոլոր բաներուն համար վրէժխնդիր է. ինչպէս առաջուընէն ըսինք ձեզի ու վկայութիւն տուինք: 7 – Վասն զի Աստուած մեզ պղծութեան չկանչեց, հապա սրբութեան: 8 – Ուստի ան որ կ'անարգէ՝ ոչ թէ մարդ մը կ'անարգէ, հապա զԱստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ †մեզի տուաւ:

9 – Բայց եղբայրասիրութեան վրայով պէտք չէ ձեզի բան գրել, վասն զի դուք ինքնիրենիդ Աստուծմէ սորված էք սիրել. 10 – Եւ իրաւ այդ բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի մէջ եղող ամէն եղբայրներուն. սակայն կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, որ ա՛լ աւելի առատանաք. 11 – Եւ ջանք ընէք որ հանգարտ կենաք, ու ամէն մէկդ իր գործը գործէ, ու ձեր ձեռքերովը աշխատիք, (ինչպէս ձեզի պատուիրեցինք,) որպէս զի գուրսինններուն հետ պարկեշտութեամբ վարուիք, ու ‡բանի մը՝ կարօտ չըլլաք:

12 – Ձեզ ուզեր, եղբայրներ, որ տգէտ ըլլաք ննջեցեալներուն վրայով, որպէս զի չտրտմիք ինչպէս ուրիշները՝

*Կամ, բանի մը
†Ո՛մանք, ձեզի
‡Կամ, մէկ‹ուն

որոնք յոյս չունին ։ 13 – Քանզի եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ ։ 14 – Վասն զի զայս կը զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք։ 15 – Վասն զի Տէրը ինք ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն։ 16 – Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով միասին պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջև՝ երկնքի օդին մէջ, և այնպես յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք։ 17 – Ուստի միմեանց մխիթարեցէք այս խօսքերով։

## ԳԼ. Ե

Բայց այն ժամերուն ու ժամանակներուն համար, եղբայրներ, պէտք չէ որ մը գրել ձեզի ։ 2 – Քանզի դուք ինքներնիդ ալ ճշդիւ գիտէք՝ թէ Տէրոջը օրը գիշերուան գողի պէս այնպես կը հասնի։ 3 – Երբ ըսելու ըլլան թէ խաղաղութիւն ու ապահովութիւն է, այն ատեն կորնսաւոր չանկարծակի անոնց վրայ պիտի հասնի յղիին երկունքին պէս , ու պիտի չազատին ։ 4 – Բայց դուք, եղբայրներ, խաւարի մէջ չէք, որ այն օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի ։ 5 – Վասն զի դուք ամէնդ լուսոյ որդիներ էք, ու ցորեկուան որդիներ. գիշերուանը չենք, խաւարինը չենք ։ 6 – Ուրեմն չքնանանք ինչպէս ուրիշները, հապա արթնուն ու զգաստ ըլլանք։ 7 – Քանզի անոնք որ կը քնանան, գիշերը կը քնանան, և անոնք որ կ'արբենան, գիշերը կ'արբենան ։ 8 – Բայց մենք, որովհետև ցորեկուան ենք, զգաստ ըլլանք, և հաւատքի ու սիրոյ զրահը մեր վրայ հագնինք, ու փրկութեան յոյսին սաղաւարտը ելլ–կենք գնենք։ 9 – Վասն զի Աստուած մեզ բարկութեան համար չորոշեց , հապա փրկութիւն ստանալու համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով ։ 10 – Որ մեզի համար մեռաւ, որպէս զի թէ՛ արթուն ըլլանք և թէ՛ քնանանք , իրեն հետ միկտեղ ապրինք ։ 11 – Անոր համար միզմիզ մխիթարեցէք և իրարու շինութիւն տուէք , ինչպէս կ'ընէք ալ ։

12 – Եւ ձեզի կ'աղաչենք , եղբայրներ, որ ճանչնաք ձեր աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով , ու ձեզի խրատ տալողները ։ 13 – Եւ զանոնք մեծապէս պատուեցէք սիրով իրենց գործին համար. իրարու հետ խաղաղութիւն ունեցէք ։ 14 – Եւ ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, անկարգ վարմունք ունեցողները խրատեցէք, վատասիրտները մխիթարեցէք, տկարներուն ձեռնտու եղէք, ամէնուն ալ երկայնամիտ եղէք։ 15 – Զգուշացէք, չըլլայ որ մէկը չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէ մէկուն. հապա ամէն ատեն բարիք ընելու եռանդ եղէք թէ՛ իրարու և թէ՛ ամէնուն։ 16–Ամէն ատեն ուրախ եղէք ։ 17 – Անդադար աղօթք ըրէք ։ 18 – Ամէն բանի մէջ գոհութիւն տուէք . վասն զի այս է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ։ 19 – Սուրբ Հոգին մի մնրէք ։ 20 – Մարգարէութիւնները մի արհամարհէք։ 21 – Ամէն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք ։ 22 – Ամէն տեսակ գէշ բաներէ հեռ կեցէք ։ 23 – Եւ ինք խաղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ ընէ , ու ձեր բոլոր հոգին և շունչը ու մարմինը անարատ պահուի փնջ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին ։ 24 – Հաւատարիմ է ան որ ձեզ կանչեց, որ պիտի կատարէ ալ ։

25 – Եղբայրներ, աղօթք ըրէք մեզի համար։ 26 – Բարև տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համբուրով ։ 27 – Կ'երդմնցնեմ ձեզ Տէրոջմով, որ այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն կարդացուի։ 28–Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ։ Ամէն։

# ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ մեր Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով ։ 2 – Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3 – Պարտիմք ամէն ատեն Աստուծմէ գոհանալ ձեզի համար, եղբայրներ, ինչպէս կը վայլէ. քանզի ձեր հաւատքը շատ աճելու վրայ է, և ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը շատնայ. 4 – Այնպէս որ մենք ալ ձեզմով կը պարծենանք Աստուծոյ եկեղեցիներուն մէջ՝ ձեր համբերութեանը ու հաւատքին համար ձեր բոլոր հալածանքներուն ու նեղութիւններուն մէջ՝ որոնց դուք կը համբերեք. 5 – Որ է Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցը՝ որպէս զի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեանը, որուն համար ալ նեղութիւն կը կրէք ։ 6 – Քանզի Աստուծոյ առջև իրաւունք է՝ ձեզի նեղութիւն տուողներուն նեղութիւն հատուցանել , 7 – Եւ ձեզի նեղութիւն կրողներուդ՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի երկինքէն յայտնուելուն առեն իր զօրաւոր հրեշտակներովը. 8 – Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր. 9–Որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն, 10–Երբ ինք գայ փառաւորուիլ իր սուրբերուն մէջ, և հիանալի ըլլալ բոլոր հաւատացեալներուն մէջ, (վասն զի մեր վկայութիւնը ձեր մէջ հաւատացաւեցաւ,) այն օրը։ 11 – Ասկա պատճառաւ ալ ամէն ատեն ձեզի համար աղօթք կ'ընենք, որ մեր Աստուածը ձեզ արժանի ընէ կոչումին , և իր բարութեան բոլոր հաճութիւնը կատարէ, ու հաւատքին գործը՝ զօրութեամբ։ 12–Որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, և դուք ալ անոր մէջ՝ մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համեմատ։

## ԳԼ. Բ

Կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին ու մեր անոր քով ժողովուելուն համար, 2 – Չըլլայ որ շուտ մը խախտիք չէք միտքէն, ու չըլլայ որ խռովիք՝ ոչ հոգիով ու ոչ խօսքով, ոչ ալ թուղթով մը իբր թէ մեզմէ ելած։ որպէս թէ Քրիստոսի օրը եկած հասած ըլլայ։ 3 – Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ կերպով մը. վասն զի այն օրը պիտի չգայ՝ եթէ ապստամբութիւնը առաջ չգայ, ու յայտնուի մեղսոյն մարդը , կորստեան որդին, 4 – Ան՝ հակառակորդը հպարտացած ամէնուն վրայ, որ Աստուած կ'ըսուի կամ կը պաշտուի , մինչև անիկա Աստուծոյ տաճարին մէջ *պիտի նստի, և ինքզինք ցուցնէ թէ Աստուած է։ 5 – Չէ՞ք յիշեր որ երբ ձեր քով էի, այս բաները կ'ըսէի ձեզի։ 6 – Եւ հիմա գիտէք ինքնիրեննէդ գիտէք ինչ է ան որ կ'արգիլէ, որպէս զի ինք իր ատենին յայտնուի։ 7 – Վասն զի անօրէնութեան խորհուրդը հիմակուընէ կը զօրանայ. բայց ան որ հիմա կ'արգիլէ, պէտք ուրիշէ՝ մինչև ինք ձեռքէն վերնայ։ 8 – Ու եաթը պիտի յայտնուի այն անօրէնը, զոր Տէր [Յիսուս] իր բերնին հոգիովը պիտի սպառէ, ու իր գալուն յայտնութիւնովը պիտի կորսընդնէ. 9 – Որուն գալը Սատանայէն զաղթեցութիւնովին է բոլոր զօրութիւնով և նշաններով ու սուտ հրաշքներով, 10 – Եւ կորստացներուն վրայ անիրաւութեան բոլոր խաբէութիւն

*Որ՝ն֊, Աստուծոյ պէս պիտի

նավը. որովհետև անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին՝ որ փրկուին, անոր համար Աստուած ալ պիտի ղրկէ անոնց ուժով մոլորութիւն մը՝ որ ստութեան հաւատան. 11 – Որպէս զի դատապարտուին ամէն անոնք որ չհաւատացին ճշմարտութեան, հապա ամենքն անօրէնութեան յօժարեցան։

12 – Բայց մեզի պէտք է միշտ Աստուծմէ գոհանալ ձեզի համար, Տէրոջմէ սիրուած եղբայրներ, վասն զի Աստուած առաջուընէ ձեզ ընտրեց փրկուելոյ՝ Հոգիին սրբելովը ու ճշմարտութեան հաւատքովը. 13 – Որուն ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստանալու։

14 – Ուստի, եղբայրներ, հաստատ կեցէք, ու պինդ բռնեցէք այն աւանդութիւնները զորոնք սորվեցաք թէ՛ խօսքով ու թէ՛ մեր թուղթովը։ 15 – Եւ ինք մեր Տէր Յիսուս Քրիստոս ու մեր Հայրը Աստուած, որ մեզ սիրեց ու տուաւ մեզի յաւիտենական մխիթարութիւն և բարի յոյս շնորհքով, 16 – Ձեր սիրտերը մխիթարէ և ձեզ հաստատէ ամէն բարի խօսքերու և գործերու մէջ։

## Գ.

Վերջապէս, եղբայրներ, մեզի համար աղօթք ըրէք, որպէս զի Տէրոջը խօսքը յաւաջանայ ու փառաւոր ըլլայ, ինչպէս ձեր մէջ. 2 – Եւ որպէս զի անիրաւ ու չար մարդոցմէ ազատինք. վասն զի ամէնը *հաւատք չունին. 3 – Բայց Տէրը հաւատարիմ է, որ ձեզ պիտի հաստատէ, ու չարէն պահէ։ 4 – Եւ ձեր վրայ վստահութիւն ունինք Տէրոջմով, թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք՝ կ'ընէք, ու պիտի ընէք ալ։ 5 – Եւ Տէրը ձեր սիրտերը Աստուծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը ուղղէ։

6 – Եւ ձեզի կը պատուիրենք, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ ետ քաշուիք ամէն եղբօրմէ՝ որ անկարգութեամբ կը վարուի, ու ոչ թէ այն աւանդութեանը պէս՝ զոր մեզմէ առաք։ 7 – Վասն զի դուք ինքնիներնիդ գիտէք թէ ինչպէս պարտիք մեզի նմանուիլ. քանզի մենք ձեր մէջ անկարգութեամբ չվարուեցանք, 8 – Ոչ ալ մէկուն հացը ձրի կերանք. հապա ջանքով և աշխատանքով գիշեր ու ցորեկ կը գործէինք՝ ձեզմէ մէկ'ն ծանրութիւն չտալու համար. 9 – Ոչ թէ՝ որ մենք իշխանութիւն չունէինք, հապա որ անձերնիս ձեզի օրինակ բնենք՝ որպէս զի մեզի նմանուիլ ըլլաք։ 10 – Վասն զի երբ մենք ձեր քով էինք՝ ըսինք ձեզի կը պատուիրէինք, թէ Ան որ չուզէր գործ գործել, հաց ալ թող չուտէ։ 11 – Այդ կը լսենք որ ձեր մէջէն անկարգութեամբ կը վարուին, ու գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պարապին։ 12 – Անդիսիներուն պատուէր կու տանք ու կ'աղաչենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ հանդարտութեամբ գործեն և իրենց հացը ուտեն։ 13 – Բայց դուք, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք գործելէ։ 14 – Իսկ եթէ մէկը չհնազանդիր մեր խօսքին այս թուղթով, դուք նշանակեցէք զանիկա, ու անոր հետ մի խառնուիք, որպէս զի ամչնայ։ 15 – Բայց չըլլայ թէ թշնամի պէս սեպէք զանիկա, հապա եղբօր պէս խրատեցէք։ 16 – Եւ ինք խաղաղութեան Տէրը ամէն կերպով ձեզի խաղաղութիւն տայ ամէն առեն. Տէրը ձեր ամենուն հետ ըլլայ։

17 – Ես Պօղոսիս իմ ձեռքիս՝ Պօղոսին է, որ ամէն թուղթերուն մէջ նշան է. այսպէս կը գրեմ։ 18 – Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

*Կամ, հաւատարմութիւն

# ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

## Գլուխ Ա.

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, մեր Փրկիչ Աստուծոյ և մեր յոյսը եղող *Քրիստոս Յիսուսի՝ հրամանովը, 2 – Տիմոթէոսի, իմ հարազատ որդւոյս հաւատքով, շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն և Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն։

3 – Ինչպէս քեզի աղաչեցի Եփեսոս քալ, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որ պատուիրես մէկ քանիներուն օտար ուսմունք չսորվեցնել, 4 – Եւ չնայիլ առասպելներու ու ազգաշունչներու՝ որոնք վերջ չունին, որոնք աւելի վէճեր կը պատճառեն քան թէ Աստուծոյ հաստատութիւնը՝ որ կ'ըլլայ հաւատքով։ 5 – Իսկ պատուիրանին վախճանը սէր է սուրբ սրտով ու բարի խղճմտանքով և անկեղծ հաւատքով. 6 – Որոնցմէ խոտորելով մնանք փուճ խօսքերու եռեւէ գացին. 7 – Օրինոց վարդապետ ըլլալ կ'ուզեն, բայց իրենք չեն հասկնար ինչ որ կը խօսին, ոչ ալ այն բաները՝ որոնց համար ոտք կը կոխեն։ 8 – Այդ գիտենք որ օրէնքը աղէկ է, եթէ մէկը զանիկա օրինաւոր կերպով գործածելու ըլլայ։ 9 – Բայց զայս թող գիտնայ որ արդարներուն համար չէ օրէնքը, հապա անօրէններուն ու անհնազանդներուն համար, ամբարիշտներուն և մեղաւորներուն, անսրբներուն և պիղծերուն, հայր ու մայր սպանողներուն, մարդասպաններուն, 10 – Պոռնիկներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, սուտ երդնողներուն, սուտ երդում ընողներուն, և թէ ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, 11 – Որ երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին համեմատ է, որ ինծի յանձնուեցաւ։ 12 – Եւ շնորհակալ եմ՝ առնոյ՝ որ զիս զօրացուց, այսինքն Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը, որ հաւատարիմ սեպելով զիս՝ այս պաշտօնութեան մէջ դրաւ. 13 – Որ առաջ հայհոյիչ էի ու հալածող և թշնամանող. բայց ողորմութիւն գտայ, վասն զի անհաւատութեան մէջ չգիտնալով ըրի. 14 – Եւ մեր Տէրոջը շնորհքը խիստ շատ եղաւ ինծի հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։ 15 – Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց գլուխը ես եմ։ 16 – Բայց անոր համար ողորմութիւն գտայ, որ ամենէն առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցուցնէ բոլոր երկայնմտութիւնը՝ օրինակ ըլլալու անոնց որոնք պիտի հաւատային իրեն յաւիտենական կեանքի համար։ 17 – Այդ յաւիտենական թագաւորին, որ անեղծ – աներեւոյթ է, մի *միայն Աստուծոյն փառք ու պատիւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

18 – Այս պատուէրը կ'աւանդեմ քեզի, իմ որդեակս Տիմոթէոս, քու վրայովդ առաջընէ եղած մարգարէութիւններուն համեմատ, որ անոնցմով պատերազմիս այն բարի պատերազմը, 19 – Եւ անեղծ հաւատք ու մաքուր խղճմտանք, զոր մէկ քանիներ իրենցմէ մէկդի ձգելով՝ նաւակոծութիւն կրեցին հաւատքին կողմանէ. 20 – Որոնցմէ են Հիմենէոս ու Աղեքսանդրոս, զորոնք ես Սատանայի մատնեցի, որպէս զի սորվին հայհոյութիւն չընել։

## Գլ. Բ

Այդ կ'աղաչեմ ամէն բանէ առաջ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք,

*Ոմանք, Տէր Յիսուս Քրիստոսի
†Կամ, կենդանավարութիւնը

*Ոմանք, միայն իմաստուն

գոհութիւն ամէն մարդոց համար, 2 – Մանաւանդ թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար . որպէս զի խաղաղ ու հանդարտ կեանք վարենք բոլորովին աստուածպաշտութեամբ ու պարկեշտութիւնով : 3 – Վասն զի այն է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջև , 4 – Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնալու գան : 5 – Քանզի մէկ Աստուած կայ , ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ , Քրիստոս Յիսուս մարդը , 6 – Որ իր անձը ամէնուն տեղ փրկանք տուաւ՝ իր ատենին վկայութիւն ըլլալու , 7 – Որուն ես քարոզիչ ու առաքեալ գրուեցայ, (ճշմարիտ կ'ըսեմ՝ *Քրիստոսով Ս սուտ չեմ խօսիր,) հեթանոսներուն վարդապետ եղայ հաւատքով ու ճշմարտութիւնով : 8 – Արդ կ'ուզեմ՝ որ այր մարդիկ ամէն տեղ աղօթք ընեն՝ սուրբ ձեռքեր վերցնելով առանց բարկութեան ու երկմտութեան: 9 – Նոյնպէս ալ կիները վայելուչ հագուստով , ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ ինքզինքնին զարդարեն, ոչ թէ հիւսուածքներով կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ ւսկածախիս հանդերձներով , 10 – Հապա բարի գործերով՝ ինչպես կը վայլէ աստուածպաշտութիւնը դաւանող կիներուն: 11 – Կին մարդը թող սովի լուութեամբ՝ ամենայն հնազանդութիւնով : 12 – Բայց կին մարդու հրաման չեմ տար սորվեցնելու, ոչ ալ այր մարդուն իշխելու, հապա լուռ կենալու : 13 – Վասն զի առաջ Ադամ ստեղծուեցաւ, ապա Եւթը Եւա : 14 – Եւ Ադամ չխաբուեցաւ, հապա կինը խաբուեցաւ ու յանցանք գործեց . 15 – Սակայն պիտի փրկուի անկա որդեծնութեամբ, եթէ կենան հաւատքի և սիրոյ ու սրբութեան մէջ պարկեշտութիւնով :

## ԳԼ· Գ

Ա.յս խօսքը հաւատարիմ է . եթէ մէկը եպիսկոպոսութեան կը ցանկայ, աղէկ գործի կը ցանկայ : 2 – Ուստի պէտք է եպիսկոպոսին անարատ ըլլալ , մէկ կնոջ այր, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր , սորվեցնելու յարմար , 3 – Ոչ գինեմոլ , ոչ զարնող , *Տապա հանդարտ , ոչ կռուող , ոչ արծաթասէր , 4 – Որ իր տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլայ , իր զաւակները հնազանդութեան մէջ պահելով՝ բոլոր ծանրաբարոյութեամբ . 5 – (Ապա եթէ մէկը իր տանը վերակացութիւն ընել չգիտնայ , ինչպէս Աստուծոյ եկեղեցին հոգաբարձու պիտի ըլլայ·) 6 – Ոչ ալ նորահաւատ ըլլայ , որ չըլլայ թէ հպարտանալով Սատանայի դատապարտութեանը մէջ ինկայ: 7 – Հապա պէտք է անոր դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունենալ , որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու Սատանայի որոգայթին մէջ ինկայ :

8 – Նոյնպէս ալ սարկաւագները ըլլան ծանրաբարոյ, ա՛չ երկլեզու , ա՛չ գինեսէր , ա՛չ անարդ շահախնդրութեան եւաէ եղող . 9 – Հապա հաւատքին խորհուրդը պահեն մաքուր խղճմտանքով: 10 – Եւ ասոնք ալ առաջ թող փորձուին , եթէ անպատիժ դրեթէ գտնուին , սարկաւագութեան պաշտօնը կատարեն: 11 – Նոյնպէս ալ անոնց կիները ծանրաբարոյ ըլլան , ոչ չարախօս, հապա զգաստ , ամէն բանի մէջ հաւատարիմ : 12 – Սարկաւագները մէկ կնոջ այր ըլլան, և էրեցոց զաւակներուն ու իրենց տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլան: 13 – Քանզի անոնք որ սարկաւագութեան պաշտօնը աղէկ կը կատարեն , բարի ասպիճան մը իրենց կը շինին , ու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքին մէջ շատ համարձակութիւն:

14 – Ա.յս բաները կը գրեմ քեզի , յուսալով մօտերս քեզի գալ : 15 – Բայց եթէ ուշնալու ըլլամ, որպէս զի դիանաս թէ ի՛նչպէս պէտք է քեզի Աստուծոյ տանը մէջ պահուիլ , որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է, ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւնը: 16 – Եւ յայտնապէս մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը· Աստուած մարմինով յայտնուեցաւ , Հոգիով արդարացաւ , հրեշտակներուն երեւցաւ, հեթանոսներուն մէջ քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատացուեցաւ ու փառքով համբարձաւ:

*Ոմանք չունին

*Ոմանք , ոչ անարդ շահախնդրութեան եւաէ եղող, Տապա



## ԳԼ· Դ

Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ վերջին ատենները մէկ քանիները հաւատքէն պիտի ապստամբին, և մոլորեցուցիչ ոգիներու ու դեւերու ուսմունքներու ուշադրութիւն պիտի տան, 2-Սատխօսներուն կեղծաւորութիւնովը, որոնց խղճմտանքը խանձուած է . 3 – Որոնք ամուսնանալ պիտի արգիլեն , ու եռ պիտի պահեն կերակուրներէն՝ զորոնք Աստուած առեղծեր է որպէս զի հաւատացեալները և ճշմարտութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելեն : 4-Վասն զի Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է , ու մերժելու բան մը չկայ , եթէ գոհութեամբ ընդունուի . 5 – Քանզի Աստուծոյ խօսքովը ու աղօթքով կը սրբուի : 6 – Ա.յս բաները եղբայրներուն յիշեցնելով Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ մը պիտի ըլլաս, ու պիտի անոնց հաւատքին խօսքերովը և այն բարի վարդապետութիւնովը՝ որու հետեւող եղար : 7 – Բայց պղծ ու պառաւական առասպելներէն ետ կեցիր , և քու անձդ աստուածպաշտութեան վարժեցուր . 8 – Վասն զի մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտակար է , որ թէ՛ ներկայ և թէ՛ ապառնի կեանքին խոստմունքը ունի : 9 – Ա.յս խօսքը հաւատարիմ է և բոլորովին ընդունելելու արժանի : 10 – Վասն զի քանի որ համար կ'աշխատինք ու նախատինք կը կրենք , քանզի կենդանի Աստուծոյ յուսացեր ենք , որ ամէն մարդոց Փրկիչն է, մանաւանդ հաւատացեալներուն: 11-Ա.յս բաները պատուիրէ ու սորվեցուր : 12 – Ձըլլայ որ մէկը քու մանկութիւնդ անարգէ, հապա դուն օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով , վարմունքով , սիրով, *հաւատքով և մաքրութեամբ : 13 – Մինչև ես գամ՝ միտք դիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու: 14 – Անհոգ մի ըլլար քու վրադ եղած պարգեւին վրայով , որ մարգարէութեամբ քեզի տուեցաւ՝ երէցներուն ձեռքերը դրուելովը : 15 – Ասոնց վրայ խորհէ ու ասոնց մէջ պարապէ , որպէս զի քու յառաջադիմութիւնդ

*Ոմանք, Հոգւով, հաւատքով

*ամէնուն յայտնի ըլլայ : 16 – Զգուշացիր քու անձիդ ու վարդապետութեանը, ա՛ն մէշտ ասոնց մէջ կեցիր . քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ապրեցնես, ու զանոնք ալ որոնք քեզի մտիկ կ'ընեն:

## ԳԼ· Ե

Ծերը աստիկ մի յանդիմաներ , հապա հօր պէս յորդորէ զնէյս· երիտասարդները՝ եղբայրներու պէս , 2 – Պառաւները՝ մայրերու պէս, գեւաՀատակ կիները՝ քոյրերու պէս ամէն ՀԲպ մաքրութիւնով : 3 – Որբևաթիները պատուէ՝ զանոնք որ ճշմարտապէս որբևաթի են : 4 – Իսկ եթէ որբևաթի մը զաւակներ կամ թոռներ ունենայ , թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որդիական գութ ցուցնել , ու փոխարէն հատուցանել իրենց ծնողներուն . վասն զի այն է բարի և ընդունելի Աստուծոյ առջև : 5 – Բայց ան որ ճշմարտապէս որբևաթի է ու մինակ մնացած , իր յոյսը Աստուծոյ վրայ դրած է, և գիշեր ցորեկ աղօթքի ու աղաչանքի կը պարապի: 6-Բայց փափկասէրը ոբՀաՀրն կենդանւոյն մեռած է: 7 – Եւ այս բաները պատուիրէ որպէս զի անարատ ըլլան: 8 – Բայց եթէ մէկը իրենիներուն ու մանաւանդ իր ընտանիքին հոգ չտանիր, անիկա հաւատքը ուրացած է, ու անհաւատէ մըն ալ գէշ է: 9 – Որբևաթին ոբՀաՀրՀրն կարգը թող սեպուի, որ վաթսուն տարուընէ պակաս չէ , մէկ երկան կին եղած, 10 – Բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած ըլլայ , եթէ հիւրեր ընդունած ըլլայ, եթէ սուրբերուն ոտքերը լուացած ըլլայ, եթէ նեղեալներուն օգնութիւն ըրած ըլլայ , եթէ ամէն գեսակ բարեգործութեան մէջ յատուկած ըլլայ: 11 – Բայց դեռահասակ որբևաթիները մերժէ . քանզի երբ Քրիստոսի դէմ չանդգնելով հեշտասիրութեան անձնատուր կ'ըլլան , ամուսնանալ կ'ուզեն: 12 – Եւ դատապարտութիւն կ'ընդունեն, վասն զի առաջուան հաւատքնին մէկդի ձգեցին : 13 – Նաեւ ծոյլ ըլլալ կը սորվին , տունէ տուն պտըտողներ. և ոչ միայն ծոյլ, հապա

*Կամ, ամէն բանի մէջ

շատախօսներ ու հեռաքքրքիրներ , և անպատեհ բաներ կը խօսին։ 14 – Ուսուցի կ'ուզեմ որ դեռատի հասակ կինները ամուսնանան , զաւակներ ծնանին , անոնք ալ ըլլան — նախատինքի պատճառ չտան հակառակորդին ։ 15 – Քանդի արդէն ոմանք Սատանայի ետեւէն էրթալու խոտորեցան ։ 16 – Եթէ հաւատացեալ այր մարդ մը կամ կին մը արգելարներ ունենայ, թող օգնութիւն ընէ անոնց , և եկեղեցին չծանրաբեռնէ, որպէս զի ճշմարտապէս որբևարիներուն օգնութիւն ընէ ։

17 – Աղէկ վերակացութիւն ընող երէցները կրկին պատուոյ արժանի թող սեպուին , մանաւանդ անոնք որ կ'աշխատին խօսքը *տրտիւլով ու սորվեցնելով ։ 18 – Վասն զի գիրքը կ'ըսէ Թէ Կայի մէջ աշխատող եզին դունչը չկապես . և Թէ Մշակը իր վարձքին արժանի է ։ 19 – Երէցի վրայով ամբաստանութիւն մի ընդունիր , բայց միայն երկու կամ երեք վկաներով ։ 20 – Զանոնք որ մեղք կը գործեն, ամենուն առջև յանդիմանէ, որպէս զի ուրիշներն ալ վախնան ։ 21 – Վկայութիւն կը գնեմ Սատուծոյ առջև և *Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ հրեշտակներուն , որ այս բաները պահես առանց նախապաշարման , բան մը չտառութեամբ չընելով ։ 22 – Շատով մէկուն վրայ ձեռք չդնես, և ուրիշներուն մեղքերուն հաղորդ չըլլաս. զանձդ մաքուր պահէ ։

23 – Ալկէ հետ լակ ջուր չխմես , հապա քիչ մըն ալ գինի գործածէ քու ստամոքսիդ ու յաճախ հիւանդութիւններուդ համար ։

24 – Կան մարդիկ որոնց մեղքերը յայտնի են , ու առաջուընէ դատաստանի կուգան . և կան՝ որոնց հետևէն կ'երթան։ 25 – Նոյնպէս ալ գործերը յայտնի են . ու անոնք որ ուրիշ կերպ բան մըն են , չեն կրնար ծածուկ մնալ ։

## Գլ. Ջ

Ա.յն ամէնը որ ծառայութեան լուծի տակ են, իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սեպեն , որպէս զի Աստուծոյ անունը ու վարդապետութիւնը չհայհոյուի ։ 2 – Եւ անոնք որ հաւատացեալ տէրեր ունին , թող չարհամարհեն եղբայրներ ըլլալնուն պատճառաւ, հապա աւելի ծառայութիւն ընեն, վասն զի անոնք հաւատացեալ են ու սիրելի, որոնք բարերարութիւն ընելու մէջ մասնակից են . այս բաները սորվեցուր ու յորդորէ ։ 3 – Եթէ մէկը ուրիշ կերպ բան մը սորվեցընէ, ու մտիկ չընէ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի աղջամուղջ խօսքերուն, և այն վարդապետութեանը որ աստուածպաշտութեան համեմատ է , 4 – Ան-պէտքէն հպարտացած է ու բան մը չգիտէր , հապա վէճերով ու հակառակութիւններով տխտացած է. որոնցմէ կ'ըլլայ նախանձ , կռիւ , հայհոյութիւններ, գէշ կասկածներ, 5 – Միտքով ապականած ու ճշմարտութենէն հեռացած մարդոց զրաղանութիւններ, որոնք աստուածպաշտութիւնը շահավաճառութիւն մըն է ։ 7 – Վասն զի բան մը չբերինք աշխարհ, ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ ։ 8 – Հապա կերակուր ու հանդերձ ունենանլով՝ անոնցմով բաւականանանք ։ 9 – Բայց անոնք որ հարստանալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան ու որոգայթի և շատ յիմարական ու վնասակար ցանկութիւններու մէջ , որոնք աստակամի ու կորստեան մէջ կ'ընկղմեն մարդիկ ։ 10 – Վասն զի ամէն չարութիւններուն արմատը արծաթասիրութիւնն է, որու մէկ քանիները անձնատուր ըլլալով հաւատքէն մոլորեցան , ու ինքզինքնին շատ ցաւերով խոցեցին ։

11 – Բայց դուն, ով մարդ Աստուծոյ , փախիր այս բաներէն , ու գնա արդարութեան , աստուածպաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան — հեզութեան հետևէն ։ 12 – Պատերազմէ հաւատքին բարի պատերազմը, բռնէ յաւիտենական կեանքը՝ որու կանչուեցար , և շատ վկաներու առջև դաւանեցար բարի դաւանութիւնը ։ 13 – Կը պատուիրեմ քեզի Աստուծոյ առջև , որ կենդանի կ'ընէ բոլորը, և Քրիստոս Յիսուսի առջև , որ Պոնտացի Պղատոսի առջև վկայեց բարի դաւանութիւնը , 14 – Որ դուն

*Ոմանք, Տէր Յիսուս



ալն պատուէրը ամբիծ, անարատ պահես՝ մինչև մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը ։ 15 – Զոր իր ատենին պիտի ցուցնէ Երանելին ու միակ Հզօրը , թագաւորներուն Թագաւորը ու տէրերուն Տէրը ։ 16 – Որ միայն ունի անմահութիւն՝ անմատչելի լոյսի մէջ բնակած, զոր մարդոց մէ՛կը չտեսաւ , ոչ ալ տեսնելու կարող է, որու պատիւ և զօրութիւն յաւիտեան։ Ամէն։

17 – Այս աշխարհին մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր որ չհպարտանան , և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ, որ ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու , 18 – Բարիք գործեն, բարի գործերով հարըստանան , առատաձեռն , և օգնչէին պէտքերուն հաղորդ ըլլան։ 19 – Ինքզինքնին հիմ գանձեն անձերնուն հանդերձելին համար, որպէս զի *յաւիտենական կեանքը ձեռք ձգեն։

20 – Ով Տիմոթէոս, *էվ պրօսէթ ատանդը պահէ , փախչելով պիղծ ու նայնաբանութիւններէն և սուտանուն գիտութեան հակառակութիւններէն, 21 – Զորոնք մէկ քանիները դաւանելով հաւատքէն մոլորեցան ։ Շնորհքը քեզի հետ ըլլայ։ Ամէն։

## ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

### Գլուխ Ա.

Պօղոս , Յիսուս Քրիստոսի առաքեալ , Աստուծոյ կամքովը կենաց խոստմանքին պէս՝ որ Քրիստոս Յիսուսով է ։ 2 – Տիմոթէոսի , իմ սիրելի որդիիս , շնորհք , ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աստուծմէ ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն։

3 – Շնորհակալ եմ Աստուծոյ , զոր կը պաշտեմ իմ նախնիքներէս՝ մաքուր խղճմտանքով , (երբ անպակաս քեզ իմ աղօթքներուս մէջ կը յիշեմ գիշեր ու ցորեկ , 4 – Յանկալով քեզ տեսնել , ու միտք բերելով քու արցունքներդ , որպէս զի ուրախութիւնով լեցուիմ ,) 5 – Մտածելով քու վրադ եղած անկեղծ հաւատքը, որ առաջ քու մեծ մօրդ Լաւդեայի ու քու մօրդ Եւնիկէի վրայ բնակեցաւ, և համոզուած եմ որ քու վրադ ալ կայ։ 6 – Անոր համար քեզ միտքդ կը դնեմ որ արծարծես Աստուծոյ պարգեւը, որ քեզի տրուած է իմ ձեռքերուս *տա վրադ դրաւելովը։ 7 – Վասն զի Աստուած մեզի երկչոտութեան հոգի չտուաւ , հապա զօրութեան ու սիրոյ և զգաստութեան։ 8 – Ուստի ամէն մի սեպեր մեր Տէրոջը վկայութիւնը, ոչ ալ զիս անոր համար կապուածս . հապա մանակից եղիր ուաւտարանին չարչարանքներուն, Աստուծոյ զօրութեանը համեմատ. 9 – Որ մեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց, ոչ Թէ մեր գործերուն նայելով , հապա իր նախատահմանութեանը ու շնորհքին նայելով , որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ . 10 – Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երեւնալովը . որ մահը խափանեց , և լոյս հանեց կեանքը ու անմահութիւնը աւետարանին միջոցաւ։ 11 – Որուս ես քարոզիչ ու առաքեալ դրուեցայ ու հեթանոսներուն վարդապետ ։ 12 – Անոր համար այս չարչարանքներն ալ կը կրեմ . բայց ամօթ չեմ սեպեր , վասն զի գիտեմ Թէ որո՛ւ եմ հաւատացեր , և համոզուած եմ որ իմ էրէն մատնդած բանս կրնայ պահել մինչև այն օրը ։ 13 – Առո՛ր բռնէ այն աղջամիտ խօսքերուն օրինակը զորոնք լինժէ լսեցիր , հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։

*Ոմանք, ճշմարիտ

14 – Ա՛յն բարի ատանդը պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռքով որ մեր մէջ բնակած է։ 15 – Ջայս գիտես որ ինծմէ եբեռ դարձուցին այն ամէնը որոնք Ասիա էին, որոնցմէ են Փիգեղոս ու Հերմոգինէս։ 16 – Տէրը ողորմութիւն տայ Ընեսիփորոսի տանը, վասն որ շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթաս ամօթ չսեպեց։ 17 – Հապա երբ Հռոմ եկաւ, շատ ջանքով փնտռեց զիս ու գտաւ։ 18 – (Տէրը իրեն տայ որ այն օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնէ։) Ու եփեսոսի մէջ ալ որչափ սպասաւորութիւն որ ըրաւ էդէն, դուն զանիկա շատ աղէկ գիտես։

## ԳԼ. Բ

Ա՛րդ դուն, իմ որդեակս, զօրացիր այն շնորհքովը որ Քրիստոս Յիսուսով է։ 2 – Եւ այն բաները զորոնք լսեցիր շատ վկաներով՝ հաւատարիմ մարդոց յանձնէ, որոնք կարող ըլլան ուրիշներու ալ տրվեցնել։ 3 – Արդ դուն նեղութիւններու համբերէ Յիսուս Քրիստոսի բարի զինուորի մը պէս։ 4 – Զինուորեալ մը այս կեանքին գործառնութիւններովը չզբաղիր, որպէս զի զօրավարին հաճոյ ըլլայ։ 5 – Եւ եթէ մէկը մրցի, չպսակուիր՝ եթէ ըստ օրինի չմրցի։ 6 – Աշխատող երկրագործին պէտք է առաջ պտուղներէն վայելել։ 7 – Խնդացիր ինչ որ կ'ըսեմ. Տէրը քեզի խնամատարութիւն տայ ամէն բանի մէջ։ 8 – Միտքդ բեր Դաւիթի ցեղէն եղող Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն առած, իմ Աւետարանիս համեմատ։ 9 – Որուն մէջ չարագործի մը պէս կը չարչարուիմ մինչև անգամ կապերով. բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ։ 10 – Ուստի ամէն բանի կը համբերեմ բնտրեալներուն համար, որպէս զի անոնք ալ Յիսուսին մէջ եղած փրկութիւնը որ Քրիստոս Յիսուսով է յաւիտենական փառքով։ 11 – Ա՛յս խօսքը հաւատարիմ է. վասն զի եթէ անոր հետ մեռանք, անոր հետ պիտի ապրինք ալ։ 12 – Եթէ համբերենք, անոր հետ պիտի թագաւորինք ալ. եթէ ինք ուրանանք, ինք ալ մեզ պիտի ուրանայ։ 13 – Եթէ չհաւատանք, ինք հաւատարիմ կը մնայ, իր անձը չկրնար ուրանալ։ 14 – Ա՛յս բաները անոնց միտքը ձգէ՝ Տէրոջը առջև վկայութիւն դնելով, խօսքերու վրայ վէճ չընել՝ որ բան մը օգտակար չէ, հապա դէպի լսողները կործանումին համար է։ 15 – Ջանք ըրէ քու անձդ ընտիր ցուցնել Աստուծոյ առջև, այնպիսի բանուոր մը ըլլալով որ պիտի չամչնայ, ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով։ 16 – Բայց պղծի ու փուճ խօսքերէն մեկդի կեցիր, քանզի անոնք աւելի յառաջ կ'երթան ամբարշտութեան մէջ։ 17 – Եւ անոնց խօսքը քաղցկեղի պէս կը ճարակէ. որոնց կարգն են Հիմենոս ու Փիլէտոս։ 18 – Որոնք ճշմարտութենէն մոլորեցան, ու կ'ըսեն թէ յարութիւնը արդէն եղած է, և կը կործանեն մէկ քանիներուն հաւատքը։ 19 – Բայց Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու այս կնիքը ունի, թէ Տէրը կը ճանչնայ պատնաքը որ իրն են. և՝ Անիրաւութենէ մեկդի թող կենայ այն ամէնը որ *Քրիստոսի անուանը կանուանուի։ 20 – Սակայն մեծ տան մը մէջ ոչ թէ միայն ոսկիէ ու արծաթէ անամներ կան, հապա փայտէ ու հողէ ամաններ ալ կան. և ոմանք պատուոյ համար են ու ոմանք անպատուութեան համար։ 21 – Ուստի եթէ մէկը իր անձը այնպիսի բաներէն մաքրէ, անկիկ պատուական անօթ մը պիտի ըլլայ, որ սրբուած ու էշ Տէրոջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած։ 22 – Երիտասարդական ցանկութիւններէն ալ փախիր, ու դնա արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան հետ ալ անոնց հետ որ Տէրոջը անունը կը կանչեն մեծ սրտով։ 23 – Բայց յիմարական ու անիմաստ վէճերէն մեկդի քաշուէ, գիտնալով որ անոնցմէ կռիւներ կը ծնանին։ 24 – Ու Տէրոջը ծառային պէտք չէ կռիւ ընել, հապա հեզասիրտ ըլլալ ամէնուն, սորվեցնող, ոխ չպահող։ 25 – Խոհեմութեամբ խրատել հակառակ կեցողները, որ ըլլայ թէ Աստուած տալիք ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու համար, 26 – Եւ Սատանային որոգայթէն զգաստանան, որմէ ըռնուած են իր կամքին ծառայելու։

*Ոմանք՝ Տէրոջը



## ԳԼ. Գ

Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան։ 2 – Վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, 3 – Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, 4 – Մատնիչ, յանդգնած, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր։ 5 – Որոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են. և դուն ասոնցմէ մեկդի կեցիր։ 6 – Վասն զի ասոնցմէ են որ տուներէն ներս կը մտնեն, ու գերի կ'ընեն մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիները զանազան ցանկութիւններէ վարուած, 7 – Որ միշտ կը սորվին, ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնալու չեն կրնար հասնիլ։ 8 – Հապա ինչպես Յաննէս ու Յամբրէս հակառակ կեցան Մովսէսի, նոյնպէս ասոնք ալ ճշմարտութեան հակառակ կը կենան. ապականած միտքով մարդիկ, հաւատքի մէջ անպիտաններ են։ 9 – Բայց աւելի յառաջ պիտի չերթան, վասն զի ասոնց անմտութիւնը ամէնուն յայտնի պիտի ըլլայ, ինչպես անոնցը եղաւ։ 10 – Իսկ դուն տեղեակ եղար իմ վարդապետութեանս, վարմունքիս, դիտաւորութեանս, հաւատքիս, երկայնմտութեանս, սիրոյս, համբերութեանս, 11 – Հալածանքներուս, չարչարանքներուս, ինչպես ինծի եղան Անտիոքի ու Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ. ինչպես հալածանքներու համբերեցի, ու ամէնէն զիս ազատեց Տէրը։ 12 – Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝ հալածանք պիտի կրեն։ 13 – Բայց չար ու խաբեպայ մարդիկ չարութեան մէջ պիտի յառաջանան՝ մոլորեցնելով ու մոլորելով։ 14 – Սակայն դուն հաստատուն կեցիր այն բաներուն մէջ զորանք սորվեցար ու հաւատացիր, վասն զի գիտես թէ որմէ սորված ես. 15 – Նաև ու՝ մանկութենէդ ի վեր սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը։ 16 – *Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտակելու և արդարութեան խրատելու համար, 17 – Որպէս զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած։

## ԳԼ. Դ

Ա՛յս վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջև և Յիսուս Քրիստոսի, որ պիտի դատէ կենդանիները ու մեռելները իր յայտնուելուն ու թագաւորութեանը առեն։ 2 – Խօսքը քարոզէ, մնադրութեամբ ժպրէնդ պարապէ առեն ու առեն դարս, յանդիմանէ, սաստէ, յորդորէ ամենայն երկայնմտութեամբ ու վարդապետութեամբ։ 3 – Վասն զի ժամանակ պիտի գայ որ աղջամուղջ վարդապետութեանը պիտի չհամբերեն, հապա ըրենց լսելիքին համեմատ վարդապետներ պիտի գիղեն իրենց։ 4 – Եւ ճշմարտութենէն ականջներնին պիտի դարձնեն, ու առասպելներու եւեւէ պիտի մոլորին։ 5 – Բայց դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր, նեղութիւններու համբերէ, աւետարանչի գործ գործէ, քու պաշտօնդ կատարէ։ 6 – Վասն զի ես արդէն գոհ ըլլալու նախընծայ եմ, ու իմ մեկնելուս առեն հասեր է։ 7 – Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի։ 8 – Ահա եւս կայ կը մնայ ինծի, արդարութեան պսակը, զոր Տէրը, արդար Դատաւորը, պիտի հատուցանէ ինծի այն օրը. ու ոչ թէ միայն ինծի, հապա այն ամէնուն ալ՝ որ անոր յայտնութիւնը սիրեցին։

9 – Ջանք ըրէ շուտով գալ. 10 – Վասն զի Դեմաս զիս թողուց ու այս աշխարհը սիրեց, և գնաց Թեսաղոնիկէ. Կրեսկես՝ Գաղատիա, Տիտոս՝ Դալմատիա. 11 – Միայն Ղուկաս ինծի հետ է. Մարկոսը առնես՝ քեզի հետ բերես, վասն զի ինծի օգտակար է պաշտօնութեան համար։ 12 – Ես Տիւքիկոսը Եփեսոս դրկեցի։ 13 – Ա՛յն վերարկուն՝ զոր Տրովադա Թուղցի Կարպոսի քով, երբ գաս՝ բեր,

*Կամ, Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ

գիրքերն ալ՝ մանաւանդ մագաղաթ-ները։ 14 – Դարբին Աղեքսանդրոս շատ չարաբաղձ եղաւ ինձ. Տէրը անոր *հատուցանէ իր գործերուն համեմատ։ 15 – Դուն ալ անկէ զգուշանա, վասն զի մեր խօսքերուն շատ դէմ կեցաւ։ 16 – Առաջին անգամ ատեանին առջեւ պատասխան տալուս՝ իմ կողմանէս մէ՛կը չկայնեցաւ ինձի հետ, հապա ամէնն ալ զիս թողուցին. այս իրենց չհաշուի։ 17 – Բայց Տէրը իմ քովս կայնեցաւ ու զիս զօրացուց, որպէս զի քարոզութիւնը իմ միջոցովս լման ըլլայ, ու բոլոր հեթանոսները լսեն. և ես առիւծին բերնէն ազատեցայ։ 18 – Եւ Տէրը ամէն չար գործէ պիտի ազատէ զիս, և ապահովութեամբ իր երկնային թագաւորութեանը պիտի հասցընէ. իրմէն փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

19 – Բարև տուր Պրիսկէի և Ակիւլասի, ու Ընեսիփորոսի տանը։ 20 – Երաստոս Կորնթոսի մէջ մնաց. և Տրոփիմոսը Մկիլետոսի մէջ թողուցի հիւանդացած։ 21 – Ձմեռը մի՛ գար։ Բարև կ'ընեն քեզի Եւբուղոս ու Պուդես և Լինոս ու Կղավդիա և բոլոր եղբայրները։ 22 – Տէր Յիսուս Քրիստոս քու հոգիիդ հետ ըլլայ. շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ Առ ՏԻՏՈՍ

## Ա. ՈՒ ՏԻՏՈՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Աստուծոյ ծառայ և Յիսուս Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու ասոնց ճշմարտութեան գիտութեանը համեմատ, 2 – յաւիտենական կեանքի յուսովը, զոր ինք անուտ Աստուած խոստացաւ յաւիտենական դարերէն առաջ, 3 – Բայց իր խօսքը իր ժամանակին յայտնեց քարոզութիւնով, որ ինծի յանձնուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամանովը, 4 – Տիտոսի էմ հարազատ որդւոյս հաւատքով՝ շնորհք և խաղաղութիւն Հօր Աստուծմէն ու մեր Փրկչէն, Տէր Յիսուս Քրիստոսէ։

5 – Ասոր համար ես քեզ Կրետէ թողուցի, որ ինչ պակաս բան որ կայ, շիտակս, ու ամէն մէկ քաղաքի մէջ երէցներ կարգես, ինչպէս ես քեզի պատուիրեցի. 6 – Եթէ մէկը անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր, հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք

*Ոմանք, պիտի հատուցանէ

†Ոմանք, սղբմութիւն և

անառակութեան համար ամբաստանուած կամ անհնազանդ չըլլան։ 7 – Վասն զի եպիսկոպոսին պէտք է անմեղադրելի ըլլալ Աստուծոյ անեհսին պէս. ոչ յանդուգն, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անարգ շահախնդրութեան եւեթ եղող, 8 – Հապա հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, 9-Հաստատուն բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէս զի կարող ըլլայ ողջամիտ վարդապետութիւնով յորդորել, և հակառակ կեցողները յանդիմանել։ 10-Քանզի շատ են անհնազանդները, ունայնաբանութիւն խօսողները ու միտք խաբողները, մանաւանդ անոնք որ թլփատութենէն են. 11 – Զորոնք պէտք է պապանձեցնել, որոնք ամբողջ տուներ կը կործանեն, ու անպատեհ բաներ կը սորվեցնեն անարգ շահախնդրութեան համար. 12-Անոնցմէ մէկը զրուցեց, որ իրենց բուն մարգարէն էր, Կրետացիները միշտ սուտ զրոյց են, չար գազաններ, դատարկապորներ։ 13 – Ա.յս վկայութիւնը ճշմարիտ է. անոր համար խստիկ յանդիմանէ զանոնք, որպէս զի առողջ

*Յոյն. շատ գինիի ծառայ եղած



ջանան հաւատքին մէջ. 14 – Ու չնային Հրեական առասպելներուն և ճշմարտութենէն հեռացող մարդոց պատուէրներուն։ 15 – Ամէն բան մաքուր է մաքուրներուն, բայց պիղծերուն ու անհաւատներուն բան մը մաքուր չէ, հապա անոնց միտքն ալ խղճմտանքն ալ պղծուած են։ 16 – Կը խոստովանին թէ գԱստուած կը ճանչնան, և էրեսնով գործերովը կ'ուրանան, պիղծ ու անհնազանդ ըլլալնէնին, և ամէն բարի գործի անպիտան։

### ԳԼ. Բ

Բայց դուն խօսք լինչ որ կը վայլէ ողջամիտ վարդապետութեանը. 2 – Մեծերուն զգաստ ըլլալ, ծանրաբարոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատքով, սիրով, համբերութիւնով։ 3-Նոյնպէս ալ պառաւներուն այնպիսի վարմունք ունենալ, ինչպէս կը վայլէ սրբութեան. ոչ բանսարկու ըլլալ, ոչ *գինեմոլ, հապա բարի խրատ տուող. 4-Որ խրատեն նորահասակ կիներըզ՝ այրերնին սիրող, զաւակներնին սիրող ըլլալ, 5-Խոհեմ, ողջախոհ, անաշէն, բարեգործ, իրենց այրերուն հնազանդ, որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի։ 6 – Նոյնպէս ալ երիտասարդները յորդորէ խոհեմ ըլլալ։ 7 – Ամէն կողմէ քու անձդ բարի գործերու օրինակ ցուցնելով, վարդապետութեան մէջ անեղծութիւն, պարկեշտութիւն, 8 – Ողջամիտ ու անմեղադրելի խօսք, որպէս զի հակառակ կեցողը ամչնայ, ու մեր վրայով գէշ բան մը չունենայ ըսելու։ 9 – Ծառաներուն ազդէ՛ որ իրենց տէրերուն հնազանդ ըլլալ, և ամէն բանի մէջ հաճելի. ոչ հակառակախօսներ, 10 – Ոչ խորտնիկներ, հապա բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցնեն, որպէս զի մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը ամէն բանի մէջ զարդարեն։ 11-Քանզի Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր մարդոց երեցաւ. 12 – Որ մեզ կը խրատէ՝ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք, և զգաստութեամբ ու արդարութեամբ և բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհին մէջ։ 13 – Ու սպասենք այն երջանիկ յոյսին, և մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին յայտնուելուն. 14 – Որ իր անձը մեզի համար տուաւ, որպէս զի մեզ ամէն անօրէնութենէ ազատէ, ու մեզմէ իրեն սեպհական ժողովուրդ ընէ՝ բարի գործերու նախանձառու։ 15 – Այդ բաները խօսէ և յորդորէ ու յանդիմանէ բոլորովին սաստելով. ջրլլայ որ մէկը քեզ անարգէ։

### ԳԼ. Գ

Զանոնք միտքը ձգէ իշխանութիւններուն և պետութիւններուն հնազանդիլ ու պատրաստ ըլլալ, ու ամէն բարի գործերու պատրաստ գտնուիլ. 2- Մէկո՛ւն հայհոյութիւն չընել, կռւասրտ չըլլալ, հապա հեզահոգի, ամէն մարդոց բոլորովին քաղցրութիւն ցուցնել։ 3 – Վասն զի մենք ալ առաջն մէն անմիտ էինք, անհնազանդ, մոլորեալ, և զանազան ցանկութիւններու ու հեշտութիւններու կը ծառայէինք. չարութիւնով ու նախանձով կը վարուէինք, ատելի էինք և մէկզմէկ կ'ատէինք, 4 – Բայց երբ մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնը ու մարդասիրութիւնը յայտնուեցաւ, 5 – Ոչ թէ արդարութեան գործերէն՝ որոնք մենք ըրինք, հապա իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց նորէն ծնանելուս ատաղանին միջոցաւ ու Սուրբ Հոգիին նորոգելովը, 6 – Զոր առատօրէն թափեց մեր վրայ Յիսուս Քրիստոս մեր Փրկչին ձեռքով, 7 – Որպէս զի անոր շնորհքովը արդարացած՝ յաւիտենական կեանքի յոյսով ժառանգ ըլլանք։ 8 – Ա.յս խօսքը հաւատարիմ է. և կ'ուզեմ որ ատոնք հաստատես, որպէս զի Աստուծոյ հաւատացողները հոգ տանին բարի գործեր ընելու վրայ ըլլալ. ատոնք են բարի ու մարդոց օգտակար բաները։ 9 – Բայց դուն յիմարական վէճերէն ու ազգաճամուռներէն ու հակառակութիւններէն և օրէնքի վրայով կռիւներէն մէկդի կեցիր, վասն զի անօգուտ են ու անոտի։ 10-Հերձուածող մարդ՝ առաջին ու երկրորդ անգամ խրատէ եւս ետ քաշուէ, 11 – Գիտնալով որ այնպիսին խոտորած է, և մեղք կը գործէ ինքզինք դատապարտելով։

12 – Երբ Արտեման կամ Տիւքիկոսը քեզի ղրկեմ, ջանք ըրէ գալ

Նիկոպոլիս, վասն զի միտքս գրի ձմեռը հոն անցնել։ 13 – Ջհննաս օրինականը ու Ապողոսը փութաթով ճամբայ դիր, հոգ տանելով որ անոնց բան մը չպակսի։ 14 – Եւ մերիններն ալ թող սորվին բարի գործեր ընելու վրայ լալով հարկաւոր պարագաներու մէջ, որպէս զի անպտուղ չըլլան։ 15 – Ինձմէ կ'ընեն քեզի ամէնն ալ որ ինծի հետ են. բարև տուր անոնց որ մեզ կը սիրեն հաւատքով. շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Ա.Ո ՓԻԼԻՄՈՆ

Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապեալը եւ Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի, մեր սիրելիին ու գործակիցին, 2 – եւ Ափիա սիրելիին, ու Արքիպպոս մեր պնակցին, ու քու տանդ մէջի եկեղեցիին. 3 – Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն եւ Տէր Յիսուս Քրիստոսէ։

4 – Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս՝ քեզ իմ աղօթքներուս մէջ յիշելով, 5 – երբ կը լսեմ քու սէրդ ու հաւատքդ՝ զոր ունիս Տէր Յիսուսի վրայ եւ բոլոր սուրբերուն վրայ, 6 – որպէս զի քու հաղորդակցութիւնը պատրաստը ըլլայ՝ Քրիստոս Յիսուսով *ձեր վրայ եղած ամէն բարութեանը ճանչցուելովը։ 7 – Քանզի շատ ուրախութիւն եւ մխիթարութիւն ունինք քու սիրդդ վրայ, որ սուրբերուն սիրտերը քեզմով հանգստացած են, եղբայր։

8 – Այսու համար թէեւ շատ համարձակութիւն ունիմ Քրիստոսով՝ վայելչէ եղածը քեզի հրամայելու, 9 – Բայց յանէտ սիրոյ համար կ'աղաչեմ, այնպիսի մէկը ըլլալով՝ ինչպէս եմ ես Պօղոս ծերացած, ու հիմա Յիսուս Քրիստոսի համար կապուած ալ։ 10. Կ'աղաչեմ քեզի իմ որդւոյս Ոնեսիմոսի համար, զոր իմ կապանքներուս մէջ ծնայ, 11 – Որ առեն մը անպիտան էր քեզի, բայց հիմա քեզի ալ ինծի ալ պիտանի է. 12 – Զանիկա ետ դրկեցի. դուն ալ ընդունէ զանիկա, որ է իմ սրտիքս. 13 – Զոր կ'ուզէի իմ քովս պահել, որպէս զի քու տեղդ ինծի ծառայութիւն ընէ աւետարանին կապանքներուն մէջ։ 14 – Բայց առանց քու կամքիդ չուզեցի բան մը ընել, որպէս զի քու բարերարութիւնդ երբ թէ ստիպմամբ եղած չըլլայ, հապա կամաւ։ 15 – Գանդի թերեւս այս պատճառաւ անիկա քիչ մը առեն զատուեցաւ, որպէս զի զանիկա յաւիտեան ունենաս, 16 – Ոչ թէ ալ ծառայի մը պէս, հապա ծառայէ վեր, սիրելի եղբօր պէս. Ե՛րէ ինծի այսպէս երեւէ է, ա՛րչափ աւելի պիտի ըլլայ քեզի՝ թէ՛ մարմնին կողմանէ ու թէ՛ Տէրոջը։ 17 – Ուստի եթէ զիս ունէս հաղորդ կը սեպես, ընդունէ զանիկա՝ որպէս թէ զիս։ 18 – Եւ եթէ քեզի անիրաւութիւն մը ըրած է կամ պարտք մը ունի, զայն իմ հաշիւիս անցուր։ 19 – Ես Պօղոս իմ ձեռքովս գրեցի, ես կը վճարեմ. որ չըսեմ քեզի թէ դուն ալ քու անձդ ինծի պարտական ես։ 20 – Այո, եղբայր, թող քեզմէ ունենամ այս օգուտը Տէրոջմով. հանգչեցուր իմ սրտիքս *Տէրոջմով։ 21 – Քու հնազանդութեանդ վստահանալով քեզի գրեցի, գիտնալով որ ըսածէս ալ աւելի պիտի ընես։

22 – Այսու զատ ինծի ընակարան մըն ալ պատրաստէ, վասն զի կը յուսամ թէ ձեր աղօթքներուն միջոցաւ ձեզի պիտի շնորհուիմ։ 23 – Ներեւ կ'ընեն քեզի Եպափրաս, իմ գերութեան ընկերս Քրիստոս Յիսուսով. 24 – Նաեւ Մարկոս, Արիստարքոս, Դեմաս, Ղուկաս, իմ գործակիցներս։ 25 – Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ։ Ամէն։

*Ոմանք, մեր

*Ոմանք, Քրիստոսով



ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Ա.Ո ԵԲՐԱՅԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

Շատ մասերով ու շատ կերպերով առաջուընէ խօսելով Աստուած Հայրերուն հետ մարգարէներով, 2 – Ա՛յս վերջին օրերս էր Որդիովը խօսեցաւ մեզի հետ, զոր ամէն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց. 3 – Որ իր փառաց լոյսն է եւ իր էութեան բուն պատկերը. որ իր զօրութեան խօսքովը ամէն բան կը բռնէ, իր անձով մեր մեղքերը սրբելով՝ բարձրերը, Ամենայն մեծութեան աջ կողմը նստաւ։ 4 – Եւ այնչափ աւելի եղաւ հրեշտակներէն, որչափ անոնցմէ աւելի գովելի անուն ժառանգեց։ 5 – Վասն զի հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբեք, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. եւ դարձեալ՝ Ես անոր Հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի Որդի պիտի ըլլայ. 6 – Եւ դարձեալ՝ երբ Անդրանիկը աշխարհ կը մտցնէ՝ կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն։ 7 – Եւ հրեշտակներուն վրայով կ'ըսէ, Որ իր հրեշտակները հովիներ կ'ընէ, ու իր պաշտօնեաները՝ կրակի բոց, 8 – Սակայն Որդիին կ'ըսէ, Քու աթոռդ, ով Աստուած, յաւիտեանս յաւիտեանից է. քու թագաւորութեան գաւազանդ ուղղութեան գաւազան է. 9 – Արդարութիւնը սիրեցիր ու անօրէնութիւնըատեցիր. անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի։ 10 – Եւ՝ Դուն, ով Տէր, սկիզբէն երկրի հիմերը դրիր, ու երկինք քու ձեռքերուդ գործն է. 11 – Անոնք պիտի կորսուին, բայց դուն կը կենաս ու կը մնաս. ու ամէնը լաթի պէս պիտի մաշին, 12 – Ու վերարկուի պէս պիտի գալարես զանոնք, ու պիտի փոխուին. բայց դուն նոյն ինքն ես, ու քու տարիներդ պիտի չպակսին։ 13 – Եւ հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբեք, Իմ աջ կողմս նստէ, մինչեւ քու թշնամիներդ ոտքերուդ պատառանդան դնեմ։ 14 – Չէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ են, որոնք ապրուստ կը ղրկուին անոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն։

### ԳԼ. Բ

Անոր համար պէտք է մեզի մ'աւելի ուշադրութիւն տալ դէպ լսածներուն, որ չըլլայ թէ երբեք պակսինք։ 2 – Վասն զի եթէ այն խօսքը որ հրեշտակներուն ձեռքով զրուցուեցաւ, հաստատուն եղաւ, և ամէն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն արդար հատուցում առաւ, 3 – Հապա մենք ի՞նչպէս պիտի ազատինք՝ եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը, որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքով մեզի հաստատուեցաւ. 4 – Աստուած ալ վկայեց նշաններով ու հրաշքներով և զանազան զօրութիւններով ու Սուրբ Հոգիին պարգեւներովը, ինչպէս ինք կամեցաւ։

5 – Վասն զի ոչ թէ հրեշտակներուն հնազանդեցուց այն գալու աշ-

խոչը, որուն վրայով մենք կը խօսինք. 6 – Հապա մեզ մը վկայեց ուրուա, Մարգը ինչ է՝ որ զանիկա կը յիշէս, կամ՝ մարդու որդին՝ որ անոր այցելութիւն կ'ընես. 7 – Փոչ մը վար քիչ զանիկա հրեշտակներէն. փառքով ու պատուով պսակեցիր զանիկա, և քու ձեռքերուդ գործերուն վրայ կեցուցիր զանիկա. 8 – Ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուցիր. ուստի ամէնը որ անոր հնազանդեցուց, անոր չհնազանդած բան մը չձգեց. բայց հիմա դեռ չենք տեսներ ամէնը անոր հնազանդած։ 9 – Սակայն Յիսուս որ փառքով ու պատուով պսակուած կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր մահուան չարչարանքին համար, որպէս զի Աստուծոյ շնորհքովը ամէնուն համար մահ ճաշակէ։ 10 – Որովհետեւ կը վայլէր Անոր, (որու համար ամէնը, և անով ամէն բաները եղած են,) շատ որդիներ փառքին մէջ մուցնելու առաջնորդը չարչարանքով կատարել։

11 – Վասն զի ան որ կը սրբէ ու անոնք որ կը սրբուին, ամէնն ալ մէկէ են. ուստի համար ինք ամենեւին չեղբայր կոչել զանոնք՝ ըսելով, 12 – Քու անունդ եղբայրներուս պիտի պատմեմ; ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ։ 13 – Եւ դարձեալ՝ Ես անոր պիտի յուսամ. ու դարձեալ՝ Ահա ես ու այն զաւակները զորոնք Աստուած ինձի տուաւ։ 14 – Ուստի որովհետեւ զաւակները մարմնին ու արիւնին հաղորդ եղան, ինք ալ նմանապէս անոնց բաժանորդ եղաւ, որպէս զի էր մահովը փճացնէ զանիկա որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է Սատանան. 15 – Եւ ազատէ զանոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան մէջ կ'ապրէին։ 16 – Քանզի ինքը հրեշտակներուն ձեռք չբռներ, հապա Աբրահամի սերունդին ձեռք կը բռնէ։ 17 – Անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որպէս զի ինք ողորմած ըլլայ ու հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովուրդին մեղքերը քաւելու համար։ 18 – Քանզի ինչ բանով որ ինք չարչարուեցաւ փորձութիւն կրելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ։

## Գ.Լ. Գ

Ուստի, սուրբ եղբայրներ, երկնային կոչումին մասնակիցներ, նայեցէք մեր դաւանութեանը Աստքեալին ու Քահանայապետին, Քրիստոս Յիսուսի. 2 – Որ հաւատարիմ է անոր՝ որ զինք գրաւ, ինչպէս Մովսէս ալ՝ անոր բոլոր տանը մէջ։ 3 – Վասն զի ինք Մովսէսէ աւելի փառքի արժանացաւ, որչափ աւելի պատիւ կ'ունենայ դանը շինողը քան թէ տունը։ 4 – Քանզի ամէն տուն մէկէ կը շինուի. բայց ան որ ամէն բաները շինեց Աստուած է։ 5 – Եւ Մովսէս անոր բոլոր տանը մէջ հաւատարիմ էր ծառայի մը պէս՝ վկայութիւնը տալու համար այն բաներուն որ պիտի խօսուէին. 6-Բայց Քրիստոս որդիի մը պէս իր տանը վրայ, որուն տունը մենք ենք, միայն թէ այն համարձակութիւնը և յոյսին պարծանքը մինչև վերջը հաստատ բռնենք։

7-Ուստի ինչպես կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, 8 – Ձեր սիրտերը մի խստացնէք բարկացնելու ատենին պէս անապատին մէջ փորձութեան օրը, 9 – Ուր ձեր հայրերը զիս փորձեցին, քննեցին զիս, ԵՒԵՒԽ քառասուն տարի իմ գործերս տեսան։ 10 – Անոր համար զըւարճացայ այն սերունդէն ու ըսի, Միշտ մոլորած են սրտովնին, և իմ ճամբաներս չճանչցան անոնք. 11 – Ուստի երդում ըրի իմ բարկութեանս մէջ թէ Իմ հանգիստս պիտի չմտնեն։ 12 – Նայեցէք, եղբայրներ, չըլլայ որ ձեզմէ մէկուն ներսիդին անհաւատութեան չար սիրտ ըլլայ՝ ապստամբ ըլլալու կենդանի Աստուծմէն. 13 – Հապա ամէն օր մէկզմէկ յորդորեցէք, քանի որ Այսօր կ'ըսուի, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը խաբուելով մեղքին խորհուրդովը։ 14 – Քանզի մենք Քրիստոսի մասնակից եղած ենք, միայն թէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնենք. 15 – Քանի որ կ'ըսուի, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խստացնէք բարկացնելու ատենին պէս։ 16 – Քանզի *ոմանք լսեցին ու բարկացուցին, բայց ոչ թէ ամէնը որ Եգիպտոսէ ելած էին Մովսէսի ձեռքով։ 17 – Որոնցմէ՞ զղուեցաւ այն քառասուն տարին. չէ՞ որ մեղանչողներէն, որոնց ոսկորները անապատին մէջ ինկան։ 18 – Եւ որո՞նց համար երդում ըրաւ իր հանգիստը չմտնել, եթէ ոչ անհաւատներուն համար։ 19 – Եւ կը տեսնենք որ չկրցան մտնել երէից անհաւատութեանը համար։

*Կամ, որո՞նք լսեցին ու բարկացուցին, չէ՞ որ

## Գ.Լ. Դ

Ուրեմն ա՛լ վախնանք, որ չըլլայ թէ անոր հանգիստը մտնելու խոստումնէն, որ դեռ մնացեր է, ձեզմէ մէկը ըրկուած գտնուի։ 2 – Վասն զի մենք ալ անոնց պէս աւետիս առած ենք. բայց անոնց չտի մը չըրաւ այն խօսքը լսելը, քանզի հաւատքով խառնուած չէր լսողներուն մէջ։ 3 – Քանզի մենք որ հաւատացինք, հանգիստը կը մտնենք. ինչպէս բսաւ, Ուստի երդում ըրի իմ բարկութեանս մէջ թէ Իմ հանգիստս պիտի չմտնեն. թեև էր գործերը աշխարհի սկիզբէն եղած էին։ 4-Վասն զի էէրէը այսպէս կ'ըսէ տեղ մը եօթներորդ օրուան համար, Եւ Աստուած եօթներորդ օրը հանդչեցաւ իր բոլոր գործերէն. 5 – Ու հոս նորէն կ'ըսէ թէ Իմ հանգիստս պիտի չմտնեն։ 6 – Ուստի որովհետեւ մնանց կը մնայ հոն մտնել, և անոնք որ առաջուընէ աւետիսը առած էին, անհաւատութեան համար չմտան, 7 – Նորէն օր մը կը սահմանէ ու կ'ըսէ Այսօրը Դաւիթի բերնով այնքան ժամանակէ ետեւ, ինչպես ըսուեցաւ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խստացնէք։ 8 – Վասն զի եթէ Յեսու հանգչեցուցած ըլլար զանոնք, ալ անկէ ետքը ուրիշ օրուան համար չէր ըսուցեր։ 9 – Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ։ 10 – Վասն զի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ հանգչեցաւ իր գործերէն, ինչպես Աստուած ալ իրենիներէն։ 11 – Ուրեմն ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատութեան օրինակին պէս իյնայ։ 12 – Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ, և ամէն երկսայրի սուրէ կարուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու ոգին և յօդուածներն ու ծուծը բաժնելու, և կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունքները. 13 – Եւ չկայ արարած մը անոր դիմաց չերեւցած, հապա ամէն բան բաց ու յայտնի է անոր աչքերուն առջեւ, որուն պէտք ըլլանք մեր հաշիւը։

14 – Արդ մենք որ մեծ քահանայապետ մը ունինք երկինքը անցած, Յիսուսը, Աստուծոյ Որդին, եկուր բռնենք մեր դաւանութիւնը։ 15 – Քանզի ոչ թէ այնպիսի քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալ, հապա ինք ամէն կերպով փորձը առած է մեզի նման, բայց առանց մեղքի։ 16 – Ուստի՛ համարձակութիւնով մօտենանք շնորհաց գահոյին առջեւ, որպէս զի ողորմութիւն ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատեն մեզ օգնելու։

## Գ.Լ. Ե

Վասն զի ամէն քահանայապետ մարդոց մէջէն առնուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը, որպէս զի պատարագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար. 2 – Եւ կարող է կարեկից ըլլալ անոնց՝ որ տգէտ ու մոլորեալ են, վասն զի ինք ալ տկարութիւնով պաշարուած է. 3 – Եւ այս պատճառաւ պարտաւոր է ինչպես ժողովուրդին համար՝ նոյնպէս ալ իր անձին համար մեղքի պատարագ մատուցանել։ 4 – Եւ ոչ թէ մէկը ինքիրմէ այս պատիւը կ'առնէ, հապա ան՝ որ Աստուծմէ կանչուած է, ինչպէս Ահարոն։ 5 – Նոյնպէս ալ Քրիստոս ոչ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հապա անոնք՝ որ ըսուցաւ անոր Թէ Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. 6 – Ինչպես ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ, Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս։ 7 – Որ իր մարմնին օրերը աստիճ գոչումով ու արցունքով աղօթք և աղաչանք մատուցանող որ կարող էր զինք մահուանէ ազատել, ու լսուեցաւ էէ *բարեպաշտութեանը պատճառաւ. 8 – Թէպէտ ինք Որդի է, բայց իր չարչարանքներէն հնազանդութիւն ասպիսցաւ. 9-Ու երբ կատարեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ. 10 – Ու Աստուծմէ կոչուեցաւ Քահանայապետ Մելքիսեդեկի կարգին պէս։ 11-Որուն վրայով շատ բաներ ունինք, որ գըժ-

*Կամ, երկիւղէն ազատութեամբ

աւարին ալ է մեկնել, վասն զի ձեր լեզուքները լթացած են . 12 – Վասն զի թէպէտ պէտք էր ձեզի ժամանակին նայելով սորվեցնող ըլլալ , բայց նորէն պէտք է ձեզի սորվիլ թէ ւնչ են Աստուծոյ պատգամներուն առաջին ակզբունքները. ու դուք կաթի կարօտ եղաք՝ և ոչ թէ հաստատուն կերակուրի։ 13-Բանդի այն ամէնը որ կաթնակեր է՝ արդարութեան խօսքին անհմուտ է , որովհետև տղայ է ։ 14 – Բայց հաստատուն կերակուրը կատարեալներուն է, որոնց զգայարանքները սովորութեամբ կրթուած են բարին ու չարը զանազանել։

## Գլ. Զ

Ասոր համար թողլով առաջին սորվելիքները ձգելով կատարեալին գանք, առանց նորէն հիմ ձգելու մեռած գործերէն ապաշխարելու, ու առ Աստուած հաւատք ունենալու, 2 – եւ մկրտութիւններուն վարդապետութեանը, ու ձեռք դնելուն , և մեռելներուն յարութեանը, ու յաւիտենական դատաստանին ։ 3 – Եւ զայս պիտի ընենք՝ եթէ Աստուած հրաման տայ։ 4 – Վասն զի անհնար է մեկ անգամ լուսաւորուածներուն, որոնք երկնաւոր պարգեւին համը առին, ու Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան , 5 – Եւ Աստուծոյ բարի խօսքին ու գալու աշխարհին զօրութիւններուն համը առին, 6- եթէ կրնան՝ նորէն ապաշխարութեան նորոգուիլ . որովհետև կրկին Աստուծոյ Որդին խաչը կը հանեն իրենց անձին, ու կը խայտառակեն։ 7-Վասն զի այն երկիրը որ իր վրայ շատ անգամ եկած անձրեւը կը խմէ, և արդիւնք կը բերէ պիտանի անոնց՝ որոնց համար կը մշակուի, Աստուծմէ օրհնութիւն կ'ընդունի. 8 – Բայց այն որ փուշեր ու տատասկներ կը բերէ՝ անպիտան է ու անէծքի մօտ, և անոր վերջը այրուիլ է։ 9 – Իսկ մենք , սիրելիներ, ձեր վրայով լաւագոյն և փրկութեան վերաբերեալ յոյսեր ունինք, թէև այսպէս կը խօսինք։ 10 – Բանդի Աստուած անիրաւ չէ, որ ձեր գործը մոռնայ, ու այն սէրը զոր իր անունը համար ցուցուցիք, որ սուրբերուն ծառայեցիք ու կը ծառայէք։

11 – Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ ամէն մեկը նոյն ջանքը ցուցնէ յոյսին հաստատուելուն մինչև վերջը. 12- Որպէս զի դուք չծեղծանաք , հապա նմանող ըլլաք անոնց որ հաւատքով ու համբերութեամբ խոստմունքները ժառանգեցին։ 13-Վասն զի երբ Աստուած Աբրահամի խոստմունք ըրաւ, որովհետև իրմէ մեծը չկար՝ որ անոր վրայ երդում ընէր , 14 – Իր անձին վրայ երդում ըրաւ ու ըսաւ , Ա՛յո , օրհնելով պիտի օրհնեմ քեզ, ու շատցընելով պիտի շատցնեմ քեզ ։ 15 – Եւ այսպէս համբերելով խոստմունքին հասաւ։ 16 – Բանդի մարդիկ իրենցմէ մեծին վրայ երդում կ'ընեն, ու անոնց բոլոր հակառակութեանը համար վճիռ տալու երդումն է ։ 17 – Որով Աստուած իր խորհուրդին անփոփոխ ըլլալը ա՛լ աւելի ցուցնել ուզելով խոստմունքին ժառանգաւորներուն , երդումը մէջ ձգեց . 18 – Որպէս զի երկու անփոփոխելի բաներով , որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ դուրս ելլ , հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք, որ ապաստանեցանք մեր առջև դրուած յոյսը ամուր բռնելու. 19 – Զոր ունինք իբրև հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին , որ վարագուրին ներսի կողմն ալ կը մտնէ. 20-Ուր Յիսուս իբրև Աստղնորդ մտաւ մեզի համար՝ յաւիտենական Քահանայապետ ըլլալով Մելքիսեդեկի կարգին պէս։

## Գլ. Է

Բանդի այս Մելքիսեդեկ Սաղէմի թագաւորն էր, Բարձրեալ Աստուծոյ քահանան, որ Աբրահամը դիմաւորեց՝ երբ անկից թագաւորներուն կոտորածէն կը դառնար, ու օրհնեց զանիկա. 2 – Որու Աբրահամ ալ տասանորդ առաւ բոլոր բաներէն. որ նախ Արդարութեան թագաւոր կը թարգմանուի, եւքը Սաղէմի թագաւոր՝ որ է Խաղաղութեան թագաւոր . 3 – Առանց հօր, առանց մօր , ազգահամար չունեցող, որուն ոչ օրերուն սկիզբը կայ, ոչ ալ կեանքին վերջը. և Աստուծոյ Որդւոյն նման ըլլալով , կը կենայ ու կը մնայ միշտ քահանայ։

4 – Արդ նայեցէք թէ ո՛րչափ մեծ մեկն էր ասիկա, որուն Աբրահամ նահապետն ալ տասանորդ առաւ աւարէն։ 5 – Եւ Ղեւիի որդիներէն եղողները, որոնք քահանայութիւն կ'առնեն, պատուէր ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն օրէնքին համեմատ , այսինքն իրենց եղբայրներէն. թէպէտև անոնք Աբրահամի երակներէն ելեր են . 6 – Բայց անիկա , որուն ազգահամարը անոնցմէ չէր, Աբրահամէ տասանորդ առաւ, ու օրհնեց զանիկա՝ որ խոստմունքները առած էր։ 7 – Սակայն ասիկա անհակառակելի բան մըն է , որ պզտիկը մեծէն կ'օրհնուի ։

8 – Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ կ'առնեն, բայց հոն անիկա կ'առնէ, որու համար վկայուած է թէ կենդանի է։ 9 – Եւ կրնայ ըսուիլ թէ Ղեւի ալ, որ տասանորդ կ'առնէ, Աբրահամի ձեռքով տասանորդ տուաւ. 10 – Վասն զի տակաւին իր հօրը բռնքին էր, երբ Մելքիսեդեկ զանիկա դիմաւորեց։

11 – Արդ եթէ կատարելութիւնը Ղեւացւոց քահանայութեան ձեռքով ըլլար , (որովհետև ժողովուրդը անոր առնելը օրէնքին տակ դրաւեցաւ,) ալ ինչ պէտք էր որ Մելքիսեդեկի կարգին պէս ուրիշ քահանայ մը ելլէ, ու չըսուի Ահարոնի կարգին պէս ։ 12- Արդ քահանայութիւնը փոխուելուն պէս՝ հարկ էր որ օրէնքին ալ փոփոխութիւն ըլլար ։ 13 – Եւ որու համար այսպէս կ'ըսուի, ուրիշ ցեղի հաղորդութիւն ունեցաւ, որմէ բնաւ մէկը սեղանին չմօտեցաւ . 14 – Քանդի յայտնի է թէ Յուդայի ցեղէն յառաջ եկաւ մեր Տէրը, որ ցեղին վրայով Մովսէս բան մը չզրուցեց քահանայութեան համար ։ 15 – Ու ալ աւելի յայտնի է որ ըստ նմանութեան քանի որ Մելքիսեդեկի նմանութեանով ուրիշ քահանայ մը կ'ելլէ, 16 – Որ ոչ թէ մարմնաւոր պատուէրի օրէնքին պէս եղաւ, հապա անվախճան կեանքին զօրութեանը պէս։ 17 – Վասն զի կը վկայէ թէ Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս ։ 18 – Բանդի առաջին պատուէրը կը խափանուի իր տկարութեանը ու անշահութեանը համար , 19 – (Վասն զի օրէնքը բան մը կատարեալ չըրաւ,) և անոր տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով Աստուծոյ կը մօտենանք։

20 – Եւ որքան որ Յիսուս ոչ թէ առանց երդումի քահանայ եղաւ , (վասն զի անոնք առանց երդումի քահանայ եղած են . 21 – Բայց ասիկա երդումով՝ անոր ձեռքով որ իրեն ըսաւ , Տէրը երդում ըրաւ ու պիտի չզղջայ , Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս,) 22 – Ա՛յնքան աւելի ազէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս։

23 – Ու անոնք շատ քահանաներ եղած են՝ էրէնց միշտ մնալուն մահը արգելք ըլլալուն համար . 24 – Բայց ասիկա յաւիտեան կենալուն համար անանցանելի ունի քահանայութիւնը. 25 – Ուստի բոլորովին կրնայ ալ ապրեցնելու զանոնք որ իրմով Աստուծոյ կու գան . որովհետև ինք միշտ կենդանի է անոնց համար բարեխօսելու։

26 – Վասն զի մեզի հէնց այսպիսի քահանայապետ մը կը վայլէր, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներէն զատուած ու երկինքէն վեր բարձրացած. 27 – Որու ամէն օր հարկ չէ ինչպես ուրիշ քահանայապետներուն՝ առաջ իր մեղքերուն համար պատարագ մատուցանել, ու եւքը ժողովուրդին մեղքերուն համար. վասն զի ինք մէկ անգամ՝ բուռ ասիկա՝ իր անձը պատարագ մատուցանելով ։ 28 – Վասն զի օրէնքը տկարութիւնով պաշտօնեաներ կը կարգէ, բայց երդումին խօսքը, որ օրէնքէն եւս էր, Որդին՝ որ յաւիտեան կատարեալ է։

## Գլ. Ը

Եւ զրուցած խօսքերուս բովանդակութիւնը այս է. այնպիսի քահանայապետ մը ունինք մենք՝ որ երկինքը Աստուծոյ մեծութեանը աջակողմը նստաւ . 2 – Սրբարանին պաշտօնեայ , ու ճշմարիտ խորանին՝ զոր Տէրը կանգնեց և ոչ թէ մարդ ։ 3 – Բանդի ամէն քահանայապետ պատարագներ ու զոհեր մատուցանելու համար որոշուած է. ուստի հարկ է որ ասիկա ալ բան մը ունենայ մատուցանելու։ 4 – Որ եթէ երկրի վրայ ըլլար, քահանայ անգամ պիտի չըլլար, վասն զի կան քահանաներ՝ որոնք պատարագները կը մատուցանեն օրէնքին համեմատ. 5 – (Որոնք երկնային բանե-

ըուն նմանութիւնով ու չափով կը ծառայեն, ինչպէս Մովսէսի հրամայուեցաւ, երբ խորանը պիտի շինէր. քանզի ըսաւ, Նայէ որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես ամենը.) 6 – Բայց հիմա Յիսուս ա՛լ աւելի գերազանց պաշտօնի մը հասաւ, որչափ որ լաւագոյն խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի մը միջնորդ է։

7 – Վասն զի եթէ առաջինը անմեղադրելի ըլլար, տեղ չէր փնտռուեր։ 8 – Քանզի կը յանդիմանէ զանոնք ու կ'ըսէ, Ահա օրեր կուգան, կ'ըսէ Տէրը, որ Իսրայէլի տանը հետ ու Յուդայի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ. 9 – Ոչ թէ այն ուխտին պէս՝ զոր անոնց հայրերուն հետ ըրի, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանելուս համար. վասն զի անոնք իմ ուխտիս մէջ չմնացան, եւ ալ անոնց եղայ անոնց վրայով, կ'ըսէ Տէրը։ 10 – Քանզի այս է այն ուխտը՝ զոր Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. իմ օրէնքներս անոնց միտքին մէջ պիտի դնեմ, եւ անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան։ 11 – Ու ըսելու պիտի չսորվեցնեն ամէն մէկը իր ընկերին, և ամէն մէկը իր եղբօրը, ըսելով թէ Տէրը ճանչցիր. քանզի անոնց պզտիկէն մինչեւ մեծը ամէնը պիտի ճանչնան. 12 – Վասն զի ես անոնց անիրաւութիւններուն ներող պիտի ըլլամ, և անոնց մեղքերը ու անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ։

13 – Նոր ըսելովը առաջինը հինցուց. ու այն որ կը հինցնայ և կը ծերանայ, ա՛լ կորսուտի մօտ է։

## Գլ. Թ

Արդարեւ առաջին ուխտն ալ ունէր պաշտամունքին կանոնադրութիւնները ու աշխարհային սուրբ տեղ։ 2-Վասն զի առաջին խորանը, որ Սրբութիւն կ'ըսուէր, այսպէս կազմուեցաւ, որուն մէջ կար աշտանակը ու սեղանը և առաջաւորութեան հացը։ 3-Ու երկրորդ վարագուրին ետեւն այն խորանը՝ որ Սրբութիւն սրբութեանց կ'ըսուէր. 4-Որուն մէջ էր ոսկի բուրվառը, և ուխտին տապանակը, ամէն կողմէն ոսկիով պատած. որուն մէջ էր ոսկիէ սափորը մանանայով լեցուն, և Ահարոնի գաւազանը որ ծաղկեցաւ, և ուխտին տախտակները, 5-Ու անոր վրայէն փառաց քերովբէները՝ որ քաւութիւնին վրայ հովանի կ'ընէին. որոնց համար պէտ չէ հիմա մեկիկ մեկիկ զրուցել։

6 – Ու այս բաները այսպէս կարգադրուած ըլլալով, առաջին խորանը առին ատեն կը մտնէին քահանաները՝ պաշտամունքը կատարելու. 7 – Բայց երկրորդը տարին անգամ մը միայն քահանայապետը կը դնէր, ոչ թէ առանց արիւնի, զոր իրեն համար ու ժողովուրդին ախտմունքներուն համար կը մատուցանէր. 8-Հոգին Սուրբ զայս ցուցնելով թէ սրբարանին ճանապարհը յայտնի եղած չէր, քանի որ առաջին խորանը կը կենար. 9-Որ օրինակ մըն էր այն ժամանակին՝ որ պատարագներ ու զոհեր կը մատուցուէին, որոնք խղճմտանքի կատարեալ չէին կրնար կատարեալ ընել պաշտօն մատուցանողը, հապա միայն կերակուրներով ու խմելիքներով, 10 – Ու կերպ կերպ լուացմունքներով՝ մարմնաւոր արարողութիւններ էին, որոնք մինչեւ ուղղութեան ատենը կը կենային։ 11-Բայց երբ Քրիստոս եկաւ, գալու բարիքներուն քահանայապետը, աւելի մեծ ու կատարեալ և անձեռագործ խորանով, այսինքն անով որ այս ստեղծուածներէն չէ, 12 – Ոչ ալ նոխազներու ու զատարակներու արիւնով, հապա իր արիւնով մէկ անգամ սրբարանը մտաւ՝ յաւիտենական փրկութիւն ստանալով։ 13 – Վասն զի եթէ ցուլերուն ու նոխազներուն արիւնը և երինջին մոխիրը ապականելով պղծեալները կը սրբէր մարմինի մաքրութեան կազմանէ, 14 – Ա՛րչափ աւելի Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգիին ձեռքով իր անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած գործերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու։

15 – Եւ ասոր համար ինք նոր ուխտին միջնորդն է, որպէս զի էր մնացի առաջին ուխտին ժամանակը փոշմանած յանցանքներուն քաւութեանը համար եղած ըլլալով, հրաւիրուածները յաւիտենական ժառանգութեան խոստմունքը առնեն։ 16 – Քանզի ուր կտակ մը ըլլայ, հարկ է որ կտակը ընողին մահը մէջ մտնէ. 17 – Վասն զի կտակը մեռնելէն ետեւ հաստատ կ'ըլլայ. քանզի ընաւ վաւերականութիւն չունենար քանի որ կտակը ընողը ողջ է։ 18 – Անոր համար առաջին ուխտն ալ առանց արիւնի չէր հաստատուեր։ 19 – Վասն զի երբ Մովսէս օրէնքին ամէն պատուիրները բոլոր ժողովուրդին պատմեց, ցուլերուն ու նոխազներուն արիւնը առնելով՝ ջուրով ու կարմիր բուրդով և զոպայով բուն գիրքին և բոլոր ժողովուրդին վրայ սրսկեց. 20 – Ու ըսաւ, Ասիկա է այն ուխտին արիւնը, զոր Աստուած ձեզի պատուիրեց։ 21 – Ու խորանին վրայ ու պաշտօնին բոլոր գործիքներուն վրայ նոյնպէս սրսկեց արիւնը։ 22 – Ու գրեթէ ամէն բան արիւնով կը մաքրուի օրէնքին նայելով, ու արիւն չթափուած թողութիւն չըլլար։

23 – Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները ասոնցմով մաքրուէին. բայց բուն երկնաւորները՝ անոնցմէ աւելի ազնիւ զոհերով։ 24 – Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ ճշմարիտին օրինակն է, հապա բուն երկինքը՝ որպէս զի հիմա մեզի համար Աստուծոյ առջեւ ներկայանայ. 25 – Ոչ թէ՝ որպէս զի շատ անգամ իր անձը պատրաստ մատուցանէ, ինչպէս քահանայապետը՝ որ ամէն տարի սրբարանը կը մտնէ իրը չեզած արիւնով. 26 – Ապա թէ ոչ՝ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետէ շատ անգամ չարչարուիլ. բայց հիմա մէկ անգամ դարերուն վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու համար։ 27 – Ու ինչպէս մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան, 28 – Նոյնպէս ալ Քրիստոս մէկ անգամ պատրաստ մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար անոնց որոնք անոր կը սպասեն։

## Գլ. Ժ

Քանզի օրէնքը գալու բարիքներուն շուքը, ու ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով, միշտ ամէն տարի մատուցուած նոյն զոհերով երբէք չկրնար կատարեալ ընել զանոնք որ կը մօտենան։ 2 – Ապա թէ ոչ՝ պիտի չդադարէին մատուցուելէն, պաշտօնն մատուցանողներուն մէկ անգամ մաքրուելէն ետեւ ա՛լ մեղքի վրայով խղճմտանքի յանդիմանութիւն մը չունենալնուն համար։ 3 – Բայց անոնցմով ամէն տարի մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ. 4 – Վասն զի նոխազներուն ու ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցնել։ 5 – Անոր համար իր աշխարհ մտնելուս առենը կ'ըսէ, Զոհ ու ընծայ չուզեցիր դուն, հապա ինծի մարմին մը պատրաստեցիր. 6 – Ողջակէզներու ու մեղքի պատարագներու չհաճեցար։ 7 – Ա՛յն առեն ըսի, Ահա կուգամ ես, (գիրքի սոմակի մէջ ինծի համար գրուած է,) քու կամքդ ընելու, ով Աստուած։ 8 – Վերը ըսելով թէ Զոհ ու ընծայ և ողջակէզներ ու մեղքի պատարագները չուզեցիր՝ ու անոնց չհաճեցար, (որոնք օրէնքին համեմատ կը մատուցուին,) 9 – Ետքը կ'ըսէ, Ահա կուգամ ես քու կամքդ ընելու, ով Աստուած. առաջինը կը հերքէ որպէս զի երկրորդը հաստատէ. 10 – Որ կամքով մենք ալ սրբուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինէն մէկ անգամ պատարագուելովը։

11 – Եւ ամէն քահանայ օր ըստ օրէ իր պաշտօնին մէջ կը կենայ, և նոյն զոհերը շատ անգամ կը մատուցանէ, որոնք երբէք չեն կրնար մեղքերը վերցնել. 12 – Բայց ասիկա մէկ զոհ մատուցանելով մեղքերու համար, մշտնջենաւորապէս Աստուծոյ ալ կողմն նստաւ. 13 – Եւ ասկէ ետեւ կը սպասէ, մինչեւ իր թշնամիները իր ոտքերուն պատառանդան գրուին։ 14 – Վասն զի մէկ պատարագով մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները։

15 – Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կու տայ, քանզի առաջուընէ ըսէլէն ետեւ 16 – Թէ Ա՛յս է այն ուխտը՝ զոր ես անոնց հետ պիտի ընեմ այն օրերէն ետքը, (կ'ըսէ Տէրը,) իմ օրէնքներս անոնց սրտին մէջ պիտի դնեմ, ու անոնց միտքին մէջ պիտի գրեմ զանոնք. 17 – Եւ ետքը կ'ըսէ թէ Անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ։ 18 – Իսկ ուրասոնց թողութիւն կայ, ա՛լ մեղքի համար պատարագ պէտ չէ։

19 – Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունենալով սուրբ տեղը

մանելու ցիսուսի սրբութեանը, 20 – Ա.ին նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ մեզի վարագուրին միջէն, որ է իր մարմինը, 21 – եւ մեծ քահանայ մը ունենալով Աստուծոյ տանը վրայ, 22 – Մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն հաւատքով, սիրտերնիս չար խիղճէն մաքրուած, ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած . 23 – Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաստատուած է անիկա որ խոստացաւ : 24 – Եւ իրարու հոգ տանինք՝ սիրոյ և բարեգործութեան գրգռելով . 25 – Եւ մեկտեղ ժողովուիլը չթողունք , ինչպես սովոր սովորութիւն ունին . հապա դէպքէ յորդորենք , ու այնչափ աւելի՝ որչափ այն օրուան մօտենալը կը տեսնէք։

26 – Վասն զի եթէ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէ հաւ կամաւ մեզ գործելու ըլլանք, ալ անկէ հաւ մեզ զոհ մը չմնար, 27 – Հապա դարհուրելի սպասել մը դատաստանին, ու կրակի բարկութիւն մը իւ հաւ, որ պիտի լափէ հակառակորդները։ 28 – Մէկը եթէ Մովսէսի օրէնքը անարգէր , առանց ողորմութեան երկու կամ երեք վկաներով կը մեռնէր. 29-Ա.լ ո՛րչափ սաստիկ պատժի արժանի պիտի սեպուի կը կարծէք անկա, որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ , և սխալին արիւնը անմաքուր սեպեց, որով ինք սրբուեցաւ, և շնորհաց Հոգին նախատեց ։ 30 – Քանզի գիտենք զանիկա որ ըսաւ, Իմն է վրէժխնդրութիւնը , ես պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը . և դարձեալ՝ Տէրը պիտի դատէ իր ժողովուրդը ։ 31 – Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը ընկնելը։

32 – Արդ միտքերնիդ բերէք այն առաջին օրերը, որոնց մէջ լուսաւորուելէ հաւ շատ տառապանքներ կրեցիք. 33 – Երբեմն նախատինքներով ու վիշտերով խայտառակուած , երբեմն ալ այսպիսի վիճակի մէջ եղողներուն կցորդ ըլլալով ։ 34 – Վասն զի *իմ կապերուս մէջ բնկղճ չարչարակից եղաք, ու ձեր ստացուածքին կողոպտուիլը ուրախութեամբ ընդունեցիք , գիտնալով որ լաւագոյն և մնայուն ստացուածքներ ունիք ձեզի երկինքը։

35 – Ուստի չկորսնցնէք մի ձգէք ձեր վստահութիւնը, որ մեծ վարձքի հատուցում ունի ։ 36 – Վասն զի պէտք է ձեզի համբերութիւն , որպէս զի Աստուծոյ կամքը ընելով՝ խոստումնալը վայելէք. 37 – Քանզի ալ տակէ քիչ մը տեւենէն ան որ գալու է՝ պիտի գայ ու պիտի չուշանայ։ 38-Եւ Արդարը հաւատքէն պիտի ապրի. ու եթէ մէկը ետ քաշուի, իմ հոգիս անոր չհաճիր։ 39-Բայց մենք ետ չենք քաշուիր որ կորսուինք, հապա կը հաւատանք որ ձեր հոգին փրկուի ։

## Գ.Լ. Ժ.Ա.

Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը ու չերեւցած բաներուն ապացոյցն է. 2 – Վասն զի անով առաջնիները վկայութիւն ընդունեցին։

3 – Հաւատքով կ'իմանանք թէ աշխարհ Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ, ու աներեւոյթ բաներէն այս երեւցածները եղան։

4 – Հաւատքով Աբէլ Կայէնէ աւելի պզտիկ զոհ մատուց Աստուծոյ, որով վկայուեցաւ արդար ըլլալը . վասն զի իր պատարագներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ էրէն. և անով, թէպէտ մեռաւ, բայց ասկաւին կը խօսի։

5 – Հաւատքով Ենովք էրէթէ փոխադրուեցաւ որպէս զի մահ չտեսնէ . ու գտնուեր չէր գանուեր, վասն զի Աստուած փոխադրեց զանիկա . քանզի անոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ հաճելի էր ։ 6 – Բայց առանց հաւատքի անկնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ . վասն զի ան որ Աստուծոյ կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ Աստուած կայ , և թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց որ զինք կը փնտռեն։

7 – Հաւատքով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ դեռ չերեւցած բաներուն համար , վախնալով տապանը շինեց իր տունը փրկելու համար, որով աշխարհս դատապարտեց, և ժառանգաւոր եղաւ այն արդարութեանը որ հաւատքով կ'ըլլայ։

8 – Հաւատքով , երբ Աբրահամ կանչուեցաւ, մնիկ բրաւ այն տեղը ելլելու, զոր ժառանգութիւն պիտի առնէր. և ելաւ գնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ ։ 9 – Հաւատքով պանդխտացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտարութեան մէջ, և վրանները մէջ բնակեցաւ Իսահակի ու Յակոբի հետ մեկտեղ , որոնք իրեն հետ ժառանգորդ էին նոյն խոստումնալին . 10 – Վասն զի ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարապետը ու արարիչը Աստուած է։

11 – Հաւատքով ինք Սառա ալ արդիւնաբերելու զօրութիւն ընդունեց, և ատեանը անցած հասակի մէջ ծնաւ. վասն զի հաւատարիմ սեպեց զանիկա որ խոստումնալը ըրեր էր։ 12 – Ուստի այն մեկէն ծնան, (այն ալ մեռածի պէս,) շատութեան կողմէ երկինքի աստղերուն պէս , ու ծովեզերքը եղած աւազին պէս առանց համմանելու։

13 – Ասոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստումնալները չառած , հապա հեռուէն տեսան զանոնք ու *ողջունեցին, և խոստովանցան թէ երկնք օտարներ ու պանդխտներ են երկրի վրայ։ 14 – Քանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին , յայտնի կ'ընեն թէ գաւառ մը կը փնտռեն։ 15-Եւ իրաւի եթէ զանիկա յիշէին՝ ուրկէ որ ելան , ժամանակ ունէին հոն դառնալու։ 16-Բայց հիմա լաւագոյն հայրենիք մը կը փափաքին, այսինքն երկնաւորին. ուստի ամօթ չսեպեր Աստուած անոնց Աստուածը ըսուիլ , վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց։

17 – Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատեն Իսահակը պատրաստ մատուց. և ան որ խոստումնալները առած էր, էր մէկ հատիկ որդին կը մատուցաներ։ 18 – Որու ըսուեցաւ թէ Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի. 19-Քանզի կը մտածէր թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցանել. ուրկէ օրինակով մը ընդունեց զանիկա։

20 – Հաւատքով Իսահակ գալու բաներուն համար Յակոբը ու Եսաւը։ 21 – Հաւատքով Յակոբ իր մեռնելու ատենը՝ Յովսէփի որդիներէն ամէն մէկը օրհնեց , ու երկրպագութիւն ըրաւ իր գաւազանին գլխուն վրայ ։ 22 – Հաւատքով Յովսէփ իր վախճանելու ատենը յիշեցաւ Իսրայէլի որդիներուն Եգիպտոսէ ելլելը, ու իր ոսկորներուն համար պատուէր տուաւ։

23 – Հաւատքով , երբ ծնաւ Մովսէս, իր ծնողներուն ձեռքով երեք ամիս գաղտուկ պահուեցաւ . վասն զի տղան գեղեցիկ տեսան , ու չվախցան թագաւորին հրամանէն։ 24 – Հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, չընդունեց փարաւոնի աղջկան որդի ըսուիլ . 25-Քանզի աւելի ազէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ , քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելել . 26 – Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը . վասն զի դիտելով կը սպասէր վարձքի հատուցումին. 27-Հաւատքով Եգիպտոսը թողուց, ու չվախցաւ թագաւորին բարկութենէն. վասն զի համբերեց՝ որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր։ 28 – Հաւատքով զրաւ զատիկը և արիւնն սրսկելը, որպէս զի անդրանիկները ապակեցնողը իրենց չդպչի։

29 – Հաւատքով Կարմիր ծովէն անցան որպէս թէ ցամաքէ. որուն փորձը ընելով Եգիպտացիները ընկղմեցան։

30 – Հաւատքով Երիքովի պարիսպները լինկան՝ եօթը օր անոնց բոլորուելնէ պոլտեղով։

31 – Հաւատքով Ռախաբ պոռնիկը անհաւատներուն հետ չկորսուեցաւ , որ լրտեսները խաղաղութեամբ ընդուներ էր։

32 – Եւ ալ ի՞նչ ըսեմ. վասն զի ժամանակը բաւական չէ որ պատմեմ Գեդէոնի ու Բարակի և Սամփսոնի ու Յեփթայէի և Դաւիթի ու Սամուէլի և մարգարէներուն համար. 33 – Որոնք հաւատքով թագաւորութիւններու յաղթեցին, արդարութիւն գործեցին , խոստումնալներու հասան , առիւծներու բերանները գոցեցին , 34 – Կրակի զօրութիւն մարեցին , սուրի բերնէ պրատեցան, տկարութենէ ուժովցան, պատերազմի մէջ զօրաւոր եղան, օտարներու բանակներ ցրուեցին, 35 – Կիներ իրենց մեռելները ընդունեցին յարութիւն առած. ոմանք չարչարեցան և չընդունեցին ազատութիւնը, որպէս զի լաւագոյն յարութեան հասնին. 36 – Ուրիշներ ալ նախատինքներու ու ծեծերու , նաև կապերու ու բանտերու փորձ տուին. 37-Քարկոծուեցան , սղոցուեցան , փոր-

*Ո՛ման, հաւատալով ողջունեցին





*Ո՛ման, կապուածներուն

ձանքի մէջ ինկան, որով սպաննուելով մեռան, ոչխարի մորթերով ու այծի մորթերով պաշտեցան, կաթսաներ ինին քաշելով, նեղը լմնալով, չարչարուելով, 38 – (Որոնց արժանի չէր աշխարհս,) անապատներու ու լեռներու և այրերու ու երկրի խոռոչներու մէջ մնալուելով։

39 – Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստմունքը չստին. 40 – Վասնզի Աստուած մեզի համար աւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որպէս զի անոնք առանց մեզի չկատարուին։

## Գլ. ԺԲ

Ուստի մենք ալ, որ այսչափ վկաներուն *բազմութիւնը մեր բոլորտիքը պատած ունինք, ամէն ծանրութիւն մեր վրայէն մէկդի ձգենք, և դիւրաբաց պաշարող մեղքը, ու համբերութիւնով վազենք մեր առջեւ դրուած ասպարէզի ընթացքը. 2 – Յիսուսի նայելնիք, Հաւատքին առաջնորդին ու կատարողին, որ այն ուրախութեանը համար որ իր առջեւ կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթոռին ա՛ջ կողմը նստաւ։

3 – Արդ միտք բերէք զանիկա, որ այսպէս համբերեց մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսելուն, որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլնաք։ 4-Տակաւին արիւն Խ*էլ չտի պատերազմելով հակառակ չկեցաք մեզքին. 5 – Եւ մոռցաք այն յորդորանքը որ ձեզի հետ կը խօսի որպէս թէ որդիներու հետ, Որդեակ իմ, Տէրոջը խրատը մի անարգեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի թուլնար։ 6 – Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ, և կը ծեծէ ամէն որդին զոր կ'ընդունի։ 7 – Եթէ խրատի համբերէք, Աստուած ձեզի հետ որպէս թէ որդիներու հետ կը վարուի. քանզի ո՞ր որդին է՝ զոր Հայրը չպատժեր։ 8 – Իսկ եթէ դուք առանց խրատի ըլլաք, որու ամէնը մասնակից եղան, ուրեմն խորթ էք դուք ու ոչ թէ որդիներ։ 9 – Նաև մեր մարմնաւոր Հայրերը ծեփ խրատիչ ունենալով՝ անոնց կ'ամչնայինք. չէ՞ որ ալ աւելի պիտի հնազանդինք Հոգիներուն Հօրը ու ապրինք։ 10 – Վասն զի ասոնք քիչ օրեր ծէզ կը խրատէին իրենց հաճոյ երեւցածին պէս, բայց անիկա ծէզ օգուտին համար՝ որպէս զի իր սրբութեանը հաղորդ ըլլանք։ 11 – Եւ յիրաւի ամէն խրատ նոյն ատեն ուրախարար չ'ծուիր, հապա տրտմական, բայց ետքը արդարութեան խաղաղաւոր պտուղը կը հատուցանէ անով վարժուածներուն։

12 – Ուստի թուլցած ձեռքերը ու տկար ծունկերը հաստատեցէք. 13 – Եւ շիտակ ճամբաներ ըրէք ձեր ոտքերուն, որ չըլլայ թէ ան որ կաղ է՝ *խոտորի, այլ մանաւանդ բժշկուի։ 14 – Խաղաղութեան հետէ եղէք ամէնուն հետ և սրբութեան, առանց որուն մէկը պիտի չտեսնէ Տէրը։ 15 – Զգուշացէք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ. չըլլայ որ դառնութեան արմատ մը վեր երեւնալով՝ չեղնեղէ, ու անով շատերը պղծուին. 16 – Չըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ, կամ անուսը՝ Եսաւի պէս, որ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախեց։ 17 – Գիտի գիտէք որ թէպէտ ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել, բայց մերժուեցաւ. վասն զի ապաշխարութեան տեղ չգտաւ հօրը վրայ, թէպէտև արցունքով խնդրեց զանիկա։

18 – Վասն զի դուք մօտեցած չէք շօշափելի լեռանը, որ կրակով կը վառէր, ոչ ալ մէգին և խաւարին ու մրրկին, 19-Եւ փողին հնչուելուն, ու խօսքերուն ձայնին, զոր լսողները աղաչեցին որ ան՛ալին ալ այն խօսքը չրսուի իրենց. 20-Վասն զի չէին կրնար տանիլ այն հրամանին, Եթէ գազան մին ալ լեռանը դպչի՝ պիտի քարկոծուի†։ 21-Եւ այնպէս ահագին էր այն երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ, Սաստիկ կը վախնամ ու կը դողամ։ 22 – Հապց դուք Սիօն լեռանը մօտեցեր էք, ու կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմի, և բիւրաւոր հրեշտակներուն, 23 – Ու երկինքը գրուած անդրանիկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին, և Աստուծոյ որ ամէնուն Դատաւորն է, ու արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարուեր են, 24 – Եւ Յիսուսի՝ որ նոր ուխտին միջնորդն է, ու արկածելու արիւնին՝ որ Աբելի աբիւնէն աւելի աղէկ կը խօսի։

*Յոան. ամպը

*Կամ, գլորի †Մատ. ե'աելնէն, կամ նետով զարնուի



25 – Զգուշացէք, չըլլայ որ մերժէք զանիկա որ չէվէ կը խօսի. վասն զի եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ պատգամները խօսողը մերժելով չազատեցան, ո՛րչափ աւելի մենք՝ եթէ երկինքէն խօսողէն երես դարձնենք. 26 – Որուն ձայնը այն ատեն երկիրը շարժեց, և հիմա խոստացեր է ու կ'ըսէ, Նորէն պիտի շարժեմ, ոչ թէ միայն երկիրը, հապա նաև երկինքը։ 27 – Եւ այն Նորէն բառը կը ցուցնէ շարժուած բաներուն յեղափոխութիւնը շինուած բաներու պէս, որպէս զի անշարժ բաները հաստատուն մնան։ 28 – Ուստի անշարժ թագաւորութիւնը առած ըլլալով՝ եա՛ք լուանանք այն շնորհքը, որով զԱստուած պաշտենք հաճոյական կերպով, ակնածութեամբ և բարեպաշտութեամբ. 29 – Վասն զի մեր Աստուածը մեծ կրակ է։

## Գլ. ԺԳ

Եղբայրասիրութիւնը չէր դէզ հաստատ մնայ։ 2 – Հիւրասիրութիւնը մի մոռնաք, վասն զի անով անոնք գիտցած են ընդունեցին հրեշտակներ չգիտնալով։ 3 – Մի՛ բերնիդ բլլան կապուածները, որպէս թէ անոնց հետ դուք ալ կապուած եք. և չարչարուածները՝ որպէս թէ դուք ալ մարմին ունեցող եք։ 4 – Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, ու անկողինը անարատ է. բայց պոռնիկները ու շնացողները Աստուած պիտի դատէ։ 5 – Բայց երնիդ արծաթասէր չըլլայ, բաւական սեպեցէք որ չափ բան որ ձեռքերնիդ կայ. վասն զի ինք ըսած է թէ Ինձ քեզ պիտի չթողում՝ ու ընաւ քեզ երեսէ պիտի չձգեմ։ 6 – Այնպէս որ համարձակ ըլլանք ըսելու, Տէրը իմ օգնականս է, ու ես պիտի չվախնամ. մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ։ 7 – Յիշեցէք ձեր առաջնորդները որոնք Աստուծոյ խօսքը ձեզի խօսեցան, և անոնց վարմունքին վախճանին նայելով՝ էջնէց հետեւեցէն նմանող եղէք։ 8 – Յիսուս Քրիստոս նոյն է երեկ ու այսօր և յաւիտեանս։

9 – Կերպ կերպ և օտարամոյն ուսմունքներով մի տարուբերիք, քանզի աղէկ է որ սիրտը շնորհքով հաստատուի ո՛չ թէ կերակուրներով, որոնցմով օգուտ մը չունեցան անոնք որ այնպէս զացին։ 10 – Սեղան մը ունինք մենք, ուրկէ իշխանութիւն չունին ուտելու անոնք որ խորանին ծառայութիւն կ'ընեն։ 11-Քանզի ո՛ր անասուններուն արիւնը որ սուրբ տեղը կը տարուի մեղքի համար քահանայապետին ձեռքով, անոնց մարմինները բանակէն դուրս կ'այրուին։ 12 – Ուստի Յիսուս ալ, իր արիւնովը ժողովուրդը սրբելու համար, դուրսը չարչարուեցաւ։ 13 – Ուրեմն երթ+ իրեն երթանք բանակէն դուրս, մեր վրայ առնելով անոր նախատինքը։ 14 – Վասն զի մենք հոս մնայուն քաղաք չունինք, հապա հանդերձեալը կը փնտռենք։ 15-Ուստի անոր ձեռքով ամէն ատեն Աստուծոյ օրհնութեան պատարագ մատուցանենք, այսինքն ծէզ շրթունքներուն պտուղը, որոնք իր անունը կը դաւանին։ 16 – Իսկ բարերարութիւնը ու ե՛ղբօրենբ հաղորդակցութիւնը մի մոռնաք, վասն զի Աստուած այնպիսի պատարագներու կը հաւնի։ 17 – Ձեր առաջնորդներուն մնիկ ըրէք ու անոնց հնազանդ կեցէք, վասն զի անոնք ձեր հոգիներուն համար կը հսկեն, որպէս թէ հաշիւ պիտի տան. որպէս զի խնդութիւնով ընեն այն ծառայութիւնը, և ոչ թէ հառաչելով, վասն զի այն ձեզի օգտակար չէ։ 18 – Մեզի համար աղօթք ըրէք, վասն զի մենք համոզուած ենք թէ աղէկ խղճմտանք ունինք, և ամէն բանի մէջ կ'ուզենք աղէկ վարմունք ունենալ։ 19 – Եւ մանաւանդ կ'աղաչեմ որ դայս ընէք, որպէս զի աւելի շուտով ձեզի դառնամ։

20 – Եւ խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն յարուցց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտենական ուխտին արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն է, 21 – Ձեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ իր կամքը ընելու, և ձեր մէջ իր առջեւ հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքով, որու փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

22 – Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, այս յորդորական խօսքիս համբերել, վասն զի համառօտապար գրեցի ձեզի։ 23 – Գիտցէք որ ծէզ եղբայրը Տիմոթէոս արձակուած է, որու հետ, եթէ շուտով գայ, պիտի տեսնեմ ձեզ։ 24-Բարև ըրէք ձեր բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն. ձեզի բարև կ'ընեն անոնք որ Իտալիայէ են։ Շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ։ Ամէն։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ԳԼՈՒԽ Ա.

Յակոբոս, Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ, տասներկու ցեղերուն, որ ցրուած կը, ողջոյն։

2 – Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'ինկնաք, 3-Գիտնալով որ ձեր հաւատքին փորձառութիւնը համբերութիւն կը գործէ։ 4 – Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որպէս զի կատարեալ ու ամբողջ ըլլաք, ու բանի մը պակասութիւն չունենաք։

5 – Ապա եթէ ձեզմէ մէկը իմաստութիւնն պակասած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ, որ ամէնուն առատապէս կու տայ ու չնախատեր, և անոր պիտի տրուի։ 6-Մխայն թէ հաւատքով թող խնդրէ ու չերկմտի. վասն զի ան որ երկմիտ է, ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն նման է. 7 – Ան մարդը թող չկարծէ որ Տէրոջմէ բան մը պիտի առնէ։ 8 – երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ։

9 – Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ թող պարծենայ, 10 – Եւ ան որ հարուստ է, իր խոնարհութեանը վրայ, վասն զի անիկա խոտի ծաղկին պէս պիտի անցնի. 11 – Քանզի արեւը ատակ տաքութիւնով մը կը ծագի ու կը ցամքեցնէ խոտը, և անոր ծաղիկը կը թափի, ու անոր երեւութին գեղեցկութիւնն ալ կը կորսուի. նոյնպէս ալ հարուստը իր ճամբաներուն մէջ պիտի թառամի։

12 – Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ. վասն զի եթէ փորձուելով ընաիր գտնուի, կենաց պսակը պիտի առնէ, զոր Տէրը զինք սիրողներուն խոստացաւ։ 13 – Ձըլլայ որ մէկը, որ փորձութեան մէջ է, ըսէ թէ Աստուծմէ կը փորձուիմ. վասն զի Աստուած չար բաներով չփորձուիր, ոչ ալ ինք մէկը կը փորձէ։ 14-Սակայն ամէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն հրապուրուած ու խաբուած. 15 – Անկէ ետև ցանկութիւնը յղանալով՝ մեղք կը ծնանի, և մեղքը որ կատարուի՝ մահ կը ծնանի։ 16 – Մի խաբուիք, իմ սիրելի եղբայրներս. 17 – Ամէն բարի տուրք ու ամէն կատարեալ պարգեւ վերէն է, և լուսոյ Հօրմէն կ'իջնէ, որուն մէջ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու շուք մը չկայ։ 18 – Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը, որպէս զի մենք իր ստեղծածներուն երախայրիք մը ըլլանք։ 19 – Ուստի, իմ սիրելի եղբայրներս, ամէն մարդ թող շուտ ըլլայ լսելու, ու ծանր՝ խօսելու, և ծանր՝ բարկանալու. 20 – Վասն զի մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չգործեր։

21 – Ուստի ամէն աղտեղութիւնը ու չարութեան առատութիւնը մէկդի ձգելով, հեզութեամբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել։

22 – Բայց խօսքը կատարողներ եղէք, և ոչ թէ միայն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով։ 23 – Վասն զի եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատարող չըլլայ, անիկա նման է մարդու մը՝ որ հայելիի մէջ աչքերը անկած իր բնական երեսը կը դիտէ. 24 – Վասն զի դիտելով անոնք ինքզինք ու անցաւ գնաց, և շատ մը մոռցաւ թէ ինչպիսի մէկն էր։ 25 – Բայց ան որ ազատութեան կատարեալ օրէնքին աչքն անկիզով կը նայի, և անոր մէջ կը կեանայ, անիկա խօսքը լսող — մոռցող չըլլալով, հապա գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելութեան մէջ։ 26 – Եթէ *մէկը ինք կրօնաւոր կը սեպէ ու իր լեզուին սանձ չդներ, հապա իր սիրտը կը խաբէ, այնպիսւոյն կրօնաւորութիւնը փուճ է։ 27 – Աստուծոյ ու Հօրը քով մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը այս է. Որբերուն ու որբևայրերուն տես երթալ իրենց նեղութեան ատեն, ու անձը անարատ պահել աշխարհէ։

*Ո՛ման, ձեզմէ մէկը

## ԳԼ. Բ

Իմ եղբայրներս, չըլլայ որ աչառութիւնով բռնէք հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, փառաց Տէրոջ 2 – Քանզի եթէ ձեր ժողովքին մէջ մարդ մը մտնելու ըլլայ, որ ոսկեայ օղակ մատանի և փառաւոր հանդերձներ, հոն աղքատ մըն ալ մտնելու ըլլայ աղտոտ հանդերձներով, 3 – Եւ նայիք անոր վրայ որ փառաւոր հանդերձներ ունի, ու ըսէք թէ Դուն հոս նստէ պատուով, և ան աղքատին ըսէք թէ Դուն հոդ ոտքի վրայ կայնէ, կամ եւս նստէ պատուանդանիս քով, 4 – Ձեր մէջ խտրութիւններ ընող ու չար խորհուրդներու դատաւոր չէ՞ք ըլլար։ 5 – Մտիկ ըրէք, սիրելի եղբայրներս, չէ՞ որ Աստուած աշխարհի աղքատները ընտրեց, որոնք հաւատքով հարուստ են, ու ժառանգաւոր արքայութեան որ ինք իր սիրողներուն խոստացաւ։ 6 – Բայց դուք աղքատները մեծարգեցիք. հարստահարողը չէ՞ն որ ձեզ կը հարստահարեն, ու ձեզ դատաստանարանները կը քաշեն։ 7 – Անոնք չէ՞ն որ կը հայհոյեն այն բարի անունը որ ձեր վրայ կանչուած է։ 8 – Արդ եթէ դուք արքունական օրէնքը կը կատարէք գիրքին ըստ՝ Սիրէ մտերիմդ թէ ինքզինքդ սիրես քու ընկերդ՝ լաւ կ'ընէք. 9 – Բայց եթէ ազգաւորութիւն կ'ընէք, մեղք կը գործէք, և օրէնքէն կը յանդիմանուիք օրինազանցներու պէս։ 10-Քանզի ով որ բոլոր օրէնքը պահէ, ու մէկ բանի մէջ յանցաւոր ըլլայ, անիկա ամէնուն պարտական կ'ըլլայ։ 11 – Վասն զի ան որ ըսաւ թէ Շնութիւն մի ընէր, ըսաւ ալ թէ Մի սպանաներ. ուստի եթէ շնութիւն չընես բայց սպանութիւն ընես, օրինազանց կ'ըլլաս։ 12 – Այնպէս խօսեցէք և այնպէս ըրէք՝ որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի դատուիք։ 13-Վասն զի դատաստանը անողորմ պիտի ըլլայ անոր որ ողորմութիւն չընէր. և ողորմութիւնը կը պարծենայ դատաստանին դիմաց։

14-Ինչ օգուտ է, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի, ու գործ չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա։ 15-Եթէ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ, կամ օրուան կերակուրին կարօտ, 16-Ու ձեզմէ մէկը անոնց ըսէ, Գացէք խաղաղութեամբ, տաքցէք ու կշտացէք. Եւ մարմինին պէտք եղած բաները անոնց չտաք, ինչ օգուտ է, 17 – Այսպէս ալ հաւատքը եթէ էրէն հեռ գործ չունենայ, ըստ ինքեան մեռած է։ 18 – Նաև կրնայ մէկը ըսել թէ Դուն հաւատք ունիս, ես ալ գործեր ունիմ. դուն քու հաւատքդ ցուցուր ինծի առանց գործերու, ու ես քեզի ցուցնեմ իմ հաւատքս իմ գործերս։ 19 – Դուն կը հաւատաս որ Աստուած մէկ է. աղէկ կ'ընես. դեւերն ալ կը հաւատան և կը սարսափին։ 20 – Բայց կ'ուզե՞ս գիտնալ դուն, ով անոտի մարդ, որ հաւատքը առանց գործերու մեռած է։ 21 – Աբրահամ մեր հայրը գործերով չարդարացա՞ւ, երբ իր որդին Իսահակը սեղանին վրայ հանեց զոհ ընե՞լու։ 22 – Կը տեսնե՞ս որ հաւատքը անոր գործերուն հետ մէկտեղ գործեց, ու այն գործերով հաւատքը կատարեալ եղաւ։ 23 – Եւ գիրքին խօսքը կատարուեցաւ, որ կ'ըսէ, Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու այն իրեն արդարութիւն սեպուեցաւ. և ինք Աստուծոյ բարեկամ ըսուեցաւ։ 24 – Կը տեսնէ՞ք որ մարդ գործերով կ'արդարանայ, ու ոչ թէ միայն հաւատքով։ 25 – Նոյնպէս ալ Ռախաբ պոռնիկը չէ՞ որ գործերով արդարացաւ, երբ լրտեսները ներս առաւ, և ուրիշ ճամբայով արձակեց զանո՞ւ։ 26 – Քանզի ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, նոյնպէս ալ հաւատքը առանց գործերու մեռած է։

## ԳԼ. Գ

Եղբայրներս, շատ վարդապետներ մի ըլլաք, գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի ընդունինք. 2 – Վասն զի ամէնս ալ շատ յանցանքներ կ'ընենք. եթէ մէկը խօսքով յանցանք չընէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձել։ 3 – Տես որ ձիերուն բերանը սանձ կը դնենք, որպէս զի անոնք մեզի հնազանդին, ու անոնց բոլոր մարմինը կը

կատավարենք ։ 4 – Ա.Հա նաւերն ալ ո՛րչափ մեծ բաներ են, և սաստիկ հովերէն կը քշուին, բայց ամենափոքր ղեկով մը կը կառավարուին՝ ղեկավարին կամքը ո՛ր կողմը որ ուզէ ։ 5 – Ա.յսպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, ու մեծ բաներ կը խօսի ։ ահա քիչ մը կրակը ո՛րչափ բան բոցի կուտայ։ 6 – Լեզուն ալ կրակ մըն է, աներեսութեան աշխարհք մը ։ լեզուն մեր անդամներուն մէջ այնպէս դրուած է, որ բոլոր մարմինը կ'ապականէ, և բնութեան շրջանը կը բանկցնէ, ու ինք գէհենէն կը բանկի ։ 7 – Բոլոր գազաններուն ու թռչուններուն և սողուններուն ու ծովու եղածներուն բնութիւնը կը նուաճի՛ և նուաճուած է մարդկային բնութենէն ։ 8 – Բայց լեզուն մարդոց մէ՛կը չկրնար նուաճել ։ անիկա անզսպ չար է, – մնհաչաբեր թունով լեցուն ։ 9 – Անով կ'օրհնենք զԱստուած ու Հայրը, և անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են։ 10 – Միևնոյն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անէծք ։ եղբայրներս , պէտք չէ որ այս այսպէս ըլլայ ։ 11 – Միթէ աղբիւր մը միևնոյն բերնէն անուշ ու լեղի կը բղխէ՞ ։ 12 – Միթէ կարելի՞ է , եղբայրներս , որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ որթը թուզ ։ Նմանապէս չկրնար չէ որ աղբիւրէ մը ապի ու անուշ ջուր ելլէ։ 13 – Ձեր մէջ իմաստուն ու խելացի ո՞վ կայ ։ Թող անիկա բարի վարմունքովը ցուցնի իր գործերը իմաստութեան հեզութիւնով ։ 14 – Ապա եթէ դուն նախանձ և հակառակութիւն ունենաք սիրտերնուդ մէջ, մի պարծենաք ու ճշմարտութիւնը սուտ հանէք ։ 15 – Ա.յս իմաստութիւնը վերէն իջած չէ, հապա երկրաւոր , շնչաւոր և դիւական է ։ 16 – Քանզի ուր նախանձ ու կռիւ կայ, հոն է անկարգութիւնը և ամէն չար բաները։ 17 – Հապա վերէն իմաստութիւնը նախ սուրբ է, եռքը խաղաղարար, հեզ , հլու , ողորմութիւնով ու բարի պտուղներով լեցուն, անկողմնակալ ու անկեղծ։ 18 – Եւ արդարութեան պտուղը խաղաղութիւնով կը սերմանուի անոնց՝ որոնք խաղաղութիւն կ'ընեն ։

## Գ.Լ. Դ

Ո՞րկէ՞ են պատերազմները, և ո՞րկէ՞ կռիւները ձեր մէջ ։ չէ՞ որ ձեր ցանկութիւններէն՝ որոնք ձեր անդամներուն մէջ կը պատերազմին։ 2–Կը ցանկաք ու չունիք, կը սպանանէք ու կը նախանձիք , և չէք կրնար չէ՞ որ հասնիլ ։ կը պատերազմիք ու կը կռուիք , բայց չունիք , վասն զի չէք խնդրեր ։ 3–Կը խնդրէք ու չէք առներ, վասն զի չարաչար կը խնդրէք՝ որպէս զի ձեր ցանկութիւններուն բանեցնիք։ 4 – Շնացողներ, չէ՞ք գիտեր որ այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուստի ով որ կուզէ աշխարհի բարեկամ ըլլալ , կ'ընդդիմանայ Աստուծոյ թշնամի կ'ընէ։ 5 – Կամ թէ կը կարծէք որ գիրքը պարապ տեղ *կ'ըսէ թէ Նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին՝ ։ 6 – Սակայն աւելի շնորհք կուտայ ։ անոր համար կ'ըսէ , Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կուտայ։ 7–Ուստի հնազանդեցէք Աստուծոյ։ Սատանային հակառակ կեցէք, և անիկա ձեզմէ պիտի փախչի։ 8 – Աստուծոյ մօտեցէք, ու անիկա ձեզի պիտի մօտենայ։ սրբեցէք ձեռքերնիդ, մեղաւորներ, և մաքրեցէք սիրտերնիդ, երկմիտներ ։ 9 – Տառապանք քաշեցէք , սուգ ըրէք ու լացէք։ ձեր ծիծաղը սուգի դառնայ , ու ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան։ 10 – Տէրոջը առջև խոնարհեցէք, ու ան ձեզ պիտի բարձրացնէ ։

11 – Մէկզմէկ մի բամբասէք , եղբայրներ։ ան որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը դատէ ։ ապա եթէ օրէնքը դատես , ալ դուն օրէնքը կատարող չես , հապա դատաւոր։ 12 – Մէ՛ն մէկ Օրէնադիր [ու Դատաւոր] կայ, որ կարող է փրկելու և կորնչեցնելու ։ դուն ո՞վ ես որ ուրիշը կը դատես։

13 – Հիմա մեր ըրէք դուք որ կ'ըսէք, Ա.յսօր կամ վաղը երթանք այս անուն քաղաքը ու հոն տարի մը կենանք, և առուտուր ընենք ու վաստկինք. 14 – (Դուք որ վաղը չէք գիտեր.

*Կամ, կը խօսի. Նախանձի՞ կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին



15 – Քանզի ի՞նչ է ձեր կեանքը ։ Ա.յրաւի շոգի մըն է , որ քիչ մը ատեն կ'երեւնայ ու յետքը կ'անչնանայ.) անոր տեղ ըսելու էիք. Եթէ Տէրը կամենայ ու ապրինք, այս կամ այն բանը ընենք։ 16 – Բայց հիմա ձեր ամբարտաւանութիւնովը կը պարծենաք. բոլոր այսպիսի պարծանքները չարութիւն են ։ 17– Ուստի ով որ բարին ընելը գիտնայ ու չընէ, այն մեղք է անոր։

## Գ.Լ. Ե

Ա՛ղէ հիմա , հարուստներ , լացէք ու ողբացէք այն թշուառութիւններուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի գան։ 2 – Ձեր հարստութիւնը ապականած է, ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած ։ 3 – Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած է , և անոնց ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ , ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս. վերջին օրերուն համար գանձ դիզեցիք։ 4 – Ա.յն ձեր արտերը հնձող բանուորներուն վարձքը որ ետ պահեցիք՝ կ'աղաղակէ , ու հնձողներուն բողոքը զօրութեանց Տէրոջը ականջները հասաւ։ 5 – Երկրի վրայ փափկութեամբ և հեշտութեամբ ապրեցաք, սիրտերնիդ անուշեցիք՝ որպէս թէ մորթուելու օրուան համար ։ 6 – Դատապարտեցիք ու սպաննեցիք արդարը, որ ձեզի հակառակ չկենար։

7 – Ուստի համբերող եղէք, եղբայրներ, մինչև Տէրոջը գալուստը ։ ահա երկրագործը կը սպասէ երկրի պատուական պտուղին՝ անոր համար համբերելով , մինչև առաջին ու վերջին անձրեւը առնէ։ 8 – Դուք ալ համբերութիւն ըրէք , սիրտերնիդ հաստատ բռնեցէք. վասն զի Տէրոջը գալուստը մօտ է։ 9 – Իրարու դէմ մի հառաչէք, եղբայրներ , որպէս զի չդատապարտուիք. ահա Դատաւորը դրունը քովկայներ է։ 10 – Եղբայրներս , չորչորանքներուս և համբերութեան օրինակ առէք մարգարէները , որոնք Տէրոջը անունովը խօսեցան ։ 11 – Ա.հա համբերողներուն երանի կուտանք ։ Յոբի համբերութիւնը լսեցիք դուք , և Տէրոջը ունեցած վախճանը տեսաք , որ Տէրը բազմագութ ու ողորմած է։

12 – Ա.րդ ամէն բանէ առաջ , եղբայրներս, երդում չընէք, ոչ երկինքի վրայ, ոչ երկրի վրայ , ոչ ալ ուրիշ երդում մը։ հապա ձեր այն այո ըլլայ, և ոչը՝ ոչ, որ չըլլայ թէ դատապարտութեան տակ իյնաք։

13 – Եթէ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է, աղօթք թող ընէ. եթէ մէկը ուրախ է, աղաղակ թող երգէ։ 14 – Եթէ ձեզմէ մէկը հիւանդ է, եկեղեցիին երէցները թող կանչէ , ու անոր վրայ աղօթք թող ընեն, ու Տէրոջը անունովը իւղով օծեն զանիկա. 15–Եւ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը,ու Տէրը զանիկա ոտք պիտի հանէ. և եթէ մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր ։ 16 – Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք , ու աղօթք ըրէք իրարու համար, որպէս զի բժշկուիք. արդարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդուութիւն ունի ։ 17 – Եղիա մեզի պէս կիրքերու ենթակայ մարդ մըն էր , ու աղօթք ըրաւ որ անձրեւ չգայ, և երեք տարի ու վեց ամիս երկրի վրայ անձրեւ չեկաւ ։ 18 – Եւ նորէն աղօթք ըրաւ, ու երկինք անձրեւ տուաւ և երկիր իր պտուղը բուսցուց։

19 – Եղբայրներ, եթէ ձեզմէ մէկը ճշմարտութենէն մոլորի, ու մէկը զանիկա դարձի բերէ , 20 – Գիտցած ըլլայ թէ ան որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն կը դարձնէ , հոգի մը մահուանէ կ'ազատէ, ու մեղքերու բազմութիւնը կը ծածկէ։

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ԳԼՈՒԽ Ա.

Պետրոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, օտարականներուդ որ ցրուած էք Պոնտոսի, Գաղատիայի, Կապադովկեայի, Ասիայի ու Բիւթանիայի մէջ, ընտրուած 2-Հոր Աստուծոյ կանխագիտութեանը համեմատ՝ Հոգիին սրբացընելովը, հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի արիւնին սրսկուելուն համար. շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ շատնայ։

3 – Օրհնեալ է Աստուած ու Հայր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեանը համեմատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը, 4 – Անեղծ ու անարատ և անթառամ ժառանգութեանը համար՝ որ երկինքը պահուած է ձեզի, 5 – Որ Աստուծոյ զօրութիւնովը պահպանուած էք հաւատքով այն փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը յայտնուելու. 6 – Որով կ'ուրախանաք, թէև հիմա, ինչպես հարկ կը պահանջէ, քիչ մը առեն տրտմած էք զանազան փորձութիւններով. 7-Որպես որ ձեր հաւատքին փորձառութիւնը (որ կորսնական ակռիէն աւելի պատուական է, թէև անիկա կրակով կը փորձուի,) գտնուի գովութիւնով ու պատուով և փառքով Յիսուս Քրիստոսի յայտնուելուն առեն. 8 – Զոր դուք չտեսած՝ կը սիրէք, զոր հիմա չէք տեսներ, բայց կը հաւատաք, և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով. 9 – Ձեր հաւատքին վախճանը ընդունելով, այսինքն հոգիներուդ փրկութիւնը, 10 – Որ այն փրկութեանը համար փնտռեցին ու քննեցին մարգարէները՝ որոնք մարգարէացան ձեզի եղած շնորհքին համար. 11 – Ու կը քննէին թէ ե՛րբ կամ ի՛նչպիսի առեն կ'ի-մացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի Հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարութիւը, ու անկէ ետև փառաւորութիւը։ 12 – Որոնց յայտնուեցաւ, որոնք ոչ թէ իրենց՝ հապա մեզի մատակարարէին այն բաները, որոնք հիմա ձեզի պատմուեցան անոնց ձեռքով՝ որ աւետարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով որ երկինքէն ղրկուեցաւ. որ այն բաները՝ հրեշտակները կը ցանկան ակնկառոյց նայիլ։

13 – Ուստի ձեր միտքերուն մէջքը գօտևորած՝ արթուն կեցած, կատարեալապէս յուսացէք այն ձեր վրայ հասնելու շնորհքին, Յիսուս Քրիստոսի յայտնուելուն առեն, 14 – Հնազանդ զաւակներու պէս, ոչ թէ ձեր տգիտութեան առեներն ցանկութիւններովը վարուելով, 15 – Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն մէջ. 16 – Վասն զի գրուած է թէ Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ։ 17-Եւ եթէ Հայր կը կոչէք զանիկա՝ որ առանց աչառութեան կը դատէ ամէն մէկուն գործին համեմատ, ուրեմն ձեր պանդխտութեան ժամանակը վախով անցուցէք. 18 – Գիտնալով որ դուք ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն ստացուած ունայն ճամբաներէն, 19 – Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպես թէ ամրիծ ու անարատ գառի մը. 20 – Որ առաջուընէ ճանչցուած էր աշխարհի սկիզբէն առաջ, ու վերջին առեններս յայտնուեցաւ ձեզի համար, 21 – Որուն միջոցով Աստուծոյ հաւատացեալ, որ զանիկա մեռելներէն յարուցանելով, և անոր փառաւորութիւն տուաւ. որպէս զի ձեր հաւատքը ու յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ։ 22 – Ձեր անձերը մաքրելով Հոգիին միջոցաւ՝ ճշմարտութեանը հնազանդելով, եղբայրասիրութեան մէջ անկեղծ ըլլալով, սուրբ սրտով մէկզմէկ պինդ սիրեցէք, 23 – Նորէն ծնած՝ ո՛չ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը։ 24-Վասն զի ամէն մարմին խոտի պէս է, և մարդուն բոլոր փառաւորութիւնը՝ խոտի ծաղկի պէս. խոտը կը չորնայ ու անոր ծաղիկը կը թափթփի. 25 – Բայց Տէրոջը խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն է այն խօսքը որ աւետարանով ձեզի քարոզուեցաւ։

## ԳԼ. Բ

Ուրեմն ամէն չարութիւնը ու ամէն խարէութիւնը ու կեղծաւորութիւնները, և նախանձը ու ամէն չարախօսութիւնները, 2 – Նորածին մանուկներու պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք [մինչև փրկութիւնը], 3 – Եթէ Տէրոջը քաղցր ըլլալուն համը առիք. 4 – Որու մօտենալով, այն կենդանի վէմին, որ թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական է, 5 – Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգևոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ հաճելի հոգևոր պատարագներ մատուցանելու. 6 – Որովհետև գիրքին մէջ ալ կայ թէ Ահա Սիոնի մէջ ընտիր, պատուական անկիւնի վէմ մը կը դնեմ. և ով որ անոր հաւատայ՝ ընաւ պիտի չամչնայ։ 7 – Ուստի ձեզի հաւատացեալներուդ պատուական է ան, բայց անհաւատներուն՝ այն քարը զոր շինողները մեղագեցին՝ անիկա անկիւնին գլուխը եղաւ. 8 – Եւ գլորման վէմ ու գայթակղութեան քար անոնց՝ որ չհաւատալով խօսքին կը գայթակղին, որուն համեմատած ալ էին։ 9 – Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեպհական ժողովուրդ մը, որպէս զի քարոզէք անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց. 10 – Որ առեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք։

11 – Սիրելիներ, կ'աղաչեմ, պանդխտներու և օտարականներու պէս մեկդի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն, որոնք հոգիի դէմ կը պատերազմին, 12 – Ձեր վարմունքը հեթանոսներուն մէջ բարի պահելով, որպէս զի ինչ բանով որ ձեզ չարագործներու պէս կը բամբասեն, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառաւորեն զԱստուած այցելութեան օրը։ 13 – Ուստի հնազանդեցէք ամէն մարդկային սահմանադրութեան Տէրոջը համար, թէ՛ թագաւորին՝ վերնագոյն մէկուն պէս, 14 – Թէ՛ կուսակալներուն՝ անոր կողմէն ղրկուածներու պէս, չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար։ 15 – Վասն զի Աստուծոյ կամքը այսպէս է, որ բարեգործ ըլլալով՝ անխելք մարդոց տգիտութիւնը պապանձեցնէք. 16 – Ազատներու պէս ըլլալով, և ոչ թէ չէր ազատութիւնը չարութեան ծածկոցի մը պէս գործածելով, հապա Աստուծոյ ծառաներու պէս։ 17 – Ամէնը պատուեցէք. եղբայրութիւնը սիրեցէք. Աստուծմէ վախցէք. թագաւորը պատուեցէք։

18 – Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ ըլլան էրեն տէրերուն, ոչ թէ միայն բարերարներուն ու հեզերուն, հապա ժանտաբարոներուն ալ։ 19 – Քանզի այս շնորհք մըն է, եթէ մէկը առ Աստուած ունեցած խղճմտանքովը անիրաւ տեղ կրած վիշտերուն համբերելու ըլլայ։ 20 – Վասն զի ի՞նչ յաղթութիւն կ'ըլլայ չեղէ, եթէ մեղք գործելով ծեծուելք ու համբերէք. ապա եթէ բարիք գործելով չարչարուիք ու համբերէք, ասիկա Աստուծոյ քով շնորհք մըն է։ 21 – Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք. վասն զի Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ, ու ձեզի օրինակ թողուց՝ որպէս զի իր շաւիղներուն հետևիք. 22 – Որ մեղք մը չգործեց, ու իր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ. 23 – Որ կը նախատուէր, և փոխարէնը չէր նախատեր. կը չարչարուէր, ու սպառնալիք չէր ըներ. հապա ինքզինք արդարութեամբ դատողին կը յանձնէր. 24 – Որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, որպէս զի մենք մեղքերուն ազատինք, ու արդարութեան համար ապրինք. որուն վէրքերովը դուք բժշկուեցաք։ 25 – Վասն զի մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմա ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք։

## ԳԼ. Գ

Նմանապէս կիները հնազանդ ըլլան իրենց այրերուն, որպէս զի եթէ ոմանք խօսքին հնազանդ չըլլան ալ, առանց խօսքի շահուին կիներուն վարմունքովը, 2 – Տեսնելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը։ 3 – Որոնց զարդարանքը չըլլայ դրսէն մազերու հիւսուածքներով և ոսկիներու շարքերով կամ՝ լեռ հանդերձներ հագնելով. 4- Հապա սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հեզ ու հանդարտ հոգիին չքոր բաղ ըլլայ, որ Աստուծոյ առջև խիստ պատուական է։ 5 – Վասն զի առեներ սուրբ կիները, որոնք իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած էին, անձերնին այսպէս կը զարդարէին՝ իրենց այրերուն հնազանդ ըլլալով. 6 – Ինչպէս Սառա հնազանդ էր Աբրահամի, և դանիկա տէր կը կոչէր. որ դուք բարեգործ ըլլալով ու երկիւղ մը չվախնալով՝ անոր զաւակները կ'ըլլաք։

7 – Նմանապէս այրերը խոհեմութիւնով անոնց հետ բնակին, տկար անօթի պէս պատիւ տալով կիներուն, իբրև կենաց շնորհքին ժառանգակիցներու, որպէս զի ձեր աղօթքներուն արգելք չըլլայ։

8 – Վերջապէս ամէնդ մէկ միաքի վրայ ըլլաք, կարեկից, եղբայրասէր, ողորմած ու *քաղցրալաւոյր։ 9 – Զըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք, կամ նախատինքի փոխարէն նախատինք. այլ ընդհակառակն օրհնեցէք, գիտնալով որ այս բանին համար կանչուեցաք, որպէս զի օրհնութիւն ժառանգէք։ 10 – Վասն զի ան որ կ'ուզէ կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իր լեզուն թող դադրեցնէ չարութենէ, ու իր շրթունքները՝ նենգութիւն խօսելէ. 11 – Զարութենէ ետ քաշուի ու բարութիւն ընէ, խաղաղութիւն փնտռէ և անոր ետևէն երթայ։ 12 – Վասն զի Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են, ու իր ականջները՝ անոնց աղօթքին. բայց Տէրոջը երեսը չարագործներուն վրայ է։ 13 – Եւ ո՞վ ձեզի չարիք մը պիտի հասցնէ՝ եթէ դուք բարիին հետևող ըլլաք։ 14 – Բայց եթէ արդարութեան համար չարչարուիք ալ՝ երանելի էք. և անոնց

*Ո՛մանք, խնամարկ

չվախնաք ու մի վախնաք ու մի շփոթիք։ 15- Հապա Տէր Աստուածը սրբերնուդ մէջ սուրբ պահեցէք. և միշտ պատրաստ եղէք հեղութեամբ ու երկիւղածութեամբ պատասխան տալու ամէնուն որ ձեր ունեցած յոյսին պատճառը ձեզի կը հարցնէն։ 16 – Եւ բարի խղճմտանք ունենաք, որպէս զի ինչ բանով որ ձեզ կը բամբասեն իբրև չարագործներ, ամօթով մնան անոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի վարմունքը կը պախարակեն։ 17 – Վասն զի աւելի աղեկ է բարեգործութիւն ընելով չարչարուիլ, եթէ Աստուծոյ կամքը այն ըլլայ, քան թէ չարագործութիւն ընելով։ 18-Վասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ անգամ չարչարեցաւ, Արդարը անարդարներուն վրայ, որպէս զի մեզ Աստուծոյ մօտեցնէ. որ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի եղաւ հոգիով. 19 – Որով բանտի մէջ եղած հոգիներուն ալ գնաց ու քարոզեց. 20-Որոնք առեն մը ապստամբ էին, երբ Աստուծոյ երկայնմտութիւնը կը համբերէր անոնց Նոյի օրերը՝ երբ տապանը կը շինուէր, որուն մէջ քիչ անձեր, այսինքն ութ հոգի, ջուրէն ապրեցան. 21 – Որ մեզ ալ այն օրինակին պէս մկրտութիւնը հիմա կ'ապրեցնէ, (ոչ թէ մարմինին աղտը մէկդի ձգելը, հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ Աստուած,) Յիսուս Քրիստոսի յարութիւնովը. 22 – Որ երկինք գացած՝ Աստուծոյ աջ կողմն է, հրեշտակներուն ու իշխանութիւններուն և զօրութիւններուն իրեն հնազանդեցուած։

## ԳԼ. Դ

Ուստի որովհետև Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմինով, դուք ալ նոյն միտքով զինուեցէք. վասն զի ան որ մարմինով չարչարուեցաւ, մեղքէն դադրած է. 2 – Որպէս զի ա՛լ ոչ թէ մարդոց ցանկութիւններուն պէս՝ հապա Աստուծոյ կամքին պէս ապրիք մարմնին մէջ մնացած ատեն։ 3 – Վասն զի հերիք է ձեզի կեանքի անցեալ ժամանակը, որուն մէջ հեթանոսներուն կամքը կատարեցիք, ու գիճութիւններով, ցանկութիւններով, գինմոլութիւններով, անառակ-

*Ո՛մանք լսանէն



կութիւններով, արբեցութիւններով ու անօրէն կռապաշտութիւններով վարուեցանք։ 4 – Ուստի այս բանին կը զարմանան՝ որ դուք նոյն չափազանց անառակութեան մէջ անոնց հետ չէք վազեր, ու հայհոյութիւն կ'ընեն. 5 – Որոնք պատրաստ պիտի տան անոր՝ որ պատրաստ է դատել կենդանիները ու մեռելները։ 6 – Ինչի համար մեռելներուն ալ աւետարանը քարոզուեցաւ, որպէս զի դատուին մարդոց կողմանէ մարմնով, ու կենդանի ըլլան Աստուծոյ կողմանէ հոգիով։

7 – Սակայն ամէն բանի վախճանը մօտեցեր է. ուստի զգաստ եղէք ու աղօթքի մէջ արթնցեր։ 8 – Եւ ամէն բանէ առաջ իրարու հետ սրտանց սէր ունեցէք. վասն զի սէրը մեղքերու բազմութիւնը կը ծածկէ։ 9 – Իրարու հիւրասիրութիւն ցուցուցէք առանց տրտունջ ընելու։ 10 – Ամէն մէկը ինչ տեսակ շնորհք որ առաւ, զանիկա իրարու մատակարարեցէք Աստուծոյ զանազան շնորհց լաւ անտեսներուն պէս։ 11 – Եթէ մէկը խօսի, Աստուծոյ պատգամներուն պէս խօսի. եթէ մէկը մատակարարութիւն ընէ, որպէս թէ Աստուծոյ շնորհց զօրութենէն ընէ, որպէս զի ամէն բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի ձեռքով. որու փառք և զօրութիւն յաւիտեան յաւիտենից։ Ամէն։

12 – Սիրելիներ, օտար բան մի տեսիք այն նեղութեան մէջ որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ, որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է. 13 – Հապա ուրախ եղէք՝ քանի որ Քրիստոսի չարչարանքներուն հաղորդ եղած էք, որպէս զի անոր փառքին յայտնուելուն ատենն ալ ցնծութեամբ ուրախանաք։ 14 – Եթէ Քրիստոսի անունը համար նախատուիք, երանելի էք. վասն զի փառաց [և զօրութեան] և Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգչած է. *արդարև անոնց կողմանէ կը հայհոյուի անիկա, բայց ձեր կողմանէ կը փառաւորուի։ 15 – Զըլլայ որ ձեզմէ մէկը չարչարուի իբրև մարդասպան, կամ գող, կամ չարագործ, կամ իբրև ուրիշին բանին խառնուող. 16 – Բայց եթէ ըրիստոսեայ իբրև Քրիստոսեայ՝ թող չամչնայ, հապա այս մասին

*Ո՛մանք լսանէն

թող Աստուծոյ փառք տայ։ 17 – Քանզի ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ տունէն սկսի. և եթէ առաջ մեզմէ կը սկսի, հապա անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ աւետարանին չեն հնազանդիր։ 18 – Եւ եթէ արդարը դժուարաւ կը փրկուի, հապա ամլաբիշտը ու մեղաւորը ո՞ւր պիտի դանուին։ 19 – Ուստի անոնք որ Աստուծոյ կամքին համեմատ կը չարչարուին, բարիք գործելով իրենց հոգիները թող անոր յանձնեն, իբրև հաւատարիմ Ստեղծողին։

## ԳԼ. Ե

Ձեր մէջ եղող երէցներուն կ'աղաչեմ, ես ալ անոնց պէս երէց ըլլալով, ու Քրիստոսի չարչարանքներուն վկայ, և յայտնուելու հանդերձեալ փառքին մասնակից. 2 – Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ոչ թէ ակամայ՝ հապա կամաւ, ոչ թէ անարդ շահախնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ, 3 – Ոչ թէ վիճակներուն վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով. 4 – Եւ հովուապետին երեւցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք։

5 – Նմանապէս դուք, երիտասարդներ, հնազանդ եղէք ծերերուն. և ամէնդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. վասն զի Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ։ 6 – Ուրեմն Աստուծոյ հզօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէս զի ձեզ ժամանակին բարձրացնէ։ 7 – Ձեր ամէն հոգը անոր ձգեցէք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ։

8 – Արթուն կեցէք, հսկեցէք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանայ, մռնչող առիւծի պէս կը պտտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ։ 9 – Որու դէմ կեցէք հաստատութեամբ հաւատքով, գիտնալով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները կը կրեն։

10 – Եւ բոլոր շնորհց Աստուածը, որ մեզ իր յաւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսի ձեռքով, քիչ մը առեն նեղութիւն կրելնէդ ետքը, ինք ձեզ կատարեալ ընէ, հաս-

ատաւե, ղօրացնէ — հիմնէ։ 11 – Նրան փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

12 – Սիրելնա հաւատարիմ եղբօր ձեռքով, (ինչպէս ես կը կարծեմ,) համառօտ մի ձեղի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ կեցեր էք։ 13 – Բարև կ'ընէ ձեղի Բաբելոնի մէջ եղած էկեղեցին որ չէղի հետ ընտրուած է, ու իմ որդիս Մարկոս։ 14 – Բարև տուէք իրարու սիրոյ համբուրով. խաղաղութիւն ձեր ամենուն հետ որ Քրիստոս Յիսուսի մէջ էք։ Ամէն։

## ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

### ԳԼՈՒԽ Ա.

Ես Պետրոս, Յիսուս Քրիստոսի ծառայ և առաքեալ, չէղի՝ որ մեզի հետ նոյն պատուական հաւատքին հասաք մեր Աստուծոյն ու Փրկչին Յիսուս Քրիստոսի արդարութիւնովը։ 2 – Շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ աւելնայ Աստուծոյ ու մեր Տէրոջը Յիսուսի գիտութիւնովը։

3 – Ինչպէս իր աստուածային զօրութիւնը կենաց և աստուածպաշտութեան վերաբերեալ ամէն բաները մեզի տուաւ անոր գիտութիւնովը՝ որ մեզ փառքով ու առաքինութիւնով հրաւիրեց. 4 – որոնցմով ամենամեծ ու պատուական խոստմունքներ արուած են մեզի, որպէս զի անոնցմով աստուածային բնութեանը հաղորդ ըլլաք՝ աշխարհի մէջ ցանկութենէն յառաջ եկած ապականութենէն փախչելով։ 5 – Եւ այս բանին համար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքին վրայ առաքինութիւն աւելցուցէք, ու առաքինութեան վրայ գիտութիւն, 6 – ու գիտութեան վրայ ժուժկալութիւն, ու ժուժկալութեան վրայ համբերութիւն, և համբերութեան վրայ աստուածպաշտութիւն, 7 – ու աստուածպաշտութեան վրայ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ սէր։ 8 – Վասն զի քանի որ այս բաները ձեր վրայ կը գտնուին ու կ'աճին, պարապազ ու անպտուղ չեն ըներ չէղ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ճանչնալուն մէջ։ 9 – Բայց որուն քով որ այս բաները չկան, անիկա կոյր է ու կարճատես, որ մոռցեր է իր առաջուան մեղքերէն մաքրուիլը։ 10 – Ասոր համար, եղբայրներ, աւելի ջանք ըրէք որ ձեր կոչումը ու ընտրութիւնը հաստատէք, վասն զի այս բնելով՝ բնաւ պիտի չվրիպիք. 11 – Քանզի այսպէս ձեղի առատօրէն պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը մտնել։

12 – Ուստի ես միշտ այս բաները միաքերնիդ ձգելու վրայով զանցառու պիտի չըլլամ՝ թէև գիտէք և հաստատուած էք ներկայ ճշմարտութեանը վրայ։ 13 – Եւ իրաւունք կը սեպեմ, թէ քանի որ այս *մարմինին մէջ եմ, միտքերնիդ ձգելով ձեզ արթնցնեմ. 14 – Քանզի գիտեմ որ ես շուտով այս իմ մարմինս պիտի մերկանամ՝ ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայտնեց ինծի։ 15 – Ուստի պիտի ջանամ որ իմ աշխարհէ ելլելէս ետքն ալ միշտ կարող ըլլաք այս բաները յիշել։ 16 – Վասն զի ոչ թէ մենք վարպետութեամբ շինուած առասպելներու հետևէ երթալով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու գալուստը ձեղի ցուցուցինք, հապա անոր մեծափառութեանը ականատես ըլլալով։ 17 – Վասն զի ինք Հօր Աստուծմէ փառք ու պատիւ առաւ, այն մեծավայելչութեան փառքէն այնպիսի ձայն մը գալով, թէ

*Յոյն. վրանին



Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուս հաւաներ եմ։ 18 – Եւ այս երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, որու հետ էինք սուրբ լեռանը վրայ։ 19 – Ու մարգարէական խօսքն ալ աւելի հաստատուն է. ու աղէկ կ'ընէք՝ եթէ անոր մտադրութիւն ընէք, որպէս թէ մութ տեղը լոյս տուող ճրագի մը, մինչև ցորեկը լուսնայ ու արուսեակը սիրտերնիդ մէջ ծագի։ 20 – Բայց առաջ զայս գիտնաք, որ գրոց ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի։ 21 – Վասն զի մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չտրուեցաւ, հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան։

### ԳԼ. Բ

Բայց սուտ մարգարէները ալ կ'ըլլային ժողովուրդին մէջ, ինչպէս ձեր մէջ ալ սուտ վարդապետներ պիտի ըլլան, որոնք գաղտուկ պիտի մտցնեն կորուսիչ հերձուածողութիւններ, ու ղիրկնք ծախու առնող Տէրը ուրանալով՝ իրենց վրայ պիտի բերեն արագ հաս կորուստը. 2 – Եւ շատերը անոնց *կորստական ընթացքներուն՝ եանէն պիտի երթան, որոնց համար ճշմարտութեան ճամբան պիտի հայհոյուի. 3 – Եւ ագահութիւնով՝ խորամանկութեամբ հնարուած խօսքերով ձեզ վաճառաշահութեան պիտի գործածեն, որոնց դատապարտութիւնը շատոնցմէ պատրաստ ըլլալով չուշանար, ու անոնց կորուստը չմրափեր։

4 – Վասն զի եթէ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ. 5 – Ու առաջուան աշխարհին ալ չխնայեց. միայն թէ Նոյ ութերորդ հոգի, արդարութեան քարոզիչը, պահեց, երբ ջրհեղեղը ամբարիշտներուն աշխարհին վրայ բերաւ, 6 – Եւ Սոդոմի ու Գոմորի քաղաքները մոխիր դարձնելով — կործանելով դատապարտեց, եղբը ամբարշտութիւն ընելու մարդոց օրինակ ընելով զանոնք. 7 – Եւ արդար արդար Lովոտը, որ անօրէններուն անառակ վարմունքէն ձանձրացեր էր. 8 – (Վասն զի այն արդարը անոնց մէջ կենալով՝ աչքովը տեսնելով ու ականջովը լսելով, օրէ օր էր արդար հոգին կը տանջէր անօրէն վարմունքով.) 9 – Տէրը գիտէ բաբեպաշտները փորձութենէն աղատել, և անիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան պահել։

10 – Մանաւանդ անոնք որ պղծալից ցանկութեամբ մարմնին ետևէ կ'երթան, և տէրութիւնը կ'անարգեն, ինքնահաճ ու յանդուգն են, չեն վախնար փառաւորներուն դէմ հայհոյել. 11 – Երբ հրեշտակները, որ նոյնչափ մեծ են զօրութիւնով ու կարողութիւնով, Տէրոջը առջև հայհոյութեամբ դատապարտութիւն չեն բերեր անոնց վրայ։ 12 – Բայց սոսկ անբան անասուններու պէս, (որ բնականաբար որսի ու ապականութեան համար եղած են,) չգիտցած բաներուն դէմ կը հայհոյեն, և իրենց ապականութեանովը պիտի ապականին, 13 – Անիրաւութեան վարձքը ընդունելով. որ ցորեկուան մէջ եղած զեղխութիւնը զաւրաճանալով՝ երբ ձեղի հետ կերուխումի կը նստին. 14 – Շնութեամբ լեցուն աչքեր ունին, որ մեղքէ չեն դադարիր. անհաստատ հոգիները կը խաբեն. ագահութեան սովորած սիրտեր ունին. անիծեալ զաւակներ են. 15 – Շիտակ ճամբան ձգելով մոլորեցան՝ Բէովրեան Բաղաամի ճամբուն հետևելով, որ անիրաւութեան վարձքը սիրեց. 16 – Բայց իր անօրէնութեանը յանդիմանութիւնը առաւ. անխօս էշը մարդկային ձայնով խօսելով՝ մարգարէին յիմարութիւնը արգիլեց։ 17 – Անոնք ջուր չունեցող ակռլուներ են, ու փոթորիկէ քշուած մէգեր, որոնց համար թանձր խաւարը պահուած է յաւիտեան։ 18 – Քանզի անօգնութեան տպարտ խօսքեր ընելով զինքնութիւններով, մարմնի ցանկութիւններով կը խաբեն զանոնք որ քիչ մը առաջ փախեր էին անոնցմէ՝ որ մոլորութեան մէջ կը պտըտին. 19 – Անոնց ազատութիւն կը խոստանան, և իրենք ապականութեան ծառաներ են. վասն զի ինչ բանէ որ մէկը յաղթուի, անոր ծառայ ալ կ'ըլլայ։ 20 – Վասն զի եթէ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի

*Որ՟ն՟, անառակութիւններուն

գիտութիւնով աշխարհի պղծութիւնները հրաժարելէ եւ՝ դարձեալ այն բաներէն բռնուած յաղթուիլն, անոնց վերջը առաջինէն դէշ կ'ըլլայ : 21 – Վասն զի աղէկ էր անոնց՝ որ ըննարդարութեան ճամբան ճանչցած չըլլային, քան թէ ճանչնալով ետ դառնային այն սուրբ պատուիրանքէն՝ որ իրենց յանձնուեցաւ: 22 – Սակայն անոնց հանդիպեցաւ այն ճշմարիտ առակին բանը, թէ Շունը նորէն իր փսխածին կը դառնայ, ու լուացուած խոզը՝ ցեխի մէջ թաւալակելու:

## Գլ. Գ

Սիրելիներ, այս երկրորդ թուղթը հիմա ձեզի կը գրեմ, որովհետեւ ձեր անկեղծ միտքը կ'արթնցնեմ յիշեցնելու, 2 – որպէս զի սուրբ մարգարէներէն առաջուընէ ըրուցուած խօսքերը, եւ մեր, այսինքն Տէրոջը ու Փրկչին առաքեալներուն, պատուէրները միտքերնիդ բերէք: 3 – Բայց առաջ զայս գիտնաք, որ վերջին օրերը ծաղր ընդունելու պիտի գան, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քալեն, 4 – եւ պիտի ըսեն, Ո՞ւր է անոր գալուն խոստումնը, վասն զի քանի որ հայրերը քնացան, ամէն բան այնպէս կայ կը մնայ արարածներուն սկիզբէն հետէ: 5 – Քանզի անոնք (որոնց ուշադրութիւն չեն ուզեր) այն բանը մոռցեր են, թէ երկինք առաջուընէ եղաւ, ու երկիր ջուրերէն և ջուրերով հաստատ կեցեր է Աստուծոյ խօսքովը: 6 – Որով հին աշխարհը ջրհեղեղով ապականուած կորսուեցաւ: 7 – Եւ հիմակուան երկինքը ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են, մինչև դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորուստին օրը հրակի համար պահուած : 8 – Եւ այս մէկ բանը ձեզմէ ծածուկ չմնայ, սիրելիներ, որ Տէրոջը քով մէկ օր հազար տարուան պէս է, ու հազար տարին՝ մէկ օրուան պէս : 9 – Տէրը չուշացներ էր խոստմունքը, ինչպես ոմանք ուշացում կը սեպեն, հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ. վասն զի չուզեր որ մէ՛կը կորսուի, հապա որ ամէնը ապաշխարանքի գան: 10 – Սակայն Տէրոջը օրը *գողի պէս պիտի գայ, որ սաեն երկինք սաստիկ շառաչիւնով պիտի անցնի, ու տարերքները բռնկած պիտի լուծուին, երկիր ալ, ու ինչ գործեր որ անոր մէջ կը գտնուին, պիտի այրուին: 11 – Ուստի որովհետեւ այս ամէն բաները պիտի լուծուին, ձեզի ի՞նչպիսի մարդիկ ըլլալ կը վայելէ սուրբ վարմունքով ու բարեպաշտութեամբ, սպասելով 12 – Ու արագացուց Աստուծոյ օրուանը գալուն, որուն մէջ երկինք կրակով այրուած պիտի լուծուի, ու տարերքները բռնկած պիտի հալին : 13 – Սակայն իր խոստմունքին համեմատ, նոր երկինքի ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի:

14 – Ուստի, սիրելիներ, ասոնց սպասելով ջանացէք, որ ան ձեզ անբիծ ու անարատ գտնէ խաղաղութիւնով .15- Եւ մեր Տէրոջը երկայնամտութիւնը փրկութիւն սեպեցէք. ինչպես մեր սիրելի եղբայրը Պօղոս ալ իրեն տրուած իմաստութիւնովը գրեց ձեզի. 16-Ինչպէս ամէն թուղթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի. որոնց մէջ քանի մը դժուարիմաց խօսքեր կը գտնուին, զորոնք տգէտները ու անհաստատները ծուռ կողմը կը դարձնեն, ինչպես ուրիշ գիրքերն ալ՝ իրենց անձին կորուստին համար : 17 – Ուրեմն դուք, սիրելիներ, առաջուընէ գիտնալով զգոյշ եղէք, որ չըլլայ թէ անօրէններուն խաբէութենէն բռնուած՝ ձեր հաստատութենէն իյնաք . 18 – Հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը. անոր փառք հիմա ալ ու մինչև յաւիտենական օրն ալ : Ամէն:

*Ոմանք, գիշերուան գողի



# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## Գլուխ Ա.

Կենաց Բանին վրայով որ սկիզբէն էր, որու համար լսեցինք, զոր մեր աչքերովը տեսանք, որու նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին . 2 – ( Եւ կեանքը յայտնուեցաւ , ու տեսանք և կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յաւիտենական կեանքը, որ Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ.) 3 – Զայն որ տեսանք ու լսեցինք, ձեզի կը պատմենք, որպէս զի դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք. և մեր հաղորդութիւնը Հօրը հետ է՝ ու իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ : 4 – Եւ այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

5 – Եւ սորիկա է այն պատգամը զոր իրմէ լսեցինք ու ձեզի կը պատմենք , թէ Աստուած լոյս է , ու անոր մէջ բնաւ խաւար չկայ : 6 – Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդութիւն ունինք, ու խաւարի մէջ պտըտինք , սուտ կը գործեցնենք և ճշմարտութիւնը չենք ըներ: 7 – Ապա եթէ լոյսի մէջ քալենք, ինչպես անիկա լոյսի մէջ է , իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք , ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ: 8 – Եթէ ըսենք թէ Մենք մեզի մը չունինք , ինքզինքնիս կը խաբենք , ու մեր մէջ ճշմարտութիւն չկայ : 9 – Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ ըլոր անիրաւութենէ սրբելու: 10 – Եթէ ըսենք թէ Մեղք մը չգործեցինք , սուտցուցած կ'ընենք զանիկա, ու անոր խօսքը մեր մէջ չէ:

## Գլ. Բ

Իմ որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէս զի մեղք չգործէք . և եթէ մէկը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը. 2 – եւ անիկա մեր մեղքերուն քաւութիւն է, և ոչ թէ միայն մերինիերուն, հապա ըլոր աշխարհի ալ :

3 – Ու սորվ գիտենք թէ զանիկա ճանչցանք, եթէ անոր պատուիրանքները պահենք : 4 – Ան որ կ'ըսէ թէ Ես զանիկա ճանչցայ , ու անոր պատուիրանքները չպահեր , սուտխօս է, ու անոր մէջ ճշմարտութիւն չկայ: 5 – Բայց ան որ անոր խօսքը կը պահէ, իրաւցընէ իր մէջ կատարեալ է Աստուծոյ սէրը. սորվ կը ճանչնանք թէ անոր մէջ ենք: 6 – Ան որ կ'ըսէ թէ անոր մէջ կը բնակի , պէտք է քալէ՝ ինչպես անիկա քալեց:

7 – *Եղբայրներ, ոչ թէ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի , հապա այն հին պատուիրանքը զոր սկիզբէն ի վեր ունէիք. և հին պատուիրանքը այն խօսքն է, զոր դուք սկիզբէն լսեցիք : 8 – Դարձեալ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի, որ ճշմարիտ է անոր մէջ ու ձեր մէջ . վասն զի խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երեւնայ: 9 – Ան որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է , ու իր եղբայրը կ'ատէ, անիկա տակաւին խաւարի մէջ է: 10 – Ան որ իր եղբայրը կը սիրէ, լոյսի մէջ կը բնակի , ու իր մէջ գայթակղութիւն չկայ. 11 – Բայց ան որ իր եղբայրը կ'ատէ , խաւարի մէջ է ու խաւարի մէջ կը քալէ, ու չգիտեր թէ ո՛ւր կ'երթայ, վասն զի խաւարը անոր աչքերը կուրցուցեր է:

12 – Կը գրեմ ձեզի , որդեակներ , վասն զի ձեր մեղքերը թողուած են անոր անունին համար : 13 – Կը գրեմ ձեզի, հայրեր, վասն զի դուք ճանչցաք զանիկա որ սկիզբէն է: Կը գրեմ ձեզի, երիտասարդներ, վասն զի դուք չարին յաղթեցիք: 14-Կը գրեմ ձեզի, տղաքներ , վասն զի դուք ճանչցաք Հայրը: Գրեցի ձեզի, հայրեր , վասն զի դուք ճանչցաք զանիկա որ սկիզբէն է:

*Ոմանք, Սիրելիներ

Գրեցի ձեզի, երիտասարդներ, վասն զի զուք ուժով էք, և Աստուծոյ խօսքը ձեր մէջ կը բնակի, ու չարին յաղթեցիք։ 15 – Մի սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհն մէջ է։ 16 – Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր Հայրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը և այս կեանքին ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է։ 17 – Աշխարհս ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ Աստուծոյ կամքը կը կատարէ, յաւիտեան կը մնայ։

18-Որդեակներ, վերջին ժամանակն է. ու ինչպես լսեցիք թէ Նեռը պիտի գայ, և արդէն շատ նեռեր եկած են, անկէ կ'իմանանք թէ վերջին ժամանակ է։ 19 – Մեզմէ ելան սակայն, բայց մեզմէ չէին. վասն զի եթէ մեզմէ ըլլային, մեզի հետ պիտի մնային. հապա ելան, որպէս զի յայտնի ըլլան թէ անոնք ամէնը մեզմէ չէին։ 20 – Բայց դուք օծութիւն ունիք Սուրբէն, ու ամէն բան գիտէք։ 21 – Զգրեցի ձեզի՝ իբր թէ ճշմարտութիւնը չէք գիտեր, հապա թէ գիտէք զանիկա, ու նաև թէ ամէն սուտութիւն ճշմարտութենէն չէ։ 22 – Ո՞վ է սուտաւոս, եթէ ոչ ան որ կ'ուրանայ թէ Յիսուս Քրիստոս չէ. անիկա է Նեռը որ կ'ուրանայ Հայրը ու Որդին։ 23-Ամէն ով որ կ'ուրանայ Որդին, անիկա Հայրն ալ չունի։ [Բայց ան որ կը խոստովանի Որդին, անիկա Հայրն ալ կ'ընդունի։] 24 – Ուրեմն ինչ որ դուք սկիզբէն լսեցիք, թող անիկա ձեր մէջ բնակի. եթէ այն սկիզբէն լսածնիդ ձեր մէջ բնակի, դուք ալ Որդւոյն ու Հօրը մէջ պիտի բնակիք։ 25 – Ու սակայն է այն խոստումնը զոր ինք մեզի խոստացաւ, այսինքն յաւիտենական կեանքը։ 26 – Ա՛յս բաները ձեզի գրեցի՝ ձեզ մոլորեցնողներուն համար։ 27 – Ու այն օծութիւնը զոր դուք իրմէ ընդունեցիք, ձեր մէջ կը մնայ, ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ. հապա ինչպես նոյն օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրայով, և ճշմարիտ է ու սուտ չէ, և ինչպես ան նիկա ձեզի սորվեցուց, անոր մէջ կեցէք։

28-Ու հիմա, որդեակներ, անոր մէջ կեցէք, որպէս զի երբ անիկա յայտնուի, մենք համարձակութիւն ունենանք, ու անկէ չամչնանք իր գալուստեան։ 29-Եթէ գիտէք թէ անիկա արդար է, կ'իմանաք թէ ամէն ով որ արդարութիւն կը գործէ, անկէ ծնած է։

## Գ Լ. Գ

Տեսէք, Հայրը ի՜նչպիսի սէր շնորհեց մեզի, որպէս զի մենք Աստուծոյ որդիները կոչուինք. ասոր համար աշխարհ մեզ չճանչնար, վասն զի զանիկա ալ չճանչցաւ։ 2 – Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներն ենք, և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ անիկա յայտնուի, անոր պէս պիտի ըլլանք. վասն զի զանիկա պիտի տեսնենք՝ ինչպէս է։

3 – Եւ ամէն ով որ այս յոյսը անոր վրայ ունի, ինքզինք կը մաքրէ, ինչպէս անիկա մաքուր է։ 4-Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա անօրէնութիւն ալ կը գործէ, և բոլոր մեղքը անօրէնութիւն է։ 5 – Եւ գիտէք որ անիկա անոր համար յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցնէ. ու իր մէջ մեղք չկայ։ 6 – Ամէն ով որ անոր մէջ կը կենայ, մեղք չգործեր. ամէն ով որ մեղք կը գործէ, զանիկա տեսած չէ ու զանիկա ճանչցած չէ։ 7 – Որդեակներ, մէկը ձեզ չխաբէ. ան որ արդարութիւն կը գործէ, արդար է, ինչպես Անիկա արդար է։ 8 – Եւ ան որ մեղք կը գործէ, Սատանայէ է, վասն զի Սատանայ սկիզբէն ի վեր կը մեղանչէ. ասոր համար Աստուծոյ Որդին յայտնուեցաւ, որ Սատանայի գործերը քակէ։ 9 – Ամէն ով որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր, վասն զի անոր սերմը իր մէջ կը մնայ, ու չկրնար մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է։ 10-Այով յայտնի են Աստուծոյ որդիները ու Սատանայի որդիները։ Ամէն ով որ արդարութիւն չգործեր, անիկա Աստուծմէ չէ, և ան ալ՝ որ իր եղբայրը չսիրեր։ 11 – Վասն զի սկիզբ այն պատգամն է զոր զուք ալ սկիզբէն լսեցիք, որ միմեանց սիրենք։ 12 – Ոչ թէ Կայէնի պէս որ չարէն էր, ու իր եղբայրը սպաննեց. և ինչո՞ւ համար զանիկա սպաննեց. անոր համար որ իր գործերը չար էին, ու իր եղբօրը գործերը արդար։ 13 – Մի զարմանաք, եղբայրներս, եթէ աշխարհ ձեզ ատէ։ 14 – Մենք գիտենք որ մենք մահէն կեանքի փոխուեցանք, վասն զի եղբայրները կը սիրենք. ան որ եղբայրը չսիրեր՝ մահուան մէջ կը մնայ։ 15 – Ամէն ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է, ու գիտէք որ ամէն մարդասպան իր մէջ բնակած յաւիտենական կեանք չունի։ 16 – Այսով գիտցանք Քրիստոսի սէրը, որ անիկա իր կեանքը մեզի համար դրաւ. մենք ալ պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել մեր կեանքը։ 17 – Բայց ան որ աշխարհի բարիքը ունի, և իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ ու իր գութը անկէ կը դոցէ, ի՜նչպես Աստուծոյ սէրը անոր մէջ բնակած կ'ըլլայ։ 18 – Որդեակներս, ոչ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ճշմարտութիւնով։

19 – Եւ ասով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն ենք, ու մեր սիրտերուն համարձակութիւնով անոր առջև պիտի երևնանք։ 20 – Թէպետ եթէ մեր սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա Աստուած մեր սիրտերէն մեծ է և ամէն բան գիտէ։ 21 – Սիրելիներ, եթէ մեր սիրտերը մեզ չմեղադրեն, համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջև. 22 – Եւ ինչ որ խնդրենք՝ կ'առնենք անկէ, վասն զի իր պատուիրանները կը պահենք, ու իր առջև հաճոյ եղած բաները կ'ընենք։ 23 – Եւ սա՛ կէ է անոր պատուիրանքը, որ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անունը հաւատանք ու մէկզմէկ սիրենք, ինչպես մեզի պատուէր տուաւ։ 24 – Եւ ան որ անոր պատուիրանքները կը պահէ՝ անոր մէջ կը կենայ, ու անիկա ալ՝ ասոր մէջ. և ասկէ գիտենք որ անիկա մեր մէջ կը կենայ, այսինքն այն Հոգիէն զոր մեզի տուաւ։

## Գ Լ. Դ

Սիրելիներ, ամէն հոգիի մի հաւատաք, հապա հոգիները փորձեցէք՝ թէ արդեօք Աստուծմէ՛ են. վասն զի աշխարհի մէջ շատ սուտ մարգարէներ ելած են։ 2 – Այսով կրնաք ճանչնալ Աստուծոյ Հոգին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով եկած կը խոստովանի, անիկա Աստուծմէ է. 3 – Եւ ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով եկած չխոստովանիր, անիկա Աստուծմէ չէ. ու ասիկա Նեռին հոգին է, որու համար լսեցիք թէ պիտի գայ, ու հիմակուընկ ալ աշխարհի մէջ է։ 4 – Դուք Աստուծմէ էք, որդեակներ, ու անոնց յաղթեցիք. քանզի մեծ է անիկա որ ձեր մէջ է, քան թէ անիկա որ աշխարհի մէջ է։ 5 – Անոնք աշխարհէ են. անոր համար աշխարհի վրայով կը խօսին, և աշխարհ մտիկ կ'ընէ անոնց։ 6 – Մենք Աստուծմէ ենք. ան որ կ'Աստուած կը ճանչնայ, մեզի մտիկ կ'ընէ. ան որ Աստուծմէ չէ, մեզի մտիկ չըներ. ասով կը ճանչնանք ճշմարտութեան Հոգին ու խաբէութեան հոգին։

7 – Սիրելիներ, մէկզմէկ սիրենք, վասն զի սէրը Աստուծմէ է. ու ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է, ու կը ճանչնայ զԱստուած։ 8 – Ան որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար. վասն զի Աստուած սէր է։ 9 – Ա՛յս բանին մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ, որ Աստուած իր միածին Որդին աշխարհ ղրկեց, որպէս զի անոր միջոցով ապրինք։ 10 – Ա՛յս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ անիկա մեզ սիրեց, ու իր Որդին ղրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու։ 11 – Սիրելիներ, եթէ Աստուած մեզ այսպէս սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտաւորինք մէկզմէկ սիրել։ 12 – Մէկը երբէք զԱստուած տեսած չէ. եթէ մէկզմէկ կը սիրենք, Աստուած մեր մէջ կը բնակի, ու անոր սէրը մեր մէջ կատարեալ է։ 13-Ասով գիտենք թէ մենք անոր մէջ կը բնակինք, ու անիկա մեր մէջ, որ իր Հոգիէն մեզի տուաւ։ 14 – Եւ մենք տեսանք ու կը վկայենք որ Հայրը էր Որդին ղրկեց աշխարհի Փրկիչը ըլլալու։ 15 – Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Որդի Աստուծոյ է, Աստուած անոր մէջ կը բնակի, ան ալ՝ Աստուծոյ մէջ։ 16 – Եւ մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է. և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ։ 17 – Ասով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որպէս զի Դատաստանին օրը. վասն զի ինչպէս է ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ։ 18 – Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը

վախը մեզի կը ձգէ. վասն զի վախը տանջանքի ենթակայ է. ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ։ 19 – Մենք զանիկա կը սիրենք, վասն զի առաջ անիկա մեզ սիրեց։ 20 – Եթէ մեկը կ'ըսէ Թէ Ես զԱստուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ, անիկա սուտաւոր է. քանզի ան որ իր եղբայրը չսիրէր՝ զոր կը տեսնէ, զԱստուած՝ զոր չտեսներ, ինչպէս կրնայ սիրել։ 21 – Եւ անկէ այս պատուէրը ունինք, Թէ ան որ զԱստուած կը սիրէ, իր եղբայրն ալ կը սիրէ։

## Գ.Ւ. Ե

Ա՛ՄԷն ով որ կը հաւատայ Թէ Յիսուս Քրիստոս է, Աստուծմէ ծնած է. և ամէն ով որ ծնողը կը սիրէ՝ անկէ ծնածն ալ կը սիրէ։ 2-Ասով կը ճանչնանք Թէ Աստուծոյ որդիները կը սիրենք, երբ զԱստուած սիրենք ու անոր պատուիրանները պահենք։ 3 – Վասն զի սա է Աստուծոյ սէրը, որ անոր պատուիրանները պահենք. և անոր պատուիրանները ծանր բան չեն։ 4 – Վասն զի այն ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ աշխարհի կը յաղթէ. և սա է յաղթութիւնը որ աշխարհի կը յաղթէ. այսինքն մեր հաւատքը։ 5 – Ո՞վ է որ աշխարհի կը յաղթէ, եթէ ոչ անիկա որ կը հաւատայ Թէ Յիսուս Որդի Աստուծոյ է։

6 – Անիկա է որ եկաւ ջուրով և արիւնով, այսինքն Յիսուս Քրիստոս. ոչ Թէ միայն ջուրով, հապա ջուրով ու արիւնով. և Հոգին է որ կը վկայէ, վասն զի Հոգին ճշմարտութիւն է։ 7-Վասն զի երեք են որ *երկինքի մէջ կը վկայեն. Հայրը, Բանը ու Սուրբ Հոգին, և այս երեքը մէկ են։ 8 – Ու երեք են որ երկրի վրայ կը վկայեն. Հոգին, ջուրը ու արիւնը, և երեքը միասին են։ 9 – Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է. վասն զի ասիկա է Աստուծոյ վկայութիւնը, որ իր Որդւոյն համար վկայեց։ 10 – Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ՝ վկայութիւնը իր մէջ ունի. ան որ Աստուծոյ չհաւատար՝ աստիճան կ'ընէ զանիկա, վասն զի չհաւատար այն վկայութեանը՝ զոր Աստուած իր Որդւոյն համար վկայեց։ 11 – Եւ վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը անոր Որդւոյն մէջ է։ 12 – Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի։

13 – Ա.Յս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիտնաք Թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդւոյն անունը կը հաւատաք*։ 14 – Եւ այն համարձակութիւնը զոր մենք անոր քով ունինք՝ այս է, որ ինչ բան որ խնդրենք ըստ իր կամքին համեմատ, կը լսէ մեզի։ 15 – Եւ եթէ գիտնանք կը լսէ մեզի՝ ինչ որ խնդրենք ըստ Թէ մեզի կը լսէ ինչ որ խնդրենք՝ գիտնանք Թէ կ'առնենք խնդրուքնիս զոր կը խնդրենք իրմէ։

16-Եթէ մեկը տեսնէ որ իր եղբայրը մեղք մը գործեց, ոչ Թէ մահացու, Թող խնդրէ, ու Աստուած անոր կեանք կու տայ անոնց որ մեղք չեն գործեր. Մեղք կայ որ մահացու է, չեմ ըսեր որ անոր համար խնդրէ։ 17-Ամէն անիրաւութիւն մեղք է, և մեղք կայ որ մահացու չէ։

18 – Գիտենք որ այն ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չգործեր. Հապա ան որ Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը պահէ, ու չարը իրեն չդպչիր։ 19 – Գիտենք որ մենք Աստուծմէ ենք, ու բոլոր աշխարհ չարին մէջ է։ 20 – Եւ գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ, ու մեզի միտք տուաւ, որպէս զի ճշմարիտը ճանչնանք. և այն ճշմարիտին մէջ ենք, իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ. ասիկա է ճշմարիտ Աստուած ու յաւիտենական կեանք։ 21 – Որդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք։†

*Շատ հին ձեռագիրներ չունին

*Ոմանք կ'աւելցնեն, և որպէս զի Աստուծոյ Որդւոյն անունը հաւատաք

†Ոմանք կ'աւելցնեն, Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Երէցէն ընտրեալ տիկնոջը ու անոր որդիներուն, զորոնք ես ճշմարտութեամբ կը սիրեմ՝ (և ոչ Թէ միայն ես, հապա ամէնն ալ՝ որոնք ճշմարտութիւնը կը ճանչնան,) 2 – Ա.յն ճշմարտութեանը համար՝ որ մեր մէջ կը մնայ, ու յաւիտեան մեզի հետ պիտի ըլլայ. 3-Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Հայր Աստուծմէն և Տէր Յիսուս Քրիստոսէ, Հօրը Որդիէն, ձեզի հետ ըլլայ ճշմարտութիւնով ու սիրով։

4 – Շատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ գտայ որոնք ճշմարտութեամբ կը քալեն այն պատուիրանքին համեմատ՝ զոր Հօրմէն առինք։ 5 – Եւ հիմա քեզի կ'աղաչեմ, օվ տիկին, ոչ իբր Թէ նոր պատուիրանք մը քեզի կը գրեմ, հապա զոր ան որ սկիզբէն ունէինք, որ մենք իրարու սիրենք։ 6 – Եւ սէրը այս է՝ որ անոր պատուիրանքներուն համեմատ քալենք. — պատուիրանքը այս է՝ որ ինչպէս սկիզբէն ի վեր լսեցիք, անոր համեմատ քալէք։ 7 – Վասն զի շատ մոլորեցուցիչներ ելան աշխարհի մէջ, որոնք Յիսուս Քրիստոսը մարմնով եկած չեն խոստովանիր. այնպիսի մեկը մոլորեցուցիչ ու Նեռ է։ 8 – Զգուշացէք ձեր անձերուն, որպէս զի աշխատանքնիս չկորսընցնենք, հապա որպէս զի լման վարձք առնենք։ 9-Ամէն ով որ յառնացանք կը գործէ ու Քրիստոսի վարդապետութեանը մէջ չկենար, անիկա զԱստուած չունի. ան որ Քրիստոսի վարդապետութեանը մէջ կը կենայ, անիկա Հայրն ալ ունի Որդին ալ։ 10 – Եթէ մեկը ձեզի գայ ու այս վարդապետութիւնը չբերէ, զանիկա տուներնիդ մի ընդունիք, և անոր Բարև մի ըսէք։ 11 – Քանզի ով որ անոր Բարև կ'ըսէ, անոր չար գործերուն հաղորդ կ'ըլլայ։

12 – Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց չուզեցի Թղթով ու մելանով հրէլ. վասն զի յոյս ունիմ որ ձեզի գամ, ու բերան առ բերան խօսիմ, որպէս զի մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։ 13 – Բարև կ'ընեն քեզի քու ընտրեալ քրոջդ որդիները։*

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Երէցէն Գայիոս սիրելիին, զոր ես կը սիրեմ ճշմարտութեամբ։ 2 – Սիրելի, ազօթք կ'ընեմ որ ամէն կողմէ յաջողութեան մէջ ու առողջ ըլլաս, ինչպէս քու հոգիդ ալ յաջողութեան մէջ է։ 3-Վասն զի շատ ուրախացայ, երբ քանի մը եղբայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայեցին, ինչպէս դուն ճշմարտութեամբ կը քալես։ 4 – Ասկէ մեծ ուրախութիւն մը չունիմ, որ կը լսեմ Թէ իմ որդիներս ճշմարտութեան մէջ կը քալեն։ 5 – Սիրելի, դուն հաւատարմաբար կ'ընես, ինչ որ կ'ընես եղբայրներուն և օտարներուն. 6 – Որոնք եկեղեցիին

*Ոմանք կ'աւելցնեն, Ամէն։

առջև վկայեցին քու սիրոյդ վրայով. որ եթէ աստուածաշաճայ կերպով զանոնք ճամբայ դնես, աղէկ պիտի քնես: 7 – Ա՛ռ զի Աստուած անաւանելոցն համար եղան, ու հեթանոսներէն բան մը չեն առներ: 8 – Ուստի մենք պարտաւոր ենք այնպիսիները ընդունիլ, որպէս զի ճշմարտութեանը գործակից ըլլանք:

9 – Եկեղեցիին գրեցի. բայց Դիոտրեփէս, որ անոնց մէջ առաջինն ըլլալ կ'ուզէ, մեզ չընդունիր: 10 – Ասոր համար եթէ գամ, անոր ըրած գործերը պիտի յիշեմ, որ մեզի գէմ չարաչար կրաւորելով չարախօսութիւն կ'ընէ. և ասով ալ գոհ չեղած՝ ինք չընդունիր եղբայրները, ու անոնք որ կ'ուզեն ընդունել կ'արգիլէ, ու եկեղեցիէն ալ կը հանէ: 11 – Սիրելի, չարին նմանողմի ըլլար, հապա բարիին. ան որ բարիք կը գործէ, Աստուծմէ է. բայց ան որ չարիք կը գործէ, անիկա զԱստուած տեսած չէ: 12 – Դեմետրիոսի համար ամէնն ալ կը վկայեն, բուն իսկ ճշմարտութիւնն ալ. մենք ալ կը վկայենք, և դուք գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է:

13 – Շատ բան ունէի գրելու, բայց չեմ ուզեր մելանով ու գրիչով քեզի գրել: 14 – Սակայն յոյս ունիմ մօտերս քեզ տեսնել, ու բերան առ բերան պիտի խօսինք: 15-Խաղաղութիւն քեզի. բարեկամները քեզի բարև կ'ընեն. բարև ըրէ դու բարեկամներուն ամէն մէկուն անունովը:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Յուդա, Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակոբոսի եղբայրը, ձեզի որ Հայր Աստուծմէն սրբուած էք, և Յիսուս Քրիստոսէ պահուած ու կանչուած. 2 – Ողորմութիւն ու խաղաղութիւն և սէր ձեր վրայ շատնայ:

3 – Սիրելիներ, բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի գրելու համարակոյ փրկութեանը համար, էի անյիշ հարկ տեսայ ձեզի գրել ու յորդորել որ մրցիք այն հաւատքին համար որ անգամ մը սուրբերուն աւանդուեցաւ: 4 – Քանդի մէկ քանի մարդիկ գաղտուկ մտան, որ առաջուընէ այս դատապարտութեանը համար որոշուած էին, ամբարիշտներ, որոնք մեր Աստուծոյ շնորհքը անառակութեան դարձուցին, և միակին *Իշխանը ու մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուրացան: 5 – Ա՛րդ կ'ուզեմ միտքերնիդ բերել, թէև արդէն գիտէք ասիկա, թէ Տէրը որ ժողովուրդը Եգիպտոսի երկրէն ազատեց, ետքը չհաւատացողները կորսընցուց: 6 – Եւ այն հրեշտակները, որոնք իրենց իշխանութիւնը չպահեցին, հապա իրենց բնակութիւնը ձգեցին, մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ պահեց մեծ օրուան դատաստանին: 7- Ինչպէս Սոդոմ ու Գոմոր և անոնց բոլորտիքը եղած քաղաքները, որոնք ասանց նման պոռնկեցան ընկերներուն մնորմինին ետեւէն երթալով, մեր առջև օրինակ կեցեր են՝ յաւիտենական կրակին գատապարտութիւնը ընդունելով: 8 – Նմանապէս այս ցնորածներն ալ մնորմինը կը պղծեն, տէրութիւնը կ'անարգեն, փառաւորներուն դէմ կը հայհոյեն: 9 – Բայց Միքայէլ հրեշտակապետը երբ Սատանայի դէմ դնելով Մովսէսի մարմինին համար կը վիճէր, չհամարձակեցաւ հայհոյութեան դատապարտութիւն բերել անոր վրայ, հապա ըսաւ, Տէրը յանդիմանէ քեզ: 10 – Իսկ ասոնք այն բաներուն զորոնք չեն հասկնար, հայհոյութիւն կ'ընեն. և այն բաները զորոնք բնականաբար անբան անասուններու պէս գիտեն, անոնց մէջ կ'ապականին: 11 – Վա՛յ անոնց, որոնք Կայէնի ճամբովը գացին, ու Բաղաամի մոլորութեանը պէս ցանկութեամբ վարձքի եռեւէ գացին, ու Կորխի հակառակութեանը պէս կորուեցան: 12 – Ասոնք ձեր սիրոյ խնջոյքներուն մէջ արատներ են, ու երբ ձեզի հետ կերուխում կը նստին, աներկիւղ իրենց անձը կը կերակրեն. անջուր ամպեր՝ հովերէն քշուած. պտուղնին կորսնցուցած ծառեր, երկու անգամ մեռած, արմատէն խլուած: 13 – Ծովու կատղած պիլքներ, որոնք իրենց անձերուն ամօթը կը փրփրցնեն. մոլորական աստղեր, որոնց համար խաւարին մէգը պահուած է յաւիտեան:

14 – Անոնց վրայ մարգարէացաւ Ենովք ալ, որ եօթներորդ էր Ադամէ, ու ըսաւ, Ահա Տէրը իր բիւրաւոր սուրբերովը եկաւ, 15 – Անհնազանդութեան ընելու, ու բոլոր ամբարիշտները յանդիմանելու իրենց ըրած ամբարշտութեանը բոլոր գործերուն համար, և բոլոր խիստ խօսքերուն համար, զորոնք ամբարիշտ մեղաւորները անոր դէմ խօսեցան: 16 – Ասոնք տրտնջողներ ու գրկնդիմդիրներ են, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ կ'երթան, և իրենց բերանները ամբարտաւան խօսքեր կը գրուցեն, և շահի համար կերեսպաշտութիւն կ'ընեն: 17 – Բայց դուք, սիրելիներ, միտքերնիդ բերէք այն խօսքերը որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալներէն առաջուընէ գրուցուեցան. 18 – Որոնք ձեզի կ'ըսէին թէ վերջին ժամանակը ծաղրողներ պիտի ըլլան, որոնք իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համեմատ պիտի երթան:

19-Ասոնք ինքզինքնին զատող շնչաւորներ են, որոնք Հոգին չունին: 20 – Բայց դուք, սիրելիներ, անձերնիդ շինելով ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, և Սուրբ Հոգիով աղօթք ընելով, 21 – Անձերնիդ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը սպասելով յաւիտենական կեանքի համար: 22 – Եւ խտրութիւն ընելով՝ ոմանց ողորմեցէք: 23-Եւ ոմանք վախով ազատեցէք՝ կրակէն յափշտակելով զանոնք, ատելով մնորմինէն աղտոտուած հանդերձն ալ:

24 – Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիծ պահել, և իր փառքին առջև անարատ կայնեցնել ցնծութիւնով: 25- Մեր Փրկչին, միակին *Աստուծոյ, [մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով] փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն [բոլոր դարերէն առաջ,] և հիմա ու բոլոր դարերու մէջ: Ամէն:

*Ոմանք, Աստուած իշխանը



ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

### ԳԼՈՒԽ Ա.

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, զոր Աստուած անոր տուաւ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ. և իր հրեշտակին ձեռքով ղրկելով՝ իր Յովհաննէս ծառային իմացուց, 2 – Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը բրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տեսաւ: 3 – Երանի՛ անոր որ կը կարդայ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է. վասն զի ժամանակը մօտ է:

4 – Յովհաննէս եօթը եկեղեցիներուն որոնք Ասիայի մէջ են. Շնորհք և խաղաղութիւն ձեզի Անկէ որ է և որ էր և որ պիտի գայ, ու եօթը Հոգիներէն

*Ոմանք, իմաստաւն Աստուծոյ

ներէն՝ որոնք անոր սէիտուին առջև են, 5 – եւ Յիսուս Քրիստոս հաւատացեալի վկայէն, որ մեռելներուն անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը. անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուացց, 6 – եւ մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը. անոր փառք և զօրութիւն յաւիտեան յաւիտենից։ Ամէն ։

7 – Ահա ամպերով կու գայ . ու ամէն աչք պիտի տեսնէ զանիկա , և անոնք որ զանիկա խոցեցին, և անոր վրայ կոծ պիտի ընեն երկրի բոլոր ազգերը։ 8 – Այո, Ամէն։ Ես եմ Ալֆա և Օմէգա, *կ'ըսէ Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ, Ամենակալը ։

9 – Ես Յովհաննէս ձեր եղբայրը, և Յիսուս Քրիստոսի նեղութեանը ու արքայութեանը և համբերութեանը մէջ բնակեցիկը, Պատմոս կոչուած կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս Քրիստոսի վկայութեանը համար։ 10 – Ես †կիրակի օրը Հոգին իմ վրաս եկաւ, ու ետևէս մեծ ձայն մը լսեցի փողի նման պէս, որ կ'ըսեր, 11 – ‡Ինչ որ կը տեսնես, գիրքի մը մէջ գրէ, ու ղրկէ ||Եօթը եկեղեցիներուն , որոնք են Եփեսոս, ու Զմիւռնիայի, և Պէրգամոնի, ու Թիւատիրի, և Սարդիկէի, ու Փիլադելփիայի, և Լաւոդիկիայի մէջ են։ 12 – Ես դարձայ այն ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր. ու երբ դարձայ՝ եօթը ոսկեղէն աշտանակներ տեսայ. 13 – Ես եօթը աշտանակներուն մէջ՝ մկը Որդւոյ նման , պճնի նաւակ պատմուճան մը հագած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կապած. 14 – Ես իր գլուխը ու մազերը բուրդի պէս ճերմակ ու ձիւնի պէս, ու իր աչքերը՝ կրակի բոցի պէս . 15 – Ես իր ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած, ու իր ձայնը՝ շատ ջուրերու ձայնի պէս. 16 – Ես իր աջ ձեռքին մէջ եօթը աստղ ունէր, ու իր բերնէն սրած երկսերան սուր մը կ'ելլէր , և իր երեսը արևու պէս էր՝ որ իր զօրութիւնովը կը փայլի։

17 – Ու երբ տեսայ զանիկա , իր ոտքը լինկայ մեռելի պէս , ու իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինծի , Մի վախնար . ես եմ Առաջինը ու Վերջինը. 18 – Ես ես կենդանի եմ, ու ես անեմ որ մեռայ , և ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից.* և ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները։ 19 – [Ուստի] գրէ ինչ որ կը տեսնես, ղայն որ կայ ու ղայն որ եղքը պիտի ըլլայ . 20 – Եօթը աստղերուն խորհուրդը՝ զոր իմ աջ ձեռքիս մէջ տեսար, և եօթը ոսկեղէն աշտանակները. այն եօթը աստղերը եկեղեցիներուն հրեշտակներն են . և եօթը աշտանակներըը† եօթը եկեղեցիներն են։

## Գլ. Բ

Եփեսոսի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղերը ունի , ու եօթը ոսկեղէն աշտանակներուն մէջ կը պաղտի . 2 – Գիտեմ քու գործերդ և քու աշխատութիւնդ ու քու համբերութիւնդ, և որ չկրնաս չես կրնար տանիլ , ու փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ են , ու չեն , և գտար թէ ստախօս են . 3 – Ու համբերութիւն ունենալով՝ նեղ–ըիւն կրեցիր ‡իմ անունս համար՝ ու չհուսկցար։ 4 – Բայց քեզի դէմ բան մը ունիմ՝ որ քու առաջուան սէրդ ձգեցիր ։ 5 – Միտդ բեր հիմա ուրկէ որ ինկար, ու ապաշխարէ և դո՜ առաջուան գործերդ ըրէ. եթէ ոչ՝ շուտով կու գամ քեզի , ու քու աշտանակդ իր տեղէն պիտի շարժեմ՝ եթէ չապաշխարես։ 6 – Բայց ասիկա ունիս, որ Նիկողայտանց գործերը կ'ատես, զորոնք ես ալ կ'ատեմ։ 7 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն . Ան որ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն՝ որ Աստուծոյ դրախտին մէջ է։

8 – Ես Զմիւռնիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Առաջինը ու Վերջինը , որ մեռաւ ու կենդանացաւ . 9 – Գիտեմ քու գործերդ ու նեղութիւնդ և աղքատութիւնդ , (բայց հարուստ ես ,) ու անոնց հայհոյութիւնը՝ որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են , ու չեն, հապա Սատանային ժողովք մը ։ 10 – Բնաւ մի վախնար այն բաներէն զորոնք պիտի կրես. ահա բանաբերկուն ձեզմէ մէկ քանիները բանտը պիտի ձգէ որպէս զի փորձուիք, և տասը օր նեղութիւն պիտի ունենաք. մինչև ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ ։ 11 – Ան որ ականջ ունի , թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն։ Ան որ կը յաղթէ, երկրորդ մահէն պիտի չվնասուի։

12 – Ես Պերգամոնի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ սրած երկսերան սուրը ունի. 13 – Գիտեմ քու գործերդ , և թէ ո՛ր կը բնակիս, այսինքն Սատանային աթոռին եղած տեղը , ու իմ անունս կը պահես , և իմ հաւատքս չուրացար այն օրերը անգամ՝ որ Անթիպաս իմ հաւատարիմ վկաս սպանուեցաւ ձեր մէջ , ուր Սատանայ կը բնակի։ 14 – Բայց քեզի դէմ քիչ մը բան ունիմ, որ հոդ Բաղաամի վարդապետութիւնը բռնողներ ունիս, որ Բաղակի սովրեցուց Իսրայէլի որդիներուն առջև գայթակղութիւն դնել , որպէս զի անոնք կուռքերու զոհածները ուտեն ու պոռնկութիւն ընեն ։ 15 – Այսպէս ալ դուն Նիկողայտանց վարդապետութիւնը բռնողներ ունիս, զոր ես կ'ատեմ։ 16 – [Ուստի] ապաշխարէ. եթէ ոչ՝ շուտով կու գամ քեզի, ու իմ բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց հետ ։ 17 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ով որ կը յաղթէ, պահած մանանային ուտել պիտի տամ անոր , ու ճերմակ խիճ մը պիտի տամ անոր, և այն խիճին վրայ նոր անուն մը գրուած, զոր մէկը չգիտեր, բայց միայն ան՝ որ կ'ընդունի։

18 – Ես Թիւատիրի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին , որ կրակի բոցի պէս աչքեր ունի, ու իր սաթերը ոսկեպղինձի նման են . 19 – Գիտեմ քու գործերդ և սէրդ ու ծառայութիւնդ, և քու հաւատքդ ու համբերութիւնդ, և թէ քու վերջին գործերդ առաջիններէն չատ են։ 20 – Բայց քեզի դէմ *բան մը՝ ունիմ, որ թող կու տաս Յեզաբէլ կինը, որ ինքզինք մարգարէուհի կ'անուանէ, ու իմ ծառաներս մոլորեցնելով կը սորվեցնէ պոռնկութիւն ընել և կուռքերու զոհուածները ուտել ։ 21 – Ես անոր ժամանակ տուի իր պոռնկութենէն վրայ ապաշխարելու, ու չապաշխարեց ։ 22 – Ահա ես զանիկա անկողին պիտի ձգեմ , ու անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ, եթէ իրենց գործերուն վրայ չապաշխարեն։ 23 – Ես անոր զաւակները մահով պիտի սպաննեմ. ու բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ երիկամունքները ու սիրտերը կը քննեմ . և ամէն մէկուդ ձեր գործերուն համեմատ պիտի հատուցանեմ։ 24 – Բայց ձեզի կ'ըսեմ միւս ներուդ որ Թիւատիրի մէջ էք, ու այս վարդապետութիւնը չունիք, որ չճանչցաք Սատանային խորունկ բաները, (ինչպէս կ'ըսեն,) Ձեր վրայ ուրիշ ծանրութիւն չեմ ձգեր. 25 – Հապա զայն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ ։ 26 – Ես ան որ կը յաղթէ ու իմ գործերս մինչև վերջը կը պահէ, անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, 27 – (Ես պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով . անոնք բրուտի անօթներու պէս պիտի փշրուին.) 28 – Ինչպէս ես ալ իմ Հօրմէս առի . ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը։ 29 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն։

## Գլ. Գ

Եւ Սարդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ ունի Աստուծոյ եօթը Հոգիները ու եօթը աստղերը. Գիտեմ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես ։ 2 – Արթնցուն կեցիր և հաստատէ մնացած բաները որոնք մեռնելու վրայ են, վասն զի քու գործերդ Աստուծոյ առջև կատարեալ չգտայ։ 3 – Հիմա միտդ բեր թէ ինչպէս ընդունեցիր ու լսեցիր , ու պահէ և ապաշխարէ. բայց եթէ արթննալու չըլլաս , գողի պէս քու վրադ պիտի գամ, ու ընաս պիտի չգիտնաս թէ ո՛ր

*Ոմանք կ'աւելցնեն, Առաջինը ու Վերջինը,
†Ա յունէն, տէրունական
‡Ոմանք, ես եմ Ալֆա և Օմէգա, Առաջինը և Վերջինը. և ինչ
||Ոմանք, Ասիա եղած եօթը

*Ոմանք կ'աւելցնեն, Ամէն.
†Ոմանք կ'աւելցնեն, զորոնք տեսար,
‡Ոմանք, և իմ անուանս համար աշխատեցար



*բան մը՝ ունիմ, որ թող կու տաս Յեզաբէլ կինը, որ ինքզինք մարգարէուհի կ'անուանէ, ու իմ ծառաներս մոլորեցնելով կը սորվեցնէ պոռնկութիւն ընել և կուռքերու զոհուածները ուտել ։ 21 – Ես անոր ժամանակ տուի իր պոռնկութենէն վրայ ապաշխարելու, ու չապաշխարեց ։ 22 – Ահա ես զանիկա անկողին պիտի ձգեմ , ու անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ, եթէ իրենց գործերուն վրայ չապաշխարեն։ 23 – Ես անոր զաւակները մահով պիտի սպաննեմ. ու բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ երիկամունքները ու սիրտերը կը քննեմ . և ամէն մէկուդ ձեր գործերուն համեմատ պիտի հատուցանեմ։ 24 – Բայց ձեզի կ'ըսեմ միւս ներուդ որ Թիւատիրի մէջ էք, ու այս վարդապետութիւնը չունիք, որ չճանչցաք Սատանային խորունկ բաները, (ինչպէս կ'ըսեն,) Ձեր վրայ ուրիշ ծանրութիւն չեմ ձգեր. 25 – Հապա զայն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ ։ 26 – Ես ան որ կը յաղթէ ու իմ գործերս մինչև վերջը կը պահէ, անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, 27 – (Ես պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով . անոնք բրուտի անօթներու պէս պիտի փշրուին.) 28 – Ինչպէս ես ալ իմ Հօրմէս առի . ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը։ 29 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն։

## Գլ. Գ

Եւ Սարդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ ունի Աստուծոյ եօթը Հոգիները ու եօթը աստղերը. Գիտեմ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես ։ 2 – Արթնցուն կեցիր և հաստատէ մնացած բաները որոնք մեռնելու վրայ են, վասն զի քու գործերդ Աստուծոյ առջև կատարեալ չգտայ։ 3 – Հիմա միտդ բեր թէ ինչպէս ընդունեցիր ու լսեցիր , ու պահէ և ապաշխարէ. բայց եթէ արթննալու չըլլաս , գողի պէս քու վրադ պիտի գամ, ու ընաս պիտի չգիտնաս թէ ո՛ր

*Ոմանք, քիչ մը բան

ժամուն քու վրադ պիտի գամ։ 4 – Սակայն քանի մը անձեր ունիս Սարդիկէի մէջ, որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին, և ճերմակներով պիտի պարտին լինալ հետ, քանզի արժանի են։ 5 – Ան որ կը յաղթէ՝ ճերմակներ պիտի հագնի, ու ես անոր անունը կենաց գիրքէն պիտի չսրբեմ. և անոր անունը պիտի դաւանիմ իմ Հօրս առջև ու անոր հրեշտակներուն առջև։ 6 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ՚ըսէ եկեղեցիներուն։

7 – Եւ Փիղադելփիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Ա՛յսպէս կ՚ըսէ այն Սուրբը, այն Ճշմարիտը որ Դաւիթի բանալին ունի. կը բանայ ու մէ՛կը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու մէ՛կը չկայ որ բանայ. 8 – Գիտեմ քու գործերդ. ահա քու առջևդ բացուած դուռ մը գրի, զոր մէ՛կը չկրնար գոցել. վասն զի դուն քիչ մը կարողութիւն ունիս, և իմ խօսքս պահեցիր ու իմ անունս չուրացար։ 9 – Ա՛հա ես քեզի կու տամ Սատանայի ժողովքէն եղողները, որոնք կ՚ըսեն թէ իրենք Հրեայ են ու չեն, հապա սուտ կ՚ըսեն. ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան ու երկրպագութիւն ընեն քու ոտքերուդ առջև, և ճանչնան թէ ես քեզ սիրեցի։ 10 – Որովհետև իմ համբերութեանս խօսքը պահեցիր, ես ալ քեզ պիտի պահեմ փորձութեան ժամուանակ, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրի երեսը բնակողները փորձելու համար։ 11 – Ա՛հա ես շուտով կու գամ. ունեցածդ ամո՛ր բռնէ, որպէս զի մէ՛կը չառնէ քու պսակդ։ 12 – Ան որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյս տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու ալ դուրս պիտի չելլէ. և անոր վրայ իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի, որ երկինքէն իմ Աստուծմէս կ՚իջնէ, և իմ նոր անունս. 13 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ՚ըսէ եկեղեցիներուն։

14 – Եւ Լաւոդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Ա՛յսպէս կ՚ըսէ Ամէնը, հաւատարիմ ու ճշմարիտ վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը։ 15 – Գիտեմ քու գործերդ, որ ոչ պաղ ես ու ոչ տաք. երանի՛ թէ պաղ ըլլայիր կամ տաք։ 16 – Ուստի դուն որ գաղջ ես, ու ոչ տաք՝ ոչ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ։ 17 – Քանզի կ՚ըսես, Ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը կարօտ չեմ. ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես, և աղքատ ու կոյր ու մերկ։ 18 – Ես քեզի խորհուրդ կու տամ. լնձմէ կրակի մէջ փորձուած ոսկի ծախու առ, որպէս զի հարստանաս, ու ճերմակ հանդերձներ՝ որպէս զի հագնիս, որպէս զի քու ամօթալի մերկութիւնդ չերեւնայ. և աչքերդ դեղ դիր որպէս զի տեսնես։ 19 – Ես իմ սիրածս կը յանդիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձաւոր եղիր ու ապաշխարէ։ 20 – Ա՛հա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ. եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ և անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինձի հետ։ 21 – Ան որ կը յաղթէ, ինձի հետ իմ աթոռս նստել պիտի տամ անոր, ինչպէս ես ալ յաղթեցի ու իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ։ 22 – Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ՚ըսէ եկեղեցիներուն։

## Գլ. Գ

Եւ յոյն բաներէն եաքը տեսայ, և ահա երկինքի մէջ բացուած դուռ մը կար, և առաջին ձայնը զոր լսեցի՝ փողի նման էր, որ ինձի հետ կը խօսէր ու կ՚ըսէր, Հոս ելիր ու ասկէ եաքը ըլլալու բաները քեզի ցուցնեմ։ 2 – Եւ շուտ մը Հոգին իմ վրաս եկաւ. և ահա աթոռ մը դրուած էր երկինքի մէջ. 3 – Ու աթոռին վրայ մէկը նստեր էր. և նստողը յասպիս ու սարդիոն քարերու երեւութին նման էր։ 4 – Եւ աթոռին բոլորտիքը ծիածան՝ զմրուխտի երեւութի նման. ու աթոռին բոլորտիքը քսանչորս աթոռներ, և այն աթոռներուն վրայ քսանչորս երէցներ *նստեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած, ու գլուխնին ոսկի պսակներ ունէին։ 5 – Եւ աթոռէն փայլակներ ու ձայներ և որոտումներ կ՚ելլէին, ու աթոռին առջև եօթը հատ բոցկռած կրակի ջամբարներ կային. որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են։ 6 – Եւ աթոռին առջև իբրև ապակեղէն ծով մը՝ սպիտակի նման, և աթոռին մէջ ու աթոռին բոլորտիքը՝ չորս կենդանիներ, որոնք աչքերով լեցուն էին առջևէ ու ետևէ։ 7 – Եւ առաջին կենդանին առիւծի նման էր, ու երկրորդ կենդանին զուարակի նման, և երրորդ կենդանին մարդու երես ունէր, ու չորրորդ կենդանին՝ թռչող արծիւի նման։ 8 – Եւ չորս կենդանիներուն ամէն մէկը շուրջանակի վեց վեց թեւ ունէր, ու ներսէն աչքերով լեցուն էին. ու չէին հանգչեր օր ցորեկը ոչ ալ գիշերը՝ ըսելով, Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Աստուած Ամենակալ, որ էր և որ է և որ պիտի գայ։ 9 – Ու երբ այն կենդանիները փառք ու պատիւ և գոհութիւն կու տային աթոռին վրայ նստողին, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից. 10 – Քսանչորս երէցները աթոռին վրայ նստողին առջև կ՚իյնային ու երկրպագութիւն կ՚ընէին յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին, և իրենց պսակները աթոռին առջև կը ձգէին՝ ըսելով, Արժանի ես, Տէր, փառք ու պատիւ և զօրութիւն առնելու, վասն զի ամէն բան դուն ստեղծեցիր, և քու կամքովդ եղան ու ստեղծուեցան։

## Գլ. Ե

Եւ աթոռին վրայ նստողին աջ ձեռքը գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրուած, և եօթը կնիքով կնքուած։ 2 – Ու զօրաւոր հրեշտակ մը տեսայ՝ որ մեծ ձայնով կը կանչէր, Ո՞վ արժանի է այդ գիրքը բանալու և անոր կնիքները քակելու։ 3 – Եւ ոչ երկինքի մէջ, ոչ երկրի վրայ ու ոչ երկրի տակ ‡ոմանք՝ մէկը՝ որ կարող ըլլար այն գիրքը բանալ, ոչ ալ անոր նայիլ։ 4 – Ես ալ սաստիկ կու լայի՝ որ մէ՛կը արժանի չգտնուեցաւ այն գիրքը բանալու*, ոչ ալ անոր նայելու։ 5 – Ու երէցներէն մէկը ըսաւ ինձի, Մի լար. ահա Յուդայի ցեղէն եղող Առիւծը, Դաւիթի Արմատը, յաղթեց այն գիրքը բանալու ու անոր եօթը կնիքները քակելու։ 6 – Եւ տեսայ որ աթոռին ու չորս կենդանիներուն մէջտեղ և երէցներուն մէջտեղ կայնած Գառնուկ մը կար, որպէս թէ մորթուած, որ եօթը եղջիւր ու եօթը աչք ունէր, որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են՝ որ բոլոր երկիր կը ղրկուին։ 7 – Եւ անիկա եկաւ ու աթոռին վրայ նստողին աջ ձեռքէն գիրքը առաւ։ 8 – Ու երբ գիրքը առաւ, չորս կենդանիներուն ու քսանչորս երէցները Գառնուկին առջև ինկան, և ամէնն ալ քնարներ ունէին, ու ոսկիէ խնկամաններ՝ խունկով լեցուն, որ սուրբերուն աղօթքն է։ 9 – Եւ նոր երգ մը կ՚երգէին՝ ըսելով, Արժանի ես դուն այդ գիրքը առնելու և անոր կնիքները բանալու. վասն զի մորթուեցար, ու մեզ Աստուծոյ՝ քու արիւնովդ ամէն ցեղէ ու լեզուէ և ժողովուրդէ ու ազգէ. 10 – Եւ *մեզ մեր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրիր, ու երկրի վրայ պիտի †թագաւորենք։ 11 – Եւ նայեցայ՝ ու շատ հրեշտակներու ձայն լսեցի, որոնք աթոռին ու կենդանիներուն և երէցներուն բոլորտիքն էին. ու անոնց թիւն էր բիւրք բիւրուց և հազարք հազարաց. 12 – Որոնք մեծ ձայնով կ՚ըսէին, Արժանի է գառնուկը սպանեալ զօրութիւն ու հարստութիւն և իմաստութիւն ու կարողութիւն և պատիւ ու փառք և օրհնութիւն առնելու։ 13 – Եւ բոլոր արարածները, որ երկինքի մէջ ու երկրի վրայ ու երկրի տակ և ծովու մէջ, ու ամէն ինչ որ անոնց մէջ կայ՝ լսեցի որ կ՚ըսէին, Աթոռին վրայ նստողին և Գառնուկին օրհնութիւն ու պատիւ և փառք ու զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ 14 – Եւ չորս կենդանիները կ՚ըսէին, Ամէն. ու էրէցները ինկան ու երկրպագութիւն ըրին‖։

## Գլ. Զ

Եւ տեսայ, երբ Գառնուկը §կնիքներէն մէկը բացաւ, ու չորս կենդանիներուն մէկն որոտումի պէս ձայն մը լսեցի որ կ՚ըսէր, Ելիր ու տես։ 2 – Ու տեսայ, և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը աղեղ մը ունէր. և պսակ մը տրուեցաւ անոր, և անիկա

*Ոմանք, նստած տեսայ

*Ոմանք Ցո՛ւետնէն, և կարգալու

*Ոմանք, մեզի

†Ոմանք, թագաւորեն

‡Ոմանք, քսանչորս երէցները

‖Ոմանք Ցո՛ւետնէն, յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին

§Ոմանք, եօթը կնիքները

կա յաղթող էր ու յաղթելու ելաւ։

3 – Ու երբ երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, *Եկուր։ 4 – Եւ ուրիշ ձի մը ելաւ շառագոյն, ու անոր վրայ հեծնողին էլեւնաբէն տրուեցաւ որ երկրէ խաղաղութիւնը առնէ, որպէս զի իրար ոպանեն. ու անոր մեծ սուր մը տրուեցաւ։

5 – Ու երբ երրորդ կնիքը բացաւ, երրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես. ու տեսայ, և ահա սեւ ձի մը, ու անոր վրայ հեծնողը իր ձեռքը կշիռ մը ունէր։ 6 – Ու չորս կենդանիներուն մէջէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Կապիճ մը ցորեան մէկ դահեկանի, ու երեք կապիճ գարին մէկ դահեկանի. և ձէթին ու գինիին վնաս չընես։

7 – Ու երբ չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կենդանիէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։ 8 – Ու տեսայ, և ահա դեղին ձի մը, ու անոր վրայ հեծնողին անունը Մահ էր, և Դժոխքը անոր եւսէն կ'երթար. ու անոնց իշխանութիւն տրուեցաւ երկրի չորրորդ մասին վրայ, որ սրով ու սովով և մահովի ու երկրի գազաններով սատկեցընեն։

9-Ու երբ հինգերորդ կնիքը բացաւ, սեղանին տակ տեսայ այն մարդոց հոգիները, որոնք սպանուած էին Աստուծոյ խօսքին համար, ու անոր վկայութեանը համար՝ զոր իրենք ունէին։ 10 – Ու մեծ ձայնով աղաղակեցին ու ըսին, Ով սուրբ ու ճշմարիտ Տէր, մինչեւ ե՞րբ չես դատեր ու մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր։ 11 – Եւ ճերմակ հանդերձներ տրուեցան անոնց, ու ըսուեցաւ անոնց որ քիչ մը ատեն ալ հանգչին, մինչեւ անոնց ծառայակիցները ու անոնց եղբայրները լման ըլլան, որոնք իրենց պէս պիտի սպանուէին։

12 – Եւ տեսայ, երբ վեցերորդ կնիքը բացաւ, ու մեծ շարժ մը եղաւ, ու արեւը սեւցաւ մազէղէն քուրձի մը պէս, և լուսինը [բոլորովին] արիւնի պէս եղաւ. 13 – Ու երկինքի աստղերը գետինը թափին փեցան, ինչպէս թաւիղ հովին շարժուած թզենին իր անմուղները կը թափէ. 14 – Եւ երկինք դա-

*Ոմանք, Եկուր ու տես



ղաւ իբրեւ մատեան մը պէս կը քաշուէր. ու բոլոր լեռները և կղզիները իրենց տեղերէն շարժեցան։ 15 – Ու երկրի թագաւորները և մեծամեծները ու հարուստները, հազարապետները և զօրաւորները, ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները այրերուն և լեռներուն ապառաժներուն մէջ պահուըռեցան. 16- Եւ լեռներուն ու ապառաժներուն կ'ըսէին, Մեր վրայ ինկէք ու մեզ ծածկեցէք անոր երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին բարկութենէն։ 17 – Վասն զի անոր բարկութեանը մեծ օրը եկաւ, և ո՞վ կրնայ դիմանալ։

## Գլ. Է

Եւ անկէ ետև տեսայ չորս հրեշտակներ՝ որոնք երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու երկրի չորս հովերը բռներ էին, որպէս զի երկրի վրայ հով չփչէ, ու ոչ ծովու վրայ, ոչ ալ ծառի մը վրայ։ 2 – Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արեւելքէն ելաւ, ու կենդանի Աստուծոյ կնիքը ունէր. և մեծ ձայնով մը աղաղակեց այն չորս հրեշտակներուն, որոնց էլեւնաբէն տրուած էր երկրի ու ծովուն վնասելու, 3 – Ու ըսաւ, Երկրի վնաս մի ընէք, ոչ ծովուն, ոչ ալ ծառերուն, մինչեւ մեր Աստուծոյ ծառաներուն ճակատները կնքենք։ 4 – Եւ կնքուածներուն համրանքը լսեցի՝ որ էր հարիւր քառասունչորս հազար՝ Իսրայէլի որդիներուն բոլոր ցեղերէն կնքուած. 5 – Յուդայի ցեղէն տասներկու հազար կնքուած, Ռուբենի ցեղէն տասներկու հազար կնքուած, Գադի ցեղէն տասներկու հազար կնքուած, 6 – Ասերի ցեղէն տասներկու հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն տասներկու հազար կնքուած, Մանասէի ցեղէն տասներկու հազար կնքուած, 7 – Շմաւոնի ցեղէն տասներկու հազար կնքուած, Ղեւիի ցեղէն տասներկու հազար կնքուած, Իսաքարի ցեղէն տասներկու հազար կնքուած, 8 – Զաբուղոնի ցեղէն տասներկու հազար կնքուած, Յովսեփի ցեղէն տասներկու հազար կնքուած, Բենիամինի ցեղէն տասներկու հազար կնքուած։

9 – Անկէ ետքը տեսայ, և ահա մեծ բազմութիւն՝ զոր մէկը չէր կրնար համրել, բոլոր ազգերէն ու ցեղերէն և ժողովուրդներէն ու լեզուներէն, որոնք աթոռին առջև ու Գառնուկին առջև կեցեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած և ձեռքերնին արմաւենիներ բռնած. 10 – Եւ մեծաձայն կ'աղաղակէին՝ ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին։ 11 – Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երեցներուն և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին, ու իրենց երեսներուն վրայ աթոռին առջև ինկան ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին, 12 – Ըսելով, Ամէն. օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ 13 – Ու երեցներէն մէկը պատասխան տալով՝ ինծի ըսաւ, Ասոնք որ ճերմակ հանդերձներ հագած են՝ ո՞վ են, և ուրկէ՞ եկան։ 14 – Ես ալ ըսի անոր, Տէր իմ, դուն գիտես. ու ըսաւ ինծի, Ասոնք են մեծ նեղութենէն եկողները, որոնք իրենց հանդերձները լուացին, ու զանոնք Գառնուկին արիւնովը ճերմկցուցին. 15 – Անոր համար Աստուծոյ աթոռին առջև են, և իրեն կը ծառայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէջ. և աթոռին վրայ նստողը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ։ 16-Այսուհետև ոչ պիտի անօթենան ու ոչ ծարաւին, ոչ ալ արեւը կամ տապաքութիւն մը անոնց վրայ պիտի իյնայ. 17 – Վասն զի Գառնուկը որ աթոռին մէջ է, պիտի հովուէ զանոնք, ու կենդանի ջրաղբիւրներուն պիտի առաջնորդէ զանոնք. և Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն։

## Գլ. Ը

Ու երբ եօթներորդ կնիքը բացաւ, լռութիւն եղաւ երկինքը կէս ժամու չափ։

2 – Եւ տեսայ այն եօթը հրեշտակները, որոնք Աստուծոյ առջև կը կայնէին. ու անոնց եօթը փող տրուեցաւ։ 3 – Եւ ուրիշ հրեշտակ մը եկաւ ու զանոնի առջև կայնեցաւ, ու ոսկեղէն խնկանոց մը ունէր. և իրեն շատ խունկ տրուեցաւ, որպէս զի բոլոր սրբոց աղօթքներուն հետ ամէնուն առջև եղող ոսկի սեղանին վրայ մատուցանէ։ 4 – Եւ խունկերուն ծուխը սրբոց աղօթքներուն հետ հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջև ելաւ։ 5 – Ու հրեշտակը առաւ խնկանոցը ու զանիկա սեղանին կրակէն լեցուց, և ձգեց երկրի վրայ. ու ղաներ ձայներ և որոտումներ ու փայլակներ ու երկրաշարժ։ 6 – Եւ եօթը հրեշտակները, որոնք եօթը փողերը ունէին, պատրաստուեցան որ հնչեցնեն։

7 – Եւ առաջին հրեշտակը փողը հնչեցուց, ու եղաւ կարկտա ու կրակ արիւնով խառնուած, ու երկրի վրայ ձգուեցաւ, [ու երկրի երրորդ մասը այրեցաւ,] և ծառերուն երրորդ մասը այրեցաւ, ու ամէն կանաչ խոտ այրեցաւ։

8 – Ու երկրորդ հրեշտակը փողը հնչեցուց, և որպէս թէ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ ծովը ձգուեցաւ, ու ծովուն երրորդ մասը արիւն եղաւ. 9 – Եւ ծովուն մէջի շնչաւոր արարածներուն երրորդ մասը մեռաւ, ու նաւերուն երրորդ մասը կորսուեցաւ։

10 – Ու երրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու երկինքէն մեծ աստղ մը ինկաւ ջահերի պէս բորբոքած, և գետերուն ու ջուրի աղբիւրներուն երրորդ մասին վրայ ինկաւ։ 11 – Եւ այն աստղին անունը Օշինդր էր. ու ջուրերուն երրորդ մասը օշինդր եղաւ, և շատ մարդիկ ջուրերէն մեռան, քանզի դառն եղան։

12 – Եւ չորրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու արեւին երրորդ մասը և լուսնին երրորդ մասը ու աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ, այնպէս որ անոնց երրորդ մասը խաւարի, և օրուան երրորդ մասը լոյս չտայ, նոյնպէս ալ գիշերուանը։

13 – Եւ նայեցայ՝ ու երկինքի մէջ թռչող *հրեշտակի մը չոյն լսեցի, որ մեծ ձայնով կ'ըսէր, Վա՛յ, վա՛յ, վա՛յ երկրի վրայ բնակողներուն՝ այն մնացած փող ձայներուն համար, զորոնք երեք հրեշտակները պիտի հնչեցնեն։

## Գլ. Թ

Եւ հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու տեսայ որ երկինքէն աստղ

*Ոմանք, արծիւ

մը ինկաւ երկրի վրայ . և անդունդի դուռին բանալին անոր տրուեցաւ. 2 – Ու անդունդին դուռը բացաւ, ու այն գուբէն ծուխ կ'ելլէր մեծ հնոցի մը ծուխին պէս. ու խաւարեցաւ արեգը ու օդը դուռին ծուխէն։

3 – Եւ ծուխէն մարախներ կ'ելլէին երկրի վրայ , ու անոնց զօրութիւն տրուեցաւ երկրի կարիճներուն ունեցած զօրութեանը պէս. 4 – Եւ անոնց ըսուեցաւ որ չվնասեն երկրի խոտին , ոչ ալ կանանչեղէնի մը և ոչ ծառի մը, հապա միայն այն մարդոց , որոնք իրենց ճակատներուն վրայ Աստուծոյ կնիքը չունին ։ 5 – Եւ անոնց հրաման տրուեցաւ որ չսպաննեն զանոնք , հապա չարչարեն զանոնք հինգ ամիս . ու անոնց չարչարանքը կարիճի ծակի չարչարանքին պէս էր՝ երբ մարդը կը դարնէ ։ 6 – Եւ այն օրերը մարդիկ մահը պիտի փնտռեն ու պիտի չգտանեն. և պիտի ուզեն մեռնիլ , ու մահը անոնցմէ պիտի փախչի ։ 7 – Եւ մարախներուն նմանութիւնը՝ պատրաստուած ձիերու պէս , ու անոնց գլուխներուն վրայ *ոսկեղէն պսակներու պէս , և անոնց երեսները մարդոց երեսներու պէս էին. 8 – Ու անոնք մազեր ունէին կիներու մազերուն պէս, ու անոնց ակռաները առիւծներու ակռաներուն պէս էին։ 9-Եւ զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս. ու անոնց թևերուն ձայնը պատերազմի վազող շատ ձիեր լուռ կուգերու ձայնին պէս էր։ 10 – Եւ կարիճներու նման պոչեր ունէին, ու պոչերնուն վրայ խայթոց. և իշխանութիւն ունէին հինգ ամիս մարդոց վնասելու։ 11 – Եւ իրենց վրայ թագաւոր ունէին անդունդին հրեշտակը, որուն անունը Երբայեցերէն †Աբադոն , և Յոյն լեզուով կ'ըսուի ‡Ապողիոն։ 12-Մէկ վայը անցաւ. տակի եւս երկու վայեր ալ կուգան։

13 – Եւ վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու ձայն մը լսեցի Աստուծոյ առջև եղող ոսկի սեղանին չորս եղջիւրներէն, 14 – Որ կ'ըսէր վեցերորդ հրեշտակին որ փողը ունէր , Եփրատ մեծ գետին վրայ կապուած չորս հրեշտակները արձակէ ։ 15 – Եւ այն չորս հրեշտակները արձակուեցան, որ պատրաստուած էին ժամի ու օրուան և ամիսի ու տարիի համար, որպէս զի մարդոց երրորդ մասը մեռցնեն ։ 16 – Եւ ձիաւոր զօրքերուն համրանքը երկու բիւրք բիւրուց էր, ու լսեցի անոնց համրանքը։ 17 – Եւ տեսիլքին մէջ այսպէս տեսայ ձիերը, ու անոնց վրայ հեծնողները՝ որոնք ունէին հրեղէն ու յակինթեղէն և ծծմբեղէն զրահներ . և ձիերուն գլուխները առիւծներու գլուխներուն պէս էին , ու անոնց բերնէն կրակ ու ծուխ և ծծումբ կ'ելլէր։ 18-Այս երեք [հարուած]ներէն մարդոց երրորդ մասը մեռաւ, այսինքն կրակէն ու ծուխէն ու ծծումբէն, որոնք անոնց բերնէն կ'ելլէին։ 19-Վասն զի *անոնց զօրութիւնը բերաններնուն մէջ է ու պոչերնուն մէջ . քանզի անոնց պոչերը օձերու նման էին, ու գլուխներ ունէին որոնցմով կը վնասէին։ 20 – Եւ ուրիշ մարդիկ որոնք այս հարուածներէն չսպանուեցան, իրենց ձեռքերուն գործերէն չապաշխարեցին, որ երկրպագութիւն չընեն դեւերուն, ու ոսկիէ և արծաթէ ու պղնձէ և քարէ ու փայտէ չկռնուած կուռքերուն, որոնք ոչ կրնան տեսնել , ոչ ալ լսել ու ոչ քալել . 21 – Նաև չապաշխարեցին իրենց մարդասպանութիւններէն , ոչ ալ իրենց կախարդութիւններէն , ոչ ալ իրենց պոռնկութիւններէն և ոչ իրենց գողութիւններէն։

*Ոմանք, ոսկիի նման
†Ա. յունարէն, կորուստիչ
‡Ա. յունարէն, կորստիչ

## ԳԼ. Ժ

Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը որ երկինքէն կ'իջնէր, ու ամպ հագած էր և իր գլխուն վրայ ծիածան կար. ու իր երեսը արեւի պէս էր , և իր ոտքերը՝ կրակի սիւներու պէս . 2 – Եւ իր ձեռքը գրքոյկ մը ունէր բացուած, ու իր աջ ոտքը ծովուն վրայ դրաւ, և ձախը՝ ցամաքին վրայ. 3 – Եւ մեծ ձայնով աղաղակեց առիւծի մը գոչելուն պէս. ու երբ աղաղակեց , եօթը որոտումները իրենց ձայներովը խօսեցան ։ 4 – Ու երբ եօթը որոտումները †խօսեցան, պիտի գրէի. ու երկինքէն ձայն մը լսեցի որ ‡ինծի կ'ըսէր , Կնքէ այն բաները որ եօթը որոտումները խօսեցան , ու զանոնք մի գրեր։ 5 – Եւ այն հրեշտակը որ ծովուն վրայ ու ցամաքին վրայ կայնած տեսայ , իր [աջ] ձեռքը երկինքը վերցուց. 6 – Ու երդում ըրաւ յաւիտեանս յաւիտենից Կենդանի եղողին վրայ , որ ստեղծեց երկինքը ու ինչ որ անոր մէջ է , ու երկիրը և ինչ որ անոր մէջ է, և ծովը ու ինչ որ անոր մէջ է, թէ ա՛լ ժամանակ պիտի չըլլայ . 7 – Հապա եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը՝ երբ փողը հնչեցընէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի , ինչպէս իր ծառաներուն , մարգարէներուն, ուսուցաւ տուաւ ։

8 – Եւ այն ձայնը որ երկինքէն լսեցի, նորէն խօսեցաւ ինծի ու ըսաւ , Գնա ու այն բաց գրքոյկը՝ որ ծովուն ու ցամաքին վրայ կայնողը հրեշտակին ձեռքն է։ 9 – Ես ալ հրեշտակին գացի ու ըսի անոր, Տուր ինծի այդ գրքոյկը. ու ըսաւ ինծի, Առ ու կեր . և քու փորիդ մէջ դառնութիւն պիտի պատճառէ, բայց բերնիդ մէջ մեղրի պէս անուշ պիտի ըլլայ։ 10 – Եւ գրքոյկը հրեշտակին ձեռքէն առի ու կերայ զանիկա . և իմ բերնիս մէջ մեղրի պէս անուշ էր, և ուտելէս ետքը փորիս մէջ դառնութիւն եղաւ ։ 11 – Ու ըսաւ ինծի, Պէտք է որ դուն նորէն մարգարէութիւն ընես շատ ժողովուրդներու և ազգերու ու լեզուներու և թագաւորներու *վրայով ։

## ԳԼ. ԺԱ

Եւ ինծի եղէգ մը տրուեցաւ գաւազանի պէս, և հրեշտակը կայներ էր ու կ'ըսէր, Ելիր ու չափէ Աստուծոյ տաճարը ու սեղանը , և անոր մէջ երկրպագութիւն ընողները։ 2 – Ու գաւիթը որ տաճարին դուրսն է , ձգէ և մի չափեր, վասն զի անիկա հեթանոսներուն տրուած է , ու անոնք սուրբ քաղաքը պիտի կոխկռտեն քառասունուերկու ամիս։ 3 – Եւ իմ երկու վկաներուս զօրութիւն պիտի տամ, և անոնք քսան հարիւր վաթսուն օր մարգարէութիւն պիտի ընեն։ 4 – Անոնք այն երկու ձիթենիները ու երկու աշտանակներն են , որոնք երկրի Տէրոջը առջև կը կենան ։

*Կամ, առջև

5 – Եւ եթէ մէկը ուզէ անոնց վնաս ընել , անոնց բերաններէն կրակ կ'ելլէ, ու իրենց թշնամիները կ'ուտէ. և եթէ մէկը ուզէ անոնց վնաս ընել , պէտք է որ անիկա այսպէս սպանուի։ 6-Անոնք իշխանութիւն ունին երկինքը գոցելու, որպէս զի իրենց մարգարէութեան օրերը անձրեւ չգայ , ու ջուրերուն վրայ իշխանութիւն ունին զանոնք արիւն գարձնելու, և ամէն իրաւ պատուհասներով երկիրը զարնելու՝ քանի անգամ որ ուզեն։ 7 – Ու երբ իրենց վկայութիւնը կատարեն, այն գազանը անդունդէն կելլող գազանը անոնց հետ պատերազմ՝ պիտի ընէ, և անոնց պիտի յաղթէ ու պիտի սպանէ զանոնք ։ 8 – Եւ անոնց դիերը եղէ՞ պէտ ճան այն մեծ քաղաքին հրապարակին մէջ, որ հոգևորապես կ'ըսուի Սոդոմ ու Եգիպտոս, ուր *մեր Տէրն ալ խաչուեցաւ ։ 9 – Եւ ժողովուրդներէն ու ցեղերէն և լեզուներէն ու ազգերէն պիտի տեսնեն անոնց դիերը երեք ու կէս օր. ու թոյլ պիտի չտան անոնց դիերը գերեզմաններու մէջ դնուին ։ 10 – Եւ անոնք որ երկրի վրայ կը բնակին , ուրախ պիտի ըլլան ու ինդան անոնց վրայ , մինչև անգամ իրարու ընծաներ պիտի ղրկեն. վասն զի այս երկու մարգարէները երկրի բնակիչները չարչարեցին։

11 – Եւ երեք ու կէս օրէն ետև Աստուծմէ կենդանութեան հոգի մտաւ անոնց մէջ, ու իրենց ոտքերուն վրայ կայնեցան . և զանոնք տեսնողներուն վրայ մեծ վախ ինկաւ։ 12 – Ու երկինքէն մեծ ձայն մը †լսեցին , որ կ'ըսէր անոնց, Վեր ելէք, հոս եկէ՛ք. և անոնք ամպով երկինք վերացան , ու անոնց թշնամիները զանոնք տեսան ։ 13 – Եւ նոյն ժամուն մեծ երկրաշարժ մը եղաւ, ու քաղաքին տասներորդ մասը կործանեցաւ, և այն երկրաշարժէն եօթը հազար մարդիկ մեռան , ու մնացածները վախով լեցուեցան ու փառք տուին երկնից Աստուծոյն։ 14-Երկրորդ վայը անցաւ. ահա երրորդ վայը շուտով կուգայ։

15 – Ու եօթներորդ հրեշտակը փողը հնչեցուց. ու երկինքի մէջ մեծ ձայներ եղան որ կ'ըսէին, Աշխարհի թագաւորութիւնները մեր Տէրոջը ու իր Օծեալին եղան, և ինք պիտի թագա-

*Ոմանք, իրենց †Ոմանք, լսեցի

ասրբ յաւիտեանս յաւիտենից : 16 – Եւ քառնըչորս երէցները որոնք իրենց աթոռներուն վրայ նստած էին Աստուծոյ առջեւ, իրենց երեսներուն վրայ ինկան և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով, 17 – Տէզի գոհութիւն կը մատուցանենք, Ամենակալ Տէր Աստուած, որ ես և որ էիր*, որ քու մեծ զօրութիւնդ առիր ու թագաւորեցիր: 18 – Եւ ազգերը բարկացան . ու քու բարկութիւնդ եկաւ, և մեռելներուն ժամանակը՝ որպէս զի դատուին , ու վարձք տաս քու ծառաներուդ , մարգարէներուն , և սուրբերուն ու քու անունդ վախցողներուն , պզտիկներուն ու մեծերուն, և երկրի ապականիչները ապականես:

19 – Ու երկինքի մէջ Աստուծոյ տաճարը բացուեցաւ , և †անոր ուխտին տապանակը իր տաճարին մէջ երեւեցաւ. ու եղան փայլակներ ու ձայներ և որոտումներ ու երկրաշարժ և խոշոր կարկուտ :

## ԳԼ. ԺԲ

Ու երկինքի մէջ մեծ նշան մը երեւեցաւ. կին մը արեւը իր վրայ ուսած, ու լուսինը իր ոտքերուն տակ. և իր գլխուն վրայ տասուերկու աստղէ պսակ մը . 2 – Եւ յղի էր, ու երկունքի մէջ ըլլալով և ծնանելու համար շատ նեղութիւն քաշելով՝ կը պոռար:

3 – Ու երկինքի մէջ ուրիշ նշան մը երեւեցաւ, և ահա մեծ շառագոյն վիշապ մը, որ եօթը գլուխ ու տասը եղջիւր ունէր , և իր գլուխներուն վրայ եօթը թագ: 4 – Եւ անոր պոչը երկինքի աստղերուն երրորդ մասը կը քաշէր, ու զանոնք երկրի վրայ ձգեց. և վիշապը կեցեր էր այն կնոջ առջեւ որ ծնանելու վրայ էր, որպէս զի երբ ծնանի, անոր զաւակը կլլէ : 5 – Ու †ինք արու զաւակ մը ծնաւ , որ երկաթէ գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը. և անոր զաւակը յափշտակուեցաւ Աստուծոյ քով ու անոր աթոռին քով : 6 – Եւ կինը անապատը փախաւ, ուր անոր տեղ պատրաստուած էր Աստուծմէ, որպէս զի հոն կերակրուի հազար երկու հարիւր ու վաթսուն օր:

7 – Ու երկինքի մէջ պատերազմ եղաւ. Միքայէլ ու իր հրեշտակները վիշապին հետ պատերազմեցան . վիշապն ալ իր հրեշտակներովը պատերազմեցաւ. 8-Ու չկրցան դէմ կենալ, ու երկինքի մէջ ա՛լ տեղ չգտնուեցաւ անոնց: 9 – Եւ վար ձգուեցաւ մեծ վիշապը, այն առաջնեան օձը որ Խաւարկոս ու Սատանայ կ'ըսուի , որ բոլոր աշխարհն մոլորեցուց . ու իր հրեշտակները իրեն հետ վար ձգուեցան երկրի վրայ: 10 – Եւ մեծ ձայն մը լսեցի երկինքի մէջ՝ որ կ'ըսէր , Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւնը ու զօրութիւնը և թագաւորութիւնը, ու անոր Օծեալին իշխանութիւնը. վասն զի մեր եղբայրներուն դէմ՝ չար խօսողը վար ձգուեցաւ, որ անոնց դէմ՝ գիշեր ցորեկ ու գիշեր: 11 – Եւ անոնք անոր յաղթեցին Գառնուկին արիւնովը , ու իրենց վկայութեանը խօսքովը. և իրենց կեանքը չսիրեցին մինչև ի մահ : 12 – Ասոր համար ուրախացէք , ով երկինք ու անոր մէջ բնակողներ. վա՛յ երկրի ու ծովու*, վասն զի Բանսարկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ գիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ:

13 – Ու երբ վիշապը տեսաւ որ ինք երկրի վրայ ձգուեցաւ , արու զաւակ ծնանող կնոջ հետևէն լինկաւ: 14 – Եւ այն կնոջ մեծ արծիւի երկու թեւեր արուեցան, որպէս զի անապատ իր տեղը թռչի, ուր պիտի կերակրուէր ժամանակ ու ժամանակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն: 15-Եւ օձը իր բերնէն գետի պէս ջուր վազցուց կնոջ ետևէն, որպէս զի զանիկա հեղեղով ընկղմէ: 16 – Ու երկիր օգնեց կնոջը . ու երկիր իր բերանը բացաւ և կլլեց այն գետը զոր վիշապը իր բերնէն վազցուց: 17-Ու վիշապը բարկացաւ կնոջ դէմ , և գնաց պատերազմելու անոր սերմէ զաւակներուն հետ , որոնք Աստուծոյ պատուիրանները կը պահէին, ու †Յիսուսի վկայութիւնը ունէին:

18 – Եւ †կայնեցաւ ծովուն աւազին վրայ:

*Ոմանք՝ Տ՛ա-ե-լ-ցնէն, բնակիչներուդ
†Ոմանք, Յիսուսա Քրիստոսի

## ԳԼ. ԺԳ

Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր, և ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր. և անոր եղջիւրներուն վրայ տասը թագ , ու անոր գլուխներուն վրայ հայհոյութեան անուններ կային:

2 – Եւ այն գազանը զոր տեսայ, ընձուղնման էր, ու իր ոտքերը առջու †պէս, և իր բերանը առիւծի բերնի պէս. ու վիշապը անոր տուաւ իր զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխանութիւն: 3 – Եւ անոր գլուխներէն մէկը մինչև մահու չափ վիրաւորուածի պէս *էր. ու անոր մահուան վէրքը առողջացաւ. և բոլոր երկիրը գազանին հետևէն զարմացաւ : 4 – Եւ երկրպագութիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանութիւնը տուաւ , ու երկրպագութիւն ըրին գազանին՝ ըսելով , Ո՞վ է այդ գազանին նման. և ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ ընել : 5 – Եւ անոր մեծ բաներ ու հայհոյութիւններ խօսող բերան տրուեցաւ . և քառասունուերկու ամիս անոր իշխանութիւն տրուեցաւ էր ‡ոտք ընելու : 6 – Ու իր բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ բացաւ, անոր անունը ու անոր խորանը ու երկինքը բնակողները հայհոյելու : 7 – Եւ անոր էվանկէլիոն տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմ ընելու ու անոնց յաղթելու . և անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու [և ժողովուրդներու] ու լեզուներու և ազգերու վրայ: 8 – Եւ անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր մորթուած Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած չեն : 9 – Ով որ ականջ ունի, թող լսէ : 10 – Ով որ գերութեան քշէ, ինք գերի պիտի երթայ. ով որ սրով սպաննէ , պէտք է որ ինք սրով սպաննուի . հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը:

11 – Եւ ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէ կ'ելլէր, ու գառնուկի նման երկու եղջիւր ունէր, ու կը խօսէր վիշապի պէս : 12 – Եւ առաջին գազանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւ, ու երկիրը †և անոր բնակիչները կը ստիպէր որ երկրպագութիւն ընեն առաջին գազանին՝ որուն մահուան վէրքը առողջացաւ : 13 – Եւ մեծ նշաններ կ'ընէր , ու մինչև անգամ երկինքէն կրակ կ'իջեցնէր երկրի վրայ մարդոց առջեւ : 14 – Ու երկրի վրայ բնակողները կը մոլորեցներ այն նշաններով , որ իր ձեռքը տրուած էր գազանին առջեւ ընելու. ու երկրի բնակիչներուն կ'ըսէր որ պատկեր շինեն այն գազանին, որ սրով վիրաւորուած էր ու առողջացաւ: 15 – Եւ էվանկէլիոն տրուեցաւ անոր , որ գազանին պատկերին հոգի տայ , որպէս զի գազանին պատկերը խօսի , և ով որ գազանին պատկերին երկրպագութիւն չընէ, զանիկա սպաննել տայ: 16 – Եւ կը տեսնէր ամէնը, այսինքն պզտիկները ու մեծերը և հարուստները ու աղքատները և ազատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակատին վրայ դրոշմ ընդունին. 17 – Եւ որ մէ՛կը չկրնայ գնել կամ ծախել , բայց միայն ան՝ որ ունի գրոշմը կամ գազանին անունը կամ անոր անուանը թիւը: 18 – Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի, թող հաշուէ գազանին թիւը. քանզի մարդու մը թիւ է, ու անոր թիւը վեց հարիւր վաթսունըվեց է:

## ԳԼ. ԺԴ

Եւ տեսայ, և ահա Գառնուկը կայներ էր Սիոն լեռանը վրայ , ու անոր հետ հարիւր քառասունչորս հազարը, որոնք ունէին [անոր անունը և] անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ գրուած : 2 – Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ու մեծ որոտումի ձայնի մը պէս, ու լսած ձայնս քնարահարներուն իրենց քնարները զարնելու նմանէր : 3 – Եւ *նոր երգ կ'երգէին աթոռին առջեւ ու չորս կենդանիներուն ու երէցներուն առջեւ . և մէ՛կը չէր կրնար այն երգը սորվիլ բայ ի այն հարիւր քառասունչորս հազարէն , որոնք երկրէ գնուած էին: 4 – Ասոնք անոնք են որ կիներու հետ չաղտոտուեցան , քանզի կոյս են . ասոնք Գառնուկին հետևէն կ'երթան՝ ուր որ ան երթայ . ասոնք մարդոց մէջէն գնուեցան Աստուծոյ ու Գառնուկին երախայրի ըլլալու .

*Ոմանք, տեսայ †Ոմանք, և ըսաւ

*Ոմանք, որպէս թէ նոր

5 – Եւ անոնց բերանը սուտ չգտնուեցաւ, վասն զի անբիծ են*։

6 – Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ, որ կը թռչէր երկինքի մէջ, և ունէր յաւիտենական աւետարան՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որոնք երկրի վրայ կը բնակին. 7 – Եւ մեծ ձայնով կ'ըսէր, Աստուծմէ վախցէք ու փառք տուէք անոր, վասն զի անոր դատաստանին ժամը եկաւ. ու երկրպագութիւն ըրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու ջուրերուն աղբիւրները։

8 – Եւ անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ ու ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ †Բաբելոն, վասն զի բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պոռնկութեան գինիէն։ 9 – Եւ անոնց ետեւէն ‡երրորդ հրեշտակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ, Ով որ գայանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ իր ձեռքին վրայ կ'ընդունի, 10 – Անիկա Աստուծոյ սրամոլութեան գինիէն պիտի խմէ, որ անխառն լեցուած է անոր բարկութեանը գաւաթին մէջ, և կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւ ու Գառնուկին առջեւ։ 11 – Եւ անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից. և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չունին անոնք՝ որ գայանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը գրոշմի կ'ընդունին։ 12 – Հոս է սուրբերուն համբերութիւնը, ||որոնք Աստուծոյ պատուիրանքները ու Յիսուսի հաւատքը կը պահեն։ 13 – Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ որ §կ'ըսէր. Գրէ. Աչառհեւաւ երանելի են այն մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն. այս, կ'ըսէ Հոգին, որ իրենց աշխատութիւններէն հանգչին. ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան։

14 – Եւ տեսայ, և ահա ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման. և իր գլխուն ոսկիէ պսակ մը՝ ու իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր։

15 – Եւ տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելլէր, որ ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'աղաղակէր ու կ'ըսէր, Երկնցուր քու մանգաղդ ու հնձէ. վասն զի հնձելու ժամանակը *եկաւ, վասն զի երկրի հունձքը հասունցած է։ 16 – Եւ ան որ ամպին վրայ կը նստէր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկիրը հնձուեցաւ։

17-Ու երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, և ասիկա ալ սուր մանգաղ մը ունէր։ 18 – Ու սեղանէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, որ կրակի վրայ իշխանութիւն ունէր, ու մեծ ձայնով կանչեց անոր՝ որ սուր մանգաղը ունէր, ու ըսաւ, Երկնցուր քու սուր մանգաղդ, ու երկրի ողկոյզները կթէ, վասն զի անոր խաղողները հասունցած են։ 19 – Եւ այն հրեշտակը իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկրի այգիին խաղողը կթեց, ու Աստուծոյ բարկութեան մեծ հնձանին մէջ ձգեց։ 20-Եւ հնձանը քաղաքին դուրսը կոխուեցաւ. ու հնձանէն արիւն կ'ելլէր, որ մինչև ձիերուն սանձերը — հազար վեց հարիւր ասպարէզ կը հասնէր։

## ԳԼ. ԺԵ

Եւ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ երկինքի մէջ, եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը վերջին հարուածները ունէին, որովհետև անոնցմով կը կատարուէր Աստուծոյ բարկութիւնը։ 2 – Ու տեսայ որպէս թէ ապակեղէն ծով մը կրակով խառնուած. և անոնք որ յաղթեցին գազանին ու անոր պատկերին և անոր անուան թիւին, պապակեղէն ծովուն վրայ կայներ էին, ու Աստուծոյ քնարները ունէին. 3 – Եւ Աստուծոյ ծառային, Մովսէսի, երգը կ'երգէին, ու Գառնուկին երգը՝ ըսելով, Մեծ ու զարմանալի են քու գործերդ, ով Տէր Աստուած Ամենակալ. արդար ու ճշմարիտ են քու ճամբաներդ, ով թագաւոր †սրբոց։ 4 – Տէր, ո՞վ պիտի չվախնայ քեզմէ,

*Ոմանք՝ Լաոդիկիան, Աստուծոյ ամենաւին առջեւ
†Ոմանք, Բաբելոն քաղաքը
‡Ոմանք, ուրիշ
||Ոմանք, Հոս են անոնք որ
§Ոմանք, Լինծի կ'ըսէը

*Ոմանք, քեզի եկաւ
†Ոմանք, և անոր դրոշմին և
‡Ոմանք, ազգաց



ու քու անունդ չփառաւորէ, վասն զի դուն միայն սուրբ ես. քանզի բոլոր ազգերը պիտի գան ու քու առջեւդ երկրպագութիւն պիտի ընեն, վասն զի քու արդար դատաստանները յայտնուեցան։

5 – Եւ ասկէ ետեւ տեսայ, ու բացուեցաւ վկայութեան խորանին տաճարը որ երկինքն էր. 6-Ու եօթը հարուածները ունեցող եօթը հրեշտակները մաքուր ու պայծառ կտաւ հագած՝ և իրենց կուրծքերուն վրայօրէն ոսկեղէն գօտի կապած՝ տաճարէն ելան։ 7 – Եւ չորս կենդանիներէն մէկը եօթը հրեշտակներուն եօթը ոսկեղէն սկաւառակներ տուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանի եղող Աստուծոյ բարկութիւնովը լեցուն։ 8 – Եւ տաճարը Աստուծոյ փառքէն ու անոր զօրութենէն ծուխով լեցուեցաւ. ու մէկը չէր կրնար տաճարը մտնել, մինչև կատարուին եօթը հրեշտակներուն եօթը հարուածները։

## ԳԼ. ԺԶ

Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ եօթը հրեշտակներուն կ'ըսէր, Գացէք Աստուծոյ բարկութեան [եօթը] սկաւառակները երկրի վրայ թափեցէք։

2 – Եւ առաջին հրեշտակը գնաց ու իր սկաւառակը երկրի վրայ թափեց. ու չարաչար պալարներ եղան այն մարդոց վրայ որոնք գազանին դրոշմը ունէին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէին։

3 – Ու երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծովուն վրայ թափեց, ու ըստ բերաբար մեռած մարդոյ արիւն դարձաւ, և ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան։

4 – Ու երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետերուն ու ջուրերու աղբիւրներուն վրայ թափեց, ու անոնք արիւն դարձան։ 5 – Եւ ջուրերուն հրեշտակէն լսեցի՝ որ կ'ըսէր, Արդար ես դուն, *որ ես և որ էիր, և սուրբ ես, որ այսպիսի դատաստաններ ըրիր. 6-Վասն զի անոնք սուրբերուն ու մարգարէներուն արիւնը թափեցին. և դուն անոնց արիւն խմել տուիր, քանզի արժանի են։

*Ոմանք, ով Տէր, որ

7-Եւ սեղանէն *լսեցի՝ որ կ'ըսէր, Այո, Ամենակալ Տէր Աստուած, քու դատաստանդ արդար ու ճշմարիտ են։

8 – Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակը արեւին վրայ թափեց. 9 – Ու անոր †բռնութեան որուհետև որ խորշակահոս ընէ մարդիկը կրակով. և աստիճակ տաքէն խորշակահոս եղան մարդիկ, և հայհոյեցին Աստուծոյ անունը, որ այս հարուածներուն վրայ իշխանութիւն ունի. ու չապաշխարեցին որ անոր փառք տան։

10 – Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակը գազանին աթոռին վրայ թափեց, ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ. և ցաւէն լեզուները կը ծամէին. 11 – Ու երկինքի Աստուածը հայհոյեցին իրենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճառաւ. ու իրենց գործերէն չապաշխարեցին։

12 – Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակը մեծ գետին, Եփրատ, վրայ թափեց, ու անոր ջուրերը ցամքեցան, որպէս զի արեւելքի թագաւորներուն ճամբան պատրաստուի։ 13 – Եւ տեսայ ‡ երիշապին բերնէն և գազանին բերնէն և սուտ մարգարէին բերնէն երեք պղծած ոգիները †‡եւեէն գորտերու նման, 14 – Վասն զի անոնք դեւերու ոգիներ են՝ որ նշաններ կ'ընեն, †ու ըսոր աշխարհի թագաւորներուն կ'երթան, որպէս զի պատերազմի համար Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուանը պատերազմին համար ժողվեն. 15 – (Ահա գողի պէս կու գամ. երանի՛ անոր որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պահէ, որպէս զի մերկ չպարտի ու իր ամօթը երևնայ.) 16 – Եւ զանոնք տեղ մը ժողվեցին, որ Եբրայեցերէն Արմագեդոն կ'ըսուի։

17 – Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակը օդին վրայ թափեց, ու երկինքի տաճարէն, աթոռէն, մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով, Եղաւ։ 18 – Եւ §փայլակներ ու ձայներ և որոտումներ եղան. և մեծ երկրաշարժ մը եղաւ, այնպես որ մարդոց երկրի վրայ ըլլալէն ի վեր այնպիսի մեծ երկրաշարժ մը եղած չէր։ 19 – Եւ մեծ քաղաքը

*Ոմանք, ուրիշ մը լսեցի
†Ոմանք, ու երկրի և
‡Ոմանք, ձայներ և որոտումներ ու փայլակներ

երէք մաս եղաւ, ու ապդերուն քաղաքները կործանեցան, և մեծ Բաբելոնը Աստուծոյ առջև յիշուեցաւ, որպէս զի իր սաստիկ բարկութեան գինւոյն գաւաթը անոր տայ։ 20 – Եւ ամէն կղզի փախաւ, ու լեռները չգտնուեցան։ 21 – Եւ խոշոր կարկուտ գրեթէ տաղանդի մը կշիռքով երկինքէն կ'իջնէր մարդոց վրայ. ու մարդիկ հայհոյեցին զԱստուած կարկուտին հարուածէն համար, վասն զի խիստ մեծ էր այն հարուածը։

## ԳԼ. ԺԷ

Եւ եօթը ակաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը եկաւ, ու ինծի հետ խօսեցաւ՝ ըսելով, Եկուր, ու քեզի ցուցնեմ այն մեծ պոռնիկին դատաստանը, որ շատ ջուրերու վրայ կը նստի։ 2 – Որու հետ երկրի թագաւորները պոռնկեցան, ու երկրի բնակիչները անոր պոռնկութեան գինովը գինովցան։ 3 – Եւ զիս ա՛ռ՝ անապատը տարաւ հոգիով. ու տեսայ կին մը՝ որ կարմիր գազանի մը վրայ նստեր էր. և այն ֆազանը լեցուն էր հայհոյութեան անուններով, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունէր։ 4-Եւ կինը ծիրանի ու կարմիր հագած էր, և ոսկիով ու պատուական քարերով և մարգարիտներով, և իր ձեռքը ոսկիէ գաւաթ մը ունէր պղծութիւններով ու իր պոռնկութեանը անմաքրութիւններով լեցուն. 5 – Եւ անոր ճակատին վրայ անուն մը գրուած էր. Խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկներուն ու երկրի պղծութիւններուն մայրը։ 6-Եւ տեսայ այն կինը որ սուրբերուն արիւնովը ու Յիսուսի վկաներուն արիւնովը գինովցած էր. ու երբ տեսայ զանիկա, մեծ զարմանքով զարմացայ։ 7 – Եւ հրեշտակը ինծի ըսաւ, Ինչո՞ւ զարմացար. ես քեզի ըսեմ՝ այն կնոջ խորհուրդը, ու այն գազանին՝ որ զանիկա իր վրայ կը կրէ, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունի։ 8 – Այն գազանը զոր տեսար, կար ու չկայ, և անդունդէն ելլելու ու կորստեան երթալու վրայ է. ու երկրի վրայ բնակողները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր կենաց գիրքին մէջ գրուած չեն, պիտի զարմանան երբ տեսնեն այն գազանը թէ կար ու չկայ, *թէև կայ։ 9 – Հոս պէտք է իմաստութիւն ունեցող միտք մը. այն եօթը գլուխը եօթը լեռներ են, ուր կինը անոնց վրայ կը նստի. և եօթը թագաւորներ են. 10 – Հինգը ինկած են, մէկը կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, ու երբ գայ՝ քիչ ատեն պիտի մնայ։ 11 – Եւ այն գազանը որ կար ու չկայ, անիկա ալ ութերորդ է, ու եօթնէն է, ու դէպ ի կորուստ կ'երթայ։ 12 – Եւ տասը եղջիւրը զորս տեսար՝ տասը թագաւորներ են, որոնք դեռ թագաւորութիւն առած չեն, հապա գազանին հետ մէկ ժամու չափ թագաւորներու պէս իշխանութիւն կ'առնեն։ 13 – Անոնք մէկ կամք ունին, ու իրենց զօրութիւնը և իշխանութիւնը գազանին կու տան։ 14 – Անոնք Գառնուկին հետ պիտի պատերազմին. և Գառնուկը անոնց պիտի յաղթէ, քանզի անիկա տէրերուն Տէրն է ու թագաւորներուն Թագաւորը. և անոր հետ եղողները կանչուած ու ընտրուած և հաւատարիմ՝ են։ 15 – Ու ըսաւ ինծի, Այն ջուրերը զորոնք տեսար, որոնց վրայ պոռնիկը նստեր էր, ժողովուրդներ են ու բազմութիւններ և ազգեր ու լեզուներ։ 16 – Եւ տասը եղջիւրները զորոնք գազանին վրայ տեսար, անոնք պիտի ատեն պոռնիկը, և զանիկա մերկ ու մերկ պիտի ընեն, և անոր մսերինը պիտի ուտեն, ու զանիկա կրակով պիտի այրեն։ 17 – Վասն զի Աստուած անոնց սրտին մէջ դրաւ որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ընեն, և իրենց թագաւորութիւնը գազանին տան, մինչև Աստուծոյ խօսքերը կատարուին։ 18 – Եւ կինը զոր տեսար, այն մեծ քաղաքն է, որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ։

## ԳԼ. ԺԸ

Եւ ասկէ ետքը [ուրիշ] հրեշտակ մը տեսայ որ երկինքէն կ'իջնէր, և մեծ իշխանութիւն ունէր, ու երկիրը անոր փառքէն լուսաւորուեցաւ։ 2-Եւ †զօրաւոր ձայնով աղաղակեց՝ ըսելով, Ինկաւ, ինկաւ մեծ Բաբելոն, և դեւերու բնակարան եղաւ, ու բոլոր պիղծ ոգիներու որջ եղաւ, ու բոլոր պիղծ ու ատելի թռչուններու վանդակ. 3-Վասն զի անոր կատաղի պոռնկութեանը գինովեցան բոլոր ազգերը, ու երկրի թագաւորները անոր հետ պոռնկեցան, և երկրի վաճառականները անոր չափազանց զեղխութենէն հարստացան։ 4 – Ու երկինքէն ուրիշ ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Ելէք ասոր մէջէն, իմ ժողովուրդս, որպէս զի ասոր մեղքերուն հաղորդ չըլլաք, ու ասոր հարուածներէն ըստէր չառնէք. 5-Վասն զի ասոր մեղքերը մինչև երկինք հասան կցուեցան. ու Աստուած ասոր անիրաւութիւնները յիշեց։ 6 – Հատուցէք ասոր՝ ինչպէս ինք *տուաւ ձեզ. ու իր գործերուն համեմատ կրկնապատիկ փոխարինեցէք ասոր. այն գաւաթը զոր ինք լեցուց՝ կրկնապատիկ լեցուցէք իրեն։ 7 – Որչափ որ փառաւորեց զինք և զեղխութեամբ ապրեցաւ, այնչափ ալ տանջանք և սուգ հատուցէք անոր. վասն զի իր սրտին մէջ կ'ըսէ թէ Ես թագուհի կը նստիմ՝, ու որբևայրի չեմ, ու բնաւ սուգ պիտի չտեսնեմ։ 8 – Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան ասոր հարուածները, մահ ու սուգ և սով, ու կրակով պիտի այրի. վասն զի հզօր է Տէր Աստուած որ զանիկա դատեց։ 9 – Ու երկրի թագաւորները, որ ասոր հետ պոռնկեցան ու հեշտացան, պիտի լան ու կոծեն ասոր վրայ երբ ասոր հրկիզութեանը ծուխը տեսնեն. 10 – Եւ ասոր տանջանքին վախէն հեռուն պիտի կայնին ու ըսեն, Վա՛յ, վա՛յ †եղիր, մեծ Բաբելոն քաղաք, հզօր քաղաք, որ մէկ ժամու մէջ եկաւ քու դատաստանդ։ 11 – Ու երկրի վաճառականները պիտի ողբան ու սուգ ընեն անոր վրայ. վասն զի ալ մէ՛կը ծախու չառներ անոնց վաճառքը։ 12 – Ոսկիի, ու արծաթի, և պատուական քարերու, ու մարգարիտներու, և բեհեզի, ու ծիրանիի, և մետաքսի, ու որդան կարմիրի ու ճաճանչը, և ամէն խունկի փայտերը, ու ամէն փղոսկրեայ սամոնները, և ամէն պատուական փայտէ ու պղնձէ և երկաթէ ու մարմարիոնէ սամոնները, 13 – Եւ կինամոնը, [ու սամոնը] և խունկերը, ու անուշահոտ իւղը, ու կնդրուկը, և գինին, ու ձէթը, և նուշիջը, ու ցորենը, և արջառները, ու ոչխարները, և ձիերը, ու

*Որ՝ն+, և մեռ է

†Որ՝ն+, զօրութեամբ՝ մեծ



կառքերը, և մարմինները ու մարդոց հոգիները։ 14 – Եւ քու հոգիիդ ցանկացած պտուղները քեզմէ գացին, ու բոլոր շքեղ ու փայլուն բաները քեզմէ կորսուեցան, և ա՛լ բնաւ պիտի չգտնես զանոնք։ 15 – Այս բաներուն վաճառականները, որոնք անկէ հարստացած էին, հեռուն պիտի կայնին անոր տանջանքին վախէն՝ լալով ու սուգ ընելով, 16 – Ու պիտի ըսեն, Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք, որ բեհեզ ու ծիրանի և որդան կարմիր հագած էիր, ու ոսկիով և պատուական քարերով ու մարգարիտներով զարդարուած էիր. 17 – Վասն զի այնքան հարստութիւնը մէկ ժամու մէջ փճացաւ։ Ու ամէն նաւավարները, և այն ամէնը որ նաւով տեղ տեղ կ'երթան, ու նաւաստիները և որոնք որ ծովու մէջ կը բնակին, հեռուն կայնեցան. 18 – Եւ տեսնելով անոր հրկիզութեան ծուխը՝ կ'աղաղակէին ըսելով, Ո՞վ նման է այս մեծ քաղաքին. 19 – Ու իրենց գլուխներուն վրայ հող ցանեցին, և լալով ու սուգ ընելով՝ կ'աղաղակէին՝ ըսելով, Վա՛յ, վա՛յ այն մեծ քաղաքին, որուն մէջ իր պատուականութենէն հարստացան ամէնը որոնք նաւեր ունէին ծովուն վրայ. վասն զի մէկ ժամու մէջ ամայացաւ։ 20 – Ուրախացէք անոր վրայ, երկինք ու սուրբ առաքեալներ և մարգարէներ, որ Աստուած ձեր վրէժը անկէ առաւ։

21 – Եւ զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ աղօրիքի մեծ †քէի նման, ու ծովը ձգեց՝ ըսելով, Այսպէս ուժով վար պիտի ձգուի Բաբելոն մեծ քաղաքը, ու ա՛լ պիտի չգտնուի։ 22 – Եւ քնարահարներուն ու երաժիշտներուն և սրնգահարներուն ու փողահարներուն ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. և արհեստի վարպետ մը ա՛լ պիտի չգտնուի քու մէջդ. ու աղօրիքին ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. 23 – Եւ ճրագին լոյսը ա՛լ պիտի չերևնայ քու մէջդ. ու փեսային ձայնը և հարսին ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. քանզի քու վաճառականներդ երկրի մեծամեծներն էին. վասն զի քու կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորեցան։ 24 – Եւ մարգարէներուն ու սուրբերուն ու երկրի վրայ բոլոր սպանուածներուն արիւնը անոր մէջ գտնուեցաւ։

*Որ՝ն+, ձեզի հատուց

## ԳԼ. ԺԹ

ԵՒ անկէ եաքը շատ բազմութեան մեծ ձայն մը լսեցի երկինքէ՝ ըսելով , Ալէլուիա . փրկութիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր *Աստուծոյն։ 2 – Վասն որ ճշմարիտ ու արդար են անոր դատաստանները, քանզի դատեց այն մեծ պոռնիկը, որ իր պոռնկութիւնովը երկիրը ապականեց , ու իր ծառաներուն արիւնը վրէժ անոր ձեռքէն պահանջեց։ 3 – Եւ կրկին անգամ ըսին, Ալէլուիա . ու անոր ծուխը յաւիտեանս յաւիտենից կ'ելլէ ։ 4 – Եւ քսանչորս երեցները ու չորս կենդանիները իյնան ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ՝ որ աթոռը կը նստի , ըսելով , Ամէն, Ալէլուիա։ 5 – Եւ աթոռէն ձայն մը եկաւ՝ ըսելով , Մեր Աստուծոյն օրհնութիւն տուէք, իր բոլոր ծառաները , ու դուք որ իրմէ կը վախնաք, պզտիկներ ու մեծեր։ 6 – Եւ լսեցի շատ բազմութեան ձայնի պէս , ու շատ ջուրերու ձայնի պէս, ու սաստիկ որոտումներու ձայնի պէս , որոնք կ'ըսէին, Ալէլուիա, վասն զի [մեր] Աստուած Տէր Ամենակալ թագաւորեց ։ 7 – Խնդանք և ուրախանանք ու փառք տանք անոր, քանզի Գառնուկին հարսնիքը հասաւ , ու անոր կինը ինքզինք պատրաստեց ։ 8 – Եւ իրեն տրուեցաւ որ մաքուր ու լուսափայլ բեհեզ հագնի , (քանզի այն բեհեզը սուրբերուն արդարութիւնն է ։) 9 – Եւ ինծի ըսաւ, Գրէ . Երանելի են անոնք որ Գառնուկին հարսնեաց ընթրիքին կանչուած են . ու ինծի ըսաւ , Ասոնք են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը։ 10 – Ես ալ անոր ոտքերուն առջև ինկայ , որպէս զի անոր երկրպագութիւն ընեմ. ու ըսաւ ինծի , Զգուշացիր, մի ընէր։ Ես ալ քու ծառաս չհկիդ եմ ու քու եղբայրներուդ՝ ու որոնք Յիսուսի վկայութիւնը ունին. Աստուծոյ երկրպագութիւն ըրէ . (վասն զի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։)

11 – Եւ տեսայ երկինքը բացուած . և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւատարիմ ու Ճշմարիտ կ'կոչուի, և արդարութեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի .

12 – Եւ անոր աչքերը կրակի բոցի պէս էին, ու անոր գլխուն վրայ շատ թագեր կային, ու գրուած անուն մը ունէր՝ զոր ինքը չգիտեր , բայց միայն ինք։ 13 – Եւ արիւնով ներկուած հանդերձ մը հագեր էր. ու անոր անունը կոչուեցաւ Աստուծոյ Բանը ։ 14 – Ու երկինքի եղող զօրքերը անոր ետեւէն կ'երթային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած ։ 15 – Եւ անոր բերնէն սրած սուր մը կ'ելլէր, որպէս զի անով ազգերը զարնէ. ու ինք երկաթէ գաւազանով պիտի հովուէ զանոնք , ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը գինովցուցած հնձանը ինք պիտի կոխէ ։ 16 – Եւ իր պատմուճանին վրայ ու իր ազդրին վրայ գրուած գիր մը ունէր , ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ ՏԵՐԱՆՑ։

17 – Եւ հրեշտակ մը տեսայ, որ արեւին մէջ կայներ էր, ու մեծ ձայնով աղաղակեց երկինքի մէջ թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով , Եկէք , *Աստուծոյ մեծ ընթրիքին ժողվուեցէք , 18 – Որպէս զի ուտէք թագաւորներուն մարմինները, ու հազարապետներուն մարմինները, զօրաւորներուն մարմինները, ու ձիերուն և անոնց վրայ հեծնողներուն մարմինները , ու ամէնուն մարմինները, թէ՛ ազատներուն և թէ՛ ծառաներուն , թէ՛ պզտիկներուն և թէ՛ մեծերուն։

19 – Եւ տեսայ գազանը ու երկրի թագաւորները ու անոնց զօրքերը մէկտեղ ժողվուած պատերազմ՝ ընելու անոր հետ՝ որ ձիուն վրայ հեծեր էր , ու անոր զօրքերուն հետ։ 20 – Եւ գազանը բռնուեցաւ , ու անոր հետ սուտ մարգարէն՝ որ անոր առջև նշաններ ըրաւ, որոնցմով մոլորեցուց գազանին դրոշմը ընդունողները, և անոր պատկերին երկրպագութիւն ընծայողները. երկուքն ալ ողջ ողջ ծծումբով վառած կրակին լիճը ձգուեցան։ 21 – Եւ ուրիշներն ալ սպանուեցան ձիուն վրայ հեծնողին սուրէն՝ որ իր բերնէն կ'ելլէր, ու բոլոր թռչունները անոնց մարմիններէն կշտացան։

*Ոմանք, Տէր Աստուծոյն

*Ոմանք, մեծ Աստուծոյ ընթրիքին



## ԳԼ. Ի

ԵՒ հրեշտակ մը տեսայ , որ երկինքէն կ'իջնէր , ու անդունդին բանալին և մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը ։ 2 – Ու բռնեց վիշապը, այսինքն առաջին օձը, որ Խոնարհուն ու Սատանան է , և կապեց զանիկա հազար տարի ։ 3 – Ու անդունդը ձգեց զանիկա, և գոցեց ու վրայէն կնքեց , որ ա՛լ չմոլորեցնէ ազգերը՝ մինչև հազար տարին լմննայ, և անկէ եաքը պէտք է որ արձակուի անիկա քիչ մը ժամանակ։

4 – Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ. և անոնց դատաստան տրուեցաւ . նաև Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ խօսքին համար գլխատուածներուն հոգիները , և զանոնք որ երկրպագութիւն չըրին գազանին, ոչ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չընդունեցին. և ապրեցան ու Քրիստոսի հետ հազար տարի թագաւորեցին։ 5 – Եւ ուրիշ մեռելները չապրեցան մինչև հազար տարին կատարուեցաւ . ասիկա է առաջին յարութիւնը ։ 6 – Երանելի և սուրբ է ան որ առաջին յարութիւնովը մէջ բաժին ունի . ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի , հապա անոնք Աստուծոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան , ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն։

7 – Եւ հազար տարուան լրանալուն՝ պիտի արձակուի Սատանայ իր բանտէն. և պիտի ելլէ ու մոլորեցնէ երկրի չորս անկիւնները եղող ազգերը, Գոգը ու Մագոգը, որպէս զի զանոնք պատերազմի ժողվէ, որոնց համրանքը ծովու աւազին չափ է ։ 8 – Ու երկրի ընդարձակութեանը մէջ ելան , և սուրբերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին ։ 9 – Եւ երկինքէն Աստուծմէ կրակ իջաւ ու պատեց զանոնք. և Բանսարկուն որ զանոնք մոլորեցուց, ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ , ուր էր գազանը , 10 – Եւ սուտ մարգարէն . ու պիտի չարչարուին ցորեկ ու գիշեր յաւիտեանս յաւիտենից։

11 – Եւ մեծ ճերմակ աթոռ մը տեսայ, ու անոր վրայ մէկը նստած , ուրմէն երեսէն երկիր ու երկինք փախան, և տեղ չգտնուեցաւ անոնց ։ 12 – Եւ տեսայ պզտիկ ու մեծ մեռելները , որ կանգնած էին առջև աթոռոյն , և գիրքերը բացուեցան, և ուրիշ գիրք մը բացուեցաւ, այսինքն կենաց †էէ։ Եւ գիրքերուն մէջ գրուածներէն մեռելները դատուեցան իրենց գործերուն համեմատ։ 13 – Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին . ու ամէն մէկը իրենց գործերուն համեմատ դատուեցան։ 14 – Եւ մահը ու դժոխքը կրակի լիճին մէջ ձգուեցան. սա կա է երկրորդ մահը ։ 15 – Եւ ով որ կենաց գիրքին մէջ գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ։

## ԳԼ. ԻԱ

ԵՒ նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ. վասն զի առաջին երկինքը ու առաջին երկիրը անցան , և ա՛լ ծով չկար։ 2 – †Եւ սուրբ քաղաքը, նոր Երուսաղէմը, տեսայ, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր , իր էրկանը համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած։ 3 – Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խրանը մարդոց մէջ , ու անիկա անոնց հետ պիտի բնակի . և անոնք անոր ժողովուրդը պիտի ըլլան , և Աստուած ինք անոնց հետ պիտի ըլլայ էէւ‡ անոնց Աստուածը . 4 – Եւ ‖ինք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ , և ա՛լ մահ պիտի չըլլայ , ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ եաւս. վասն զի առաջուանները անցան ։ 5 – Եւ ան որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա ամէն բաները նոր կ'ընեմ։ ու ըսաւ ինծի , Գրէ, վասն զի այս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են ։ 6 – Նաև ըսաւ ինծի, Եղաւ. ես եմ Ալֆա և Օմէգա, Սկիզբը ու վերջը . ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց ջուրին աղբիւրէն ։ 7 – Ան որ կը յաղթէ, ‖ամէն բաները պիտի ժառանգէ . ու ես անոր Աստուած պիտի ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլլայ։ 8 – Բայց վախկոտներուն, ու անհաւատներուն, և պղծերուն ,

*Ոմանք, աթոռին

†Ոմանք, Եւ ես Յովհաննէս

‡Ոմանք, Աստուած ‖Ոմանք, այս

ու մարգասպաններուն, ու պառնիկներուն, և կախարդներուն, ու կռապաշտներուն, և ըրած սուտասիներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը։

9 – Եւ եօթը վերջին հարուածներով լեցուն եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը ինծի եկաւ, և ինծի հետ խօսեցաւ ու ըսաւ, Եկուր ցուցնեմ քեզի հարսը, Գառնուկին կինը։ 10 – Եւ Հոգիով մեծ ու բարձր լեռան մը վրայ տարաւ զիս, և ցուցաց ինծի սուրբ Երուսաղէմ *քաղաքը, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր. 11 – Ու Աստուծոյ փառքը ունէր, և անոր լուսաւորութիւնը թխտ պատուական քարի նման էր, ակնվանիի երևութով յասպիս քարի պէս։ 12 – Եւ անոր պարիսպը մեծ ու բարձր էր, և տասներկու դուներ ունէր, ու դուներուն վրայ տասներկու հրեշտակներ կային, և դրեթէ վրայ անուններ գրուած էին՝ որոնքն Իսրայէլի որդիներուն տասներկու ցեղերուն անուններն էին։ 13 – Արևելեան կողմէն երեք դուռ, ու հիւսիսային կողմէն երեք դուռ, և հարաւային կողմէն երեք դուռ, ու արևմտեան կողմէն երեք դուռ։ 14 – Եւ քաղաքին պարիսպը տասներկու հիմեր ունէր, ու անոնց վրայ Գառնուկին տասներկու առաքեալներուն [տասներկու] անուններն էրուած էին։ 15 – Եւ ինծի հետ խօսողը ձեռքը սակիւ եղէգ մը ունէր, որպէս զի անով քաղաքը և անոր դուռները ու անոր պարիսպները չափէ։ 16 – Եւ քաղաքը քառակուսի էր, ու անոր երկայնութիւնը լայնութեանը չափ էր. և քաղաքը նոյն եղէգով տասներկու հազար ասպարէզ չափեց, անոր երկայնութիւնը ու լայնութիւնը և բարձրութիւնը հաւասար էին։ 17 – Եւ անոր պարիսպը հարիւր քառասունչորս կանգուն չափեց, մարդու չափով, այսինքն հրեշտակին չափովը։ 18 – Եւ անոր պարսպին շինուածքը յասպիս էր, ու քաղաքը զուտ սակի էր մաքուր ապակիի նման։ 19 – Եւ քաղաքին պարսպին հիմերը ամէն թեւակ պատուական քարերով զարդարուած էին. առաջին հիմը յասպիս էր, երկրորդը՝ շափիւղայ, երրորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ։ 20 – Հինգերորդը՝ եղինգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ սկիւքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝ տպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, մեռասաներորդը՝ յակինթ, երկտասաներորդը՝ ամեթով։ 21 – Եւ տասներկու դուռները տասներկու մարգարիտ էին, ամէն մէկ դուռը մէյմէկ մարգարիտէ էր. ու քաղաքին հրապարակը մաքուր ապակի էր թափանցիկ ապակիի նման։ 22 – Եւ անոր մէջ տաճար չտեսայ, վասն զի Տէր Աստուած Ամենակալն ու Գառնուկը անոր տաճարն են։ 23 – Եւ քաղաքը արեւի ու լուսնի պէտք չունի, որ զանիկա լուսաւորեն, վասն զի Աստուծոյ փառքը զանիկա կը լուսաւորէ, ու անոր ճրագը Գառնուկն է։ 24 – Եւ [փրկուած] ազգերը անոր լուսովը պիտի քալեն, ու երկրի թագաւորները իրենց փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն։ 25 – Եւ անոր դուռները ցորկը պիտի չգոցուին. (վասն զի հոն գիշեր պիտի չըլլայ.) 26 – Եւ ազգերուն փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն։ 27 – Եւ հոն բնաւ *անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու սուտութիւն գործող մը, հապա միայն անոնք՝ որ Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած են։

*Ոմանք, մեծ քաղաքը

## Գլ. ԻԲ

Եւ ինծի կենաց ջուրի †գետ մը ցուցուց ակնվանիի պէս պայծառ, որ կ'ելլէր Աստուծոյ ու Գառնուկին աթոռէն։ 2 – Ես այն *հրապարակին մէջ, ու այն գետին մէկ կողմէն ու միւս կողմէն կենաց ծառ կար՝ որ տասներկու †բերդ պտուղ կը բերէր, ու ամէն ամիս իր պտուղը կու տար. և այն ծառին տերևները հեթանոսները բժշկութիւն կ'ըլլար։ 3 – Եւ ա՛լ բնաւ նզովք պիտի չըլլայ. ու անոր մէջ պիտի ըլլայ Աստուծոյ ու Գառնուկին աթոռը, և անոր ծառաները պիտի պաշտեն զանիկա. 4 – Եւ անոր երեսը պիտի տեսնեն, ու անոր անունը իրենց ճակատներուն վրայ պիտի ըլլայ։

*Ոմանք, անմաքրութիւն ընող
†Ոմանք, մաքուր գետ



5 – Եւ հոն ա՛լ գիշեր պիտի չըլլայ, և ճրագ ու արևուս լոյս պէտք չէ. քանզի Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք, և յաւիտեանս յաւիտենից պիտի թագաւորեն։

6 – Եւ ըսաւ ինծի, Այս խօսքերը հաւատարիմ են ու ճշմարիտ. և *սուրբ մարգարէներուն Տէր Աստուածը իր հրեշտակը ղրկեց՝ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ։ 7 – Ահա ես շուտով կու գամ. երանի՛ անոր որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը։

8 – Եւ ես Յովհաննէս լսեցի ու տեսայ այս բաները. և երբ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ այն հրեշտակին ոտքերուն առջև՝ որ այս բաները ինծի կը ցուցնէր։ 9 – Եւ ըսաւ ինծի, Զգուշացիր, մի ընէր. վասն զի ես քուկին ու քու եղբայրներուդ, մարգարէներուն, և այս գիրքին խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ. Աստուծոյ երկրպագութիւն բե՛ր։ 10 – Եւ ըսաւ ինծի, Այս գիրքին մարգարէութեան խօսքերը մի՛ հնչեր, վասն զի ժամանակը մօտ է։ 11 – Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ, և ան որ արդար է՝ ալ արդար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ։ 12 – Ահա ես շուտով կու գամ, և իմ վարձքս ինծի հետ է՝ տալէն ինձմէ իւրաքանչիւրին իր գործին համեմատ հատուցանելու։ 13 – Ես եմ Ալֆա և Օմէգա, Առաջինը ու Վերջինը, Սկիզբը և Վախճանը։ 14 – Երանելի են անոնք որ անոր պատուիրանքները կը կատարեն, որպէս զի իշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ, և դռներէն ներս քաղաքը մտնեն։ 15 – Բայց դուրս պիտի հանեն շուներուն ու կախարդներուն և պոռնիկներուն ու սպանութիւն ընողներուն և կռապաշտներուն ու այն ամէնը որ սուտութիւն կը սիրէ և կ'ընէ։

16 – Ես Յիսուս իմ հրեշտակս ղրկեցի՝ այս բաները ձեզի վկայելու եկեղեցիներուն *մէջ. ես Դաւիթի արմատը ու ցեղն եմ, ու առաւօտեան պայծառ աստղը։ 17 – Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկուր. և ան որ կը լսէ՝ թող ըսէ, Եկուր. ու ան որ ծարաւ է՝ թող գայ, և ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ։

18 – †Ես կը վկայեմ ամէնուն՝ որ այս գիրքին մարգարէութեան խօսքերը կը լսէ. եթէ մէկը ասոնց վրայ բան մը աւելցնէ, Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցնէ այն հարուածները որոնք այս գիրքին մէջ գրուած են. 19 – Եւ եթէ մէկը այս մարգարէութեան գիրքին խօսքերէն բան մը պակսեցնէ, Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցնէ կենաց ‡գիրքէն և սուրբ քաղաքէն՝ ‖որ այս գիրքին մէջ գրուած են։ 20 – Այս բաներուն վկայութիւն տուող կ'ըսէ, Այո, շուտով կու գամ։ Ամէն, եկուր, Տէր Յիսուս։ 21 – Մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի շնորհքը §ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

*Կամ, վրայով †Ոմանք, Քանզի
‡Ոմանք, ծառէն
‖Ոմանք, և այն բաներէն որ
§Ոմանք, բոլոր սուրբերուն

